Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1996

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Աշխարհաբար թարգմանությունը
և ծանոթագրությունները
Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1996

ԳՄԴ 84Հ1+63.3(2Հ)42
Հ 853

«Ուսանողի գրադարան» մատենաշարի հանձնաժողով. **Մարտիրոսյան Ռ. Մ.** (նախագահ), **Անանյան Գ. Գ., Թամրազյան Հ. Ս., Մկրտչյան Ռ. Մ., Փանոսյան Ս. Ե.**

Բնագրի հետ համեմատեց և խմբագրեց՝
Ավ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հովհաննես Դրասխանակերտցի
Հ 853 *Հայոց պատմություն (Աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Գ. Բ. Թոսունյանի)— Եր.: (Ուսանողի գրադարան) Երևանի պետ. համալս., Երևանի համալս. հրատ., 1996, 397 էջ:*

Հայ նշանավոր պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» ընդգրկում է վաղնջական շրջանից մինչև 924 թ. ընկած ժամանակաշրջանի իրադարձությունները և կարևոր նշանակություն ունի արաբական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի, ինչպես նաև Հայաստանի, Աղվանքի ու Վրաստանի սոցիալ-քաղաքական հարաբերությունների պատմության ուսումնասիրության համար:

Դ $\frac{4702080000}{704(02)-96}$ ԳՄԴ 84Հ1+63.3(2Հ)42

ISBN 5-8084-0237-9

© Երևանի համալսարանի հրատարակչություն, թարգմանության և ծանոթագրությունների համար, 1995

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ
ՀՈՎԱՆՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՅԱՌԱՋԱԲԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Զղաղարումն դարուց, ժամուց և ժամանակաց թէպէտև իսկապէս զՀօրէ ասաց Բանն դնել յիւրում իշխանութեան՝ 'ի բաց միանգամայն տարեալ 'ի մարդկայնոցս զիտութեանց զյոյժ հաւաստին և զյաւէտ կարելին. սակայն մարդիկ օժանդակեալք յԱստուծոյ՝ և գեղեցիկ և շափաւոր մոլութեամբք 'ի փոքունս փոքումբք ինչ յանդգնեալ՝ բանական առաքինութեամբ ետուն մեզ զկարգս պատմութեանց յեղափոխ յեղանակացս սահմանելոց կամ անցելոց, ոչ բանապաճոյճ մտացածին ինչ վէպս յարմարել՝ քան թէ զծանօթութիւն քաջողջութեան 'ի հոգւոց անտի. և ապա յիրս յիրս անցեալ զառանցեալ ժամանակաց մատակարարեալ զմեզ, զի զիւրաւ մեզ հեռացելոցս եղիցի հարցանել զհարսն, որք ուսուցեն մեզ և զծերսն, որք պատմեսցեն մեզ։ Եւ այսպէս զընտանի իւրեանց առատութեան մտաց ջանացան օգուտ աշխարհի գործել՝ զփափագելի մարդկան պէտս լցուին պատրաստեցին, և ստուգագէտ իմացուածիւ խորհրդոց պատկանաւորեցին, յարձանագրութիւնս բանից մատենագրելով զնախնական պատմութիւնսն, զոր յաւէտ պատուասիրելիք և փափաքելիք և կենցաղօգուտք ինձ իմանին։ Այսպէս և ես աստանօր զանձն 'ի ներքս արկի 'ի կարգ բանիս, որ առաջի կայ ինձ ասել՝ ոչ մտահաճ հպարտութեամբ ըստ իմում ինչ կամի, այլ վասն զի ծանեայ զ'առ 'ի յինէն խնդրողացն զանդուլ նոցայն հոգւոյն շարժմունս իմացուածոց*, այնուհետև հարկեալ իբր 'ի նահապետէ ումեմնէ սրավա-

* 'Ի Խորենացւոյ առեալ երևին բանքս, որպէս սովոր է առնել հեղինակս յընթացս Պատմութեան իւրոյ, զոր և ցուցցուք յիւրում տեղւոջ։ «Զանսպառ խաղացմունս աստուածայնոցն 'ի քեզ շնորհացն և զանդուլ Հոգւոյն 'ի վերայ քո իմացուածոցդ շարժմունս ծանեայ, ենս։ Մովս. Խորեն. Պատմ. գիրք ա. գլ. ա.։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Աստծու միածին Որդին իր իշխանության մեջ դարերի, ժամերի ու ժամանակների գոյությունը թեպետև իսկապես Հոր կողմից ստեղծված է համարում՝ հույժ հավաստին ու առավել կարելին ամբողջովին հեռացնելով մարդկային ճանաչողությունից, սակայն մարդիկ, ստանալով Աստծու օժանդակությունը և գեղեցիկ ու շափավոր խենթությամբ կամաց-կամաց հանդգնելով, բանական առաքինությամբ մեզ ներկայացրին անցյալ փոփոխական կարգերի պատմությունը, և ոչ թե ճոռոմաբան ու մտացածին պատմություններ հորինելով, այլ այն հոգիների ողջամիտ ճանաչողությունն իմանալով։ Նրանք անցած-գնացած ժամանակների պատմությունը մեզ մատուցեցին տարբեր կերպ, որպեսզի մենք՝ հետնորդներս, հեշտությամբ կարողանանք հարցնել հայրերին, որոնք սովորեցնում են մեզ, և ծերերին, որոնք պատմում են մեզ։ Եվ այդպիսով, նրանք իրենց մտքի հարստությամբ ու առատությամբ ջանացին երկրի համար օգտակար գործ կատարել, որով մարդկանց անհրաժեշտ կարիքները հոգացին և ստույգ տրամաբանությամբ շարադրեցին՝ մեր նախնիների պատմությունը մատենագրելով իրենց գրվածքների մեջ, որոնք ինձ համար ավելի պատվելի, փափագելի և օգտակար են։ Այդպես էլ ես այստեղ խորամուխ եղա այն պատմությունների մեջ, որոնք առաջիկայում պետք է շարադրեմ, և դա ոչ թե իմ քմահաճույքով կամ ցանկությամբ, այլ նրա համար, որ ճանաչեցի ինձնից օգտվողների հոգու մտածողության անդադար շարժումները*.

* [Տողատակի աստղանիշով տրված այս և հետագա ծանոթագրությունները հրատարակչինն են, որոնցում թարգմանչի կատարած հավելումները տրվում են անկյունավոր փակագծերում, իսկ միայն թարգմանչի ծանոթագրությունները տրվում են պատմության վերջում]։ Երևում է, որ այս խոսքերը վերցված են Խորենացուց, որպես սովոր է անել մեր հեղինակը իր պատմության ընթացքում, որը մենք ցույց կտանք իր տեղում։ «Քո մեջ եղած աստվածային շնորհների անսպառ գործունեությունը և հոգու անդադար շարժումները քո մտածողության վրա՝ ես ճանաչեցի այս գեղեցիկ խնդրի միջոցով» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք Ա, գլ. Ա)։

րեցայ թիակօք 'ի մակուկի ճառիս, և զայս պատմութիւն առնել տաղտ-
կացեալ տագնապեցայ։ Սակայն ոչ ըստ գեղչկաց անարուեստից երկ-
րորդեալ զայն ինչ զոր նախ քան զմեզ քաջք և բանաստեղծք արգոյա-
կապք և զարմանալիք զարժանի բան պատմութեան անտուստ 'ի վե-
րուստ արձանագրեցին զյայտապատում իրս թագաւորաց և զպայազա-
տութիւն իշխանաց և զհանգամանս պատերազմաց և զշինանիստ շի-
նուածս քաղաքաց և գաւառաց, զեօղից և գերդաստանաց, և զգործ-
արեաց և անարեաց կամ զխռովութեանց և զխաղաղութեանց, զի մի
տղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ գրեալսն երկրորդեցից և զքեր-
թողացն արուեստ տապալեցից, և զայն վերծանողացն ծիծաղելիս յար-
կացուցից։ Եւ արդ մի՛ ևս ինձ այլ յիրս յառաջաբանութեանս եղիցի
ծախել զժամանակս. վասն զի ծերութիւն ցաւագին՝ մահ առ դուրս պատ-
րաստ ունի, և տագնապ տարակուսիցս հապճեպ տայ պատմել զանցս
անցից աղետիցս և անհնարին խռովութեանց հասելոց կալելոց զմեզ։

Արդ այսուհետև յարահետ և յաղքատիմաց խանթէ իմոցս մտաց
յառաջ ձգեցից բան երագագիր գպրի գրչութեամբ. և նախ՝ զգրովք
սակաւուք ինչ զնախնական սփռումն բոլոր ազգաց և ազանց, որ յորդ-
ւոցն Նոյի՝ և ապա զմերն Յաբեթ յերկուցն 'ի բաց հատեալ որոշեալ։
Եւ թէ ոչ մերս միայն ազգ 'ի նմանէ, այլ և բազում ևս ցեղից արմատ
նա՛ ճանաչիւր. և ապա ընդ բոլոր Յաբեթեանս ցեղապատմութիւնսն
վայր իջեալ մինչ 'ի մերն Թորգոմ. և այլն արտաքոյ իմոց բանիցս թո-
ղեալ, զծննդոցն նորա ազգաբանութիւն սուղ ինչ շարայարեցից։ Եւ թէ
ո՞յք 'ի նոցանէ շինութեան պարապեալ և կամ ո՞յք քաղաքական և
բարեզգեաց բարուց. և կամ ո՞յք 'ի նոցանէ ոմանք նախսկիզբն գտան
թագաւորելոյ 'ի վերայ մեր. և կամ թէ զկնի նոցա Վաղարշակ Պարթև
թագաւորէ տանս Թորգոմայ և զկնի՝ նորուն սերունդք մեզ միապետեալ։
Եւ թէ 'ի ժամանակս նոցա սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի
քրիստոնէական կարգ հաւատոյ սրբոյ, և առաւել ևս 'ի Հայկականս
գրոհի 'ի Բարթողիմէէ, որ մի է յերկոտասանիցն, և 'ի Թադէոսէ, որ
ևս յերկոտասանիցն, որք և վիճակեցանն իսկ 'ի Քրիստոսէ Փրկչէն
մերմէ աշխարհիս մերոյ քարոզք և վարդապետք։ Ընդ որոց և զսուրբ
Լուսաւորիչն մեր Գրիգոր զկնի շարադրեցից սակաւուք ինչ բանիւք. որ
էլից և բովանդակեաց իսկ զառաքելական քարոզս նոցա, 'ի լոյս ածեալ
անցուցեալ զԹորգոմեան ազն 'ի խորին կռապաշտութեան չարութենէն։

այնուհետև ազդվելով մի նավապետից՝ թիավարելով արագ ընթացա
իմ ճառի մակույկով և տառապելով շարշարվեցի այս պատմությունն
անել։ Սակայն նրանք՝ քաջահմուտ, զարմանալի ու պատվական մա-
տենագիրները, մեզնից առաջ ոչ-գեղչկական անարվեստ ոճով սկզբից
ի վեր կրկնեցին պատմության արժանի դեպքերը՝ թագավորների ու իշ-
խանների հայտնի պատմությունները, պատերազմների հանգամանք-
ները, քաղաքների, գավառների, գյուղերի ու կալվածքների շինությունն-
երը, խիզախների ու վախկոտների խռովության կամ խաղաղության
գործերը, որպեսզի չլինի, թե մեկ անգամ գրվածը միամտաբար հան-
դգնենք նույնությամբ կրկնել, քերթողների արվեստը խաթարել ու
այն ընթերցողների համար ծիծաղելի դարձնել։ Ես չեմ ուզում առաջա-
բանի վրա երկար ժամանակ վատնել, որովհետև ցավագին ծերությու-
նը մահը պատրաստ պահում է դռան հետևում, և տագնապն ու տա-
րակուսանքն ստիպում են հապճեպորեն պատմել մեզ հասած անց-
քերի, աղետների, անհամար խռովությունների ու դեպքերի մասին։

Ուրեմն՝ այսուհետև իմ տրորված ու աղքատիմաց խոսքն արա-
գագիր գպիրի գրչությամբ առաջ կտանեմ. նախ գրքերի միջոցով դի-
մելով հայրերին՝ ըստ նախապես նրանց գործի, երևի փոքր-ինչ ծանո-
թացնելով Նոյի որդիներից սկսած բոլոր ազգերի ու ցեղերի նախնա-
կան տարածվելուն և ապա մեր Հաբեթին՝ երկուսից առանձնացնելով
ու տարբերելով։ Եվ ոչ միայն մեր ազգն է նրանից սերում, այլ նաև
բազմաթիվ ցեղերի արմատը նա է համարվում։ Բացի դրանից, բոլոր
հաբեթյանների հետ ցեղապատմությունը հասցնելով մինչև մեր Թոր-
գոմը, իսկ մյուսներին իմ պատմությունից դուրս թողնելով՝ համառոտ
կերպով կշարադրեմ նրա ծննդյան ազգաբանությունը։ [Կշարադրեմ]
նաև այն մասին, թե նրանցից ովքեր զբաղվեցին շինարարությամբ,
ովքեր՝ քաղաքաշինական կամ բարեկարգման գործերով, և կամ նը-
րանցից ովքեր նախապես թագավորեցին մեզ վրա։ Իսկ նրանցից հե-
տո Թորգոմի տանը[1] թագավորում է Վաղարշակ Պարթևը, այնուհետև
նրա սերունդներն են մեզ տիրում։ Նաև այն մասին, թե ինչպես նրանց
ժամանակաշրջանում աշխարհի բոլոր կողմերում տարածվեց քրիստո-
նեական սուրբ հավատը, մանավանդ որ Հայաստանում այն տարած-
վեց Բարդուղիմեոսի ու Թադեոսի միջոցով, որոնք [Քրիստոսի] տաս-
ներկու աշակերտներից էին[2], որոնց էլ վիճակվեց մեր Քրիստոս Փրկչի
կողմից դառնալ մեր աշխարհի [առաջին] քարոզիչներն ու վարդա-
պետները։ Նրանց հետ էլ համառոտ կերպով կշարադրեմ սուրբ Գրիգոր
Լուսավորչի մասին, որ համալրեց ու ամփոփեց նրանց առաքելական
քարոզները՝ խորին կռապաշտության չարությունից լույս աշխարհ հա-

Զկնի յարադրելով զորդիս և զթոռունս նորա, որք արժանի գտան կալ յաթոռ սրբութեան նորա. այլև զայլ ևս զյաջորդս նոցունց մինչև ցայսօր ժամանակի, և որ ինչ 'ի նոցանէն և կամ յայլոց ոմանց յաւուրս նոցա գործեցեալ իրակութիւնք։ Եւ կամ թէ որո՞ց ոմանց յաւուրս սպառնալ դադարեաց թագակալ պերճութիւնն Հայկականս գրոհի. կամ թէ զիա՞րդ այսրէն 'ի մեզ նորոգեալ տեսաւ թագաւորութիւնն, որ 'ի վաղընչուցն հետէ սպառեալ դադարեալ էր՝ պսակելով զմեծ իշխանն Աշոտ թագաւոր 'ի վերայ մեր։ Զի թէպէտ նախ քան զմեզ Շապհոյ Բագրատունւոյ և մերումս ժամանակի պատմագրի* զրով զրոշմեալ է զնորայն գործոց և զգնացից և իմաստից և մրցարանաց և շինութեանց և խաղաղութեան հանդէս. այլ այս այնչափ միայն առ 'ի յինէն քեզ տեսցի, զի առ 'ի յայժմու ճառս նպաստ լեալ՝ ոչ տայցէ կարգի բանին հատակտուր սեթևեթել, այլ յայտ ածել զհիւսումն հաւաստութեան առաջակայ իրին. զկնի ապա ընդարձակիլ բանիւ և 'ի նմին գեգերիլ պատմութեան վասն Սմբատայ՝ որդւոյ Աշոտի, որ թագաւորեաց Հայաստանեացս փոխանակ հօր իւրոյ։ Այլ և զարիական մրցմունս նորա և զքաջապինդ հանդէսս և զբարեզգեաց բարս, և թէ զիարդ զշինութիւն աշխարհիս տնօրինէր իմաստալեղձ մտօք. ընդ նմին ապա և զայլոց նախարարաց զեկուսցուք բանիւ՝ ոյք հոյակապք և հռչակաւորք, հարուստք և անուանիք և քաջք յայտնեցան 'ի նորին աւուրս։ Դարձեալ զաղմուկ շփոթի՝ որ ի հարաւակողմն Հագարու հասին հասարակաց հալածանք, արոյ վատնումն և սասանումն և սով և գերութիւն և բնաջինջ լինել ողորմելի աշխարհիս Հայոց։ Այլև զտարժանական մահ արքային Սմբատայ ըստ մարտիրոսական հանդիսից 'ի բազմախողխող երկաթոյն Իսմայելեան. և կամ թէ նախ քան զգրաւումն կենաց թագաւորին զիարդ Ոստիկանն հնարիմաց չարիւ՝ արկանէր սուր թշնամութեան ընդ արքային Սմբատայ և ընդ մեծ իշխանն Գագիկ՝ քեռորդի նորուն, թագնմա կապեալ և հակառակ թագաւորեցուցեալ։ Կամ թէ զիա՞րդ յետ մահուան արքային Սմբատայ՝ երեքեան նոքա միանգամայն թագաւորեն՝ Գագիկ Արծրունի և Աշոտ՝ որդի Սմբատայ, և համանուն նորա՝ որդի սպարապետին Շապհոյ, հակառակք ընդդէմ միմեանց։ Կամ ո՞րպէս արքայորդին Աշոտ չուէր գնայր առ կայսրն Կոստանդին՝ և գեղեցկապէս 'ն նմանէն զահ ընկալեալ, վայելչապէս գերակայութեամբ բաղում ընծայիւք բարեմասնաբար լնոյր և յուղարկիւր յիւրական աշխարհս։ Կամ թէ ո՞րպէս 'ի հակառակութենէ երեցունց անուանակիր թագաւորացն յուզեցան չար իրակութիւնք և սասանութիւնք և դղրդմունք և վրդովմունք

* Շապհոյ Բագրատունւոյ պատմագրի՝ ժամանակակցի Յովհաննու Կաթողիկոսի, մատենագրութիւն այժմ ոչ երևի 'ի միջի. թերևս բախտին յաջողելով 'ի լոյս եկեսցէ երբ և է՝ նման գործոցն Մովսիսի Կաղանկատուացւոյ, Սեբեոսի, Ուխտանիսի և այլոց։

նելով հայոց ազգը։ Հետո կշարադրեմ նրա որդիների ու թոռների մասին, որոնք արժանի համարվեցին նստելու նրա սուրբ աթոռին։ Այս ամենից բացի, [կշարադրեմ] նաև նրանց հաջորդների մասին մինչև մեր օրերը և բոլոր այն իրողությունների մասին, որ գործեցին նրանք կամ ուրիշները նրանց օրոք։ Նաև այն մասին, թե նրանցից ո՞ւմ օրոք դադարեց հայոց ազգի թագակալ պերճությունը[3], կամ թե դրանից հետո մեզ մոտ ինչպես նորոգված տեսանք մեր թագավորությունը, որը վաղնջական ժամանակներից վերացել էր, և [այդ ժամանակ] մեզ թագավոր կարգվեց Աշոտ մեծ իշխանը։ Թեպետ մեզնից առաջ Շապուհ Բագրատունին* շարադրել է նրանց գործերի, պատերազմների, շինարարությունների ու խաղաղության պատմությունը, բայց այդ ամենը ես այնպես կմատուցեմ, որ կցկտուր տեղեկություններ չստացվեն, այլ կտամ առաջիկա իրադարձությունների հավաստի շարադրանքը, դրանից հետո էլ խոսքս ծավալելով կամ երկար կանգ առնելով այն պատմության վրա, որը վերաբերում է Աշոտի որդի Սմբատին, որը Հայաստանում թագավորեց իր հոր փոխարեն։ Նաև այն մասին, թե նա ինչպիսի խիզախ կռիվներ էր վարում, ինչպիսի քաջագործություններ [էր ցուցաբերում], առաքինի բարք դրսևորում, և թե աշխարհի շենությունը ինչպիսի իմաստալից մտքով էր տնօրինում։ Դրա հետ միաժամանակ կխոսենք նաև այլ նախարարությունների մասին, որոնք այդ նույն ժամանակ հայտնի դարձան որպես հոյակապ, հռչակավոր, երևելի, անվանի ու քաջ մարդիկ։ Դարձյալ կխոսենք այն իրարանցման մասին, որ եղավ Հագարի[4] հարավային կողմում, ուր, այն է՝ Հայոց ողորմելի աշխարհում, տեղի ունեցան ընդհանուր հալածանքներ, սրահարություն, սով, գերություն, բնաջնջում։ [Կխոսեմ] նաև Սմբատ արքայի տժամանելի մահվան մասին, որ հասել է նրան մարտիրոսական չարչարանքով՝ արաբների բազմախողխող սրից։ Նաև այն մասին, թե նախքան թագավորի վախճանը ոստիկանը ինչպիսի հնարագետ չարությամբ էր թշնամություն գցում Սմբատ արքայի և նրա քեռորդի Գագիկ մեծ իշխանի միջև՝ վերջինիս թագադրելով նրան հակառակ։ [Կշարադրեմ] նաև այն մասին, թե Սմբատ արքայի մահից հետո Գագիկ Արծրունին, Սմբատի որդի Աշոտը ու նրա անվանակիցը՝ Շապուհ սպարապետի որդի Աշոտը, որոնք միմյանց հակառակորդ էին, երեքով մեկտեղ ինչպես էին թագավորում։ Կամ թե Աշոտ արքայորդին ինչպես էր շվում-գնում

* Հովհաննես Կաթողիկոսի ժամանակակցի՝ պատմագիր Շապուհ Բագրատունու, մատենագիտությունն չի հայտնաբերված, թերևս բախտի բերմամբ երբևէ լույս աշխարհ գա՝ Մովսես Կաղանկատվացու, Սեբեոսի, Ուխտանեսի և այլոց գործերի նման։

աւերանաց. այլ և գործք անարժանք և կործանումն անազդակ և ահափեռք մահուց։

Արդ այսոքիկ քեզ բաւականացեալ յառաջաբանութիւն, որով մարթասցես գալ բանիւ զրուցացն ճշմարտութեամբ առ 'ի մատուցանել զլրսելիս և առնուլ զպատմութիւն, հետեւելով իմ ընդ համառօտ հաւաստութիւն առաջնոցն գրագիծ մատենից աստուածայնոց, այլև ընդ արտաքնոց ևս ժամանակագրութիւնս, որք վիպեն հաւաստեաւ՝ ընդ մերումս կշռադատեալ յազգաբանութիւն համարու։ Ամենեքեան սոքա զբոլոր աշխարհաց գիւտս ծննդոց՝ յերից որդւոցն Նոյի ասեն սերեալք և գոյացեալք և աճեցեալք և ցանեցիր սփռեալք ընդ երեսս երկրի։ Զի թէ և զանուանս հարցն արտաքինքն տարորոշս 'ի մէջս տան՝ որպէս Քսիւսաթրոս զնոյ անուանելով, և Քսերքսէս զՍէմ. սակայն պայազատութեանն զրոյցս 'ի մի տարեալ բովանդակեն։ Եւ այսպէս երկաքանչիւրք սոքա աւանդեն մեզ կարդ բանի, թէ 'ի գալ հանդիպիլ ժամանիլ հասանիլ զարուն երկրորդի՝ հեղեղեալ ողողեալ ներսուղեալ ջնջեաց Տէր 'ի բաց սպառսպուռ մաքրելով զերեսս երկրի 'ի մոլելոցն և յամբարբշտելոցն և յանօրինելոցն և 'ի վայրագ շամբշեալ շաղղակերաց, և 'ի կռամոլ մարդոց չարագունից, մինչ ոչ ևս մնալ 'ի բոլոր բանականացս կամ յանբանից. բայց միայն 'ի տոհմիցն արդարոց հնազանդեալք եղեն 'ի գործս արկղակերտի նոյեան տապանին, զոր ևս միանգամայն իսկ մուծեալ 'ի նա և ընդ նոսին ևս և յամենայն անբանից սրբոց և անսրբոց առեալ 'ի ներքս ընդ ինքեանս՝ և այսպէս շնչին փայտի առհասարակ զնոսա հաւատացեալ պահեաց առ 'ի նախախնամել նոքօք զկերկին նորոգութիւն երկրի ըստ իւրաքանչիւրոցն հաւասարակարգ նմանութեան, և ըստ առաջնոյ նուիրմանն 'ի Տեառնէ Աստուծոյ լնուլ և 'ի նոսա ևս զօրհնութիւնսն յաճել և 'ի բազմանալ և լնուլ զերկիր և տիրել մարդկան սմա և որ ինչ 'ի սմա։ Եւ վասն զի այսոքիկ այսպէս քեզ տեսանել եղև՝ այսուհետև թէ հաճոյ քեզ թուի՝ յերկուցն զիս 'ի բաց տարեալ 'ի Սէմայ ասեմ նահապետութեանց և 'ի Քամայ, զմերն Յաբեթի ըստ կարգի բանիս սակաւուք ինչ յայտարարութեամբ ասացից. վասն զի և ոչ իսկ պիտոյ է այժմու ճառիս, այլ՝ այլում տեղւոյ և ժամանակի թողլի է։

Կոստանդին կայսեր մոտ, գեղեցկապես նրանից գահ ընդունում, վայելուչ պատվով օժտվում բազում ընծաներով և ուղարկվում իր աշխարհը։ Կամ թե վերոհիշյալ երեք թագավորների գժտության պատճառով ինչքան հուղումներ, շար միջադեպեր, վրդովմունք ու ավերածություններ եղան, ինչպես նաև՝ անարժան գործեր, անտեղի կործանում և մահացու ահաբեկություններ։

Այսքանը թող բավական լինի առաջաբանում, որով ընթերցողը կարող է զրույցները ճշգրտորեն ընկալել և հասկանալ պատմությունը՝ հետևելով աստվածային առաջին գրքերի իմ հավաստի համառոտությանը, ինչպես նաև օտար ժամանակագրություններին, որոնք պատմում են հավաստիորեն, և դրանք համապատասխանում են մեր ճյուղագրությանը։ Բոլորը աշխարհի բոլոր մարդկանց ծննդյան մասին ասում են, որ նրանք սերել են, գոյացել ու երկրի վրա տարածվել Նոյի երեք որդիներից։ Թեև օտարները նախահայրերի անունները մեզնից տարբեր ձևով են տալիս, այսպես՝ Քսյուսաթրոսը Նոյ է անվանում, Քսերքսեսը՝ Սեմ, սակայն սերունդների հաջորդականության վերաբերյալ զրույցները նույն բանն են բովանդակում։ Եվ սրանցից յուրաքանչյուրը մեզ ավանդում է պատմությունը՝ այն հասցնելով մինչև երկրորդ դարը, երբ Տերը ողողեց, հեղեղեց և իսպառ բնաջնջեց՝ երկրի երեսից մաքրելով մոլադարներին, ամբարիշտներին, անօրեններին, խենթացած հումակերներին, չարագույն կռամոլ մարդկանց, մինչև որ բանականներից ու անբաններից ոչ մեկը չմնաց, բացի արդարների տոհմերի այն մարդկանցից, որոնք համաձայնվեցին պատրաստել նոյյան տապանը։ Նրանց բոլորին միասին մտցրեց տապանի մեջ, և նրանք տապանի մեջ իրենց հետ վերցրին նաև սուրբ ու անսուրբ բոլոր անբաններից[5]։ Այսպիսով, վստահելով այդ չնչին փայտին՝ այն նրանց բոլորին պահպանեց՝ նրանց միջոցով նախապես կրկին հոգալով երկրի նորոգման համար ըստ յուրաքանչյուր կենդանու նմանության, և ըստ առաջին նվիրման Տեր Աստծու կողմից նրանց հագեցնելով օրհնությամբ՝ մարդկանց աճելու, բազմանալու, երկրի վրա տարածվելու, երկրին և նրա վրա եղած ամեն ինչին տիրելու համար։ Եվ սրանք, քանի որ քեզ, [ընթերցող], տեսանելի եղան, այսուհետև եթե քեզ հաճելի լինի, երկուսի՝ Սեմի և Քամի նահապետություններից ինձ հեռացնելով, քեզ կպատմեմ մեր Հաբեթինը՝[6] հաջորդաբար փոքր-ինչ բացատրելով, քանի որ այժմյան խոսքիս մեջ այն պետք չէ, ուստի՝ թողնվելու է մի այլ տեղի ու ժամանակի համար։

— 3 —

Յետ երկնասահանացն հեղեղաց և անդնդապտոյտ ջրահեղձն լինելոյ բոլոր շնչականաց, և յետ ակամայ կամաւ նաւարկութեանն Նոյի և 'ի ցամաք ելանելոյ 'ի Հայս ըստ հրամանի Տեառն որդւովք և կանամբք հանդերձ և այլովք և ընդ նոսին անբան կենդանեօք՝ սկիզբն ապա դարձեալ առնու աստուածային այցելութեամբն աճելութիւն ծնրդոց երկրի։ Եւ 'ի մերոյն Յաբեթէ նախ ծնանի որդի և անուանի Գամեր. ուստի 'ի նորուն անուն աշխարհ կալուածոց նորա կոչեցաւ Գամիրք։ Զկնի ծնանի Մագոգ, և սերունդք Մագոգայ Կեղտք և Գաղատացիք։ Եւ ապա զՄադայ, որ զաշխարհ տոհմի իւրոյ յիւր անուն Մարս անուանեաց։ Եւ ապա զԹոբէլ, յորմէ Թէտալք ազգն անուանիւր. և զՄոսոք, որ պայազատէր զԼիւրիկիայ։ Իսկ վեցերորդ զԹիրաս, յորմէ մերն իսկ Ասքանազ. և Թորգոմ, որ զմիապետեալն իւր աշխարհ յիւր անուն յորջորջէր Թրակացիս։ Եւ զՔիտիիմ, որ զՄակեդոնացիս նուաճէր ընդ ինքեամբ։ Իսկ որդիք Թիրասայ Ասքանազ, յորմէ Սարմատք և Ռիփատք. յորմէ Սօրամատք։ Եւ Թորգոմ, որ ըստ Երեմիայ՝ զԱսքանազեանս գունդ յիւր անուն նուաճէր տուն Թորգոմեայ. զի նախ Ասքանազ իսկ էր յիւր անուն սահմանեալ զմերազնեայս ըստ երիցութեանն սակի, զոր յիւրում տեղւոջ ասացից։ Իսկ Յաւանայ նախնւոյն Յունաց Եղիշա, յորմէ Սիկելացիք և Աթենացիք։ Եւ Թարսիս, յորմէ Վիրք և Տիւրենացիք. Կիտիիմ, յորմէ Հռոմայեցիք։

Այլ աստ թէպէտև 'ի հարկէ շարադրական բան յառաջ բերաւ բոլոր ծննդոցն Յաբեթի պայազատութեանց, սակայն չափ* ևեթ. զի սուղ ինչ յայտարարութեամբ ծանօթացին քեզ հարազատութիւն գրոհի մերոյ 'ի միոյ միայնոյ ծննդոյ գոլ այսչափ նահապետութեանց և ազգաց։ Զի թէ ոչ բան ինչ յայտնիկ և ոչ յայտնութիւն ինչ իրիք եղելոյ բացերևակի քեզ լինէր լեալ՝ 'ի տարակուսանս զքեզ հատեալ տարեալ անցուցեալ մղէր, և ինքնահաճոյ արդարև 'ի միտս և 'ի բանս և 'ի գործս զիս դարձեալ։ Եւ արդ եթէ զտքնութիւնս իմ 'ի շնորհակալուս քեզ ընկալցիս՝ ո՛վ ընթերցասէրդ, և պարտ վարկցիս յայլոցն հարազատ ազգացն 'ի բաց զիս տարեալ տրտհեալ, որ ոչ իսկ փոյթ այժմու բանիս՝ և միայն զժամանակս և եթ ծախէ, 'ի մերն Թորգոմ զբանիս իմոյ դարձուցից ոճ՝ ըստ միանգամ առ յինէն ճառելոյն։

Թիրաս, որ երրորդ էր Յաբեթէ՝ ծնաւ երիս որդիս՝ զԱսքանազ, զՌիփատ և զԹորգոմ. և վասնզի զԹրակացիս ինքեան անձին առանձին Թիրաս պայազատէր՝ պարտ վարկաւ, զի զայլ ևս վիճակեալն իւր սահ-

* Թերևս «սակայն չափաւ ևեթ», պարտ իցէ ընթեռնուլ։

Երկնքի [իմա՛ Աստուծու] կողմից սահմանված ջրհեղեղից, բոլոր շնչավորների՝ ծովի տակ ջրահեղձ լինելուց, Նոյի կամա թե ակամա նավարկությունից և Տիրոջ հրամանով որդիներով, կանանցով և իրենց հետ եղած բոլոր կենդանիներով Հայաստանում ցամաք դուրս գալուց հետո, աստվածային նախախնամությամբ, երկրի վրա դարձյալ սկիզբ էն առնում ծնունդն ու աճումը։ Հետո մեր Հաբեթից նախ ծնվում է նրա Գամեր անունով որդին, որի անունով էլ երկիրը կոչվեց Գամիրք։ Հետո ծնվում է Մագոգը, ապա վերջինիս սերունդները՝ կելտերն ու գաղատացիները։ Այնուհետև [Հաբեթը] ծնում է Մադային, որի համար էլ նրա տոհմի աշխարհը Մարս կոչվեց։ Եվ ապա [Հաբեթը ծնում է] Թոբելին, որի ցեղն անվանվեց թեսալացիներ, ապա Մոսոքին, որը տիրում էր Լյուրիկիային։ [Հաբեթը] ծնում է վեցերորդ [զավակին]՝ Թիրասին, որից սերում են մեր Ասքանազը և Թորգոմը, որն իր տիրած երկիրը իր անունով կոչում է Թրակիա։ [Հաբեթը ծնում է] նաև Քիտին, որն իրեն է ենթարկում մակեդոնացիներին։ Իսկ Թիրասի որդիներն են Ասքանազը, որից սերում են սարմատները, և Ռիփաթը, որից սերում են սորամատները։ Ըստ Երեմիայի՝ Թորգոմը Ասքանազյան ազգին իրեն է ենթարկում և տիրում Թորգոմի տանը, որովհետև մեր ազգը երիցության կարգով նախ Ասքանազն էր իր անունով սահմանել, որի մասին իր տեղում կասեմ։ Իսկ նախնի Հավանից Հունաց Եղիշան է, որից սերում են սիկելացիներն ու աթենացիները, Թարսիսից՝ վրացիներն ու տյուրենացիները, իսկ Կիտիիմից՝ հռոմեացիները։

Այստեղ թեպետ անհրաժեշտաբար շարադրվեց Հաբեթի բոլոր սերունդների հաջորդականությունը, սակայն չափավոր ձևով*, որպեսզի մի փոքր բացատրությամբ, դու, [ընթերցող], կարողանաս մեկ առ մեկ ծանոթանալ այսքան նահապետությունների ու ցեղերի ծննդյան իսկությանը։ Որովհետև եթե սրանց վերաբերյալ իմ խոսքը և կատարված դեպքերի բացատրությունը քեզ համար պարզ չլիներ, դու կընկներիր տարակուսանքի մեջ և քո մտքում, խոսքում ու գործում արդարացիորեն ինձ կնախատեիր։ Այսպիսով, ո՛վ ընթերցասեր, եթե իմ տքնությունը դու ընդունես շնորհակալությամբ և պարտավորվես հարազատ մյուս ազգերից ինձ զատել, որ հոգ չէ այժմյան խոսքիս համար, այլ միայն ժամանակ է վատնվում, ապա ես իմ պատմության շարադրանքը կդարձնեմ դեպի մեր Թորգոմը, որպեսզի մեկ անգամ ևս խոսեմ նրա մասին։

Հաբեթի երկրորդ որդին՝ Թիրասը, ծնեց երեք որդի՝ Ասքանազին, Ռիփաթին և Թորգոմին։ Եվ քանի որ Թրակացիների վրա անձամբ ինքը Թիրասն էր իշխում, հարկ եղավ, որ իրեն վիճակված տարածքը

* [Բնագրում՝ «սակայն չափ ևեթ»]. Թերևս «սակայն չափաւ ևեթ» պետք է ընթերցել։ [Մենք այդպես էլ թարգմանել ենք]։

մանս յերիս հատուածս բաժանեալ տացէ 'ի կալուածս որդւոց իւրոց. ուստի ապա իմաստն զգործն կատարէր։ Եւ Ասքանազայ, որ նախ զմերազնեայսս յիւր անուն Ասքանազեան անուանեաց՝ զՍարմատս նմա պայազատէր. իսկ Բիփատայ՝ զՍօրմատս. իսկ Թորգոմայ զմերազնեայսս սեպհականեալ, յորում տիրեալ զԱսքանազեանն նախ անուանեալ յիւր անուն նուաճէր տուն Թորգոմայ։ Արդ այսպէս իմա Ասքանազեան զմեզ և տուն Թորգոմայ, և այսպէս քեզ հաւատարմացին որ վասն նահապետութեան ազգիս է բան, թէպէտև ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար զրուցաց վէպս տան։ Իսկ եթէ աստուածային Մովսէս զմերոց աստի զմիոյ միոյ ոչ վերագրէ զժամանակս՝ անարժանս իմն համարեալ բանի պատմութեան. սակայն ընդ ազգաբանութեանն Սեմայ զմերն Յաբեթ կշռագատեալ գտանին մինչև զԹորգոմ և ցսկզբան պայազատութեան որդւոյ նորա Հայկայ ամք չորս հարիւր. իսկ 'ի Յաբեթէ մինչև 'ի նախնի մարդն Ադամ ամք երկուհազար երկուհարիւր քառասուն և երկու։ Արդ որպէս վերագոյնն ճառեցաւ՝ Աստուածային Գիրք մինչև ցմերն Թորգոմ մեզ բացատուեալ զպատմութիւնս՝ անարժան վարկաւ զյիշատակ ծննդոց նորա բանիւ տարորոշել՝ թէ որո՞վ կամ ուստի՞ կամ զիա՞րդ կամ ո՞յք ոմանք տիրեցին աշխարհիս Հայոց, կամ ուստի՞ նախարարութիւնք սորա միապետեցան։

Ապա ոմն յազգէ ասորի՝ Մար Աբաս Կատինայ անուն, հրամանաւ մերոյն Վաղարշակայ երթեալ 'ի դիւանս թագաւորացն Պարսից, որ ուշիմ և վարժ էր մտօք՝ քաղդէարէն և յունարէն դպրութեամբ, 'ի խոյզ և 'ի խնդիր եղեալ՝ գտանէ անդ մատեան մի վաւերական, զոր հրամանաւ Աղէքսանդրի որդւոյ Նեքտանիբայ 'ի քաղդէացի գրոյ ի յոյն փոխարկեալ էր, որ թէպէտ զբազում ազգաց զրոյցս հարստապէս 'ի նմա ճոխացուցեալ էր. սակայն նա զայլոցն իբրև զհոգս պարապոյ լքեալ թողեալ՝ զմիայնոյ մերոյս զրոհի հանեալ բերեալ մատուցանէր Վաղարշակայ։ Եւ այնուհետև յայնմանէ ծանուցաւ մեզ մերոյն անվրէպ զրուցաց հաւաստիք. և իմացեալ գիտացաք զարի սկայազօր ախոյեանն գեղեցիկ զՀայկն գոլ որդի Թորգոմայ և նախնի նահապետ և սերունդ ազգի մերոյ։ Եւ զսոյն զսա գիտէ բանս ընդ վիթխարի սկայիցն միակամեալ գործել զբարձրաբերձ ամբարտակին շինուածս ամբարտաւանութեան, որք կարծէին կարել կատարել զամբարշտութեանն խորհուրդ։ Իսկ ըստ աստուածայնոցն պատմութեանց՝ հողմ ահագին գոգցես իմն աստուածային հրամանաւն շնչեալ՝ զբուրգն բարձրաբերձ 'ի վայր հոսեալ կործանէր՝ զնոցայն ցուցեալ սնավաստակ տքնութիւնս։ Այսուհետև ապա Ներրովթն, որ է Բէլ՝ խրոխտաբար ձեռներէց լեալ և 'ի

երեք հատվածի բաժանի և տա իր որդիներին որպես կալվածքներ, ուստիև նա գործը խելամտորեն էր կատարում։ Իսկ Ասքանազը, որ մեր ազգը իր անունով նախ Ասքանազյան անվանեց, տիրում էր սարմատներին, իսկ Բիփաթը տիրում էր սորմատներին, իսկ Թորգոմը, ժառանգելով մեր ազգին և տիրելով Ասքանազյան ցեղին՝ նախ իր անունով անվանում է Թորգոմի տուն։ Ահա այսպես [ընթերցող], Ասքանազյան և Թորգոմի տուն իմացիր մեզ, և քեզ այդպես հավաստիացրին այն, ինչ մեր ազգի նահապետությանն է վերաբերում, թեպետև ոմանք տարբեր ձևով, իսկ ոմանք էլ այլաբանորեն են պատմում։ Իսկ եթե աստվածային Մովսեսը մերոնց ժամանակը մեկ առ մեկ չի նշում՝ անարժան համարելով պատմության համար, սակայն Սեմի ազգաբանության հետ քննվում է նաև մեր Հաբեթինը մինչև Թորգոմը և նրա որդի Հայկի իշխանության սկիզբը, որը կազմում է չորս հարյուր տարի, իսկ Հաբեթից սկսած մինչև առաջին մարդը՝ Ադամը, կազմում է երկու հազար երկու հարյուր քառասուներկու տարի։ Ուրեմն, ինչպես վերևում ասվեց, Աստվածաշունչը մինչև մեր Թորգոմը, մեզ ավանդված պատմությունը, նրա ծնունդը անարժան կերպով է ներկայացնում ու տարորոշում, այսինքն՝ չի ասվում, թե որո՞վ, որտեղի՞ց, ինչպե՞ս կամ ովքե՞ր տիրեցին Հայոց աշխարհին, կամ որտեղի՞ց նրա նախարարությունները միապետեր դարձան։

Այնուհետև, ազգությամբ ասորի Մար Աբաս Կատինան, որը ուշիմ ու մտավարժ էր, գիտեր քաղդեերեն և հունարեն, մեր Վաղարշակի հրամանով գնում է Պարսից թագավորների գրադարանը, որոնում, փնտրտում և այնտեղ գտնում է վավերական մի մատյան, որը Նեքտանիբի որդու՝ Ալեքսանդրի հրամանով քաղդեերենից հունարենի էր վերածվել։ Եվ թեպետ բազմաթիվ ազգերի պատմությունն ընդարձակ կերպով այնտեղ տեղ էր գտել, սակայն ուրիշների պատմությունը մի կողմ թողնելով՝ նա միայն մերն է հանում, բերում ու մատուցում Վաղարշակին։ Դրանից հետո դրա միջոցով ծանոթացանք մեր հավաստի պատմությանը՝ իմանալով, որ մեր ազգի առաջին նահապետն ու հայրը եղել է Թորգոմի որդին՝ արի, հսկայազոր, կարիճ ու գեղեցիկ Հայկը։ Եվ պատմությունը գիտի այն, որ վիթխարի հսկաների հետ միաբանվելով՝ սկսում են կառուցել բարձրաբերձ ու ամբարտավան ամբարտակը՝ կարծելով, թե կարող են կատարել իրենց ամբարիշտ մտադրությունը։ Ըստ Աստվածաշնչի պատմության՝ ասես Աստծու հրամանով, փչում է ուժեղ քամի և բարձրաբերձ բուրգը վայր գցում ու կործանում՝ ցույց տալու համար նրանց սնավաստակ տքնությունը։ Այնուհետև Ներրովթը՝ նույն ինքը Բելը, խրոխտաբար ձեռներեց լինելով և

վեր զինքն ամբարձեալ՝ միապետել հնարէր առհասարակ 'ի վերայ այլոցն ևս սկայիցն։ Իսկ մերոյն Հայկայ՝ ուժեղակաբար ընդվզեալ և արտաքս զինքն 'ի հնազանդութենէ Բէլայ բերեալ, գայ հասանէ վաղվաղակի յայս աշխարհ մեր Արամանեկաւ որդւով իւրով, զոր ծնաւն 'ի Բաբիլոն, և այլ ևս դստերքք և թոռամքք և ընտոծնօք և եկօք՝ յարելօք 'ի նա։ Իսկ Նեբրովթն, որ է Բէլ՝ զկնի հետամտեալ Հայկայ հանդերձ իւրովքն ևս հրոսակօք արամբք՝ կորովեօք յաղեղն և 'ի սուսեր և 'ի տէգ նիզակաց, և բախեալ 'ի դիմի հարեալ միմեանց 'ի ձորագաշտակի միոջ ահագին իմն դղրդմամբ իբրև ընդ զառ 'ի վայր հեղեալ զասստիկ ուղխից վրդովումն, այսպէս ահս իմն պակուցանողս և սարսափելիս զմիմեամբք շահատակելովն արկանէին։ Իսկ մերոյն Հայկայ լայնալիճ աղեղամբ զերեքթևեանն նետ դիպեցուցեալ երկաթագամ տախտակի կրծիցն Նեբրովթայ՝ թափանցանց ընդ թիկունս յայնկոյս յերկիր հարբստէր։ Եւ այնպէս զնա սատակեալ՝ ինքն տիրէ հայրենատուր վիճակեալ աշխարհի իւրոյ, յիւր անուն զսա անուանելով Հայք։ Եւ յետ այսորիկ բազում գործս քաղաքականս յարդարեալ և շինութեանց աշխարհի պարապեալ՝ և կեցեալ ամս ոչ սակաւս՝ մեռանի, հաւատալով զաշխարհս մեր Արամանեկայ որդւոյ իւրոյ։

Իսկ Արամանեկայ միապետեալ զմերազնեայսս՝ երթեալ դարեալ դադարեալ բնակէ 'ի գեղեցկատեսիլ դաշտի միում, որ իբրև պարբսպեալ իմն է բարձրագագաթն սպիտակափառ լերամբք՝ յինքն ունելով զգնացս գետոց երագագունից հատելոց անցելոց ընդ երկայնութիւն դաշտին խոխոջելով խոռոշացեալ. և ապա զծործորս լերինն հիւսիսոյ շինեալ յիւր անուն՝ զլեառն յորջորջէ Արագած, և զկալուածս 'ի ստորոտս նորա՝ Արագածոտն։ Ծնանի ապա Արամանեակ որդի զԱրմայիս. յոլով քան թէ սակաւ ամս կեցեալ մեռանի։

Իսկ Արմայիս 'ի նմին իսկ դաշտի բլուր մի առ եզերբ գետոյ Երասխայ շինէ քաղաք և տուն բնակութեան իւրոյ, երաստոյ վիմօք զնա հրաշակերտեալ և անուանէ զնա Արմաւիր։ Սորա արիական քաջամասնութեան հանդէսք բազական քեզ յառաջնոցն քան զիս մատենագրացն պատմի։ Սորա հարուստ ինչ ամաց 'ի վերայ անցելոց կենաց՝ ծնանի որդի զԱմասիայ. և յետ ծնանելոյ զնա փոքր ինչ յետոյ կեցեալ՝ մեռանի։

Իսկ Ամասիա 'ի նմին իսկ յԱրմաւիր բնակեալ և շինեալ զհարաւակողմ լերինն ստորոտս՝ զլեառն յիւր անուն Մասիս յորջորջէ, և զգաւառն 'ի ծործորս լերինն՝ Մասեացոտն. և ապա յետ ամաց ինչ ծնանի զԳեղամ՝ ինքն վախճանեալ զկեանս իւր։

Իսկ Գեղամ՝ չուեալ երթեալ անցեալ գնացեալ զլերամբն արևելեայ

բոլորից վեր բարձրանալով, ջանում էր իշխել մյուս բոլորի, նաև հրոկանների վրա։ Իսկ մեր Հայկը, ուժով ընդվզելով և չհնազանդվելով Բելին՝ Բաբելոնում ծնված իր որդի Արամանյակի դուստրերի, թոռների, ընդոծինների[8] և իրեն միացած մարդկանց հետ անմիջապես գալիս, հասնում է մեր այս աշխարհը։ Իսկ Նեբրովթը, այն է՝ Բելը, յուրային քաջ զինվորների հետ, որոնք աղեղ, սուսեր, տեգ, նիզակ գործածելու մեջ կորովի մարդիկ էին, ընկնում է Հայկի հետևից։ Եվ մի ձորագաշտում նրանք դիմահար բախվում են միմյանց՝ բարձրացնելով ահագին դղրդյուն, ինչպես զառիվայրից հոսող հեղեղ, և միմյանց վրա հարձակվելով՝ ահ ու սարսափ են սփռում։ Իսկ մեր Հայկը իր երեքթևյան լայնալիճ աղեղով նետը խփում է Նեբրովթի կրծքի երկաթագամ տախտակին, և [սլաքը] թիկունքից անցնելով՝ մխրճվում է հողի մեջ։ Եվ այդպես նրան սպանելով՝ [Հայկն] ինքն է տիրում իր հայրենատուր ու իրեն վիճակված աշխարհին և իր անունով այն Հայք է կոչում։ Այնուհետև զբաղվելով երկրի բարեկարգման ու շինարարական շատ գործերով և ապրելով ոչ քիչ տարիներ՝ նա մահանում է, մեր աշխարհը կտակելով իր որդի Արամանյակին։

Իսկ Արամանյակը, իշխելով մեր ազգի վրա, գնում, դադար է առնում ու բնակվում մի գեղեցկատես դաշտում, որը պարսպի նման շրջապատված բարձրագագաթ սպիտակափառ լեռներով, որտեղ կան անցրագրնթաց գետեր, որոնք խոխոջելով և հուն բացելով կտրում, անցնում են դաշտի երկայնությամբ։ Այնուհետև հյուսիսային լեռան ծործորներում շենքեր է կառուցում և լեռն իր անունով կոչում է Արագած, իսկ լեռան ստորոտում գտնվող կալվածքները՝ Արագածոտն։ Եվ ապա Արամանյակը ծնում է իր որդի Արմայիսին[9] և շատ, ոչ թե քիչ տարիներ ապրելով՝ մեռնում է։

Իսկ Արմայիսը նույն դաշտում, մի բլրի վրա, Երասխ գետի ափին, շինում է քաղաք ու իր բնակության տունը, կարծր քարերով այն հրաշակերտելով, և անվանում է Արմավիր։ Նրա խիզախ քաջագործությունների մասին քեզ, [ընթերցող], պատմում են ինձնից առաջ եղած մատենագիրները։ Շատ տարիներ անցնելուց հետո նա ծնում է Ամասիա որդուն, իսկ նրան ծնելուց հետո կարճ ժամանակ ապրելով՝ մեռնում է։

Իսկ Ամասիան, բնակվելով հենց նույն Արմավիրում և շինարարություն անելով լեռան հարավային ստորոտում, լեռը իր անունով Մասիս է կոչում, իսկ լեռան ծործորներում գտնվող գավառը՝ Մասյացոտն։ Մի քանի տարի անց նա ծնում է Գեղամին, և ինքը մեռնում իր մահով։

Իսկ Գեղամը գնում, անցնում է լեռան հյուսիսարևելյան կողմը,

հիւսիսոյ յեղր ծովակի միոյ՝ և շինեալ անդ գեօղս և գերդաստանս, ըստ իւր իսկ անուան զլեառն կոչէ Գեղամ, և զծովեզերեայ շինանիստն՝ Գեղարքունի. և ծնեալ սորա երկուս որդիս՝ զՀարմայ և զՍիսակ։ Եւ Հարմայի հրաման տայ յԱրմաւիր բնակիլ և միապետել զտուն հայրենի. իսկ Սիսակայ 'ի բնակութիւն տայ սկիզբն կալեալ 'ի ծովեզերէն զհարաւակողմն արեւելեան մինչ 'ի դաշտ ինչ, ընդ որ հատեալ անցանէ գետն Երասխ՝ յորձանուտ խոխոջիւք վազս առեալ և թափ անկեալ ընդ նեղ և ընդ նուրբ խոխոմս քարանձաւի միոյ, որ այժմ 'ի բազմաց Քարաւազ անուանի։ Իսկ Գեղամայ զարձեալ անտի՝ շինէ զդաստակերտն մեծ և գեղեցիկ՝ զԳեղամի, որ յետոյ Գառնի 'ի Գառնկոյ անուանիւր, և ինքն մեռանի։ Բայց Հարմայ ծնանի զԱրամ և յետ ամաց ինչ մեռանի։

Արամայ բազում արութիւն քաջութեանց մրցանաց պատմի, և ընդարձակեալ ասի հարստահարութեամբ բազմաւ զսահմանս Հայոց հասարակ ընդ չորս ոլորտս երկրի։ Զի ըստ քաջափայլ հանդիսի առն զօրութեան, որք շուրջ զմեօք են ազգք՝ 'ի նորին անուն յարակցաբար Արմանեակս զմեզ անուանեն։ Սա ոչ միայն զայլս ոմանս դիւրաղաւս, այլև զԿապուտկեցիս ևս բազում արիական քաջամարտութեամբ ընդ իւրեաւ նուաճեալ սեպհականէր. և զկղիմայն զայն և զպոնտոսն ըստ իւրում իսկ անուանն Արմենի անուանէր, որ մինչև ցայսօր անուն Յունականաց անտի աշխարհին այնմիկ անուանի։ Իսկ յԱրմենէն յայնմանէ կոչեցելոյ մինչև ցկողմանս Պոնտացւոց Առաջին Հայք զաշխարհն անուանեաց. և 'ի Պոնտոսէ մինչև ցոլորտս քաղաքին Մելտինոյ Երկրորդ Հայք. և 'ի Մելտինոյ մինչև ցսահմանս Ծոփաց՝ Երրորդ Հայք. և 'ի Ծոփաց մինչև ցքաղաքն Մարտիրոսաց և յաշխարհն Աղձնեաց արևմտեայ Չորրորդ Հայք. այս մինչև ցսահմանս բնիկ տէրութեան իւրոյ։ Իսկ զսեպհական և զբնիկ աշխարհ իւր համատարած զսա Մեծ Հայք անուանէ։ Սա յետ ամաց ինչ կենաց ծնանի զԱրայն գեղեցիկ, և զկնի այլ ևս ամս բազումս կեցեալ՝ մեռանի։

Իսկ Արայի զշինութիւն աշխարհի տնօրինեալ՝ յիւր անուն զբնակութեան իւրոյ վայրս կոչէր Այրարատ։ Իսկ յետ ամաց ինչ վաւաշն այն և տոփոտ կաթոտն Շամիրամ՝ իմացեալ 'ի համբաւոյ զգեղաղէշ գեղեցկութիւն նորա, բազում անգամ հրեշտակաղնացութեամբ ձիրս առատաձեռն և բազմապարգև բարութիւնս նմա խոստանայր, միայն թե հաւանեսցի գալ առնուլ զնա 'ի կնութիւն կամ կատարել զոնէ զկամս ցանկութեան։ Որում ոչ հաւանեալ՝ հապճեպ տայր վաղվաղակի հասանել յերկիրն Հայոց ընդդէմ Արայի՝ ոչ այնչափ 'ի հալածել կամ 'ի սպանանել զնա զէմ եղեալ՝ քան որչափ 'ի նուաճել և զբռամբ ածել առ 'ի լնուլ զկամս կամեցողին հեշտ ցանկութեանն։ Որ թէպէտ զգու-

մի ծովակի ափ և այնտեղ հիմնելով գյուղեր ու կալվածքներ՝ լեռը իր անունով կոչում է Գեղամ, իսկ ծովափնյա կառուցապատված մասը՝ Գեղարքունի։ Նա ծնում է երկու որդի՝ Հարմային և Սիսակին։ Հարմային հրամայում է բնակվել Արմավիրում և տեր դառնալ հայրենի տունը, իսկ Սիսակին բնակության տեղ է տալիս [լեռան] հարավարևելյան կողմում՝ սկսած ծովափից մինչև մի դաշտ, որով կտրում-անցնում է Երասխ գետը։ Գետը, հոսելով հորձանուտ խոխոջյունով, անցնում է մի քարանձավի նեղ ու բարակ անցքով։ Այդ քարանձավը այժմ շատերի կողմից Քարավազ է անվանվում։ Իսկ Գեղամն այնտեղից վերադառնալով շինում է մի մեծ ու գեղեցիկ դաստակերտ՝ Գեղամի, որը հետո Գառնիկի անունով Գառնի է անվանվում։ Եվ ինքը [Գեղամը] մեռնում է։ Բայց Հարման ծնում է Արամին և տարիներ անց մեռնում է։

Պատմվում է Արամի բազում քաջագործությունների ու կռիվների մասին, և ասվում է, որ նա բռնի կերպով գրավելով շատ տեղեր՝ ընդարձակում է Հայաստան երկրի չորս կողմերը։ Եվ նրա պայծառափայլ զորության համար մեր շուրջը եղած ազգերը նրա անունով մեզ հարակցաբար Արմանյակք են անվանում։ Նա բազմաթիվ հանդուգն քաջագործություններով ոչ միայն թույլ ցեղերին, այլ նաև կապուտկեցիներին է նվաճում ու իրեն ենթարկում։ Եվ առաջինն ու նոր նվաճածը իր իսկ անունով Արմենի է կոչում, որը մինչև օրս հույները այդ անունով են անվանում։ Իսկ այդ Արմենի կոչվածից մինչև պոնտացիների կողմերը անվանեց Առաջին Հայք, Պոնտոսից մինչև Մելիտենե քաղաքի կողմերը՝ Երկրորդ Հայք, Մելիտենեից մինչև Ծոփաց սահմանը՝ Երրորդ Հայք, Ծոփքից մինչև Մարտիրոսաց քաղաքն[10] ու Աղձնիքի արևմուտքը՝ Չորրորդ Հայք. այն [հասնում էր] մինչև իր բուն տերության սահմանները։ Իսկ իր սեփական ու բնիկ ամբողջ աշխարհը անվանում է Մեծ Հայք։ Նա մի քանի տարի անց ծնում է Արա Գեղեցիկին և դրանից հետո շատ տարիներ ապրելով՝ մեռնում է։

Հոգալով աշխարհի շենության մասին՝ Արան իր բնակության վայրերը իր անունով կոչում է Այրարատ։ Տարիներ անց այն մոլի ցանկասեր ու անառակ Շամիրամը, լսելով Արայի չքնաղ գեղեցկության մասին՝ սուրհանդակների միջոցով նրան խոստանում է առատ պարգևներ, միայն թե նա համաձայնի գալ և իրեն կնության առնել կամ գոնե կատարել իր ցանկությունը։ Երբ Արան չի համաձայնվում, [Շամիրամը] հրաման է տալիս անմիջապես հասնել Հայոց երկիրը, Արայի դեմ՝ նրան ոչ թե հալածելու կամ սպանելու, այլ նվաճելու ու իր ձեռքը գցելու համար, որպեսզի կատարեր իր անառակ ցանկությունը։ Թեպետ

շացուցանէր զզօրս իւր կենդանի պահել զցանկալին իւր. սակայն նա 'ի մէջ պատերազմի մարտկացն անգիտաբար մեռեալ՝ թողու իւր որդի զԿարդոս։ Իսկ շուայտոտն Շամիրամ սակս առաջին իւրոյ խանդաղատանացն առ Արայն կոչէ զանունն Կարդոսի յանուն հօր իւրոյ Արայ, կարգելով զնա 'ի վերակացութիւն աշխարհիս Հայոց, որ և մեռաւ իսկ 'ի պատերազմի ընդ Շամիրամայ՝ թողլով իւր որդի բազմահարուստ և լիահանճար յիրս և 'ի բանս զԱնուշաւանն սօսանուէր, որ երբեմն զմասն ինչ աշխարհիս և ապա զբոլորս իսկ նուաճեալ պայազատէր։ Սա յետ ամաց յոլովից կենաց մեռանի։

'Ի զարմից սորա և 'ի զաւակաց ոչ տիրեալ գտանէին հայրենի նահապետութեանցն, այլ այլք ոմանք բռնակալեալք ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան տիրեալ Թորգոմեանս գրոհի, որոց անուանք են այսոքիկ. Պարետ, Արբակ, Զաւան, Փառնակ, Սուր (առ սովաւ Յեսու ժառանգեցուցանէր Իսրայէլի զԵրկիրն Աւետեաց), զկնի սորա Հոնակ, Վաշտակ, Հայկակ, Ամբակ, Առնակ, Նորայր, Վստամ, Կար, Գոռակ, Հրատն, Ընձակ, Գղակ, Հօրոյ, Զարմայր (որ յեղիական պատերազմին ընդ Եթովպացի զօրուն մեռանի), Պերճ (առ որով Դաւիթ արքայն Իսրայէլի) Արբուն, Բազուկ, Հոյ, Յուսակ, Կայպակ, Սկայորգի։ Յետ ամենեցուն սոցա Պարոյր անուն՝ յազգէ Հայկայ. առտանօր զանազգիսն 'ի բաց լքեալ հերքեալ՝ և զնահապետութիւն ազգի իւրոյ վերըստին նորոգեալ պայազատէր։ Սա ճոխաբար պսակի թագընկալութեամբ ընդ առաջին 'ի Հայս. զի Վարբակէս զաւառով Մեդացի 'ի քաջաց արանց բարեկամս իւր կազմեալ առատութեամբ բազկաւ, ընդ որս և զքաջն և զաջողակն մեր Պարոյր յինքն յանկուցեալ՝ ձև և շուք թագաւորութեան նմա գնէր և նոքօք հանդերձ յինքն գրաւեալ 'ի Սարգանապազդայ զթագաւորութիւնն՝ տիրէ Ասորեստանի և Նինուէի։

Յայնմհետէ 'ի պարծանս գովեստից ազգիս մերոյ միտք իմ որցեալ զիս բերէ դեգերիլ 'ի ներբողումն. զի ոչ նահապետս այսուհետև, այլ թագաւորս զմերազնեայս շարայարել ինձ պատշաճի պանծալի պարծանօք։ Ապա առ սովաւ Արծրունիքն յորդւոցն Սենեքերիմայ բնակիլ 'ի Հայս բարեպատիւք 'ի Պարոյրայ եղեն։ Իսկ Պարոյր յետ մահուան իւրոյ թողու իւր որդի զՀրաչէ՝ ըստ արժանի անուանն և տեսակ դիտակին. վասն զի յաւէտ իմն զուարթատեսիլ և բոցակնագոյն նա տեսողացն երևիւր։ Առ սովաւ գերեալ գիտէ Գիրն զՀրէաստան 'ի Նաբոգոդոնոսորայ։ Իսկ Հրաչեայ 'ի գլխաւոր գերելոցն զմի ոմն 'ի Նաբոգոդոնոսորայ հայցեալ՝ զՇամբաթ անուն, բնակեցուցանէ յերկրիս

նա զգուշացրել էր իր զորքին՝ կենդանի պահել իր տարփածուին, բայց Արան կռվի ժամանակ անգիտաբար սպանվում է Շամիրամի զինվորների կողմից՝ իրենից հետո թողնելով իր որդի Կարդոսին։ Իսկ պագշոտ Շամիրամը Արայի նկատմամբ իր ունեցած առաջին խանդաղատանքի համար Կարդոսին հոր անունով կոչում է Արա՝ նրան վերակացու կարգելով Հայոց աշխարհի վրա։ Նա էլ մեռավ հենց իր՝ Շամիրամի դեմ մղած պատերազմում՝ որպես ժառանգ թողնելով գործով ու խոսքով հանճարեղ, երևելի ու սոսանվեր որդուն՝ Անուշավանին, որը նախ երկրի մի մասը, իսկ հետո ամբողջը նվաճելով՝ իշխում էր։ Նա շատ տարիներ անց վախճանվում է։

Նրա զավակներից ու ցեղից ոչ ոք չի իշխում իր հայրենի երկրին, այլ ուրիշները տիրեցին, որոնք ոչ թե ազգականներ էին, այլ Թորգոմյան ազգի մեջ առաջադիմությամբ աչքի ընկնողներ, որոնց անունները սրանք են՝ Պարետ, Արբակ, Զավան, Փառնակ, Սուր (նրա օրոք Հեսուն Իսրայելին ժառանգել տվեց Ավետյաց երկիրը)։ Սրանից հետո [թագավորեցին]՝ Հոնակը, Վաշտակը, Հայկակը, Ամբակը, Առնակը, Նորայրը, Վստամը, Կարը, Գոռակը, Հրատնը, Ընձակը, Գղակը, Հորոն, Զարմայրը (նա մեռնում է եղիական պատերազմում[11] եթովպական զորքի դեմ), Պերճը (որի օրոք էր Իսրայելի Դավիթ արքան), Արբունը, Բազուկը, Հոյը, Հուսակը, Կայպակը, Սկայորգին։ Այդ բոլորից հետո Հայկի ցեղից Պարույրը, այդ ժամանակ դուրս քշելով ոչ ազգականներին ու կրկին վերականգնելով իր հայրենի իշխանությունը, թագավորում է։ Նա առաջինն է փառավորապես թագադրվում Հայաստանում, որովհետև ծնունդով մեդացի Վարբակեսը քաջ մարդկանցից առատաձեռնությամբ ավելացնում էր իր բարեկամների քանակը, նրանց հետ նաև մեր քաջ ու ճարպիկ Պարույրին իրեն միացնելով՝ թագավորության ձև ու շուք է տալիս նրան և նրանց հետ Սարգանապազից գրավելով թագավորությունը՝ տիրում է Ասորեստանին ու Նինվեին[12]։

Այնուհետև մեր ազգի գովաբանության համար իմ միտքը ստիպում է ինձ զբաղվել ներբողմամբ, զի պատշաճ է ինձ այսուհետև ոչ թե նահապետներին, այլ մերազնյա թագավորներին ներկայացնել պարծանքով։ Սրա օրոք Արծրունիները[13], որոնք սերում էին Սենեքերիմի որդիներից, բնակվելով Հայաստանում, մեծ պատվի արժանացան Պարույրի կողմից։ Պարույրն իր մահից հետո թողնում է իր որդի Հրաչեին, որը տեսքով ու անունով արժանի էր իր անվանը, քանի որ նա տեսնողներին միշտ զվարթատես ու բոցեղեն աչքերով էր երևում։ Սուրբ Գիրքը գիտի, որ սրա օրոք է Հրեաստանը գերվել Նաբուգոդոնոսորի կողմից։ Իսկ Հրաչեն, խնդրելով Նաբուգոդոնոսորի կողմից գերված գլխավոր գերիներից մեկին՝ Շամբաթին, նրան մեծապատիվ շքեղությամբ բնակեց-

մերում մեծապատիւ շքեղութեամբ։ Եւ 'ի ծննդոց սորա սերեալ ազգք Բագրատունեաց։

Իսկ յետ Հրաչեայ Փառնաւազ զցեղապետութիւն ազգիս պայազատէ. և յետ նորա Պաճոյճ, և յետ նորա Կոռնակ, յետ որոյ Փաւոս. և զկնի Փաւոսայ միւս Հայկակ. իսկ յետ սորա Երուանդ, որ փոքր ինչ 'ի նահապետութեան կեցեալ՝ ծնանի զմեծն Տիգրան։

Եւ այսքան անուանք և զրոյցք թէ հարցեալ լինի՝ յորմէ՞ գոլ. գիտել, գիտասցէ զի Քաղդէացւոց մատեանքն մեզ ընձեռեցան, որք կան 'ի Նինուէ և յԵդեսիայ առ Տիբերիւ գրեալ։ Բայց Տիգրանայ առաւել ևս քան զբնաւ թագաւորս մեր իմաստալեղց հարստութեամբ խոհեմամիտ երևեալ՝ անցեալ զանցեալ՝ զամենեքումբք լինէր։ Սա յետ բազում առաքինի քաջութեան և զբազում գործս քաղաքականս յարդարելոյ զմարացն 'ի բաց բարձեալ զիշխանութիւն՝ պայազատէր զնա. և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ինչ ընդ իւրեաւ հնազանդեալ նուաճէր. զԱժդահակ սպանեալ՝ զարքունիս նորա 'ի գերութիւն վարէր, և օժանդակեալ ևս յԱնուշ մօրէն Վիշապաց և կալեալ զԿիւրոս՝ յինքն զիշխանութիւնն Մարաց և Պարսից գրաւեալ յանգուցանէր. և զսահմանս հայրենի զրոհին 'ի հինն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեանց, և զազգս մեր ևս քան զևս բարձրացուցանէր ճոխացուցեալ. և որք ընդ լծով հարկի այլոց ոմանց էին կացեալք՝ ամենեցունց նոցա լծադիր և հարկապահանջ լինէր։ Եւ 'ի սմանէ ասեն լինել զՈստանիկ ազատութիւն բարձին, որ այժմ գեռ ևս կայ և պահի անուամբ իբր թագաւորական իմն զարմ զնոսա իմացեալ։ Այսպէս էր սա մեծիմաստ և պարկեշտ և մեծաջան և նաղելի 'ի գնացս և 'ի գործս զկեանս իւր էր քաղաքավարեալ. այլև 'ի հաւասարասիրութիւն առ ամենեսեան զինքն կշռադատեալ՝ այսպէս և անդր ևս քան զայլս լցեալ էր սորա բարի մրցանաց հանդէսք. և բան գովեստից սորա բազում ճառից պիտոյ է, այլ շտապ տագնապի տարակուսանացս ոչ ներէ ինձ ծախել զժամանակս 'ի ներբողումն սորա քան թէ փութալ յայլ ինչ, որ առաջի կայ։ Տիգրան ծնեալ որդի զԲաբ, զՏիրան, զՎահագն, զոր 'ի կանտոցահար աղերախս ընդ վիշապաց համբաւէին կռուիլ նմա և յաղթել, և ընդ քաջին Հերակլեայ նահատակութեանցն զնա համեմատել։ Ասի բան զՎահագնէ, թէ 'ի նահանգին Վրաց ըստ չափ հասակի նորա անդրի կանգնեալ պատուէին զոհիւք։ Եւ 'ի զարմից սորա սերին Վահունիք. սա ծնանի որդի և 'ի կրտսերոյ որդւոյ նորա Առաւենէ Առաւենեանք ցեղապետին։ Իսկ յԱռաւենայ ծնանի Ներսեհ, և 'ի Ներսեհէ Զարեհ, յորմէ ազգ Զարեհաւանեան. իսկ 'ի Զա-

նում է մեր երկրում։ Եվ նրա զավակներից էլ սերում է Բագրատունյաց ազգը։

Հրաչեից հետո մեր ազգի վրա իշխում է Փառնավազը, նրանից հետո՝ Պաճույճը, նրանից հետո՝ Կոռնակը, որից հետո՝ Փավոսը, և Փավոսից հետո՝ մյուս Հայկակը, իսկ սրանից հետո՝ Երվանդը, որը փոքր-ինչ նահապետելով՝ ծնում է մեծն Տիգրանին։

Եվ եթե մեկը հարցնի, թե այսքան անուններն ու դեպքերը որտեղի՞ց գիտենք, պիտի իմանա, որ այդ ամենը մեզ ընձեռեցին քաղդեացիների մատյանները, որոնք գրվել են Տիբերի օրոք և գտնվում են Նինվեում ու Եդեսիայում։ Բայց Տիգրանը, իր խոհեմությամբ, շրջահայացությամբ ու մեծությամբ առավել լինելով մեր բոլոր թագավորներից, գերազանցում էր բոլորին։ Բազում առաքինի քաջագործություններից ու նվաճումներից և մարերի իշխանությունը վերացնելուց հետո նա իշխում էր բոլորի վրա, և նվաճելով բավական ժամանակ իրեն էր ենթարկում նաև հույներին։ Նա սպանում է Աժդահակին և գերում նրա արքունիքը, օգնություն ստանալով վիշապների մայր Անուշից և բռնելով Կյուրոսին՝ իրեն է ենթարկում նաև Մարաց ու Պարսից իշխանությունները։ Մեր հայրենիքի սահմանները նա հասցնում է մինչև ծովափ և մեր ազգին փառաբանելով՝ է՛լ ավելի է բարձրացնում։ Եվ ովքեր ուրիշի լծի տակ էին, այժմ բոլորը նրան են ենթարկվում ու հարկատու դառնում։ Եվ ասում են, որ նրանից է եղել Ոստանիկի պատվի ազատությունը, որն այժմ էլ գեռ կա և պահպանվում է՝ ճանաչելով նրանց որպես թագավորական մի ցեղ։ Այսպիսով, նա իր կյանքն անցկացրել էր խելացի, պարկեշտ, աշխատասեր, պանծալի ընթացքի ու գործերի մեջ։ Բացի դրանցից, նա բոլորի նկատմամբ համակված էր հավասար սիրով,— այս բոլորի հետևանքով ամենուրեք մեծապես տարածված էր նրա արդարացի կռիվների համբավը։ Նրան գովաբանելու համար բազում ճառերի կարիք է զգացվում, բայց շտապելը թույլ չի տալիս ինձ՝ ժամանակ վատնել նրան գովերգելու համար, որովհետև պետք է շտապ պատմել այլ բաներ, որ կան մեր առաջ։ Տիգրանը ծնում է Բաբին, Տիրանին, Վահագնին։ Վերջինիս մասին ասում էին, թե նա քնարահարությամբ է կռվել վիշապների հետ և հաղթել։ Եվ նրան համեմատում էին նահատակված քաջ Հերակլի հետ։ Վահագնի մասին ասվում է, թե Վրաց աշխարհում նրա հասակի չափով մի արձան էր կանգնեցվել և զոհերով այն մեծարվել։ Նրա ցեղից սերում են Վահունիները։ Նա որդի է ծնում, իսկ նրա կրտսեր որդուց՝ ցեղապետ Առավենից, առավենյաններն են սերում։ Իսկ Առավենից ծնվում է Ներսեհը, Ներսեհից՝ Զարեհը, որից սերում է զարեհավանյան ցեղը, Զա-

բեհէ Արմոգ, և յԱրմոգայ Բայգամ, 'ի Բայգամայ Վան, և 'ի Վանէ Վահէ։ Սա խրոխտաբար սոնքացեալ ընդդէմ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ՝ սպանանի 'ի նմանէ։

Յայսմհետէ ոչ գտանի ստուգաբան պատմութիւն ինչ ցեղապետութեանցն կացելոց մինչև ցթագաւորել Պարթևին Վաղարշակայ. զի սամարտիկոս շփոթութեամբ զմիմեանսքք ելեալ և այր ընդ առն 'ի կռիւս կաքաւեալ՝ մինչև դիւրամուտ զօտարածինն 'ի բնակութիւն իւրեանց առնէին և անյայտ զիւրեանցն զրոյցս։

Արդ այլ մի՛ ևս աստանօր ինձ աշխատութիւն հասուցաներ, որ զհամառօտութիւն բանի և զհաւաստութիւն և զարագաբանութիւն միշտ պատուել գիտես։ Բայց ամենեցունց սոցա թուականք ժամանակաց 'ի մերոյն Հայկայ մինչև ցթագաւորել Վաղարշակայ գտանին ամք 2297։

Իսկ ես յայսմհետէ սակաւուք ինչ զթագաւորելն Վաղարշակայ 'ի վերայ մեր շարայարեցից և որք յետ նորա 'ի նորին սերմանէ փոխանորդեցին զթագաւորութիւն, որք և Արշակունիք անուանեցան. և զաւելորդն՝ որ յայլոց ոմանց եղև պատմեալ 'ի նոսա հրաւիրեցից գիտել, թէ պիտոյ է քեզ։

Աղեքսանդր Փիլիպպեայ տիեզերակալեալ բազմաց՝ տայր տէրութիւն կտակաւ, զի 'ի վերայ ամենեցունց միապետեալ իւրն անուանեսցի իշխանութիւն։ Եւ սորա մեռեալ՝ Սելևկոս զկնի թագաւորէ Բաբիլոնի, զՊարթևս ևս ընդ իւրեաւ հնազանդեալ պատերազմաւ սաստկիւ։ Եւ սոքա ևս մեռեալ՝ առնու զթագաւորութիւնն Անտիոքոս, որ և Սովտերն։ Եւ այսպէս սոքա թագաւորեալ ընդ փոքր և ընդ շատ իբրև ամս վաթսուն, ապա ապստամբին Պարթևք 'ի Մակեդոնացւոց։ Իսկ Արշակ քաջ 'ի զաւակէ Աբրահամու ի Քետուրական ծննդոց, զոր յետ մահուանն Սառայի էառ իւր կին՝ թագաւորէ 'ի վերայ Պարսից և Մարաց և Բաբիլացւոց, և անուանի Պարթև՝ այսինքն բռնութիւն։ Սա բազում պատերազմօք ընդդէմ քաջաց անյաղթ գտեալ՝ ընդ իւրեաւ զամենայն թագաւորութիւնս նուաճէր. և վասն զի տիեզերակալութեամբ իմն ձեռներէց լինէր ինքնիշխանաբար՝ ապա թագաւորեցուցանէ Հայաստանեացս զՎաղարշակ եղբայր իւր՝ զայր բարեխորհուրդ և խոհեմ և քաջ։ Սա յետ բազում մրցական յաղթանակաց ընդդէմ թշնամեաց բազում գործս քաղաքականս և կենցաղօգուտս յարդարեալ կազմէր վայելչական կարգօք։ Նախ անձինն եղեալ շուք թագաւորութեան բոլոր իսկ պերճապաճոյճ վարուց հանդիսիւ. յետ որոյ նախարարութիւնս ընդ ձեռամբ հաստատեալ կացուցանէ 'ի դրան արքունի. և ընդ ոլորտս ևս իւրոյ տէրութեանն և զարս պատուականս և պիտանիս հաստատէր 'ի նահ-

բեհից սերում է Արմոգը, Արմոգից՝ Բայգամը, Բայգամից՝ Վանը, Վանից՝ Վահեն։ Նա զոռոզաբար խրոխտանալով Ալեքսանդր Մակեդոնացու դեմ՝ սպանվում է նրա կողմից։

Այնուհետև մինչև Վաղարշակ Պարթևի թագավորելը՝ ցեղապետների վերաբերյալ ոչ մի ստույգ պատմություն չկա, որովհետև խոռվարար [սամարտիկոս] ցեղերը, հարձակվելով մեկը մյուսի վրա, հեշտությամբ իրենց երկիր մտած օտարներին դուրս էին քշում, և նրանց պատմությունները անհայտ էին մնում։ Արդ՝ այստեղ նոր աշխատանք մի՛ հասցրու ինձ, որի խոսքի համառոտությունը, հավաստիությունը և արագաբանությունը պատվել գիտես։ Բայց սրանց բոլորի ժամանակների թվերը միասին՝ սկսած մեր Հայկից մինչև Վաղարշակի թագավորելը 2297 տարի են կազմում։

Այսուհետև ես փոքր-ինչ կշարադրեմ Վաղարշակի թագավորելը մեզ վրա, իսկ նրանից հետո ովքեր ժառանգեցին նրա թագավորությունը, նրանք նրա սերնդից էին և Արշակունիք անվանվեցին. մանրամասները, որոնք պատմեցին ուրիշները, եթե քեզ, [ընթերցող], պետք լինեն, կարող ես նրանցից իմանալ։

Փիլիպպեի Ալեքսանդրը, տիրելով շատերին, իր տերությունը տալիս է կտակով, որպեսզի ամենքի վրա իշխելով՝ իշխանությունն իր անունով կոչվի։ Նրա մեռնելուց հետո Բաբելոնի վրա թագավորում է Սելևկոսը, որն ահեղ պատերազմով պարթևներին էլ հնազանդեցնում է իրեն։ Երբ նա մեռնում է, թագավորությունը խլում է Անտիոքոսը, այն է՝ Սովտերնը։ Եվ սրանք, մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ, թագավորեցին մոտավորապես վաթսուն տարի. հետո պարթևներն ապստամբություն բարձրացրին մակեդոնացիների դեմ։ Իսկ քաջ Արշակը, որը սերում էր Աբրահամի զավակից՝ ծնված Քետուրա կնոջից, որին Սառայի մահվանից հետո [Աբրահամը] կնության էր առել, թագավորում է պարսիկների, մարերի ու բաբելացիների վրա և անվանվում է Պարթև, այսինքն՝ բռնություն[14]։ Նա քաջերի դեմ բազում պատերազմներ է մղում, հաղթում նրանց և ամբողջ թագավորությունն իրեն է ենթարկում։ Եվ քանի որ համարձակ տիեզերակալ է լինում, Հայաստանում թագավոր է նշանակում իր եղբայր Վաղարշակին՝ մի ողջամիտ, խոհեմ ու քաջ մարդու։ Նա թշնամիների դեմ մղած բազում հաղթական կռիվներից հետո վայելուչ կերպով բազմաթիվ քաղաքական և կենցաղօգուտ գործեր է կատարում։ Նախ՝ իր պերճապաճույճ վարքով հովանի է դառնում իր թագավորությանը, ապա՝ նախարարներին իրեն ենթարկելով, կապում է արքունիքի հետ և իր տերության բոլոր կողմերում ղեկավարներ է նշանակում պատվական ու պիտանի մարդկանց, որոնց մի մա-

պետութիւնս բազմօրինակ մասամբք 'ի զարմիցն Հայկայ և յայլոց ևս աջողակաց արանց։ Նախ զԲագարատ, որ 'ի Շամբաթայ Հրէէ էր, զորմէ համբաւեն լինել յազգէ Դաւթի՝ թագաւոր թագընկալութեան անձին իւրոյ զոլ հաստատէր. քանզի նա նախ զանձն ընծայ մատուցանէր քան զայլս բազումս։ Այլ և սպարապետ և իշխան բիւրուց և հազարաց զնա կացուցանէր։ Յետ որոյ քաջապէս վանեալ զՅունականսն ևս՝ նուաճեալ կարգէ ընդ իւրով ձեռամբ զՊոնտոս և զԿեսարիայ, որ կոչի Միժակ՝ հանդերձ շրջագայեալ գաւառօքն։ Եւ անտի դարձեալ ընդ ծովեզերայսն առ ստորոտով լերինն Կովկասու՝ հրաման պատուիրանի տայ շղուրտաբարոյ վայրենի ազգացն այնոցիկ 'ի բաց քեցել յանձանց զաւազակութիւնն և զմարդադաւութիւն և զբարս չարակեղտս, և հրամանաց և հարկաց արքունի հպատակ կալ, և պատուի՝ բարձի ցեղապետութեանց յարքունուստ արժանի գտանիլ։

Այսպէս սորա զարտաքոյս արքունեացն յարմարապէս հոգ ածեալ՝ ապա յօրինէ կարգս վայելուչս իւրում ևս պալատանն, որ ինչ օրէն է թագաւորութեան և որ պիտակ է թագաւորութեան և որ բազձաձէ զթագաւորութիւն։ Եւ նախ թագադիր իւր ըստ ամենայն սկզբանց ասացելոցն կացուցանէ. ապա զգեցուցանօղս արքայի և թիկնապահս, և ապա որսօնս. իսկ էրէոց և հաւուց 'ի պէտս խորտկաց՝ և դարձեալ սպասիկս և զահաւորս և հազարապետս զոհարանաց. և ապա մատռուակս և արծուէկիրս և բազէկիրս և պատրաստիչս ձեան ամարանոցաց և համբարածուս ձմերանոցաց, և լեզէօն պահպանակ թիկնոցաց, և դռնապանս դրանց արքունի, այլև ներքինիս խզեալ. ապա երկրորդ ևս թագաւորութեանն իւրոյ կացուցանէր 'ի զաւակէ Մարացւոյն Աժդահակայ, որ այժմ Մուրացանդ անուանի։

Այսպէս յարդարեալ սորա զարքունական պիտոյիցն զհանգամանս՝ կարգեալ կացուցանէ այնուհետև կողմնակալս, կուսակալս, նահապետս, սպասալարս, զօրագլուխս. կարգէ և բդեշխս, մի՝ երկրին Գուգարաց հիւսիսոյ, և միւս ևս յարևմտից հարաւոյ աշխարհին Աղձնեաց։ Որոշէ և ժամս յարքունիս մտանելոյ, և ժամանակս խորհրդոց և երաստից և խրախճանութեանց պատրաստէ. և յիշեցուցանօղս երկուս, միումն ըզբարի յիշողութիւնն ընդ ուշի կապել և յանիրաւ հրամանս թագաւորին զեկուցանել զիրաւն և զմարդասիրելն. իսկ միւսումն զվրէժխնդրութիւն չարացն և զհասս իրաւանցն ցուցանել։ Իսկ զքաղաքացիս նախապատիւս քան զգեղջուկս համարել հրամայէ. այլ և քաղաքայնոց ոչ խսպառ

սը Հայկի սերնդից էր, իսկ մյուսները՝ հաջողակ մարդկանցից։ Նախ Բագարատին, որը [սերում էր] հրեա Շամբատից, որի մասին ասում էին, թե Դավթի ցեղից է, անձամբ իրեն թագադիր է դարձնում, քանի որ նա իր անձը նրան որպես ընծա էր մատուցում, քան շատ ուրիշները։ Նրան նաև կարգում է սպարապետ և բյուրավոր ու հազարավոր մարդկանց իշխան։ Դրանից հետո հույներին ևս քաջաբար դուրս քշելով ու նվաճելով՝ նա իր ձեռքի տակ է գցում Պոնտոսն ու Կեսարիան, որը իր շրջակա գավառների հետ միասին կոչվում է Միժակ։ Եվ այնտեղից Կովկասյան լեռան ստորոտներով վերադառնալով դեպի ծովափնյա տարածքները՝ այնտեղի վայրենի ցեղերին հրաման է տալիս թողնել ավազակությունը, մարդասպանությունը, չար սովորությունները և հպատակվել արքունի հրամաններին ու հարկերին և արքունիքի կողմից արժանանալ ցեղապետությունների պատվին ու աստիճանին։

Եվ այդպես հոգ տանելով արքունիքից դուրս եղողների մասին՝ նա հետո ստեղծում է վայելուչ կարգեր իր պալատում ևս, այսինքն՝ այն, ինչ որ վայել է թագավորությանը, ինչ որ պիտանի է թագավորությանը, և ինչ որ միավորում է թագավորությունը։ Նախ, ինչպես ասվեց սկզբում, իրեն թագադիր է կարգում, ապա՝ արքային զգեցնողներ, թիկնապահներ, և ապա որսորդներ։ [Նշանակում է] նաև սպասավորներ՝ տարբեր կերակուրների համար անհրաժեշտ կենդանիներ ու թռչուններ որսալու համար, գահի պահապաններ, զոհարանների հազարապետներ, այնուհետև՝ մատռվակներ, արծվակիրներ, բազեակիրներ, ամառանոցների ձյուն ու ձմեռանոցների պաշար պատրաստողներ, թիկնապահ պահապան զինվորներ, արքունիքի դռնապահներ, ներքինիներ, իսկ իր երկրորդ թագավորության համար կարգում է Մարացի Աժդահակի զավակից ծնվածին, որն այժմ անվանվում է Մուրացան։

Այսպես կարգավորելով արքունական կարիքները՝ այնուհետև նշանակում է կողմնակալներ, կուսակալներ, նահապետներ, սպասալարներ, զորագլուխներ։ Կարգում է նաև բդեշխներ, որոնցից մեկը՝ Գուգարքի հյուսիսային կողմի, իսկ մյուսը՝ Աղձնիքի հարավային կողմի համար։ Նշանակում է նաև արքունիք մտնելու ժամերը և պատրաստում է խորհուրդների, ժողովների ու խրախճանքների ժամանակները։ [Նշանակում է] նաև երկու հիշեցնողներ, որոնցից մեկին հանձնարարում է միշտ մտքում ունենալ բարի հիշողություններ և թագավորի՝ անիրավ հրաման տալու ժամանակ նրան հիշեցնել իրավացին ու մարդասիրականը, իսկ մյուսին՝ ցույց տալ չարերի վրեժխնդրությունը և իրենց պատկանող իրավունքը։ Հրամայում է՝ քաղաքացիներին ավելի պատվական համարել գեղջուկներից, բայց նաև քաղաքացիները չպետք է

'ի վերայ գեղջկացն ընդվզել և պերճանալ. և այսպէս կենահաղորդս լինել ընդ միմեանս աննախանձ եղբայրութեամբ, որ է առիթ շինողութեան և խաղաղութեան։ Արդ սա յետ այսպիսի գեղեցկայարմար կարգաց յօրինուածոց բարի և բարգաւաճ անուամբ մեռանի 'ի Մծբին, թագաւորեալ ամս քսաներկու։

Յետ նորա Արշակ որդի նորուն ընդ նորա թագաւորեալ՝ հետևող հայրենի մշտնջենաբարոյ մրցմանցն գտանիւր։ Սա իսկ և իսկ մարտուցեալ ընդ Պոնտացիս և վանեալ զնոսա։ Պատմի, եթէ զտէգ նիզակի իւրոյ, զոր արեամբ օձից ասէին մխեալ՝ նստուցանէր հարուստ խորութեամբ յարձանի միում, թողեալ նշան տեսողացն զնա յիւրում քաջութեան։ Յաւուրս սորա հատուածեալք ոմանք 'ի Հրէից՝ բնակելոց 'ի Բուլկարս, որ 'ի ծորձորս Կովկասու՝ եկեալ բնակէին առ 'ի ստորև Կողայ։ Եւ երկուք ոմանք 'ի նոցանէ շարշարեալք սակս ոչ պաշտելոյ զդիսն՝ սրուլ կատարեցան 'ի վերայ հայրենի օրինացն ըստ Եղիազարու սրբոյ և որդւոցն Շամովնեայ։ Բայց Արշակայ թագաւորեալ ամս երեքտասան՝ փոխանորդէ զթագաւորութիւն նորա Արտաշէս որդի նորա։ Սա ոչ տուեալ տեղի Արշականայ Պարսից արքայի ըստ օրինի առաջնոյ ունիլ զնախագահութիւնն, և հարստահարութեամբ զնա ընդ իւրեաւ հնազանդեցուցեալ. զի Արտաշիսի Արշականն զնախագահութիւնն հաւատայր՝ զերկրորդն ինքն ունելով զգահ։ Սա բազում զօրօք խաղացեալ գնացեալ յարևմուտս 'ի վերայ Լիդիացւոց և ձերբակալ արարեալ զթագաւորն Կրեսոս՝ հրամայէ հանել զնա 'ի տանջանարան երկաթեղէն տապակի։ Իսկ Կրեսոսի զբանսն Սողոնի 'ի յիշատակ իւր ածելով՝ ասէ. «Ոչ պարտի մարդ երանել զբարեբախտութիւն իւր մինչև 'ի վախճան։» Դարձեալ Արտաշիսի ծովագնացութեամբ ընդ երկիր բերեալ՝ առնու զՊոնտոս և զԹրակէ. կործանէ և զլակեդեմոնացիս, փախստեայ առնէ և զՓոկէացիս. անձնատուր լինին նմա և Ղոգացիք. զոհս ընդ դիւցազանցն մատուցանէ Ելլադայ. և 'ի վերայ այսր ամենայնի ոչ ևս ստացեալ նորա յինքեան միտս հպարտութեան՝ այլ արտասուելով ասէր. «Աւաղ փառացս անցաւորի»։ Յետ այսորիկ ջան 'ի մտի եդեալ ծառայեցուցանել իւր զբոլոր իսկ արևմտեայսն՝ լնոյր զՈվկիանոս բազում նաւաց բազմութեամբ սակս նաւարկելոյ 'ի վերայ ազգաց բազմաց։ Իսկ անդ ահագին իմն աղմուկ շփոթի 'ի մէջ իւրոց զօրացն լեալ՝ զմիմեանս սատակէին. ընդ որս և Արտաշէս, որ այնչափ յաղթանակեաց զբազում ազգս՝ խողխողի յիւրոցն զօրաց, թագաւորեալ ամս քսանևհինգ։

Իսկ զկնի Արտաշիսի թագաւորէ երկրորդն Տիգրան՝ որդի նորուն։ Սա գումարտակ բազում ընդդէմ Յունականացն՝ 'ի վերայ եկելոցն նոր-

հոխորտան կամ պարծենան գյուղացիների առաջ, այլ պետք է միմյանց հետ հաղորդակցվեն աննախանձ եղբայրությամբ, որը շինարարության ու խաղաղության հիմքն է։ Այսպիսով, ստեղծելով այսպիսի գեղեցկահարմար կարգեր և թագավորելով քսաներկու տարի՝ նա բարի ու փառավոր անվամբ վախճանվում է Մծբինում։

Նրանից հետո նրա փոխարեն թագավորում է նրա որդի Արշակը, որը դառնում է իր հոր քաջապինդ կռիվների հետևորդը։ Ուղղակի մարտընչելով պոնտացիների դեմ՝ նա հալածում է նրանց։ Պատմում են, թե ինչպես նա իր նիզակի տեգը, որը օձի արյամբ էր թաթախված, մեծ խորությամբ մխրճում է մի արձանի մեջ՝ տեսնողների վրա թողնելով իր քաջության նշանը։ Նրա օրոք ոմանք առանձնանալով հրեաներից, որոնք բնակվում էին Բուլղարիայում և Կովկասյան լեռների ծորձորներում, գալիս, բնակվում են Կող լեռան ստորոտում։ Եվ նրանցից երկուսը կուռքերին չպաշտելու պատճառով տանջանքների ենթարկվեցին ու սրի քաշվեցին հայրենի կրոնի համար սուրբ Եղիազարի և Շամավոնի որդիների նման։ Արշակին, որը թագավորեց տասներեք տարի, փոխարինում է նրա որդի Արտաշեսը։ Նա, խույս տալով Պարսից Արշական արքայից, որը առաջվա նման գահերեցության իրավունք ուներ, ուժի զորությամբ նրան հնազանդեցնում է իրեն, այնպես որ Արշականը առաջին աթոռը վստահում էր Արտաշեսին, իսկ երկրորդ գահն իրեն էր պահում։ Նա մեծ զորքով շարժվում, գնում է արևմուտք, լիդիացիների վրա և ձերբակալելով Կրեսոս թագավորին՝ հրամայում է նրան գցել երկաթյա տանջարանի մեջ, որպեսզի տապակվի։ Իսկ Կրեսոսը, հիշելով Սողոնի խոսքերը, ասում է. «Մարդը չպիտի երանի տա իր բարեբախտությանը՝ մինչև իր վախճանը»։ Արտաշեսը, նավարկելով դեպի ցամաք, գրավում է Պոնտոսն ու Թրակիան, կործանում է լակեդեմոնացիներին, փախուստի է մատնում փոկեացիներին։ Նրան անձնատուր են լինում ղոգացիները։ Հելլադան դյուցազունների համար զոհ է մատուցում։ Եվ այս ամենից հետո նա երբեք չի զոռոզանում իր մտքում, այլ արտասվելով ասում էր. «Ավա՜ղ անցավոր փառքին»։ Դրանից հետո նա ջանում էր արևմտյան բոլոր ցեղերին հպատակեցնել. դրա համար նա ծովը լցնում է բազում նավերով և նավարկում շատ ցեղերի վրա։ Բայց այնտեղ, իր զորքի մեջ մեծ աղմուկ ու իրարանցում է լինում, և նրանք սպանում են միմյանց, որոնց հետ նաև՝ Արտաշեսին, որը անհամար ցեղերի հաղթելուց հետո խողխողվում է իր զորքի կողմից՝ թագավորելով քսանհինգ տարի։

Իսկ Արտաշեսից հետո թագավորում է նրա որդի Տիգրան Երկրորդը։ Նա մեծ զորք է հանում իր վրա հարձակված հույների դեմ և նը-

ցրա, կազմեալ՝ 'ի վերջ կոյս զնոսա նահանջէր. և 'ի քեռայր իւր Միհրդատ զՄիժակ և զայլ Միջերկրեայսն հաւատացեալ՝ դառնայ յաշխարհ իւր։ Այս Միհրդատ երթայ ունի ևս և զԱմասիայ, որ բազում ամօք յառաջ շինեալ էր յԱմասեայ եղբօրորդւոյ Նեքտանիբայ հրամանաւ Աղեքսանդրի՝ որդւոյ Նեքտանիբայ, և յընդարձակագոյնս զնա պարսպեաց. և գրաւելով զնա 'ի Հայս՝ տիեզերասահման քաղաք զնա յարդարեալ կոչէ։ Շինէ 'ի նմա և արքունիս ըստ հիւսիսոյ կողմանէ Ռիս գետոյ. իսկ յարևելից դիմակի քարանձաւին շիրիմս քարակոփս և տունս բրածոյս յօրինէ համանման ձեռակերտին Շամիրամայ, որ 'ի Վան և 'ի Խազնաթ Գեղփայ։ Բայց Տիգրան յետ բազում կարդաց և յօրինուածոց իւրոց դիմէ 'ի վերայ Պաղեստինայ՝ առեալ գերի բազում 'ի Հրէից։ Յայնժամ ապա և Պոմպէոս Հռոմայեցի գայ հասանէ 'ի վերայ Միհրդատայ. որ թէպէտև ահագին մարտս ընդդէմ նորա գումարտակ դնէր, սակայն յաղթեալ 'ի բազմութենէն՝ փախստական 'ի կողմանս Պոնտոսի անկանէր։ Իսկ Պոմպէի առեալ զՄիժակ և կալեալ զորդին Միհրդատայ՝ զմանուկն Միհրդատ ըստ անուան հօր իւրոյ, զփախստականն Միհրդատ 'ի ձեռն խարդաւանութեան հօրն Պիղատոսի սպանանէ թունաւոր դեղովք, և տայ զպատանին զհայրանունն 'ի ձեռն Գաբիանու Հռոմայեցւոյ. իսկ Գաբիանէ առ Տիգրան քեռի իւր առաքէ զպատանին։ Իսկ յետ սակաւուց ինչ արհամարհութիւն գտեալ Միհրդատայ 'ի Տիգրանայ քեռոյ իւրմէ և հատուածեալ 'ի նմանէ անկանի առ Կեսար։ Եւ Կեսարու տուեալ զՄիժակ Միհրդատայ՝ շինէ զնա ևս ընդարձակագոյն և պայծառ շինուածով, և 'ի պատիւ Կեսարու անուանէ զնա Կեսարիայ։ Եւ յայնմհետէ ոչ եղև այն քաղաք ընդ իշխանութեամբ Հայոց։ Բայց Տիգրանայ խօթութիւն յինքեան կրեալ՝ կացուցանէ 'ի նախարարութիւն Հայոց զԲարզափրայ՝ նահապետ Ռշտունեաց և նահապետ նմա կացուցեալ զԳնէլ ոմն յազգէ Գնունի՝ առաքէ 'ի Պաղեստին և յԵրուսաղէմ զօրու մեծաւ։ Իսկ նոցա բազում ինչ և մեծամեծ քաջութիւնս և արութիւնս անդ ցուցեալ՝ զՀերովդէս փախստական առնէին և զԱնտիգոնոս փոխանակ նորա թագաւորեցուցանէին. և զՀիւրկանոս քահանայապետն Հրէից կապեալ ածէին Տիգրանայ հանդերձ ա՛յլ ևս գերութեամբ բազմաւ։ Յետ այսորիկ Տիգրանայ փոքր ինչ ժամանակ կենաց 'ի վերայ անցեալ՝ վախճանի, թագաւորեալ ամս երեսունևչորս։

Ապա յետ մահուանն Տիգրանայ Անտոնինոս թագաւոր Հռոմայեցւոց առաքէ զօրս բազումս յԵրուսաղէմ, որք և պաշարեալ իսկ և առեալ զնա՝ սպանանեն զԱնտիգոնոս և զՀերովդէս դարձեալ թագաւորեցու-

ցանց ետ է քշում մինչև վերջ։ Եվ իր քեռայր Միհրդատին վստահելով Միժակն ու Միջերկրայքը՝ վերադառնում է իր աշխարհը։ Այս Միհրդատը գնում, գրավում է նաև Ամասիան, որը շատ տարիներ առաջ Նեքտանիբի որդի Ալեքսանդրի հրամանով կառուցել էր Նեքտանիբի եղբորորդի Ամասիան, և այնտեղ շինում է ավելի լայն ու ընդարձակ պարիսպ։ Եվ Հայաստանում այն գրավելով ու բարեկարգելով՝ կոչում է սահմանային քաղաք։ Ռիս գետի հյուսիսային կողմում շինում է նաև արքունիքը, իսկ արևելյան կողմում, քարանձավի դիմաց, կառուցում է քարակոփ գերեզմանոց ու շենքեր՝ Շամիրամի ձեռակերտին համանման, որոնք գտնվում են Վանում և Խազնաթ-Գեղփում։ Բազում բարեկարգումներից ու կառուցումներից հետո Տիգրանը հարձակվում է Պաղեստինի վրա և գերում է շատ հրեաների։ Այդ ժամանակ Պոմպեոս Հռոմայեցին գալիս հարձակվում է Միհրդատի վրա, որը չնայած նրա դեմ հանում է մեծաքանակ բանակ, բայց հաղթվում է մեծ զորքի կողմից և փախչում դեպի Պոնտոսի կողմերը։ Իսկ Պոմպեոսը գրավում է Միժակը, բռնում է Միհրդատի որդուն՝ մանուկ Միհրդատին, որը կոչվում էր իր հոր անունով, և փախստական Միհրդատին էլ սպանում է թունավոր դեղերով Պիղատոսի հոր խարդավանքով, իսկ հոր անվանակից պատանուն էլ տալիս է հռոմեացի Գաբիանեի ձեռքը։ Իսկ Գաբիանեն պատանուն ուղարկում է իր քեռի Տիգրանի մոտ։ Բայց կարճ ժամանակ անց Միհրդատը արհամարհանքի է արժանանում իր քեռի Տիգրանի կողմից և հեռանում է նրա մոտից ու ընկնում է Կեսարի մոտ։ Կեսարը Միհրդատին տալիս է Միժակը, որտեղ նա կառուցում է ընդարձակ ու լուսավոր շենքեր և Կեսարի պատվին այն անվանում Կեսարիա։ Դրանից հետո այդ քաղաքը հայերի իշխանության տակ չընկավ։ Բայց Տիգրանը հիվանդության պատճառով Հայոց նախարարության գլուխ է կանգնեցնում Ռշտունյաց նահապետ Բարզափրային, իսկ նրա համար նահապետ է նշանակում Գնունի ազգից ոմն Գնելին և նրան մեծ զորքով ուղարկում Պաղեստին ու Երուսաղեմ։ Ցուցաբերելով մեծամեծ քաջագործություններ ու սխրանքներ՝ նրանք Հերովդեսին փախուստի են մատնում և նրա փոխարեն թագավոր կարգում Անտիգոնոսին, իսկ Հյուրկանոս քահանայապետին հրեաները կապում ու բերում են Տիգրանի մոտ բազում այլ գերիների հետ միասին։ Դրանից հետո կարճ ժամանակ անցնելով վախճանվում է Տիգրանը՝ թագավորելով երեսունչորս տարի։

Տիգրանի մահից հետո հռոմեական թագավոր Անտոնինոսը Երուսաղեմ է ուղարկում մեծ զորք, որը պաշարելով ու գրավելով քաղաքը՝ սպանում է Անտիգոնոսին, և դարձյալ ամբողջ Հրեաստանի վրա թա-

ցանեն առհասարակ Հրէաստանի։ Յետ այսորիկ ապա Արտաւազդ որդի Տիգրանայ թագաւորէ Հայոց։ Սա ոչ ինչ ըստ սակի հօրն քաջնափայլ փառաց պերճապայծառ գործ արութեան ցուցեալ, քան թէ միայն պորտաբոյծ և որովայնապարար լեալ և թափառեալ զհետ որսոյ և իշավայրեաց՝ զաղբիս մեծացուցանէր։ Վասն որոյ յանդիմանեալ յիւրայնոցն և իբրև խթանաւ իմն ընդոստուցեալ բանիւ և 'ի քնոյ զարթուցեալ և բազում զօր գումարեալ՝ խաղայ 'ի Միջագետս. և զորս յափըշտակեալն էր առ 'ի նմանէն Անտոնինոս արքայ Հռոմայ՝ վանեալ հալածէ անտի զզօրս Հռոմայեցիս։ Իսկ Անտոնինոսի զայն լուեալ և իւրովի առեալ զբազմութիւն զօրացն՝ գաղանաբար յարձակի 'ի վերայ, ոչ միայն 'ի մերն յԱրտաւազդայ՝ այլև յայլոց ևս ազգաց և թագաւորութեանց, առհասարակ անտերունչ զամենեսեան թողեալ. ընդ որս և զմերն Արտաւազդ ձերբակալ առնէ 'ի Միջագետս, և առհասարակ զզօրս Հայոց և Պարսից սատակելով։ Իսկ զԱրտաւազդ հանդերձ ընչիւք բազմօք՝ յանկ ածէ պատերազմին, պատրաստել տայ Կղէոպատրեայ, որ յԵրուսաղէմ։ Այնուհետև ժողովեալ զօրք Հայոց հրամանաւ Արտաշիսի թագաւորի Պարսից՝ կացուցանեն թագաւոր ինքեանց զԱրջամ, որդի Արտաշիսի եղբօր Տիգրանայ։ 'Ի սմանէ կալաւ սկիզբն մասնաւորս ինչ հարկիւ Հայոց 'ի Հռոմայեցիսն. զի իսկոյն Արտաշէս արքայ Պարսից վախճանեալ, և Արշաւիր որդի նորուն տղայ փոքր թագաւորեալ՝ ոչ զօրէր գալ 'ի թիկունս, և ոչ օք այլ զոյր նմա համաշունչ։ Ատտանօր Ենանոս Բագրատունի, որ արձակեացն զՀիւրկանոս 'ի Հրէաստան, զոր 'ի Տիգրանայ էր գերեալ և ածեալ՝ վասն այսորիկ իսկ ընկեցաւ 'ի պատուոյն իւրմէ և եղաւ 'ի բանտի։ Եւ վասն զի նահապետն Գնդունեաց զուրաքսութիւն յականջս Արջամայ հասուցանէր և բանն զօրանայր առ 'ի հաւատալ՝ հրամայէ պէսպէս տանջանարանօք խոշտանգել զնա, զի կամ թողեալ զօրէնս հրէութեանն՝ երկիր պագցէ կռոց, կամ կախեալ զփայտէ բնաջինջ լիցի ազգաւ։ Եւ զմի 'ի նորին ազգականաց սպանեալ և զորդիս նորա մատուցեալ 'ի տեղի սպանմանն. և 'ի չժուժել մահուան որդւոյն՝ կատարէ զկամս արքային հանդերձ բոլոր համազգեօքն և յառաջին պատիւն հաստատի։ Բայց Արջամայ թագաւորեալ ամ քան՝ որդի նորուն Աբգար փոխանորդէ զթագաւորութիւնն։ Սա վասն զի նաձելի էր իմաստութեամբ Աւագ այր յառաջնոցն անուանիւր, զոր Ասորւոց և Յունաց ըստ մերումս լեզուի ոչ բաւեալ ուղղախօսել՝ Աբգար զնա անուանէին։ Ատտանօր ամենայն Հայք հարկեցան Հռոմայեցւոց հրամանաւ Օգոստնայ կայսեր՝ յաւուրս աշխարհագրին, յորում ժամանակի

գաւոր են նշանակում Հերովդեսին։ Դրանից հետո Հայաստանում թագավորում է Տիգրանի որդի Արտավազդը։ Նա իր հոր նման փառավոր ու պանծալի քաջագործություններ չի ցուցաբերում, այլ պորտաբույծ ու որկրամոլ լինելով՝ թափառում էր որսի ու վայրի էշերի հետևից և մեծացնում էր աղքանոցները։ Այդ պատճառով հանդիմանվելով յուրայինների կողմից և ինչ-որ մտքով ցատկ կատարելով ու քնից արթնանալով՝ նա մեծ զորք է կազմում և շարժվում դեպի Միջագետք։ Եվ հռոմեական Անտոնինոս արքան ինչ որ նրանից խլել էր, [հետ է վերցնում] և այնտեղից հալածում ու դուրս է քշում հռոմեական զորքին։ Այդ բանը լսելով՝ Անտոնինոսը անձամբ վերցնում է մեծ զորք և գաղանաբար հարձակվում է նրանց վրա։ Եվ այդ տեղերը անտերունչ էին թողնված ոչ միայն մեր Արտավազդի, այլ նաև ուրիշ ազգերի ու թագավորությունների կողմից։ Միջագետքում ուրիշների հետ նա բռնում է նաև մեր Արտավազդին ու առհասարակ կոտորում է Հայոց և Պարսից զորքերին։ Վերջ տալով պատերազմին՝ նա Արտավազդին մեծ ունեցվածքով պատրաստել է տալիս Կղեոպատրեի համար, որ գտնվում էր Երուսաղեմում։ Այնուհետև Պարսից Արտաշես թագավորի հրամանով հավաքում է Հայոց զորքը և նրանց համար թագավոր նշանակում Արջամին՝ Տիգրանի եղբայր Արտաշեսի որդուն։ Նրանից սկիզբ առավ հայերի վրա հռոմեացիների կողմից քիչ հարկեր դնելը, որովհետև երբ վախճանվեց Պարսից արքա Արտաշեսը, և թագավոր դարձավ նրա անչափահաս որդին՝ Արշավիրը, նա ի զորու չէր գալու օգնության, և ոչ ոք չկար նրան համաշունչ։ Այդ ժամանակ Ենանոս Բագրատունին, որը Հյուրկանոսին ուղարկեց Հրեաստան, որին գերի էր վերցրել Տիգրանից ու բերել, զրկվեց իր պատվից և բանտ գցվեց։ Եվ քանի որ Գնթունիների նահապետը բանտարկությունը հասցնում է Արջամի ականջին, վերջինս հավատում է նրա խոսքերին և հրամայում է պեսպես տանջանքներով խոշտանգել նրան, որպեսզի նա կա՛մ թողնի հրեական կրոնը և երկրպագի կուռքերին, կա՛մ կախվելով փայտից՝ ամբողջ ցեղով բնաջնջվի։ Սպանում են նրա ազգականներից մեկին և նրա որդուն տանում սպանվածի տեղը։ Զգիմանալով որդու մահվանը՝ բոլոր ազգակիցների հետ միասին նա կատարում է արքայի կամքը և վերականգնվում առաջին պատվի մեջ։ Քսան տարի թագավորելուց հետո Արջամին փոխարինում է նրա որդի Աբգարը։ Սա, քանի որ իմաստությամբ ավելի շնորհալի էր, առաջինների կողմից Ավագ այր էր անվանվում, որը ասորիներն ու հույները չէին կարողանում մեր լեզվով ճիշտ արտասանել և նրան Աբգար են անվանում։ Այդ ժամանակ Օգոստոս կայսեր հրամանով բոլոր հայերը հարկատու դարձան։ Հռոմեացի-

ծնեալ լինի Փրկիչն մեր՝ տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի Բեթղէհէմ Հրէաստանի։ Բայց 'ի մէջ Արգարու և Հերովդէի ոչ փոքր ինչ խռովութիւն և աղմուկ շփոթի պատերազմաց յուզէր. և վասն առ 'ի Քրիստոս համարձակութեանն Հերովդէի և կոտորելոյն զտղայսն 'ի Բեթղէհէմ՝ յանհնարին ցաւս ըմբռնեալ էր և ոչ կարէր անձամբ վճարել ինչ։ Ապա առաքէ զոմն եղբօրորդի իւր զօրօք բազմօք, որոյ հասեալ 'ի Միջագետս և տուեալ պատերազմ ընդ Արգարու՝ մեռանի 'ի նմանէ. և իսկ և իսկ վախճանի Հերովդէս, և Արքեղայոս որդի նորուն փոխարէրէ զտեղին։ Ապա և Արշաւրի արքայի Պարսից ևս վախճանեալ՝ աղմուկ շփոթի 'ի մէջ որդւոց նորա լինէր, թէ ո՛վ ոք ընդ հօրն իւրեանց թագաւորեսցէ։ Իսկ Արգարու երթեալ իբրև զայր իմաստուն՝ համոզէ 'ի մէջ նոցա, տնկելով 'ի նոսա զհաշտ խաղաղութիւնն՝ թագաւորեցուցանէ զԱրտաշէս. իսկ զայլ եղբարս նորա հանդերձ քերբն յերիս ցեղս որոշէ կոչմամբք այսպիսեօք՝ Կարենի Պահլաւ, Սուրենայ Պահլաւ և քոյրն՝ Ասպահապետի Պահլաւ. որ ապա յետ ժամանակաց ինչ սուրբ Լուսաւորիչն Գրիգորիոս 'ի Սուրենեանն Պահլաւէ շարժեալ շառաւիղ ոստ որթոյն Քրիստոսի. և Քամսար, յորմէ Կամսարականք 'ի Կարենեանն Պահլաւէ. և այսպէս սոքա տեսեալ լինին թագաւորազունս բողբոջք։ Բայց Արգարու ապականեալ լինէր մարմինն չարաչար ախտիւ. և վասն զի Մարիխաբ բդեշխն Աղձնեաց և Շամշագրամ նահապետն Ապահունեաց և Անան՝ հաւատարիմք արքային Արգարու, ելեալք յԵրուսաղէմ և տեսեալ զսքանչելի բժշկութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ եկեալ պատմեցին Արգարու։ Սակս այսորիկ գրէ թուղթ աղաչանաց գալ առ նա և բժշկել յախտէն յայնմանէ, զոր ոչ ոք երբէք 'ի մարդկանէ եգիտ բժշկութիւն։ Զոր և ընկալեալ Փրկիչն մեր և արժանի պատասխանւոյ զնա համարեալ՝ գրէ առ նա, առաւել երանելով զայնոսիկ, որք ոչն տեսեալ իցեն զնա և հաւատասցեն. և 'ի կատարել՝ ասէ, զկամս առաքչին իմոյ, առաքեցիցք քեզ զմի յաշակերտաց իմոց, զի զցաւս քոյ բժշկեսցէ և կեանս շնորհեսցէ քեզ և որք ընդ քեզդ են։ Իսկ զթուղթ Փրկչին բերեալ առ Արգար Անանայ սուրհանդակի ընդ նմին և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ մինչև ցայսօր ժամանակի յԵդեսացւոց քաղաքի։ Ապա յետ համբառնալոյ Փրկչին մերոյ յերեսներորդի ամի թագաւորութեանն Արգարու Թովմաս առաքեալ՝ մի յերկոտասանիցն, առաքէ զԹադէոս յեօթանասնիցն* ընտրելոց բժշկել զթագաւորն Արգար ըստ խոստման

* Օրինակ իմն՝ «յերկոտասանիցն», որպէս դնի և 'ի յառաջաբանի հեղինակի Պատմութեանս։ Տե՛ս եր. 8։

ներին, աշխարհագրի օրերին, երբ Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում ծնվում է մեր Փրկիչը՝ մեր տեր Հիսուս Քրիստոսը։ Բայց Արգարի ու Հերովդեսի միջև քիչ խռովություն ու կռիվներ չեն լինում։ Եվ Քրիստոսի նկատմամբ Հերովդեսի ունեցած հանդգնության և Բեթղեհեմում երեխաներին կոտորելու պատճառով [Արգարը] ահավոր վշտի մեջ է ընկնում, բայց չի կարողանում ոչ մի բան անել։ Այնուհետև իր մի եղբորորդուն նա [Հերովդեսը] մեծ զորքով ուղարկում է Միջագետք։ Հասնելով Միջագետք և պատերազմ տալով Արգարի դեմ՝ նա սպանվում է նրա կողմից։ Այդ նույն ժամանակ վախճանվում է նաև Հերովդեսը, և նրան փոխարինում է նրա որդին՝ Արքեղայոսը։ Հետո վախճանվում է նաև Պարսից արքա Արշավիրը, և նրա որդիների միջև առաջանում է իրարանցում, թե նրանցից ով պետք է թագավորի հոր փոխարեն։ Իսկ Արգարը, որպես իմաստուն մարդ, գնում համոզում է նրանց, խաղաղություն հաստատում նրանց միջև և թագավոր է նշանակում Արտաշեսին, իսկ մյուս եղբայրներին քույրերի հետ միասին բաժանում է երեք ցեղերի՝ այսպիսի անվանումներով՝ Կարենի Պահլավ, Սուրենի Պահլավ և քույրը՝ Ասպահապետի Պահլավ։ Ժամանականց սուրբ Գրիգոր Լուսավորիչը Սուրենյան Պահլավից սկսում է Քրիստոսի տունկի ճյուղի շառավիղը, Կարենյան Պահլավից սերում են Քամսարը, նրանից՝ Կամսարականները, և այդպիսով նրանք դառնում են թագավորազուն բողբոջներ։ Բայց Արգարի մարմինը ապականվում է չարաչար ախտով, և նրան հավատարիմ՝ Աղձնիքի Մարիխաբ բդեշխը, Ապահունիքի Շամշագրամ նահապետը և Անանը, գնում են Երուսաղեմ և տեսնում մեր Քրիստոս Աստծու հրաշալի բժշկությունը, գալիս պատմում են Արգարին։ Դրա համար նա աղաչագիր է գրում [Փրկչին], որպեսզի գա և բուժի այդ հիվանդությունը, որի բուժումը մարդկանցից ոչ ոք չգտավ։ Գրությունն ընդունելով և պատասխանի արժանի համարելով՝ մեր Փրկիչը գրում է նրան, առավել երանի տալով նրանց, ովքեր չտեսած՝ հավատում են [իրեն]։ Վերջում նա ասում է. «Քեզ մոտ եմ ուղարկում իմ առաքչի կամքը իմ աշակերտներից մեկի միջոցով, որպեսզի նա քո ցավերը բժշկի և քեզ ու քեզ հետ եղողներին կյանք շնորհի»։ Անան սուրհանդակը բերում է Փրկչի թուղթը Փրկչի նկարի հետ միասին, որը մինչև այժմ գտնվում է եդեսացիների քաղաքում։ Մեր Փրկչի երկինք համբառնալուց հետո, Արգարի թագավորության երեսուներորդ տարում, տասներկու առաքյալներից մեկը՝ Թովմասը[15], առաքում է յոթանասուն* ընտրյալներից մեկին՝ Թադեոսին,

* Օրինակներից մեկում՝ «յերկոտասանիցն» [տասներկուից]. որպես գրված է հեղինակի սույն պատմության առաջաբանում (տե՛ս էջ 9)։

Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր և արժանի վարկաւն իսկ զրով տալ զաւետարանական զաւետիսն։ Որոյ ապա եկեալ 'ի տուն իշխանին Տուբիայ Բագրատունւոյ, որ ցայն վայր կացեալ մնացեալ էր հայրենի օրինօքն. իսկ իշխանին Տուբիայ առեալ ածէ զԱռաքեալն առ արքայն, և նշան հրաշալի 'ի դէմս Առաքելոյն արքայն տեսանէր. և ապա ընդդիմեալ 'ի ծունկս երկրպագանէր նմա 'ի վերայ երեսաց երկրի։ Իսկ Առաքեալն զձեռն 'ի վերայ եդեալ Աբգարու՝ բժշկէր զնա. այլև զբոլոր իսկ զհիւանդս և զախտաժէտս, որք 'ի տան արքայի և յամենայն քաղաքին՝ բժշկէր։ Եւ մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն. և օր ըստ օրէ բազմանային հաւատացեալքն 'ի տէր։ Իսկ սրբոյն Թադէի զԱգգէոն խոյրագիր ձեռնադրեալ և փոխանորդ իւր թողեալ յԵդեսիայ, և ինքն գայր առ Սանատրուկ քեռորդին Աբգարու աւետարանել վիճակելոցն նմա զՔրիստոսի աստուածութիւնն։ Բայց Աբգար մեծի յուսոյ գանձն տուեալ և կենսահաղորդ գտեալ փառացն Աստուծոյ, և հետևեալ 'ի խոստովանութիւն անշարժ յուսոյն՝ վախճանի, վերաթևեալ 'ի վերին աշտարակ՝ Սիոն։

Իսկ ապա 'ի Հայս նորին իսկ քեռորդի Սանատրուկ կացեալ լինի Բագաւոր, որ թէպէտև 'ի սկզբան քարոզութեանն Թադէոսի առաքելոյ հաւատաց 'ի Քրիստոս, դարձեալ ուրանայ՝ և յետ փոքր ինչ ապա բազում չարչարանօք և սրով կատարեալ զսուրբ Առաքեալն ընդ նմին և զդուստրն իւր զՍանդուխտ՝ վճարէ 'ի կենաց, որք 'ի լոյս կենաց անվախճանից վերափոխեցան ընդ աջմէ փառացն Աստուծոյ։ Իսկ զկնի այսորիկ ապա և Բարդուղիմէոս՝ մի յերկոտասանից անտի, որ Հայաստան աշխարհիս 'ի Տեառնէ վիճակեցաւ, իսկոյն յայսմ ժամանակի 'ի Սանատրկոյ կատարի չարչարանօք. և արեամբ չափ նահատակեաց 'ի Հայս յԱրասբենոն քաղաքի, ուր և եղան իսկ նշխարք ոսկերաց նորա 'ի պարծանս Հայաստանեացս և 'ի բժշկութիւն ամենայն ախտաժետաց։ Իսկ յետ քառասուն և երից ամաց կատարման սուրբ առաքելոյն Թադէոսի յաւուրս Արտաշիսի Հայոց արքայի աշակերտք սրբոյ Առաքելոյն, որում գլխաւորին Ոսկի ճանաչիւր, և բնակեալ էին յԱրտունս Եփրատ գետոյ՝ աշակերտեալ մկրտէին զարս ոմանս յԱլանաց 'ի հարազատութենէ Սաթենկայ տիկնոջ, որ էր կին Արտաշիսի։ Եւ վասն զի օր ըստ օրէ զմկրտեալսն հաստատէին 'ի հաւատս բանին կենաց, վասն այսորիկ ապա խանդացեալ ընդ նոսա որդւոյն Սաթենկայ սրով վճարեցան 'ի կենաց ատի սուրբքն՝ Ոսկի հանդերձ այլևս ընկերովքն սրբովք։ Իսկ ազգականքն Սաթենկայ, որք 'ի Քրիստոս մկրտեցան՝ որպեսզի նա բուժի Աբգար Թագաւորին, ըստ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի խոստման, և դա արժանի համարեց զրի առնել ավետարանական ավետիսը։ Նա [Թադեոսը] գալիս է իշխան Տուբի Բագրատունու տունը, որը մինչև այդ ժամանակ հաստատուն էր մնացել հայրենի օրենքներով։ Տուբի իշխանը առաքյալին վերցնում տանում է արքայի մոտ։ Արքան հրաշալի նշան էր տեսնում առաքյալի դիմաց և ծնկի գալով՝ խոնարհվում ու երկրպագում է նրան։ Իսկ առաքյալը, իր ձեռքը դնելով Աբգարի վրա, բժշկում է նրան։ Նա բուժում է նաև բոլոր հիվանդներին ու տկարներին, որոնք կային արքունիքում և ամբողջ քաղաքում։ Եվ մկրտվում է ինքը Աբգարը և ամբողջ քաղաքը։ Եվ օրեցօր շատանում էին տիրոջ հավատացյալները։ Իսկ սուրբ Թադեոսը ոմն Ադդեին խոյրագիր է ձեռնադրում և իրեն փոխանորդ թողնում Եդեսիայում, իսկ ինքը գալիս է Աբգարի քեռորդի Սանատրուկի մոտ՝ ավետարանելու նրան վիճակված Քրիստոսի աստվածությունը։ Բայց Աբգարը, մեծ հույսով իրեն նվիրելով ու կենսահաղորդ գտնվելով Աստծու փառքին և հետևելով անփոփոխ հույսի խոստովանությանը՝ վախճանվում է, վերաթևելով դեպի վերին աշտարակ՝ Սիոն։

Այնուհետև Հայաստանում թագավոր է լինում նրա քեռորդի Սանատրուկը, որը չնայած Թադեոս առաքյալի քարոզության սկզբում հավատաց Քրիստոսին, [բայց] հետո ուրանում է։ Եվ մի փոքր ուշ բազում չարչարանքներով սրով սպանելով սուրբ առաքյալին և նրա հետ նաև՝ իր դուստր Սանդուխտին՝ [նրանց] զրկում է կյանքից, որոնք վերափոխվեցին անվախճան կյանքի լույսի՝ [տեղավորվելով] փառքի Աստծու աջ կողմում։ Իսկ սրանից հետո այն տասներկուսից մեկը՝ Բարդուղիմեոսը, որին Տիրոջ կողմից վիճակվեց լինել Հայոց աշխարհում, այդ ժամանակ չարչարանքներով սպանվում է Սանատրուկի կողմից։ Նա նահատակվեց Հայաստանում, Արասբենոն քաղաքում, որտեղ և դրվեցին նրա ոսկորների նշխարները, որպես պարծանք հայաստանցիների ու որպես բուժման [միջոց] բոլոր հիվանդների համար։ Սուրբ Թադեոս առաքյալի վախճանից քառասուներեք տարի հետո, Հայոց Արտաշես արքայի օրոք սուրբ առաքյալի աշակերտները, որոնց գլխավորի անունը Ոսկի էր, և որոնք բնակվում էին Եփրատ գետի ակունքում, սովորեցնելով մկրտում էին ալաններից ոմանց, որոնք Արտաշեսի կնոջ՝ Սաթենիկի ազգականներն էին։ Եվ քանի որ մկրտվածներին օրեցօր հաստատում էին այս կյանքի հավատի մեջ, այդ պատճառով նրանց հետ նախանձում էին Սաթենիկի որդուն, և սրբերը՝ Ոսկին ու նրա ընկերները նույնպես, զրկվում են այս կյանքից։ Իսկ Սաթենիկի ազգականները, որոնք մկրտվեցին հանուն Քրիստոսի, սրբերի մահվան հա-

տեցան՝ ընդոստուցեալք իմն վասն մահուան սրբոցն, հատուածեալք գնացին 'ի բաց՝ երթեալ զօղեալ թագուցեալ 'ի Ջրաբաշխն լերին խոտաբուտ ճարակօք շատացեալ։ Եւ ըստ մերկութեան անձանց նոցա 'ի ցօղոյ երկնից գէսս արձակեալ մարմնոցն, որ և 'ի պատահմանէ անտի քօշք անուանեցան։ Եւ վասն զի յետ ամաց բազմաց սպանաւ արքայն Հայոց Խոսրով յԱնակայ և անիշխանացաւ երկիրս Հայոց, ապա Բառլահ ոմն եկեալ յԱլանաց դրանէ և 'ի խնդիր ելեալ գրով վկայիցն և գտեալ զնոսա 'ի Ջրաբաշխն կոչեցեալ լերին, և հարց և փորձ արարեալ զնոսա վասն առ 'ի Քրիստոս հաւատոցն՝ սուր 'ի վերայ եդեալ կոտորէ։ Եւ լեառնն ապա յայնմհետէ յանուն Սուքիանոսի գլխաւորի սրբոցն՝ Սուկաւ անուանի։

Բայց իբրև սպանաւ Արտաւան արքայ Պարսից յԱրտաշրէ Ստահրացւոյ՝ բարձեալ անտի զթագաւորելն Արշակունեաց և ինքն փոխանակ թագաւորէր։ Իսկ Անակ որ 'ի Սուրենական Պահլաւայ էր և 'ի Պարթևականն Արշակունի տոհմէ, 'ի բազում և 'ի պէսպէս խոստմունս Արտաշրի հրապուրեալ և իբրև հատուածեալ իմն առ 'ի նմանէ զինքն ցուցեալ, գալ առ արքայ Հայոց Խոսրով. զի 'ի ձեռն ազգականութեանն փախստի զնա վստահացուցեալ և կեղծաւորեալ սիրով զդաւելն դիւրաւ արասցէ և հասցէ խոստմանց Արտաշրի, որպէս լիապէս քեզ ուսուցանէ աջողակ պատմագիրն Ագաթանգեղոս։ Եւ յայսպիսի իմն պատճառանաց հատուածեալ՝ եկեալ երեկօթս առնէ յԱրտազ գաւառի. և ըստ երկնային այցելութեանն պատահի սորա տեղի օթևանի 'ի քնարանի սրբոյ Առաքելոյն 'ի ներքսագոյն սրսկապանի խորանին, և անդ ապա լինել ասի յղութեան մօր Սրբոյն Գրիգորի։ Եւ յետ սահմանեալ աւուրցն՝ ապա և ծնունդ նորուն 'ի նմին տեղւոջ կատարեալ լինի. զի յորում գլինելութիւնն կրէր՝ զնորին իսկ լցէ զհոգևոր մշակութիւնն։ Բայց Անակայ յետ երկեամ մի ամաց՝ յիշելով զուխտն որ ընդ Արտաշրի, սպանանէ զԽոսրով, և ինքն և իւրքն առհասարակ սատակին. Զմինն միայն պահեալ շնորհացն Աստուծոյ, որ զառաքելութեան իւրոյ զշնորհս 'ի ձեռն տայր նմա սուրբ Առաքեալն յարգանդի մօրն, որպէս երբեմն Յովհաննու մկրտչի զկարապետութիւնն Քրիստոսի։ Որ ապա ըստ շար հինին հասելոյ՝ դայեկաց ոմանց զերկուս զուստր մանկունս ստնդեալս ըստ անշուշտ պատմագրին յաշխարհն Յունաց փախստեայ տանէին՝ զմինն 'ի թագաւորական հրահանգս վարժեալ, իսկ զմիւսն յառաքելական հանդէս և 'ի պատճառս լուսաւորութեան մերոյ։ Իսկ ապա երկոքեան սոքա անեալ և 'ի զարգացումն աճելութեան հասեալ՝ մինն ըստ ախորժակի իւր և աջողակ զինուորութեանն և պատերազմական մրցմանց 'ի թագաւորութիւնն հայրենի հասանէր յերրորդ ամի Դիոկղետիանոսի կայսեր. իսկ

մար ընդվզելով՝ զատվեցին, գնացին հեռու և թաքնվեցին խոտակեր կենդանիներով հարուստ Ջրաբաշխ սարում։ Նրանց մերկ մարմինների վրա երկնային ցողից երկար մազեր աճեցին, և այդ պատահարի պատճառով նրանք Քոշեր [այծեր] անվանվեցին։ Եվ քանի որ շատ տարիներ անց Անակի կողմից սպանվեց Հայոց Խոսրով արքան և անիշխան դարձավ Հայոց երկիրը, ալանների արքունիքից գալիս է ոմն Բառլահ և վկաների գրությամբ փնտրելով՝ նրանց գտնում է Ջրաբաշխ կոչված սարում։ Նրանց հարցափորձ է անում Քրիստոսի հավատի մասին և ապա սրով կոտորում։ Եվ այդ դեպքերից հետո այդ լեռը սրբերի գլխավորի՝ Սուքիանոսի անունով, Սուկավ է անվանվում։

Բայց երբ Արտաշիր Ստահրացու կողմից սպանվում է Պարսից արքա Արտավանը, այնտեղ վերացվում է Արշակունիների թագավորությունը, և նրանց փոխարեն ինքն է թագավորում։ Իսկ Անակը, որ Սուրենական Պահլավից էր և Պարթևական Արշակունի տոհմից, հրապուրվելով Արտաշիրի զանազան խոստումներով և նրանից իրեն բաժանված ցույց տալով՝ գալիս է Հայոց արքա Խոսրովի մոտ, որպեսզի ազգականության միջոցով նրա մեջ փախուստի վստահություն առաջացնի և կեղծավորաբար սիրաշահելով՝ նրան հեշտորեն դավի ու կատարի Արտաշիրի խոստումը, ինչը քեզ, [ընթերցող], սովորեցնում է հմուտ պատմագիր Ագաթանգեղոսը։ Եվ այդ պատճառով նրանից հեռանալով՝ գալիս, երեկոյան իջևանում է Արտազ գավառում։ Երկնային նախախնամությամբ սա օթևանում է սուրբ առաքյալի քնարանում, որը խորանի խցի ներսում էր։ Նաև ասում են, որ սուրբ Գրիգորի մայրը այդտեղ է հղիացել։ Եվ սահմանված օրերից հետո այդ նույն տեղում է ծնվում, որովհետև որտեղ լինելությունն էր կրում, հենց նրանով էլ պիտի կատարեր հոգևոր ծառայությունը։ Բայց մի երկու տարի անց Անակը, հիշելով Արտաշիրի հետ կապած ուխտը, սպանում է Խոսրովին, բայց ինքն ու յուրայիններն էլ կոտորվում են։ Աստծու շնորհիվ պահպանվում է միայն մեկը, և սուրբ առաքյալը իր առաքելության շնորհը տալիս է նրան դեռևս մոր արգանդում, ինչպես որ մի ժամանակ Հովհաննես Մկրտչին տրվեց Քրիստոսի առաջնորդությունը։ Եվ ապա, երբ հասնում է շար ավազակը, ըստ ստուգապատում պատմագրի, դայակները երկու ծծկեր մանուկների փախցնում, տանում են Հունաց աշխարհը, որոնցից մեկին կրթում են թագավորության, իսկ մյուսին՝ առաքելության և մեր լուսավորության համար։ Նրանք երկուսով մեծանալով ու չափահաս դառնալով՝ մեկը իր ցանկությամբ և զինվորական ու պատերազմական գործի մեջ հաջողակ լինելով՝ հայրենի թագավորությանն է հասնում Դիոկղետիանոս կայսեր երկրորդ

միւսն յետ բազում և անտանելի չարչարանացն՝ և անհնարին և դառն կտտանաց՝ և զենգեռասան ամ լինելոյ 'ի խոր վիրապին 'ի դղեակ բերդին որ յԱրատաշատ, ելեալ 'ի խորոյ թունաւորացն՝ արտափայլեցաւ 'ի փրկութիւն մեզ. և զանճառելի և զանպարագիր երրորդութեանն հոգեզուարճ բղխումն յինքն ճառագայթափայլեալ՝ զբոլոր Արամեանս ազն բուժեաց յախտից և 'ի կռապաշտութենէ։ Եւ յեօթն և 'ի տասներորդ ամի արքայութեանն Տրդատայ նստաւ յաթոռ սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսի և Թադէոսի՝ սրբութեանցն գտեալ քահանայագործող և ծընող մեր ըստ աւետարանին և նախահայր առատանօր արտադրելով։

Յետ այսորիկ ապա գնացեալ ևս ընդ արքային Տրդատայ յաստուածակարգ կայսրն Կոստանդիանոս՝ բազմօք իմն և նագելի և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ հայրապետն իբրև զկենդանի մարտիրոս, առաջի անկանելով և աղօթս նուիրականս և օրհնութիւնս 'ի նմանէ հայցելով։ Եւ այսպէս զնա պատուասիրեալ և Տրդատաւ հանդերձ հանեալ յոսկիապատ կառս՝ մեծաւ շքեղութեամբ յուղարկէ զճանապարհայն։

Զայսու ժամանակաւ յայտնեալ լինէր Արիոս Աղեքսանդրացի, որ դաւաճանեալ 'ի դիւէ անտի՝ ոչ գոյ ասէր զՈրդի 'ի բնութենէ Հօր և ոչ հաւասար նմա, և ոչ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ ծնեալ, այլ՝ արարած և յետ ժամանակի գոյացեալ։ Վասն այսորիկ իսկ ապա ժողով եպիսկոպոսաց լինի 'ի հրամանէ Կոստանդիանոսի 'ի Նիկիայ Բիւթանացւոց, ընդ որս և մերն Արիստակէս կոչեցաւ. և անդ հարք յԹը ըստ Հոգւոյն Սրբոյ տուչութեան 'ի քակտել զաղանդն Արիոսի՝ նզովեալ մերժեն զնա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ։ Իսկ նորա զարժանի ամբարշտութեան կրեալ հատուցումն և խաւն ընդ գարշելիսն 'ի վայր զփորոտին վայթեալ՝ սատակէր։ Իսկ ապա մերն Արիստակէս դարձեալ անտի՝ գայր բերելով ընդ իւր զարժանընկալն քսանական կանոնեալ զգլուխս 'ի Ժողովոյն, ընդ որ յաւէտ խրախ լեալ Սրբոյն Գրիգորի՝ յաւելոյր այլ ևս գլուխս 'ի նոյն՝ զգուշութիւն վիճակելոց իւրոց։ Բայց յորմէհետէ եկն սուրբն Արիստակէս 'ի Ժողովոյն Նիկիոյ՝ այլ ոչ ևս յաւել երևել Սուրբն Գրիգորիոս մինչև ցվախճան իւր. այլ երթայր բնակէր լռելեայն 'ի Մանէ այրս՝ ըստ գրեցելումն, թէ 'ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ։ Իսկ ապա լուսաւորութեանս մերոյ նահապետի սրբոյն Գրիգորի և առաքելական աթոռոյն նախաշաւիղ ճանապարհի՝ յսկզբանց անտի կալոյ յաթոռ Հայրապետութեան մինչև ցայն վայր, յորում ոչ ևս յաւել ումեք երևիլ՝ ունին ամք երեսուն։

Իսկ սուրբն Արիստակէս ժառանգ հայրենի աթոռոյն ամենայն իրօք

տարում, իսկ մյուսը անտանելի բաղում չարչարանքներից ու դաժան անհամար կտտանքներից, տասնհինգ տարի Արտաշատում գտնվող բարձր բերդի խոր վիրապում [փոսում] մնալուց և թունավոր խորափոսից դուրս գալուց հետո արտափայլեց մեր փրկության համար։ Անճառելի ու անպարագրելի Երրորդության հոգեզվարճ բխումը իրենից ճառագայթափայլելով՝ ամբողջ Արամյան ազգը[16] բուժեց ախտից ու կռապաշտությունից։ Եվ Տրդատի թագավորության տասնյոթերորդ տարում նստեց սուրբ առաքյալներ Բարդուղիմեոսի ու Թադեոսի աթոռին՝ ըստ ավետարանին գտնելով սրբություններ քահանայագործողը, մեր ծնողն ու նախահայրը։

Այնուհետև երբ Տրդատ արքայի հետ գնում է աստվածակարգ կայսրը Կոստանդիանոսի մոտ, վերջինս պանծալի ու վայելուչ մեծարանքով պատվում է սուրբ հայրապետին, իբրև կենդանի մարտիրոսի։ Նրա առաջն ընկնելով՝ նա նրանից հայցում էր նվիրական աղոթքներ ու օրհնություն։ Եվ այդպես նրան ու Տրդատին մեծարելով ու նստեցնելով ոսկեպատ կառքը՝ մեծ շքեղությամբ ճանապարհ է դնում։

Այդ ժամանակներում հայտնվում է Արիոս Ալեքսանդրացին, որը խաբվելով դևից՝ Որդուն Հոր բնությունից [բխած] ու նրան հավասար չէր համարում և ոչ էլ հավիտենականությունից առաջ Հորից ծնված, այլ համարում էր արարած և ուշ ժամանակ գոյացած։ Հենց այդ պատճառով էլ հետագայում Կոստանդիանոսի հրամանով եպիսկոպոսների ժողով է լինում Բյութանիայի Նիկիա քաղաքում, ուր հրավիրվեց նաև մեր Արիստակեսը։ Եվ այնտեղ յԹը [318] հայրեր, ըստ Սուրբ Հոգու շնորհի, Արիոսի աղանդը քակտելիս, նզովելով վտարում են նրան եկեղեցու հաղորդությունից։ Իսկ նա, ամբարշտությանն արժանի հատուցում կրելով և փորոտիքը վայր թափելով՝ պիղծ մարդկանց հետ միասին մեռնում է։ Այնուհետև մեր Արիստակեսը, վերադառնալով այնտեղից, գալիս ու իր հետ բերում է ժողովի կանոնների քսան ընդունելի գլուխները, որոնց համար ավելի ուրախանալով՝ սուրբ Գրիգորը դրանց վրա զգուշությամբ ավելացնում է նաև այլ գլուխներ։ Այն բանից հետո, երբ սուրբ Արիստակեսը գալիս է Նիկիայի ժողովից, սուրբ Գրիգորիոսը այլևս չի երևում մինչև իր վախճանը։ Նա գնում ու լռելյայն բնակվում է Մանե քարայրում, ըստ այն գրածի, թե ալեկոծված նավն շտապում է նավահանգիստ, իսկ ժուժկալ մարդը փնտրում է անապատ։ Իսկ մեր նահապետ սուրբ Գրիգորի լուսավորությունից և առաքելական աթոռի սկզբից մինչև այս պահը, որի վրա ոչ մեկը բան չի ավելացրել, երեսուն տարի է։

Իսկ հայրենի աթոռի ժառանգորդ սուրբ Արիստակեսը ամեն ին-

զհետ երթայր սուրբ և արդար վաստակոց՝ ջանացեալ քրիստոսագիր կիտիւն նուաճել զհօտ իւր 'ի կամս Քրիստոսի, զոմանս հաւանողականաւ, իսկ զոմանս բռնաւորականաւ կարգաւ ջանայր պահել յակաստանի. և իբրև զսուր ինչ յազգեր միշտ ունելով զՀոգւոյն շարժմունս՝ յանդիմանէր զորս գտանէր 'ի չար գործս հակառակ Հոգւոյն։ Ընդ որոց ապա և Արքեղաւոս ոմն կուսակալ Ծոփաց աշխարհին՝ կշտամբեալ 'ի նմանէ սակս չար գործոց իւրոց, ըստ դիպմանց իմն ճանապարհի ուրեմն աշխարհի Ծոփաց՝ ժպրհեալ ոխերիմ մտօք սպանանէ զսուրբն սրով, և փախստեայ ինքն գնացեալ յարևմուտս Տօրոսի։ Զոր ապա բարձեալ զնշխարեալ մարմինն նորուն աշակերտացն՝ տարեալ հանգուցին յԵկեղեաց գաւառն 'ի Թիլն աւանի։ Կացեալ ինքն յաթոռ հայրապետութեան ամս եօթն. ոչ թաղումն թերևս զնորայն վարկեալ իմ՝ այլ վերափոխումն յաշխարհէ յայսմանէ յաշխարհն կենդանեաց. որ ոչ լսի համբաւ մահու, այլ մշտնջենաւոր ուրախութիւն։

Իսկ զկնի սորա անդրանիկ եղբայր սորուն Վրթանէս յաջորդէ զաթոռն նորուն՝ որպէս և հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ։ Բայց հոգևոր ճառագայթն մեր սուրբն Գրիգոր ամս բազումս կեցեալ յայրին Մանեայ՝ վախճանի, անգիտաբար իմն թաղեալ 'ի հովուաց իբր գտեալ զնա 'ի կարգ իմն աղքատաց։ Իսկ ապա զկնի բազում ամաց գտանէ զսուրբ մարմին նորա Գառնիկ ոմն ճգնաւոր աստուածային իմն զոգեկս տեսչութեամբ. և տարեալ դնէ զնա 'ի գեօղն Թորդան յիւր իսկ 'ի զբօսանոց պարտիզկանն։ Զկնի ամաց ինչ ապա և սուրբն Տրդատ արքայ յանհամբուրից բարւոյ և յանհնազանդից ճարտարութեանն խարդաւանեալ խորամանկութեամբ՝ և տուեալ նմա յարբուցումն մահու. զոր տարեալ հանգուցանեն զմարմին նորա 'ի նմին աւանի 'ի նոյն պարտիզկան՝ մերձ եղեալ 'ի քնարանս սրբոյն Գրիգորի, որ համեմատ ընդ նմա իսկ զամենեսեան արտորոշէր 'ի ճանապարհաց չարաց՝ վերակացու երկրորդ լեալ լուսաւորութեանս մերում։ Իսկ մեծն Վրթանէս մինչդեռ տակաւին էր 'ի Տարօն գաւառին 'ի մատրանն Յովհաննու մկրտչի և Աթանագինեայ վկայի՝ մահ սպառնացեալ լինէր նմա 'ի ծածուկ իմն 'ի բնակչաց Սիմ լերինն. որք վասն ապիրատ և անազգակ չար գործոց միշտ յանդիմանեալ առ 'ի նմանէ լինէին։ Իսկ նորա զգացեալ ապա և զտեղի տուեալ չարին՝ գնայ փախստեայ 'ի գաւառն յԵկեղեաց, անդ կալեալ իւր կայան բնակութեան։

Իսկ՝ յետ մահուան սրբոյն Տրդատայ անօրէնն Սանատրուկ երկրորդ՝ ազգաւ յԱրշակունի տանէ, զոր կացուցեալ էր նահապետ Տրդատայ 'ի Փայտակարան քաղաքի, և յետ մահուան նորա ապստամբութեամբ բաղմաւ թագ իւր կապեալ։ Ըստ ամբարիշտ հրամանի նորա

չով հետևում էր սուրբ ու արդար գործերին՝ ջանալով քրիստոսագիր կանոններով ու Քրիստոսի կամքով նվաճել իր հոտը։ Եվ նա ձգտում էր՝ ոմանց համոզելով, ոմանց ստիպելով պահել ապահովության մեջ։ Հոգու շարժումը, ինչպես սուրբը միշտ ազդրից կապած՝ հանդիմանում էր բոլոր նրանց, ում համարում էր Հոգու դեմ չար գործեր կատարող։ Իր չար գործերի պատճառով նրանց հետ Արիստակեսի կողմից կշտամբվում է նաև Ծոփաց աշխարհի Արքեղայոս անունով կուսակալը, որը Ծոփաց աշխարհի մի ինչ-որ ճանապարհի վրա հանդիպելով նրան և ոխերիմ մտքով հանդգնելով՝ սրով սպանում է սրբին և փախչում, ընկնում է Տավրոսի[17] արևմտյան կողմերը։ Այնուհետև [Արիստակեսի] աշակերտները նրա նշխարված մարմինը վերցնելով՝ տարան թաղեցին Եկեղյաց գավառի Թիլ ավանում։ Նա հայրապետական աթոռին նստեց յոթ տարի, և ես կարծում եմ, որ նրանը թաղում չէր, այլ այս աշխարհից ողջերի աշխարհ տեղափոխվել, և մահվան լուր չի լսվում, այլ մշտնջենավարհ ուրախություն։

Նրանից հետո աթոռին հաջորդում է նրա անդրանիկ եղբայր Վրթանեսը, որը հաճո թվաց Սուրբ Հոգուն։ Իսկ մեր հոգևոր ճառագայթ սուրբ Գրիգորը, շատ տարիներ մնալով Մանյա քարայրում, վախճանվում է։ Նրա դիակը գտնում են հովիվները և չիմանալով ով լինելը՝ նրան թաղում են աղքատների կարգով։ Շատ տարիներ անց նրա սուրբ մարմինն ասես աստվածային նախախնամությամբ գտնում է Գառնիկ անունով ճգնավոր և տանում գնում է Թորդան գյուղում, իր իսկ զբոսայգում։ Մի քանի տարի անց սուրբ Տրդատ արքան, նրա անտանելի բարքի ու անհնազանդության պատճառով, ճարտարությամբ ու խորամանկությամբ թունավորվում է և մեռնում։ Նրա մարմինը տանում թաղում են նույն ավանում, նույն փոքր պարտեզում, սուրբ Գրիգորի գերեզմանի մոտ։ Նա ևս սուրբ Գրիգորի նման բոլորին հեռացնում էր չար ճանապարհից՝ լինելով մեր լուսավորության երկրորդ հովանավորը։ Իսկ մեծն Վրթանեսը քանի դեռ Տարոն գավառում էր, Հովհաննես Մկրտչի ու վկա Աթանագինեսի մատուռում, նրան մահ է սպառնում Սիմ լեռան բնակիչներից, որոնք իրենց անիրավ ու խեղ գործերի պատճառով միշտ հանդիմանվում էին նրա կողմից։ Զգալով ու խուսափելով չարից՝ նա փախչում, գնում է Եկեղյաց գավառը, ուր և հաստատում է իր բնակության տեղը։

Իսկ սուրբ Տրդատի մահից հետո ազգությամբ Արշակունի անօրեն Սանատրուկ երկրորդը, որին Տրդատը նշանակել էր նահապետ Փայտակարան քաղաքում, ապստամբություն է բարձրացնում և խլում թագը։ Նրա ամբարիշտ հրամանով հյուսիսային բարբարոս ցեղերը Վատ-

բարբարոս հիւսիսական ազգքն այնոքիկ զսքանչելի մանուկն Գրիգորիս, զոր եպիսկոպոս Աղուանից կացուցեալ էին 'ի տոհմէ սրբոյն Գրիգորի՝ սպանանեն ձիախրոխտ ընթաղրութեամբ 'ի Վատնեան դաշտին. և տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա 'ի գեօղն Ամարաս, որ 'ի Փոքր Սիւնիս։

Յետ այսորիկ ապա մեծն Վրթանէս չոգաւ գնաց առ կայսրն Կոստանդոս՝ որդի Կոստանդիանոսի, ըղձակերտութեամբ առ 'ի նմանէ հայցեալ թագաւորեցուցանել Հայաստանեայցս զԽոսրով փոխանակ հօր իւրոյ Տրդատայ, զի տիրեսցէ մեզ՝ ասէ, քրիստոսակարգ տէրութիւնդ ձեր և մի՛ լիցի մեզ տիրել Պարսից անաստուածից։ Զոր և ողջախոհաբար ընկալեալ զսուրբ այրն՝ և կատարեալ ևս զխնդիրն, կացուցանէ թագաւոր Հայաստանեայց զԽոսրով։ Իսկ յետ մահուանն Խոսրովայ մեծն Վրթանէս՝ առեալ ընդ իւր զՏիրան որդի Խոսրովայ, չուէ գնայ առ կայսրն Կոստանդինոս թագաւորեցուցանել զնա փոխանակ հօր իւրոյ։ Իսկ կայսրն ապա ըստ առաջին նուագին բազմապատիւ պատուով զնա մեծարեալ և առձեռնպատրաստ զհայցուածսն կատարեալ՝ առաքէ 'ի Հայս պայծառապէս զՏիրան թագով պսակեալ, որ եկեալ տիրէր հայրենի տէրութեանն։ Իսկ ապա անօթն ընտրութեան և խորհրդածուն խորոցն Աստուծոյ և առաքելական աւանդիցն քարոզ՝ մեծն Վրթանէս, լցեալ զկէտ կենացս փոխի յաշխարհէ աստի յաշխարհն կենդանեաց, կալեալ զաթոռ հայրապետութեան ամս հնգետասան։ Եւ տարեալ հանգուցանեն զնա ընդ հարս իւր 'ի գիւղն Թորդան։ Եւ յաջորդէ զաթոռ նորա Յուսիկ որդի նորա, որ հետևող հարցն առաքինութեան գտեալ՝ հանդիսանայր միշտ 'ի բոլոր բարեկարգութիւնս։

Բայց յետ հրաժարմանն Կոստանդեայ Յուլիանոս տնօրէն թագաւորեալ 'ի Հռոմ և հպարտացեալ 'ի վերայ գիտութեանն Աստուծոյ՝ կռամոլ գտեալ, ուրանայր զՔրիստոս և յարուցանէր հալածանս 'ի վերայ եկեղեցեաց։ Ապա պատանդս 'ի մերն Տիրանայ առեալ՝ կամակատար իւր զնա կացուցանէր. և ապա զպատկեր իւր նկարակերտ, որ ըստ դիւաց պատկերից էր պաճուճեալ՝ հրամայէ Տիրանայ կանգնել յեկեղեցւոջ իւրում։ Եւ վասն զի առ վտանգի երկիւղին իւրովի Տիրան տարեալ զպատկերն կանգնէր յեկեղեցւոջ իւրում 'ի Ծոփ գաւառի, վասն այնորիկ դիպեալ 'ի տեղին սուրբն Յուսիկ հոգևոր վարդապետութեամբ տրոհել զնա 'ի շար մտածութենէն հնարէր։ Իսկ իբրև խնայր զլսելիքն առ 'ի շլսել՝ յափշտակեալ ապա զպատկերն 'ի ձեռաց նորա և ընկեցեալ յերկիր և տրորեալ ոտիւք 'ի վերայ՝ խորտակէր. ընդ որ և 'ի շարութիւն իսկ Տիրանայ բորբոքեալ՝ հրամայէ հարկանել զնա վարոցօք, մինչև անդէն զհոգին աւանդել։ Իսկ ծերունին Դանիէլ վասն այնպիսի շար

նյան դաշտում ձիու ոտքերի տակ են գցում ու սպանում սքանչելի մանուկ Գրիգորիսին, որը սուրբ Գրիգորի տոհմից էր և Աղվանքում եպիսկոպոս էր կարգված։ Եվ նրա սուրբ մարմինը տանում թաղում են Ամարաս գյուղում, որը Փոքր Սյունիքում է։

Դրանից հետո մեծն Վրթանեսը գնում է Կոստանդոս կայսեր մոտ, Կոստանդիանոսի որդին էր, և նրան թախանձանքով խնդրում է Տրդատի փոխարեն հայաստանցիների վրա թագավոր կարգել նրա որդուն՝ Խոսրովին, որպեսզի, ասում է, նա տիրի մեզ՝ ձեր քրիստոսակարգ տերությանը, և չլինի, որ մեզ տիրեն պարսից անաստվածները։ Նրա խնդիրքը ողջախոհաբար ընդունում է այն սուրբ մարդը և կատարելով խնդրանքը՝ հայաստանցիների վրա թագավոր է կարգում Խոսրովին։ Իսկ Խոսրովի մահից հետո մեծն Վրթանեսը, իր հետ վերցնելով Խոսրովի որդի Տիրանին, շարժվում գնում է Կոստանդինոս կայսեր մոտ, որպեսզի նա նրան թագադրի իր հոր փոխարեն։ Իսկ կայսրը, առաջվա նման նրան մեծարելով, սիրով նրա խնդրանքը կատարելով և Տիրանին առոք-փառոք թագադրելով՝ ուղարկում է Հայաստան, որը գալով տիրում է հայրենի տերությանը։ Իսկ հետո ընտիր անոթը, Աստծու խորքերի խորհրդածուն և առաքելական ավանդների քարոզիչը՝ մեծն Վրթանեսը, ծերանալով ու հայրապետական աթոռին տասներեք տարի նստելուց հետո այս աշխարհից տեղափոխվում է ողջերի աշխարհը։ Նրան տանում թաղում են Թորդան գյուղում, իր հայրերի մոտ։ Աթոռին հաջորդում է նրա որդին՝ Հուսիկը, որը լինելով հայրերի առաքինության հետևող՝ միշտ հանդես էր գալիս տարբեր բարեկարգություններով։

Բայց Կոստանդոսի մահից հետո Հռոմում թագավորելով անօրեն Հուլիանոսը և հոխորտալով Աստծու ուսմունքի դեմ՝ կռապաշտ է դառնում, ուրանում է Քրիստոսին և հալածանք հարուցում եկեղեցիների դեմ։ Ապա պատանդներ վերցնելով մեր Տիրանից՝ նրան դարձնում է իր կամակատարը, և ապա իր նկարակերտ պատկերը, որը դևերի պատկերի նման էր պատրաստված, Տիրանին հրամայում է դնել իր եկեղեցում։ Եվ քանի որ վտանգի երկյուղից Տիրանը պատկերը տանում դնում է Ծոփաց գավառի իր եկեղեցում, այդ պատճառով սուրբ Հուսիկը, հանդիպելով այդ տեղում, ջանում էր հոգևոր վարդապետությամբ զատել նրան այդ շար մտածությունից։ Բայց երբ [Տիրանը] ականջները փակում է լսելու համար, նրա ձեռքից [Հուսիկը] հափշտակելով նկարը, գցում է գետին, ոտքերով տրորում ու ջարդում է։ Դրա վրա էլ չարությունից ավելի է բորբոքվում Տիրանը և հրամայում է Հուսիկին գավազանով այնքան ծեծել, մինչև որ հոգին ավանդի։ Իսկ ծերունի Դանիելն այդ-

անզգամութեանն անիծակուր զարքայն արարեալ, հրամայէ ապա և զնա խեղդամահ առնել, զոր տարեալ հանգուցանեն զնա ի Հացեաց վանս։ Իսկ զմարմին սրբոյ Յուսկանն տարեալ դնեն ընդ հարս իւր 'ի գիւղն Թորդան. որ եկաց 'ի հայրապետութեան անդ ամս վեց։

Բայց քանզի որդիք սրբոյ Յուսկանն՝ Պապ և Աթանագինէս, ըստ որում խաւարեցուցին իսկ զսիրտս իւրեանց անմտութեամբ՝ ընդ նմին և սարսափելի մահ անձանց իւրեանց նիւթեցին. զի հրացայտ ցոլմունք 'ի վայր հոսեալ՝ սատակէր զերկոսեանն 'ի միում տեղւոջ։ Մանկիկ մի փոքրիկ՝ Ներսէս անուն, միայն թողլով իւր որդի Աթանագինէ, որ յայնժամ էր 'ի վարժս ուսման 'ի Կեսարիայ։ Եւ ապա վասն ոչ գտանելոյ այր յազգէ սրբոյն Գրիգորի՝ ընտրեցին զոմն Փառներսեհ անուն յԱշտիշատէ, և կացուցին զնա յաթոռ հայրապետութեան։ Սա ոչ աւելի քան զերիս ամս տևեալ՝ վախճանի։ Ապա Արշակ արքայ, որդի Տիրանայ կուրացելոյ ըստ արժանին 'ի Պարսից յարքայէ՝ առաքէ մեծաւ պատուով զՆերսէս զորդի Աթանագինեայ որդւոյ Յուսկանն ըստ առաջնոյ կարգին 'ի Կեսարիայ ձեռնադրել 'ի հայրապետութիւն, որ և սքանչելի իմն նշանք պատմի լեալ, զի մինչդեռ կայր ընդ բեմականսն 'ի ձեռնադրութեան անդ շնորհք Հոգւոյն սրբոյ աղաւնակերպ 'ի վերայ գլխոյ նորա հանգուցեալ 'ի զարմացումն զբոլոր կղերիկոսս եկեղեցւոյն ածեալ լինէր։ Եւ այսպէս ապա լուսազարդեալ նորա՝ գայ հաստատէ գեղեցկագիր յարմարութեամբ զբոլոր կարգս ուղղութեան, բարենախանձ լինելով 'ի նախանձ հոգևոր։ Եւ նախ ապա զամենայն անգթութեան արմատս խլեալ՝ փոխանակ 'ի ներքս ածէ զողորմութիւն. շինէ և աղքատանոցս առ 'ի մխիթարութիւն վշտացեալ մարմնոց մարդկան, ուրկաց և բորոտից և հաշմից և բոլոր վտանգելոց, ոռճիկս նոցա կարգեալ 'ի գիւղից և 'ի գերդաստանաց, զի ոչ լիցի նոցա արտաքս ըստ բնակութիւնս իւրեանց ելանել։ Կարգէ և վանորայս և օտարանոցս և հիւրանոցս և տնանկանոցս 'ի քաղաքագիւղս և յաւանս. այլ և յանապատս մենաստանս և խրճիթս կուսակրօնից և միանձանց յարդարէ. բառնայ և զմերձաւոր խնամութիւնս և կոծադիր ոճիրս 'ի վերայ մեռելոց։ Եւ ապա այնուհետև ոչ իբրև զբարբարոսս այլանդակս, այլ իբրև զհամեստագոյն քաղաքացիս լինէր տեսանել զաշխարհս մեր։ Զայսպիսի բարեկարգութեան ձև և զշուք տեսեալ ապա թագաւորին և նախարարացն Հայոց, այլ և զխստամբեր վարս նորա ճգնողականս՝ 'ի մտի եղեալ ընդ այլոց ևս ոմանց և զնա ևս նախակարգել 'ի պատիւ պատրիարգութեան։ Քանզի փոքր ինչ յառաջ քան զայս Կոստանդոս որդի մեծին Կոստանդիանոսի, յԵփեսոսէ 'ի Կոստանդինուպօլիս զնշխարս ոսկերաց Յովհաննու Աւետարանչին փոխեալ, և յայնմանէ համարձակութիւն առեալ պատրիարգ 'ի Կոստանդնուպօլիս կացուցանէ։ Ապա ըստ նմին

պիսի չար անզգամության համար անիծում է արքային, որը հրամայում է նրան նույնպես խեղդամահ անել. նրան տանում թաղում են Հացյաց վանքում։ Իսկ սուրբ Հուսիկի մարմինը տանում գնում են Թորդան գյուղում, իր հայրերի մոտ. Հուսիկը հայրապետական աթոռին մնաց վեց տարի։

Եվ քանի որ սուրբ Հուսիկի որդիները՝ Պապը և Աթանագինեսը, անմտությամբ խավարեցրին իրենց սրտերը, դրանով իսկ իրենց համար սարսափելի մահ նյութեցին, որովհետև հրացայտ շանթերը վայր հոսելով, երկուսին էլ սպանում են նույն տեղում։ Աթանագինեն Ներսես անունով մի փոքրիկ մանկիկ է թողնում, որն այն ժամանակ ուսում էր ստանում Կեսարիայում։ Եվ սուրբ Գրիգորի ազգից ոչ ոքի չգտնելով՝ ընտրեցին Փառներսեհ անունով մեկին, որն Աշտիշատից էր, և նրան նստեցրին հայրապետական աթոռին։ Երեք տարուց ավելի չտեված՝ նա վախճանվում է։ Ապա Արշակ արքան՝ պարսիկների կողմից արժանիորեն կուրացված Տիրանի որդին, Հուսիկի որդի Աթանագինեի որդի Ներսեսին մեծ պատվով առաքում է Կեսարիա՝ առաջվա նման ձեռնադրվելու հայրապետության համար։ Եվ պատմում են, որ քահանան մինչդեռ ձեռնադրում էր նրան, Սուրբ Հոգու շնորհը աղավնու կերպարանքով իջնում է նրա գլխին՝ զարմացնելով եկեղեցու բոլոր կղերականներին։ Եվ այդպես լուսազարդվելով՝ նա գալիս ու դեղեցկագիր հարմարությամբ հաստատում է բոլոր ուղիղ կարգերը՝ բարենախանձ լինելով հոգևոր եռանդի համար։ Նախ՝ պոկելով անգթության բոլոր արմատները՝ նրանց փոխարեն ներս է բերում ողորմությունը։ Քոսոտների, բորոտների, հաշմանդամների, բոլոր նեղյալների վշտացած մարմինների մխիթարության համար շինում է աղքատանոցներ, նրանց համար ոռճիկ է կարգում գյուղերից ու կալվածքներից, որպեսզի իրենց բնակության վայրերից դուրս չգնան։ Նա բարեկարգում է նաև գյուղաքաղաքներում ու ավաններում եղած վանքերը, իջևանատները, հյուրանոցները և կուսակրոնների ու ճգնավորների խրճիթները, վերացնում է խնամիությունը մերձավորների միջև և մեռելների վրա դառն լացուկոծ անելը։ Դրանից հետո մեր ժողովրդին կարելի էր տեսնել ոչ թե որպես այլանդակ բարբարոսներ, այլ որպես համեստ քաղաքացիներ։ Հայոց թագավորն ու նախարարները, այսպիսի բարեկարգության ձև ու շուք տեսնելով, ինչպես նաև նրա ճգնողական ու համբերատար վարքը ուրիշների հետ համեմատելով՝ նրան ևս պատրիարքության պատվի են արժանացնում։ Քանի որ մի փոքր առաջ, քան մեծն Կոստանդիանոսի այս Կոստանդոս որդին, Հովհաննես ավետարանչի ոսկորների նշխարները Եփեսոսից Կոստանդնուպոլիս էին տե-

յայսմ պատճառի համարձակութիւն և Երուսաղէմացւոցն առեալ՝ զիւրեանցն ևս աթոռ հաստատէին, 'ի պատիւ պատրիարգութեան իրաւունս համարեալ ըստ որում և 'ի նմա գոլ տեսեալ եղև բանին Հօր ծնունդ և ընդ մարդկան շրջիլ, և 'ի Յովհաննէ մկրտիլ, և խաչիլ, թաղիլ և յերրորդ աւուր յառնել։ Եւ վասն զի ցայն վայր շորք միայն էին ընդ երկրաւ պատրիարգ ըստ շորից աւետարանչացն՝ Մատթէոսին յԱնտիոք, Մարկոսին յԱղէքսանդրիա, Ղուկայն 'ի Հռոմ և Յովհաննուն յԵփեսոս. ապա յայսմանէ իրակերտութեանց վեց բովանդակեալ կային։ Ըստ սմին սակի ապա և մերն թագաւոր Արշակ և նախարարութիւնք Հայոց համարձակութիւն առեալ՝ կացուցին 'ի պատրիարգութիւն տանս Թորգոմայ զմեծն Ներսէս, փաստս իրաւախորհս ըստ արժանին 'ի մէջ առեալ զսուրբ առաքեալսն մեր՝ զԲարթուղիմէոս և զԹադէոս, որք Ասքանազեանս ազին վիճակեցան 'ի Տեառնէ քարոզք և աւետարանիչք. և նշխարեալ ոսկերք նոցա կան 'ի միջի մերում, զորոց և զաթոռն իսկ ընկալաւ կենդանի մարտիրոսն Գրիգորիոս։ Եւ ապա խորհուրդն զգործն կատարեալ՝ եօթն միանգամայն բովանդակեալ գտանէր թիւ պատրիարգութեան, որ կայ և մնայ պահեալ մինչև ցյաւիտեանս ժամանակաց։ Եւ այսպէս ապա նահապետութիւն խորհրդոյ եկեղեցւոյ և 'ի մերումս աշխարհի լցաւ բովանդակաբար՝ ինն միանգամայն դասակարգութեամբ պատուեալ զգլխաւորս արքեպիսկոպոսացն Վրաց և Աղուանից՝ արքեպիսկոպոս ընդ ձեռամբ նորա կարգեալ։ Իսկ 'ի Սեբաստիայ և 'ի Մելիտինէ և 'ի Մարտիրոսաց քաղաքին մետրապոլիտս կացուցանէին։ Իսկ եպիսկոպոսունս ապա ըստ որոշեալ վիճակացն իւրաքանչիւրոց հաստատէին և քահանայս և սարկաւագունս և կիսասարկաւագս և վերծանողս և սաղմոսերգուս. այսոքիկ ցանեցիր ընդ բոլոր եկեղեցիս Հայաստանեայցս վայելչապէս յարդարեալ լինէին 'ի փառս Աստուծոյ։ Իսկ 'ի նշկահելն Արշակայ զՎաղէնտիանոս կայսր՝ մեծաւ ցասմամբ ապա Վաղենտինեայ լցեալ՝ սպանանէ զեղբայրն Արշակայ՝ զՏրդատ, զոր 'ի պատանդի առ նմա էր։ Զոր ապա զգացեալ մեծին Ներսեսի՝ փութացեալ և առ կայսր հասեալ և 'ի հանդարտութիւն շրջեալ զնորայն կամս, և մեծապատիւ առ 'ի նմանէ լեալ ըստ օրինի պատրիարգաց. և յինքն զորդի սպանելոյն Տրդատայ և զայլս ևս պատանդս հայցեալ՝ առեալ 'ի կայսերէ, դառնայ զայ ի Հայս խաղաղութեամբ բազմաւ։

Այլ 'ի վախճանիլն Վաղէնտիանոսի թագաւորէ անօրէնն Վաղէս՝

զափոխել, և դրանից համարձակություն ստանալով՝ Կոստանդնուպոլսում պատրիարք է կարգում։ Այդ նույն պատճառով քաջալերվելով՝ նաև երուսաղեմցիներն են իրենց աթոռը հաստատում՝ որպես պատիվ պատրիարքության իրավունք ունենալով, քանի որ այնտեղ հնարավոր եղավ տեսնել Հոր Որդու ծնունդը, մարդկանց մեջ շրջելը, Հովհաննեսի կողմից մկրտվելը, խաչվելը, թաղվելը և երրորդ օրը հարություն առնելը։ Եթե մինչ այդ ամբողջ երկրում ընդամենը չորս պատրիարքներ կային, ըստ չորս ավետարանիչների՝ Մատթեոսինը՝ Անտիոքում, Մարկոսինը՝ Ալեքսանդրիայում, Ղուկասինը՝ Հռոմում և Հովհաննեսինը՝ Եփեսոսում, իսկ դրանից հետո իրականում ստեղծվեցին վեցը։ Ըստ այդմ՝ հետագայում մեր Արշակ թագավորը և Հայոց նախարարությունները, համարձակություն ստանալով, Թորգոմի տանը պատրիարք կարգեցին մեծն Ներսեսին՝ ըստ արժանվույն մեջ բերելով արդարադատ փաստեր, [այսինքն]՝ մեր սուրբ առաքյալներ Բարդուղիմեոսին և Թադեոսին, որոնց վիճակվեց Տիրոջ կողմից դառնալ մեր ասքանազյան ազգի [առաջին] քարոզիչներն ու ավետարանիչները։ Եվ նրանց նշխարված ոսկորները գտնվում են մեզանում, և կենդանի մարտիրոս Գրիգորոսն էլ ընդունեց հենց նրանց [առաքյալների] աթոռը։ Եվ ապա գործը կատարելով՝ խորհուրդը պատրիարքության թիվը հասցնում է յոթի, որը կա և պահպանվում է մինչև հավիտենական ժամանակները։ Այսպիսով, եկեղեցու նահապետության խորհուրդը ամբողջությամբ տարածվեց նաև մեր աշխարհում՝ բոլորը մեկտեղ դասակարգելով ինն, Վրաց և Աղվանից գլխավոր արքեպիսկոպոսների հետ միասին, որոնց համար արքեպիսկոպոս էին նշանակվում նրա միջոցով։ Իսկ Սեբաստիայում, Մելիտենեում և Մարտիրոսաց քաղաքում մետրապոլիտներ էին նշանակում։ Ըստ սահմանված վիճակների քանակի՝ հաստատում էին նաև եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ, կիսասարկավագներ, դպիրներ և սաղմոսերգուներ, որոնք բոլորը տարածվելով հայաստանյաց եկեղեցիներում՝ դրանք զարդարում էին ի փառս Աստծո։ Իսկ երբ Արշակ արքան արհամարհում է Վաղենտիանոս կայսրին, վերջինս լցվում է մեծ ցասումով և սպանում է Արշակի եղբայր Տրդատին, որը նրա մոտ պատանդ էր։ Այդ բանն իմանալով՝ մեծն Ներսեսն շտապ հասնում է կայսրի մոտ, հանգստացնում է նրան և նրա կողմից մեծ պատվի արժանանում՝ պատրիարքների կարգի համաձայն։ Եվ խնդրելով սպանված Տրդատի որդուն ու մյուս պատանդներին և առնելով կայսերից՝ մեծ խաղաղությամբ վերադառնում, գալիս է Հայաստան։

Իսկ երբ վախճանվում է Վաղենտիանոսը, թագավորում է նրա

եղբայր նորին, և վաղվաղակի զմեծ զօրավարն Թէոդոս զօրու մեծաւ առաքէ հրոսակ Արշակայ արքայի, որ և ակամայ իսկ աղաչեալ զմեծն Ներսէս չուել խնդրել զխաղաղութիւն։ Ոչ ապա նա անփոյթ առնէ զկոչբստենէ վիճակելոց իւրոց. այլ վաղվաղակի առեալ զՊապ՝ որդի Արշակայ, տանի պատանդ առ մեծն Թէոդոս զօրավար. որում և լսող լեալ՝ դառնայ առ կայսր, ընդ իւր տարեալ զպատրիարգն Ներսէս հանդերձ պատանդաւն։ Իսկ անօրէնն Վաղէս ոչ իսկ արժանի արար տեսանել զսուրբ այրն Աստուծոյ, այլ 'ի կղզի մի հեռաւոր զնա հրամայեաց արտասահմանել իւրօքն հանդերձ կղերիւք, յորում ոչինչ ամենևին գտանիւր ոգեպահ պարենի աւուր միոյ։ Այլ 'ի հրամանէ Աստուծոյ ցնդմամբ ալեացն ծովն զձուկն արտաքս ընկենլով 'ի կերակուր նոցա մատակարարէր զամիսս ութ։ Բայց յաղագս անօրէն Վաղէսի ասի բան, թէ ըստ հրամանի հզօր ձեռինն Աստուծոյ սուրբ վկայն Գէորգէոս անմբռնելի ձեռամբ զնա սատակէր՝ արժանի չար խորհրդոցն նմա հատուցեալ։

Եւ զկնի նորա առնու զթագաւորութիւնն Թէոդոս մեծն և բարեպաշտն և աստուածասէր, որ զամենայն նիւթս խաւարային խորհրդոց փարատեալ 'ի բաց և զանբիծ հաւատս հիմնացեալ հաստատեաց. և ապա որք 'ի մետաղս 'ի Վաղեսէ արտասահմանեալք էին՝ դարձոյց յիւրաքանչիւր տեղիս, ընդ որս և զմեծն Ներսէս ածեալ առ իւր պահէր՝ մինչև 'ի ձեռն նորա զամբարիշտ հայհոյութիւնն Մակեդոնի 'ի ստուգութիւն հաւատոյ ճշմարտութեան դարձուցէ։ Եւ ապա ժողով եպիսկոպոսացն միանգամայն իբրև ճե 'ի Բիւզանդիոն արարեալ՝ նզովեալ մերժեցին 'ի բաց զՄակեդոն և զամենայն հոգեմարտսն։

Բայց Շապհոյ Պարսից արքայի կալեալ և կապեալ զԱրշակ արքայ Հայոց՝ դնէ յԱնուշն կոչեցեալ բերդի. իսկ Արշակայ յայնմ բերդի սրով 'ի սիրտս խոցեալ՝ իւրովի զինքն զրկէ 'ի կենաց աստի։ Զայսպիսի չար աղէտս մահու նորա լուեալ մեծին Ներսեսի՝ ըղձակերտութեամբ իմն հայցէ յինքնակալէն Թէոդոսէ թագաւորեցուցանել Հայոց զՊապ՝ որդի Արշակայ, զոր և արարեալ իսկ՝ հանդերձ սրբովն Ներսեսիւ վաղվաղակի առաքէ 'ի Հայս. որք եկեալ գտին՝ զՄեհրուժանն ուրացող բազում զօրք* միապետեալ զՀայս։ Եւ ապա խմբէին 'ի պատերազմ ընդ միմեանս 'ի Զիրաւ. և իբրև յաւէտ իմն պատերազմն սաստկանայր՝ ելանէ ապա մեծն Ներսէս 'ի լեառն Նպատ և ըստ օրինակին Մովսիսի տարածեալ զբազուկսն 'ի յերկինս աղերսալի պաղատանօք առ 'ի Քրիստոսէ հայցէ լինել պաշտպան քրիստոսադրոշմ բանակին, որով և պար-

* Թերևս «բազում զօրք»։

եղբայրը՝ անօրեն Վաղեսը, որն անմիջապես մեծ զորավար Թեոդոսին մեծ զորքով առաքում է Արշակ արքայի վրա, որն ստիպված աղաչում է մեծն Ներսեսին՝ գնալ և խնդրել խաղաղություն։ Նա չի անտեսում իրենց վիճակված կորուստը. այլ նաև անմիջապես վերցնելով Արշակի որդուն՝ Պապին, որպես պատանդ է տանում մեծն Թեոդոս զորավարի մոտ։ Դրան լսելով՝ [Պապը] վերադառնում է կայսրի մոտ՝ իր հետ տանելով նաև Ներսես պատրիարքին պատանդների հետ միասին։ Իսկ անօրեն Վաղեսը արժանի չհամարեց անգամ տեսնել Աստծու սուրբ մարդուն, բայց հրամայեց՝ նրան հոգևորականների հետ միասին աքսորել հեռավոր մի կղզի, որտեղ մեկ օրվա ապրելու համար ուտելիք էլ չէր գտնվում։ Բայց Աստծու հրամանով ծովի ալիքները ափը ձուկ էին գցում և նրանց համար ութ ամիս որպես կերակուր մատակարարում։ Բայց անօրեն Վաղեսի մասին ասվում է, թե Աստծու հզոր հրամանով սուրբ վկա Գեորգեսը անիմանալի ձեռքով սպանում է նրան՝ չարախորհուրդների դիմաց նրան հատուցելով արժանին։

Նրանից հետո թագավորությունը վերցնում է բարեպաշտ ու աստվածասեր մեծն Թեոդոսը, որը հեռացնելով խավար մտքի բոլոր նյութերը՝ հիմնադրում ու հաստատում է անբիծ հավատը, և ովքեր Վաղեսի կողմից տաժանակիր աքսոր էին քշված, նրանց վերադարձնում է իրենց տեղերը։ Նրանց հետ բերելով նաև մեծն Ներսեսին՝ նրան պահում է իր մոտ, մինչև որ նրա միջոցով Մակեդոնի ամբարիշտ հայհոյությունը ստույգ ու ճշմարիտ հավատի փոխի։ Եվ ապա Բյուզանդիայում մոտավորապես ճե [150] եպիսկոպոսներ միասին ժողով անելով՝ նզովեցին ու մերժեցին Մակեդոնին և հոգու դեմ բոլոր կռվողներին։

Բայց Պարսից Շապուհ արքան բռնում է Հայոց Արշակ արքային և նրան կապում, դնում է Անուշ կոչված բերդում, իսկ Արշակը, սրով խփելով սրտին, ինքն իրեն զրկում է այս կյանքից։ Նրա մահվան այդ չար աղետը լսելով՝ մեծն Ներսեսը թախանձանքով խնդրում է Թեոդոս ինքնակալին՝ Հայաստանում թագավոր կարգել Արշակի որդուն՝ Պապին։ Այդ բանը կատարելով՝ նրան սուրբ Ներսեսի հետ միասին անմիջապես ուղարկում է Հայաստան։ Տեղ հասնելով տեսնում են, որ ուրացող Մեհրուժանը ինքնագլուխ կերպով մեծ զորքով տիրել է Հայաստանին։ Եվ ապա նրանք հավաքվում են Զիրավում՝ միմյանց դեմ կռվելու համար։ Երբ պատերազմը է՛լ ավելի է սաստկանում, մեծն Ներսեսը բարձրանում է Նպատ լեռան վրա և Մովսեսի նման բազուկները տարածելով դեպի երկինք՝ աղերսալի պաղատանքով Քրիստոսից խնդ-

* Թերևս՝ «բազում զորքով»։

տեցանն իսկ աստուածամարտ մարտուցեալքն։ Եւ բանակքն Հայոց զորացեալք՝ դիակամբք թշնամեացն լցին զառ 'ի ստորեն զամենայն. որ և ձերբակալ իսկ արարեալ Սմբատայ զպիղծն Մեհրուժան Արծրունի և երկաթ բոլորեալ 'ի ձև պսակի՝ և շանթիւք հրոյ շողացուցեալ՝ դնէ 'ի գլուխ նորա. և այնպէս զնա սատակեալ։ Բայց Պապ արքայ միշտ հրապոյրս յինքն կրեալ 'ի ճակաճան աղտեղի գործոց, վասն այնորիկ ապա հանապազ կշտամբեալ և յանդիմանեալ լինէր 'ի սրբոյն Ներսիսէ։ Ընդ որում յաւէտ զչարեալ Պապայ և յայտնի ինչ ոչ իշխեցեալ առնել՝ տայ նմա արբուցումն մահու 'ի գիւղն Խաղ. և լուծեալ զնա 'ի կենացս իբրև 'ի չքմեղս իմն՝ տարեալ թաղէին զնա 'ի Թիլն աւանի. որ կալաւ զաթոռ հայրապետութեան ամս երեսուն և չորս։

Զկնի սորա ապա կացուցանեն յաթոռ նորա զՇահակ 'ի զաւակէ Ալբիանոսի, այր գովելի և լի առաքինութեամբ և բարեկարգութեամբ կրօնից. ոչ ևս ըստ սովորութեանն առաջնոյ առաքեալ զնա 'ի Կեսարիայ, այլ լքեալ 'ի բաց զօրէնն առաջին՝ ըստ օրինի պատրիարգաց կալան կարգ ժողով եպիսկոպոսաց ձեռնադրել որպէս Անտիոք, և Աղեքսանդր* և Հռոմ և Եփեսոս և Կոստանդնուպօլիս և Երուսաղէմ, զի մի՛ այլոց ոմանց ընդ ձեռամբ անկցի որ ինքնակալութեամբն է պատուեալ պատրիարգութիւն։

Իսկ յետ այսորիկ իբրև ըմբռնեալ սպանաւ Պապ արքայ յինքնակալէն Թէոդոսէ, և փոխանակ նորա զՎարազդատ 'ի տանէ Արշակունեաց թագաւորեցոյց։ Յերկրորդ ամի սորա վախճանի պատրիարգն Շահակ՝ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց. և եղբայր նորուն Զաւէն հաստատի յաթոռ նորա՝ նորին առաքինահրաշ վարուք պայծառացեալ։ Ապա և զՎարազդատ ևս մեծն Թէոդոս արտասահմանեալ 'ի Թուլիս կղզի Ովկիանոսի՝ թագաւորեցուցանէ միանգամայն զերկոսին որդիսն Պապայ՝ զԱրշակ և զՎաղարշակ։ Իսկ յերկրորդ ամի Արշակայ՝ իբրև եկաց Զաւէն 'ի հայրապետութեան ամս երեք, փոխեալ 'ի կենաց աստի, կալաւ զկնի նորա զաթոռն Ասպուրակէս եղբայր նորուն՝ 'ի նոցին առաքինութիւնսն յառաջադէմ գտեալ։ Բայց Շապուհ արքայ Պարսից զխոսրով ոմն Արշակունի թագաւորեցուցանէ իւրոյ կողմանն բաժնի. վասն զի Արշակ տիրել հաճեցաւ արևմտեայ կողմանն Յունական բաժնին։ Այլ երկոցունց սոցա զվարս և զկարգս և զարութիւնս և զանարութիւնս և զպատերազմունս՝ թէ պիտոյ է քեզ, բովանդակաբար ցուցցէ քեզ Պատմութիւնն Մովսեսի Խորենացւոյն։

* Թերևս «Աղեքսանդրիա»։

բում է պաշտպան լինել քրիստոնյա բանակին, որի միջոցով էլ պարտվեցին ասածու դեմ մարտնչողները։ Եվ Հայոց բանակը զորանալով ամբողջ ստորոտը լցնում է թշնամու դիակներով։ Այնտեղ Սմբատը բռնում է պիղծ Մեհրուժան Արծրունուն և երկաթը պսակաձև բոլորելով՝ հրով շիկացնում ու դնում է նրա գլխին և այդպես սպանում նրան։ Բայց քանի որ Պապը միշտ համակված էր ցանկասեր ու աղտեղի գործերով, այդ պատճառով նրան շարունակ կշտամբում ու հանդիմանում էր սուրբ Ներսեսը։ Դրա վրա ավելի չարանալով և չհամարձակվելով բացահայտ որևէ բան անել, [Պապը] անմեղ ձևանալով՝ Խաղ գյուղում նրան թունավորում է ու մեռցնում։ [Ներսեսին] տանում թաղում են Թիլ ավանում. նա հայրապետական աթոռին տիրել էր երեսունչորս տարի։

Ներսեսից հետո նրա աթոռին նստեցնում են Շահակին, որը Ալբիանոսի զավակից էր։ Շահակը գովելի մարդ էր՝ լի կրոնական առաքինությամբ և բարեկարգությամբ։ Առաջվա սովորության համաձայն՝ նրան Կեսարիա չեն ուղարկում, այլ անտեսելով այդ կարգը՝ պատրիարքների կանոնով ձեռնադրելու համար եպիսկոպոսների ժողով են անում, ինչպես Անտիոքը, Աղեքսանդրը*, Հռոմը, Եփեսոսը, Կոստանդնուպոլիսը և Երուսաղեմը[18], որպեսզի ուրիշների ձեռքի տակ չընկնի, որ ինքնիշխան կերպով մեծարել էր պատրիարքությունը։

Դրանից հետո, երբ Պապ թագավորը բռնվեց ու սպանվեց ինքնակալ Թեոդոսի կողմից, նրա փոխարեն [Թեոդոսը] թագավոր կարգեց Վարազդատին, որը Արշակունյաց տնից էր։ Սրա երկրորդ տարում վախճանվում է Շահակ պատրիարքը՝ հայրապետական աթոռին մնալով վեց տարի, և աթոռին նստում է նրա եղբայր Զավենը՝ փառավորվելով նույն առաքինահրաշ վարքով։ Այնուհետև մեծն Թեոդոսը, Վարազդատին ևս աքսորելով Օվկիանոսի[19] Թուլիս կղզին, միանգամից թագավոր է նշանակում Պապի երկու որդիներին՝ Արշակին ու Վաղարշակին։ Իսկ Արշակի երկրորդ տարում, երբ Զավենը հայրապետական աթոռին մնաց երեք տարի՝ հեռանալով կյանքից, նրանից հետո աթոռը դրավեց նրա եղբայր Ասպուրակեսը՝ նույն առաքինության մեջ առաջադեմ գտնվող մի մարդ։ Բայց Պարսից Շապուհ արքան իր կողմի բաժնում թագավոր է կարգում Արշակունի Խոսրով անունով մեկին, քանի որ Արշակը ցանկացավ տիրել հունական մասի արևմտյան կողմին[20]։ Այս երկուսի վարքը, կարգերը, արիությունները, անարիությունները ու պատերազմները, եթե պետք է քեզ, [ընթերցող], այդ ամբողջը քեզ ցույց կտա Մովսես Խորենացու պատմությունը։

* Թերևս՝ «Աղեքսանդրիան»։

Բայց յետ մահուանն Արշակայ՝ Մեսրովբ, որ 'ի Հացեկաց Տարօնոյ՝ և աշակերտեալ մեծին Ներսեսի և էր քարտուղար 'ի դրան արքունի, ընկեցեալ 'ի բաց զպատիւ մարդկային՝ զհետ գնայր երկնաւորին զվարս միայնակեցութեան ստացեալ։ Բայց զառաջադիմութիւն վարուց նորա և սքանչելիսն, զոր նովաւ Աստուած ցուցանէր, բաւական ցուցցի քեզ յայնցանէ, որ նախ քան զմեզ պատմեցին։ Յետ այսորիկ ապա վախճանեալ հայրապետն մեծ Ասպուրակէս, որ կալաւ զաթոռ հայրապետութեանն զամս հինգ։ 'Ի տեղի նորա յաջորդէ արքայ Խոսրով զՍահակ որդի մեծին Ներսեսի։ Եւ վասն զի սա ստուգապէս զոլով ծնունդ առաքինութեան՝ յիրաւի ապա զհետ սորա ընթանայր սուրբ և արդար վաստակոց հանդէսք. որ յաշխարհի գոլով և իբրև զանապատաւորս ամենայն հեգանաց հանդիսիւ ընդ կարգս աշխարհիս անցուցանէր՝ մըշտընջենամռունչ աղօթիւք հանդերձ իւրովք աշակերտօքն կատարեալ զպաշտօն բարեկարգութեանն։ Իսկ Արտաշիր որդի Շապհոյ Պարսից արքային կալեալ զԽոսրով արքայ Հայոց և եդեալ յԱնուշն բերդի՝ և փոխանակ նորա թագաւորեցուցանէ զՎռամշապուհ եղբայր նորա։ Բայց մեծին Սահակայ երթեալ առ Արտաշիր Պարսից արքայ՝ մեծարի առ 'ի նմանէ յաւէտ պատուով. վասն զի արգոյ և պատուական ցուցանէ Աստուած զծառայս իւր առաջի անհաւատից, և ապա աշալուրջ երեսօք զբոլոր նորա կատարէ զհայցուածս։ Իսկ իբրև եկն սուրբն Սահակ և զպարգևեալսն յԱրտաշրէ հաստատեաց 'ի ձեռն մերոյն Վռամշապհոյ՝ մեռանի ապա Արտաշիր արքայ Պարսից, և փոխանակ նորա թագաւորէ Վռամ։

Ընդ այն ժամանակս ապա եկեալ Մեսրովբայ և բերեալ զնշանագիր մերոյ լեզուի, զոր գոգցես նմա պարգևեալ 'ի տեսչութենէ շնորհացն Աստուծոյ, իսկ և իսկ 'ի հրամանէն մեծին Սահակայ ժողովէ մանկունս խոհեմամիտս, տրամախոհս, քաջուշեղս, փափկավանկս, և դպրոցս կարգէ ըստ գաւառաց գաւառաց ուսուցանել մեծաւ պնդութեամբ։ Յետոյ որոյ չուեալ 'ի Վիրս և անդ ըստ լեզուի նոցա արարեալ նշանագիր՝ վարդապետս և դպրոցս 'ի նմա ևս կարգէ։ Եւ ապա իջեալ 'ի կողմն Աղուանից և նոցա ևս ստեղծանէ նշանագիր ըստ կիսահագագ և խեցբեկոր լեզուի նոցա՝ վերակարգելով 'ի նմա ևս աշակերտանոցս։ Եւ ապա ինքն դարձեալ դառնայ 'ի Հայս և գտանէ զսուրբ Սահակ անդադար 'ի թարգմանութիւն պարապեալ։ Բայց 'ի վախճանելն Վռամշապհոյ արքային Հայոց՝ գնայ ապա մեծն Սահակ առ արքայն Պարսից Յազկերտ և աղաչէ արձակել զկապեալն Խոսրով 'ի Հայս փոխանակ Վռամշապհոյ. որոյ և կատարեալ իսկ զհայցուածսն սրբոյ առնն՝ տայ

Բայց Արշակի մահից հետո Մեսրոպը, որ Տարոնի Հացեկաց գյուղից էր, աշակերտել էր մեծն Ներսեսին և քարտուղար էր արքունիքում, մի կողմ գցելով մարդկային պատիվը, հետևում էր երկնավորին՝ ստանալով միայնակյացի վարք։ Բայց նրա առաջադեմ վարքը և սքանչելի գործերը, որ Աստված ցույց էր տալիս նրա միջոցով, դու, [ընթերցող], կարող ես բավարարվել նրանցից, ովքեր պատմեցին մեզնից առաջ։ Դրանից հետո վախճանվեց մեծ հայրապետ Ասպուրակեսը, որը հայրապետական աթոռին տիրեց հինգ տարի։ Նրա տեղը Խոսրով արքան նստեցնում է Սահակին՝ մեծն Ներսեսի որդուն։ Եվ քանի որ նա իսկապես առաքինի ծնունդ էր, իրավամբ նրան էին հետևում սուրբ և արդար գործ կատարողները։ Լինելով այս աշխարհում՝ նա անցկացնում էր ճգնավորի հեզ կյանք՝ կիրառելով այս աշխարհի բոլոր կարգ ու կանոնները և իր աշակերտների հետ մշտամռունչ աղոթքներով կատարելով բարեկարգ պաշտամունքը։ Իսկ Պարսից Շապուհ արքայի որդի Արտաշիրը, բռնելով Հայոց արքա Խոսրովին և նրան դնելով Անուշ բերդում, նրա փոխարեն թագավոր է կարգում նրա եղբայր Վռամշապուհին։ Բայց մեծն Սահակը, գնալով Պարսից արքա Արտաշիրի մոտ, նրա կողմից մեծ պատվի է արժանանում, քանի որ Աստված իր ծառաներին հարգելի ու պատվելի է ցույց տալիս անհավատների առաջ, հետո նա զվարթ դեմքով կատարում է նրա բոլոր խնդրանքները։ Իսկ երբ եկավ սուրբ Սահակը, մեր Վռամշապուհի միջոցով տեղավորեց Արտաշիրից ստացած բոլոր պարգևները։ Այնուհետև մեռնում է Պարսից արքա Արտաշիրը, և նրա փոխարեն թագավորում է Վռամը։

Ապա այդ ժամանակներում գալիս է Մեսրոպը և բերում մեր լեզվի նշանագրերը, որոնք կարծես նրան պարգևվել էին Աստծու նախախնամությամբ։ Մեծն Սահակի հրամանով [Մեսրոպը] իսկույն հավաքում է խոհեմ, խելացի, սրամիտ, բարեհնչյուն ձայն ունեցող մանուկներ և տարբեր գավառներում դպրոցներ է բացում ու մեծ ջանքեր թափելով ուսուցանում[21]։ Մեսրոպը դրանից հետո գնում է Վրաստան, այնտեղ էլ նրանց լեզվի համաձայն ստեղծում է նշանագրեր և կարգում ուսուցիչներ ու դպրոցներ։ Եվ ապա իջնելով Աղվանքի կողմերը՝ նրանց համար ևս ստեղծում է նշանագրեր՝ ըստ նրանց կիսահագագ ու աղճատված լեզվի՝ և այնտեղ ևս բացում է դպրոցներ։ Ապա ինքը այնտեղից վերադառնում է Հայաստան և տեսնում է, որ սուրբ Սահակը անդադար զբաղված է թարգմանությամբ։ Բայց երբ վախճանվում է Հայոց արքա Վռամշապուհը, մեծն Սահակը գնում է Պարսից արքա Հազկերտի մոտ և աղաչում է ազատ արձակել շղթայված Խոսրովին, որպեսզի նա գա Հայաստան և [թագավորի] Վռամշապուհի փոխարեն։ Կատարելով սուրբ

Խոսրովայ զտէրութիւն Հայոց։ Բայց նա 'ի կրկնակի թագաւորելն ոչինչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ վախճանի։

Իսկ 'ի վախճանելն Յազկերտի և փոխանակ նորա թագաւորեալ երկրորդն Վռամ 'ի Պարս։ Սա բազում դաժան ոճիրս գործեաց 'ի Հայաստանեայս և վրդովէր զամենայն բարեկարգութիւնս յեղծումն և յապականումն հասուցանել. զոր տեսեալ սրբոյն Սահակայ զչարին արկածս՝ գնայ 'ի մասն Յունաց. վասն զի յերկուս ճեղքեալ բաժանեալ էր Հայք 'ի մէջ Կայսեր և Պարսից։ Իսկ մեծն Թէոդոս թէպէտ և 'ի սկզբան անդ ընդ ակամբ հայէր առ 'ի չընդունել, սակայն իմացեալ 'ի բազմաց լի զնա աստուածային շնորհօք և ամենայն առաքինազարդ վարուք՝ մեծաւ պատուով և բարի օճանաւ ընդունի իբրև զնոյն ինքն առաքեալ Քրիստոսի. այլ և զնշանագիրսն, որ առ 'ի նոցանէն յԱստուծոյ ընծայեցաւ՝ հրամայէ փութով ուսանել և զծախս զպրոցացն յաբքունուստ լինել։

Եւ ապա սուրբն Սահակ իսկ և իսկ առաքէ զՎարդան թոռն իւր առ արքայն Պարսից Վռամ խնդրել զխաղաղութիւն. և նորա մեծարեալ զհայցուածս սրբոյն՝ կատարէ, թագաւորեցուցանէ Հայաստանեայցս զԱրտաշիր որդի Վռամշապհոյ։ Սա զի զեղխ էր միշտ 'ի գիճական շարիս անարգել, զոր և պատճառս քսութեան նախարարացն դայն զբաեալ՝ թունեցուցանէին իբր տաղտկացեալ զինքեանս առ 'ի նմանէն յոլ։ Եւ բողոք առ մեծն Սահակ բարձեալ՝ հայցէին կցորդակից ինքեանց առնել և շարախօս առ արքայն Պարսից, զի կա՛մ կալցի 'ի կուլանս և կա՛մ 'ի բաց ընկեսցի թագաւորն Հայոց։ Այլ նա թէպէտև զիրս բամբասանացն 'ի սուտ ոչ հնարէր, սակայն մատնել զարքայն իւր հեթանոս արքայի ոչ առնոյր յանձն՝ յուսալով տեսանել զկազնումն զլորելոյն և ոչ զընկճումն։ «Քա՛՝ ասէ, լիցի ինձ զայլոց զիմս մատնել մոլորեալ ոչխար. զի թէ անառակ է, սակայն սուրբ մկրտութեամբն երդմնեալ է. պոռնիկ է՝ այլ քրիստոնեայ է. զիճացեալ է մարմնով, այլ ոչ անհաւատ հոգւով. զեղխ է վարուք, այլ ոչ կրակապաշտ»։ Եւ այսպէս զախտացեալ իւր ոչխարն ոչ փոխանակէր ընդ առողջ դազանի։ Այլ թէպէտ և սուրբն այսպէս արդարախորհ լինէր, սակայն Վռամայ զլսելիսն շարախոհացն մատուցեալ և առաւել Սուրմակայ, որ զլեզուն սուսեր սատակիչ պատրաստեալ՝ ակնկալեալ փոխանակ սրբոյն Սահակայ գահակալել յաթոռն։ Եւ ապա 'ի բանտ զԱրտաշիր արգելեալ և մարզպան պարսիկ Հայոց կացուցեալ՝ և զՍուրմակն շարալեզու փոխանակ սրբոյն

մարդու խնդրանքը՝ նա Խոսրովին է տալիս Հայոց տերութիւնը։ Իսկ նա երկրորդ անգամ թագավորելով մեկ տարուց ոչ ավելի՝ վախճանվում է։

Իսկ երբ վախճանվում է Յազկերտը, նրա փոխարեն Պարսկաստանում թագավորում է Վռամ Երկրորդը։ Սա բազում դաժան ոճիրներ է գործում Հայաստանում և վրդովում ամբողջ բարեկարգությունը՝ այն հասցնելով ավերման ու ապականման։ Այդ չար մարդու կատարածը տեսնելով՝ սուրբ Սահակը գնում է հունական մասը, քանի որ Հայաստանը բաժանված էր ու տրոհված երկու մասի՝ [բյուզանդական] կայսրության ու Պարսկաստանի միջև[22]։ Իսկ մեծն Թեոդոսը թեպետ սկզբում ծուռ աչքով էր նայում՝ չընդունելով նրան, սակայն շատերից իմանալով, որ նա լի է աստվածային շնորհքով ու ամեն տեսակի առաքինազարդ վարքով՝ մեծ պատվով ու բարի օգնությամբ ընդունում է նրան, որպես Քրիստոսի առաքյալի։ Բացի դրանից, նա հրամայում է շտապ կարգով սովորեցնել Աստծու կողմից նրանց շնորհված նշանագրերը և դպրոցների ծախսերը հոգալ արքունիքի կողմից։

Եվ ապա սուրբ Սահակն իսկույնևեթ իր թոռ Վարդանին ուղարկում է Պարսից արքա Վռամի մոտ՝ խաղաղություն խնդրելու։ Եվ նա մեծարելով սրբի խնդրանքը՝ կատարում է դա և հայաստանցիների վրա թագավոր է կարգում Վռամշապուհի որդի Արտաշիրին։ Բայց քանի որ սա անառակ էր և միշտ չար գործերի մեջ ցանկասեր, դա քսության պատճառ դարձնելով՝ նախարարները ցույց էին տալիս, որ իրենք նրանից զզվել են։ Եվ բողոքելով մեծն Սահակին՝ խնդրում էին իրենց կցորդակից և շարախոս դարձնել Պարսից արքայի առաջ, որպեսզի նա Հայոց թագավորին կա՛մ բանտարկի, կամ հեռացնի։ Սահակը այդ բամբասանքները թեև անհիմն չէր համարում, սակայն չէր համաձայնվում հեթանոս արքայի ձեռքը հանձնել իր արքային՝ հույս ունենալով, որ նա կործանումից ետ կկանգնի և չի տապալվի։ Նա ասում է. «Չլինի թե իմ մոլորված ոչխարը ես գայլերին տամ, որովհետև թեև նա անառակ է, սակայն սուրբ մկրտությամբ է կնքված, պոռնիկ է, բայց քրիստոնյա է, մարմնով ցանկասեր է, բայց հոգով անհավատ չէ, վարքով շվայտ է, բայց կրակապաշտ չէ»։ Եվ այդպես իր հիվանդ ոչխարին չէր փոխանակում առողջ դազանի հետ։ Չնայած սուրբն այդպես արդարամիտ էր, սակայն [այդ բանը] չարամիտները Վռամի ականջը լցնում էին, առավել ևս Սուրմակը, որը լեզուն սպանիչ սուսեր դարձնելով՝ ակնկալում էր սուրբ Սահակի փոխարեն նստել աթոռին։ Եվ ապա [Վռամը] բանտարկելով Արտաշիրին և Հայաստանում պարսիկ մարզպան շնչանակելով՝ սուրբ Սահակի փոխարեն կարգում է չարալեզու Սուր-

Սահակայ կացուցանէ. որ ոչ աւելի քան զմի ամ տևեալ՝ հալածի 'ի նոյն նախարարաց։

Յետ որոյ զկնի նորուն կացուցանէ Վռամ զոմն Ասորի Բրգիշոյ՝ այր ապարասան և յափշտակող, որ տանտիկին կանամբք զտուն իւր մատակարարէր։ Եւ վասն զի զսա ևս նախարարքն ատեցին՝ ապա տայ զայլ ոմն Ասորի՝ Շմուէլ անուն, որ հետևող գտանէր վարուցն Բրգիշոյի առաւել ևս ագահութեան մասամբք և մեծին Սահակայ միայն զվարդապետելն հրամայէ և ձեռնադրել՝ զոր Շմուէլն հրամայէ։ Բայց մեծն Սահակ յետոյ աղաչեալ 'ի նախարարացն՝ ոչ առնոյր յանձն կրկին առաջնորդ լինել նոցա. սակայն ոչ ինչ կասէր միշտ զհոգևոր կաթն դիեցուցանել մանկանց եկեղեցւոյ։ Բայց 'ի վախճանիլն Վռամայ և փոխանակ նորա Յազկերտի որդւոյ նորա թագաւորել, ապա և սուրբն Սահակ հիւանդացեալ հիւանդութիւն մեծ՝ առ Քրիստոս վերափոխի 'ի Բագրաւան գաւառի 'ի Բլուրն կոչեցեալ գիւղ. որ զանմարմնոցն յինքեան բերեալ զվարս՝ 'ի մահկանացու մարմնի զանմահն թողոյր յիւր յիշատակ բարւոյ, ընդ հրեշտակականն դասակցելով պարս, գահակարգեալ ևս ընդ աջմէ աթոռոցն քրիստոսականացն յանդերանութիւնսն։ Իսկ ըզպատուական մարմին նորա տարեալ հանգուցանեն 'ի Տարօն 'ի գիւղն Աշտիշատ։

Բայց զկնի վեցից ամսոց միայն ապա և սուրբն Մեսրովբ փոխի 'ի կենաց ատի 'ի Վաղարշապատ քաղաքի. որ գրեթէ ըստ երկայնոցն զուարթնոց զարդու՝ ամենեցուն զինքն բոլորապէս ցուցանէր։ Ուր ապա և նշան սքանչելի 'ի վերայ նորա փայլատակէր խաչանման լոյս նշողի առկայացեալ յերկար ժամ՝ մինչև բարձեալ տարան զսուրբ մարմինն 'ի գեօղն Օշական, զհետ ընթանալով դագաղացն նոյն լուսեղէն խաչանման տեսիլն։ Եւ անդ 'ի հանգիստ զնա փոխեալ՝ ապա տեսիլն աներևոյթ լինէր։

Բայց զաթոռ հայրապետութեանն տեղապահութեամբ յաջորդէր Յովսէփ քահանայ 'ի Վայոյ ձորոյ 'ի Հողոցմանց գեղջէ. սակայն 'ի հրամանէ Յազկերտի Սուրմակ կատարէ զձեռնադրութեան զլրումն զամս վեց՝ մինչև մեռաւ իսկ. և ապա զսուրբն Յովսէփ 'ի ձեռնադրութիւն Հայոց։

Աստ ապա սպառսպուռ 'ի վերջ հասեալ՝ դադարէր թագաւորութիւնն գրոհի Արշակունեաց 'ի Հայաստանեայցս. ընդ նմին և հայրապետութիւնն յազգէ երիցս երանեալ Լուսաւորչին մերոյ Գրիգորի։ Եւ այր իւրաքանչիւր զկամս իւր կատարեալ՝ վրդովէր խաղաղութիւնն և խրթնայր բարեզարդութիւնն։

Եւ ապա ոմանք 'ի մերոց նախարարաց դաւաճանեալք 'ի շարէն՝ ուրացան զհաւատս քրիստոնէութեան՝ հեթանոսական օրինաց հնազանդեալք։ Իսկ աւագագոյնք երկուք 'ի նոցանէ Շաւասպ Արծրունի և Վնդոյ

մակին, որը մեկ տարուց ոչ ավելի մնալով՝ հալածվում է նույն նախարարների կողմից։

Դրանից հետո նրա փոխարեն Վռամը նշանակում է մի ոմն ասորի Բրգիշոյի՝ անզուսպ ու հափշտակող մի մարդու, որի տունը տանտիկիններն էին սպասարկում։ Եվ դրա համար նախարարները նրան ևս ատեցին, և [Վռամը] նշանակում է Շմուել անունով մեկ այլ ասորու, որը հետևող եղավ Բրգիշոյի վարքին առավելապես իր ագահությամբ։ Եվ մեծն Սահակին թույլ էր տրվում միայն վարդապետել ու ձեռնադրել։ Բայց հետո երբ նախարարները աղաչում են մեծն Սահակին կրկին առաջնորդ լինել, նա հանձն չի առնում, սակայն ոչ մի բան չէր կասեցնում նրան՝ հոգևոր կաթով սնելու եկեղեցու մանուկներին։ Երբ վախճանվում է Վռամը, նրա փոխարեն թագավորում է նրա որդի Հազկերտը։ Այնուհետև սուրբ Սահակը հիվանդանալով ծանր հիվանդությամբ՝ վախճանվում է Բագավան գավառի Բլուր կոչված գյուղում։ Անմարմիններին հատուկ վարք ունենալով՝ մահկանացու մարմնի մեջ որպես բարի հիշատակ թողնում է անմահականը՝ դասակցելով հրեշտակների խմբին և այն աշխարհում գահակալելով քրիստոնեական աթոռի աջ կողմում։ Իսկ նրա պատվական մարմինը տանում թաղում են Տարոնի Աշտիշատ գյուղում։

Վեց ամիս անց Վաղարշապատ քաղաքում վախճանվում է նաև սուրբ Մեսրոպը, որը բոլորի աչքում գրեթե ներկայանում էր երկնային հրեշտակների նման։ Նրա վրա սքանչելի լույս էր փայլատակում՝ երկար ժամանակ մնալով խաչանման լույսի շողի նման։ Երբ նրա սուրբ մարմինը վերցրին, տարան Օշական գյուղը, այդ լուսեղեն խաչանման տեսիլը ընթանում էր նրա դագաղի հետևից։ Եվ այնտեղ, երբ նրան հողին են հանձնում, տեսիլը աներևութանում է։

Հայրապետական աթոռին տեղապահությամբ հաջորդում է Հովսեփ քահանան, որը Վայոց ձորի[23] Հողոցմանց գյուղից էր։ Սակայն Հազկերտի հրամանով ձեռնադրությունը վեց տարի, մինչև նրա մեռնելը, կատարում էր Սուրմակը։ Եվ ապա Հայաստանի համար ձեռնադրում են սուրբ Հովսեփին։

Այստեղ ապա ամբողջապես հասնելով վերջին՝ դադարում է Արշակունյաց ազգի թագավորությունը Հայաստանում, նրա հետ նաև հայրապետությունը՝ երիցս երանելի մեր Գրիգոր Լուսավորչի ցեղից[24]։ Եվ երբ ամեն մարդ իր կամքն էր կատարում, վրդովվում էր խաղաղությունը, և նսեմանում էր բարեզարդությունը։

Եվ ապա մեր նախարարներից ոմանք, խաբվելով շարի կողմից, ուրացան քրիստոնեական հավատքը՝ հնազանդվելով հեթանոսական կրոնին։ Իսկ նրանցից ավելի ավագ երկու անձ՝ Շավասպ Արծրունին

'ի Դվին քաղաքէ, հրամայեն շինել զմեհեանն Որմզդական և զտուն հրապաշտութեան։ Եւ քրմապետ կարգէր Վնդոյն զորդի իւր զՇերոյ, և զնէր օրէնս 'ի Պարսիկ մատենէ բազում և անհնարին բարս չարեաց գործոց՝ և լի մթացուցիչ և նսեմական պիղծ ուսմամբ։ Լուեալ ապա զայս քաջին Վարդանայ՝ թոռին մեծին Սահակայ, թէ շիջու բարեկարգութիւնն եկեղեցւոյ և տօնք տարեկանաց տխրացան, յանկարծակի ապա զօր գումարեալ և յանդուգն արձակմամբ 'ի վերայ հասեալ, զանօրէնն Շաւասպ փայլակնահար իմն սրով սատակէր, և զմարզպանն Մշկան փախստական առնէր. և զպիղծն Վնդոյ ձերբակալ արարեալ՝ յատրուշանի կրակին, զոր շինեաց ինքն իսկ 'ի Դվին՝ այրէր, և զորդի նորա Շերոյ 'ի վերայ բագնին զփայտէ կախէր։ Եւ 'ի տեղի բագնին շինէ եկեղեցի մեծ անուանակոչութեամբ Սրբոյն Գրիգորի, անդ փոխելով զաթոռ հայրապետութեանն. և հաստատեալ կացուցանէ 'ի նմա զմեծ հայրապետն Գիւտ։ Վասն զի սուրբ հայրապետն Յովսէփ 'ի մետաղս բանտից ըմբռնեալ էր ընդ սրբոց Ղևոնդեանցն, որ թէպէտ դեռևս կայր կենդանի, սակայն ոչ պարտ վարկան նախարարքն Հայոց առանց հովուի զհօտն Քրիստոսի թողուլ, զի մի՛ վարատեսցին 'ի հեթանոսական գայլոցն. կամ թէ 'ի հրամանէ սրբոյն իսկ Յովսեփայ այն իրագործէր։ Եւ այսպէս ապա վերստին նորոգէր գեղեցիկ կարգ եկեղեցւոյ սրբոյ։ Եւ յայնմհետէ ապա հնազանդէին Հայք առաջնորդութեան քաջին Վարդանայ մինչև ցօր մահուան նորա, որ բազում պատերազմունս քաջութեան վասն առ 'ի Քրիստոս հաւատոցն կատարեալ՝ արժանի գտանի առնուլ բազում և այլ ևս ընկերօքն զպսակն անթառամ յանմահ յարքայէն Քրիստոսէ։

Զկնի այսորիկ ապա լինի կատարումն սրբոյ կաթողիկոսին Յովսեփայ՝ կալեալ զաթոռ հայրապետութեան զամս ութ. ընդ նմին և այլ ևս եպիսկոպոսացն և քահանայիցն Ղևոնդեանց և սարկաւագաց նոցա 'ի Պարսս յանօրինէն Պերոզէ, որք եղին 'ի գլուխս իւրեանց զպսակն մարտիրոսական կազմեալ յամենասուրբ ձեռացն Աստուծոյ։ Զայսու ժամանակաւ մեծ հայրապետն Գիւտ, որ յՈթմսոյ գեղջէ՝ կացեալ ամս տասն յաթոռ հայրապետութեան՝ վախճանի։ Եւ զկնի նորա յաջորդէ զաթոռ հայրապետութեան Յոհան Մանդակունի, որ առլցեալ իսկ էր ամենայն հոգևոր հանճարով. և կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական ժամանակագրութիւնս եկեղեցւոյ սրբոյ. և յարդարէ ևս ճառս զգուշացուցիչս դիտաւորական կենցաղոյս, որ բերէ զոգւոցն փրկութիւն։ Եւ յաւուրս սորա պայազատէր զՀայաստանեայս Վահան Մամիկոնեան որդի Հմայեկի՝ եղբօրորդի սրբոյն Վարդանայ, որ արիաբար յաղթեալ ամենայն զօրաց՝ եկեալ 'ի վերայ

և Վնդոն, որ Դվին քաղաքից էր, հրամայում են շինել Որմզդական մեհյան ու կրակապաշտության տաճար։ Վնդոն իր որդի Շերոյին կարգում է քրմապետ և պարսկական մատյանով բազում անհնարին ու չարգործների կարգ է սահմանում՝ խավար ու նսեմ պիղծ կրոնական օրենքով լի։ Քաջ Վարդանը՝ մեծն Սահակի թոռը, լսելով, որ մարեց եկեղեցու բարեկարգությունը, և տարեկան տոները պատմության վերածվեցին, հանկարծակի զորք գումարելով և հանդուգն հարձակմամբ վրա հասնելով՝ անօրեն Շավասպին կարծես շանթահար սրով սպանում է և Մշկան մարզպանին էլ փախուստի մատնում։ Ձերբակալելով պիղծ Վնդոյին՝ այրում է Դվինում նրա շինած ատրուշանի վրա, իսկ նրա որդի Շերոյին էլ մեհյանի փայտից կախում։ Եվ մեհյանի տեղում կառուցում է մի մեծ եկեղեցի՝ Սուրբ Գրիգոր անվանակոչությամբ՝ այնտեղ տեղափոխելով հայրապետական աթոռը։ Եվ հաստատում ու դրան է նստեցնում Գյուտ մեծ հայրապետին։ Այդ ժամանակ սուրբ հայրապետ Ներսեսը բանտարկված էր սուրբ Ղևոնդյանների հետ միասին և թեպետ դեռևս ողջ էր, սակայն Հայոց նախարարները հարկ չհամարեցին Քրիստոսի հոտը առանց հովվի թողնել, որպեսզի նրանք ցաքուցրիվ չլինեին հեթանոսական գայլերի կողմից, կամ թե նույն սուրբ Հովսեփի հրամանով այն իրագործվեր։ Եվ այդպես վերստին նորոգվում էր սուրբ եկեղեցու գեղեցիկ կարգը։ Դրանից հետո հայերը ենթարկվում են քաջ Վարդանի առաջնորդությանը մինչև նրա մահվան օրը։ Քրիստոսի հավատի համար բազում խիզախ պատերազմներ մղելով՝ նա արժանի է համարվում իր բազմաթիվ ընկերների հետ միասին անմահ Քրիստոս արքայից ստանալու անթառամ պսակը։

Դրանից հետո մահանում է սուրբ Հովսեփ կաթողիկոսը, որը հայրապետական աթոռին նստեց ութ տարի։ Նրա հետ նաև Ղևոնդյան այլ եպիսկոպոսներ, քահանաներ ու սարկավագներ, որոնք նշանակված էին անօրեն Պերոզի կողմից Պարսկաստանում, իրենց գլխին դրին մարտիրոսական պսակը, որը պատրաստվել էր Աստծու ամենասուրբ ձեռքով։ Այդ ժամանակներում Գյուտ մեծ հայրապետը, որը Ութմսո գյուղից էր, հայրապետական աթոռին նստելով տասը տարի, վախճանվում է։ Նրանից հետո հայրապետական աթոռին նստում է Հոհան Մանդակունին, որը առլեցուն էր ամենայն հոգևոր հանճարով։ Կարգեր հորինելով՝ նա պայծառապես ճոխացնում է սուրբ եկեղեցու բոլոր աղոթական ժամակարգությունները և կարգավորում է կյանքին լավ նայելու խրատական ճառերը, որոնք բերում են ոգիների փրկություն։ Նրա օրոք Հայաստանում իշխում էր Վահան Մամիկոնյանը՝ Հմայակի որդին, սուրբ Վարդանի եղբորորդին, որը արիաբար հաղթելով իր վրա հարձակված բոլոր

նորա, և ժողովեալ զհարկ աշխարհիս՝ շինէ այնուիկ զեկեղեցիս զաւերեալս 'ի թշնամեաց՝ թելադրութեամբ և խրատու և աղօթից նպաստիւ սուրբ հայրապետին Յոհաննու Մանդակունւոյ։ Եւ մինչդեռ Պերոզ զկորուստ աշխարհիս Հայոց հնարէր կատարել՝ յանկարծօրէն յաղօթից սրբոյ առնն աստուծոյ Յոհաննու սատակի 'ի Քուշանաց ինքն և առհասարակ զօրք իւր։

Յետ սորա Վաղարշ թագաւորէ Պարսից, որ բարեխրատուց լսող լեալ՝ 'ի Վահան զաշխարհս մեր հաւատայր։ Իսկ մեծ հայրապետն Յոհան Մանդակունի՝ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց, փոխի առ Քրիստոս։ Եւ զկնի նորա ապա Բաբգէն 'ի նորուն յաշակերտութենէ կալաւ զաթոռ հայրապետութեան. յորում ժամանակի Պերոզ թագաւորեալ Պարսից՝ և 'ի դուռն զՎահան կոչեալ, ետ նմա զմարզպանութիւն Հայոց և առաքէ 'ի Հայս։ Զայսու ժամանակաւ աստուածահաճոյ վարուք և բարեպաշտ հաւատով երջանիկ արքայն Հոռոմոց Զենոն վախճանէր. որ 'ի ժամանակի տէրութեան իւրոյ... զլուսաստփիւռ պայծառատարած ճառագայթաւէտ զհաւատս առաքելական ծաղկեցուցանէր յեկեղեցւոջ Աստուծոյ։ Իսկ յետ սորա քաջանունն Անաստաս՝ կացեալ յաթոռ թագաւորութեանն Հոռոմոց, նմանապէս կամ թէ ևս առաւել ճշմարտասիրաբար և հաճոյակատար Աստուծոյ վարուք հաստատէր զաւանդութիւն բարեպաշտութեան հարցն սրբոց և շրջաբերական թղթովք նզովեաց զամենայն հերձուածողս՝ ընդ ամենեսին և զժողովն Քաղկեդոնի նզովէր։

Իսկ ապա զկնի 'ի սմին յայսմ ժամանակի բարեպաշտութեան աշխարհին Հոռոմոց՝ մեծ Հայրապետն Հայոց Բաբգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, Վրաց և Աղուանից 'ի Նոր քաղաքի 'ի սուրբ կաթուղիկէի 'ի մայրն եկեղեցեաց Հայոց, որք նմանապէս... խոտեցին զժողովն Քաղկեդոնի... 'ի նմին հիման սրբոյն Գրիգորի հաստատեալ կային։ Եւ այսպէս յայսմ ժամանակի մի հաւատ բարեպաշտութեան առհասարակ հաստատեալ լինէր յաշխարհին Հոռոմոց, Հայոց, Վրաց և Աղուանից՝ հաւասար ամենեցունց... ի բաց ընկեցեալ զժողովն Քաղկեդոնի։ Իսկ իբրև ամք լե 'ի վերայ ճշմարիտ հաւատոյն անցանէին, և զկնի Անաստասայ Յուստինոս... թագաւորէր՝ սա... զանտանելի զվտանգս վշտալից տանջանաց արանց սրբոց և ուղղափառաց 'ի վերայ հաստատէր. և դարձեալ արեամբ շաղախէր և զյատակս եկեղեցւոյ սրբոյ։ Բայց մեծ հայրապետն Բաբգէն՝ իբրև եկաց յաթոռ հայրապետութեան ամս հինգ, վախճանեցաւ։

Իսկ զկնի սորա զՍամուէլ 'ի գեղջէն Արծկէոյ նստուցանեն յաթոռ

զորքերին և հավաքելով երկրի հարկերը՝ դրանցով շինում է թշնամիների կողմից ավերված եկեղեցիները՝ սուրբ հայրապետ Հոհան Մանդակունու հորդորանքով, խրատով ու նպաստավոր աղոթքներով։ Եվ մինչդեռ Պերոզը Հայոց աշխարհի կորստյան մասին էր մտածում, Աստծու սուրբ մարդու՝ Հոհանի աղոթքների շնորհիվ քուշանների կողմից հանկարծորեն կոտորվում են ինքը և իր ամբողջ զորքը։

Դրանից հետո Պարսկաստանում թագավորում է Վաղարշը, որը անսալով լարի խրատներին՝ մեր աշխարհը վստահում է Վահանին։ Իսկ մեծ հայրապետ Հոհան Մանդակունին, հայրապետական աթոռին վեց տարի նստելուց հետո, վախճանվում է։ Նրանից հետո հայրապետական աթոռին տիրեց նրա աշակերտներից մեկը՝ Բաբգենը, որի ժամանակ Պերոզը, թագավորելով Պարսկաստանում և Վահանին արքունիք կանչելով, Հայոց մարզպանությունը տալիս է նրան և ուղարկում Հայաստան։ Այդ ժամանակներում վախճանվում է աստվածահաճո վարքի ու բարեպաշտ հավատի տեր հունական Զենոն երջանիկ արքան, որը իր իշխանության ժամանակ...[25] Աստծու եկեղեցում ծաղկեցնում էր առաքելական լուսապայծառ, պայծառատարած, ճառագայթավետ հավատը։ Իսկ սրանից հետո մեծանուն Անաստասը, նստելով հռոմեական թագավորական աթոռին, բարեպաշտ սուրբ հայրերի ավանդությունները զորացնում էր նույն ձևով կամ առավել ևս ճշմարտասիրաբար և հաճոյակատար Աստծու կամքով՝ շրջաբերական թղթով նզովելով բոլոր հերձվածողներին ու բոլորի հետ նաև՝ Քաղկեդոնական ժողովը։

Իսկ հետո հռոմեական աշխարհի բարեպաշտության այդ ժամանակներում Հայոց մեծ հայրապետ Բաբգենը Հայոց, Վրաց, Աղվանից եպիսկոպոսների ժողով է անում Նոր քաղաքում[26], Հայոց եկեղեցիների մայր սուրբ կաթողիկեում..., որոնք նույնպես մերժեցին Քաղկեդոնի ժողովը... սուրբ Գրիգորի հիմքի վրա էին հաստատված։ Եվ այդ ժամանակներում հռոմեական, հայկական, վրացական և աղվանական աշխարհներում հաստատվել էր բոլորի համար հավասար ու բարեպաշտ մի հավատ..., մերժելով Քաղկեդոնի ժողովը։ Իսկ երբ ճշմարիտ հավատի վրայով անցնում է լե [35] տարի, և Անաստասից հետո Հուստինոսն... է թագավորում, որը... սուրբ ու ուղղափառ մարդկանց համար սահմանում է անտանելի նեղություններ և վշտալից տանջանքներ և ապա արյամբ շաղախում սուրբ եկեղեցու հատակը։ Եվ Բաբգեն մեծ հայրապետը հայրապետական աթոռին հինգ տարի նստելուց հետո վախճանվում է։

Նրանից հետո հայրապետական աթոռին նստեցնում են Սամվելին,

հայրապետութեանն. և յորում ժամանակի Վարդ՝ եղբայր Վահանայ, պայազատէ զՀայս։ Եւ սորա ևս կացեալ յաթոռ հայրապետութեան ամս տասն* վախճանի։ Իսկ ապա յետ սորա զՄուշէ 'ի նահանգէ Կոտէից 'ի գեղջէ Այլաբերից կացուցանեն 'ի հայրապետական յաթոռն. յորում ժամանակի մարզպանք Պարսիկք Հայաստանեայցս տիրէին։ Սորա կացեալ յաթոռ սրբութեան ամս ութ՝ վախճանի։

Եւ զկնի սորա զՍահակ 'ի գաւառէն Հարքայ՝ Յզկայ գեղջէ կացուցանեն 'ի հայրապետական աթոռն։ Եւ 'ի սորին ևս աւուրս մարզպանք Պարսիկք Հայաստանեայցս տիրէին հրամանաւ Կաւատայ արքայի։ Սորա լցեալ զաւուրս հայրապետութեան իբրև ամս հինգ՝ վախճանեցաւ և սա։ Ապա զԲրիստափոր 'ի գաւառէ Բագրևանայ 'ի Տիրառիճ գեղջէ նստուցանեն յաթոռ հայրապետութեան, որ կալաւ զառաջնորդութիւն ամս վեց։ Եւ զկնի սորա զՂևոնդ, որ էր 'ի Փոքր Եռաստայ՝ կացուցանեն յաթոռ սրբութեան։ Յաւուրս սորա Խոսրով թագաւորէ Պարսից փոխանակ հօր իւրոյ Կաւատայ. և ապա ապստամբեալ 'ի նմանէ Վարդանն Մամիկոնեան՝ սպանանէ զմարզպանն Սուրէն 'ի Դվին քաղաքի, և ինքն հանդերձ այլօք նախարարօքն գնայ 'ի ծառայութիւն Յունաց։ Իսկ Ղևոնդի կալեալ զաթոռ հայրապետութեան զամս երիս՝ վախճանի։ Եւ զկնի սորա զներսէս 'ի գաւառէն Բագրևանայ 'ի գեղջէ Աշտարակաց ածեալ հաստատեն յաթոռ սրբութեան։ 'Ի ժամանակի աստ Խոսրով արքայ Պարսից զօր բազում գումարեալ՝ առաքէ հրոսակս Վարդանայ, և լինի պատերազմ սաստիկ 'ի դաշտին Խաղամախայ. և 'ի մշտաջան աղօթից սրբոյն Ներսեսի անհնարին հարուածովք մաշեն զօրքն Վարդանայ զՊարսիկսն։ Յաւուրս սորա Մաժոժ, որ էր 'ի Բեշապուհ գաւառէ 'ի Քունարաստան գեղջէ և յազգէ մոգ, և ըստ սուրբ աւազանին 'ի մկրտութեանն Յիզտբուզիտ անուանեալ, որ թարգմանի «ա ս տ ու ա ծ ա պ ր ե ց ո ւ յ ց», բազում շարշարանս կրեալ 'ի մարզպանէ Վշնասն Վահրամայ՝ 'ի Դվին քաղաքի պսակի մարտիրոսական մահուամբ 'ի Քրիստոսէ։ Զոր բարձեալ զսուրբ մարմինն սրբոյ մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսեսի բովանդակ եպիսկոպոսօք և կղերիւք եկեղեցւոյ՝ եդին մերձ 'ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ 'ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք։ Սորա կալեալ զհայրապետական աթոռն իբրև զամս ինն՝ վախճանի։ Եւ զկնի սորա զոմն Յոհաննէս 'ի Գաբեղենից 'ի գեղջէ Սնծեղուան կացուցանեն հայրապետ Հայաստանեայցս, որ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս

* Յերուսաղէմ տպագրեալն ունի «կացեալ յաթոռ հայրապետութեան ամս քսան՝ վախճանի։ Տե՛ս եր. 44։

որը Արծկե գյուղից[27] էր։ Նրա ժամանակ Հայաստանում իշխում էր Վահանի եղբայր Վարդը։ Եվ [Սամվելը], հայրապետական աթոռին նստելով տասը* տարի, վախճանվում է։ Իսկ նրանից հետո հայրապետական աթոռին նստեցնում են Մուշեին, որը Կոտայք գավառի Այլաբերք գյուղից[28] էր։ Նրա ժամանակ Հայաստանում իշխում էին պարսիկ մարզպանները։ Հայրապետական աթոռին ութ տարի նստելուց հետո նա վախճանվում է։

Նրանից հետո հայրապետական աթոռին են նստեցնում Սահակին, որը Հարք գավառի[29] Հղուկ գյուղից էր։ Նրա օրոք ևս պարսիկ մարզպաններն էին իշխում Հայաստանում՝ Կավատ արքայի հրամանով։ Նրա հայրապետության հինգ տարին լրանալուց հետո նա ևս վախճանվում է։ Հետո հայրապետական աթոռին նստեցնում են Քրիստափորին, որը Բագրևան գավառի Տիրառիճ[30] գյուղից էր. նա աթոռակալեց վեց տարի։ Նրանից հետո սուրբ աթոռին նստեցնում են Ղևոնդին, որը Փոքր Եռաստ գյուղից[31] էր։ Նրա օրոք Պարսկաստանում թագավորում է Խոսրովը իր հոր՝ Կավատի փոխարեն։ Այնուհետև Վարդան Մամիկոնյանը, ապըստամբելով նրա դեմ, Դվին քաղաքում սպանում է մարզպան Սուրենին և այլ նախարարների հետ միասին գնում է ծառայելու հույներին։ Իսկ Ղևոնդը, հայրապետական աթոռին նստելով երեք տարի, վախճանվում է։ Նրանից հետո Բագրևան գավառի Աշտարակք գյուղից բերում են Ներսեսին և նստեցնում սուրբ աթոռին։ Այդ ժամանակ Պարսից Խոսրով արքան, գումարելով մեծ զորք, հրոսակներ է առաքում Վարդանի դեմ, և մեծ պատերազմ է լինում Խաղամախ դաշտում[32], և սուրբ Ներսեսի մշտաջան աղոթքներով Վարդանի զորքն անխնա կոտորում է պարսիկներին։ Նրա օրոք Մաժոխը, որը Բեշապուհ գավառի Քունարաստան գյուղից էր, մոգերի դասից, սուրբ ավազանում մկրտության ժամանակ անվանվեց Հիզտբուզիտ, որը թարգմանվում է «աստված ապրեցրեց»։ Բազում շարշարանքներ կրելով մարզպան Վշնասն Վահրամից՝ նա Դվին քաղաքում Քրիստոսի կողմից պսակվում է մարտիրոսական մահվամբ։ Սուրբ մարտիրոսի սուրբ մարմինը վերցնելով՝ մեծ հայրապետ Ներսեսը և եկեղեցու բոլոր եպիսկոպոսներն ու կղերականները տանում թաղում են սուրբ եկեղեցու մոտ, կաթողիկոսարանի արևելյան կողմում՝ տաշած քարերով նրա վրա շինելով սուրբ վկայարան։ Հայրապետական աթոռին տիրելով մոտավորապես ինը տարի՝ նա վախճանվում է։ Նրանից հետո Հայաստանի հայրապետ են կարգում Գաբեղյաններից[33] ոմն Հովհաննեսին, որը Սնծեղվան գյուղից էր։ Հայրապետական աթոռին

* Երուսաղեմյան հրատարակությունում՝ «կացեալ յաթոռ հայրապետութեան ամս քսան՝ վախճանի» (Հայրապետական աթոռին նստելով քսան տարի՝ վախճանվում է)։

ժէ՝ վախճանի։ Յետ սորա ապա զՄովսէս զայրն Աստուծոյ, որ յԵղիվարդ գեղջէ, (որ և սնեալ և ուսեալ 'ի հայրապետանոցին սրբոյ) կացուցանեն յաթոռ Սրբոյն Գրիգորի։ Յամի տասներորդի հայրապետութեան սորա և երեսներորդի առաջներորդի ամին Խոսրովայ՝ որդւոյ Կաւատայ արքայի Պարսից՝ լցեալ բովանդակեալ շրջանակ բոլորակի հինգհարիւր երեսուն երկու ամաց, ապա 'ի հրամանէ մեծին Մովսեսի քերթողք և գիտունք արուեստին եղին զկարգ թուականութեան Թորգոմեանս համարոյ. որ է շարժումն յառաջախաղաց և հիմն զանազան մասանց արուեստին։ Եւ այսպէս ըստ հայկականս լեզուի տուեալ տօմար տօնից տարեկանաց, յայնմհետէ ոչ կարօտանանային իբրև մուրացիկ իմն առնելով յայլոց ազգաց զպիտանի խորհրդոցն արարողութիւնս։

Այս Մովսէս զԿիւրիոնն՝ սրբոյ Կաթուղիկէի վանաց երէց, ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց Նահանգին և Գուգարաց և Եգերաց՝ ըստ օրինակի կարգացն առաջնոց։ Իսկ ապա մերձ 'ի վախճանն Մովսեսի՝ Կիւրիոն զճշմարիտ կարգաց և զկրօնից ուղղութիւնն 'ի բաց խղեալ, զոր 'ի Հարցն մերոց ուղղափառաց աշակերտեալ էին կողմանքն այնոքիկ՝ միտէր զհետ... ժողովոյն Քաղկեդոնի, զկնի փառամոլ ամբարհաւաճութեանն իւրոյ ձգեալ դաւաճանեալ զնախահարս աշխարհին։ Ապա վաղվաղակի իսկ 'ի դերև ելանէր խոկացեալ նորայն դաւաճանութիւնն։ Իսկ Մովսէս բազում մաքառումն ընդդէմ նորա եղեալ՝ աստուածամերձ խրատու բանից բարեզգեաց զնա կշտամբէր՝ զառնալ 'ի շարափառ հրէական մոլորութենէ հայհոյութեանցն 'ի ճշմարիտ գիտութիւնն ըստ Հարցն սրբոց դաւանութեան։ Այլ նա ոչ ախորժեալ առնուլ զդեղ 'ի դեղատուէ իմաստնոյ՝ իսկոյն ապա հասանէ կատարումն կենաց մեծի հայրապետին Մովսեսի՝ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս երեսուն*։

Բայց մինչդեռ կենդանի էր սուրբ հայրապետն Մովսէս՝ Խոսրով որդի Կաւատայ արքայի Պարսից յետ բազում մարտից արութեանց և քաջութեանց և տիրելոյ ազգաց բազմաց ըստ ծագման նշողից աստուածային լուսոյն 'ի սիրտ նորա՝ 'ի ժամ վախճանի իւրոյ հաւատացեալ յԱստուած ճշմարիտ և յՈրդի նորա միածին և 'ի Հոգին Սուրբ Աստուծոյ, և անարգեալ 'ի բաց զկռամոլ ամբարշտութիւնն՝ խոստովան եղև, թէ ոչ գոյ այլ աստուած բայց 'ի միոյն միայն, զոր քրիստոնեայքն պաշտեն։ Եւ ապա աւազանին սրբոյ վերստին ծննդեան լուսաւորութեամբ հաղորդի 'ի կենդանարար մարմնոյ և արեան Տեառն, և ողջունեալ զսուրբ Աւետարանն Քրիստոսի համբուրմամբ՝ յետ երից աւուրց

* Զբաժանմանէ եկեղեցւոյն Վրաց 'ի Հայոցն մանրամասն պատմէ Ուխտանէս, որոյ գրչագիր օրինակ Պատմութեանն գտանի 'ի սեպհական մերում գրադարանի, զոր և ոչ դանդաղեսցուք 'ի լոյս ընծայել սատարութեամբ մերոց հայրենասիրաց։

նստելով ժէ [17] տարի՝ նա վախճանվում է։ Նրանից հետո սուրբ Գրիգորի աթոռին նստեցնում են Աստծու մարդուն՝ Մովսեսին, որը Եղվարդ գյուղից էր (նա մեծացել ու կրթվել էր սուրբ հայրապետանոցում)։ Նրա հայրապետության տասներորդ և Պարսից արքա Կավատի որդու՝ Խոսրովի երեսունմեկերորդ տարում, լրացավ ու ամբողջացավ հինգ հարյուր երեսուներկու տարվա շրջանը։ Այնուհետև մեծ Մովսեսի հրամանով գիտնականներն ու արվեստագետները սահմանեցին Թորգոմյան[34] թվականության կարգը, որը առաջնթաց շարժում էր և արվեստի զանազան մասերի հիմքը։ Եվ ըստ հայոց լեզվի տալով տարեկան տոնացույցը՝ դրանից հետո այլևս կարիք չէին զգում մուրացկանի նման օտար ազգերից վերցնելու պիտանի խորհուրդների արարողությունները։

Այս Մովսեսը սուրբ կաթողիկեի վաներեց Կյուրիոնին իր նախորդների օրինակով ձեռնադրում է վրաց Նահանգի, գուգարացիների և եգերացիների[35] արքեպիսկոպոսության համար։ Իսկ հետո Մովսեսի վախճանին մոտիկ Կյուրիոնը, մերժելով ճշմարիտ կարգերը ու կրոնի ուղղությունը, որ այդ կողմերի [մարդիկ] սովորել էին մեր ուղղափառ հայերից, ետ է թեքում... Քաղկեդոնի ժողովին իր փառամոլ գոռոզությանը հետևելով ու դավաճանելով երկրի նախահայրերին։ Հետո անմիջապես ի դերև է ելնում նրա մտածած դավաճանությունը։ Իսկ Մովսեսը նրա դեմ բազում մարտեր մղելով՝ աստվածամերձ խրատներով և բարի խոսքերով նրան կշտամբում էր հրեական հայհոյական հերետիկոս մոլորությունից դառնալու դեպի ճշմարիտ ուսմունքը՝ ըստ սուրբ հայրերի դավանության։ Բայց նա չի ցանկանում դեղ վերցնել իմաստուն բժշկից, և ապա իսկույն հասնում է մեծն Մովսես հայրապետի վախճանը, որը հայրապետական աթոռին նստել էր երեսուն տարի*։

Եվ մինչդեռ ողջ էր սուրբ հայրապետ Մովսեսը, Պարսից Կավատ արքայի որդի Խոսրովը բազում խիզախ մարտերից, քաջագործություններից, բազում ազգերի տիրելուց հետո վախճանվելուն մոտ նրա սրտում աստվածային լույսը ծագելու ժամանակ հավատում է ճշմարիտ Աստծուն, նրա միածին Որդուն և Աստծու Սուրբ Հոգուն ու արհամարհելով ամբարիշտ կռամոլությունը, խոստովանվում է, թե չկա այլ աստված, բացի մեկից, որին պաշտում են քրիստոնյաները։ Եվ ապա սուրբ ավազանում լուսավոր ծննդյամբ նա վերստին հաղորդակից է դառնում Տիրոջ կենդանարար մարմնին ու արյանը և համբույրով ողջունելով Քրիստոսի սուրբ ավետարանը՝ երեք օր անց վախճանվում է խոր ծե-

* Վրաց եկեղեցու՝ հայոց եկեղեցուց բաժանման մասին մանրամասն պատմում է Ուխտանեսը, որի պատմության գրչագիր օրինակը գտնվում է մեր սեփական գրադարանում, որը չենք ուշացնի հրատարակել մեր հայրենակիցների օգնությամբ։

վախճանի 'ի բարւոք ծերութեան։ Եւ բարձեալ զմարմին նորա Քրիստոնէից՝ նուիրական սաղմոսերգութեամբ և քահանայական դասուք տարեալ դնեն 'ի շիրիմս թագաւորացն։

Եւ թագաւորէ որդի նորուն Որմիզդ ընդ նորա, զոր իւրոց իսկ մերձաւորացն և այլոց ևս նախարարաց նենգ գործեալ՝ յիւրումն իսկ դահլճի զնա սպանանեն. և փոխանակ նորա որդի նորուն Խոսրով թագաւորէ։ Այլ և սմա ևս 'ի Վահրամայ ումեմնէ իշխանէ, որ թագաւոր զինքն կարդայր՝ նենգ գործեալ, փախստեայ անկանի առ Մորիկ կայսր Հոռոմոց։ Իսկ կայսերն օժանդակեալ Խոսրովայ բազում զօրու հանդերձ՝ սպանանի Վահրամն յԻռայ առհասարակ 'ի նոցանէ։

Եւ Խոսրով՝ թոռն հաւատացեալ Խոսրովուն, հաստատի դարձեալ 'ի թագաւորութիւնն Պարսից. և ըստ երախտահատոյցն լինելոյ խնդրէ Մորիկ 'ի Խոսրովայ զՄիջագետս Դարայիւ և Մծբնայ հանդերձ, և 'ի Հայոց զայն աշխարհ, որ Տանատիրական Գունդն անուանէր՝ բայց յՈստանէն, 'ի Դվին քաղաքէ և յերկուցն ևս գաւառաց, որ է Մասեացոտն և կողմն Արագածու։ Զայսոսիկ 'ի բաց զատուցեալ՝ զայլն ամենայն Գողու Խոսրով 'ի Մորիկ, 'ի լէռնէն որ կոչի Ընծաքիսար մինչև ցԱռեսան աւան և ցՀացիւն։ Ապա կայսեր Մորկայ ձեռներիցութեամբ իմն փոփոխումն արարեալ անուանց աշխարհացն այնոցիկ, որ 'ի մերոյն Արամայ կարգաւ եղեալ էր. և նախ զԱրմենին զայն, որ Առաջին Հայքն անուանիւր՝ Երկրորդ Հայք զնա Մորիկ կոչեաց, յորում մայրաքաղաք է Սեւաստիայ։ Իսկ զԿապադովկիայ, յորում մայրաքաղաքն է Կեսարիայ՝ և Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ զնա Երրորդ Հայք և առնէ զնա Եպարքի։ Իսկ զՄելիտինէ, որ ունի զհամանուն իւր գաւառս՝ է և Երրորդ Հայք, կոչէ զնա Առաջին Հայք։ Իսկ զՊոնտոս, յորում մայրաքաղաք է Տրապիզոն՝ կոչէ զնա Մասն մեծ Հայոց. և Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացպօլիս, այսինքն՝ Նէրֆերկերտ, Յուստիանուպիս, զնա գրէ 'ի դիւան արքունի։ Դարձեալ զաշխարհն Կարնայ, յորում մայրաքաղաք է Թէոդոսուպօլիս՝ անուանէ զնա Մեծ մասն Մեծ Հայոց։ Եւ որ 'ի Մեծն Հայոց մասն ինչ մնացեալ էր 'ի ձեռս Հոռոմոց կողմանց անտի ի Բասենոյ մինչև 'ի սահմանս Ասորեստանի Մեծ Հայք զնա կոչէ. իսկ զկողմանս Տայոց սահմանօք իւրովք հանդերձ՝ Խորագոյն Հայք, և զկողմն Դվին քաղաքի՝ Ներքսագոյն Հայք։ Այսպէս ամենեցունց սոցա փոփոխումն արարեալ Մորկայ՝ գրէ 'ի դիւանս արքունի։

Արդ այսոքիկ սակս այսորիկ առ յինէն քեզ երկրորդեալ գրեցայ, զի մի՛ տգիտութիւն ինչ ինձ վարկցես զայն, զոր յառաջագոյն առ յինէն քեզ պատմեալ եղև Առաջինն և Երկրորդն և Երրորդ և Չորրորդ

րութեան մեջ։ Եվ վերցնելով նրա մարմինը՝ քրիստոնյաները սաղմոսերգությամբ և քահանայական ժամերգությամբ տանում թաղում են թագավորների գերեզմանոցում։

Նրա փոխարեն թագավորում է նրա որդի Որմիզդը, որը իր իսկ մերձավորների և այլ նախարարների դեմ նենգորեն գործելով՝ հենց իր դահլիճում սպանվում է նրանց կողմից։ Նրա փոխարեն թագավորում է նրա որդի Խոսրովը։ Եվ երբ նրա դեմ նենգություն է գործում ոմն իշխան Վահրամը, որն իրեն էր թագավոր կոչում, փախչում, ընկնում է հռոմեական Մորիկ կայսրի մոտ։ Իսկ կայսրը Խոսրովին օգնում է մեծաքանակ զորքով, և Իռայում նրանց կողմից սպանվում է Վահրամը։

Եվ Պարսկաստանում դարձյալ թագավոր է դառնում հավատացյալ Խոսրովի թոռը՝ Խոսրովը։ Իսկ Մորիկը երախտահատույց լինելու համար Խոսրովից պահանջում է Միջագետքը Դարայի ու Մծբինի հետ միասին և Հայաստանի այն մասը, որը անվանվում էր Տանուտիրական գունդ[36], բացի Ոստանից, Դվին քաղաքից և ևս երկու գավառից, որոնք գտնվում են Մասյացոտնի ու Արագածի կողմերում։ Դրանք առանձնացնելով՝ մնացած բոլորը Խոսրովը թողնում է Մորիկին, Ընծաքիսար կոչվող լեռից մինչև Առեսան ավանը և Հացիվը։ Այնուհետև Մորիկ կայսրը ինքնագլուխ փոփոխում է այն աշխարհների անունները, որոնք հերթականությամբ գրել էր մեր Արամը։ Նախ՝ Արմենին, որն Առաջին Հայք էր կոչվում, Մորիկը կոչեց Երկրորդ Հայք, որի մայրաքաղաքն է Սեւաստիան։ Կապադովկիան, որի մայրաքաղաքը Կեսարիան էր, և նախապես Երկրորդ Հայք էր անվանվում, կոչում է Երրորդ Հայք և այն դարձնում է եպարքոսություն [փոխարքայություն]։ Մելիտենեն, որն ունի իրեն համանուն գավառ, և որը Երրորդ Հայքն էր, կոչում է Առաջին Հայք։ Պոնտոսը, որի մայրաքաղաքը Տրապիզոնն է, կոչում է Մեծ Հայքի Մաս, իսկ Չորրորդ կոչված Հայքը, որի մայրաքաղաքն է Մարտիրոսացպոլիսը[37], այսինքն՝ Նֆրկերտը կամ Հուստիանուպիսը, գրանցում է արքունի դիվանում։ Կարնո աշխարհը, որի մայրաքաղաքը Թեոդոսուպոլիսն[38] է, անվանում է Մեծ Հայքի Մեծ մաս։ Եվ Մեծ Հայքից ինչ մաս որ մնացել էր հռոմեացիների ձեռքում, Բասենի կողմերից մինչև Ասորեստանի սահմանները, կոչում է Մեծ Հայք, Տայքի կողմերը իր սահմաններով հանդերձ՝ Խորագույն Հայք, իսկ Դվին քաղաքի կողմը՝ Ներքսագույն Հայք։ Բոլորը այդպես փոփոխելով՝ Մորիկը գրանք գրանցում է իր արքունի դիվանում։

Արդ՝ [ընթերցող], ինձ տգետ մի՛ կարծիր նրա համար, որ ես կրկին գրեցի այն, ինչ ինձնից ավելի առաջ քեզ պատմել էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքի մասին, որովհետև առաջին անգամ

Հայք. զի այն առաջինն 'ի մերոյն յԱրամայ քաջէ անուանեալ եղև. իսկ այս երկրորդ՝ 'ի Մորիկայ կայսերէ Հոռոմոց։ Եւ արդ այսոքիկ քեզ վասն այսոցիկ բաւականացեալ՝ ես դարձեալ 'ի կարգ Պատմութեանս դարձայց։

Խոսրովայ հաստատեալ 'ի թագաւորութիւնն Պարսից՝ աստանօր Սմբատ քաջ Բագրատունի բազում և անհնարին մարտս յարդարէր ընդդէմ բոլոր թշնամեաց նորա. և արիաբար մրցմամբ վանեալ վտանգեալ զբնաւ հակառակորդս նորա՝ յոտին նմա կացուցանէր։ Ընդ որ զարմացեալ Խոսրովայ՝ յաւէտ իմն հաճոյանայր Սմբատ յաչս նորա. և բազմօք ոմամբք ընծայական օժտութեամբք զնա պատուասիրեալ՝ տայ նմա և զմարզպանութիւն Վրկանայ։ Իսկ Սմբատայ երթեալ հասեալ յաշխարհն յայն՝ գտանէ անդ զգերեալ ազգս 'ի Հայաստանեայց և բնակեցուցեալս 'ի Թուրքաստան կողմանէ մեծի անապատին, որ Սագաստան անուանի, զլեզու իւրեանց մոռացեալ և զպրութիւնն նուազեալ յոյժ։ Որոց և տեսեալ զՍմբատ՝ յաւէտ իմն խրախ լինէին, և 'ի հրամանէ նորուն դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հագագաց սիղոբայիցն զլեզուն նորոգէին. և ուսեալ զգրութիւն հայերէն՝ հաստատէին 'ի հաւատս։ Եւ ապա զերէց ոմն 'ի նոցունց իսկ՝ Աբէլ անուն, եպիսկոպոս նոցա հրամայէ կացուցանել մեծի հայրապետին մերոյ Մովսեսի։ Եւ այսպէս վիճակ մեծի աթոռոյ Սրբոյն Գրիգորի 'ի հեռաստան երկրի զնոսա կազմէ մինչև ցայսօր ժամանակի*։

Բայց Սմբատայ, որ մարտիւ քաջութեամբ զամենայն թշնամիս Խոսրովու նուաճեալ հնազանդէր՝ յետ բազմաբաղձ բարութիւնս նմա պարգևելոյ Խոսրովու և մեծահարկի մեծարանս դնելոյ, հրամայէ երթալ տեսանել Սմբատայ զերկիր ծննդեան իւրոյ։ Իսկ նա յերթալն իւրում ըստ հրամանի Խոսրովայ՝ խնդրէ շինել զեկեղեցին 'ի Դվին քաղաքի, որ էր իսկ անուանակոչութեամբ սրբոյն Գրիգորի։ Իսկ արքայի աշալուրջ երեսօք զհայցուածս նորա լցեալ՝ և այնպէս հրաման առ 'ի նմանէ ընկալեալ՝ շուտ գնայ. և եկեալ հասեալ յիւրական յաշխարհս

* Զայս յիշեն նաև Սամուէլ Անեցի և Մխիթար Այրիվանեցի, յորոց առաջին այսպէս գրէ. «Զդէ. Աստանօր Սմբատ Բագրատունի բազում մարտս յարդարէր՝ և առաւել քաջութեամբ առ թշնամիսն Խոսրովու. վասն որոյ պատուեալ զՍմբատ՝ տայ նմա մարզպանութիւն Վրկանի. և նա երթեալ գտանէ ազգս գերեալս 'ի Հայոց անդ, որ Սակաստուն կոչի՝ մոռացեալ զլեզու և զդպրութիւն. զոր նորոգեալ Սմբատայ և զՀաբէլ ոմն եպիսկոպոս տայ ձեռնադրել կաթողիկոսին Հայոց»։ Իսկ երկրորդն զայս գրէ. «Սմբատ Բագրատունի գնայ 'ի Երկանք, որ է Սագաստան, և գտանէ Հայք մոռացեալ զլեզու և կարգէ եպիսկոպոս զՀաբէլ»։

մեր քաջ Արամն էր անվանել դրանք, իսկ այս երկրորդ անգամ՝ հռոմեական Մորիկ կայսրը։ Եվ արդ՝ սրանք այդքանի մասին քեզ բավարար համարելով՝ կվերադառնամ իմ պատմության շարադրանքին։

Խոսրովը երբ հաստատվում է Պարսից թագավորության մեջ, այդ ժամանակ քաջ Սմբատ Բագրատունին բազմաթիվ դժվարին մարտեր է մղում նրա բոլոր թշնամիների դեմ և արիաբար կռվելով՝ նեղում ու հաղթում է նրա բոլոր հակառակորդներին ու ոտքի կանգնեցնում նրան։ Դրանով հիանում է Խոսրովը, և Սմբատը է՛լ ավելի է հաճելի դառնում նրա աչքում։ Եվ նրան մեծարելով բազում ընծաներով՝ [Խոսրովը] նրանն է տալիս նաև Վրկանի մարզպանությունը։ Գնալով ու հասնելով այդ աշխարհը՝ Սմբատը այնտեղ գտնում է Հայաստանից գերված ժողովրդին, որ բնակվել էր Թուրքաստանի մեծ անապատում, որը Սագաստան էր կոչվում։ Հայերն [այնտեղ] մոռացել էին իրենց լեզուն, և հույժ նվազել էր դպրությունը։ Տեսնելով Սմբատին՝ նրանք է՛լ ավելի են ուրախանում, և նրա հրամանով դարձյալ սովորելով հայերենի հնչյունների արտասանությունը՝ նրանք նորոգում են իրենց լեզուն և սովորելով հայերենի գրագրությունը՝ հաստատվում են իրենց հավատքի մեջ։ Եվ ապա մեր մեծ հայրապետ Մովսեսը հրամայում է՝ նրանց Աբել անունով երեցին եպիսկոպոս կարգել նրանց համար։ Այսպիսով սուրբ Գրիգորի մեծ աթոռի վիճակի [թեմի] մեջ են մտնում նաև երկրի հեռաստաններում [գտնվողները] մինչև այժմ*։

Բայց երբ Սմբատը քաջաբար կռվելով՝ Խոսրովի բոլոր թշնամիներին նվաճում ու հնազանդեցնում է, Խոսրովը բազմաբաղձ բարություններ ու մեծահարկի պատիվ ցույց տալուց հետո հրամայում է նրան գնալ և տեսնել իր ծննդավայրը։ Իսկ նա [Սմբատը] իր գնալու ժամանակ խնդրում է Դվին քաղաքում եկեղեցի շինել՝ կոչելով սուրբ Գրիգորի անունով։ Արքան ուրախությամբ կատարում է նրա խնդրանքը։ Այդպես արքայից հրաման ստանալով՝ նա մեկնում դընում է։ Եվ գալով-հասնելով իր աշխարհը՝ տեսնում է, որ Հայոց աշ-

* Այս բանը հիշում են նաև Սամվել Անեցին և Մխիթար Այրիվանեցին, որոնցից առաջինն այսպես է գրում. «Ղդ [595]. Այստեղ Բագրատունին բազում մարտեր է մղում և առավել քաջությամբ՝ Խոսրովի թշնամիների դեմ։ Դրա համար մեծարելով Սմբատին՝ նա նրան է տալիս Վրկանի մարզպանությունը։ Եվ գնալով այնտեղ՝ նա գտնում է Հայաստանից գերված ժողովրդին այն վայրում, որը Սակաստուն է կոչվում. նրանք մոռացել էին իրենց լեզուն ու դպրությունը։ Սմբատը նորոգում է դրանք և Հայոց կաթողիկոսին հրամայում է ոմն Հաբելին ձեռնադրել եպիսկոպոս»։ Իսկ երկրորդն ասում է. «Սմբատ Բագրատունին գնում է Վրկանք, այն է՝ Սագաստան, գտնում է իրենց լեզուն մոռացած հայերին և Հաբելին կարգում է եպիսկոպոս»։

յայս և տեսեալ առանց առաջնորդի զաշխարհս Հայոց՝ վասն զի վախճանեալ էր մեծ հայրապետն Մովսէս, ապա կարգէ 'ի վերակացութիւն Հայոց զԱբրահամ Ռշտունեաց եպիսկոպոս 'ի գեղջէ Աղբաթանից. և ինքն արկանէ հիմն եկեղեցւոյն սրբոյ կոփածոյ քարամբք գեղեցկադիր շինուածիւ՝ կրով ձուլեալ 'ի մի, զի յառաջ յաղիւսոյ և 'ի փայտէ կազմեալ էր նա 'ի սրբոյն Վարդանայ։ Իսկ պահնակ ամրոցին ամբաստան առ արքայ լինի իբր վնասակար զնա գոլ բերդին. և վաղվաղակի հրաման ընդունի, եթէ բերդդ քակեսցի և եկեղեցիդ 'ի դմին տեղ շինեսցի։ Բայց մեծ հայրապետն Աբրահամ քրիստոսաւանդ կարգօք և առաքինահրաշ երկօք գուն 'ի վերայ գործէ, զի թերևս հնար լիցի դարձուցանել զԿիւրիոն և հնազանդեալսն նմա 'ի մոլորութեան ճանապարհէն, այլ նոքա ոչ թերևս զճշմարտութիւնն պատուէին՝ քան թէ միայն զզօշաքաղութեան և զփառամոլ բարուց բոյսս 'ի վեր ընձիւղեալ աճեցուցանէին։ Եւ այսպէս ապա զմարդադաւան տոմարն Լևոնի փոխանակէին ընդ առաքելական աւանդից երիցս երանեալ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, որ եբաց նոցա զդուռն լուսոյ ճշմարիտ աստուածգիտութեան. և այնուհետև բազում եպիսկոպոսաց ժողով արարեալ մեծի հայրապետին Աբրահամու 'ի Դվին քաղաքի հրամանաւ քաջին Սմբատայ և այլոց ևս նախարարացն՝ աստուածամերձ և ամբիծ այցելութեամբ ուղեղեալ Աստուածային Գրոց, և ստուգագէտ իմացուածիւ ծանուցեալ զուղիղ դաւանութիւն սուրբ Հարցն՝ նզովեցին զԿիւրիոն զպառակտիչն եկեղեցւոյ Քրիստոսի, և զամենայն հնազանդեալս և զհամախորհս չար հերետիկութեան. և անէծս ցաւագին ուղղափառ դաւանողաց մերոց նահանգիս 'ի վերայ եդին՝ ոչ բնաւին իսկ ընդ նոսա միաբանիլ, որք զկնի Կիւրիոնի չարափառի շեղեցան, և ոչ հաղորդակից նոցա լինել, և ոչ 'ի տուրևառիկ վաճառս ընդ նոսա բերել, և ոչ խնամութեամբ իւիք ազգակցել. զի մի՛ 'ի ձեռն այսպիսեաց ինչ մերձաւորութեանց ընդ միմեանս հարեալք՝ և վասն այդորիկ վրդովեալ շփոթեսցի ամբիծ և ուղիղ հաւատ խոստովանութեան մերոյ դաւանութեան և խրամատեսցի ցանկ առաքելական։

Յետ այսորիկ ըստ հրամանի կայսերն Մօրկայ զՅոհան ոմն 'ի գաւառէ Կոգայ 'ի Բագարան զեղջէ կացուցանեն կաթողիկոս Յունական կողմանն՝ բնակեցուցանելով զնա 'ի քաղաքդիւղն Աւան, ուր և շինեացն իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ քաւարանն սուրբ և շուրջանակի նորա յարդարեաց կալուածս կայանի իւրոյ։ Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նախասաց բանին 'ի Դվին քաղաքի բնակէր 'ի

խարհը առանց առաջնորդի է [մնացել], որովհետև վախճանվել էր Մովսես մեծ հայրապետը։ Նա Հայաստանի վերակացու է կարգում Ռշտունյաց եպիսկոպոս Աբրահամին, որն Աղբաթանք գյուղից էր։ Նա գցում է սուրբ եկեղեցու հիմքը ու այն շինում տաշած քարերով, գեղեցկադիր կառուցվածքով և ամրացնում կրով, որովհետև առաջ այն աղյուսով ու փայտով էր կառուցված սուրբ Վարդանի կողմից։ Իսկ ամրոցի պահապանը բողոքում է արքային, թե դա բերդին կարող է վնասակար լինել։ Իսկույն հրաման է ընդունվում, թե պետք է բերդը քանդել և եկեղեցին նրա տեղում շինել։ Բայց Աբրահամ մեծ հայրապետը քրիստոսաավանդ կարգ ու կանոնով և առաքինահրաշ աշխատանքով ջանք է թափում, որպեսզի թերևս հնարավոր լինի Կյուրիոնին ու նրան հնազանդվողներին ետ դարձնել մոլոր ճանապարհից։ Բայց նրանք թերևս այնքան ճշմարտությունը չէին հարգում, որքան ընչաքաղցությունը, և փառամոլ բարքի բույսերը վեր ընձյուղելով՝ աճեցնում էին։ Եվ այդպիսով Լևոնի մարդադավան տոմարը[39] փոխանակում էին երիցս երանելի սուրբ Գրիգոր Լուսավորչի առաքելական ավանդի հետ, որ [Գրիգոր Լուսավորիչը] նրանց համար բացել էր ճշմարիտ աստվածագիտության լույսի դուռը։ Այնուհետև Աբրահամ մեծ հայրապետը քաջ Սմբատի և այլ նախարարների հրամանով Դվին քաղաքում բազմաթիվ եպիսկոպոսների ժողով արեց աստվածային անբիծ նախախնամությամբ ուշադրությամբ քննելով Աստվածաշունչը, և նրանք, ճշմարիտ իմացությամբ ծանոթանալով սուրբ հայրերի դավանությանը՝ նզովեցին Կյուրիոնին՝ Քրիստոսի եկեղեցու պառակտիչին, և անօրեն հերետիկոսության բոլոր հնազանդյալներին ու համախոհներին։ Եվ նրանց ենթարկեցին մեր աշխարհի ուղղափառ դավանանքին հետևողների ցավագին անեծքին, [այն է]՝ բնավ չմիաբանվել նրանց հետ, ովքեր Կյուրիոնի հետևից շեղվեցին դեպի հերետիկոսությունը, նրանց հետ չհաղորդակցվել, առևտուր չանել և խնամիության միջոցով ազգակցություն չհաստատել, որպեսզի միմյանց հետ այդպիսի բարեկամության պատճառով չխաթարվի մեր ճշմարիտ դավանանքի անբիծ ու ուղիղ հավատը, և չխախտվեն առաքելական մատյանների գլուխների ցանկերը։

Դրանից հետո Մորիկ կայսրի հրամանով մի ոմն Հոհանի, որը Կոգ գավառի Բագարան գյուղից էր, նշանակում են հունական կողմի կաթողիկոս՝ նրան բնակեցնելով Ավան գյուղաքաղաքում, ուր և հենց նա՝ Հոհանը, շինեց պայծառակերտ սուրբ քավարանը ու նրա շուրջն էլ զարդարեց իր բնակավայրի կալվածքներով։ Իսկ Աբրահամ մեծ հայրապետը, ինչպես նախապես ասվեց, բնակվում էր պարսկական բաժ-

Պարսից Բաժնի անդ. վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկուցունց ընդ մէջ հատանէր։ Եւ թէպէտև Յոհան այր ճշմարիտ և արդար էր և առաքինի 'ի վարս... սակայն հակառակաթոռ գոլով՝ յերկուս հատուածս ճեղքեալ լինէր միատարր միութիւն հայրապետական աթոռոյն. և ապա ոչ սակաւ հակառակութիւն կրեալ լինէին կողմանքն երկոքին։ Բայց Սմբատ զկնի արիական քաջութեանց և բազմահանդէս երկոց՝ և կրկին անգամ մենամարտիկն լինելոյ ընդ Եփթաղեայ՝ արքայի Քուշանաց և սպանանելոյ զնա՝ վախճանի 'ի բարւոք ծերութեան 'ի Տիզբոն քաղաքի։ Եւ բարձեալ տարան զմարմին նորա 'ի Հայք՝ և դնեն 'ի Դարոյնս, որ 'ի Կոգ գաւառի։

Իսկ զորքն Մորկայ ապստամբեալ առ 'ի նմանէ և սպանեալ զնա 'ի պալատանն՝ կացուցանեն փոխանակ նորա զՓոկաս։ Իսկ Փոկաս եկեալ զօրօք բազմօք 'ի Բասեան առ ընդ իւրեաւ զՀայաստանեայսս նուաճել։ Իսկ Աշոտ ոմն հրամանաւ Խոսրովայ հասեալ 'ի՛ Հայս և դիմեալ 'ի վերայ՝ խորտակէր զզօրսն Յունաց, զի ոչ լինէր թիւ սպանելոցն 'ի դաշտին. և ինքն կալեալ զգործ պատերազմի ընդ Կարնայ քաղաքի՝ առնոյր զնա։ Եւ յետ երկեամ մի ամաց զբնակիչս քաղաքին յԱհմատան փոխէ։ Եւ վասն զի ծերունի կաթողիկոսն Յոհան կայր 'ի փախստականութեան 'ի նմա՝ ընդ նոսին և նա ևս ըմբռնեալ՝ վարեալ 'ի գերութիւն և անդէն վախճանեալ՝ բերաւ 'ի գիւղն Աւան, որ եդաւ մերձ յեկեղեցին, զոր իւր իսկ էր շինեալ. կալեալ զաթոռ հայրապետութեան ամս իզ։ 'Ի նմին իսկ ամի ապա երանելի հայրապետն Աբրահամ լցեալ զթուականն կենաց իւրոց իբրև ամս իդ՝ փոխի և նա յաշխարհէ. և յաջորդէ զաթոռ նորա Կումիտաս 'ի գեղջէ Աղցից, և փակակալ սրբոյն Հռիփսիմեան վկայարանին՝ եպիսկոպոս զկնի Մամիկոնեան Տարօնոյ։

Բայց Հերակլի սպանեալ զՓոկաս՝ զորդի իւր ընդ նորա թագաւորեցուցանէ և ինքն զօրու բազմաւ շուէ գնայ յԱսորեստան։ Իսկ Խոռեմ հրամանաւ Խոսրովայ առեալ զԵրուսաղէմ՝ անհնարին կոտորածիւ սպառէ 'ի նմա զամենայն այր և զբաղումս գերէ, ընդ որս և զՀայրապետն նոցա զԶաքարիայ. և զքրիստոսընկալ զսուրբ խաչն տէրունական 'ի գերութիւն վարէին։

Զայսու ժամանակաւ մեծ հայրապետն Կումիտաս զվկայարանն սուրբ Հռիփսիմեանց, որ նախ խրթին և փոքրատեսակ իմն էր շինեալ՝ ևս հրաշապէս և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով յարդարէր. ուր և պատահեալ սուրբ տիկնոջն Հռիփսիմեայ՝ ոչ սակաւ լինէր հոգեւոր մխիթարութիւն բնաւ իսկ Հայաստանեայցս։ Եւ էր նա կնքեալ մանում, Դվին քաղաքում, քանի որ Ազատ գետը երկու բաժինները սահմանազատում էր միմյանցից։ Թեև Հոհանը ճշմարիտ, արդար և վարքով առաքինի մարդ էր..., սակայն հակաթոռ լինելով՝ հայրապետական աթոռի միատարր միությունը ճեղքվել էր երկու հատվածի, և այդ պատճառով երկու կողմերը քիչ հակառակություն չունեին իրար դեմ։ Բայց Սմբատը, քաջագործություններից ու երևելի գործերից հետո, կրկին մենամարտելով քուշանների արքա Եփթաղեի հետ ու սպանելով նրան, վախճանվում է խոր ծերության մեջ, Տիզբոն քաղաքում։ Վերցնելով նրա մարմինը՝ տանում են Հայաստան և թաղում Դարոյնքում, որը գտնվում է Կոգ գավառում[40]։

Իսկ Մորիկի զորքը, ապստամբելով նրա դեմ ու պալատում նրան սպանելով, նրա փոխարեն նշանակում է Փոկասին։ Մեծ զորքով գալով Բասեն՝ Փոկասն իրեն է ենթարկում հայաստանցիներին։ Խոսրովի հրամանով ոմն Աշոտը, հասնելով Հայաստան ու հարձակվելով հունական զորքի վրա, նրանց այնպես է կոտորում, որ դաշտում ընկածներին թիվ չկար։ Եվ ինքը պատերազմ սկսելով Կարին քաղաքի դեմ՝ գրավում է այն։ Մի երկու տարի անց քաղաքի բնակիչներին տեղափոխում է Ահմատան։ Եվ քանի որ ծերունի Հոհան կաթողիկոսը փախուստի մեջ էր և գտնվում էր այնտեղ, նրանց հետ նրան ևս բռնելով՝ քշում է գերության, որտեղ և նա վախճանվեց ու բերվեց Ավան գյուղը և թաղվեց այն եկեղեցուն մոտիկ, որը ինքն էր շինել։ Նա հայրապետական աթոռին նստել էր իզ [26] տարի։ Նույն տարում վախճանվում է նաև Աբրահամ երանելի հայրապետը իր կյանքի իդ [24-րդ] տարում։ Նրան հաջորդում է Կոմիտասը[41], որը Աղցից գյուղից էր, հետո սուրբ Հռիփսիմյան վկայարանի փակակալը [լինում է] Տարոնի Մամիկոնյան եպիսկոպոսը։

Բայց Հերակլը սպանում է Փոկասին և նրա փոխարեն թագավոր է կարգում իր որդուն, իսկ ինքը մեծ զորքով շարժվում-գնում է Ասորեստան։ Խոսրովի հրամանով Խոռեմը գրավելով Երուսաղեմը՝ անհամար կոտորածով կոտորում է այնտեղի տղամարդկանց, շատերին էլ, նրանց հետ նաև Զաքարիա հայրապետին, գերում է։ Նրանք գերի են տանում նաև տերունական քրիստոսաընկալ սուրբ խաչը։

Այդ ժամանակներում Կոմիտաս մեծ հայրապետը սքանչելի, վայելուչ, պանծալի ու լուսավոր շինություններով բարեկարգում էր սուրբ Հռիփսիմյանների վկայարանը, որը սկզբում կառուցված էր փոքր ու անկանոն տեսքով։ Այնտեղ էլ հանդիպելով սուրբ տիկին Հռիփսիմեի [մասունքին]՝ այն պակաս հոգևոր մխիթարություն չէր լինում ամբողջ հայաստանցիների համար։ Մասունքը կնքված էր սուրբ Գրիգորի և

տանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ. ապա և մեծի հայրապետին ևս Կումիտասայ՝ ոչ համարձակեալ բանալ զնա, եդ և զիւր ևս կնիք 'ի վերայ նորա. իսկ չափ հասակի սուրբ տիկնոջն՝ ինն թիզ և առ չորս մատունս։ Ապա շինեալ զեկեղեցին սուրբ՝ և անդ ամփոփեալ ժողովէ զնշխարս սուրբ տիկնոջն 'ի պատրաստեալ իւր կայանսն։ Յետ որոյ ապա քակեալ սորա զփայտայարկ գմբէթ սրբոյ կաթուղիկէին, որ 'ի Վաղարշապատ քաղաքի՝ շինէ զնա գեղեցկայարմար և չքնաղատես կոփածոյ քարամբք։

Բայց Կուտաս՝ որդի առաջնոյ Խոսրովայ, սպանեալ զերկրորդն Խոսրով Պարսից արքայ՝ ինքն փոխանակ նորա թագաւորէ։ Եւ ապա տուեալ Կաւատայ զմարզպանութիւնն Հայոց Վարազտիրոցի՝ որդւոյ քաջին Սմբատայ, առաքէ զնա յիւրական յաշխարհն։ Իսկ եկեալ նորա՝ եգիտ հրաժարեալ 'ի կենաց աստի զմեծ հայրապետն Կումիտաս. որ եկաց իսկ յաթոռ հայրապետութեան անդ ամս ութ։ Ապա զՔրիստափոր ոմն յԱբրահամեան տանէ խորհրդակցութեամբ Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ կացուցանէ յաթոռ հայրապետութեան։ Զսմանէ բան ճառի, թէ քսութիւն իմն յիւրում լեզուի կրէր. և սակս այնորիկ՝ ասէ, ասպետն Վարազտիրոց զշարեալ գտանէր ընդ եղբարս իւր։ Իսկ 'ի վերայ այսպիսի համբաւոյ ապա և յընտանեաց տանն քիղք շարաբանք 'ի վերայ յարուցեալ նորա՝ բամբասանս ապիրատս յօդէին. և ապա այնուհետև ոչ ըստ իրաւանց ուղղոց ինչ, այլ կամակար մտօք ըստ կամս անձանց հաստատէին վճիռ՝ անկանիլ նմա 'ի պատուոյն։ Իսկ նորա իւրովի կամաւ խոյս 'ի շարէն տուեալ՝ երթեալ շինէ միայնարան մեծ մերձ 'ի գիւղն Ուղեաց, որ 'ի Մասեացոտան. և բազում միանձունս առ ինքն գումարեալ՝ առաքինաբան երկօք և բազմաշխատ քրտամբք փայլէր պահոց պնդակամութեամբ և աղօթից պաշտպանութեամբ և ամենազիշեր տքնութեամբ, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս դ։

Ապա փոխանակ նորա կացուցանեն զԵզր 'ի Նիգ գաւառէ 'ի Փառաժնակերտ գեղջէ, որ էր փակակալ սրբոյ Գրիգորի։ Յաւուրս սորա վախճանի Կաւատ Պարսից արքայ՝ թողլով զթագաւորութիւնն Արտաշիրի տղայագիտակ որդւոյ իւրոյ։ Իսկ ապա Հերակլ սակս ըղձակերտութեան քրիստոսընկալ նշանի խաչին թագաւորեցուցանէ Պարսից զխոռեմ, և զխաչն սուրբ փոխարէն իւր առ 'ի նմանէ հայցեալ, որոյ երթեալ և սպանեալ 'ի Տիզբոն զտղայ թագաւորն Արտաշիր՝ վաղվաղակի առաքէ զտէրունական խաչն առ կայսրն Հերակլ։ Եւ իսկ և իսկ ապա զօրքն Խոռեմայ սպանանեն զխոռեմ 'ի ճեմարանի իւրոյ ասպարիսին՝ կացուցեալ թագաւոր զԲոր՝ դուստր Խոսրովու, որ էր կին Խոռեմայ, որ յետ մահու նորա զԽոսրով ոմն յազգէ Սասանայ. իսկ յետ

սուրբ Սահակի մատանիներով։ Կոմիտաս մեծ հայրապետը, չհամարձակվելով բացել այն, նրա վրա դրեց նաև իր կնիքը։ Սուրբ տիկնոջ հասակը ինը թիզ չորս մատ էր։ Այնուհետև շինելով սուրբ եկեղեցին և հավաքելով այնտեղ, իր պատրաստած տեղում է ամփոփում սուրբ տիկնոջ նշխարները։ Դրանից հետո քանդելով Վաղարշապատ քաղաքի սուրբ կաթողիկեի փայտակերտ գմբեթը՝ այն շինում է գեղեցկահարմար և չքնաղատես տաշած քարերով։

Բայց Խոսրով առաջինի որդի Կուտասը, սպանելով Պարսից արքա Խոսրով երկրորդին, նրա փոխարեն ինքն է թագավորում։ Եվ ապա Հայոց մարզպանությունը տալով Վարազտիրոցին՝ քաջն Սմբատի որդուն, նրան ուղարկում է իր աշխարհը։ Գալով [Հայաստան]՝ նա Կոմիտաս մեծ հայրապետին գտնում է վախճանված, որը հայրապետական աթոռին նստել էր ութ տարի։ Ապա Աբրահամյան տնից ոմն Քրիստափորի Ռշտունյաց տեր Թեոդորոսի խորհրդով [Վարազտիրոցը] նըստեցնում է հայրապետական աթոռին։ Սրա մասին ասվում էր, թե նա խառնակիչ լեզու ուներ, և այդ պատճառով ասպետ Վարազտիրոցը չարացել էր իր եղբայրների դեմ։ Եվ հայրենի տանը այսպիսի զրպարտությունների վրա ավելացնելով [նոր] շարախոսություններ՝ հորինում էին անիրավացի բամբասանքներ։ Այնուհետև ոչ թե իրավացիորեն, այլ ինքնագլուխ իրենց կամքով վճիռ էին կայացնում՝ նրան [Վարազտիրոցին] պատվից զրկելու համար։ Իսկ նա [Քրիստափորը], իր կամքով շարից խուսափելով, գնում և շինում է մի մեծ միայնարան Ուղեաց գյուղի մոտ, որը գտնվում է Մասյացոտնում։ Եվ իր մոտ հավաքելով բազում մենակյացների՝ նա փայլում էր առաքինի աշխատասիրությամբ, բազմաշխատ քրտինքով, հաստատուն պահեցողությամբ, աղոթքների պաշտպանությամբ, ամեն գիշերվա ժամերգությամբ՝ հայրապետական աթոռին մնալով չորս տարի։

Ապա նրա փոխարեն նշանակում են Եզրին, որը Նիգ գավառի Փառաժնակերտ գյուղից էր և Սուրբ Գրիգոր [եկեղեցու] փակակալը։ Սրա օրոք վախճանվում է Պարսից արքա Կավատը՝ թագավորությունը թողնելով իր փոքրահասակ որդուն՝ Արտաշիրին։ Իսկ հետո Հերակլը խաչի քրիստոսաբնակալ նշանն ունենալու ցանկությամբ Պարսկաստանում թագավոր է կարգում Խոռեմին՝ փոխարենը նրանից խնդրելով սուրբ խաչը։ [Խոռեմը] գնում է Տիզբոն, սպանում մանուկ թագավոր Արտաշիրին և տերունական խաչը անմիջապես առաքում է Հերակլ կայսրին։ Եվ Խոռեմի զորքը տեղնուտեղը սպանում է Խոռեմին իր ձիարշավարանում՝ թագավոր դնելով Խոսրովի դուստր Բորին, որը Խոռեմի կինն էր։ Իսկ նրանից հետո [թագավոր են կարգում] Սասանյան ցեղից ոմն

նորա զԱզրմիկ դուստր Խոսրովայ և յետ նորա զՈրմիզդ՝ թոռն Խոսրովայ, զոր խեղդամահ արարին. և զկնի նորա թագաւորէ Յազկերտ՝ թոռն Խոսրովայ։

Իսկ Հերակլայ զքրիստոսընկալ խաչն տարեալ զնէ յԵրուսաղեմ 'ի տեղւոջ իւրում։ Բայց Մաժեժ Գնունի զօրավարի 'ի Հերակլեայ և առաքի 'ի Հայս. ապա պատուէր տայ հայրապետին Եզրի երթալ լինել կցորդակից և հաղորդ կայսեր 'ի գործ մասին խոստովանութեան հաւատոյ. «և եթէ ոչ՝ ասէ, կամիցիս երթալ միակցիլ, արասցուք մեզ այլ կաթողիկոս»։ Եւ Եզրի՝ վասն զի ոչ կարացեալ զատանիլ յիւրոց հալատացեալ հօտիցն, յանձն առնու երթալ առ Կայսր։ Եւ իբրև չոգաւ՝ ոչ տանէր ընդ իւր զՅոհան փակակալ սրբոյն Գրիգորի, որ էր յայնմ ժամանակի փիլիսոփայ կատարեալ և Աստուածային Գրոց գիտութեան բանիբուն ճանաչէր. այլ զայլ ոմն զիւր քեռորդի՝ կիսակատար ուսմամբ, առեալ գնայր նովաւ վճարել զգործ իրին։ Եւ 'ի հանդիպել Կայսերն՝ խնդրեն առ 'ի նմանէ ձեռնարկ հաւատ նամակի. որ և վաղվաղակի իսկ գրեալ ետ նոցա՝ նզովեալ զամենայն հերձուածոցս բայց 'ի ժողովոյն Քաղկեդոնի։ Իսկ Եզրի և իւրայոցն տգիտաբար իմն իբր անծանօթ Գրոց Աստուածայնոց՝ ոչ կարացեալ 'ի միտ առնուլ զխորամանկ հնարիմացութիւն հերձուածոյն, որ ընդ կայսերական ձեռագրին իբր ընդ գրուանաւ էր թագուցեալ, դաւաճանեալ խաբեցան ընդ նոսա ըստ օրինի տօմարին Լեոնի։ Եւ ապա մեծարեալ յարքայէ և ընկալեալ պարգևս զերիր մասն գիւղաքաղաքին Կողբայ և զաղս նորուն բովանդակաբար՝ դառնայ մեծաւ շքով 'ի տեղի իւր։ Իսկ 'ի շուել գալ նորա՝ ըստ օրինի սովորական կարգացն կղերք եկեղեցւոյն իւրոյ փութացեալ ընդառաջ լինէին։ Բայց փիլիսոփոսն Յոհան, զոր վերագոյն ասացաք՝ ոչ ևս ընդ այլսն երթալով լնուլ զսակ հարկին, որ 'ի վերայ կայր։ Եւ մտեալ 'ի տաճարն՝ խնդիր Յոհաննու լինէր 'ի հայրապետէն Եզրէ։ Եւ պատմեցաւ ապա յոմանց Յոհաննու՝ հանդերձ մեղադրութեամբ, «Եթէ ընդէ՞ր ոչ չոգար ընդ առաջ նորա յերկրպագութիւն.» առ որս պատասխանի տուեալ ասէ, «Զիա՞րդ պարտ վարկանիմ յողջոյն կամ յերկրպագութիւն նմա երթալ, որ քակեացն իսկ զսահման կանոնի Հարցն մերոց ուղղափառաց»... Ապա հրամանն Եզրի սաստկանայր 'ի վերայ. և ակամայ կամօք մուծանէին զՅոհան 'ի սենեակն։ Եւ իբրև յանդիման եղև՝ ասէ կաթողիկոսն, «Խրոխտաբար իմն ամբարհաւաճութեամբ ընդվզեալ թուիս, վասն այնորիկ ախտակրեալ սրտիւ ոչ ելեր ընդառաջ մեր և ոչ տեսեր զմեզ»։ Եւ նա ասէ. «Խրոխտումն և ամբարհաւաճութիւն յիս ոչ գտանի, այլ ջատագով ճշմարտութեանն լինել հաւանիմ։ Բայց քո յիրաւի կոչեցաւ անունդ Եզր, վասն

Խոսրովի, նրանից հետո՝ Խոսրովի դուստր Ազրմիկին, նրանից հետո՝ Խոսրովի թոռ Որմիզդին, որին խեղդամահ արեցին, իսկ նրանից հետո թագավորում է Հազկերտը՝ Խոսրովի թոռը։

Իսկ Հերակլը քրիստոսաընկալ խաչը տանում է Երուսաղեմ և գնում իր տեղում։ Բայց Մաժեժ Գնունին զորավար է նշանակվում Հերակլի կողմից ու առաքվում Հայաստան, հետո նա Եզր հայրապետին պատվիրում է՝ գնալ ու կայսրի հետ կցորդակից ու մասնակից լինել հավատի խոստովանության գործին. «և եթէ, ասում է, չկամենաս գնալ ու միաբանվել, մեզ ուրիշ կաթողիկոս կընտրենք»։ Եվ Եզրը, քանի որ չի կարողանում բաժանվել իր հավատացյալ հոտից, համաձայնվում է գնալ կայսրի մոտ։ Եվ երբ նա գնում է, իր հետ չի տանում սուրբ Գրիգորի փակակալ Հոհանին, որն այն ժամանակ կատարյալ փիլիսոփա էր և Աստվածաշնչի գիտությանը քաջատեղյակ, այլ իր հետ վերցնում է կիսակատար ուսման տեր իր քեռորդուն և գնում է՝ նրա միջոցով գլուխ բերելու գործը։ Եվ կայսրին հանդիպելիս նրանից խնդրում են հավատագրի ձեռագիրը, որը իսկույն գրեց ու տվեց նրանց, նզովելով բոլոր հերձվածողներին, բացի Քաղկեդոնի ժողովից։ Իսկ Եզրը և նրա յուրայինները տգիտության ու Աստվածաշնչին անծանոթ լինելու պատճառով չկարողացան ըմբռնել հերձվածի խորամանկ հնարամտությունը, որը կայսերական ձեռագրի տակ էր թաքնված՝ նրանց հետ խաբեցին

զի յ ե զ ը տարեալ հաներ տրոհեցեր զՀայաստանեայսս՝ քակեալ զսահման հաւատոյ Հարցն մերոց ուղղափառաց և խրամատեալ զցանկն առաքելական և 'ի մարգդաւան տօմարն Լեւոնի կործանեալ։» Ապա հրամայէ Եզր մուրացցի տանջել զպարանոց նորա և զկզակս. իսկ Յոհան ձեռս 'ի վեր ամբարձեալ ասէ, թէ «Ահաւասիկ գնացի խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուանն Տեառն արժանի եղէ անարգելոյ»։ Եւ զայս ասացեալ՝ ելեալ գնաց։ Եւ երթեալ առկայանայր 'ի Մայրոյ վանս, որ 'ի ծործորս լերինն ամրոցին Բշնւոյ. և սակս 'ի նմա բնակելոյն Յոհաննու՝ փոխեալ Եզրի զանուն տեղւոյն Մայրոյ վանաց, Մայրեգոմ զնա անուանէր, և զՅոհան՝ Մայրոգոմեցի։

Բայց վասն զի յայնմ տեղւոյ ևս հրամայէր զնա հալածել, ապա շուտ գնայ 'ի գաւառն Գարդմանայ. և անդ ապա խստամբեր վարս իւր ստացեալ՝ նեղ և անձուկ պողոտայիւ հետևի զկնի ամենայն առաքինի վարուց։ Զսմանէ ապա համբաւ ամբաստանութեան պատմի, իբր դառն հերձուածս իմն նմա մուծանել յեկեղեցի սուրբ. սակայն ես ոչ կարեմ հաւանութիւն իմոց կարծեացս տալ վասն այնպիսւոյ առնն, թէ զի՞ դ նա կարէր խորհիլ առ 'ի փլուզանել զուղիղ հաւատոյ շինուածս։ Այլ կարծիս իմն ընդունի սիրտ իմ 'ի հակառակադիր և յոխորիմաց այլոց կամաց այս գործ համբաւոյ լեալ։ Բայց եթէ սակս Սարգսի աշակերտի նորա համբաւէ ոք զայնպիսի շար հերձուածս ընծիւղեալ՝ և ես ևս ոչ վասն նորա հակառակիմ. զի իմ իսկ ընթերցեալ է զիր վնասու նորա։ Այլ վասն զի Յոհան 'ի բաց յիւրմէ հալածեաց զՍարգիսն, սակս այնորիկ արտաքոյ կամաց նորա ասեմ զնորայն հերձուած։

Իսկ ապա հայրապետն Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ, զոր երբեմն խրթին և մթին էր զնա շինեալ՝ քակեալ զայն, ևս ընդարձակագոյն և պայծառագոյն զնա շինեաց՝ կոփածոյ քարամբք և կրով ձուլելով. և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական դասուց 'ի պաշտօն աստուածային խորանին։

'Ի ժամանակի աստ յայմիկ Վարազտիրոց՝ որդի քաջին Սմբատայ, փախստեայ լեալ յՌոստոմայ իշխանէ Ատրպատականի՝ շուտ գնայ ընտանեօք և աղխիւ առ կայսրն Հերակլ. վասն զի նենգ թագուցեալ յինքեան Ռոստոմայ սպանանել զՎարազտիրոց, սակս այնորիկ գնացեալ տարաբնակէր ի Յոյնս։ 'Ի սմին յայսմիկ աւուրս կայսրն Հերակլ զԴաւիթ Սահառունի կուրապաղատ արարեալ՝ իշխան Հայոց կացուցանէր. որ մեծաւ ճոխութեամբ և յաղթութեամբ բազմաւ քաղաքավարէր զիշխանութիւնն ամս դ. և 'ի հրամանէ նորուն շինէր իսկ եկեղեցին գեղեցկայարմար, որ 'ի քաղաքագեղն Մրեն։ Իսկ յետ երեամ մի՝ անարգեալ

ու հանելով՝ հայաստանցիներիս տրոհեցիր և խախտեցիր մեր ուղղափառ հայրերի հավատի սահմանը՝ խաթարելով առաքելական մատյանների գլուխների ցանկերը և կործանելով Լևոնի մարգդավան տոմարով»։ Ապա Եզրը հրամայում է բռունցքով խփել նրա պարանոցին ու ծնոտին, իսկ Հոհանը, ձեռքը վեր բարձրացնելով, ասում է. «Ահավասիկ խնդալով գնացի դատարանի առաջ, որովհետև Տիրոջ անվան համար արժանի եղա անարգվելու»։ Եվ այդ բանն ասելով՝ ելավ գնաց։ Եվ գնում, դադար է առնում Մայրո վանքում, որը գտնվում է Բշնի ամրոցի լեռան ծործորում։ Եվ Հոհանի այնտեղ բնակվելու պատճառով Եզրը փոխում է Մայրո վանքի անունը՝ այն անվանելով Մայրագոմ, իսկ Հոհանին՝ Մայրագոմեցի[42]։

Բայց քանի որ [Եզրը] հրամայում է այնտեղ էլ նրան հալածել, ապա նա թողնում գնում է Գարդման գավառը։ Եվ այնտեղ վարելով ճգնավորական կյանք՝ նեղ ու անձուկ ճանապարհով հետևում է ամեն մի առաքինի գործի։ Հետագայում նրա մասին ամբաստանության լուր է տարածվում, իբր թե նա մի դաժան հերձված է մտցրել սուրբ եկեղեցի։ Սակայն ես չեմ կարող հավանություն տալ այդպիսի մարդու մասին ասված կարծիքին, թե նա ինչպե՞ս կարող էր խորհել փլուզելու ուղիղ հավատի շենքը։ Եվ ես այս կարծիքն ընդունում եմ որպես նրա հակառակորդների ու թշնամիների կամքով հորինված գործ։ Բայց եթե մեկը նման շար հերձված վերագրի նրա աշակերտ Սարգսին, ես նրան չեմ կարող հակառակվել, որովհետև ես ինքս եմ ընթերցել նրա վնասակար գրությունը։ Բայց քանի որ Հոհանը Սարգսին իրենից հեռացրեց, դրա համար ասում եմ, որ անկախ Հոհանի կամքից է եղել նրա հերձվածը։

Իսկ այնուհետև Եզր հայրապետը, քանդելով սուրբ Գայանեի վկայարանը, որը երբեմն անշուք ու մութ ձևով էր շինված, այն կառուցում է տաշած քարերով և ամրացնում կրով, որն ավելի ընդարձակ ու լուսավոր էր։ Դրսի կողմից բարեկարգում է աստվածային եկեղեցուն սպասարկող քահանայական դասի բնակարանները։

Այդ ժամանակ Վարազտիրոցը՝ քաջն Սմբատի որդին, փախչելով Ատրպատականի իշխան Ռոստոմի մոտից, ընտանիքով ու ունեցվածքով շարժվում գնում է Հերակլ կայսրի մոտ։ Քանի որ Ռոստոմը [մտածում էր]նենգաբար սպանել Վարազտիրոցին, այդ պատճառով [սա] գնում և բնակվում է Հունաստանում։ Այդ նույն օրերի ընթացքում Հերակլ կայսրը, Դավիթ Սահառունուն կուրապաղատ դարձնելով, նրան կարգում է Հայոց իշխան։ Նա մեծ իշխանությամբ, բազում հաղթանակներով ու առաքինաբար իշխանությունը վարում է դ [4] տարի։ Եվ

'ի նախարարաց և զօրաց իւրոց, հալածեցաւ։ Եւ յանմհետէ ապա 'ի չար հակառակութենէ նախարարացն և 'ի նանիր նախանձուէ զղրդեալ՝ կործանեցին սպառսպուռ զՀայաստանեայս. բայց միայն բարեպաշտ իշխանն Թէոդորոս ըստ սակաւաձեռն կարի՝ դիմակաց հինից թշնամեաց դտանիւր։

Զայսու ժամանակաւ ապա երևեալ ժառանգն Հագարայ աղախնոյն՝ Մահմէտ, որ ըստ Պողոսի 'ի լեռնէն Սինայ կամ յանապատէ 'ի ծառայութիւն ծնեալ։ Սա հպարտացեալ 'ի վերայ քրիստոսադրոշմ և ստուգահաւատ ազգաց՝ լնոյր ապա զիւր կորստական խորխորատն խորհրդոց՝ ոչ տալով յագուրդ սրոյն ծարաւոյ, զոր միշտ արբուցանէր յարենէ վիրաւորելոց գերելոց գլխոց իշխանաց թշնամեացն՝ յարձակելոց 'ի վերայ հաւատացելոց. որ թէպէտ կարծեցուցանէր զինքն հակառակորդն հպարտացեալ 'ի հրամանէ Աստուծոյ զոլ քարոզ ճշմարտութեան Աբրահամեանն հաւատոյ և Մովսիսականն օրինաց, սակայն անաստուած աստուածածանօթութիւն նորա դաւաճանումն միայն լինէր մըտաց տգիտաց։ Վասն զի դատապարտ էր դատաստան նորա, և անարգագոյն յարգանք նորա, և ուխտադրուժք ուխտք, և աննուէր նուիրմունք և անողորմ ողորմութիւնք։ Քանզի և ոչ իսկ թերևս 'ի Տեառնէ տուաւ աղախնորդւոյ ընդ որդւոյ ազատին լինիլ ժառանգորդ, որպէս և ոչ իսկ բաժին հաւատացելոյն ընդ անհաւատին։

Արդ իբրև զումարտակ մեծ լինէր Հագարացին՝ և յաղթեալ կոտորէին առհասարակ զզօրս կայսեր Հերակլի որ յԱրաբիայ, այնուհետև ազգք և ազինք պակուցեալք 'ի յահէ նոցա՝ հնազանդեցան 'ի ծառայութիւն նոցա։ Իսկ Երուսաղէմացիք զքրիստոսընկալ սուրբ խաչն վաղվաղակի յուղարկէին նաւօք 'ի Կոստանդնուպոլիս, զի մի՛ կրկին ևս 'ի թշնամեացն գերեսցի. և ինքեանք հնազանդեցան 'ի ծառայութիւն Հագարացւոյն։

Աստ ապա վախճանեալ կայսրն Հերակլ՝ Կոստանդին որդի նորա ընդ նմա թագաւորէ։ Եւ վասն զի նախարարք աշխարհիս մերոյ անմիաբանք լեալք և ոչ ոք էր որ սմա զօրավարէր. յայնժամ ապականիչ զօրքն Հագարայ համարձակութիւն առեալ՝ յԱսորեստան կողմանէ ասպատակ 'ի Հայս սփռէին։ Եւ ըստ օրինակի հրացայտ իմն հրդեհի՝ ճարակ բոցոյ նոցա վաղվաղակի հասանէր յԱյրարատ դաւառ, հարեալ զդաշտավայրն ամենայն և պաշարեալ պատերազմաւ զԴվին քաղաք. և առեալ զնա զսուսերս իւրեանց արբուցին յարենէ քաղաքին, ուր ոչ ևս կայր թիւ բազմութեան սպանելոցն։ Երեսուն և հինգ հազար ոգի գերեցին վաճառակուր լինել, և անցեալ գնացին՝ ընդ որ չուեալ եկին, յԱսորեստան։

Նրա հրամանով Մրեն քաղաքագյուղում շինում են դեղեցկահարմար եկեղեցի։ Իսկ երեք տարի անց նա անարգվում է նախարարների ու իր զորքի կողմից և հալածվում։ Այնուհետև նախարարների անօրեն հակասություններից և փուչ նախանձից սարսռալով՝ իսպառ կործանեցին հայաստանցիներին, բայց միայն Թեոդորոս բարեպաշտ իշխանը քիչ ուժերով ավազակներին ու թշնամիներին դիմակայող գտնվեց։

Այդ ժամանակներում հանդես եկավ Հագարի աղախնու ժառանգը՝ Մահմեդը, որը ըստ Պողոսի՝ ծնվել էր Սինա սարից կամ անապատից՝ [մարդկանց] ծառայելու համար։ Հոխորտալով քրիստոնյա և ճշմարտահավատ ազգերի վրա՝ նա լցնում էր իր անցավոր խորհուրդների խորխորատը՝ հագուրդ չտալով սրի ծարավին, որին միշտ խմեցնում էր հավատացյալների վրա հարձակվող թշնամիների վիրավոր ու գերված գլխավոր իշխանների արյունից։ Թեպետ նա իրեն ցույց էր տալիս զոռոզացած հակառակորդ՝ Աստծու հրամանով լինելով Աբրահամյան ճշմարիտ հավատի և Մովսիսական կրոնի քարոզիչ, սակայն նրա անաստվածագիտությունը տգետ մտքերի համար դավաճանություն էր լինում։ Դրա համար դատապարտված էր նրա դատաստանը, նրա հարգանքը ավելի անարգված, ուխտը՝ դրժած, նվիրումը՝ աննվեր և ողորմությունը՝ անողորմ։ Քանի որ թերևս Տիրոջ կողմից չտրվեց աղախնորդուն ազատորդու հետ լինել ժառանգորդ, ինչպես որ հավատացյալին անհավատի հետ բաժին չտրվեց։

Արդ՝ երբ հագարացին մեծ բանակ էր կազմում և հաղթելով կոտորում էր Արաբիայում գտնվող Հերակլ կայսրի ամբողջ զորքին, դրանից հետո ազգերն ու ցեղերը, նրանց ահից վախենալով, ընկան նրա ծառայության տակ։ Իսկ երուսաղեմցիները քրիստոսաընկալ սուրբ խաչը նավերով իսկույն ուղարկում են Կոստանդնուպոլիս, որպեսզի նորից չդերվեր թշնամիների կողմից։ Եվ իրենք ենթարկվեցին հագարացիներին։

Այդ ժամանակ վախճանվում է Հերակլ կայսրը, և նրա փոխարեն թագավորում է նրա որդի Կոստանդինը։ Եվ քանի որ մեր երկրի նախարարները անմիաբան էին, և ոչ ոք չկար, որ առաջնորդեր զորքին, այդ պատճառով հագարացիների ավերող զորքը, համարձակություն ստանալով, Ասորեստանի կողմից ասպատակում է Հայաստանը։ Եվ հուր ցայտեցնող հրդեհի նման հրո ճարակը անմիջապես հասնում է Այրարատ գավառը՝ ավերելով ամբողջ դաշտավայրը, պաշարելով Դվին քաղաքը և պատերազմով գրավելով այն՝ իրենց սուսերները հարբեցրին քաղաքի արյամբ, որտեղ սպանվածների բազմությանը թիվ ու հաշիվ չկար։ Գերեցին երեսունհինգ հազար հոգու՝ վաճառելու համար և անցան-գնացին Ասորեստան, որտեղից որ եկել էին։

Եւ իսկ և իսկ վախճանէր հայրապետն Եզր՝ կալեալ զաթոռ հայրապետութեան ամս տասն։ Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր և այլ նախարարք Հայոց հանդերձեցին կացուցանել յաթոռ հայրապետութեան փոխանակ Եզրի զՆերսէս եպիսկոպոս Տայոց. բայց նա յապշութեան լեալ յանհնարին կոտորելոցն, որ 'ի գերելոց քաղաքին՝ գաղտնագնաց փախստեայ լինել խորհէր՝ իբր ոչ կարող կալ 'ի քաղաքավարութեան այնմ աստիճանի մեծի։ Ապա յողոքական բանից և 'ի սադրելոյ նախարարացն հնազանդեալ հաստատէր։ Եւ կացեալ յաթոռ հայրապետութեան՝ ամփոփեալ հաւաքէր զբազմութիւն դիականցն անկելոց՝ և 'ի նմին տեղ վերստին շինէր զհրդեհեալ զվկայարան մեծի նահատակին Սերգեայ։ Զկնի ապա շինէ տաճար սրբութեան և 'ի վերայ վիրապի սրբոյն Գրիգորի, ուր 'ի մէջ թունաւորացն թաղեալ՝ առաքելանուէրն այրն Աստուծոյ զկամակոր վիշապին ջախջախեաց զգլուխ, 'ի մեռելութենէ խորոց կռապաշտութեան վերածելով զՀայաստանեայսս 'ի լոյս փառաց Որդւոյ Աստուծոյ։ Դարձեալ յուսացեալ 'ի Տէր և ոչ ածեալ զմտաւ զկրթական արշաւանս հինիցն թշնամեաց՝ գեղեցիկ իմն մոլութեամբ դնէ ապա հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի տանն Աստուծոյ ըստ անուանակրութեան սրբոյն Գրիգորի՝ յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Քրիստոսի։ Իսկ 'ի հիմնարկել զաստուածակերտ փարախն բանաւոր հօտին Քրիստոսի՝ 'ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ 'ի անշուշտ մնացականութեամբ պահիլ դանձոյն երկնաւորի 'ի գերշաց ապականչաց և 'ի պարծանս հաւատոյ քրիստոնէական կարգաց։ Իսկ զքրիստոսադրոշմ և զպատուական գլուխն ոչ 'ի խորոց, այլ արտաքոյ 'ի զզրոցի եդեալ՝ դնէ 'ի գանձարանս աստուածութեանն 'ի յոյս բարեաց փափաքողաց նմա և 'ի բժշկութիւն ախտակրելոց։ Բայց հայրապետն մեծն Ներսէս հրաման հայցեալ 'ի կայսերէն Կոստանդնէ՝ կացուցանէ զօրավար Հայոց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն։

Արդ մինչ ցայս վայր ոչ ևս էր իւրովի ելեալ 'ի պատերազմ ընդ ումեք ամիրապետի Հագարացւոյն. այլ միայն զզօրսն ևեթ ասպատակաւ հանեալ սփռէր 'ի ծագս երկրի։ Ապա յայսմ նուագի ինքն իսկ ամիրապետն ելեալ 'ի Սին անապատէ՝ անթիւ բազմութեամբ անցանէր ընդ ծով 'ի հարաւակողմ և յարևելս, 'ի Պարս և 'ի Սագաստան, 'ի Սինդ և 'ի Մորան, 'ի Տարան և 'ի Մակուրան և յաշխարհն Հնդկաց, առեալ և աւերեալ զբոլորեսին՝ բառնայ զամենայն թագաւորութիւնս ազգաց բաց յՂիտանացւոց, որք են Հռովմայեցիք։ Իսկ կայսրն Կոստանդին 'ի Մարտինեայ մօրուէ իրմէ դաւեալ սպանանի՝ կացուցեալ

Եվ այդ ժամանակ, հայրապետական աթոռին տասը տարի տիրելուց հետո, վախճանվում է Եզր հայրապետը։ Իսկ Ռշտունյաց տեր Թեոդորոսը և Հայոց այլ նախարարներ պատրաստվեցին Եզրի փոխարեն հայրապետական աթոռին նստեցնել Տայքի Ներսես եպիսկոպոսին, բայց նա ապշելով անհամար կոտորածներից, որոնք քաղաքի գերվածներից էին, խորհում էր գաղտնի փախուստի դիմել՝ մտածելով, որ այդքարձր պաշտոնը չի կարող ըստ արժանվույն վարել։ Այնուհետև հնազանդվելով նախարարների մխիթարական ու հորդորող խոսքերին՝ նա համոզվում է։ Եվ նստելով հայրապետական աթոռին՝ հավաքում էր ընկած բազում դիակները։ Նույն տեղում նա կրկին շինում է մեծն Սերգե նահատակի հրդեհված վկայարանը։ Դրանից հետո սուրբ Գրիգորի վիրապի վրա շինում է սուրբ տաճարը, ուր և թունավորների մեջ թաղվելով՝ Աստծու առաքելանվեր մարդը ջախջախեց կամակոր վիշապի գլուխը՝ կռապաշտության խոր մեռելությունից հայաստանցիներին դուրս բերելով դեպի Աստծու Որդու փառքի լույսը։ Դարձյալ հույս դնելով Տիրոջ վրա և չմտածելով թշնամիների ու ավազակների փութաջան արշավանքների մասին՝ մի գեղեցիկ ցանկությամբ մեծ, հրաշալի ու բազմապայծառ եկեղեցու հիմքն է դնում։ Եկեղեցին անվանում է սուրբ Գրիգորի անունով՝ հանձնելով իմաստուն ու շինարար Քրիստոսի ավարտած գործը։ Իսկ երբ հիմնադրում է Քրիստոսի բանավոր հոտի աստվածակերտ եկեղեցին, սուրբ Գրիգորի ոսկորների նշխարները բաժանելով՝ նա դնում է չորս հաստահեղույս սյուների տակ՝ անշուշտ երկնավոր գանձը ապականիչ գերողներից հաստատուն պահելու և քրիստոնեական հավատի պարծանքի համար։ Նա քրիստոսադրոշմ ու պատվական գլուխը ոչ թե խորքում, այլ դնում է զզրոցից դուրս, աստվածային գանձարանում՝ դրան լավ փափագողների հույսի ու հիվանդների բժշկության համար։ Բայց Ներսես մեծ հայրապետը, Կոստանդին կայսրից թույլտվություն խնդրելով Ռշտունյաց տեր Թեոդորոսին Հայոց զորավար է նշանակում։

Արդ՝ մինչև այստեղ հագարացիների ամիրապետը անձամբ պատերազմի դուրս չի գալիս որևէ մեկի դեմ, այլ միայն ասպատակությամբ զորքին հանում սփռում է երկրի տարբեր ծայրերում։ Այս անգամ ինքն ամիրապետը, դուրս գալով Սին անապատից, անթիվ բազմությամբ ծովով անցնում է դեպի հարավ ու արևելք՝ դեպի Պարսկաստան, Սագաստան, Սինդ, Մորան, Տարան, Մակուրան և Հնդկաստան։ Գրավելով և ավերելով ամենքին՝ վերացնում է բոլոր ազգերի թագավորությունները, բացի ղիտանացիներից, որոնք հռոմեացիներն են։ Իսկ Կոստանդին կայսրին դավում և սպանում է իր խորթ մայր Մարտինեն

փոխանակ նորա զորդի իւր՝ զԵրակլակ։ Իսկ Վաղենտին զօրավար հուպ 'ի վերայ հասեալ և սպանեալ զՄարտինէ և զԵրակլակ զորդի նորա՝ կացուցանէ թագաւոր զԿոստանդ որդի Կոստանդնի։ Իսկ ապա վասն զի հատուած եղեալ և եկեալ էր 'ի Ծունաց ասպետն Վարազտիրոց՝ ապա մեծ հայրապետն Ներսէս խնդրէ հաշտութիւն նմա 'ի Կայսերէ, և տայ՝ առնել զնա Կուրապաղատ և հրամանատար Հայաստանեայցս։ Իսկ նա՝ չառնուլ զիշխանութեան պատիւն՝ փաղվաղակի վախճանի. զոր և տարեալ եղին 'ի Դարօն առ հօր իւրում՝ թաջին Սմբատայ։ Ապա Ներսէս զորդի նորա զՍմբատ 'ի պատիւ հօրն խնդրէ կացուցանել, և հայցէ ևս զԹէոդորոս Ռշտունեաց տէր 'ի զօրավարութիւն հաստատել։ Եւ այսպէս պաշտպանեալ՝ ապահովանայր առ ժամանակ մի 'ի չար հինից Հագարու՝ աշխարհս մեր։

Իսկ իբրև բառնայր առհասարակ տէրութիւն ազգաց և ազանց, այնուհետև պատառեալ առաղաստն հին հարաւոյ՝ շնչեաց 'ի մեզ նոր հարաւահողմ մահաբեր խորշակ. և տապախարշ արարեալ զմատաղատունկս իմանալի բուրաստանաց մերոց՝ խայթոցօքն խոցոտեաց։ Եւ այսպէս ապա յամս սակաւ արագընթաց ազգք հարաւոյ փոթորկեալ պատեալ տիրեցին ամենայն երկրի. զոր տեսեալ Թէոդորոսի և այլոցն ևս նախարարացն՝ և պակուցեալք յահէ հինից եկելոց՝ հնազանդեցան 'ի ծառայութիւն Հագարացւոյն, գնելով ուխտ ընդ մահու և կռելով դաշինս ընդ դժոխոց։ Եւ այսպէս 'ի բաց կային 'ի Կայսերէ։ Իսկ Կայսեր զօրս բազումս գումարտակ արարեալ՝ չուէ գնայ 'ի Հայս ընդ իւրև նուճել, որում ոչ ոք թերևս գտաւ հնազանդեալ բայց միայն 'ի Վրաց աշխարհէն։ Ապա կայսրն Կոստանդին յաւէտ իմն բարկացեալ՝ խորհէր կործանմամբ սաստիւ բառնալ զերկիրն 'ի միջոյ։ Իսկ հայրապետն Ներսէս մեծապաղատ ազաչանս արքային մատուցեալ՝ դառնայ յայնց կամաց իւրոց. և ապա հեզաբար գնացեալ 'ի քաղաքն Դվին իջուանս 'ի տան կաթողիկոսարանին արարեալ. և անդ ապա հրամայէ Հոռոմ քահանայիցն պատարագ 'ի սուրբ եկեղեցւոջն մատուցանել. և քարոզէր 'ի նմա զժողովն Քաղկեդոնի. և հաղորդեցան օրինացն 'ի միասին թագաւորն և հայրապետն մեր Ներսէս։ Եւ այսպէս ապա թէ՛ կամաւ և թէ՛ ակամայ պատճառք գայթակղութեան բազմաց այս լեալ՝ շարժեցաւ հաւատն, զոր ընկալեալ էր 'ի սրբոյն Գրիգորէ և ցայն վայր անշուշտ կացեալ և մնացեալ։ Իսկ մի ոմն յեպիսկոպոսացն 'ի վայր 'ի բաթրոնէ բեմին իջեալ՝ լռիկ իմն ծածկեցաւ յամբոխին։ Իսկ իբրև յայտ իրք եպիսկոպոսին գայր, ածաւ եպիսկոպոսն առաջի արքային. և ապա հարցեալ առ 'ի նմանէ, «Թէ ընդէ՞ր ոչ ընդ իս կամ ընդ քում հայրա-

և նրա փոխարեն կարգում է իր որդուն՝ Երակլակին։ Վաղենտին զորավարը անհապաղ վրա է հասնում և սպանում Մարտինեին, որդի Երակլակին, թագավոր նշանակում Կոստանդնի որդի Կոստանդին։ Եվ քանի որ ասպետ Վարազտիրոցը գաղթել և եկել էր Հունաստանից, ապա Ներսես մեծ հայրապետը նրան խնդրում է հաշտվել կայսրի հետ և նրան նշանակել է տալիս կուրապաղատ ու Հայաստանի զորավար։ Բայց նա իշխանությունն ստանալու ժամանակ հանկարծակի վախճանվում է։ Նրան տանում և թաղում են Դարոնում, իր հոր՝ քաջ Սմբատի մոտ։ Ապա Ներսեսը խնդրում է նշանակել նրա որդի Սմբատին՝ ի պատիվ իր հոր, ինչպես նաև խնդրում է Ռշտունյաց տեր Թեոդորոսին հաստատել զորավարության համար։ Եվ այսպես նա իշխանության տեր է դառնում, և մեր երկիրը միաժամանակ ապահովվում է հագարական չար ավազակներից։

Իսկ երբ առհասարակ վերանում է ազգերի ու ցեղերի տերությունը, մեզ վրա փչեց հարավային մահաբեր խորշակը և տապախարշ անելով մեր բուրաստանների իմանալի մատաղատունկերը՝ խայթոցներով խոցոտեց։ Եվ այդպես մի քանի տարվա ընթացքում հարավային արագընթաց ցեղերը, փոթորկի նման շարժվելով, տիրեցին ամբողջ երկրին։ Այդ բանը տեսնելով ու վախենալով եկած ավազակների ահից՝ Թեոդորոսը և մյուս նախարարները ընկան հագարացիների ծառայության տակ՝ մահվան հետ ուխտ կնքելով և դժոխքի հետ դաշինք կռելով։ Եվ այդպիսով հեռու էին մնում կայսրից։ Իսկ կայսրը մեծ զորք գումարելով՝ շարժվում գնում է Հայաստան՝ այն իրեն ենթարկելու, բայց նրան ոչ ոք չենթարկվեց, բացի Վրաց աշխարհից։ Այնուհետև Կոստանդին կայսրը է՛լ ավելի բարկանալով՝ խորհում էր սաստիկ կործանմամբ երկիրը վերացնել մեջտեղից։ Իսկ Ներսես հայրապետը, մեծ պաղատանքով աղաչում է արքային և վերադառնում է իր կամքով։ Եվ ապա հեզաբար գնալով Դվին քաղաքը՝ իջևանում է կաթողիկոսարանում։ Այնտեղ հռոմեական քահանաներին հրամայում է սուրբ եկեղեցում պատարագ մատուցել, ուր քարոզվում էր Քաղկեդոնի ժողովը։ Եվ միասին կրոնական հաղորդություն ընդունեցին թագավորը և մեր Ներսես հայրապետը։ Եվ այդպես կամա թե ակամա դա եղավ շատերի գայթակղության պատճառը, և շարժվեց այն հավատը, որը ընդունվել էր սուրբ Գրիգորից և մինչև այդ պահը անշուշտ մնացել ու պահպանվել էր։ Իսկ եպիսկոպոսներից մեկը, բեմի բաթրոնից [բազմոցից] վայր իջնելով, լռելյայն թաքնվեց ամբոխի մեջ։ Իսկ երբ եպիսկոպոսի այդ արարքը հայտնի է դառնում, նա տարվում է արքայի մոտ։ Եվ երբ [արքան] նրան հարցնում է, թե «Ինչո՞ւ ինձ կամ քո հայրապետի հետ

պետին ոչ հաղորդեցար.» Նա պատճառս փաստաբանականս 'ի մէջ առնոյր, «Առ ահի սրտիս՝ ասէ, զայն գործեցի, քանզի մեք՝ ասէ, մինչ 'ի տախտակի տպաւորեալ նկարապաճոյճ դեղով միայն զձեզ կայսերսդ տեսանեմք՝ դողումն զմեզ պատեալ պաշարէ, թողում ասել զկենդանի դիտակ երեսացդ նկատել և հաղորդակից ևս լինել։» Կայսրն ասէ.— «Արդ հաղորդի՞ս ընդ քում պատրիարգիդ։» Ասէ եպիսկոպոսն՝ «Իբրև ընդ սրբոյն Գրիգորի՝ սակայն ինքն իսկ դա եղև պատճառք չհաղորդելոյս իմոյ ընդ իւր։ Զի երկու ամօք յառաջ քան զայս հրամայէր դա ժողով եպիսկոպոսացն առ ինքն լինել. որք միաբան ընդ դմա ձեռնարկ արարեալ՝ նզովեցին զամենայն հերձուածողս, և առաւել ևս զժողովն Քաղկեդոնի, և ես ևս ապա խառն ընդ դոսա.»— Վասն որոյ Կայսր զայրագնեալ յանդիմանէր զենդութիւնն Ներսեսի 'ի լեզու իւր. և ապա այն ևս եպիսկոպոս հաղորդէր ընդ նոսա՝ օրհնելով զթագաւորն, և թագաւորն զնա։

Եւ ապա ըստ հապճեպ տալոյ խնդրակաց 'ի Կոստանդնուպօլսէ՝ գնայ Կայսրն փութանակի. իսկ հայրապետն Ներսէս երկուցեալ իմն 'ի սաստիկ ցասմանէն Ռշտունեաց տեառնն՝ երթեալ դադարէր 'ի Տայս։ Բայց յետ միանգամ և երկիցս ասպատակի Իսմայէլեան զօրու 'ի Հայս և սպառսպուռ տիրելոյ՝ առին պատանդ յամենայն գլխաւորաց աշխարհին, զկանայս և զուստերս և զդստերս։ Բայց Թէոդորոս Ռշտունեաց տէր գնայ ընդ Իսմայէլեան զօրուն յԱսորեստան իւրայօքն համազգեօք։ Եւ անդ մեռաւ. և մարմին նորա բերեալ եդաւ 'ի գերեզմանի հարցն իւրոց. իսկ հայրապետն Հայոց Ներսէս յետ վեց ամի հալածանաց իւրոց՝ իբրև լուաւ զվախճանն Թէոդորոսի և զդադարումն Իսմայէլեան ասպատակի՛ն, դարձաւ անդրէն 'ի տեղի իւր։ Եւ միախորհ ապա լեալ ընդ նախարարացն՝ իշխան 'ի վերայ Հայաստանեայցս կացուցանեն զՀամազասպ Մամիկոնեան, որ էր այր ընթերցասէր և ուսումնասէր և վարժ 'ի բոլոր հրահանգս, և զնախնական քաջութեացն պայման միշտ ջանայր լրութեամբ կատարել մրցարանաց կրթութեամբ։ Բայց հայրապետն Ներսէս պարապ անձին գտեալ՝ զարտաքոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ 'ի նմա յարկս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քարամբք։ Այլ և կարգեալ կացուցանէր 'ի նմա ամբոխութիւնս երգումարդաց ըստ պայմանի քաղաքականաց. և ածեալ ջուր 'ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւազախիր առապար դաշտավայրն 'ի գործ արկանէր, տնկէր այգիս և բուրաստանս ծաղկոցաց։

չհաղորդվեցիր». Նա իրավական պատճառաբանություն է մեջ բերում՝ ասելով, թե «Այն կատարեցի սրտիս ահից, քանի որ, մենք, ասում է, մինչ այդ ձեզ՝ կայսրերիդ, միայն տեսել ենք գույնզգույն ներկերով նկարված պատկերով, այդ պատճառով մեզ պատել էր ահն ու դողը, ուր մնաց ձեր կենդանի դեմքին նայեինք, առավել ևս հաղորդակից լինեինք»։ Կայսրը հարցնում է. «Այժմ հաղորդվո՞ւմ ես քո պատրիարքի հետ»։ Եպիսկոպոսը պատասխանում է. «Իբրև սուրբ Գրիգորի հետ։ Սակայն հենց ինքը եղավ պատճառ իր հետ չհաղորդվելու համար։ Որովհետև դրանից երկու տարի առաջ նա հրամայում էր եպիսկոպոսների ժողով անել իր մոտ, որոնք դրան միահամուռ ձեռնարկելով՝ նզովեցին բոլոր հերձվածողներին, առավել ևս Քաղկեդոնի ժողովը, և ես էլ նրանց հետ խառնված»։ Այդ պատճառով զայրանալով՝ կայսրը իր լեզվով հանդիմանում էր Ներսեսի նենգությունը։ Եվ ապա այն եպիսկոպոսը ևս հաղորդվում է նրանց հետ՝ օրհնելով թագավորին, իսկ թագավորը՝ նրան։

Եվ ապա Կոստանդնուպոլսից եկած նվիրակներին հապճեպ թույլ տալով՝ կայսրը գնում է փութանակի, իսկ Ներսես հայրապետը, երկընչելով Ռշտունյաց տիրոջ սաստիկ ցասումից, գնում և դադար է առնում Տայքում։ Բայց իսմայելյան զորքը մեկ-երկու անգամ Հայաստանը ասպատակելուց ու ամբողջովին տիրելուց հետո, երկրի բոլոր գլխավորներից պատանդ վերցրեց՝ կանանց, ուստերին և դուստերին։ Բայց Ռշտունյաց տեր Թեոդորոսը իր համազգիների հետ գնում է Ասորեստան։ Նա այնտեղ էլ մեռավ։ Նրա մարմինը բերվեց ու թաղվեց իր հայրերի գերեզմանոցում։ Իսկ Հայոց Ներսես հայրապետը իր վեցամյա հալածանքներից հետո երբ լսեց Թեոդորոսի վախճանը և իսմայելյան ասպատակության դադարումը՝ այնտեղից վերադարձավ իր տեղը։ Եվ Հայոց նախարարների հետ միաբան լինելով՝ նրանք Հայաստանի վրա իշխան են կարգում Համազասպ Մամիկոնյանին, որը ընթերցասեր ու ուսումնասեր մի մարդ էր, բոլոր ասպարեզներում վարժված։ Նա միշտ ջանում էր նախնական քաջագործությունների պայմանը ամբողջությամբ կատարել մրցարանների վարժությամբ։ Բայց Ներսես հայրապետը, ժամանակ գտնելով և իր իսկ կառուցած հրաշակերտ եկեղեցու դրսի կողմը շրջապատելով պատերով ու պարսպով, փակում էր՝ այնտեղ կառուցելով բնակարաններ՝ հաստահեղույս տաշած քարերով։ Նախ քաղաքի կարգի համաձայն այնտեղ բնակիչներ ու ժողովուրդ է բնակեցնում և Քասաղ գետից ջուր բերելով՝ մշակում է ավազի մեջ խրված քարքարոտ դաշտավայրը, այնտեղ հիմնում է այգիներ, բուրաստաններ ու ծաղկանոցներ։

Աստ ապա դարձեալ սակս անհնարին և ծանրաբեռն ծառայութեանն 'ի բաց կացեալ Հայք յԻսմայէլեան բռնակալացն՝ հնազանդէին 'ի ծառայութիւն Կայսեր։ Եւ մեծին Ներսեսի խնդրեալ յարքայէ առնել կուրապաղատ զՀամազասպ և հրամանատար Հայաստանեայցս. զոր ապա լուեալ ամիրապետին՝ զամենայն պատանդսն Հայոց առհասարակ կոտորէր՝ հոգիք իբրև հազար եօթն հարիւր եօթանասուն և հինգ։ Եւ յայնմ օրէ հետէ ապա հոգի խռովութեան առաքեալ յԱստուծոյ 'ի մէջ բոլոր բանակացն Իսմայէլեան, և այր 'ի վերայ ընկերի յարուցեալ և սուր 'ի յազդեր կալեալ՝ անհնարին սատակմամբ զմիմեանս կոտորէին։ Եւ սպանանէին և զամիրապետն իւրեանց՝ և մ՛էլ 'ի տեղի նորա կացուցանէին։ Ապա զօրքն Իսմայէլեան, որ էր յԵգիպտոս՝ միաբանեալ ընդ կայսեր Կոստանդնի, հաւատացին 'ի Քրիստոս. և մկրտեցան արք իբրև վեշտասան հազար։ Եւ ապա զօրացեալ Մաւի և սպանեալ զայն ևս ամիրապետ՝ ինքն իսկ թագաւորէ 'ի վերայ բոլորից Հագարացւոցն, արարեալ խաղաղութիւն ընդ բոլոր ծագս երկրի։

Բայց Համազասպայ յետ երից ամաց առնլոյ զպատիւ կուրապաղատութեանն 'ի Կայսերէ՝ հասանէ նմա կէտ վճարման 'ի կենացս, և վախճանեալ դնի ընդ հարս իւր։ Ապա մեծ հայրապետն Ներսէս հանդերձ նախարարօքն Հայոց հայցէ կացուցանել յիշխանական պետութիւնն Հայոց 'ի Մաւեայ ամիրապետէ զԳրիգոր Մամիկոնեան, որ 'ի պատանդի իսկ առ նմա կացեալ էր։ Իսկ նորա լուրջ երեսօք զխնդիրսն կատարեալ՝ տայ Գրիգորի զիշխանական պատիւն և առնէ զնա հրամանատար Հայոց։ Սա էր այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ, առաջնորդ գտեալ յոքնապատիկ կարգաց և ուղղութեանց, շինութեան և խաղաղութեան, ապահովութեան և բարեմասն լրութեան, որ գրեթէ յաշխարհի իբր յանապատի գոլով՝ հետևէր զկնի ամենայն արդար վաստակոց։ Եւ ապա իբրև եկաց մեծ հայրապետն Ներսէս յառաջնորդութեան անդ իւրում ամս քսան՝ հրաժարեալ 'ի կենաց աստի, եդաւ մարմինն 'ի հանգստարանի անդ, զոր իւրովի իսկ յօրինեալ էր 'ի հիւսիսոյ կողմանէ բազմապայծառ քաւարանին, որ ըստ արժանի աթոռոյ իւրում նախահօրն էր կանգնեալ յարկ։ Եւ այսպէս երջանիկ և հռչակաւոր և հոյակապ երևեալ 'ի հարս՝ ժամանեաց 'ի հանգիստ անմահական կենացն 'ի պարս առաքելական դասուց։ Զկնի ապա մեծին Ներսէսի յաջորդէ զաթոռ հայրապետութեանն Անաստաս՝ 'ի գեղջէն Ակոռոյ, որ 'ի Մասեաց ոտին։ Սա սենեկապան լեալ մեծին Ներսեսի՝ և վերակա-

Հետո հայերը, դաժան ու ծանրաբեռն հպատակության պատճառով զատվելով իսմայելյան բռնակալներից՝ ենթարկվում են կայսրին։ Եվ մեծն Ներսեսը արքայից խնդրում է Հայաստանի հրամանատար ու կուրապաղատ նշանակել Համազասպին, այդ բանը լսելով՝ Հայոց ամիրապետը առհասարակ կոտորում է բոլոր պատանդներին՝ մոտավորապես հազար յոթ հարյուր յոթանասունհինգ հոգու։ Եվ այդ օրվանից հետո Աստծու կողմից խառնակիչ ոգի է ուղարկվում իսմայելյան բոլոր բանակների մեջ, ու ամեն մարդ սուրը ազգրին կապած, հարձակվում է իր ընկերոջ վրա և անհամար կոտորած տալով՝ [նրանք] սպանում են միմյանց։ Նրանք նաև սպանում են իրենց ամիրապետին և տեղը մեկ ուրիշին նշանակում։ Ապա իսմայելյան զորքը, որ գտնվում էր Եգիպտոսում, միաբանվելով Կոստանդին կայսեր հետ, հավատում է Քրիստոսին, և մոտավորապես տասնվեց հազար մարդ է մկրտվում։ Այնուհետև Մավին հզորանալով ու սպանելով այդ նույն ամիրապետին՝ ինքն է թագավորում բոլոր հագարացիների վրա՝ խաղաղություն հաստատելով երկրի բոլոր ծայրերում։

Բայց կայսրի կողմից կուրապաղատությունը ստանալուց երեք տարի հետո ավարտվում է Համազասպի կյանքը, և նա վախճանվելով թաղվում է իր հայրերի մոտ։ Հետո Ներսես մեծ հայրապետը Հայոց նախարարների հետ միասին Մավի ամիրապետին խնդրում է Հայոց պետության գլուխ կարգել Գրիգոր Մամիկոնյանին, որը որպես պատանդ էր մնում հենց նրա մոտ։ Իսկ ամիրապետը նրա խնդրանքը կատարում է ուրախությամբ և իշխանական աթոռը տալիս է Գրիգորին ու նրան նշանակում Հայաստանի հրամանատար։ Վերջինս, որ բարեպաշտ ու աստվածավախ մարդ էր, առաջնորդ դարձավ բազմապատիկ կարգ ու կանոնի, ուղղությունների, շինարարության, խաղաղության, ապահովության և բարեկարգ այլ գործերի։ Աշխարհում, իբրև թե անապատում լինելով, նա հետևում էր ամեն տեսակի արդար աշխատանքների։ Իսկ հետո, երբ Ներսես մեծ հայրապետը իր առաջնորդարանում մնաց քսան տարի ու հեռացավ այս կյանքից, նրա մարմինը դրվեց այն գերեզմանոցում, որն ինքն էր կառուցել այն հոյակապ քավարանի հյուսիսային կողմում, որ աթոռի արժանիքին համապատասխան նրա նախահայրն էր կառուցել։ Եվ այդպես հայրերի մեջ երևալով ավելի երջանիկ, հռչակավոր ու հոյակապ՝ նա ժամանեց անմահ կյանքի գերեզմանատունը և դասվեց առաքելական դասի շարքին։ Մեծն Ներսեսից հետո հայրապետական աթոռին հաջորդում է Անաստասը, որը Ակոռի գյուղից էր, որն էլ գտնվում է Մասյացոտնում։ Անաստասը, մեծն Ներսեսի սենեկապետը լինելով, Ներսեսի հրամանով հրաշակերտ

ցու շինուածոյ հրաշակերտ եկեղեցւոյն գտանէր հրամանաւ Ներսեսի, մինչ էր նա 'ի հալածանս 'ի գաւառին Տայոց։

Զայսու ժամանակաւ բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնաղագեղ եկեղեցին, որ 'ի դաստակերտին Արուճ՝ շինէ զնա ստիպով, երկնային իմն ճեմարան յարդարեալ 'ի վերայ երկրի։ Եւ 'ի հարաւոյ կողմանէ դնէ զարքունիս իւր յեզր քարաժայռ ձորակին, յորում բղխէ ականակիտ աղբիւր պղպջակեալ ընդ քարածերպս վիմարդ քարանցն. որ զեզերս ունի իբրև զպսակ պատուարի։ Եւ ապա հաստահեղոյս քարամբք և կրով պարըսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ։ Շինէ նաև նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց, յորում և եկեղեցի պայծառապաճոյճ 'ի նմա յարդարեալ ըստ յարևելից կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից զնա հաստատէ 'ի փրկութիւն հոգւոյ իւրոյ։

Բայց մեծն կաթողիկոսն Անաստաս շինէ զպայծառապաճոյճ եկեղեցին 'ի հայրենի բնակութեան իւրում 'ի վանս դաստակերտին Ակոռոյ՝ կացորդ զնա յարդարեալ քահանայական ուխտի միակրօնից և այլոց ևս կղերց եկեղեցւոյ 'ի պաշտօն աստուածային խորանին և 'ի տածողութիւն հանգստեան հիւրոց և տնանկաց և աղքատաց։

Բայց Դաւիթ, որ էր 'ի պարսիկ տոհմէ յազգէ թագաւորաց՝ աստանօր եկեալ ա՛ռ իշխանն մեծ Գրիգոր՝ խնդրէ առ 'ի նմանէ տալ իւր զքրիստոսական դրոշմն, զոր և խնդութեամբ իսկ զնա ընկալեալ՝ հրամայէ կաթողիկոսին Անաստասայ տալ նմա զկնիք մկրտութեանն սրբոյ։ Եւ վասն զի յառաջագոյն Սուրհան անուանիւր. ապա Իշխանն մեծ՝ ընկալեալ զնա 'ի ջրոյ սուրբ աւազանին, Դաւիթ զնա յորջորջէ յանուն հօր իւրոյ. և տայ բնակութիւն նմա զգիւղն Զագ 'ի նահանգին Կոտայից, որ զկնի ամաց իսկ 'ի Դվին քաղաքի ընկալաւ զմարտիրոսական պսակն։ Յայնմ ժամանակի ասեն լինել զկռիւն, որ 'ի քաղաքագիւղն Երևանի, զոր և բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս որ նախ քան զմեզ զնա պատմագրեցին։

Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն Հայկականս տոմարի, զի թերևս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել. զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ յեղանակք ժամանակաց։ Վասն որոյ և առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ՝ որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր։ Իսկ նորա ջան 'ի վերայ եդեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկականս տոմարի. զի բարեձևագունից ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի՛ կարօտասցուք գալ 'ի

եկեղեցու կառույցի վերակացուն էր, քանի դեռ նա [Ներսեսը] Տայոց գավառում հալածանքի մեջ էր։

Այդ ժամանակներում Գրիգոր Մամիկոնյան բարեպաշտ իշխանը, աստվածային նախախնամությամբ հիմնադրելով չքնաղագեղ եկեղեցին, որը գտնվում է Արուճ դաստակերտում, շուտով կառուցում է այն՝ երկնային այդ մեծ տաճարը պատրաստելով երկրի վրա։ Իր արքունիքը հիմնադրում է հարավային կողմում, քարաժայռ ձորակի եզրին, որտեղից բխում էր ականակիտ աղբյուրը՝ պղպջալով ժայռերի քարածերպերով, որի եզրերը պատված էին պսակի ձևով։ Եվ ապա հաստահեղույս քարերով ու կրով պարսպելով՝ նա հիմնում է իր բնակարանը։ Կրոնական դասի համար շինում է նաև վանք, իսկ Եղիվարդ մեծ դաստակերտի արևելյան կողմում կառուցում է պայծառազարդ եկեղեցի և կուսակրոնների համար կացարաններ՝ իր հոգու փրկության համար։

Բայց Անաստաս մեծ կաթողիկոսը իր հայրերի բնակավայրում կառուցում է պայծառազարդ եկեղեցի, իսկ Ակոռի դաստակերտի վանքում բարեկարգում քահանայական միաբանների և եկեղեցու այլ կղերների կացարանները՝ աստվածային եկեղեցու պաշտամունքի և հյուրերի, անտունների, աղքատների հանգստի համար։

Իսկ Դավիթը, որ պարսիկ տոհմից էր, թագավորական ցեղից, գալով մեծ իշխան Գրիգորի մոտ՝ նրանից խնդրում է տալ իրեն քրիստոսական դրոշմը։ Նրան ուրախությամբ ընդունելով՝ [Գրիգոր իշխանը] Անաստաս կաթողիկոսին հրամայում է տալ նրան սուրբ մկրտության կնիքը։ Եվ որովհետև նախապես նրա անունը Սուրհան էր, մեծ իշխանը, նրան վերցնելով սուրբ ավազանի ջրից, նրան իր հոր անունով կոչում է Դավիթ։ Նրան բնակության տեղ է տալիս Զագ գյուղը, որը Կոտայքի նահանգում էր։ Եվ նա տարիներ անց Դվին քաղաքում ընդունեց մարտիրոսական պսակը։ Նաև ասում են, թե այն ժամանակ Երևան քաղաքագյուղում կռիվ է եղել, և այդ պատերազմի հանգամանքները մեզանից առաջ քեզ, [ընթերցող], բավականաչափ ուսուցանում են մեր մյուս պատմագիրները։

Իսկ Անաստաս հայրապետը հոգ է տանում հայկական տոմարի մասին, որպեսզի թերևս կարողանա մյուս ազգերի նման անշարժ տոմար հորինել, որպեսզի միշտ անշարժ լինեն տարեկան տոները և փոփոխական տարվա եղանակները։ Դրա համար իր մոտ է կանչում Անանիա Անեցուն, որը հմուտ ու տեղյակ էր այդ արվեստին, և նրան հրամայում է կատարել իր պահանջը։ Իսկ նա ջանք է թափում և ըստ բոլոր ազգերի կանոնների հորինում է հայկական տոմարը, այնպես որ մերը համեմատելով ոմանց բարեվայելուչ տոմարի հետ՝ կարիք չըզ-

զուգաւորութիւն Հռովմայեցւոց։ Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց։ Անփոյթ զկնի եկելոցն այսմիկ արարեալ՝ և զառաջին մշտախաղաց շրջագայեալ կարգն կալեալ։ Յետ այսորիկ Իսրայէլ յՈգմսոյ գեղջէ յաջորդէ զաթոռ հայրապետութեան։ Յաւուրս սորա զԲառաբայ ոմն զօրագլուխ զօրուն Տաճկաց որ 'ի Հայք՝ վանեալ վատնէ կոտորմամբ սաստիկ Ներսեհ իշխան Վրաց՝ փախստեայ զնա արարեալ։ Իսկ Իսրայէլ կացեալ յաթոռ հայրապետութեան ամս տասն՝ վախճանի։ Եւ զկնի նորա Սահակ կայ յաթոռ հայրապետութեանն, որ հայրենեօք էր 'ի Զորափորոյ յարքունաշէն գեղջէ և մայրենեօք 'ի Մաղազ գաւառէ 'ի գեղջէ Բերդկայ։ Սա նախ կարգեալ էր յեպիսկոպոսութիւն Ռոտոկաց և զկնի ապա կոչեցաւ յաթոռ սրբոյն Գրիգորի։ Իսկ ապա յեօթներորդում ամի աթոռակալութեան սորա պատերազմ սաստիկ յայնմ մարզէ խազրաց 'ի վերայ սաստկացեալ լինէր մեծ իշխանին Գրիգորի, որ և սպանաւ իսկ՝ և եղաւ ընդ հարս իւր։ Եւ յայնմհետէ ապա խաղաղութիւնն վրդովեցաւ և սասանումն սաստիկ զՀայաստանեայս պատեալ պաշարեաց։

Զկնի սորա պայազատէ զիշխանութիւնս Հայոց Սմբատ Բագրատունի՝ որդի Սմբատայ. և յայսմ վայրի Մրուան ոմն յիսմայէլեան տոհմէ ոստիկան 'ի Հայս առաքեալ՝ մարտ ընդ բոլորից իսկ ամրոցաց Հայոց դնէր. և զորս միանգամ յինքն գրաւէրն առ հասարակ քանդեալ աւերեալ 'ի վայր կործանէր։ Իսկ Սևան կղզի՝ որ 'ի ծովակին Գեղամայ, թէպէտև յիսկզբան նուագի անդ ոչ ըմբռնեցաւ 'ի ձեռս նորա. սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ 'ի ձեռս նորա։ Եւ որք միանգամ բնակեալք կային յամրոցի անդ՝ գերի առեալ տանէր, և զկապուտ կողոպուտսն յաւարի առեալ՝ սպառսպուռ քանդէր աւերէր զամրոցն։ Եւ զկնի Մահմէտի ա՛յլ ոստիկան 'ի Հայս առաքեցաւ՝ Աբդլլահ անուն, այր ժանտ ժպիրհ և ապարասան և յաւէտ չարաբարոյ, որ զկեղծաւորութիւնն իբրև զթոյնս իժի յինքն բունեալ ունէր և կալանաւոր կապանօք չարչարէր զիշխանս և զազատս աշխարհիս Հայոց, և յաւարի առնոյր զկարասի և զստացուածս բազմաց։ Ապա և զմեծն Սահակ կապեալ 'ի շղթայս՝ տայր տանել 'ի Դամասկոս, ընդ նմին և զիշխանն Հայոց՝ զՍմբատ որդի Սմբատայ։ Եւ առհասարակ ապա զամենայն եկեղեցիս Քրիստոսի 'ի բոլոր զարդուց կապուտ կողոպուտ թողոյր. և յարտօսր կականման և 'ի սուգ և 'ի տրտմութիւն զծերս և տղայս բերէր։ Այս Աբդլլահ զնորահաւատն Դաւիթ, որ յառաջագոյն յիշատակեցաւ առ 'ի մէնջ՝ ըմբռնեալ շարաշար հարուածովք և կապանօք և բանտիւ զնա խոշ-

գանք հավասարվելու հռոմեացիների տոմարին։ Եվ մինչդեռ մեծն Անաստասը խորհում էր եպիսկոպոսների ժողովով եղածը հաստատել, վախճանվում է վեց տարի հայրապետական աթոռին նստելուց հետո։ Հետո եկողների կարգը անտեսելով՝ նա պահում է առաջին մշտաշարժ կարգը։ Դրանից հետո հայրապետական աթոռին հաջորդում է Իսրայելը, որը Ոթմսո գյուղից էր։ Սրա օրոք տաճիկների[43] զորագլուխ ոմն Բառաբային, որը գտնվում էր Հայաստանում, սաստիկ կոտորածով քշում ու հյուծում է Վրաց Ներսեհ իշխանը՝ նրան մատնելով փախուստի։ Իսկ Իսրայելը, հայրապետական աթոռին նստելով տասը տարի, վախճանվում է։ Նրանից հետո հայրապետական աթոռին նստում է Սահակը, որը հոր կողմից Զորափոր արքունաշեն գյուղից էր, իսկ մոր կողմից՝ Մաղազ գավառի Բերդկաց գյուղից։ Այն նախ մտնում էր Ռոտոկքի եպիսկոպոսության մեջ, իսկ հետո կոչվեց սուրբ Գրիգորի աթոռի անունով։ Այնուհետև սրա աթոռակալության յոթերորդ տարում սաստկացել էր խազիրների պատերազմը Գրիգոր մեծ իշխանի դեմ, որտեղ սպանվեց նա և թաղվեց իր հայրերի մոտ։ Դրանից հետո խաղաղությունը խախտվեց, և սաստիկ սասանումը պատեց ու պաշարեց հայաստանցիներին։

Նրանից հետո Հայոց իշխանությանը տիրում է Սմբատ Բագրատունին՝ Սմբատի որդին։ Այդ ժամանակ իսմայելյան տոհմից Մրվան անունով մի ոստիկան գալով Հայաստան՝ կռիվ է սկսում Հայոց բոլոր ամրոցների դեմ։ Եվ նա ինչ որ գրավում էր, ամբողջովին քանդում, ավերում ու կործանում էր։ Իսկ Սևան կղզին, որը գտնվում է Գեղամա ծովակում, թեպետև առաջին անգամ չընկավ նրա ձեռքը, սակայն մի երկու տարի անց մատնվեց նրա ձեռքը։ Եվ ովքեր բնակվել էին այդ ամրոցում, նրանց գերի է տանում և կողոպտելով ու թալանելով իսպառ քանդում ու ավերում է ամրոցը։ Եվ Մահմեդից հետո Հայաստան առաքվեց Աբդլահ անունով մեկ այլ ոստիկան՝ դաժան, անօրեն, կատաղած և խիստ չարաբարո մի մարդ, որը կեղծավորությունը իր մեջ դրած ուներ իբրև իժի բույն և կալանավորի կապանքներով չարչարում էր Հայոց աշխարհի իշխաններին ու ազնվականներին և թալանում շատերի ունեցվածքն ու հարստությունը։ Հետո մեծն Սահակին շղթայակապ տանել է տալիս Դամասկոս, նրա հետ նաև Հայոց իշխան Սմբատին՝ Սմբատի որդուն։ Նա քրիստոնեական բոլոր եկեղեցիներն առհասարակ թողնում է առանց զարդերի և ծերերին ու երեխաներին գցում է լացուկոծի, սգի ու տրտմության մեջ։ Այս Աբդլահը նորահավատ Դավթին, որը վերևում հիշատակվեց մեր կողմից, բռնելով խոշտանգում է շարաշար հարվածներով, կապանքներով ու բանտարկելով՝

տանդէր վասն առ 'ի Քրիստոս հաւատոցն, յիւր կորստական խորխորատն զնա հրապուրէր արկանել. որում ոչ հաւանեալ և քաջապէս ընդդէմ վառեալ սուրբ ծերունին՝ 'ի փայտի զնա բեռակապ պնդէր, և նետաձիգ 'ի սիրտ սրբոյն արարեալ՝ 'ի Քրիստոս զհոգին աւանդէր։ Զոր տարեալ եպիսկոպոսաց և քահանայից՝ հանդուցին զմարմին նորա մերձ 'ի վկայարան սրբոյն Յիզտբուզտի։

Զայսու ժամանակաւ լինի ապա կռիւն 'ի Վարդանակերտի և բնաջինջ կոտորումն Իսմայէլեան բանակին. վասն որոյ ցարդ ևս բան առ Հազարացիսն ըստ իւրեանց աղխատրոյզ բառին պատմի, թէ «Վարդանակերտ առիւ մի՛ յիշեսցի մեզ։» Եւ վասն զի յոյժ տագնապեալ տարակուսեալ տառապեալ նեղեցան մեծամեծք Հայոց, ապա յուսացեալ յերկնային այցելութիւնն՝ ընդդէմ դարձան ասպատակաց հինից Իսմայէլեան զօրուն։ Եւ վասն զի Ոգբայ ոմն զօրապետ մեծ հանդերձ զօրօք բազմօք շրջէր ընդ կողմամբք Վանանդայ՝ անդ ապա հասեալ 'ի վերայ Կամսարականն հանդերձ ազատօքն Վանանդայ, կոտորեցին սպառասպուռ զզօրս նորա և ինքն փախստեայ անցեալ գնայր առ ամիրապետն իւր։ Եւ անդ ապա բազում զօրս ընդ իւր գումարեալ 'ի զէնս 'ի զարդս և ի տէգ նիզակի՝ և անհնարին դառնութեամբ խրոխտայր գալ առնուլ զվրէժս 'ի Հայոց զիւրոյ զօրուն հարելոյ՝ հրդեհել, քանդել կործանել զեկեղեցիս Հայոց, և առհասարակ գերել և կերակուր տալ անիրաւ սրոյ։ Իսկ սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ դեռ ևս կայր կենդանի 'ի Դամասկոս. իբրև լուաւ զանհնարին սպառնալիսն Ոգբայի՝ խնդրէր հրաժեշտ 'ի նմանէ երթալ առ նա, թերևս հնար լիցի դարձուցանել զնա յանհնարին դառնութենէ մտացն։ Իսկ 'ի հրամայելն նորա երթալ առ ինքն՝ իբրև շոգաւ 'ի Խառան, իսկ և իսկ հիւանդացաւ սուրբ կաթողիկոսն հիւանդութիւն մեծ։ Եւ ապա գրէ նամակ աղաչանաց առ Ոգբայ իւրով իսկ ձեռամբ բազում թախանձանօք և աղերսալի պաղատանօք, յուշ ևս առնելով Ոգբայի զհասարակաց մահ մարմնոյ, և թէ զկնի գալոց է և նա ամենայն մահկանացուաց և 'ի տապանի վաղվաղակի դնելոց. այլ և զանհնարին դառնութիւնն դժոխոց տարտարոսի նմա ընդ ուշի կապեալ՝ դարձեալ և զօտարամահն իւր լինել 'ի դաշնաւորութիւն նմա բերեալ։ Եւ այսպիսի զղջացուցիչ բանիւք համոզեալ աղաչէր դառնալ 'ի խորհրդոց չարաց և չառնել զայն ինչ, զոր հանդերձեալն էր առնել՝ զապիրատ մտածութիւնսն 'ի վերայ Հայաստանեայցս։ Եւ ապա զայն հրովարտակն հրամայէ յետ վախճանի իւրոյ դնել յաջոյ ձեռին իւրում, զի ինքնին Ոգբայ եկեալ առցէ 'ի ձեռաց նորա՝ թերևս զղջացցի չգործել զանօրէն մտածութիւնսն իւր։ Իսկ ոստիկանն Ոգբայ իբրև

Քրիստոսին հավատալու համար։ Եվ դրդում էր նրան գցել իր կորստյան խորխորատը։ Սուրբ ծերունին չի համաձայնվում դրան և կռվում է քաջաբար, այդ պատճառով էլ սրբին զամում է փայտի վրա ու նետահարում նրա սիրտը, և [Դավիթը] Քրիստոսին է ավանդում իր հոգին։ Եպիսկոպոսներն ու քահանաները տարան նրա մարմինը և թաղեցին սուրբ Հիզտբուզիտի վկայարանի մոտ։

Այդ ժամանակներում Վարդանակերտում կռիվ է լինում, և բնաջինջվում է իսմայելյան բանակը։ Դրա համար էլ հազարացիները ցարդ իրենց թանձր լեզվով պատմում են, թե «Վարդանակերտի կռիվը[41] թող չհիշվի մեզ մոտ»։ Եվ քանի որ Հայոց մեծամեծ մարդիկ, խիստ տագնապելով, տարակուսելով, տառապելով նեղվեցին, ապա հույսները դնելով երկնային նախախնամության վրա՝ հակառակ կանգնեցին իսմայելյան զորքի ավազակային հարձակումներին։ Եվ երբ որովհետև ոմն Ոգբա մեծ զորապետը մեծ զորքով շրջում էր Վանանդի կողմերում, Կամսարականը Վանանդի ազնվականների հետ միասին հարձակվում է նրա վրա և իսպառ կոտորում նրա զորքը, իսկ նա փախչում գնում է իր ամիրապետի մոտ։ Եվ այնտեղ մեծ զորք հավաքելով ու զինելով զենքով, զարդարանքով և երկար տեգերով՝ նա մեծ զայրույթով հոխորտում էր գնալ Հայաստան և առնել իր կոտորված զորքի վրեժը՝ հրդեհելով, քանդելով հայոց եկեղեցիները, կործանելով և առհասարակ գերելով ու անիրավ սրի մատնելով։ Իսկ Հայոց սուրբ կաթողիկոս Սահակը դեռևս ողջ էր Դամասկոսում և երբ լսեց Ոգբայի խիստ սպառնալիքի մասին, նրա մոտ գնալու հրաման էր խնդրում, թերևս հնարավոր լինի նրան ետ դարձնել այդ չափազանց դաժան մտադրությունից։ Իսկ նա երբ հրաման տվեց գնալու իր մոտ, և սուրբ կաթողիկոսը երբ գնաց Խառան, իսկույն հիվանդացավ ծանր հիվանդությամբ։ Եվ ապա նա իր իսկ ձեռքով աղաչալից նամակ է գրում Ոգբային՝ բազում թախանձանքներով ու աղերսալի պաղատանքներով, նրան հիշեցնելով նաև մարմնի սովորական մահը, որ հետո այն հասնելու է բոլոր մահկանացուներին և անմիջապես գնելու է տապանի մեջ, հիշեցնելով նաև դժոխքի խիստ դառնությունը, ինչպես նաև օտար տեղում իր մեռնելը նրա համար որպես մեղմացնող փաստ բերելով։ Եվ խրատական այսպիսի խոսքերով համոզում-աղաչում է նրան ետ դառնալ իր չար խորհրդից և չկատարել իր ապիրատ մտադրությունը, ինչ պատրաստել էր անել Հայաստանի նկատմամբ։ Եվ ապա հրամայում է իր մեռնելուց հետո այդ հրովարտակը դնել իր աջ ձեռքում, որպեսզի ինքը՝ Ոգբան, գալով վերցնի իր ձեռքից և թերևս զղջա ու չկատարի իր անօրեն մտադրությունները։ Իսկ ոստիկան Ոգբան, երբ

լուաւ զմահ սրբոյն Սահակայ՝ վաղվաղակի առաքեաց դեսպակս հրամայէ ոչ թաղել զնա, մինչ զի ինքն իսկ երթիցէ։ Եւ իբրև չոգաւ՝ վաղվաղակի առ դիապատիկ մարմին առնն Աստուծոյ մտեալ, ձեռն նմա շարժէր ըստ օրինին իւրոց իբրև կենդանւոյ և ողջունէր զնա 'ի լեզու իւր՝ Ս ա լ ա մ ա լ է ք ասելով։ Իսկ ապա Հոգւոյն ազդումն զձեռն սրբոյն, որ անշնչութեամբն էր խափանեալ՝ շարժեաց ընդդէմ ոստիկանին 'ի պատճառս աղերսանաց. ընդ որ յաւէտ 'ի զարմացման եղեալ և առեալ զնամակն 'ի ձեռաց նորա և ընթերցեալ՝ ասէ. «Այո՛՝ խնդիր քո կատարեալ է՝ պատուական այրդ Աստուծոյ։» Եւ նամակ 'ի նախարարս Հայոց գրեալ և հանդերձ սուրբ մարմնով հայրապետին 'ի Հայս առաքեալ բազում պատուով. և թողեալ 'ի բաց զյանցանսն զոր առ նա գործեցին, և ինքն ընդ կրունկն դարձեալ՝ դառնայ 'ի տեղի իւր։ Եւ այսպէս զմեռելութիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւնս, և 'ի սադրելոյ աղօթից նորա փրկութիւն մեծ ծագեաց աշխարհիս մերում։ Իսկ իբրև եկաց մեծն Սահակ յաթոռ հայրապետութեան ամս իէ՝ վախճանեցաւ։

Զկնի նորա յաջորդէ զաթոռ հայրապետութեան Եղիա 'ի գեղջէ Արճիշոյ որ յԱղիովտի։ Յաւուրս յայսմիկ էր ամիրապետ Իսմայէլեան Աբդլմէլէք յետ ձե թուականին իւրեանց։ Իսկ ապա զօրք նորա որ 'ի Հայք՝ հուր 'ի մեզ վառեցին, սատանայ 'ի նոսա փչելով զբարկութիւնն. և ապա ստահամբաւ դաւողութեամբ սնոտի յուսով և խնդացուցանող բարի խոստմամբք զամենեսեան 'ի մի վայր գումարէին զաղատս և զհեծելազօր գունդս, և զանուանսն նոցա 'ի դիւանն մատուցանէին իբր թէ բաշխել նոցա զդահեկանաց տարեւորն։ Եւ ապա զպատերազմական զէնսն 'ի նոցանէ 'ի բաց առեալ՝ 'ի տաճարն Աստուծոյ զնոսա արկանէին 'ի Նախչաւան քաղաքի. և զդուրսն յետ կոյս փակեալ աղիւսով՝ 'ի բաց պնդեալ ունէին զելիցն վայրս։ Իսկ նոցա իմացեալ զդաւաճանութիւնն՝ զմանկանցն զձայնն որ 'ի հնոցին, երգս առեալ գոչէին։ Իսկ չար դահճացն զվերնայարկս եկեղեցւոյն քակեալ և լուցեալ հրով՝ առաւել քան զԲաբիլոնին 'ի վեր զբոցն բարձրացուցանէին այրեցողական նիւթովն։ Եւ այնպէս ապա հրդեհակէզ եղեալ առաստաղ փայտակերտ եկեղեցւոյն՝ և հրացեալ կղմինդրն 'ի վերուստ 'ի վայր հոսեալ մխախառն հրովն, վախճան մահու առհասարակ 'ի վերայ ամենեցուն նոցա ածէր. և նոցա անդադար գոհաբանութիւն 'ի սպառել ոգւոցն կացեալ դադարէր։ Իսկ վրիժագործ այլազգիքն յապահովս կացեալք յերկիւղէ քաջացն զօրաց և զմնացեալ ընտանիս հրակիզելոցն գերի առեալ ածէին 'ի Դուին քաղաք. և անտի յուղարկեալ տանէին 'ի Դամասկոս։

լսեց սուրբ Սահակի մահը, իսկույն բանագնաց[45] ուղարկեց՝ հրամայելով չթաղել նրան, մինչև որ ինքը անձամբ չգնա։ Իսկ երբ գնաց, անմիջապես մոտեցավ Աստծու մարդու դիապատված մարմնին, ձեռքը շարժեց իրենց սովորության համաձայն որպես կենդանի մարդու և ողջունեց նրան իրենց լեզվով՝ Սալամալեք ասելով։ Իսկ հետո Հոգու ազդեցությամբ ոստիկանի դիմաց սուրբը աղերսանքով շարժեց իր անշընչացած ձեռքը, որի վրա է՛լ ավելի զարմանալով և նրա ձեռքից նամակն առնելով ու ընթերցելով՝ [Ոգբան] ասում է. «Այո՛, քո խնդրանքը կատարված է, Աստծու պատվական այր»։ Եվ Հայոց նախարարներին նամակ գրեց՝ հայրապետի սուրբ մարմնի հետ մեծ պատվով Հայաստան ուղարկելով ու ներելով այն հանցանքները, որոնք նրանք գործել էին իր դեմ, և ինքը ետ դառնալով վերադարձավ իր տեղը։ Եվ այդպիսով Աստված նրա մահը մեր ողջությունից ավելի պատվական համարեց, և նրա աղոթքներով մեր աշխարհին մեծ փրկություն ծագեց։ Իսկ մեծն Սահակը հայրապետական աթոռին իէ [27] տարի նստելուց հետո վախճանվեց։

Նրանից հետո հայրապետական աթոռին հաջորդում է Եղիան, որը Աղիովտի Արճեշ գյուղից էր։ Սրա օրոք իսմայելյան ամիրապետը Աբդըլմելեքն էր, իրենց թվականության ձե [85] թվականից հետո։ Իսկ հետո Հայաստանում գտնվող նրա զորքերը, որոնց վրա սատանան բարկություն փչեց, մեզանում հուր վառեցին։ Եվ ապա ստահամբավ խաբեությամբ սնոտի հույս և ուրախացնող բարիք խոստանալով, բոլորին՝ ազնվականներին, հեծելազոր գնդերին, մի վայրում հավաքեցին և նրանց անունները դիվանում գրանցեցին՝ իբր թե նրանց տարեկան դահեկաններ բաշխելու համար։ Եվ ապա պատերազմական զենքերը նրանցից խլելով նրանց գցում էին Նախջավան քաղաքում գտնվող Աստծու տաճարը՝ ետևի կողմից աղյուսով փակելով դռները, նաև ամրացնելով ելքի տեղերը։ Իսկ նրանք, հասկանալով դավաճանությունը և [լսելով] հնոցում եղած մանուկների ձայնը, երգի եղանակով գոչում էին։ Բայց չար դահիճները, եկեղեցու վերնահարկը քանդելով ու հրդեհելով, բոցը Բաբելոնի բոցից ավելի վեր էին բարձրացնում դյուրավառ նյութերի միջոցով։ Եվ այդպես այրելով եկեղեցու փայտակերտ առաստաղը, և կրակ կտրած կղմինդրը ծխախառն հրի հետ միասին վերևից վայր հոսելով՝ առհասարակ բոլորին մահ էր բերում, և նրանց անդադար գոհաբանությունը դադարում էր շունչները փչելիս։ Իսկ վրիժագործ այլազգիները, ապահով մնալով քաջ զորքի երկյուղից և գերի վերցնելով հրկիզված ընտանիքներից մնացածներին՝ բերում էին Դվին քաղաք, և այնտեղից ճանապարհում դեպի Դամասկոս։

Եւ այսպէս աշխարհս մեր ծովացաւ արտասուօք և լցաւ բազում ողբովք։ Իսկ յետ Աբդլմէլիքայ Վլիթ՝ որդի նորա լինէր ամիրապետ և յետ Վլիթայ՝ Սղիման եղբայր նորուն սակաւակեցութեամբ։ Եւ յետ նորա ապա Ոմար. յորում ժամանակի Վահան Գողթան տէր շարշարեալ իսկ 'ի նմին Ոմարայ՝ և բազում նահատակութիւնս վասն անուանն Քրիստոսի ցուցեալ, յԹուծափ քաղաքի Շամայ պսակի 'ի Քրիստոսէ անթառամ պսակաւն։ Բայց յաւուրս մեծ հայրապետին Եղիայի Ներսէս ոմն, որ յայնժամ եպիսկոպոսապետ էր Աղուանից՝ 'ի հրապոյրս ամբարշտութեան զինքն բերեալ, շարադաւան դառնէր... ընդ նմին և տիկին ոմն համաձայնեալ նմա, որ յայնժամ հրամանատար Աղուանից էր։ Եւ այսպէս երկաքանչիւրք նոքա միաբանեալ՝ ջանահնար լինէին զբոլոր աշխարհն ածել 'ի մարդապաշտ հայհոյութիւն տօմարին Լեոնի։ Իսկ նախարարք աշխարհին իմացեալք՝ զեկուցին մեծի հայրապետին Եղիայի, որոյ գուն 'ի վերայ գործեալ ոգւով չափ և բազում նամակս հաւատոյ աստուածական պատգամօք առ նոսա առաքեալ երկիցս և երիցս անգամ, ոչ ևս զղջացան դառնալ 'ի մարդապաշտ մոլորութենէ իւրեանց։ Ապա մեծն Եղիա զիմաստութիւն և զընդարձակութիւն սրտի իւրեանց։ Ապա մեծն Եղիա զիմաստութիւն և զընդարձակութիւն սրտի 'ի գործ արկեալ՝ գրէ թուղթ առ ամիրապետն Իսմայէլեան Ոմար, զեկուցանելով նմա, թէ գոյ աստ յաշխարհիս մերում եպիսկոպոս մի և նոյնգունակ տիկին մի զուգակից ընդ եպիսկոպոսին, որք 'ի բաց բերեալ են 'ի հնազանդութենէ մեծի տէրութեանդ ձերոյ և ոչ միաբանին ընդ մեզ, որ միշտ զանուն քո յիշատակեալ քարոզեմք յաղօթս մեր. այլ զթագաւորն Հոռոմոց քարոզեն, 'ի նա զաշխարհս մեր հնարին դարձուցանել։ Եթէ ոչ աճապարեսցես բառնալ զնոսա 'ի միջոյ աստի մերմէ, ընդհուպ իսկ հատուածեալ 'ի Հոռոմս ձեռնատուր լինին 'ի սակս հարկաց և յամենայն մասունս գործոց։

Զայս ապա ընթերցաւ ամիրապետն՝ շնորհակալութեամբ մեծաւ պատուէ զառաքեալ դեսպանն մեծի հայրապետին, և ինքն յղէ զոմն ներքինապետ իւր՝ վաղվաղակի առ ինքն հրամայէր հասուցանել զներսէսն հանդերձ տիկնաւն։ Որոյ եկեալ և ըմբռնեալ զերկաքանչիւր զնոսա և կապեալ երկաթի շղթայիւք և հեծուցեալ յուղտս՝ առնու գնայ առ ամիրապետն։ Եւ այսպէս խոհականաբար 'ի ձեռն մարմնական կրից նոցա զհոգւոյ մահ 'ի բաց վարատեալ՝ բառնայ զչարն 'ի միջոյ մեծ հայրապետն Եղիա։ Եւ ապա այլ եպիսկոպոսապետ 'ի տեղի չարափառին Ներսեսի ձեռնադրեալ հաստատէր։ Եւ ապա սորա լցեալ զկէտ հայրապետութեան ամս չորեքտասան՝ վախճանի։

Եւ զկնի սորա յաջորդէ զաթոռն սուրբ՝ մեծ իմաստասէրն Յով-

Եվ այդպիսով մեր աշխարհը արտասուքի ծով դարձավ և լցվեց մեծ ողբով։ Աբդլմելեքից հետո ամիրապետ է լինում նրա որդի Վլեիթը, նրանից հետո՝ կարճ ժամանակով նրա եղբայր Սղիմանը, նրանից հետո՝ Ոմարը, որի ժամանակ Գողթնի տեր Վահանը, չարչարանքի ենթարկվելով նույն Ոմարի կողմից և հանուն Քրիստոսի ցուցաբերելով մեծ քաջություն, Շամի Թուծափ քաղաքում Քրիստոսի կողմից պսակվում է անթառամ պսակով։ Բայց Եղիա մեծ հայրապետի օրոք ոմն Ներսես, որն այն ժամանակ Աղվանքի եպիսկոպոսապետն էր, հրապուրվելով ամբարշտությամբ, հերետիկոս է դառնում... և մի տիկին համաձայնում է նրա հետ, որն այն ժամանակ Աղվանքի իշխանն էր։ Եվ այդպիսով նրանցից յուրաքանչյուրը միաբանվելով՝ ձար էր փընտրում ամբողջ աշխարհը դցել Լեոնի տոմարի մարդապաշտ շարախոսության մեջ։ Այդ մասին իմանալով՝ երկրի նախարարները զեկուցեցին Եղիա մեծ հայրապետին, որը հոգաշափ ջանք թափելով երկու-երեք անգամ նրանց ուղարկում է հավատի նամակներ աստվածային պատգամներով, բայց նրանք չզղջացին և ետ չդարձան իրենց մարդապաշտ մոլորությունից։ Ապա մեծն Եղիան, գործի դնելով իր իմաստությունն ու լայնասրտությունը, թուղթ է գրում իսմայելյան ամիրապետ Ոմարին՝ նրան զեկուցելով, թե այս մեր աշխարհում կան մի եպիսկոպոս ու նրա նման, նրան զուգակից մի տիկին, որոնք դուրս են եկել ձեր տերության ենթակայությունից և չեն միաբանվում մեզ հետ, [մենք], որ միշտ քո անունը մեր աղոթքներում հիշատակելով ենք քարոզում, իսկ նրանք քարոզում են հռոմեական թագավորին և ձգտում են մեր աշխարհը նրան ենթարկել։ Եթե չաճապարես նրանց վերացնել մեր միջից, հարկերի և բոլոր գործերի մեջ մեզնից բաժանվելով՝ նրանք անձնատուր կլինեն հռոմեացիներին։

Ընթերցելով այս գրությունը՝ ամիրապետը մեծ շնորհակալությամբ պատվում է մեծ հայրապետի առաքած սուրհանդակին, և ինքն է ուղարկում իր մի ներքինապետին՝ հրամայելով անմիջապես իր մոտ հասցնել Ներսեսին տիկնոջ հետ միասին։ Սուրհանդակը գալով բռնում է նրանցից յուրաքանչյուրին, կապում է երկաթյա շղթաներով, նստեցնում է ուղտերի և առնում գնում է ամիրապետի մոտ։ Եվ այդպես խոհականաբար Եղիա մեծ հայրապետը, նրանց մարմնական կրքերի միջոցով նրանցից հեռացնելով հոգու մահը, մեջտեղից վերացնում է չարիքը։ Եվ ապա հերետիկոս Ներսեսի փոխարեն ձեռնադրում է այլ եպիսկոպոսապետ։ Այնուհետև, երբ լրանում է նրա հայրապետության տասնչորս տարին, նա վախճանվում է։

Նրանից հետո սուրբ աթոռին հաջորդում է Հովհաննես մեծ իմաս-

հաննէս, որ հմուտ և տեղեակ գոլով բոլոր քերթողական շարագծաց, մասանց բանի և մասնականաց, այլ և վարժից սեռից և որք ընդ գոյացութեամբ են սեռական տեսակարարութիւնք մինչ ցանհատ վայր, և տարբերութեանցն ևս հանգամանաց և պատահմանց անջատից և անանջատից ոչ անտեղեակ։ Դարձեալ և կրթական վարժից թէոնականաց, որ զարուեստին ծառոյ զպտուղս առոգանապէս ներադրէ յարուեստասէրն, յաւէտ իմն հմտագոյն սա գրով գրոշմեալ՝ տայ եկեղեցւոյ Քրիստոսի զբովանդակ կարգաւորութիւնս պաշտաման ժամուց, գեղեցիկ իմն յօրինուածով ճոխացուցեալ և բացայայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւնս 'ի մխիթարութիւն կղերց եկեղեցւոյ։ Այլ և ճառս ևս ինքնախօսս բանաստեղծս յարդարեալ՝ զղջացուցիչս շար գործոց և յորդորականս 'ի պէտս ապաշխարողական սակի։ Սա ամենայն առաքինի քաջողջութեամբ զանձն տուեալ աշխատասիրաբար կրթական ջանիւ զինքն զինէր յերգս հոգևորս պահօք և աղօթիւք և ամենագիշեր տքնութեամբ։ Եւ 'ի ներքոյ ոչ յօդեաց ասր, այլ յայծեաց ցփսիս դժոխըմբերս զգեստաւորէր. իսկ զարտաքոյսն 'ի պատուական երանգէ նիւթից զգեստաւորեալ պճնազարդէր։ Եւ ոսկի մանր խարտիւ աղացեալ և իւղովք անուշիւք յայն ընդխառնեալ՝ փշէր ընդ ծաղկեալ ալեօք մօրուսն, որ իջանէր մինչև ցգրապանս զգեստու նորա։ Եւ այնպէս ապա ատեան կազմեալ, զի տեսողացն բարեխորհաց բարի պատճառք խրախութեան լիցի՝ և շարացն խակաց ընդոստուցանող պակուցումն 'ի շարէն 'ի բարի։ Եւ վասն զի ոչ այնպէս յաներևութից ոմանց ահից զօրութիւն ընդոստուցանող մարդկան բերցի 'ի վատթարէն 'ի լաւն՝ որպէս յերևելեաց գերաբուն զարդուց խտղանք, և վասն սորին իսկ այսորիկ կալաւ սովորութիւն գեղեցիկ զարդուք պճնազգեստել զանշունչ քարինս եկեղեցւոյ, ապա ո՛րչափ առաւել մարդ քան զքարինս բերէ 'ի զարմացումն զտեսողսն. սակայն այսոքիկ ոչ ամենեցուն՝ այլ նոցա միայն, որոց դատողական հաւատացեալ է գործ։ Եւ վասն զի տեսեալ էր զայրն Աստուծոյ ոստիկան ոմն Հայոց՝ Վլիթ անուն, և եղև գնալ նմա առ ամիրապետն և պատմել նմա զվայելչութիւնն Յովհաննու, իսկ նորա զնա տեսանել ըղձացեալ՝ վաղվաղակի զմի 'ի ծառայից իւրոց առաքէր առ ինքն զայրն Աստուծոյ ածել։ Իբրև ածաւ բազում պատուով յարքունական քաղաքն, պատգամ առ նա ամիրապետն յղէր, զի ըստ սովորականին զարդու զինքն զգեստաւորեալ՝ այնպէս զնա տեսցէ։ Իսկ նորա զաւարտահասակ դիտակն իւր ևս առաւել փայլուն և պաղպաջուն

տասերը, որը հմուտ ու տեղյակ էր բոլոր քերթողական գրվածքներին, խոսքի մասերին ու մասունքներին, ինչպես նաև տեսակների ուսմունքին, արարածների տեսակներին ու տարբերություններին մինչև անբաժանելին, անտեղյակ չէր նաև տարբերությունների հանգամանքներին և բաժանելի ու անբաժանելի պարագաներին։ Նա [տեղյակ էր] նաև թեոնական ուսմունքին և ճոխացնելով արվեստի ծառի պտուղները՝ դրանք ներդնում էր ուսումնասիրության մեջ։ Նաև է՛լ ավելի հմտորեն գրի առնելով՝ Քրիստոսի եկեղեցուն է տալիս պաշտամունքի ժամերի ամբողջ կարգն ու կանոնները՝ եկեղեցու կղերականների մխիթարության համար գեղեցիկ հորինվածքով ճոխացնելով ու մեկնաբանելով կարգերի մեկնությունները։ Նա հորինում էր նաև ճառեր ու բանաստեղծություններ շար գործերից ետ կանգնելու համար և խրատական բաներ՝ ապաշխարողական խորհրդի պետքերի համար։ Նա ամենայն առաքինի ողջամտությամբ ու ժրաջանությամբ իրեն տալով ճգնողական աշխատանքի՝ զինվում էր հոգևոր երգերով, պահեցողությամբ, աղոթքներով և ամեն գիշերվա ժամերգությամբ։ Տակից ոչ թե բրդյա, այլ այծի մազից պատրաստված կոպիտ ու անտանելի շոր էր հագնում, իսկ դրսից զարդարվում էր գունավոր բնտիր նյութից պատրաստված զգեստով։ Եվ ոսկին խարտոցով մանրացնելով ու նրա հետ անուշահոտ խունկեր խառնելով՝ փշում էր ալեխառն մորուքին, որն իջնում էր մինչև նրա զգեստի գրպանները։ Ահա այսպես ատյան էր պատրաստում, որպեսզի բարեխոհ տեսնողներին ուրախության բարի պատճառ լինի, իսկ շարերին ու անգութներին դրդիչ ահ՝ նրանց շարից [բերելով] դեպի բարին։ Եվ քանի որ հենց ոչ այնպես մարդկանց դրդող զորությունը ոմանց աներևույթ ահից վատթարից կերերի դեպի լավը, որպես երևելիների հասարակ բնությունից վեր զարդերի խաղտանքը, հենց այդ պատճառով էլ սովորություն ունեցավ գեղեցիկ զարդերով պճնազարդել անշունչ քարերը. ուրեմն տեսնողներին առավել ևս մարդն էր զարմացնում, քան թե քարերը, բայց ոչ բոլորին, այլ միայն նրանց, որոնց վճռական գործը [Աստծուն] հավատալն է։ Եվ քանի որ Աստծու մարդուն տեսել էր Վլիթ անունով Հայոց մի ոստիկան, և պատահեց, որ նա գնաց ամիրապետի մոտ և նրան պատմեց Հովհաննեսի վայելչության մասին, ամիրապետը ցանկացավ տեսնել նրան։ Անմիջապես իր ծառաներից մեկին ուղարկում է Աստծու մարդուն բերել իր մոտ։ Երբ նա մեծ պատվով բերվեց արքունական քաղաքը, ամիրապետը նրան պատգամ է հղում, որպեսզի նա իրեն զգեստավորի սովորական զարդարանքով, ու ինքը նրան այդպես տեսնի։ Իսկ նա իր բարձրահասակ կերպարանքը է՛լ ավելի փայլուն զգեստ-

զգեստուք պճնաւորեալ՝ և զաղէբեկ ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ կազմեալ, և զոսկիանկար գաւազանն, որ 'ի փայտից ոպնիազից՝ 'ի ձեռն առեալ, այնպէս ապա գունեան այր և թիկնաւէտ առ ամիրապետն մտանէր*։ Զոր տեսեալ՝ հիացեալ զարմացեալ ընդ գեղեցկութիւն նորա բարեհամբոյր հասակին և շքեղաշուք դիտակին. ապա եդաւ աթոռ նըստիլ նմա և սկսաւ հարցանել ցնա ամիրապետն. «Ընդէ՞ր՝ ասէ, այդպէս պճնապաճոյճ լինիս. վասն զի Քրիստոսն ձեր զպարկեշտ և զշնչին զգեստ պատուեաց և զնոյն արարին աշակերտք նորա։» Իսկ նա պատասխանեալ ասէ. «Թէպէտև Քրիստոսի Աստուծոյ մերոյ առ 'ի մէջ առեալ մարմնովն զաստուածական փառսն ծածկեալ լինէր իբրև վարագուրաւ. սակայն աստուածային զօրութեան սքանչելիք նշանացն ոչ ծածկեցաւ, այլ յամենեսին հեղաւ. զնոյն շնորհ նշանաց և արուեստից տալով 'ի ձեռս աշակերտացն իւրոց, որ բաւական բերէր զմիտս մարդկան զարթուցանել յերկիւղն Աստուծոյ՝ և ոչինչ պիտոյացան զգեստուց ահարկողաց։ Իսկ արդ վասն զի փակեալ է 'ի մէջ բազում նշանաց նոցա շնորհ. վասն այնորիկ ահարկու իմն զգեստուք հնարիմք զպարզամիտ խակութիւն մարդկան ընդոստուցանել յերկիւղն Աստուծոյ։ Զայս ապա և 'ի մարմնաւոր թագաւորսդ 'ի ձեզ է տեսանել. ծիրանեփառ և ոսկեճամուկ զգեստուք և գեղեցիկ զարդուք և զինուք առ 'ի յահարկութիւն բազմաց բերիլ։ Զի թէ խարազնազգեաց զձեզ 'ի մարդկանէ ոք տեսանիցէ՝ և գծուծս և խոշորս, ոչ ոք պակուցեալ զարհուրեսցի 'ի փառաց ձերոց, որ ոչն երևի։ Բայց եթէ զրովանդակն զիմ գտանել խուզես, հրամայեսցէ տէրութիւնդ քո արտաքս սակաւիկ մի գնալ արանցն։» Իսկ ապա 'ի միայնանալն՝ մերկացաւ առ 'ի զգեստուէն արտաքնոյ, ցուցանելով նմա զգփսիսն այծեայս, ասելով. «Մերկութեան անդամոցս ա՛յս է զգեստ. իսկ արտաքոյքդ միայն են 'ի տեսիլ արտաքնոց։» Եւ իբրև զձեռն'ի ցփսիսն արկեալ լինէր ամիրապետն՝ զժգմեալ խոժոռեալ քստմնելով ասէ. «Զի՞րդ արդեօք կարէ մարմին մարդոյ տևել ժուժկալել այսպիսի գժոխրմբերելի քրձի, եթէ ոչ յԱստուծոյ տուեալ լինի նմա համբերութիւն։» Եւ ապա բազմահարկի պատուով զնա մեծարեալ և եօթն անգամ զնա պճնաւորեալ գեղեցիկ իմն արքունական զգեստուք, և դանձս ևս ոսկոյ և արծաթոյ նմա պարգևեալ՝ յուղարկէ յիւրական աշխարհն։ Որոյ եկեալ և կեցեալ ամս սակաւ՝ վախճանի, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս մետասան։

* Աստանօր Պատմաբանս զնախնի Վիպասանացն մերոց խօսս յարմարէ Յովհաննու իմաստասիրի, «աղէբեկ» զմօրուսն նորա ասելով և «գունեան այր և թիկնաւէտ» զնա նկարագրելով։

ներով զարդարելով և նոր սպիտակած մորուքը ոսկե ծաղիկների փնջի նման կազմելով ու ձեռքն առնելով ոսկենկար գավազանը, որը երեք նոսյա փայտից էր,— ահա այդպես լավ գույն ունեցող ու թիկնավետ այդ մարդը մտնում է ամիրապետի մոտ*։ Տեսնելով ու հիանալով նրա գեղեցկությամբ, գեղեցիկ հասակով ու փառահեղ տեսքով՝ աթոռ տրվեց նրան նստելու, և ամիրապետը սկսեց հարցնել նրան. «Ինչո՞ւ ես այդպես պճնազարդված, [գուցե] նրա համար, որ ձեր Քրիստոսը պարկեշտ ու շնչին զգեստը պատվեց, և նույնն արեցին նրա աշակերտները»։ Իսկ նա պատասխանելով ասում է. «Թեպետև մեր Քրիստոս Աստվածը մեզնից առած մարմնով աստվածային փառքը թաքցնում էր ինչպես վարագույրով, սակայն աստվածային զորության հրաշագործությունները չծածկվեցին, այլ լցվեցին բոլորի մեջ։ Նույն հրաշագործությունների ու արվեստի շնորհը նա տվեց իր աշակերտներին, որ ի վիճակի էր մարդկանց մտքում արթնացնել աստվածավախություն, և կարիք չզգացին ահաբեկողների զգեստի։ Իսկ այժմ քանի որ մեզնից ծածկված է նրանց բազում հրաշքների շնորհը, դրա համար էլ ձգտում ենք այդ ահարկու զգեստներով միամիտ մարդկանց մեջ աստվածավախություն առաջացնել։ Այս բանը կարելի է տեսնել նաև ձեր մարմնավոր թագավորների մեջ, որոնք զարդարված են ծիրանազարդ, ոսկեզարդ զգեստներով և գեղեցիկ զարդերով ու զենքերով, որպեսզի ահաբեկեն շատերին։ Որովհետև եթե մարդկանցից որևէ մեկը ձեզ տեսնի մազե կոշտ, կոպիտ ու անարգ զգեստ հագած, նա չի վախենա ու զարհուրի ձեր փառքից, որը չի երևում։ Բայց եթե ցանկանաս ինձ ամբողջությամբ հետազոտել, դու, տերդ, պետք է հրաման տաս, որ մարդիկ մի փոքր հեռու գնան»։ Իսկ հետո առանձնանալով՝ արտաքին զգեստները հանեց և նրան ցույց տվեց իր այծամազե ցփսին՝[46] ասելով. «Իմ մերկությունն է իմ զգեստը, իսկ արտաքինը միայն մարդկանց տեսնելու համար է»։ Եվ երբ ամիրապետը ձեռքը գցում է ցփսիին, մռայլվելով, խոժոռվելով ու քստմնելով ասում է. «Ինչպե՞ս կարող է մարդու մարմինը դիմանալ, տոկալ այսպիսի անտանելի քրձին, եթե Աստծու կողմից նրան համբերություն տրված չլինի»։ Եվ ապա մեծ պատվով նրան մեծարելով, յոթ անգամ նրան զարդարելով արքունական զգեստով և նաև նրան պարգևելով ոսկու և արծաթի գանձեր՝ [ամիրապետը] նրան ուղարկում է իր աշխարհը։ Նա գալով ապրում է մի քանի տարի և վախճանվում է՝ հայրապետական աթոռին տասնմեկ տարի նստելուց հետո։

* Այստեղ մեր պատմիչը մեր նախորդ պատմագիրների ասածը հարմարեցնում է Հովհաննես իմաստասերին՝ նրա մորուքը «նոր սպիտակած» ասելով և նրան նկարագրելով որպես «լավ գույն ունեցող ու թիկնավետ մարդ»։

Իսկ զկնի նորա կացուցանեն յաթոռ հայրապետութեան զԴաւիթ 'ի դեղջէն Արամոնից, որ 'ի Կոտայսն գաւառի։ Այս գիւղ սեպհական էր տան կաթողիկոսարանի նախ քան զշարշարանս սրբոյն Գրիգորի յարքայէն Տրդատայ նմա իսկ հոգեցատուր պայմանաւ ընձեռեալ, որոյ և յետկար վճռան պահի մինչև ցայսօր ժամանակի։ Եւ վասն զի 'ի բնակչաց հեթանոսաց 'ի Դվին քաղաքի յոյժ տաղտկացեալ լինէր այրն Աստուծոյ Դաւիթ, այլ և բազում շար ոճիրք զնա նեղեցին. ապա տագնապեալ և արտաքս 'ի միջոյ նոցա՝ ըստ գրեցելումն ելեալ, շինէ եկեղեցի 'ի գեօղն Արամոնս գեղեցկայարմար յարդարմամբ. և դնէ շուրջանակի նորա տուն բնակութեան՝ վայելուչ իմն յարմարեալ։ Եւ անդ զկէտ կենացս քաղաքավարեալ իբրև ամս երեքտասան՝ վախճանի. հանգուցանելով զնա մերձ առ նոյն իսկ եկեղեցի։

Իսկ զկնի յաջորդէ զաթոռ նորուն Տրդատ յՈթմսոյ գեղջէ, այր սուրբ և պարկեշտ և փայլեալ առաքինութեամբ։ Յաւուրս նորա ասպատակք շար հինից յամենայն ուստեք դադարեալ լինէին 'ի սաղրելոյ սրբութեան աղօթից նորա։ Եւ այսպէս ապա խաղաղութեամբ հասեալ 'ի կէտ կոչմանն Քրիստոսի՝ վախճանի. կացեալ յաթոռ հայրապետութեան ամս իգ։ Իսկ զկնի սորա համանուն սորուն Տրդատ 'ի դասնաւորից կացորդի յաթոռ հայրապետութեան. և ոչ աւելի քան զերիս ամս տեսեալ՝ վախճանի։ Իսկ զկնի սորուն Սիսն 'ի գեղջէ Բաւոնեաց յաջորդէ զաթոռն։ Սա 'ի տղայական հասակէ սնեալ և ուսեալ 'ի սրբումն հայրապետարանի՝ վարժ և կիրթ 'ի բնաւոր առաքինութիւնս յառաջքերիւր։ Իսկ ապա նախ քան զայս կոչեալ լինէր սա յեպիսկոպոսութիւն նահանգին Աղձնեաց. և մինչդեռ անդէն իսկ հովուէր զհաւատացեալն իւր հօտ՝ աղբիւր մի բազմաբուղխ առ ստորոտով Սիմն կոչեցեալ լերին ցամաքեցաւ. յորմէ բաղում այգեստանք և բուրաստանք տնկոց և արտավարք սողանեալ բուծանէին։ Եւ այնուհետև ապա սկսաւ ապականիլ և լքանիլ պտղաբերութիւնք գեղջն և յեղծումն աւերակաց բերիլ։ Իսկ որ յայնժամ Իսմայէլեան ոստիկանն էր յայնմ նահանգի՝ Սուլէյման անուն, առ ինքն զեպիսկոպոսն կոչեալ՝ աղաչէր զնա թերևս հնար ինչ գտանել դարձեալ բղխելոյ աղբերն։ Իսկ ապա Սիոնի քարոզ ընդ բոլոր վիճակեալսն իւր առաքեալ, զի միաբան 'ի հսկումն ցայգապաշտամանց բերցին զմի գիշեր որ 'ի կիւրակէն լուսանայր։ Իսկ 'ի վաղիւ առաւօտու կիրակէին շուտեալ գնայ հանդերձ խաչիւն սրբով և համադունդ հաւատացելովքն յաղբիւրն խցեալ և ցամաքեալ. և անդ աղօթս արարեալ և տեառնագրեալ զտեղին՝ հարկանէ գաւազանաւն որ 'ի ձեռին իւրում.

Իսկ նրանից հետո հայրապետական աթոռին նստեցնում են Դավթին, որը Կոտայք գավառի Արամոնք գյուղից էր։ Այդ գյուղը կաթողիկոսական տան սեփականությունն էր նախքան Տրդատ արքայի կողմից սուրբ Գրիգորին շարշարելը։ Այն նրան տրված էր որպես հոգեբաժին, որը և ձեռագիր վճռով պահվում է մինչև այսօր։ Եվ քանի որ Աստծու մարդ Դավիթը Դվին քաղաքում նեղվում էր հեթանոս բնակիչների կողմից, նրան նեղեցին նաև բազում այլ չարիքներ։ Ապա նա, գրածի համաձայն, տագնապած նրանց միջից դուրս գալով, Արամոնք գյուղում շինում է եկեղեցի՝ այն պատրաստելով գեղեցկահարմար ձևով։ Եկեղեցու շուրջը կառուցում է իր բնակարանը՝ վայելուչ կերպով այն հարմարեցնելով։ Եվ այնտեղ առաքինի կյանքով ապրելով մոտավորապես տասներեք տարի՝ վախճանվում է, և նրան թաղում են այդ նույն եկեղեցու մոտ։

Նրան հաջորդում է Տրդատը, որը Ոթմսո գյուղից էր. նա սուրբ ու պարկեշտ մարդ էր և առաքինությամբ փայլող։ Նրա օրոք շար ավազակների ասպատակությունները ամեն կողմից դադարում են՝ նրա սուրբ աղոթքների դրդմամբ։ Եվ այդպես խաղաղությամբ հասնելով իր կյանքի ավարտին՝ նա վախճանվում է, հայրապետական աթոռին նստելով իգ [28] տարի։ Իսկ նրանից հետո հայրապետական աթոռին հանդիսավոր կերպով բազմում է նրա համանուն Տրդատ Դասնավորեցին[47], որը ապրելով երեք տարուց ոչ ավելի՝ վախճանվում է։ Նրանից հետո աթոռին հաջորդում է Սիոնը, որը Բավոնյաց գյուղից[48] էր։ Երեխա հասակից սնվելով ու կրթվելով սուրբ հայրապետարանում՝ բնական առաքինությամբ նա ջանք ու փորձ էր հանդես բերում։ Իսկ դրանից առաջ նա հրավիրված էր Աղձնյաց նահանգի եպիսկոպոսության համար։ Եվ մինչդեռ նա այնտեղ իր հավատացյալ հոտի հովիվն էր, Սիմ կոչեցյալ լեռան ստորոտում ցամաքեց մի հորդաբուխ աղբյուր, որից սողվում էին բազմաթիվ այգեստաններ, բուրաստաններ ու արտեր։ Եվ դրանից հետո գյուղի պտղաբերությունը սկսում է ապականվել ու անտեսվել, նրան բերելով եղծում ու ավերում։ Այդ ժամանակ տվյալ նահանգում իսմայելյան ոստիկանը Սուլեյման անունով մեկն էր, որը իր մոտ է կանչում եպիսկոպոսին և աղաչում է նրան՝ հնար գտնել աղբյուրը դարձյալ բխեցնելու համար։ Հետո Սիոնը քարոզիչ է առաքում իր բոլոր թեմերը, որպեսզի միաբանված գիշերային ժամերգության հսկում կատարեն այն գիշերը, որից լուսանում էր կիրակի օրը։ Իսկ կիրակիի վաղ առավոտյան սուրբ խաչով և հավատացյալների խմբով շարժվում գնում է խցանված ու ցամաքած աղբյուրի մոտ։ Այնտեղ աղոթք անելով ու տեղը խաչակնքելով՝ խփում է ձեռքում բռնած գավազանով, և

և յանկարծակի յական թօթափելն բղխէ աղբիւրն վտակեալ յորդաբուղխ ականակիտ պարզուածիւ. ընդ որ յաւէտ իմն ոստիկանն զարմացեալ՝ ոչ թերևս լինէր մոռացեալ 'ի մտաց նորա եղեալ նշանքն։ Յետ այսորիկ ապա եհաս ոստիկանն այն պայազատել և զգործակալութիւն Հայաստանեայցս. և 'ի գնալ նորա 'ի Դվին քաղաք՝ իսկ և իսկ վախճանէր երկրորդն Տրդատ։ Եւ իմացեալ ոստիկանն վաղվաղակի առաքէ 'ի խընդիր եպիսկոպոսին Սիոնի, և ածեալ կացուցանել զնա հրամայէ յաթոռ հայրապետութեան. յայսպիսի իմն պատճառանաց բերեալ յայս տեղի։ Յաւուրս սորա եղև կոտորումն Քաղինոյ և Արենոյ և գիւղաքաղաքին Թալնայ, յորում սպանան ոգիք իբրև եօթն հարիւր և գերեցան հազար երկերիւր։ Բայց նորա բաղում և հրաշալի ճգնողական վարուք վճարեալ զկէտ կենաց իւրոց իբրև ամս ութ՝ վախճանի, եղեալ 'ի քնարանի ընդ հարս իւր։

Եւ ապա զԵսայի, 'ի Նիգ գաւառէ յԱղապատրուշ գեղջէ՝ կոչեն յաթոռ հայրապետութեան։ Զսա նախ կարգեալ էին եպիսկոպոս 'ի գաւառին Գողթան և զկնի ապա կացուցեալ 'ի հայրապետական աթոռն։ Ասի բան զնմանէ, թէ էր որդի միամօր կնոջ այրւոյ. և վասն զի յաղքատութեան կնոջն հանդիպեալ ստնդեայ որդւովն իւրով մուրացիկ շրջէր՝ եկն յարեցաւ նա 'ի տուն կաթողիկոսարանին և անդ կայր՝ 'ի յոլովից իմն անտես լեալ. և ոչ ևս բնաւ մեկնեալ 'ի դրանէ տաճարին Տեառն՝ ցըրտահար սառուցեալ 'ի ձմերայնի լինէր և տապախարշ արևակէզ յամարայնի։ Իսկ 'ի հարցանել քահանայիցն, թէ «Ընդէ՞ր այդպէս բացութեայք լեալ բոլոր դառնաշունչ օդոյդ հանդերձ ստնդիաց մանկամբդ տարեալ, և ոչ մտանես ընդ յարկաւ ուրեք.» իսկ նա զայս բան ետ ընդդէմ առնէր պատասխանի. «Ո՞չ գիտէք, զի սակս կաթողիկոսութեան զորդեակս իմ աստ սնուցանեմ։» Որ գրեթէ մարգարէուհի իմն վասն մանկան կինն գտանէր. զի սնեալ և ուսեալ 'ի նմին հայրապետանոցի՝ նախ յեպիսկոպոսութիւն և ապա 'ի բարձր աստիճան հայրապետութեան կոչեցաւ։ Եւ սորա քաղաքավարեալ զկեանս իւր իբրև ամս երեքտասան՝ վախճանեալ դնի ընդ հարս իւր։ Իսկ յետ սորա զՍտեփաննոս ոմն 'ի Դվին քաղաքէ կացուցանէին յառաջնորդութեան անդ՝ ոչինչ աւելի քան զերկուս ամս կեցեալ։ Եւ յետ սորա Յովաբ յաջորդեալ յՈստանէն 'ի կուրապաղատին ապարանից՝ իբրև ամիսս վեց միայն տևեալ։

Զայսու ժամանակաւ Եզիտ ոմն ոստիկան 'ի Հայս յամիրապետէն առաքեալ լինէր. որ իբրև եհաս 'ի Նախջաւան քաղաք՝ ապա կուսակալս և գործակալս ըստ գաւառաց գաւառաց առաքէր։ Եւ վասն զի ընդ նոքօք

հանկարծակի ակնթարթորեն բխում է հորդաբուխ ականակիտ աղբյուրը։ Դրա վրա էլ ավելի է զարմանում ոստիկանը, և նա այլևս չի մոռանում կատարված հրաշքը։ Դրանից հետո ոստիկանը հասավ դրան տիրելու և դարձավ հայաստանցիների վերակացուն։ Եվ երբ նա գնում է Դվին քաղաքը, իսկույն վախճանվում է Տրդատ երկրորդը։ Իմանալով այդ մասին՝ ոստիկանն անմիջապես [սուրհանդակ] է առաքում՝ Սիոն եպիսկոպոսին փնտրելու և հրամայում է նրան բերել ու նստեցնել հայրապետական աթոռին՝ այդպիսի պատճառով նրան բերելով այդ տեղը։ Նրա օրոք եղավ Քաղինի, Արենի և Թալին գյուղաքաղաքի կոտորածը, որի ժամանակ սպանվեց մոտավորապես յոթ հարյուր ու գերվեց հազար երկու հարյուր հոգի։ Բայց նա երկար ու հրաշալի ճգնողական վարքով ավարտելով իր կյանքը՝ վախճանվում է ութ տարի [աթոռակալելուց] հետո և թաղվում իր հայրերի գերեզմանոցում։

Եվ ապա հայրապետական աթոռի համար հրավիրում են Եսայուն, որը Նիգ գավառի Աղապատրուշ գյուղից[49] էր։ Նրան նախ եպիսկոպոս էին կարգել Գողթան գավառում, իսկ հետո նստեցրել հայրապետական աթոռին։ Նրա մասին պատմում են, թե նա մի այրի կնոջ մինուճար որդին էր։ Եվ աղքատության մեջ ընկնելու պատճառով կինը իր ծծկեր որդու հետ շրջում էր որպես մուրացիկ։ Նա գալիս-մտնում է կաթողիկոսարան ու մնում այնտեղ՝ շատերի կողմից անտեսվելով։ Բայց նա բնավ չի հեռանում Տիրոջ տաճարի դռնից՝ ցրտահարվելով ու սառչելով ձմռանը և տապախարշ ու արևակեզ լինելով ամռանը։ Իսկ երբ քահանաները հարցնում են, թե «Ինչո՞ւ ես բացօթյա մնացել դառնաշունչ այս բոլոր եղանակներին ծծկեր մանկանդ հետ միասին և չես մտնում որևէ հարկի տակ», նա տալիս է հետևյալ հակառակ պատասխանը. «Դուք չգիտե՞ք, որ ես իմ որդյակին այստեղ մեծացնում եմ կաթողիկոսության համար»։ Եվ այդ կինը իր մանկան համար գրեթե մարգարեուհի եղավ, որովհետև այդ նույն հայրապետանոցում մեծանալով ու կրթվելով՝ նրա որդին հրավիրվեց նախ եպիսկոպոսության և ապա հայրապետության բարձր պաշտոնի համար։ Եվ առաքինի կյանք վարելով տասներեք տարի՝ նա վախճանվում է և թաղվում իր հայրերի մոտ։ Իսկ նրանից հետո այնտեղի առաջնորդ են կարգում ոմն Ստեփաննոսի, որը Դվին քաղաքից էր. նա աթոռին մնաց երկու տարուց ոչ ավել։ Նրան հաջորդեց Հովաբը, որը Ոստանից էր, կուրապաղատի ապարանքից. նրա [աթոռակալությունը] տևեց միայն վեց ամիս։

Այդ ժամանակներում ամիրապետը Հայաստան է առաքում Եզիտ անունով ոստիկանին, որը երբ հասնում է Նախջավան քաղաքը, կուսակալներ ու գործակալներ է ուղարկում տարբեր գավառներ։ Եվ նը-

նուաճեալ էր դաւառն Բագրեւանայ՝ ընդ այն ապա զմի 'ի պատուաւորաց ոստիկան առաքէ. որոյ երթեալ հասեալ 'ի վանս միայնարանի սրբոյն Գրիգորի, որ 'ի գիւղն Բագուանու՝ երեկոթս անդ առնէր։ Եւ տեսեալ ապա զգեղեցիկ և զյաւէտ չքնաղատես սպասս աստուածակերտ խորանին՝ զոսկեղէնս և զարծաթեղէնս և զգունակ գունակ երանգս առագաստին սրբութեան և զհանդերձանս և զարկանելիս, ապա հրապուրեալ 'ի շար ագահութենէն՝ խորամանկ մտօք ջանայր հնարս մարթել գտանել սակս յինքն յափշտակելոյ զաստուածային աւանդսն։ Եւ ըստ ապիրատ խորհրդոցն զմի 'ի ծառայից իւրոց անարգագունից 'ի ծածուկ խարդաւանեալ խեղդամահութեամբ ընկենոյր 'ի գիշերի 'ի վիհ մեծ խորափտի՝ զվայրս մտին 'ի վերայ կափուցեալ։ Եւ ապա այգուն իբրև զանխուլ իրին զոլով՝ ինքն 'ի խնդիր լինէր խեղդամահ ժանտին, և առհասարակ զսուրբ կուսակրօնսն 'ի բանտ և 'ի կապանս ըմբռնեալ՝ իբր թէ նոքա գտան պատճառ կորստեան ծառայի նորա։ Եւ յոյզ ապա առեալ զտունս և զկայանս ուխտականացն երթայր բանայր զիր վիճեալ ծառային ծածկեալ վիհն. և իսկոյն ճիշ բարձեալ մարդակերն՝ մահապարտ զսուրբ արսն պարտաւոր առնէր։ Եւ վաղվաղակի ապա և ոստիկանին զգացուցանէր զայն ինչ, զոր ոչ երբէք գտանէր տեսանել. և այնպէս զարիւն ամբիծ պարտաւոր արարեալ՝ հրաման ընդունի յոստիկանէն առանց հարցափորձ ատենի կոտորել զսուրբ արսն։ Իսկ անօրէն վշտասէր շար դահիճն սրոյ ճարակ զսուրբ գունդն առհասարակ տայր աւելի քան զքառասուն այր. և ապա զբովանդակ սպասուցն բազմութիւն միանգամայն իսկ յինքն յափշտակեալ՝ լնոյր զկորստական շար ագահութեանն չափ։ Իսկ 'ի բազմաց սակաւք մնացեալք ելեալք 'ի փախստենէ փապարացն՝ և եկեալ գտեալ 'ի բազմախողխող երկաթոյն տապաստ անկեալ զդիակունս սրբոցն, և զեկեղեցին Քրիստոսի խրթնացեալ 'ի բարեզարդութենէ բեմին, ողբս ողորմելիս փոխանակ խրախճանական երգոց յարդարէին. մանաւանդ զի և ոչ կափուցման աչաց նոցա արժանի գտան։ Եւ այսպէս հազիւ իմն գերեզմանի զսուրբսն տուեալ՝ 'ի մխիթարութիւն իւրեանց բերէին զանբիծ արեանցն պարտաւորութիւն։ Որով ընդ մարտիրոսս անուանք նոցա գրեցան 'ի դրպրութիւն կենաց։

Բայց յետ վախճանելոյ հայրապետին Յովաբայ զՍողոմոն ածեալ նստուցանեն յաթոռ սրբութեանն։ Սա էր 'ի քաղաքագիւղէն Գառնւոյ, և 'ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնաւորութեան կարգի և բազում առաքինաջան երկոց զանձն տուեալ 'ի մեծ ուխտին Մաքենոցաց. այլ և վարժեալ իսկ էր 'ի փիլիսոփայական արուեստս և առաւել ևս հմուտ լեալ փսաղտութեան կրթանաց։ Եւ վասն զի 'ի ժամանակս Սողոմոնի՝ հարանց հօր, յերկուս լինէր բաժանեալ ուխտն Մաքենոցաց, և

բանք քանի որ իրենց էին ենթարկել Բագրեան գավառը, այնտեղ է առաքում պատվավոր ոստիկաններից մեկին, որը գնում հասնում է սուրբ Գրիգորի միայնարանի վանքը, որը գտնվում է Բագավան[50] գյուղում, ու գիշերում է այնտեղ։ Եվ այնտեղ տեսնելով աստվածային տաճարի գեղեցիկ ու չքնաղատես ոսկեղեն ու արծաթեղեն սպասքը, գույնզգույն սուրբ վարագույրը, հագուստներն ու վերարկուները՝ հրանզգույն սուրբ վարագույրը, հագուստներն ու վերարկուները՝ հրապուրվում է շար ագահությամբ և խորամանկորեն ջանում է հնար գտնել աստվածային ընծաները հափշտակելու համար։ Եվ ապիրատ մտադրությամբ իր անարգ ծառաներից մեկին խաբելով՝ թաքուն խեղդամահ է անում, գիշերը գցում մի խոր վիհ և փակում այդ մուտքի տեղերը։ Առավոտյան իբրև թե գեպքին անտեղյակ՝ ինքն է սկսում փնտրել խեղդամահ արված անպիտան մարդուն և բոլոր սուրբ կրոնավորներին բռնելով բանտարկում է ու շղթայում, իբրև թե նրանք եղան իր ծառայի կորստյան պատճառը։ Եվ ապա խուզարկելով եկեղեցականների տներն ու բնակարանները՝ [նա] գնում բացում է իրեն հակադրված ծառայի վիհը։ Իսկույն ճչալով՝ այդ մարդակերը սուրբ մարդկանց է համարում մեռնելու արժանի։ Եվ անմիջապես ոստիկանին հասկացնում է այն, ինչ բնավ չէր կարող գտնել։ Եվ այդպես անբիծ արյունը դատապարտելով՝ ոստիկանից հրաման է ստանում առանց դատարանի հարցաքննության կոտորել այդ սուրբ մարդկանց։ Իսկ անօրեն, վշտասեր ու շար դահիճը սրի է մատնում սրբերի խմբին՝ առհասարակ [կոտորելով] քառասունից ավելի մարդու։ Եվ ապա ամբողջ սպասքը միանգամից հափշտակելով՝ հագեցնում է իր անցավոր շար ագահությունը։ Իսկ բազմությունից քչերը, կենդանի մնալով ու փախչելով, գալիս ու գտնում են բազմախողխող սրից ընկած սրբերի դիակները և իր բեմի բարեզարդությունից զրկված Քրիստոսի եկեղեցին։ Եվ նրանք ուրախ երգերի փոխարեն ողորմելի ողբ են սկսում, մանավանդ որ իրենք արժանի չգտնվեցին փակելու նրանց աչքերը։ Եվ այդպես սրբերին հազիվ գերեզմանին հանձնելով՝ իրենց մխիթարում են նրանց անբիծ արյան մեղապարտությամբ։ Դրանով նրանց անունները կյանքի մատյանում գրանցվեցին մարտիրոսների անունների հետ միասին։

Հայրապետ Հովաբի վախճանվելուց հետո բերում և սուրբ աթոռին նստեցնում են Սողոմոնին։ Նա Գառնի քաղաքագյուղից էր և մանկուց իր վրա էր վերցրել կրոնավորության լուծը ու Մաքենացիների միաբանությունում իրեն նվիրել բազում առաքինաջան գործերի։ Նա վարժ էր նաև փիլիսոփայական արվեստի և առավել ևս հմուտ սաղմոսերգության մեջ։ Եվ քանի որ հայրերի հայր Սողոմոնի ժամանակ Մաքենացիների միաբանությունը բաժանվել էր երկու մասի, և հայրերի հայրը,

հայրն հարանց հասարակ բաժնիւ կրօնաւորական դասուն երթեալ բնակէր 'ի Զրեսկ որ 'ի Շիրակ գաւառի՝ զհետ նորա և այս ևս Սողոմոն չուէր գնայր։ Եւ անդ 'ի միայնակեցի կարգ ելեալ լինէր 'ի խրճիթ՝ բազում ճգնաց և աշխատութեանց զանձն առեալ։ Եւ մինչդեռ 'ի խրճթէ անտի արտաքս հանեալ՝ չուեալ ածէին յաթոռ հայրապետութեանն, հարցաւ ապա յոմանց ազատաց, թէ «Վասն զի ծեր ես և յանհնարին ճրգնական վարուց յոյժ անաւազեալ, ընդէ՞ր յօժարեալ երթաս 'ի հայրապետութիւն։» Առ որս պատասխանեալ նորա՝ ասէր. «Երթամ, զի գեղապաճոյճն նկարողաց սեալ զիս ընդ այլ հայրապետսն տամ յորմ եկեղեցւոյն։»— Եւ ըստ սմին այսմիկ գործն կատարէր. զի ոչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ փոխի յաշխարհէ աստի և դնի ընդ հարս իւր և կենդանագրի 'ի քաւարանի սրբում։

Ապա զկնի սորա զԳէորգ 'ի գաւառէ Արագածոտան կացուցանեն 'ի հայրապետութեան։ Եւ վասն զի սպառսպուռ Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայս և մեծամեծք աշխարհիս նուաղեցան, և մընացեալք զօգեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց 'ի Պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց, բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն 'ի Շապհոյ պատմագրէ։ Բայց զկնի Գէորգայ զՅովսէփ 'ի գաւառէ Արագածոտան 'ի բնակչաց սրբոյն Գրիգորի կացուցանեն 'ի հայրապետութեան։ Յաւուրս սորա ոստիկան ումն՝ Խուզիմա անուն, եկեալ 'ի Դվին քաղաք՝ զընդ իւրև կացեալսն նուաճէր։ Եւ տեսեալ զգեղեցկութիւն մեծամեծ դաստակերտիցն տան կաթողիկոսարանին՝ զԱրտաշատն և զԿաւակերտն և զՀոռոմոց Մարգ հանդերձ նոցունց ագարակօք, և դաւաճանեալ 'ի շար ցանկութենէ և 'ի դիւամոլ ագահութենէն՝ ուժգին իմն դժուարութեամբ յինքն 'ի հայրապետէն Յովսէփայ խնդրէր տալ նմա զմեծ դաստակերտս իբր 'ի պատճառս զնոց արծաթոյ։ Իսկ մեծի առնն զմահ ընդ կեանս խառնեալ՝ ամենեին ոչ տայր տեղի շար և ապիրատ բանից նորա։ Իսկ ոստիկանն առ մրգձկեալ սրտին դնէ 'ի բանտի զայրն Աստուծոյ և կապէր զնա 'ի շղթայս և գանիւ հարկանէր, զի թերևս զարհուրեալ՝ առ նա զհայցեալն տայցէ։ Այլ և նա ոչինչ վարկեալ զտանջանսն՝ եկեալս 'ի վերայ, և ոչ գրեալ ինչ զբրածեծն առնել՝ քաջապէս համբերէր՝ Աստուծոյ զայն ընծայելով։ Իսկ իբրև այնպէս անփոշիշ իմն 'ի հայրապետէն ոստիկանն լինէր՝ ապա պայուսակօք երիւք գանձս լցեալ և եդեալ 'ի գլուխս իւրոց ծառայից և հրապարակատես զայն արարեալ՝ յայտնապէս առ հայրապետն մտանել հրամայէր և ընդ միւս կողմն գաղտագնացութեամբ առեալ տանել անդրէն։ Եւ ապա համբաւ հանեալ, թէ վաճառեցան նմա դաս-

կրոնական կես մասի հետ գնալով, բնակվել էր Շիրակ գավառի Զրեսկ գյուղում, նրա հետևից շարժվում գնում է նաև այս Սողոմոնը։ Եվ այն-տեղ, իր խցում, նա վարում է մենակյացի կյանք՝ իրեն նվիրելով մեծ ճգնության ու տառապանքի։ Եվ երբ նրան խցից դուրս են հանում և տանում հայրապետական աթոռի համար, ազնվականներից մեկը հարցնում է. «Քանի որ ծեր ես և սաստիկ ճգնական կյանքի պատճառով շատ տկարացած, ինչո՞ւ համաձայնվելով գնում ես հայրապետության համար»։ Նրանց պատասխանելով՝ նա ասում է. «Գնում եմ, որպեսզի գեղապաճույճ նկարիչները ինձ այլ հայրապետների հետ սև ներկով նկարեն եկեղեցու պատին»։ Եվ այդպես էլ կատարվում է. որովհետև մեկ տարուց ոչ ավելի ապրելով՝ նա գնում է այս աշխարհից, թաղվում իր հայրերի մոտ, և նրան նկարում են սուրբ քավարանի [պատին]։

Նրանից հետո հայրապետ են նշանակում Գեորգին, որը Արագածոտն գավառից էր։ Եվ քանի որ հագարացիները ամբողջովին գրավեցին ու տիրեցին Հայաստանին, և երկրի մեծամեծները նվազեցին, իսկ մընացածները ընկան նրանց ստրկական լծի տակ, այդ պատճառով այս-տեղից սկսած պատմության մեջ պակասեցին մեր իշխանների մասին եղած տվյալները, բայց եթե գտնվի Շապուհ պատմագրի՝[51] մեզնից առաջ պատմածը, այն քեզ, [ընթերցող], կբավականացնի։ Գեորգից հետո սուրբ Գրիգոր [եկեղեցու] բնակիչները հայրապետ են կարգում Հովսեփին, որը Արագածոտն գավառից էր։ Սրա օրոք Խուզիմա անունով մի ոստիկան, գալով Դվին քաղաք, նվաճում է իր ձեռքի տակ եղածներին։ Եվ տեսնելով կաթողիկոսական տան մեծամեծ ու գեղեցիկ դաստակերտները՝ Արտաշատը, Կավակերտը, Հռոմեական Մարգը իրենց ագարակների հետ միասին և խաբվելով շար ցանկությունից ու դիվամոլ ագահությունից՝ մեծ դժվարությամբ խնդրում է հայրապետ Հովսեփին իրեն տալ մեծ դաստակերտները արծաթի գնով։ Իսկ այն մեծ մարդը, մահը կյանքին խառնելով, բնավ տեղի չէր տալիս նրա շար ու անօրեն խոսքերին։ Բայց ոստիկանը սրտնեղությամբ բանտարկում է Աստծու մարդուն, շղթայակապ է անում նրան ու գանահարում, որպեսզի թերևս զարհուրելով նա տա իր պահանջածը։ Նաև անտեսելով իրեն հասած տանջանքները և հաշվի չառնելով իրեն բրածեծ անելը՝ [Հովսեփը] քաջաբար դիմանում էր, ընծայելով այն Աստծուն։ Իսկ երբ ոստիկանը անպատասխան է մնում հայրապետի կողմից, ապա երեք տոպրակ գանձ լցնելով և իր ծառաների գլուխներին դնելով ու հրապարակավ ցույց տալով՝ հրամայում է հայտնապես մտնել հայրապետի մոտ և նրան վերցնելով՝ թաքուն կերպով տանել մյուս կողմը։ Եվ ապա լուր տարածելով, թե նրան են վաճառվել դաստակերտները, և բանտի

տակերտքն. և զայրն Աստուծոյ արձակեալ 'ի՛ կապարանէ բանտին՝ 'ի տուն իւր առաքէ։ Իսկ նորա յետոյ բազում պնդութիւն և աներկիւղաբար երկս աշխատանաց յատենի ուղղոց ցուցանէր՝ հազիւ ուրեք միայն զդաստակերտն Կաւակերտ և զՀռոմոց Մարդ թափէր 'ի ձեռաց ոստիկանին շարի։ Եւ այսպէս տարապարտ զրկեալ գտանէր յԱրտաշատէն յայնմանէ և առ յապա։ Եւ սակս այսպիսի շար մախանաց միշտ 'ի նենգապատիր միտս ոստիկանն ընդ հայրապետին բերեալ՝ 'ի հրամանէ նորա ծառայք նորա ըմբռնեալ զեղբայր մեծին Յովսեփայ, յակունս Մեծամօրի սպանեալ՝ ընկեցին զնա 'ի ծովակն, որ է 'ի հիւսիսոյ կողմանէ ականցն։ Բայց հայրապետն Յովսէփ կալեալ զառաջնորդութիւնն ամս մետասան՝ վախճանի։

Յետ սորա Դաւիթ 'ի գաւառէ Մազազայ 'ի գեղջէ Կակազոյ յաջորդէ զաթոռն սուրբ։ 'Ի ժամանակի աստ յայսմիկ ոստիկան ոմն՝ Հօլ անուն, փոքր գնդաւ յամիրապետէն անտի 'ի Հայս առաքեալ՝ չուեալ հասեալ մտանէր բնակիլ 'ի Դվին քաղաքի։ Իսկ Սևադայ ոմն անուն 'ի Պարսիկ տոհմէ,— որ առեալ էր իւր կին զԱրուսեակ 'ի Բագրատունի տանէ և 'ի ձեռն այնորիկ զյոլով մասն երկրիս բռնակալեալ սեպհականաբար իմն տիրէր,— այս Սևադայ ընդվզեալ և խանդացեալ ընդ ոստիկանին Հօլայ՝ գումարտակ ընդդէմ նորա զօրաց բազմաց ունէր, ընդ որս էր և մեծ սպարապետն Հայոց Սմբատ, և Սիւնեաց տէր և այլ ևս ազատագունդ տեարք։ Եւ ապա հնարի կա՛մ ըմբռնել զՀօլ կա՛մ դրժել 'ի մահ։ Բայց Հօլն զհայրապետն Դաւիթ պատգամ առ Սևադան և առ սպարապետն Սմբատ և առ Սահակ Սիւնեաց տէրն յղէր, «Թէ ընդէ՞ր և կամ վասն է՞ր իրիք այդպէս զօշաքաղութեամբ իմիք հպարտացեալ խրոխտայք դաւել զիս. թէ ոչ զիս՝ ասէ, կամիք ընդունել, վայրացդ ելիցդ իմ տեղի տուք 'ի բաց գնալով, զի 'ի ձէնջ աներկիւղաբար չու արարեալ երթեալ գնացիցս։» Իսկ հայրապետն բազում բանիւք զնոսա համոզեալ և աղաչեալ, ոչ կամեցան լսել. ընդ որ յաւէտ ապա տրտմեալ գնայր։ Իսկ Հօլ իբրև գիտաց, թէ վճարեալ է շարութիւն նոցա, ապա աջողաձեռնաբար իմն ընտրեալ արս իմն երկսաւորս 'ի սիրտս և 'ի պատրաստութիւն զինուց իբրև երկու հազար՝ վաղվաղակի ելանէր ընդդէմ նոցա 'ի պատերազմ։ Եւ բանակ նոցա նստէր առ եզերբ Հուրաստան գետոյ հանդէպ դաստակերտին Կաւակերտի։ Իսկ իբրև Հօլ ուժգին իմն ասպատակ սփռէր 'ի վերայ նոցա և 'ի բախիլն ընդ միմեանս՝ 'ի փախուստ դառնային զօրք նոցա առաջի զօրուն Հօլայ. և բազում արեան ճապաղիս 'ի նոցանէ հեղուին սմբակակոխ արարեալ։ Եւ անդ սպանաւ Սահակ Սիւնեաց տէրն. և սպարապետն Սմբատ և Սևադայն հազիւ ճողոպրեալք անձնապուրծ փախչէին, ընդ նո-

կապանքներից ազատելով Աստծու մարդուն՝ նրան ուղարկում է իր տունը։ Իսկ հետո արդար դատարանում առանց երկյուղի բազում ջանք ու աշխատանք ցուցաբերելով՝ չար ոստիկանի ձեռքից նա հազիվ ազատում է միայն Կավակերտ դաստակերտն ու Հռոմեական Մարգը։ Եվ այդպես անտեղի նա ընդմիշտ զրկվում է Արտաշատից։ Նենգամիտ ոստիկանը միշտ այդպիսի չար նախանձ է հանդես բերում հայրապետի նկատմամբ, և նրա հրամանով նրա չար ծառաները, բռնելով մեծն Հովսեփի եղբորը ու սպանելով Մեծամորի ակունքի մոտ, գցում են այն ծովակը, որը գտնվում էր նրա հյուսիսային կողմում։ Բայց Հովսեփ հայրապետը, առաջնորդությունը վարելով տասնմեկ տարի, վախճանվում է։

Նրանից հետո սուրբ աթոռին հաջորդում է Դավիթը, որը Մազազ գավառի Կակազո գյուղից էր։ Այդ ժամանակ այդտեղի Հոլ անունով մի ոստիկան ամիրապետի կողմից փոքրաթիվ գնդով ուղարկվելով Հայաստան՝ գալիս մտնում է Դվին քաղաքը ու այնտեղ բնակվում։ Իսկ պարսկական տոհմից Սևադա անունով մեկը, որը Բագրատունյաց տնից կնության էր առել Արուսյակին և նրա միջոցով երկրի մեծ մասը սեփականացրել ու տիրել, նախանձելով ու ընդվզելով ոստիկան Հոլի դեմ, մեծ զորք է հանում նրա դեմ, որոնց հետ էին նաև Սմբատ Հայոց մեծ սպարապետը, Սյունյաց տերը և այլ ազնվականներ։ Եվ ապա նա ձգտում էր Հոլին կա՛մ բռնել, կա՛մ մահվան դավ նյութել։ Բայց Հոլը Դավիթ հայրապետին պատգամավոր է ուղարկում Սևադայի, Սմբատ սպարապետի և Սյունյաց տեր Սահակի մոտ՝ ասելով, «Թե ինչո՞ւ կամ ի՞նչ բանի համար ագահությամբ այդպես զոռոզանալով՝ ուզում եք դավել ինձ. ասում է, եթե ինձ չեք ուզում ընդունել, հեռու գնացեք այդ վայրերի ճանապարհներից և թողեք, որ ես առանց ձեզանից վախենալու ելնեմ, գնամ»։ Իսկ հայրապետը շատ է նրանց համոզում ու աղաչում, բայց նրանք չեն կամենում լսել, որի համար ավելի նեղանալով՝ նա գնում է։ Իսկ Հոլը երբ իմացավ, թե վերջացել է նրանց շարությունը, ապա ճարպկորեն ընտրում է սրտոտ ու զենք գործածելու մեջ պատրաստ մոտավորապես երկու հազար մարդու և անմիջապես դուրս գալիս նրանց դեմ պատերազմի։ Եվ նրանք բանակ են դնում Հուրաստան գետի ափին, Կավակերտ դաստակերտի դիմաց։ Իսկ Հոլը երբ ուժգին ասպատակություն է գործում նրանց վրա, միմյանց բախվելու ժամանակ Հոլի զորքի առջևից փախուստի է դիմում նրանց զորքը, [հակառակորդի] և Հոլի զինվորները սմբակակոխ անելով ցիափում են նրանցից շատերի արյունը։ Այնտեղ սպանվեց նաև Սյունյաց տեր Սահակը, իսկ Սմբատ սպարապետն ու Սևադան, հազիվ ճողոպրելով,

սին և այլ ևս 'ի սրոյն մնացեալ զորքն՝ ցանկացիր սփռեալ գնային։ Եւ Հոլն դարձեալ 'ի Դվին քաղաք դառնայր։ Բայց զմարմին Սահակայ Սիւնեաց տեառնն բարձեալ տանէր մեծ հայրապետն Դաւիթ 'ի հայրապետանոցն սուրբ, և անդ դնէր 'ի քնարանի մերձ 'ի սուրբ քաւարանն։ Իսկ զկնի Սահակայ պայազատէ զտէրութիւնն զայն Գրիգոր որդի նորուն, որ փաղաքշական անուամբ Սուփան անուանիւր։ Իսկ ապա լցեալ հայրապետին զկէտ կենաց իւրոց՝ վախճանի, կալեալ զառաջնորդութիւնն ամս իէ։

Իսկ զկնի նորա յաջորդէ զաթոռ նորա Յովհաննէս 'ի գաւառէն Կոտայից 'ի գեղջէ Ովայից։ Բայց յետ սկզբան ձեռնադրութեան նորա իբրև անցին ամք ութ, քիլք ոմանք շարաբանք 'ի նոյն ինքն յընտանեաց տան կաթողիկոսարանին լեզուօք նենգաւորօք բանս ապիրատս բամբասանաց 'ի վերայ յօդէին սրբոյ հայրապետին Յովհաննու. որպէս երբեմն սուրբ կոյսն Շուշան 'ի դառնալի ծերոցն, կամ Նարկեսոս 'ի զրադաշտ շար վկայիցն, կամ նոյն ինքն Բանն Աստուած 'ի Յուդայէ և յանօրէն քահանայապետիցն։ Եւ վասն զի 'ի ժամանակին Բագարատ Բագրատունի հրամանատար և իշխան իշխանացս Հայոց գտանէր առ նմա, ապա դիմեալ երթեալ շուէին շանարդագուրդ նանրալեզու հայհոյիչք առնն Աստուծոյ՝ զերկրաւ զլեզուս իւրեանց ածեալ և զօղանջեալ առաջի նորա։ Իսկ նորա 'ի սատանայական պարթոխաթափ լեզուացն հրապուրեալ՝ և ախորժակս յիւր լսելիսն զպիղծ հայհոյութիւնսն ամբարեալ՝ գրէ հրովարտակ առ ամենեսեան, 'ի բաց կալ յընդունելոյ զհօտապետն. 'ի մտի եդեալ ա՛յլ ևս կացուցանել հայրապետ ըստ իւրումն ձեռներիցութեան։ Իսկ մեծի առնն Յովհաննու իմացեալ զլկանս սատանայականս իշխանին և հոգեւոր հատողական սրով զնա պաշարմամբք կապեալ՝ ինքն յարուցեալ գնաց 'ի բանակետղ սրբոյն Սահակայ 'ի վանս այրից զօղեալ և լռիկ իմն անդ մշտնջենաւոր աղօթից պարապեալ։ Զայն ապա իմացեալ սպարապետին մեծի Սմբատայ և Գրիգորի Սիւնեաց տեառնն և այլ ևս նախարարացն Հայոց, և համագունդ 'ի միասին եկեալք և ժողով եպիսկոպոսաց արարեալ և ստուգագէտ իմացուածիւ իմացեալ զ'ի նանիր իժաթոյն շրթանց շար հայհոյչացն ստութիւն՝ հաստատեն դարձեալ յաթոռն սրբութեան զայրն Աստուծոյ։ Իսկ ապա այնուհետև եկեղեցիք Քրիստոսի, որ երբեմն խրթնացեալն էր 'ի վարատմանէ փեսային՝ դարձեալ յինքն* զփեսայն առագաստաւոր նորոգապէս պայծառանայր։ Բայց իշխանն Բագարատ ևս

* Պակասի բառ ինչ. գուցէ պարտ իցէ ասել՝ «դարձեալ յինքն տեսանելով զփեսայն առագաստաւոր՝ նորոգապէս պայծառանայր»։

ազատվում են ու փախչում, նրանց հետ նաև սրից փրկված զորքը ցանկացիր տարածվելով գնում էր։ Եվ Հոլը դարձյալ վերադառնում է Դվին քաղաքը։ Դավիթ մեծ հայրապետը, վերցնելով Սյունյաց տեր Սահակի մարմինը, տանում է սուրբ հայրապետանոց և թաղում սուրբ քնարանի մոտ գտնվող գերեզմանոցում։ Սահակից հետո նրա իշխանությանը տիրում է նրա որդի Գրիգորը, որը փաղաքշաբար անվանվում էր Սուփան։ Իսկ հայրապետը, հասնելով իր կյանքի ավարտին, վախճանվում է՝ առաջնորդությանը տիրելով իէ [27] տարի։

Իսկ նրանից հետո աթոռին հաջորդում է Հովհաննեսը, որը Կոտայք գավառի Ովա գյուղից էր։ Բայց նրա ձեռնադրությունից հետո, երբ անցնում է մոտ ութ տարի, կաթողիկոսարանի տան ընտանիքի առանձին բանսարկու մարդիկ Հովհաննես սուրբ հայրապետի վերաբերյալ նենգավոր լեզվով բամբասանքներ ու անօրեն խոսքեր են հորինում, ինչպես որ երբեմն կույս Շուշանը [զրպարտվեց] դառնալիր ծերերի կողմից, կամ Նարկեսոսը՝ անիրավ ու շար վկաների կողմից, կամ նույն ինքը Բանն Աստված՝ Հուդայի և անօրեն քահանայապետերի կողմից։ Եվ քանի որ այն ժամանակ Հայոց իշխանաց իշխան ու հրամանատար Բագարատ Բագրատունին գտնվում էր նրա մոտ, այդ պատճառով Աստծու մարդուն վատթար ու նանրալեզու հայհոյողները չվում գնում էին և ամբողջ երկրում լեզու թափելով՝ բամբասում էին նաև նրա առաջ։ Իսկ նա, հրապուրվելով նրանց սատանայական ոխակալ խոսքերով և ախորժակով իր մտքում ամբարելով նրանց պիղծ հայհոյանքները, հրովարտակ է գրում բոլորին՝ հեռու մնալ հովվապետին ընդունելուց. նա մտադրվել էր ինքնագլուխ կերպով հայրապետ նշանակել մեկ ուրիշին։ Իսկ մեծն Հովհաննեսը, իմանալով իշխանի սատանայական լկանքների մասին և հոգևոր հատու սրով նրան պաշարելով ու կապելով, ինքը վեր կենալով գնաց սուրբ Սահակի բնակատեղը ու թաքնվեց այնտեղ, վանքի քարայրում՝ լռելյայն զբաղվելով մշտնջենական աղոթքներով։ Այդ բանն իմանալով, Սմբատ մեծ սպարապետը, Սյունյաց տեր Գրիգորը և Հայոց այլ նախարարներ, միասին գալով, եպիսկոպոսների ժողով են անում և ստույգ կերպով իմանալով շար հայհոյիչների փուչ իժաթույն կեղծիքը, դարձյալ սուրբ աթոռին են հաստատում Աստծու մարդուն։ Այնուհետև Քրիստոսի եկեղեցին, որ երբեմն զրկվել էր իր զարդերից՝ փեսային վտարելու պատճառով, կրկին իր մոտ տեսնելով* առագաստավոր փեսային՝ նորից պայծառորեն զարդարվում էր։ Բայց Բագարատ իշխանը այդ պատճառով է՛լ ավելի

* [Բնագրում՝ «դարձեալ յինքն»]։ Այստեղ ինչ-որ բառ է պակասում, գուցե պետք է ասել. «դարձեալ յինքն տեսանելով...» [մենք այդպես էլ թարգմանել ենք]։

առաւել վասն այնորիկ զշարեալ լինէր, զի առանց կամաց նորա եղև հայրապետին հաստատութիւն և ուր ոչ ընկալեալ զնա, խնդրէր ժամ դիպող՝ զա՛յլ փոխանակ նորա կացուցանել։ Բայց քիչքն անօրէնք սաստկապէս պատուհասիւ առհասարակ սատակէին յաստուածասաստ բարկութենէ անտի. ոմն 'ի բարձրաւանդակ քարանձաւաց 'ի վայր հոսեալ՝ և քարաժայռքն բաժինս 'ի մարմնոյ նորա առնուին, մինչ զի ոչ մնայր ոսկր առ ոսկեր։ Իսկ այլ ոմն 'ի բարձրաբերձ տանեաց 'ի վայր գիշերի գլեալ՝ և բոլոր անդամք նորա ջախեալ ջախջախեալ, և այնպէս սատակեալ։ Եւ այլ ոմն յորձանաց ուղխից գետավէժ լեալ՝ և ոչ գերեզման անգամ զնա ընկալաւ։ Եւ այսպէս վերին ակնարկութեամբն վրէժս շարաշարս 'ի նոցանէ վասն ապիրատ լեզուացն խնդրեցաւ առ 'ի յուսումն խրատու այնոցիկ որ զկնի գալոց են՝ մի՛ արկանել ձեռս մեղանչականս յօծեալն Աստուծոյ։

Յետ այսորիկ ոստիկան ոմն՝ Ապուսէթ անուն, առաքեալ յամիրապետէն Զաբրէ, չուէ գայ 'ի Հայս։ Իբրև եհաս 'ի Տարօն գաւառ՝ իսկ և իսկ 'ի կապանս զիշխանն Բագարատ ըմբռնեալ, ետ տանել առ ամիրապետն, որ և սակս սրբոյ հայրապետին զանիրաւն խորհէր. աստ ապա զիրաւացի պատուհաս վրէժխնդրութեան ըստ արժանին յանձին իւրում կրէր։ Բայց բնակիչք Տաւրոս լերինն ըստ աղխատրոյզ իւրեանց բարուցն համագունդ 'ի մի վայր հաւաքեալ և զմի զինուորութիւն զինուորեալ, և յանկարծակի 'ի վերայ տարմաբար յարձակեալ՝ սպանէին զոստիկանն Ապուսէթ, իբրու վրժէս իմն իշխանին Բագարատայ պահանջեալ 'ի գայթակղութիւն անձանց իւրեանց։ Եւ ապա սպայք որու նորա ցանեցիր սփռեալ՝ չուեալ գնացին առ ամիրապետն գուժ տալանել նմա զիրին աղէտս։

Զայսու ժամանակաւ Գրիգոր Սիւնեաց տէր, որ Սուփանն յորջորջիւր, և Բաբգէն Սիսական նահապետն գրգռութիւն շար 'ի մէջ իւրեանց զարթուցեալ և գումարտակ 'ի վերայ իրեարց կարգեալ 'ի պատերազմ, սպանանի ապա Սուփանն 'ի Բաբգենայ. և պայազատէ զտէրութիւնն Վասակ որդի նորա ընդ նորա, որ ըստ փաղաքշական անուանն Գաբուռ անուանիւր։

Բայց ամիրապետն իմացեալ զսպանումն Ապուսեթայ՝ այնուհետև զօր գումարէ, գունդ կազմէ, ջոլիրս սպայից պատրաստէ, և տուեալ 'ի ձեռս ուրումն ընդոծնի իւրոյ՝ Բուղայ կոչեցելոյ, առաքէ 'ի Հայս. և ապա հրաման անշուշտ 'ի վերայ եդեալ՝ զիշխանս աշխարհիս և զտեարս համագունդ 'ի կապանս ըմբռնեալ առ ինքն տարցէ, և զայլ ևս ռամիկ հեծելազօրս, որ սուր յազդեր ունել մարթացեալ և կամ զզէն

է շարանում, որովհետև առանց իր կամքի եղավ հայրապետին հաստատելը, և այնտեղ նրան չընդունելով՝ նա փնտրում էր հարմար պահ՝ նրա փոխարեն մեկ ուրիշին նշանակելու համար։ Իսկ անօրեն բանսարկուները սաստկապես տանջվելով, առհասարակ կոտորվում են աստվածասաստ բարկությունից, մեկը բարձրավանդակ քարանձավից վայր էր ընկնում, և քարաժայռերը նրա մարմինը կտոր-կտոր էին անում, այնպես որ ոսկորը ոսկորի վրա չէր մնում։ Մեկը գիշերով բարձրաբերձ տանիքից վայր էր ընկնում, և նրա մարմնի բոլոր մասերը ջարդ ու խուրդ էին լինում, ու նա էլ այդպես էր մեռնում։ Մի ուրիշը արագահոս ջրերի հորձանքից գետի մեջ էր ընկնում, և նրան անգամ գերեզմանը չընդունեց։ Եվ այդպես աստվածային ակնարկության միջոցով նրանցից շարաշար վրեժ պահանջվեց՝ նրանց անիրավ լեզվի պատճառով, որպես խրատ նրանց համար, ովքեր գալու են նրանցից հետո, որպեսզի նրանք իրենց մեղանչական ձեռքերը չդնեն Աստծու օծյալից։

Դրանից հետո Զաբր ամիրապետի կողմից առաքվում է Աբուսեթ անունով մի ոստիկան, որը շարժվում գալիս է Հայաստան։ Երբ նա հասնում է Տարոն գավառը, իսկույն շղթայակապ անելով Բագարատ իշխանին, տանել է տալիս ամիրապետի մոտ. նա սուրբ հայրապետի մասին անիրավ բան էր խորհում։ Հետո նա այնտեղ ըստ արժանվույն կրում է վրեժխնդրության իրավացի պատուհաս։ Բայց Տավրոս լեռան բնակիչները իրենց խառնակ բնավորության պատճառով հավաքվելով մի վայրում, սպառազինվելով ու գայթակղվելով, խմբովին հանկարծակի հարձակվում են նրա վրա և սպանում ոստիկան Աբուսեթին՝ լուծելով Բագարատ իշխանի վրեժը։ Եվ ապա նրա [Աբուսեթի] զորքի սպաները, ցանուցիր սփռվելով, գնում են ամիրապետի մոտ՝ գուժելու դեպքի աղետների մասին։

Այդ ժամանակներում Սյունյաց տեր Գրիգորը, որը անվանվում էր Սուփան, և Սիսական նահապետ Բաբկենը, շար խռովություն արթնացնելով իրար նկատմամբ, զորք են հավաքում և պատերազմ սկսում միմյանց դեմ։ Բաբկենը սպանում է Սուփանին, և նրա փոխարեն իշխանությանը տիրում է նրա [Սուփանի] որդի Վասակը, որի փաղաքշական անունը Գաբուռ էր։

Բայց ամիրապետը, իմանալով Աբուսեթի սպանության մասին, զորք է գումարում, գունդ կազմում, հեծելազոր պատրաստում և տալով Բուղա անունով իր մի ընդոծնի ձեռքը, ուղարկում է Հայաստան։ Եվ ապա որոշակի հրաման է տալիս՝ բռնել երկրի բոլոր իշխաններին ու տերերին, շղթայակապ անել և բոլորին իր մոտ տանել, իսկ ռամիկ հեծելազորին, որի [զինվորները] կարող էին ազդերին սուր կրել կամ

շարժել՝ զամենեսին սատակեացէ։ Բայց միայն թէ 'ի լաւագունից ոմանց
'ի պաշտօն օրինացն Մահմէտի ոք դարձցի՝ զնոսա ընդ իւր տարցի։
Իսկ նորա համագունդ զօրօք չուեալ եկեալ հասեալ 'ի Տարօն գաւառ
և իբրև զկայծակն իմն փայլակնահար զաշխարհն արարեալ՝ վաղվա-
ղակի ըմբռնեալ լինէին և որդիքն ևս Բագարատայ ըմբռնելոյ՝ Աշոտ
և Դաւիթ, 'ի Բուխայէ հանդերձ ա՛յլ ևս իւրեանց ազգակցօք։ Եւ 'ի դի-
պահոջ զնոսա եդեալ՝ ասպատակ զզօրս իւր սփռէ ընդ ծորձորս 'ի լե-
ռինն Տարոնի և ընդ երեսս գաւառին։ Եւ նախ զբնակեալսն 'ի խոխոմն
լերինն զորս ըմբռնէին՝ տապաստ երկրի տային անողորմ սրով. իսկ
զգաւառին հեծելագունդն զգոնեիկս զոմանս սրոյ ճարակ տային, և զայ-
լքս ձերբակալս արարեալ առ բռնաւորն հասուցանէին՝ տոռամբք զնո-
սա քարշեալ։ Իսկ զանձնագեղս և զերեսաւորս և զզունեանս արտաքոյ
այլոցն տրոհեալ վասն անօրէն յօրէնս իւրեանց դարձուցանելոյ ըստ
ամիրապետին հրամանի. և զայլս ևս մնացականս առ 'ի նոցանէ հրա-
մայէր սրով վատնել։ Եւ այսպէս անդ ըստ գաւառաց գաւառաց շրջե-
լով՝ բազում աւուրս զետեղէր, մինչև զիշխանն Աշոտ և զեղբայր նորա
զԴաւիթ առ ամիրապետն խաղացուցեալ առաքէր հանդերձ հարազա-
տութեամբքն իւրեանց։ Ապա անտի չուէ գնայ զկողմամբք Վասպուր-
ականի։ Իսկ մեծ իշխան տանն Արծրունեաց՝ Աշոտ, թէպէտև հան-
դերձէր զինքն իւրայօքն վառեալովք մարտ ընդ բռնադատին Բուխայի գը-
նել, սակայն նախարարքն իւր ոչ գտանէին նմա համամիտք 'ի գործ
պատերազմի։ Ապա այնուհետև ակամայ կամօք հարկեալ երթայ առ
Բուխայ. և նորա վաղվաղակի զնա ըմբռնեալ հանդերձ համագունդ հա-
մազգեօք իւրովք և աւուրս ինչ 'ի դիպահոջ կացուցեալ, ապա առաքէ՝
գնացուցանելով առ ամիրապետն, կանամբք ևս և որդւովք հանդերձ։
Եւ այնուհետև ձեռս զգաւառօքն արկեալ՝ զամենայն այր պատերազ-
մական, որ սուր 'ի ձեռին առեալ է կամ զզէն շարժեալ՝ հրամայէ ձեր-
բակալս առ ինքն տանել. և ըստ օրինակի կողմանցն այնոցիկ Տարո-
նոյ և անդ ևս նոյնպիսաբար արարեալ և տրոհեալ զբարեհասակա-
շափսն և զյաջողաձեռնականսն 'ի պէտս իւրեանց պաշտամանցն բե-
րել, և զայլսն կերակուր սրոյ տային՝ արեամբ լցեալ զստորեանն ամե-
նայն։ Եւ ինքն չուէր գնայր հասանիլ նովին իսկ ասպատակաւ հինի զկող-
մամբք մայրաքաղաքին Դվնայ։ Իսկ մեծ սպարապետն Հայոց Սմբատ՝
իբրև ետես զառ 'ի նմանէ վրդովեալ սասանութիւնն և զսատակիչ սրոյ
զճարակումնն, որ եհաս ազգացն այնոցիկ՝ զմահ 'ի կեանս խառնեալ
սակս աշխարհին իւրոյ փրկութեան գնայ ընդ առաջ նորա բազում ընծայիւք և պատարագօք։ Եւ ընկալեալ 'ի նմանէ պատուասիրաբար՝ ա-
պա 'ի կամս նորա յամենայնի բերեալ կարապետէ առաջի նորա և ճա-

զենք շարժել, բոլորին կոտորել։ Միայն թե նրանցից լավագույն մարդ-
կանց, ովքեր կընդունեն Մահմեդի կրոնը, իր հետ տանել։ Եվ նա մեծ
զորքով գալիս հասնում է Տարոն գավառը՝ կայծակի նման շանթահար
անելով աշխարհը։ Բուղայի և նրա ազգակիցների կողմից անմիջապես
բռնվում են և ձերբակալված Բագարատի որդիները՝ Աշոտն ու Դավիթը։
Կարճ ժամանակով նրանց բանտարկելով՝ [Բուղան] իր զորքով ասպա-
տակություն է սփռում Տորոս լեռան ծորձորներում ու ամբողջ գավա-
ռում։ Եվ լեռան ջրոտ տեղերում նախապես բնակվածներից ում բռ-
նում էին, անողորմ սրով գետին էին փռում, իսկ գավառի ռամիկ հե-
ծելազնդից ոմանց սրի էին քաշում, ոմանց ձերբակալելով ու պարանով
քարշ տալով՝ հասցնում էին բռնակալի մոտ։ Լավերին, քաջաբար գի-
մադրողներին և առողջ գույն ունեցողներին մյուսներից հեռացնում էին՝
ամիրապետի հրամանի համաձայն իրենց անօրեն կրոնի կողմը դարձ-
նելու համար, իսկ մնացածներին հրամայում էր սրով սպանել։ Եվ
այդպես շրջելով գավառից գավառ՝ շատ օրեր էր սպասում, մինչև որ
իշխան Աշոտին ու նրա եղբայր Դավթին իրենց հարազատների հետ
միասին ուղարկում է ամիրապետի մոտ։ Հետո այնտեղից շարժվում,
գնում է Վասպուրականի կողմերը։ Իսկ Արծրունյաց տան մեծ իշխանը՝
Աշոտը, թեպետև պատրաստվում էր զինված յուրայինների հետ մար-
տընչել Բուղայի դեմ, սակայն նախարարները պատերազմի հարցում
համամիտ չէին նրա հետ։ Այնուհետև նա [Աշոտը] ստիպված գնում
է Բուղայի մոտ։ Իսկույն նրան ու նրա ազգակիցներին բռնելով՝ Բու-
ղան մի քանի օր նրանց պահում է բանտում, իսկ հետո կանանց ու
որդիների հետ միասին ուղարկում է ամիրապետի մոտ։ Այնուհետև
զավառները իր ձեռքի տակ գցելով՝ հրամայում է կովող ամեն մի մար-
դու, ով սուր էր վերցրել կամ զենք շարժել, ձերբակալել և իր մոտ
տանել։ Նա այնտեղ էլ վարվում է Տարոնի կողմերի օրինակով, [այն
է]՝ չափահասներին ու հաջողակներին առանձնացնում է իրենց պաշ-
տամունքին դարձնելու համար, իսկ մյուսներին սրի ճարակ էին դարձ-
նում՝ նրանց արյամբ լցնելով բոլոր փոսերը։ Եվ ինքը նույն ավազա-
կային ասպատակությամբ գնում հասնում է Դվին մայրաքաղաքի կող-
մերը։ Իսկ Հայոց մեծ սպարապետ Սմբատը, երբ տեսավ նրա կողմից
կատարված ցնցումներն ու սպանիչ սրի կոտորածները, որ հասան
այն ժողովուրդներին, մահն աչքն առած իր աշխարհի փրկության հա-
մար գնում է նրան ընդառաջ բազում ընծաներով ու պարգևներով։ Բու-
ղան նախ մեծարանքով ընդունում է նրա ընծաները, և ապա նրա
ցանկությամբ նրան առաջնորդում է ու ճանապարհ հարթում ամեն տեղ,

նապարհ նմա հորդէ ամենայն ուրեք, ուր և նա խորհեսցի երթալ։ Եւ բազում իմաստութեամբ զսաղապ և զսնոտի միտս նորա յինքն յանկուցեալ վստահէ այնպէս, զի խորհրդակից իւր բռնաւորն և կամակից զմեծ ասպարապետն կացուցանէր։ Եւ առ հասարակ 'ի միասին շուեն երթան մտանեն 'ի Դվին քաղաք. և անդ ևս ապա ձեռն շուրջ զգաւառօքն սփռեալ և ասպատակս հինից տարածեալ՝ և զորս միանգամ 'ի զինուորական կարգէ սուսերամերկս և զինաշարժս գտանէին, զոմանս Իսմայէլեան երկաթին տային կերակուր, իսկ զոմանս տոռունս 'ի պարանոց արկեալ, այնպէս առ բռնաւորն քարշեալ ածէին։ Եւ անդ ապա կրկնակի ընդ ընտիրս զամենեսեան հանեալ, զորս 'ի կողմանս Տարօնոյ և 'ի Վասպուրական նահանգէ ընդ իւր առեալ ածէր, և զայժմու ևս ըմբռնեալս զդիտակավայելուչսն տրոհեալ 'ի բաց և 'ի բանտ արգելեալ՝ և զայլսն անողորմ սրոյ տային կերակուր։ Բայց յաղագս բանտարկեալ կապելոցն դնէին 'ի միտս իւրեանց վաղվաղակի զնոսա հնազանդեցուցանել 'ի հաղորդութիւն օրինացն Մահմէտի։ Իսկ իբրև հարցան 'ի բռնադատէն Բուխայէ ուրանալ զՔրիստոս և 'ի կանոնս պաշտամա՛ն նոցա դառնալ. նոքա զեղեցիկ իմն մոլութեամբ զփոյթ պընդութեան յանձինս ընդունէին՝ առ Քրիստոս լաւ վարկեալ երթալ քան առ ժամանակ վայելել 'ի մեղս։ Եւ ցուցանէին և յայտ առնէին, եթէ չեն արժանի շարշարանք ժամանակիս հանդերձելոյ փառացն, որք յայտնելոց են 'ի մեզ։ Եւ այնուհետև սաստկապէս 'ի շար բռնաւորէ յուզեցան մախանք 'ի վերայ սրբոցն՝ կապանօք զնոսա խոշտանգելով, և բանտիւ և հարուածովք և անսուաղութեամբ, զի թերևս զարհուրեալ նոցա 'ի դառն կոտանացն՝ 'ի կամս բռնաւորին եկեալ լիցին։ Իսկ նոցա յամենայնի քաջապէս համբերեալ նախատանաց և շարշարանաց և գելարանաց և հարուածոց, մինչ զի առ հասարակ կեղեքեալ լինէին մարմինք նոցա։ Եւ այնպէս արհամարհեալ և առ ոչինչ զվիշտս դրեալ, համբերէին բազում ճգանց և շարշարանաց. և եկին 'ի մահ խնդութեամբ, վասն զի զօրանային միշտ 'ի բղխմանէ անտի ջուրց կենդանութեանց, որ ելեալն էր 'ի կողիցն Քրիստոսի և ցողոյր 'ի վերայ նոցա։ Իսկ տեսեալ բռնաւորին զամենեսին զնոսա պինդս և փոյթս 'ի մեռանել վասն առ 'ի Քրիստոս հաւատոցն՝ զգեցաւ զսրտմտութիւն բարկութեան 'ի վերայ նոցա իբրև զչար գազան, և հրամայեաց սրոյ ճարակ զնոսա տալ՝ ոչ 'ի միում ժամու, այլ 'ի բազում աւուրս սակաւ առ սակաւ զնոսա վատնեալ. և ածեալ իբրև զոչխար 'ի սպանդ, զի թերևս զղջացեալք ուրացին։ Իսկ նոքա յուսովն աստուածայնով ոչ 'ի բաւոյն 'ի շարն, այլ 'ի շարէն 'ի բարին զղջացեալք լինէին։ Եւ այսպէս բազում վիշտս կրեալ համբերութեամբ բազմաւ՝ կցորդք բարեաց

ուր նա կցանկանար գնալ։ Եվ մեծ իմաստությամբ նրա խոտոր ու սընոտի մտքերը իրեն ենթարկելով՝ բռնակալը նրա մեջ այնպիսի վստահություն է առաջացնում, որ մեծ սպարապետին դարձնում է իր կամակիցն ու խորհրդականը։ Եվ նրանք միասին գնում մտնում են Դվին քաղաքը, և այնտեղ ևս ասպատակելով՝ շրջակա գավառները ենթարկում են իրենց։ Եվ երբ այնտեղ նրանք հանդիպում էին զինված սուսերակիրների ու զինաշարժների, ոմանց իսմայելյան սրի կերակուր էին դարձնում, իսկ ոմանց պարանոցներն էլ պարան գցելով ու քարշ տալով՝ տանում էին այն բռնակալի մոտ։ Այնտեղ նրանք կրկին ջոկում էին բոլորին, որոնց մի մասին նա իր հետ բերել էր Տարոնի կողմերից, իսկ ոմանց՝ Վասպուրականի նահանգից։ Այդ ժամանակ ևս բռնվածներից տեսքով լավերին առանձնացնում էին ու բանտարկում, իսկ մյուսներին անողոք սրի ճարակ դարձնում։ Բայց բանտարկյալների ու շղթայվածների մասին մտածում էին՝ նրանց անմիջապես ենթարկել Մահմեդի կրոնին։ Իսկ երբ բռնակալ Բուղան նրանց առաջ հարց դրեց՝ ուրանալ Քրիստոսին և դառնալ իրենց պաշտամունքին, նրանք մի զեղեցիկ մոլությամբ խոստովանվում են իրենց հաստատուն ձգտումը, [այն է]՝ լավ է մեռնել, քան թե ժամանակավոր կյանքը վայելել մեղքերի մեջ։ Եվ ցույց էին տալիս ու հայտնում, թե ժամանակավոր շարշարանքները արժանի չեն գալիք այն փառքին, որ հանդես է գալու մեր մեջ։ Այնուհետև շար բռնակալը սաստկապես շարժեց իր նախանձը սրբերի վրա՝ նրանց խոշտանգելով կապանքներով, բանտով, ծեծելով ու սոված պահելով, որպեսզի թերևս նրանք զարհուրեն այդ դաժանություններից և կատարեն բռնակալի կամքը։ Իսկ նրանք քաջաբար դիմացան ամեն ինչին՝ նախատինքներին, շարշարանքներին, գելարանի տանջանքներին, ծեծին, այն աստիճան, որ նրանց մարմինները ամբողջովին բզիկ-բզիկ եղան։ Եվ այդպես արհամարհելով ու անտեսելով տառապանքները՝ նրանք դիմանում էին բազում նեղություններին ու շարշարանքներին և ուրախությամբ գնում էին մահվան, քանի որ միշտ զորանում էին կենդանարար ջրերի բխումից, որ գալիս էր Քրիստոսի կողերից և ցողում նրանց վրա։ Իսկ բռնակալը, երբ տեսավ, որ նրանք բոլորը ձգտում են մեռնել Քրիստոսի հավատի համար, բարկացավ նրանց վրա իբրև շար գազան և հրամայեց նրանց սրի քաշել ոչ թե մի ժամում, այլ շատ օրերի ընթացքում՝ նրանց քիչ-քիչ սպանելով, ինչպես ոչխարներն են բերում սպանդանոց, որպեսզի նրանք զղջան ու ուրանան։ Իսկ նրանք աստվածային հույսով զղջալով դառնում էին ոչ թե բարուց դեպի շարը, այլ շարից դեպի բարին։ Եվ այդպես համբերությամբ կրելով բազում նեղություններ՝ նրանք բարուն ծառայողների

վաստակաւորացն զտան. և կատարեալք սրով՝ պսակեցան 'ի Քրիստոսէ։ Էին 'ի նոցանէ և այլ ևս արք եօթն, որոյ անուն գլխաւորին նոցա Ատոմ ճանաչիւր՝ 'ի գաւառէն Աղբակայ յՈրսիրանս գեղջէ. և վասն զի զուարթագին երեսօք էին և դեղեցկադիտակք և աջողակք 'ի ղէն շարժել՝ ոչ զնոսա ընդ այլսն սրով կատարէին. զի դեռևս ակն ունէին զոնեա զնոսա յիւրեանցն թերևս արկանել կորստական խորխորատ։ Եւ բազում պարգևս բարեաց նոցա և զանձս ոսկւոյ և արծաթոյ առաջի արկանէին. այլ և գիւղս և գերդաստանս տալ խոստանային՝ և երևելի և փառաւորս 'ի դրան արքունի առնել։ Իսկ երանելիքն ամենևին բնաւ իսկ անհաւան միտս նոցա յայնմիկ ցուցեալ՝ իբրև նահատակք քաջք նորոգեալք լինէին 'ի խոստովանութեան իւրեանց, զՔրիստոս, ըստ գրեցելումն՝ համարեալ իւրեանց կեանս և զմեռանելն՝ շահ։ Ապա յայնըմհետէ ևս առաւել սաստկացեալ լինէր բարկութիւն բռնաւորին 'ի վերայ նոցա. դառն տանջանարանս զնոքօք հրամայէր հեղուլ և արկանել զնոսա յամենայն շարշարանս և բախմունս կտտանաց, զոր ոչ լեզու բաւական լինի պատմել և ոչ գրով բովանդակել։ Սակայն յոյն աւետեաց և սէրն Քրիստոսի և ուրախութիւն վկայութեանն թեթևացուցանէր նոցա զանհնարին ծանրութիւն բեռանցն. վասն որոյ ծանուցեալ բռնաւորին զանհրապոյր միտս սրբոցն՝ հրամայէ զնոսա զփայտէ կախել։ Եւ մինչդեռ ըստ կերպարանաց խաչի կախեալ կային՝ ուժգին պաղատանօք սուրբն Ատոմ քաջալերութիւն ընկերացն մատուցանէր։ «Մի՛՝ ասէ, զարհուրիք՝ եղբարք, յառժամանակեայ մահուանէս. զի թէպէտև շարշարիմք վասն Քրիստոսի՝ հաղորդութիւն ունիմք ընդ Աստուծոյ կենդանւոյ։» Եւ ապա յերկինս փոխանակ աչացն զխորհուրդս իւր ամբարձեալ՝ ասէ. «Յիսուս Քրիստոս՝ յոյս իմ, ուխտաւոր գոլով իմ յայսմիկ տօնի տարեկանի մեծի նահատակին Գէորգայ նոխազ պատարագ և վասն փառաց անուան քո. և արդ այսուհետև զիս ինքն քեզ փոխանակ նոխազի մատուցանեմ։ Ընկա՛լ զողջակիզութիւն անձին իմոյ, որ ընդունիշդ ես պատարագաց. և խառնեա զիս և որք ընդ իս են՝ 'ի թիւ վկայից քոց սրբոց, որք սիրեցին զօր երևելոյ գալստեան քում։» Եւ այսպէս առհասարակ նոցա համբերեալ մեծի պատերազմին բազում երկայնամտութեամբ՝ և յաղթեալ ամենայնի, աւանդեցին զհոգիս իւրեանց և ընկալան 'ի Քրիստոսէ զպսակն անեղծութեան։ Իսկ ժողովք քրիստոնէից թէպէտև վշտանային սակս սաստիկ սրոյն կոտորման զսուրբսն Աստուծոյ. սակայն գովեստ մեծ կատարէր նոցա Քրիստոս 'ի ձեռն վրկայիցն։

Կատարեցան ամենեքին սոքա սուրբքս, որ առաջի և զկնի՝ յերեքհարիւրերորդի երկրորդի թուականութեանս Թորգոմեան, ընդ ամենայն՝

կցորդը դարձան և սրով սպանվելով՝ պսակվեցին Քրիստոսի կողմից։ Նրանց մեջ կային յոթ այլ մարդիկ, որոնց գլխավորի անունը Ատոմ էր, որը Աղբակ գավառի[52] Որսիրանք գյուղից էր։ Եվ քանի որ նրանք ավելի զվարթագեմ ու գեղեցկատես էին և զենք գործածելու մեջ վարժ, նրանց մյուսների հետ սրի չեն քաշում, որովհետև դեռևս հույս ունեին, թե գոնե նրանց իրենց կորստական խորխորատը կգցեն։ Նրանց առաջն էին դնում բազում ընտիր պարգևներ, ոսկու և արծաթի գանձեր, նաև խոստանում էին տալ գյուղեր, կալվածքներ և արքունի դռանը նրանց երևելի ու փառավոր մարդ դարձնել։ Իսկ երանելիները, ամենևին շահավատալով նրանց, իբրև քաջ նահատակներ, նորոգվում էին Քրիստոսին դավանելու մեջ՝ ըստ այն գրածի, թե իրենց կյանքն ու մահը օգուտ են համարում։ Դրանից հետո բռնակալը է՛լ ավելի է բարկանում նրանց վրա. հրամայում է դաժան տանջարանները լցնել նրանցով և նրանց շարշարել ամեն տեսակի կտտանքներով, որ հնարավոր չլինի լեզվով պատմել և ոչ էլ գրի առնել։ Սակայն ավետիսի հույսը, Քրիստոսի սերը և նահատակվելու ուրախությունը թեթևացնում էին նրանց անսահման ծանր բեռը, որի համար բռնակալը, իմանալով սրբերի անխախտ նպատակը, հրամայում է նրանց կախել փայտից։ Եվ մինչդեռ խաչի ձևով նրանք կախված էին, սուրբ Ատոմը ուժգին պաղատանքով քաջալերում էր ընկերներին՝ ասելով. «Եղբայրնե՛ր, մի՛ զարհուրեք առժամանակյա մահվանից, որովհետև թեև շարշարվում ենք Քրիստոսի համար, բայց հաղորդվում ենք կենդանի Աստծու հետ»։ Եվ ապա աչքերի փոխարեն դեպի երկինք է բարձրացնում իր խորհուրդները՝ ասելով. «Հիսուս Քրիստոս, հույս իմ, քո փառավոր անվան համար մեծ նահատակ Գեորգիի տարեկան այս տոնին ու քո անվան փառքի համար ես որպես ուխտավոր ու նոխազ զոհ լինելով՝ այսուհետև ինքս ինձ քեզ եմ մատուցում նոխազի փոխարեն։ Ընդունի՛ր իմ անձի ողջակիզությունը, դու, որ զոհերն ընդունողն ես, ինձ և ինձ հետ եղողներին խառնի՛ր քո այն սուրբ վկաների հետ, որոնք սիրեցին քո գալստյան և երևալու օրը»։ Եվ այդպես նրանք՝ բոլորը, ներողամտությամբ դիմանալով մեծ պատերազմին ու հաղթելով ամեն ինչի, ավանդեցին իրենց հոգիները՝ Քրիստոսից ստանալով անեղծ պսակը։ Իսկ քրիստոնեական ժողովուրդը թեև վշտանում էր Աստծու սրբերին անողոք սրով կոտորելու պատճառով, սակայն Քրիստոսը վկաների միջոցով նրանց համար մեծ օրհնություն էր կատարում։

Այս բոլոր սրբերը՝ և՛ սկզբում, և՛ հետո, վախճանվեցին Հայոց թվականության երեք հարյուր երկրորդ տարում. նրանք բոլորը միա-

աւելի քան զհարիւր յիսուն այր. թող զայնոսիկ, որք յայլ գաւառս և 'ի քաղաքս եղեն վկայք, որոց և անուանք նոցա գրեալ են 'ի դպրութեան կենաց։

Բայց մեծ հայրապետն Յովհաննէս օր սահմանեալ յիշատակի ամենայն սրբոցս այսոցիկ տարեւորական պատուով տօնէին զսոցա կատարումն 'ի Մեհեկի ամսեան, որ օր քսան և հինգ էր ամսոյն՝ 'ի փառս ամենակալին Աստուծոյ։

Այլ էին ևս ոմանք 'ի նոցանէ, որք ոչ կարացեալ տեսել, ժուժալ, տանել և համբերել պատերազմին, լքեալք և լուծեալք դարձան յետս յանօրէն օրէնս Իսմայէլեան բռնադատին. և ուրացեալք 'ի քրիստոնէական հաւատոցն ըստ գրգռութեան սատանայական արբանեկացն՝ զաճիւն հնոցի միայն զանձամբ արկեալ, տրտմեալք և գունատեալք և ամօթալիցք՝ թերևս և ոչ ստորայնոցս հասեալ հայթայթանաց՝ կորուսին զանուն և զկեանս մշտնջենական. որ քան զամենայն պատիւ բարձրագոյն և փառաւորագոյն է, և հրոյն գեհենի միանգամայն իսկ գտան ժառանգորդք։

Բայց բռնաւորն Բուխայ իբրև ետես զամենայն ինչ աջողեալ ըստ իւրոց կամացն՝ ապա հրոսակս առաքէ Վասակայ Սիսական իշխանի և եղբօր նորա Աշոտոյ և այլոց ևս տերանց աշխարհի նոցա, զի ըմբռնեալ առ ինքն վաղվաղակի հասուցեն զնոսա։ Բայց յոլովք 'ի տերանցն կուսակալաց յանառիկ ամրոցն Բագաց դիմեալ հաւաքեալ փրծանէին 'ի ձեռաց նեղչացն։ Իսկ իշխանն Վասակ՝ հազիւ 'ի նոցանէ ճողոպրեալ՝ փախստեայ գնայր շուէր ընդ կողմանս Կոտայս գաւառի։ Զայն զգացուցեալ վաղվաղակի Բուխային՝ զօր զհետ առաքէ ըմբռնել զնա։ Իսկ իբրև զհետ կրթեալ հասին հուպ իշխանն հէնք հրոսակին, ապա ընդ կրունկն դարձեալ նորա՝ առ 'ի գործ զվաղակաւորն առեալ՝ առ հասարակ զնոսա թաւալգլոր խաղացուցանէր. և ինքն անցեալ զընայր յարեւելս յաշխարհն Գարդմանաց առ իշխան աշխարհին, որ Կրտրիճն անուանիւր։ Բայց և յայնմ ևս ոչ եղև տեղի գտեալ փրկութեան իշխանին Վասակայ 'ի թշնամւոյն. վասն զի իշխանն Գարդմանաց դաւաճանեալ 'ի դիւէն՝ կալեալ կապէ զնա և առաքէ տայ 'ի ձեռս Բուխայի, 'ի մտի եդեալ, թէ փոշիշն ինչ բարւոյ 'ի Բուխայէ սակս այնորիկ 'ի նմանէ գտցի։ Իսկ բռնաւորն առեալ ընկալեալ զնա՝ ապա և զեղբայր նորա զԱշոտ և մեծ տիկինն զմայր նոցա ըմբռնեալ զօրացն ասպատակելոց՝ առ նա վաղվաղակի հասուցանէին 'ի Դվին քաղաք։

Աստանօր ապա մեծ հայրապետն Յովհաննէս, վասն զի շրջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին Գեղարքունւոյ, լցեալ զկէտ կենաց իւրոց՝ վախճանի 'ի մեծ ուխտի կրօնաւորական կայանին Մաքենացւոց,

սին ավելի քան հարյուր հիսուն մարդ էին, չհաշված նրանց, ովքեր նահատակվեցին այլ գավառներում ու քաղաքներում, և որոնց անունները գրված են կյանքի գրքում։

Բայց Հովհաննես մեծ հայրապետը այս բոլոր սրբերի համար սահմանեց հիշատակի օր, և նրանց վախճանը ամեն տարի տոնում էին մեհեկան ամսի քսանհինգին՝ ի փառս ամենակալ Աստծու։

Նրանց մեջ կային և այնպիսիները, որոնք չկարողանալով դիմանալ, տոկալ, տանել ու դիմադրել պատերազմին, լքեցին, հեռացան ու դարձան իսմայելյան բռնադատ, անօրեն կրոնի կողմը։ Սատանայական սպասավորների դրդմամբ ուրանալով քրիստոնեական հավատը՝ նրանք միայն հնոցի մոխիրը լցրին իրենց վրա։ Եվ տրտմելով, գունատվելով, խայտառակվելով ու չկարողանալով երկրայինների համար ճար գտնել՝ նրանք կորցրին [իրենց] անունն ու մշտնջենական կյանքը, որ ամեն ինչից վեր փառք ու պատիվ է, և նրանք միանգամից գեհենի հրին դարձան ժառանգորդներ։

Բայց բռնակալ Բուղան, երբ տեսավ, որ ամեն ինչ հաջողվեց իր կամքով, ապա զորք է ուղարկում Սիսական իշխան Վասակի, նրա եղբայր Աշոտի և նրանց աշխարհի այլ տերերի վրա, որպեսզի նրանց բռնեն ու շտապ իր մոտ հասցնեն։ Բայց կուսակալ տերերից շատերը գնում հավաքվում են Բաղաց անառիկ ամրոցում և ազատվում իրենց նեղողների ձեռքից։ Իսկ Վասակ իշխանը, նրանցից հազիվ ճողոպրելով, փախչում, գնում է Կոտայք գավառի կողմերը։ Այդ մասին անմիջապես տեղյակ են պահում Բուղային, որը նրա հետևից զորք է ուղարկում՝ նրան բռնելու համար։ Իսկ երբ ավազակները հետապնդելով հասնում են իշխանին, նա ետ է դառնում և թուրը գործադրելով՝ նրանց բոլորին թավալգլոր է անում, ու ինքը անցնում գնում է Գարդման աշխարհի արևելյան կողմը, այդ աշխարհի Կտրիճ անունով իշխանի մոտ։ Բայց այդ ևս Վասակ իշխանի համար թշնամուց փրկվելու տեղ չեղավ, որովհետև Գարդմանի իշխանը, խաբվելով դևից, նրան բռնում-կապում և ուղարկում-տալիս է Բուղայի ձեռքը՝ մտածելով, որ դրա համար նա Բուղայից լավ օգնություն կստանա։ Բռնակալը նախ ընդունում է նրան, իսկ հետո [Բուղայի] ասպատակող զորքը բռնում է նրա [Վասակի] եղբայր Աշոտին ու մեծ տիկնոջը, այսինքն՝ նրանց մորը, և շտապ կերպով հասցնում են Դվին քաղաքը, նրա մոտ։

Այստեղ այնուհետև Հովհաննես մեծ հայրապետը, որ շրջագայում էր Գեղարքունի գավառի իրեն տրված կողմերում, հասնելով իր կյանքի ավարտին, վախճանվում է Մաքենացիների կրոնական մեծ միաբանու-

և 'ի նմին ուխտի սրբոյ 'ի հանգիստ զնա փոխէին. որ կալաւ զառաջնորդութիւն ամս քսաներկու։

Բայց բռնաւորն Բուխայ զբմբռնեալսն առ ինքն և զդիպահոջսն կացուցեալ՝ առեալ չուէ գնայ զկողմամբք արևելից, պայման պատգամացն առ սպարապետն Սմբատ յղեալ՝ վաղվաղակի զհետ նորա չուել երթալ հասանել ժամանել յամբոկ գործոյն։ Այլ նա նախ հրամայեալ ժողով եպիսկոպոսաց լինել 'ի քաղաքագիւղն Երազգաւորս՝ ձեռնադրեն 'ի հայրապետութիւն զՋաքարիայ 'ի Կոտայս գաւառէ 'ի գեղջէ Զագայ, և աղօթից նորա զանձն իւր յանձն արարեալ՝ ինքն չուէ գնայ առ բռնաւորն Բուխայ։ Իսկ Բուխայի երթեալ ըմբռնէ զմեծ իշխանն Ատրներսեհ, որ բնակեալ էր յամրոցին Խաչենոյ և զայլ ևս զհամազգիս նորա։ Եւ անտի չուեալ գնայ 'ի գաւառն Գարդմանայ՝ և պատնէշ և պաշարումն շուրջ զԳարդման բերդիւն եղեալ, ըմբռնէ անտի և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն 'ի կալանս կապանաց արկեալ։ Եւ անտի ևս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ 'ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում և Կոն անուանէին զնա. որ 'ի նախնոյ իւրմէ Սկկոյ՝ Սևորդիք ազգքն անուանէին։ Եւ ապա ևս իշխանն Աղուանից Եսայի նենգապատիր լեալ՝ առ 'ի նմանէ ըմբռնի 'ի ձեռն նորա հանդերձ համազգեօք իւրովք, ընդ նմին և այլ ևս տեարք և իշխանք աշխարհին Աղուանից կալեալ կապեցան ընդ ձեռամբ նորա, ոչ սակաւ ինչ արեան ճապաղիս հեղեալ ևս յայնմ աշխարհին։

Եւ այնուհետև զամենեսեան զնոսա, որք 'ի կալանս կապանաց և 'ի դիպահոջ առ նմա բերէին՝ և առեալ ընդ իւր խաղացուցեալ չուէ գնայ տանելով զնոսա առ ամիրապետն։ Ապա և զսպարապետն Սմբատ առեալ ընդ իւր տանելով յարքունական դուռն՝ կարծիս իմն նմա տալով, թէ միամտութեան նորա առ 'ի նմանէ փոխարէն բարեաց յամիրապետէն շնորհեսցի, տիրել տիրաբար բոլոր Հայաստանեայցս և առնուլ պարգևս և պատիւս յարքունուստ. և այնպէս դարձեալ դառնալ յիւրական աշխարհս։ Այլ իբրև շոգան հասին 'ի դուռն արքունի և յանդիման ամիրապետին եղեն, ապա և զնա ևս ընդ այլոց կապելոցն հաւասարեալ եդին 'ի բանտի. և ոչ յիշեցան առաջի նոցա երախտիք միամտութեան նորա առ նոսա։ Իսկ ապա յետ ոչ բազում ինչ աւուրց հարցափորձ 'ի վերայ հասարակաց կապելոցն տերանց և իշխանացն Հայոց և Աղուանից ածէին, զի կամ դարձցին յանօրէն յօրէնս նոցա՝ ուրացեալք զՔրիստոսի աստուածպաշտութիւնն և այնպէս բազում պարգևս և պատիւս 'ի նոցանէ առնուցուն և յուղարկեսցին 'ի հայրենի աշխարհն և 'ի տունս իւրեանց. և կա՛մ սաստիկ խոշտանկանօք և չարչարանօք և անհնարին մահու հատանիցեն զյոյս կենաց նոցա։ Եւ վասն

թյան վայրում ու թաղվում նույն սուրբ միաբանության գերեզմանոցում. նա առաջնորդությունը պահեց քսաներկու տարի։

Բայց բռնակալ Բուղան, իր մոտ ձերբակալվածներին ու կարճ ժամանակով բանտարկվածներին առնելով, չվում գնում է արևելյան կողմերը՝ Սմբատ սպարապետին հրաման հղելով, որ շտապ մեկնի, գնա ու հասնի իր հետևից՝ գործը գլուխ բերելու համար։ Իսկ Սմբատը հրամայում է նախ Երազգավորք քաղաքագյուղում եպիսկոպոսների ժողով անել, որտեղ հայրապետ են ձեռնադրում Զաքարիային, որը Կոտայք գավառի Զագ գյուղից էր, և ապա անձնատուր լինելով նրա աղոթքներին՝ [Սմբատ սպարապետը] մեկնում գնում է բռնակալ Բուղայի մոտ։ Իսկ Բուղան գնում ու բռնում է Խաչենի ամրոցում բնակվող Ատրներսեհ մեծ իշխանին ու նրա ազգակիցներին։ Այնտեղից նա թողնում գնում է Գարդման գավառը և պատնեշելով ու պատելով Գարդման բերդը՝ այնտեղ նա բռնում է Գարդմանի իշխանին՝ Կտրիճին, ու շղթայակապ անում։ Եվ այնտեղից էլ նա գնալով Ուտի գավառը՝ Տուս գյուղում ձերբակալում է Ստեփաննոսին, որին անվանում էին նաև Կոն, որի ցեղը իր նախնի Սևուկի անունով Սևորդիք էր կոչվում։ Եվ ապա նենգությամբ խաբելով՝ նա բռնում է Աղվանքի իշխան Եսայուն նրա ազգակիցների հետ միասին։ Նրա հետ էլ նրա ձեռքով բռնվեցին ու շղթայակապ արվեցին Աղվանից աշխարհի այլ տերեր ու իշխաններ, և այդ աշխարհում քիչ արյուն չթափվեց։

Այնուհետև բոլոր նրանց, որոնք շղթայակապված կամ կարճ ժամանակով ձերբակալված էին, բերում էին նրա մոտ, և [Բուղան] դրանց առնելով իր հետ՝ տանում էր ամիրապետի մոտ։ Նա իր հետ արքունական դուռն է տանում նաև Սմբատ սպարապետին՝ նրան հավաստիացնելով, թե նրա հավատարմության փոխարեն ամիրապետը նրան շնորհ կանի՝ տիրելու բոլոր հայաստանցիների վրա, արքունիքից ստանալու պարգև ու պատիվ և կրկին վերադառնալու իր աշխարհը։ Իսկ երբ գնացին, հասան արքունի դուռը ու ներկայացան ամիրապետին, այնտեղ նրան [Սմբատ սպարապետին] էլ մյուս շղթայվածների հետ միասին զցեցին բանտ։ Եվ այլևս չհիշվեցին նրա երախտիքն ու հավատարմությունը իրենց նկատմամբ։ Եվ ոչ շատ օրեր անց Հայոց ու Աղվանից շղթայակապված տերերին ու իշխաններին հավասարապես հարցափորձ են անում, որպեսզի նրանք կա՛մ դառնան դեպի իրենց անօրեն կրոնը՝ ուրանալով Քրիստոսի աստվածապաշտությունը, որի միջոցով նրանցից կստանան բազմաթիվ պարգևներ ու պատիվ և կվերադառնան իրենց աշխարհը, իրենց տները, կա՛մ սաստիկ խոշտանգումներով, չարչարանքներով ու մահվան [սպառնալիքով] կկտրեն

զի այսպէս զբոհմունս կտտանաց 'ի վերայ նոցա սաստիկ զարհուրմամբք զարթուցանէին օր ըստ օրէ՝ ժամանակ ինչ յերկարեալ զնեղութիւն անձկութեանն, ոմանք 'ի նոցանէ հաւանեալք բանիցն արքունի՝ դարձան յանաստուած աստուածածանօթութիւն նոցա. և ոմանք թէպէտև ոչ առ ժամայն կրեցին թլփատութիւն, սակայն յանձին կալեալք՝ զի. և նոքա ևս 'ի ժամ դիպող կատարեալ լնուցուն զկամս ամիրապետին։ Բայց մեծ սպարապետն Սմբատ՝ քաջապէս ընդդէմ ստութեանն ստուգութեամբ վառեալ ըստ զուարթածաղիկ ալեացն և կատարելագոյն հաւատացն որ 'ի Քրիստոս՝ և ըստ յուսոյ կենացն յաւիտենականաց, որ միշտ յինքեան շտեմարանէր՝ բնաւ ոչինչ շեղեցաւ 'ի բանս հրամանաց նոցա, լաւ համարեալ մեռանել ընդ Քրիստոսի քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս։ Եւ այնպէս ընդդէմ հարցողացն նա առնէր պատասխանի՝ անհնարին գոլ թողուլ նմա զօրէնս քրիստոնէական հաւատոց, զոր աւազանին շնորհօքն ընկալաւ պարգևս բարեաց, քան պաշտել զօտարոտի օրէնս անօրէնս։ Եւ այսպէս ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ աներկիւղաբար առնէր ընդդիմութիւն նոցա.

Իսկ իբրև զփորձ նորայն կամաց առին և ծանեան զմիտս նորա անհրապոյրս՝ խորհեցան դառնաշիատ տանջանօք զնա կորուսանել։ Իսկ երկնաւոր այցելութիւնն պարտական մարմնոյ մահուամբ հաճեցաւ ազատել զնա 'ի յաւիտենական մահուանէ հոգւոյն. և իւրով մահու վախճանեալ՝ ոչ անկաւ զնովաւ ուրացութիւն սուրբ օրինացն Քրիստոսի. այլ լնոյր 'ի մարմնի իւրում զհանդէս մարտիրոսական պատասխանատրութեանն. զոր և բարձեալ իսկ զմարմինն նորա քրիստոնէական դասուց՝ սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք տարեալ եդին 'ի վկայարանի սրբոյն Դանիէլի մարգարէին, որ և ընկեցեալ իսկ լինէր նա 'ի գուբն առիւծուց։ Բայց այլոց իշխանացն թուի ինձ և ոչ մի ինչ մնացեալ որք ոչ եղեն հեստեալք յաստուածակողմանն կամ ոչ շեղեալք յանօրէն օրէնսն Մահմէտի. վասն զի պակուցեալք և զարհուրեալք յառժամանակեայ մահուն երկիւղէ՝ ոչ առին 'ի միտ զանմահ մահուն դառնութիւնն. և ոչինչ փոյթ արարեալ զսարսափելի աւետարանութիւնն Փրկչին Քրիստոսի, որ լսելի լինելոց է յահագին ատենին. «Թէ որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ, որ յերկինս է»։

Բայց միայն Ստեփաննոս, որ Կոնն 'ի ռամկաց սովորական խօսից անուանիւր, և զկնի նախարարացն Հայոց կապանօք տարեալ եղև 'ի Բուխայէ 'ի գուռն արքունի, ուր և վկայեացն իսկ— բազում հարանօք տանջեալ վասն խոստովանութեան անուանն Քրիստոսի, որ պսակեալ

կյանքի հույսը։ Եվ քանի որ օրեցօր նրանց սպառնում էին կտտանքներով ու սաստիկ զարհուրանքով՝ անորոշ ժամանակով երկարացնելով անձուկ նեղությունը, նրանցից ոմանք, հավատալով արքունի խոսքերին, դարձան նրանց անաստված պաշտամունքի կողմը, իսկ ոմանք թեև այդ ժամանակ չթլփատվեցին, սակայն նրանք ևս հանձն առան, որ հարմար պահին կկատարեն ամիրապետի կամքը։ Բայց Սմբատ մեծ սպարապետը, ստության դեմ քաջապես ճշմարտությամբ զինվելով, ուռճացած մորուքով, Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատով և հավիտենական կյանքի հույսով, որ միշտ շտեմարանում էր իր մեջ, բնավ չշեղվեց նրանց կողմը՝ լավ համարելով մեռնել Քրիստոսի համար, քան առժամանակ [կյանքը] վայելել մեղքերի մեջ։ Եվ այդպես իրեն հարցնողներին նա պատասխանում էր, որ ինքը երբեք չի թողնի քրիստոնեական հավատը, որը ավազանի շնորհներով ընդունեց որպես բարի պարգև, և չի կարող պաշտել անօրեն ու օտարոտի կրոնը։ Եվ այդ ձևով նա ոչ թե մեկ կամ երկու, այլ շատ անգամ առանց վախենալու ընդդիմանում էր նրանց։

Իսկ երբ փորձով հասկացան նրա կամքը ու իմացան նրա հաստատուն միտքը, որոշեցին նրան կորստի մատնել տաժանելի տանջանքներով։ Բայց երկնային նախախնամությունը մեղապարտ մարմնի մահվամբ ցանկացավ նրան ազատել հոգու հավիտենական մահվանից, և իր մահով վախճանվելով՝ նա չուրացավ Քրիստոսի սուրբ կրոնը, այլ իր մարմինը հագեցրեց մարտիրոսական պատասխանատվության փորձով։ Վերցնելով նրա մարմինը՝ քրիստոնեական դասը սաղմոսներով, օրհներգությամբ և հոգևոր երգերով տարավ դրեց սուրբ Դանիել մարգարեի վկայարանում, ուր նա գցվել էր առյուծների գրի մեջ։ Բայց ինձ թվում է, որ մյուս իշխաններն ու ժողովուրդը չմրոստացան Աստծու դեմ և չթեքվեցին դեպի անօրեն Մահմեդի կրոնը։ Քանի որ առժամանակյա մահվան երկյուղից վախեցածներն ու զարհուրածները չհասկացան անմահ մահվան դառնությունը, [դրանով] նրանք նաև հոգ չտարան Քրիստոս Փրկչի սարսափելի վարդապետության մասին, որը լսվելու է մեծ հրապարակում, «Թե ով որ ինձ ուրանա մարդկանց առաջ, ես էլ նրան կուրանամ իմ Հոր առաջ, որ երկնքում է»։

Բայց միայն Ստեփանոսը, որը ռամիկների հասարակ լեզվով Կոն էր անվանվում, Բուղայի կողմից Հայոց նախարարների հետևից կապանքներով տարվեց արքունի դուռը, ուր և նահատակվեց բազում հարվածներով տանջվելով հանուն Քրիստոսի անվան խոստովանության։

'ի Հօրէն լուսոյ՝ զրեաց զանունն իւր 'ի դպրութիւն կենացն, որ և կատարեցաւ 'ի վեցհարիւրերորդի ութերորդի թուականին Հռոմոց։

Յայսմ հետէ ապա եթէ թեթև թուեսցի քեզ զառ 'ի ծերունեացն անցեալ բան 'ի պարզագունիցն չափաբերապէս հանդիպեցայց. վասն զի հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւսանգամ զհետևանս զրուցաց Շապհոյ Բագրատունւոյ և մերումս ժամանակի պատմագրի, որ յայտապատում իսկ արարեալ է զրոյցս պայազատութեան որդւոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ զիշխանական պատմութիւնն, և զթագաւորացն զհանգամանացն զկարգս. և կամ զդարձ գերելոցն 'ի Բուխայէ զՀայաստանեայցս իշխանաց և նախարարաց յիւրաքանչիւրն սեպհական իշխանութիւնս ածեալ կացեալ հաստատեալ. և թէ ո՛յք 'ի նոցանէ հոյակապք և հարուստք և ուժեղակք ընդդէմ հակառակորդաց հինից գտան. և կամ ո՛յք յումեքէ եղեն հարստահարեալք, և կամ զվախճան նոցա յիւրաքանչիւրումն տեղ։ Զի թէպէտ ստուգութիւն սահմանական բանի բացատրութեան և զբոլորովին բաժանումն ապացուցից ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն համառօտաբար ընձեռել. սակայն ըստ իւրումն ժամանակի ընտանի զոլով նորա զրուցացն ամենայնի՝ դեղջուկ բանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան։

Արդ այսպէս ես աստանօր զբովանդակն 'ի նա թողացուցեալ՝ և որ ինչ հարկաւորաբար այժմ ինչ պիտոյ է ճառիս պատմութիւն, զայն ևեթ համառօտ քեզ ընձեռութիւն առնելով, փորձեցայց սակաւուք իբր ներածութեան եղանակաւ՝ որպէս վերագոյն ասացաւ, 'ի մանկութենէ մինչև ցերևոյթս երիտասարդութեանն զԱշոտոյ՝ որդւոյ Սմբատայ սպարապետի, զզօրութիւնս և զքաջութիւնս և զպատերազմունս և զհրոսմունս յայլս և զայլոց ևս 'ի նա՝ բաւական բերցի քեզ առ 'ի Շապհոյ պատմելոյն։

Իսկ յորժամ փոխանակ Սմբատայ հօր իւրոյ պայազատէ զսպարապետութիւն Հայոց, գրեթէ ամենեցուն քան զնա նախագունիցն վեհագոյն ճանաչիւր. վասն զի ընկալեալ զմեծարանս՝ 'ի բաց արհամարհէր զանարգանս և միշտ 'ի հրահանգս բարւոյ կրթութեան զինքն վարժէր, և բարի ազդումն իւրոյ հոգւոյն տայր՝ ընդ ամենեսեան կալեալ սերտ սէր. և ոչ 'ի հակառակութիւնս ինչ կամ 'ի կռիւս ընդ թշնամիսն մաքառեալ, քան թէ բարեզգեաց բանիւք և բարի օճանաւ ածեալ զնոսա յուղղութիւն և 'ի կամս իւր։ Իսկ զպաճարանս սնոտի շահուց վնաս իւր վարկեալ և առատաձեռն առ ամենեսեան գտեալ՝ յինքն զբազմաց միտս յանգուցանէր սիրալիր սրտիւ, որպէս զի յայսմ սակի ամենեքեան իսկ նմա հաճեալ հաւանեալ էին։ Եւ այսպէս ապա զկարգ սպարապետու-

Եվ [նա] պսակվելով իր Հոր կողմից՝ իր անունը գրեց կյանքի գրքում. նա վախճանվեց Հռոմեական թվականության վեց հարյուր ութերորդ տարում։

Այսուհետև եթե քեզ, [ընթերցող], հաճո թվա ծերունիներից անցած խոսքը, պարզագույն ու չափավոր կերպով կներկայացնեմ, քանի որ հաճելի չէ կրկնել մեր ժամանակի պատմագիր Շապուհ Բագրատունու պատմության մանրամասները։ Նա բացահայտ կերպով արել է Սմբատ սպարապետի որդու՝ Աշոտի իշխանության, թագավորների հաջորդականության պատմությունը, ինչպես նաև Բուղայի կողմից գերված Հայոց իշխանների ու նախարարների վերադարձը՝ յուրաքանչյուրին տանելով ու հասցնելով մինչև իր սեփական իշխանությունը։ Նա [պատմում է] նաև այն մասին, թե նրանցից ովքեր կարող, հոյակապոր ու ուժեղ գտնվեցին ընդդեմ ավազակ հակառակորդների, և կամ ովքեր ում կողմից հարստահարվեցին, ինչպես նաև իր տեղում նրանցից յուրաքանչյուրի վախճանի մասին։ Թեպետև չի կարողացել արվեստի համառոտ ոճով տալ պատմության ստույգ բացատրությունը և բոլորի տարբերությունների ապացույցները, սակայն իր ժամանակի բոլոր պատմություններին հատուկ ու սովորական ձևով և ռամկական ոճով քեզ, [ընթերցող], բավականաչափ տալիս է իր տեղյակ լինելու պատճառները։

Արդ՝ այստեղ ամբողջը նրան թողնելով և ինչ որ այժմ պետք է իմ պատմությանը, այն համառոտ կերպով քեզ, [ընթերցող], ներկայացնելով՝ փորձեցի փոքր-ինչ ներածականի եղանակով, ինչպես վերևում ասվեց, Շապուհ պատմագրից բավականաչափ բերել նրա պատմածները՝ Սմբատ սպարապետի որդու՝ Աշոտի հզորությունը, քաջագործությունները, պատերազմները, հարձակումները ուրիշների վրա, ուրիշների հարձակումները նրա վրա՝ սկսած մանկությունից մինչև երիտասարդությունը։

Իսկ երբ իր հոր՝ Սմբատի փոխարեն [Աշոտն] է տիրում Հայոց սպարապետությանը, իրենից առաջ եղողներից գրեթե ամենաբարձրը ինքն է ճանաչվում, քանի որ ընդունելով մեծարանքներ՝ արհամարհում էր անարգանքը և միշտ իրեն վարժեցնում էր բարի կրթության ու ուսման մեջ։ Նա իր հոգու վրա ազդում էր բարվոք կերպով՝ բոլորի հետ հաստատելով սերտ սեր։ Թշնամիների դեմ հակառակություն կամ կռիվ չէր մղում, այլ բարի խոսքերի օգնությամբ նրանց բերում էր ճիշտ ուղղության ու իր կողմը։ Իսկ սնոտի շահը իրեն վնաս էր համարում և առատաձեռն գտնվելով բոլորի նկատմամբ՝ սիրալիր սրտով շատերի միտքը իր կողմն էր գրավում։ Եվ այդ ամենի համար բոլորը հավա-

թեան քաղաքավարեալ՝ մինչև համբաւ բարւոյն 'ի դուռն արքունի հասանէր։ Ապա ոստիկան ոմն 'ի Հայս առաքեալ, որ Ալի արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր, բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ 'ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի։ Եւ այսպէս պատուականագոյն և առաջին նա գտեալ եղև քան զամենայն նախարարութիւնս Հայոց. և ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին՝ որպէս արդարև ընդ Թագաւորական զարմի։ Այլև 'ի մտի ամենեցուն եդեալ, զի թէ դէպ ինչ պիտոյից գոցի՝ նաև 'ի տոհմ իւր արժանի լիցին մատչել 'ի Թագաւորութեան ցեղս՝ զնոսա որոշել յայլոց նախարարութեան ցեղից։

Բայց զայսու ժամանակաւ ահագին իմն շարժմանց եղելոց 'ի Դվին քաղաքի, բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դղրդումն առնոյր քաղաքն. այլ և մահ յոլովից մարդկան ի վերայ հասանէր. և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին՝ մինչև ոչ ոք մնալ ընդ յարկաւ, այլ 'ի հրապարակս և 'ի փողոցս ելեալ հաշեալ հառաչէին։ Իսկ ցրտաշունչ սառնամանիք ձմեռայնոյն առաւել բերէր զլքացումն հեծութեան, զի յոլովք մսեալք և ծայրատեալք լինէին։ Իսկ սուրբ հայրապետն Զաքարիա ուժգին աղօթիւք և պաղատանօք մշտնջենամոնչ և աղերսալի աղօթս առ բարեգութն Աստուած մատուցանէր, և երկնային ազդեցութեամբն 'ի բաց բառնայր զաստուածասաստ բարկութիւնն՝ անվնաս զեկեղեցի Քրիստոսի պահեալ 'ի բազմաբեր ցասմանէ վտանգին։

Բայց իշխանք և նախարարք, որք ըմբռնեալք գերեցան 'ի Բուղայէ՝ զայսու ժամանակաւ մի ըստ միոջէ 'ի կարդ անկեալ շուէին յաշխարհ տէրութեան իւրեանց և 'ի սեպհականութիւնս և 'ի տունս. և ապա մերկացեալ յանձանց իւրեանց զակամայ ուսմունս պիղծ օրինացն Մահմէտի՝ զքրիստոսաւանդ օրէնս հայրենիս առհասարակ բարձրացուցեալ բերէին յանձինս իւրեանց, ոչ 'ի ծածուկ երկիւղիւ ինչ՝ այլ իբրև 'ի վերայ բարձր տանեաց քարոզէին զՔրիստոսի աստուածպաշտութիւնն։ Ընդ որս հաճեալ Տէրն՝ բնակեցոյց յուսով զնոսա, յորում և օրհնութեամբ Տեառնն օրհնեցան և նովիմբ գովեցան. հերկեցին հերկս և ո՛չ 'ի վերայ փշոց։ Եւ ապա ձայն խրախճանաց ցնծացելոց 'ի յարկս նոցա լինէր՝ և ձայն հարսին և փեսայի։ Ծնան որդիս և արարին պտուղ, և բնակեցան իւրաքանչիւրոք 'ի ժառանգաւորեան իւրեանց։ Եւ այց արար Տէր նոցա և աջողեաց 'ի բարութիւնս։

Յայսմ ժամանակի Վասակ հայկազուն, որ Գաբուռն յորջորջէր՝ վասն զի փեսայացեալ էր Աշոտոյ իշխանաց իշխանի, իշխան ապա Սիւ-

նում ու սիրում էին նրան։ Այդպես է վարվում նաև սպարապետությունը, և նրա բարի համբավը հասնում է մինչև արքունիք։ Ապա Հայաստան ուղարկված Ալի արմանի անունով մի ոստիկան՝ ամիրապետի հրամանով նրան [Աշոտին] կարգում է Հայոց իշխանաց իշխան՝ զարդարելով բազում զգեստներով և արքունական պատվով, նրան վստահելով Հայոց հարկերն ու արքունի ամբողջ տուրքը։ Այդպիսով նա եղավ առաջինն ու ավելի պատվականը, քան Հայոց բոլոր նախարարությունները, և բոլորը դաշինք էին կնքում նրա՝ որպես բուն Թագավորական ժառանգի հետ։ Նաև բոլորը մտածում էին, որ եթե պետք լինի, իրենց տոհմերը կմերձեցնեն Թագավորական ցեղերին՝ նրանց զատելով այլ նախարարական ցեղերից։

Բայց այդ ժամանակներում Դվին քաղաքում սարսափելի երկրաշարժ է լինում, և շատ տներ, պարիսպներ, ապարանքներ ցնցվում ու փլուզվում են։ Առհասարակ քաղաքը դղրդում է ու քանդվում, և անհամար մարդիկ են մահանում։ Եվ այնպիսի վտանգ ու տագնապ էր սպառնում, որ ոչ ոք ներսում չէր մնում, այլ դուրս գալով հրապարակներն ու փողոցները՝ նրանք հալումաշ էին լինում ու հառաչում։ Իսկ ձմեռային ցրտաշունչ սառնամանիքը է՛լ ավելի էր թուլացնում ու [հուսահատեցնում] նրանց, որովհետև շատերը մրսում էին ու մահանում։ Եվ Զաքարիա սուրբ հայրապետը ուժգին աղոթքներով ու մշտամոնչ պաղատանքներով աղերսալի աղոթք էր մատուցում բարեգութ Աստծուն և երկնային ազդեցությամբ վերացնում աստվածասաստ բարկությունը՝ Քրիստոսի եկեղեցին անվնաս պահելով վտանգի բազմաբեր ցասումից։

Իսկ այն իշխաններն ու նախարարները, որոնք բռնվելով գերվել էին Բուղայի կողմից, այդ ժամանակներում իրար հետևից մեկնում էին իրենց տերությունները, կալվածքներն ու տները, և ապա իրենցից հեռացնելով Մահմեդի՝ իրենց պարտադրված կրոնը, առհասարակ ընդունում են իրենց հայրենի, Քրիստոսի կողմից ավանդված կրոնը։ Եվ դա ոչ թե վախից թաքուն կերպով [էին կատարում], այլ որպես թե բարձր տանիքից քարոզում էին Քրիստոսի աստվածապաշտությունը։ Դրան հավանելով՝ Տերը նրանց բնակեցրեց հույսով, որի մեջ էլ Տիրոջ օրհնությամբ նրանք օրհնվեցին ու գովաբանվեցին և հերկեր հերկեցին և ոչ թե փշեր։ Եվ դրանից հետո նրանց տներում լսվում էր ուրախ խրախճանքի, հարսի ու փեսայի ձայն։ Նրանք որդիներ ծնեցին, պտուղներ տվեցին, և նրանցից յուրաքանչյուրը բնակվեց իր ժառանգությունում։ Տերը այցելեց նրանց և հաջողություն բերեց բարի գործերի մեջ։ Այդ ժամանակ հայկազուն Վասակը, որ Գաբուռ էր հորջորջվում, քանի որ փեսայացել էր իշխանաց իշխան Աշոտին, նրա կողմից Սյունյաց

նեաց զնա կացուցանէր՝ յարքունուստ նմա առնելով պատիւ. որ բազում ճոխութեամբ վարեալ զիշխանական պետութիւն իւր, տիրելով միանգամայն Սիսական ազգին։ Բայց զմեծ սպարապետութիւնն Հայոց տայ Աշոտ եղբօր իւրում Աբասայ, որ էր այր քաջանձնեայ և թիկնաւէտ, առոյգանձն և գեղեցիկ հասակաւ, կորովի և աջողակ 'ի պատերազմունս. որ և աջակցեալ իսկ եղբօր իւրում Աշոտոյ զամենեսեան հնազանդէր ընդ լծով ծառայութեան. 'ի բազում կողմանս բազում անգամ արութիւն ցուցեալ՝ և հռչակաւոր և հոյակապ 'ի մէջ բազմաց երևելեալ։

Բայց յետ վախճանելոյ Աշոտոյ մեծի և հռչակաւորի իշխանի տանն Արծրունւոյ և դնելոյ զնա 'ի շիրիմս հարց իւրոց՝ պայազատէր զիշխանական պետութիւնն զայն Գրիգոր որդի նորա ընդ նորա, որ Դերենիկն անուանիւր։ Եւ էր նա այր սէգ և զգաստ և սօս 'ի գնացս ոտից, և զօրաւոր արդեամբք և բանիւ, և տնօրինէր միշտ յամենայն բարեձևութիւնս բերիլ։ Եւ վասն զի փեսայացեալ էր նա Աշոտոյ իշխանաց իշխանի, սակս այնորիկ հայրախնամ կամօք և խոհական սիրելութեամբ միշտ խրատ բարեաց նմա մատուցանէր. որ և 'ի սկզբան անդ ընկալեալ՝ հլու և զգօն մտօք հաւանէր ընդունիլ և յոտին զբոլոր թշնամիս 'ի սադրելոյ նորա կացուցանէր. և շինութեան և խաղաղութեան պարապեալ՝ յապահովս 'ի բնակութեան իւրեանց պատրաստէր զհայրենի տէրութիւնն իւր 'ի բոլոր հինից։ Բայց յետոյ 'ի կամս անձին զինչպիտութեան բերեալ՝ ոչ անսայր բանի խրատու աներոյ իւրոյ որպէս յերէկն և յեռանդն, և չլինէր նմա այն յաջողումն ինչ 'ի բարութիւնս։

Բայց մեծ իշխանն Սիւնեաց Վասակ, որ ըստ փաղաքշականին Իշխանիկ անուանիւր՝ յաւէտ իմաստութեամբ և հեզահամբոյր հանդարտութեամբ և հաւանութեամբ մեծաւ հնազանդէր Աշոտոյ իշխանին իշխանաց, և խրատու նորա զունկն մատուցանէր խնամով՝ իբրև զօրէնս միշտ 'ի սրտի իւրում պահելով։ Եւ 'ի ձեռն այնորիկ յաւէտ իմն ընդարձակագոյն զտուն տէրութեան իւրոյ յարդարէր 'ի բոլոր բարեմասն լրութիւնս. և կայր բազում խաղաղութեամբ ըստ ամենայն հանդիսի բարեպաշտութեան։

Բայց միւս ևս իշխանն Սիսական՝ Վասակ, որ Գարուն փաղաքշաբար անուանիւր՝ յայսմ ժամանակի վախճանեալ և եղեալ 'ի շիրիմս հարց իւրոց, պայազատէ զհայրենի տէրութիւնն Գրիգոր որդի նորա ընդ նորա, որ Սուփանն յորջորջէր։ Սա իմաստութեամբ և աջողաձեռնութեամբ և շինութեամբ բազմաւ անդր ևս քան զպայմանն լնոյր զչափ հարց իւրոց։ Բայց առաւել յեկեղեցեաց Քրիստոսի 'ի շինութիւն և 'ի նորոգութիւն զինքն վերաբերէր։

իշխան է կարգվում՝ արքունիքի կողմից արժանանալով պատվի։ Մեծ ճոխությամբ վարելով իր իշխանությունը՝ նա ամբողջովին տիրում է սիսական ազգին։ Բայց Հայոց մեծ սպարապետությունը Աշոտը տալիս է իր եղբայր Աբասին, որը քաջազուն, թիկնավետ, զորեղ, վայելչակազմ, պատերազմի մեջ կորովի ու ճարպիկ տղամարդ էր։ Աջակցելով իր եղբայր Աշոտին՝ բոլորին հնազանդեցնում է ու զցում նրա լծի տակ։ Շատ տեղերում բազմիցս արիություն ցուցաբերելով՝ նա շատերի աչքում հռչակավոր ու հոյակապ էր երևում։

Բայց Արծրունյաց տան հռչակավոր իշխանի՝ մեծն Աշոտի մահից ու նրան իր հայրերի գերեզմանոցում թաղելուց հետո նրա փոխարեն նրա պետությանը տիրում է նրա որդի Գրիգորը, որը Դերենիկ էր անվանվում։ Նա հպարտ էր, զգաստ, բարձրահասակ ու վայելչակազմ, գործով ու խոսքով զորավոր և միշտ հոգ էր տանում բարեկարգություն անել։ Եվ քանի որ նա իշխանաց իշխան Աշոտի փեսան էր, դրա համար [Աշոտը] հայրախնամ կամքով ու խոհեմ սիրով միշտ բարի խրատներ էր տալիս նրան։ Սկզբում ընդունելով դրանք՝ նա նրա դրդմամբ ետ էր մղում բոլոր թշնամիներին և զբաղվում էր շինարարությամբ ու խաղաղությամբ։ Նա իր հայրենիքը ապահովության մեջ էր պահում բոլոր տեսակի ավազակներից։ Բայց հետո ինքնագլխություն անելով՝ այլևս չէր լսում իր աներոջ խրատները, ինչպես որ [լսում էր] անցյալ և նախանցյալ օրը։ Եվ [այդ պատճառով] նրա բարի գործերի մեջ այլևս նախկին հաջողությունը չէր լինում։

Բայց Սյունյաց Վասակ մեծ իշխանը, որ փաղաքշաբար Իշխանիկ էր անվանվում, մեծ իմաստությամբ, հեզահամբույր հանդարտությամբ, մեծ հավանությամբ հնազանդվում էր իշխանաց իշխան Աշոտին՝ խնամքով ականջ դնելով նրա խրատներին՝ որպես կանոն [դրանք] միշտ պահելով իր սրտում։ Եվ դրա շնորհիվ իր տերությունը ավելի էր ընդարձակում ու բոլոր բարեմասնություններով բարեկարգում։ Ինքն էլ ապրում էր խաղաղությամբ և ամեն տեսակի բարեպաշտությամբ։

Բայց սիսական մյուս իշխանը՝ Վասակը, որ փաղաքշաբար Գարուն էր կոչվում, վախճանվում է այդ ժամանակ և թաղվում իր հայրերի գերեզմանոցում, իսկ նրա փոխարեն հայրենի տերությանը իշխում է նրա որդի Գրիգորը, որը Սուփան էր հորջորջվում։ Սա իմաստությամբ, հաջողաձեռնությամբ և մեծ շինարարությամբ գերազանցում է իր հայրերին։ Բայց նա իրեն ավելի շատ նվիրում էր Քրիստոսի եկեղեցիների շինարարությանն ու նորոգմանը։

Իսկ մեծ և սուրբ հայրապետն Զաքարիայ իբրև եկաց յառաջնորդութեան անդ իբրև ամս քսաներկու՝ վախճանեալ դնի 'ի քնարանի հարցն սրբոց։

Ապա իշխանն իշխանաց Աշոտ՝ ընտրեալ զայր մի պատուական յընտանեաց տանն կաթողիկոսարանին, Գէորգ անուն՝ որ էր 'ի գիւղաքաղաքէն Գառնւոյ, հրամայէ ձեռնադրել զնա յառաջնորդութիւն տանս Թորգոմայ։

Այլ ինձ աստանօր ոչ արդեօք այլ ինչ է բանս սիրելի քան թէ դեգերիլ 'ի բանս գովեստից, որ վասն Աշոտոյ իշխանաց իշխանին են հետևմունք։ Վասն զի 'ի տիս հասեալ միջակութեան՝ քաջահասակ էր նա և անձեայ և թիկնաւէտ և զուարթերես և մրայօն նկարէն իմն, և նիշ արեան յաչսն ունելով՝ որպէս զյակինթ կարմիր 'ի մէջ մարգարտի ծագեալ, և վայելչացեալ գեղեցկութեանն ալեօք. մեծիմաստ և քաղցրաբան, և առ կերակուրս խրախճանաց պարկեշտ. ոչ խանդացեալ նորա ընդ լաւագոյնսն և ոչ արհամարհեալ զնուաստագոյնսն, այլ հասարակաց 'ի վերայ տարածէր զզգեստ խնամոց իւրոց. և լծակօք իմն կշռէր նախ զիւր և ապա զամենեցուն կենցաղս. միանգամայն իսկ ասել, եթէ ոչ ինչ մարդկութեանս է պիտանի ոչ ինչ կասեցուցանէր*։ Զայսպիսիս ապա տեսեալ քաջատոհմիկ պերճութիւն իշխանացն և նախարարացն Հայոց՝ խորհուրդ միաբանական առեալ՝ թագաւորեցուցանել զնա 'ի վերայ ինքեանց, զեկուցանեն ամիրապետին 'ի ձեռն ոստիկանին Ցիսէի՝ որդւոյն Շեխայ։ Զոր և սիրալիր սրտիւ զարժանահայց խընդիրն ընկալեալ՝ առաքէ ապա Աշոտոյ թագ թագաւորական. զոր և բե-

* Յերզոցն Վիպասանաց՝ առ Խորենացւոյ յառաջ բերելոց, առեալ երևի նկարագրութիւնս Աշոտոյ, զոր առաջարկէ մեզ Պատմագիրս՝ 'ի մի խառնելով զոր ինչ 'ի յիշեալ երգսդ զՍմբատայ և զՏիգրանայ ասէին։ 'Ի մէջ բերցուք և զմին և զմիւսն. «Ունէր սա (Սմբատ) հասակ անդամոց համեմատ քաջութեանն և առաքինութեան ոգ«ւոցն որոորդ. և գեղեցկութեան ալեօք վայելչացեալ. սակաւ ինչ արեան նիշ ունելով «յաչսն. որպէս դրակոնտիկոն 'ի վերայ ոսկւոյ և 'ի մէջ մարգարտոյ ծագէր, ևն։ (Խոր. «գիրք բ. գլ. ծբ։)— «Զայս և որ այլ այսպիսիք բաղումք եբեր մերոյ աշխարհիս խար«տեաշս այս և աղէրեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան. երեսօք գունեան և մե«ղուակն, անձնեայն և թիկնաւէտն. առոյգաբարձն և գեղեցկոտն, պարկեշտն 'ի կերա«կուրս և յըմպելիս, և 'ի խրախճանութիւնս օրինաւոր... ասէին լինել սմա 'ի ցանկու«թիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստն և պերճաբան և յամենայն որ ինչ մարդկու«թեան պիտանի... Արդարադատ և հաւասարասէր կշիռս ունելով յամենայնի, զամենայն «ուրուք կենցաղ՝ մտացն լծակաւ կշռէր. ոչ ընդ լաւագոյնսն խանդայր և ոչ զնուաստսն «արհամարհէր. այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց 'ի վերայ տա«ւրածել զգեստս» (Խոր. Պատմ. գիրք ա. գլ. իգ։)

Իսկ մեծ և սուրբ հայրապետ Զաքարիան առանջորդարանում մոտավորապես քսաներկու տարի մնալուց հետո վախճանվում է և թաղվում սուրբ հայրերի գերեզմանոցում։

Այնուհետև իշխանաց իշխան Աշոտը, կաթողիկոսարանի տնից ընտրելով Գեորգ անունով մի պատվական մարդու, որը Գառնի գյուղաքաղաքից էր, հրամայում է նրան ձեռնադրել Հայոց տան առաջնորդության համար։

Բայց ինձ համար այստեղ մեկ այլ բան ավելի սիրելի չէ, քան զբաղվել այն գովեստով, որ վերաբերում է իշխանաց իշխան Աշոտին։ Քանի որ նա միջին տարիքի հասնելով՝ բարձրահասակ էր, մարմնեղ, թիկնավետ, զվարթադեմ, մրահոն։ Նա աչքերի մեջ արյան կետեր ուներ, որպես մարգարտի մեջ երևացող կարմիր հակինթ, զարդարված էր գեղեցիկ մորուքով, խելացի ու քաղցրախոս էր, խրախճանքի, կերակուրների նկատմամբ պարկեշտ. նա չէր նախանձում լավագույններին և չէր արհամարհում ավելի նվաստներին, այլ իր խնամքի զգեստը հավասարապես էր տարածում բոլորի վրա։ Ինչ-որ կշեռքով նա կշռում էր նախ իր և ապա՝ ուրիշների կյանքը՝ միաժամանակ ասելով, թե ինչ պիտանի է մարդկությանը, ինքը չի արգելի*։ Հայոց նախարարներն ու իշխանները, այսպիսի քաջատոհմիկ պերճություն տեսնելով, բոլորը միաբան խորհուրդ են անում՝ նրան թագավոր նշանակել իրենց վրա և Շեխի որդի ոստիկան Հիսեի միջոցով զեկուցում են ամիրապետին։ Եվ սիրով ընդունելով հավանության արժանի խնդիրը՝ [ոստիկանը] Աշոտին է առաքում թագավորական թագը։ Ոստիկան Հիսեն այն և

* Խորենացու Վիպասանական երգերից է վերցված Աշոտի նկարագրությունը, որը առաջարկում է մեզ մեր պատմագիրը՝ խառնելով միմյանց այն, ինչ հիշյալ երգերում է ասվում Սմբատի ու Տիգրանի մասին։ Մենք մեջ կբերենք և՛ մեկը, և՛ մյուսը. «[Սմբատը] ուներ իր քաջության համեմատ հասակ ու անդամներ, իր առաքինությամբ որոում էր հոգիներ, զարդարված էր գեղեցիկ ալեոր մորուքով, աչքերի մեջ արյան փոքրիկ նշանով, որ փայլում էր ինչպես դրակոնտիկոն [ակնը]՝ ոսկու և արծաթի մեջ [ադուցված]» և այլն (Խոր., գիրք Բ, գլ. ԾԲ)։ «Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, վայելչակազմ ու թիկնավետ, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտքերով, կերակուրների ու ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր... ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ, պերճախոս ու լի բոլոր [հատկություններով], որ պիտանի են մարդուն... Նա ամեն բանի մեջ արդարադատ ու հավասարասեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը» (Խոր., Պատմ., գիրք Ա, գլ. ԻԵ)։

բեալ իսկ ոստիկանին Յիսէի՝ ընդ նմին և այլ ևս զգեստս թագաւորական, և պարգևս և պատիւս, և երիվարս օգապարիկս զինուք և զարդուք մատուցանէին առաջի նորա։ Կոչեցաւ ապա և անդ մեծ հայրապետն Գէորգ և զհոգևոր օրհնութեանցն գովութիւնս աստուածայինս 'ի վերայ կատարեալ փոխանակ օծման սրուակի իւղոյն՝ պսակեն զնա թագաւոր 'ի վերայ Ասքանազեան ազին։ Եւ այնուհետև բազում և երեվելի կարգս յարդարէր աշխարհի տէրութեան իւրոյ, յօրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և հարթհաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, և զամենայն տափարակ տեղիս՝ ագարակս և գոմս դնէր. և զմարմանդս յայգիս և 'ի բուրաստանս զարդարէր. և զամենայն որ ինչ օրէն է թագաւորութեան և որ ինչ 'ի թագաւորութեան և որ շուրջ զթագաւորութեամբ ոչ ինչ իւիք կասեցուցանէր. և գրեթէ հարստագոյն և խոհեմագոյն քան զամենայն թագաւորութիւնս գտանէր։ Եւ այսպէս 'ի նորոգատուր թագաւորութեանն բարձրացուցանէր զազգս Թորգոմեան։ Եւ ապա ձեռն զհիւսիսական կողմամբք արկեալ 'ի ծործորս մեծի լերինն Կովկասու, որ 'ի հովիտն և 'ի ձորս երկայնագոգս բնակեալք էին ազգք ընդ իւրեաւ հնազանդեցուցանէր. այլ և զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց և զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր՝ 'ի բաց 'ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր։ Այլ և զթագաւորն Եգերացւոց 'ի սէր միաբանութեան ընդ իւր կապակցեալ՝ այնպէս նմա այցելէր, մինչ զի անընդհատ յորդիութեան սակի գոլով՝ մտերմաբար պարտավճար միշտ նմա 'ի ծառայութիւն բերէր։ Այլ և մեծ Կայսրն Յունաց՝ Բարսեղ, ոչ փոքր ինչ պայման խաղաղութեան և նուաճութեան և սիրոյ հաստատէր ընդ արքային մերոյ Աշոտոյ՝ որդի սիրելի զնա անուանելով և հաղորդակից կացուցանելով յամենայն թագաւորութիւնս տէրութեան իւրոյ։ Եւ այսպէս ապա լցեալ և կատարեալ լինէր բովանդակաբար բոլոր կարգս առաքինի գործոց ըստ կարգի այնց պարծանաց, զորս ընկալեալն էր։

Զայսու ժամանակաւ մեծ իշխանն տանն Արծրունի՝ Գրիգոր, որ Դերենիկն յորջորջիւր՝ ձեռն զգաւառօքն և զքաղաքօքն արկեալ զկողմամբք Հերայ և Զարաւանդայ՝ 'ի հնազանդութիւն ընդ իւրեաւ զկողմանսն զայնոսիկ նուաճէր։ Իսկ Իսմայէլեան ազգին գլխաւորք, որք բնականաբար սեպհականեալ էին զսահմանս քաղաքացն և գաւառացն այնոցիկ, թէպէտև շրթամբք զհարթ հաւասարութիւն և զհնազանդութիւն առ իշխանն Գրիգոր ցուցանէին և յայտ առնէին. սակայն սիրտք իւ-

նրա հետ նաև թագավորական այլ զգեստներ, պարգևներ, ընծաներ ու հրեղեն երիվարներ է՝ զարդերով ու զենքերով մատուցում նրան։ Այնուհետև այնտեղ հրավիրվեց նաև Գեորգ մեծ հայրապետը, և սրվակի յուղով օծելու փոխարեն կատարելով աստվածային հոգևոր օրհնությունը՝ նրան թագավոր են կարգում Ասքանազյան ազգի վրա։ Իսկ հետո նա իր տերության աշխարհում պատրաստում է մեծ ու երևելի կարգեր, բարեկարգում է տների, ազգերի, քաղաքների, շենների, դաստակերտների հորինվածքը, հարթ ու հավասար կարգեր հաստատում լեռնականների և տաք ու բարեխառն դաշտավայրերում բնակվողների համար, բոլոր տափարակ տեղերում դնում ագարակներ ու գոմեր, զարդարում բարեխառն վայրերի այգիներն ու բուրաստանները։ Եվ այն ամենը, ինչ արժան է թագավորությանը՝ և՛ թագավորության մեջ, և՛ թագավորության շուրջը, նա ոչ մի բանով չի կասեցնում։ Նա գրեթե բոլոր թագավորություններից ավելի հզոր ու խոհեմ էր համարվում։ Եվ նոր տրված թագավորության մեջ նա այդպես բարձրացնում էր Թորգոմյան ազգը։ Եվ ապա ձեռք գցելով հյուսիսային կողմերի՝ մեծ Կովկասի ծործորների վրա, հովիտներում ու երկայնագոգ ձորերում բնակված ազգերին իրեն է ենթարկում, նաև ամբողջությամբ իր ազդեցության տակ է գցում Գուգարքի խոռվարար ժողովուրդներին և Ուտի գավառի ավազակային մարդկանց՝ նրանցից վանելով մարդադավ ավազակությունը, բոլորին դարձնում է օրինավոր ու հնազանդ և նրանց համար առաջնորդներ ու իշխաններ է կարգում։ Սիրով ու միաբանությամբ իր հետ կապելով եգերացիների թագավորին՝ նա այդպես այցելում էր նրան, մինչև անգամ որպես որդի համարվելով, նրան միշտ ծառայելու համար մտերմաբար պարտավճար էր բերում։ Բացի դրանից, Հունաց Բարսեղ մեծ կայսրը խաղաղության, նվաճման ու սիրո փոքր դաշինք չի հաստատում մեր Աշոտ արքայի հետ՝ նրան սիրելի որդի անվանելով և հաղորդակից դարձնելով իր տերության ու թագավորության ամեն ինչին։ Եվ այսպես հետագայում առաքինի գործերի բոլոր կարգ ու կանոնները ամբողջությամբ դառնում են կատարյալ ըստ այն պարծանքի կարգի, որն ընդունված էր։

Այդ ժամանակներում Արծրունյաց տան մեծ իշխան Գրիգորը, որ Դերենիկ էր հորջորջվում, Հեր ու Զարևանդի կողմերում ձեռք գցելով գավառներ ու քաղաքներ, այդ կողմերը ենթարկում է՝ իրեն։ Իսկ Իսմայելյան ազգի գլխավորները, որոնք բնականաբար սեփականացրել էին այդ գավառների ու քաղաքների սահմանները, Գրիգոր իշխանի նկատմամբ խոսքով թեպետև ցուցաբերում էին անկեղծ միաբանություն ու հնազանդություն, սակայն նրանց սրտերը հեռացած ու մեկուսացված

բեանց հեռացեալք մեկուսի էին 'ի նմանէ։ Ապա յաւուրս աշնայնոյն մեծ իշխանն շուէր գնայր զկողմամբք Հերայ 'ի հանդիպումն գլխաւորի քաղաքին. և իբրև ել առ իշխանն՝ դաւաճանութեամբ 'ի ծածուկ զօրս զօղեալ թագուցանէր 'ի խոխոմս յայգեստանին։ Եւ 'ի հանդիպիլ իշխանին՝ յանկարծօրէն յարուցեալ զօրքն Իսմայէլեան 'ի տեղւոջէ իւրեանց, 'ի թիկանց կուսէ իշխանին 'ի վերայ զեղեալ հեղան. և առ ժամայն հարեալ զիշխանն սրով սուսերի յերկիր կործանեցին։ Եւ այնպէս խարդաւանել յանօրինաց՝ բարձաւ մեռեալ. և տարեալ թաղեցաւ 'ի շիրիմս հարց իւրոց։ Իսկ զկնի նորա պայազատէ զիշխանութիւնն մեծ՝ Աշոտ որդի իւր, թոռն արքային Աշոտոյ։

Բայց զմնացորդս բանիցս այսոցիկ՝ զօրութեանց և քաջութեանց և մրցանաց և պատերազմաց և բազում բարի օճանից աւանիկ գրեալ 'ի գիրս Պատմութեանց Շապհոյ Բագրատունւոյ՝ բաւական քեզ կացուցանել տեղեկագոյն առնն բարեբաստութեան։

Իսկ Վասակ Սիսական իշխանն, որ ըստ փաղաքշականին Իշխանիկն անուանիւր, աստուածամերձ պողոտայիւ և բարեպաշտագոյն հանդիսիւ քաղաքավարեալ զկեանս իւր՝ վախճանի, եղեալ 'ի շիրիմս հարց իւրոց։ Եւ ապա եղբայր նորուն Աշոտ ընդ նմա պայազատէր զիշխանութիւնն զայն. այլ հեզահամբոյր և խաղաղասէր, բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ և ամենայնիւ յամենայնի շինութեան զինքն պարապեցուցեալ հայրենի տէրութեան իւրոյ։

Բայց Աշոտ արքայ Հայոց յետ փայլեցուցանելոյ նորա զամենայն ուղղութիւնս և աջողութիւնս կարգաց և գործոց և գնացից Հայաստանեայցս, ապա հիւանդացաւ հիւանդութիւն մեծ, որ և մեռաւ իսկ։ Եւ մինչդեռ 'ի մահիճս անկեալ գնէր՝ ոչ սակաւ ինչ ընդ մարմնոյ խնամոց աճեցուցանել ջանայր և զհոգւոյն ևս իմաստութիւն։ Վասն զի առ ինքն զմեծ կաթողիկոսն Գէորգ կարգացեալ՝ և զփրկութենագործ զմարմին և զարիւն Տեառն Թոշակ յետին առ 'ի նմանէ իւր ընկալեալ, ոչ սակաւ ինչ քան թէ զբազումս բաշխէր գանձն ոսկւոյ և արծաթոյ 'ի տնանկս և յաղքատս, այլ և 'ի ձեռս հայրապետին հաւատայր զլիապատար գանձարանացն մթերս՝ և զերամակս ձիոց և զդասակս անդէոց և զհօտս ոչխարաց, ամենեին բնաւին բաշխել յեկեղեցիս ուղղափառաց 'ի նուիրումն պատարագին սրբութեան, ուր ուրեք և ում զիարդ պիտոյ ինչ լինէր։ Եւ այսպէս ապա զպիտառոցեալ պէտս արտաքնոցն 'ի մաքրութիւն նորոգման ներքին մարդոյն անտեսաբար կենսացուցանէր. յետ որոյ բարւոք ծերութեամբ ըստ բուսոյ բարեզգեաց բարուց հանգեաւ ի Քրիստոս։ Եւ վասն զի 'ի ճանապարհի յիջևանս 'ի Քարսպառն կոչեցեալ տեղ ապառաժի եղև նորայն վախճան, բարձեալ ապա զդիակիր

էին նրանից։ Աշնանային օրերի ընթացքում մեծ իշխանը շարժվում գնում է Հերի կողմերը՝ քաղաքի գլխավորի հետ հանդիպելու համար։ Եվ երբ նա իշխանին ընդառաջ գնաց, [այդ ժամանակ] նա իր զորքը ենթադրաբար ու գաղտնի թաքցրել էր այգեստանի խորաձորերում։ Եվ իշխանի հետ հանդիպելու ժամանակ իսմայելյան զորքը, հանկարծակի դուրս գալով իր տեղից, իշխանի թիկունքի կողմից հարձակվում է նրա վրա և սրով իսկույն խոցելով՝ գետին է գցում։ Այդպես խաբվելով անօրենների կողմից՝ նա [Գրիգորը] մեռավ, տարվեց ու թաղվեց իր հայրերի գերեզմանոցում։ Նրանից հետո մեծ իշխանությանը տիրում է իր որդի Աշոտը՝ Աշոտ արքայի թոռը։

Բայց մնացած հանգամանքների, այն է՝ նրա հզորության, քաջության, կռիվների, պատերազմների և բազում բարությունների ու օգնությունների մասին գրված է Շապուհ Բագրատունու պատմության գրքում, որը բավականաչափ տեղեկություն կտա քեզ, [ընթերցող], այդ մարդու բարեբախտության վերաբերյալ։

Իսկ սիսական իշխան Վասակը, որ փաղաքշաբար Իշխանիկ էր կոչվում, աստվածամերձ ուղիով ու բարեպաշտ փորձով վարելով իր առաքինի կյանքը, վախճանվում է և թաղվում իր հայրերի գերեզմանոցում։ Եվ ապա նրա փոխարեն իշխանությանը տիրում է նրա եղբայր Աշոտը՝ հեզահամբույր, խաղաղասեր, բարեպաշտ, աստվածավախ մի մարդ, որ ամեն ինչով իրեն նվիրել էր իր հայրենի տերության շինարարությանը։

Բայց Հայոց Աշոտ արքան Հայաստանի կարգ ու կանոնի, գործերի, ընթացքի բոլոր ուղղություններն ու հաջողությունները փայլեցնելուց հետո հիվանդացավ ծանր հիվանդությամբ և մեռավ։ Եվ մինչև անկողին ընկնելը նա քիչ խնամք չտարավ իր մարմնի զարգացման և հոգու իմաստության համար։ Իր մոտ կանչելով Գեորգ մեծ կաթողիկոսին և նրանից որպես հաղորդություն ընդունելով Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը՝ ոչ թե քիչ, այլ շատ ոսկու և արծաթի գանձեր էր բաշխում աղքատներին ու տնանկներին։ Միաժամանակ վստահում է հայրապետի միջոցով գանձարանների լեփ-լեցուն իրերը, ձիերի երամակները, կովերի նախիրները, ոչխարների հոտերը. բոլորը բաշխել ուղղափառ եկեղեցիներին որպես սուրբ պատարագի նվերներ՝ որտեղ, ում, ինչպես որ պետք լինի։ Եվ այսպես մարդու արտաքին կարիքների մասին Աստծու անունից խոսելով՝ մարդեղության խորհրդով մաքրում էր մարդու ներքինը ու նրան կենսագործում։ Դրանից հետո բարեկարգ բնավորությամբ հասնելով խոր ծերության՝ նա վախճանվում է։ Եվ քանի որ նրա վախճանը եղավ ճանապարհին Քարասպառ կոչվող ապա-

դագաղօք՝ տարան զնա 'ի թագաւորանիստ աւանն Բագարան, ոսկեհուռն հանդերձիւք և ոսկեզօծ վառիւք զդագաղն զարդարեալ. և խումբք զօրաց զինուք և զարդուք, ընտրանօք և նշանակօք շուրջ պաշտպանեալք մեծի կաթողիկոսին, և այլ ևս կղերց եկեղեցւոյ առաջի ևս գնացեալ՝ զխաչակրօն սաղմոսերգութիւնս և զձայնս օրհնութեանց նուագէին։ Իսկ երեք որդիք նորա՝ գահերէցք տան արքունի, և այլ ևս բարեկամք հետամտէին զկնի դագաղացն բայց միայն 'ի Սմբատայ, որ իշխան իշխանացն Հայոց էր. զի նա 'ի կողմանս Գուգարաց 'ի նուաճել զազգն զայնոսիկ գնացեալ էր՝ ոչ ժամանեաց յամբոկ գործոյն։ Եւ այսպէս հասեալք 'ի տեղին՝ ա՜նդ էր ապա տեսանել կուսանս ողբերգակս և արտօսրաթոր կականումն և աշխարանս տիկնացն և տանտիկնացն, և այլ ևս բազմութեան ռամկացն և անռամկացն։ Եւ ապա կազմեալ տապան թագաւորական՝ եդին զնա 'ի քնարանի հարց իւրոց։

Իսկ զկնի այսորիկ չուէ գայ հասանէ ըստ համբաւոյն հասելոյ՝ Սմբատ որդի արքային 'ի սեպհական կալուած Երազգաւորից Շիրակավան բազում վշտահար հեծութեամբ. զոր երթեալ և 'ի մխիթարութիւն զնա համոզեալ մեծի կաթողիկոսին՝ դադար վշտացն տայր, ոչ փոփոխել յընդրի իւր բարրական բնութենէն։ Գայր առ նա ապա և մեծ իշխանն Վրաց՝ Ատրներսեհ 'ի ցաւակցաբար վշտակցութիւն։

Եւ վասն զի Աբաս սպարապետն Հայոց և եղբայր արքային Աշոտոյ 'ի կողմանս պետութեան Վանանդայ առկայացեալ կայր, առ նա նախ ըստ օրինի հրահանգաց խոտորեալ մտանէր խօսել զբանս սփոփանաց և նորայն ևս տխրականաց սգոյ. զոր պատուասիրաբար և բարւոքապէս ընկալեալ՝ ոչ կամէր նմա յառաջ կոյս ևս առ Սմբատ չուել գնալ, ելս 'ի մտի դնելով, թէ գուցէ իմանալ դոցա՝ դաւ դրժողութեան նմա երկաքանչիւրոցն 'ի նոցանէ լինիցի, ոչ կարէր առնուլ զորս կամէրն, վասն զի յինքն զթագաւորութիւնն հնարէր նուաճել։ Յորմէ պատասխանի լսէր յաւէտ անտեղի զոլ զոչ երթալն, և առանց իմիք փաստից և պատճառք յուզմանց շփոթից և աղմկաց. որում թոյլ տուեալ՝ չուէ գնայ հանդիպի Սմբատայ, և թագաւորական զգեստուց զգեցմամբ զսևաթոյր զգեստաւ նորա զգեցումն 'ի բաց թօթափէ։ Եւ ինքն մեծամեծ և պատուական ընծայիւք 'ի Սմբատայ մեծարեալ՝ դառնայ կրկնակի առ սպարապետն Աբաս, որոյ զչարեալ սաստկապէս 'ի քսութենէ ոմանց, եթէ չար զնմանէ առ Սմբատ խորհեալ՝ կալեալ կապէ զնա երկաթի շղղ-

ռաժ տեղում իջևանելիս, սպառազինված ու զարդարված զինվորների խումբը, վերցնելով նրա դիակիր դագաղը, որ զարդարված էր ոսկեհյուս հանդերձանքով ու ոսկեզօծ զրոշներով, տարավ թագավորանիստ Բագարան ավանը։ Ճանապարհին մեծ կաթողիկոսի կողքերից գնում էին ընտիր զինվորներ՝ տանելով կաթողիկոսի զինանշանն ու գավազանը, իսկ նրա առջևից գնում էին եկեղեցու այլ հոգևորականներ՝ երգելով Քրիստոսի խաչին վերաբերող սաղմոսներ և օրհնության երգեր։ Իսկ նրա երեք որդիները՝ արքունի տան գահերեցները, և բարեկամները գնում էին դագաղի հետևից, բացի Սմբատից, որը Հայոց իշխանն էր։ Նա գնացել էր Գուգարքի կողմերը՝ այնտեղի ժողովուրդներին նվաճելու համար, այդ պատճառով նա չկարողացավ հասնել ժամանակին։ Եվ երբ նրանք այդպես հասան տեղ, պետք էր տեսնել ողբերգու կույսերի, իշխանուհիների, տանտիկինների և ռամիկ ու ոչ ռամիկ բազմության արտասվաթոր լացուկոծը։ Հետո նրանք պատրաստեցին թագավորական տապան և նրան դրեցին իր հայրերի գերեզմանոցում։

Իսկ դրանից հետո լուրը հասնելուն պես արքայի որդի Սմբատը խիստ վշտահար հեծեծանքով սեփական երազգավորք կալվածքից գալիս հասնում է Շիրակավան։ Մեծ կաթողիկոսը գնալով համոզում, մխիթարում ու հանգստացնում է նրան՝ շփոթվելով իր ազնիվ ու բարեբարո բնավորությունից։ Այնուհետև նրա մոտ է գալիս Վրաց մեծ իշխան Ատրներսեհը՝ ցավակցություն ու վշտակցություն հայտնելու համար։

Եվ քանի որ Հայոց սպարապետ Աբասը՝ Աշոտ արքայի եղբայրը, գտնվում էր Վանանդի իշխանության կողմերում, սովորության համաձայն նախ նրան թյուր հրահանգ է հասնում՝ նրա մոտ մտնելու, սփոփելու և սգո տխուր խոսքեր ասելու համար։ Դրանք սիրով ու հոժարությամբ ընդունելով՝ Աբասը չէր կամենում նրանից առաջ գնալ Սմբատի մոտ, մտածելով, թե գուցե դրանք իմանալով՝ նրանցից յուրաքանչյուրը դավի ու դրժի իրեն։ Եվ նա չէր կարող վերցնել այն, ինչ կամենում էր, որովհետև ձգտում էր թագավորությունը ինքը նվաճել։ Եվ լսած պատասխանի՝ չգնալը ավելի անպատշաճ էր համարվում։ Եվ առանց ինչ-որ փաստի ու առանց հուզվելու, շփոթվելու, աղմկելու պատճառի անտեսում է դրանք և գնում ու հանդիպում է Սմբատի հետ ու նրա վրայից հանում է նրա հագած թագավորական սևաթույր զգեստները։ Սմբատը նրան մեծարում է մեծամեծ ու պատվական ընծաներով, և նա նորից վերադառնում է Աբաս սպարապետի մոտ։ Վերջինս բարկանալով ոմանց քսությունից, թե՞ նրա հասցեին Սմբատի մոտ վատ

թայիւք և դնէ 'իբանտի 'ի բերդին Կարուց։ Եւ յայնմհետէ ապա յերկաքանչիւրոց անտի աղմուկ շփոթի սաստկացեալ զմիմեանսք զեղոյր, և գոռութ սպայից յինքեանս կուտեալ Սմբատ և Աբաս՝ և մարտ մարտուցեալ, ոչ սակաւ խուժան աւերանաց զաշխարհաւն հեզոյր։ Անդ 'ի մէջ կացեալ կաթողիկոսն մեծ՝ զխաղաղութիւն ընդ միմեանս խօսել խորհէր, և հայցէր զԱտրներսեհ արձակել 'ի տեղի իւր և զհրաբորբոք բարկութեանն տեղացումն 'ի բաց տրոհել 'ի միջոյ։ Իսկ սպարապետն խորամանկեալ՝ և հաւանական իմն ցուցեալ միտս, ասէ. «Տացէ ինձ այսրէն Ատրներսեհ զերկու ամրոցսն, զոր յափշտակեալ իսկ է 'ի ձեռաց Գուրգենայ քեռառն իմոյ, և զԴաւիթ զորդի իւր գրաւական ինձ յայսմհետէ՝ և ես թողից զնա խաղաղութեամբ։» Եւ յայդմ բանի յետկար երդմանն կնքեալ՝ տայր ցհայրապետն մեծ։ Եւ ապա իբրև առ զխնդրելին իւր, դարձեալ դաւաճանեալ 'ի դրժող դիւէ անտի՝ ոչ թողոյր զԱտրներսեհ, քամահեալ ևս զմիջնորդութիւն կաթողիկոսին մեծի։ Էնդ որ տխրական տրտմութեամբ և դառնութեամբ սրտի զգածեալ հայրապետն մեծ, և խոժոռեալ խռովութեամբ մեծաւ՝ ել գնաց անտի 'ի դաւառն Շիրակ։ Իսկ սպարապետն իմացեալ՝ թերևս խուժան հինից սաստկացեալ առ դուրս հասեալ կայ, երթեալ մտեալ դադարէր ընդ ամրոցաւ պարսպին 'ի ներքոյ պատուարին։

Ապայ այնուհետև Սմբատայ զօր մեծ գումարտակ արարեալ՝ ասպատակ սփռէր 'ի վերայ աշխարհակոյտ շինիցն Աբասայ շուրջ զամրոցաւն, ուր զաղթ գաւառին զօղեալ դադարէր՝ յաւարի առեալ զզէնսն արի արանց և զքաջ երիվարաց և իբրև յարգելան բանտի 'ի դիպահոջ զնա 'ի բերդին կացուցեալ։ Բազում աւուրս ստէպ ստէպ զայս առնէր, յորմէ ապա իբրև վտանգեալ և 'ի տաղնապի տարակուսանաց մղեալ և հետի աղագս այլ ինչ ոչ մարթացեալ գտանել՝ 'ի հեզութիւն եղբօրորդւոյն վստահացեալ պատանդս առ 'ի նմանէ խնդրէ զորդի նորին զիւրն համանուն, և զԱշոտ՝ զորդի Շապհոյ եղբօր իւրոյ, զի և նա ևս առ նա զԱտրներսեհ հանեալ տայցէ։ Իսկ խաղաղասէրն յամենայնի ոչ վրիպէր 'ի խնդրոյ նորա տալ զպատանդսն. և առեալ ածեալ յանձանձեալ զԱտրներսեհն՝ առաքէ մեծապատիւ շքեղութեամբ յաշխարհն իւր։ Եւ 'ի դառնալ իւր անտի՝ իսկ և իսկ ապա թագ արքայութեան նմա բերեալ մատուցանի յիշխանէ անտի Իսմայէլեանն Ափշնէ, որ յԱտրրպատականի՝ 'ի հրամանէ ամիրապետին իւրեանց. ընդ նմին և ոսկիակուռ զգեստ, և նժոյգս իբրև օդապարիկս 'ի զարդս և 'ի զէնս ոսկիակուռս պճնապայծառս, որում ապա ընդ առաջ 'ի թէատրոն անդ ելեալ՝

խորհելուց՝ [Ատրներսեհին] բռնում, կապում է երկաթյա շղթաներով և գցում Կարուց բերդի բանտը։ Այնուհետև նրանցից յուրաքանչյուրը սաստիկ աղմուկ ու աղաղակ էր թափում մյուսի գլխին։ Եվ Սմբատն ու Աբասը, իրենց մոտ կուտակելով մեծ հեծելազոր, մարտնչում են միմյանց դեմ, և երկրում քիչ խառնակություն ու ավերածություն չեն կատարում։ Այնտեղ մեծ կաթողիկոսը, կանգնելով նրանց միջև, մտածում էր խոսել խաղաղության մասին, և խնդրում էր Ատրներսեհին՝ արձակել իր տեղը և չեզոքացնել տեղացող հրաբորբոք բարկությունը։ Իսկ սպարապետը խորամանկելով ու հավանություն ցույց տալով՝ ասում է. «Ատրներսեհը այստեղից ինձ կտա երկու ամրոց, որ հափշտակել է իմ քրոջ ամուսնու՝ Գուրգենի ձեռքից, հետո իր որդի Դավթին կթողնի ինձ մոտ որպես պատանդ, և ես նրան բաց կթողնեմ խաղաղությամբ»։ Եվ կնքելով ձեռագիր երդմնագիրը՝ տալիս է մեծ հայրապետին։ Եվ ապա երբ առավ իր խնդրածը, դարձյալ խաբվելով այն դրժող դևից՝ բաց չի թողնում Ատրներսեհին և նույնիսկ արհամարհում է մեծ կաթողիկոսի միջնորդությունը։ Դրա վրա տրտմելով, սրտի դառնությամբ հուզվելով ու մեծ խռովությամբ խոժոռվելով՝ մեծ հայրապետը ելավ ու այնտեղից գնաց Շիրակ գավառը։ Իսկ սպարապետը, իմանալով այդ մասին, թերևս խուժան ավազակներից սաստիկ բարկանալով, գընում հասնում է ամրոցի դուռը և մտնելով ներս՝ դադար է առնում պարսպի ամրոցի պատերի տակ։

Այնուհետև մեծ զորք հավաքելով՝ Սմբատը ասպատակում է Աբասի ընդարձակ շենքերը, որոնք գտնվում էին ամրոցի շուրջը, ուր գաղթել, թաքնվել ու պահվել էր գավառի բնակչությունը, և թալանում է արի մարդկանց ու ընտիր երիվարների [վրայի] զենքերը և ժամանակավորապես նրան պահում է բերդում, որպես բանտում։ Եվ շատ օրեր նա հաճախակի այդ բանն էր անում, որից նեղվելով, տաղնապի ու տարակուսանքի մեջ ընկնելով, ճար չկարողանալով գտնել, եղբորորդուն հեզությամբ պատանդներ վստահելով՝ նրանից խնդրում է նրա որդուն՝ իր համանուն Աշոտին, իր եղբայր Շապուհի որդուն, որպեսզի նա էլ ազատի ու իրեն տա Ատրներսեհին։ Իսկ այն խաղաղասերը ամեն ինչում չէր վրիպում նրա՝ պատանդները տալու խնդրից։ Նա վերցնում բերում է Ատրներսեհին, մխիթարում և մեծապատիվ շքեղությամբ ուղարկում իր աշխարհը։ Եվ երբ նա վերադառնում է այնտեղից, Ատրպատականում գտնվող իսմայելյան Ափշին իշխանը իրենց ամիրապետի հրամանով արքայական թագը բերում և իսկույն մատուցում է նրան [Ատրներսեհին]։ Նրա հետ տալիս է նաև ոսկեհյուս զգեստ, հրեղեն նժույգներ՝ ոսկեհյուս զենքերով ու զարդերով զարդարված։ Հան-

դարձեալ դառնան յեկեղեցին սուրբ և հայրապետն Գէորգ ընդ նոսա։ Եւ անդ աւարտեալ 'ի վերայ զնուիրական աղօթսն՝ և ածեալ 'ի գիծս և 'ի գիրս և 'ի նկարս տեսականս զոսկեճամուկ զգեցութիւնսն, և եդեալ 'ի գլուխ զթագ թագաւորութեան նորա՝ եկանէր 'ի հոգևոր առագաստէ անտի պայազատել զրնաւ Հայաստանեայսս։ Վասն որոյ ապա սպարապետն Աբաս յաւէտ իմն զչարեալ և խանդացեալ ընդ իրս կաթողիկոսին՝ իբր զնա զոլ պատճառ իւրում զրկութեանն և Սմբատայ թագկալութեանն, և ապա չարայաչաղ մախանօք առ ինքն զբիլսն չարաբանս 'ի բասրանս նորա ձգէր. որք 'ի տանէ բուսեալք և դիւի չարի մատնեալք զերասանակ հոգւոյ իւրեանց՝ զճարակ հրոյ բանս բամբասանաց զսրբոյ կաթողիկոսէն խոխոտեալ յօդէին։ Եւ վասն զի սոյն սոքա նախ քան զայս զանօրէն լեզուս իւրեանց ածեալ էին զերկրաւ, և զոմանս ապիդատս զուգակցեալ զրաբան չարիմացութեանն՝ կարծէին կարել կատարել զանկումն սրբոյ կաթողիկոսին։

Եւ վասն զի ընդ այն ժամանակս փայլատակեալ պայծառանայր սուրբ այրն Աստուծոյ՝ Մաշտոց, որ 'ի Սևան կղզւոջ, որ զփառացն Աստուծոյ անշիջանելի լուսոյ ճառագայթումն յինքն նկարէր, աստուածային ծաւալմամբ և սրբափայլ կրօնիւք կենդանականօք և հոգիախաղաց զօրութեամբք 'ի տեսականի անդ զանտեսն տեսանէր. սակս այնորիկ ամենեցուն աչք 'ի նա հայէին յաղագս տրոհել և ճանաչել մարթելոյ նորա զհոգևորացն մասանց ընտրութիւնս ստուգագէտ իմացուածիւ։ Իսկ սպարապետն 'ի մտի եդեալ, թէ գուցէ հրապուրել զայրն Աստուծոյ կարասցէ և ընդ ինքեան 'ի խորհուրդս չարութեան միաբանել՝ զրէ ապա թուղթ առ նա, նախ ներբողումն զնմանէ, և ապա ամբաստանութիւն յոյժ բծամիտ իմն զկաթողիկոսէն. որպէս թէ չէ պարտ քեզ լսել նորայն անպտղութեան գործոցն խաւարի՝ և զվկայութիւնս ևս կորբստական չարացն յուշ արարեալ։ Այլև գուշակեալ ևս զնա ինքն 'ի պատիւ հայրապետութեան փոխանակ նորա կացուցանել, միայն թէ հաւանեսցի 'ի ժողովս չարացն գալ հասանել և միաբանել։ Զոր և ընթերցաւ՝ զայրացաւ յոգի իւր և ոչ կամէր առնել պատասխանի. բայց զի մի՛ լռութեամբ նորա չարքն զօրասցին 'ի չարութիւնս իւրեանց՝ զրէ ապա օրինակ զայս։

«Եկն եհաս 'ի վերայ հրամանք Հզօրիդ պատկառելիք, զոր և ընկալայ սիրով հոգւոյ սննդակից զոլոյ ինձ 'ի մանկութենէ օրինաց Աստուծոյ զիսարանում նրան ընդառաջ ելնելով՝ նրանք դարձյալ վերադառնում են սուրբ եկեղեցին և նրանց հետ էր նաև Գեորգ սուրբ հայրապետը։ Եվ այնտեղ ավարտելով նվիրական աղոթքները, հոգևոր ոսկեզարդ զգեստները զարդարելով գծերով, գրերով ու նկարներով և թագավորական թագը դնելով նրա գլխին՝ [Սմբատը] դուրս է գալիս այդ հոգևոր առագաստից՝ իշխելու ամբողջ Հայաստանի վրա։ Դրա համար Աբաս սպարապետը է՛լ ավելի է չարանում ու նախանձում կաթողիկոսին՝ ըստ նրա կատարած գործերի նրան համարելով իրեն թագից զրկելու և Սմբատին թագադրելու պատճառը։ Այնուհետև չար նախանձով իր մոտ է կանչում չարալեզու բանսարկուներին ու նրան մեղադրում [նրանց մոտ]։ Մնվելով տնից, բայց չար դևին հանձնելով իրենց հոգու սանձը՝ նրանք ջանում էին սուրբ կաթողիկոսի մասին բամբասանքի խոսքեր հորինել՝ նրան սրի ճարակ դարձնելու համար։ Եվ այն բանի համար, որ դրանից առաջ նրանք իրենց չար բամբասանքը տարածել էին երկրով մեկ և անմիտ առանձին մարդկանց էլ զուգակցել զրախոս չարախոսությանը, կարծում էին կարող են իրագործել սուրբ կաթողիկոսի անկումը։

Եվ քանի որ այդ ժամանակներում փայլատակելով փառավորվում էր Աստծու սուրբ մարդը՝ Մաշտոցը, որը գտնվում էր Սևան կղզում, որը փառավոր Աստծու անշեջ լույսի ճառագայթումը իր միջոցով էր ներկայացնում, աստվածային ծավալմամբ, սրբափայլ կենդանարար կրոնով և հոգեշարժ զորությամբ տեսանելիի մեջ անտեսն էր տեսնում։ Դրա համար բոլորի աչքերը նրան էին նայում՝ ստույգ իմացությամբ տրոհել ու ճանաչել կարողանալու համար նրա հոգևոր մասերի տարբերությունները։ Իսկ սպարապետը մտածելով, թե կկարողանա հրապուրել Աստծու մարդուն և չար խորհուրդների մեջ միաբանել տալ իր հետ, նրան թուղթ է հղում, որում նախ ներբողում է նրան, և ապա խիստ չարամիտ ամբաստանություն [է անում] կաթողիկոսի հասցեին։ Այնպես որ դու, [ընթերցող], չպետք է լսես նրա մութ ու անպտուղ գործերի մասին և ուշադրություն չպետք է դարձնես նրա կորստական չար վկայությանը։ Միաժամանակ հայտնում է, որ հենց նրան նրա փոխարեն պետք է դնել հայրապետական աթոռին, միայն թե նա համաձայնվի գալ, հասնել անօրենների ժողովին և միաբանվել։ Երբ նա ընթերցեց այդ գրությունը, խիստ զայրացավ իր հոգում և չէր կամենում պատասխանել։ Բայց որպեսզի չարքերը լռությամբ չկարողանան նրան [գցել] իրենց չարության մեջ, նա գրում է հետևյալ թուղթը.

«Եկավ հասավ Հզորիդ պատկառելի հրամանը, որն ընդունեցի հոգու սիրով, որ մանկությունից սկսած ես սննդակից եմ եղել օրինավոր

տուծոյ և ըստ հաւատոյ հարազատութեան դաշնաւորեալ 'ի հաւատակցութեան ձեր, որ ըստ Պողոսի սիրունդ էք և ոչ ատեցեալք—անկեալ երկիրպագի խորանին խոնարհութեամբ։ Բայց եթէ ինքնուրոյնութեամբ հրեշտակական կարգիս ընդ այլ ինչ շաւիղ տարեալ թողացուցանէ զանուր հարկացն անհասութեամբ՝ մի՛ թուիցիմք այնուիկ լծընկէցք. զի Աստուածային բանն առ 'ի մէնջ պահանջէ հնազանդիլ Աստուծոյ առաւել քան մարդկան։

«Յետ այսորիկ ապա ամենայն գլուխք պատգամաց Թղթիս ամբաստանութիւն էր զմեծէ հայրապետէն և զփոխանորդէն Քրիստոսի։ Յորքան նափորտն սրբութեան փակէ զնա շուրջանակի, և հարստացեալ փառաւորեալ է կոչմամբն Աստուծոյ, և առաքելական արգասեօք փոխանակ Աստուծոյ է. և զայս անուն անուանեմ զօրհանապազ։ Ապա խստութեամբ և ամբարտաւանութեամբ և չափչգիտութեամբ և զրադատ առնելով նզովիւք պատուիրեալ էիք և զիմ նզովս պատկեր կալեալ նորա անզգամութեանն՝ և այդոցիկ երաշխաւորեմ ես առաջի Աստուծոյ, գիտելով զնորա զանչափ բարեբարոյսն, որ պայմանաւ հրամանի Սուրբ Գրոց մինչ առաջի ունիմք՝ վաղվաղակի զիջանի և կատարելանայ, մանաւանդ մինչ զանց է արարեալ զաստեօք 'ի մանկութենէ և 'ի ծերութեան դար հասեալ։

«Բայց իմ նզովք դատապարտութեան յաւէտ յիրաւի և արժանի էր. և զի վրիպեցայ և ըստ արտուղի անկեալ՝ ինքնահրաման բարձի զխբատրոց սուրբ Հարցն, որ 'ի մէջ մեր և 'ի Քաղկեդոնականացն, վասն որոյ աղօթահայց ապաշխարութեամբ և առաջիանկմամբ պատառեցի նովին սուրբ ձեռօք զձեռնադրեալսն զինէն կարծեօք։ Բայց ամենայն դիտաւորութիւն Թղթիս զմեղաց իմն ակնարկէր զբասրանս սոցա. նոցա բանտարկեալ սատանայի վարդապետութեամբ, որ մարդասպանն է 'ի սկզբանէ կամ ոգեսպան և բանսուտ և որոմնացան. և որ զիս ևս զարթուցեալ էիք, թէ չէ պարտ լռել քեզ։ Արդ՝ ա՛յս մի ինչ տեսեալ լիցի քեզ՝ տէր իմ, զի անհնար է զյանցանս իմանալ իբր զճանապարհս օձի 'ի վիմի գնացելոյ. և հաստատուն վկայ՝ մարգարէն, ասելով. «Քննեցին զանօրէնութիւն և պարտասեցան 'ի քննել զքննութիւն։» Գիտեմ և հաստատեալ եմ 'ի Տէր, որ թերատեսեալ զմեղս՝ նիւթեալ է հիւանդին զմահ և ատել զեղբայրն յորժամ առ ռամիկս իցէ. իսկ առն երևելոյ և 'ի բարձրագոյն աստիճանի կացելոյ սակաւ ինչ սասանութիւնք՝ մեծամեծք են վնասք հասարակաց գայթակղութեան աղագաւ, թող թէ աղտեղագոյն աղետք աղծապղծութեան, որ թէ լինին։ Բայց ես այր մեղաւոր և վատթար, և անօրէնութեանց իմոց բարձրացելոց քան զգլուխ իմ և ծանրա-

Աստծուն և հավատի հարազատությամբ դաշնակցել ձեր հավատակցության հետ, որ ըստ Պողոսի՝ [դուք] սիրելի եք և ոչ թե ատելի. նա ընկնելով խոնարհությամբ երկրպագում է խորանին։ Բայց եթե ինքնուրույնաբար տանելով հրեշտակային կարգի մեկ այլ ճանապարհով՝ թողնել տա անհամար հարկերի օղակը, մենք դրանով չենք թոթափի լուծը, որովհետև աստվածային խոսքը մեզանից պահանջում է առավել Աստծուն հնազանդվել, քան մարդկանց։

Դրանից հետո թագավորական թղթի բոլոր գլուխները ամբաստանություն էին [պարունակում] մեծ հայրապետի և Քրիստոսի փոխանորդի մասին։ Եվ ինչպես որ սուրբ շուրջառն է փակում նրան, [այդպես] զորանալով նա փառավորվել է Աստծու անվամբ և առաքելական արգասիքով Աստծու փոխարեն նա է։ Եվ ես այս անունը տալիս եմ օրինիբուն։ Այնուհետև խստությամբ, ամբարտավանությամբ, չափը չգիտենալով, զրպարտելով ու նզովելով՝ պատվիրել էիք՝ իմ նզովքն էլ օրինակ ունենալով նրա անզգամությանը։ Դրանով ես երաշխավորում եմ Աստծու առջև՝ իմանալով նրա անչափ բարեսրտությունը, որը Սուրբ Գրքի հրամանով միշտ ունենք մեր առաջ։ Նա անմիջապես հանձնվում է ու կատարյալ դառնում, մանավանդ որ զանց է արվել մանկությունից սկսած և հասել է ծերության հասակը։

Բայց իմ նզովքը հավետ դատապարտության էր արժանի։ Եվ որովհետև շեղվեցի և ուղուց դուրս ընկնելով՝ ինքնագլուխ կերպով վերացրի հայրերի տարբերությունը, որ առկա է մեր և քաղկեդոնականների միջև, դրանով մաղթողական ապաշխարությամբ ու առաջն ընկնելով՝ նույն սուրբ ձեռքով պատառեցի իմ մասին գրվածը։ Բայց Թղթի ամբողջ խորհուրդն այն էր, որ ակնարկում էր սրանց մեղադրանքն ու մեղքերը։ Նրանք բանտարկվեցին սատանայի վարդապետությամբ, որն ի սկզբանե մարդասպան է կամ հոգեսպան, ստախոս ու որոմնացան։ Եվ դուք էլ ինձ ևս արթնացրել էիք, թե դու չպիտի լռես։ Արդ՝ այս մեկը քեզ, տեր իմ, թող հայտնի լինի, որ անհնար է հանցանքն իմանալ, ինչպես վեմի վրայով գնացած օձի ճանապարհը։ Եվ հաստատուն վկան՝ մարգարեն ասում է. «Քննեցին անօրենությունը և հոգով պարտավորվեցին քննելու քննածը»[53]։ Գիտեմ, որ հաստատվել եմ Տիրոջ համար, որ թերևացնելով մեղքերը՝ հիվանդի համար նյութել է մահ և ատել եղբորը, երբ նա ռամիկների մոտ կլինի։ Իսկ երևելի ու բարձր աստիճանի հասած մարդու փոքր-ինչ տատանումները բոլորի համար մեծամեծ վնաս են գայթակղության պատճառով՝ մի կողմ թողնելով ավելի աղտեղի ու գարշելի աղետները, որոնք եթե լինում են։ Բայց ես՝ մեղավոր ու վատթար մարդս, որի անօրենությունները ավելի են

պէս բեռնացելոց 'ի վերայ իմ, ոչ կարեմ նախանձել զնախանձ Տեառն Աստուծոյ ամենակալի և գերանաւ կուրացելոյս զմութն այլոց սրատեսել։

«Եւ արդ բազում արտասուօք և հառաչմամբ սրտի գրեցի, զոր միանգամ գրեցի։ Աստուած զշաւիղս արդարութեան ցուցցէ ձեզ գնալ ընդ նա, և կատարեսցէ զկամս ձեր 'ի կամս իւր. խօսեսցի 'ի սիրտս ձեր զարդարութիւն և զիրաւունս՝ մի՛ դրդուիլ անքննօղ լսելեօք, որ ոչ վայելէ ձերում գլխաւորութեանդ, և զձերդ ձեղէն տեսէք։ Այլ իմ մեռցի և կորիցէ անուն և յիշատակ յերեսաց երկրէ, և խաւարեսցին բիբք աչացս և մի՛ տեսցեն զլոյս, և փակեսցին ականջքս և համր եղիցի հովեալ բերանս և լեզու իմ 'ի քիմս իմ կցեսցի, և մէգ և մառախուղ մեղաց և ստուերք մահու պատեսցէ զբոլոր անձնս, եթէ ինչ շարժեցայց կամ զգացայց տեսանել կամ լսել կամ խօսել զարդարոյն զանիրաւութիւն՝ զապիրատութիւն 'ի բարձունս խօսելով, զլեզուս ածել զերկրաւ՝ պարտոխաթափ եղեալ և զօղանջել 'ի սուր շրթունս։ Քա՛ւ լիցի ձեռս ամբառնալ յօծեալն Աստուծոյ և քրէական մեղօք վտարանդի լինել անթողլովն և անբժշկելովն։ Քա՛ւ լիցի ինձ լինել Կորխ և Դաթան հակառակ ընտրելոյն Աստուծոյ. ապա թէ ոչ՝ բացցէ երկիր բերան իւր և կլցէ զիս կորստեամբ ընդ բանակն Աբիրոնի և կենդանւոյն իջցեմ 'ի դժոխս։ Իմն ա՛յդ է. և յայդմանէ զիս ոչ ոք կարէ փոխել ոչ զեհենին երկիւղիւ և արքայութեանն խոստմամբ, և յատեանն գոլով՝ հեղցի թարախեալ արիւնն սրտիս առ յանդիմանն նզովելով զանգոսնողսն, որք զձեզն խռովեցուցին։ 'Ի վերայ այդր ամենայնի յուշ լիցի ձեզ և արձանագրեալքն յԱստուծոյ օրէնքն, յորում գրեալ է, թէ «Յայտնիքն որդւոց մարդկան և ծածուկքն Տեառն Աստուծոյ.» վասն որոյ և հաստատեաց օր, յորում ինքնին դատելոց է զգաղտնիս մարդկան 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։

«Եւ արդ՝ դուք անդր թողէք զ'ի վերդ քան զձեզ և մի՛ 'ի կարծս դատէք, և մի՛ ըստ խօսից յանդիմանէք՝ մինչև եկեսցէ Տէր, որ լուսաւոր առնէ զգաղտնիս խաւարի և զիւրաքանչիւրն զգործն հրով փորձէ. զի կարծիք և թուիք և նմանութիւնք և ստուերք են սնոտիք արտաքոյ ճշմարտութեանն և չհամարին վկայութիւնք յիրաւացեալ ատենի ըստ պահանջելոյ Աստուծոյ, թէ յերկուց և յերից վկայից հաստատեսցի ամենայն բան. որ և արտաքնոցն իմաստնագունից յոյժ հաճոյ թուեցաւ, որ գողացեալ զմերն 'ի մէնջ և այլակերպ արարեալ և այլա-

բարձրացել, քան իմ գլուխը և ծանրացել են ինձ վրա, չեմ կարող նախանձել ամենակալ Տեր Աստծու վրեժխնդրությանը և գերանով կուրացածս ուրիշների խավարը խորաթափանցորեն տեսնել։

Այսպիսով բազում արտասուքներով ու սրտի հառաչանքով գրեցի այն, ինչ մեկ անգամ գրեցի։ Աստված ձեզ համար արդարության ճանապարհ ցույց կտա, որով դուք պետք է գնաք, ձեր կամքը կկատարի իր ցանկությամբ, ձեր սրտերի մեջ կդնի արդարություն ու իրավունք՝ չդրդվելու դյուրահավան ականջներով, որը վայել չէ ձեր էությանը, և ձերը դուք ինքներդ տեսեք։ Թող մեռնի ու կորչի երկրի երեսից իմ անունն ու հիշատակը, թող խավարեն աչքերիս բիբերը ու չտեսնեն լույսը, թող փակվեն ականջներս, թող համրանա իմ հոտած[54] բերանը, իմ լեզուն թող իմ քիմքին կպչի. մեղը, մառախուղն ու մահվան ստվերը թող պատեն իմ ամբողջ մարմինը, եթե ես ինչ-որ [ձևով] շարժվեմ կամ զգամ տեսնել, կամ լսել, կամ խոսել արդարի անիրավության մասին, բարձունքներում պատմել ապիրատության վերաբերյալ՝ լեզու բանեցնելով երկրում, սրտի ոխը թափելով և շրթունքներով բարձր հայհոյելով։ Անկարելի է, որ ես ձեռքերս ամբառնամ դեպի Աստծու օծյալը և շարաշար մեղքով վտարանդի լինեմ՝ դառնալով աններելի ու անբուժելի։ Անհնար է, որ ես Կորխի ու Դաթանի նման հակադրվեմ Աստծու ընտրյալին, ապա թե ոչ թող երկիրը բաց անի իր բերանը և կուլ տա ինձ՝ Աբիրոնի[55] բանակի հետ կորցնելով, և ես ողջ-ողջ իջնեմ դժոխք։ Իմը դա է, և դրանից ինձ ոչ ոք չի կարող ետ դարձնել՝ ո՛չ գեհենի երկյուղը, ո՛չ արքայության խոստումը։ Ատյանում լինելիս թող թափվի իմ սրտի թարախացած արյունը ձեր առաջ՝ նզովելով արհամարհողներին, ովքեր ձեզ խռովեցրին։ Այս ամենի հետ միաժամանակ դուք պետք է հիշեք Աստծու կողմից արձանագրված այն կանոնը, որում ասված է, թե «Հայտնին մարդկանց որդիներինն է, իսկ գաղտնիքը՝ Տեր Աստծունը»[56], որի համար էլ օր սահմանեց, երբ Հիսուս Քրիստոսի միջոցով ինքը պետք է դատի մարդկանց գաղտնիքները։

Այսպես ուրեմն, դուք այնտեղ, ձեզանից վերև թողեք և կարծիքով մի՛ դատեք, ըստ խոսքերի մի՛ հանդիմանեք, մինչև կգա Տերը, որ լուսավորի խավարի գաղտնիքները և յուրաքանչյուրի գործը հրով փորձի, որովհետև կարծիքը, թվալը, նմանություններն ու ստվերները սնոտի բաներ են, ճշմարտությունից հեռու և ըստ Աստծու պահանջի իրավացի դատաստանի վկայություններ չեն համարվում, եթե երկու-երեք վկաների կողմից [նույնիսկ] հաստատվի ամեն մի խոսք։ Դա օտար իմաստուններին խիստ հաճելի թվաց, որոնք գողանալով մերը մեզնից՝ այլակերպեցին և այլաբանությամբ ներկայացրին որպես իրենց սե-

բանութեամբ յառաջ բերեալ իբր իւրեանց սեպհական, միայն զտեսսն պատուիրեալ անշուշտ՝ որպէս հարօր 'ի վար կամ դեղատու 'ի դեղոցի։ Արդ՝ աղաչեմ ոչ լռել կամ անհոգ լինել՝ այլ իրաւանց ուշ ունել. զի որպէս մարդկան կարծիք և համբաւք են ձեր նմանիք տկարացեալք փակեալ թուին ըստ սղալանաց։ Բայց եթէ դէպ լինիցի և 'ի հայրապետութիւն կոչել յորդորիք և դուք՝ և չլինի խոստ մեղացն, ո՞վ ոք լերբենի երեսօք կարէ յառաջ գալ և վկայ անօրէնութեան լինել, թողում ասել 'ի վերայ ընտրելոյն Աստուծոյ։ Վասն այսորիկ իսկ և հրաման Հոգւոյն Սրբոյ զանյայտսն 'ի հոգիս իւր թողացուցանէ. մի՛ ապա լիցի ձեզ խռովականս ինչ առնել և խստութեամբ ընդդէմ խթանի աքացել, զի յաւէտ 'ի բաց տանի 'ի բոլոր շնորհաց այդպէս խորհել 'ի հաւատ։ Եւ չօրհնեցաւ իշխանն Բագարատ, որ զայդպիսիսդ խորհեցաւ յոչինչ պէտս, որում ամենեքեան իսկ գիտակք եմք կորստեան կորըստականացն։ Ժողովք թէ հրամայէք լինիլ՝ մի՛ լիցին ժողովք չարաց պաշարողաց քինահան հրոսողաց, որք որպէս յայնժամ ժողովեցան ընդ Աննայի և ընդ Կայիափայ վասն Տեառն և արդ վասն օծելոյ նորա. այլ զայն, զոր ստացաւ 'ի սկզբանէ Տէր 'ի վիճակ ժառանգութեան իւրոյ, ըստ որում մարգարէն դասաւորէ՝ ասելովն, «Ժողովեցարուք 'ի լեառն Սիօն՝ քահանայք և ծերք արդարակորովք, քարոզեցէք պահս և պաղատանս. սրբեցէք զեկեղեցի լալով և կոծելով, զի այց արասցէ ձեզ Աստուած.» ըստ որում և արարին ձեզ Նիկիական սուրբ Հարքն տրեխաւորեալք ոտիւք հետևեալք 'ի բանակեաղ սրբութեան, և զամն ողջոյն արձանացեալք պահօք և աղօթիւք՝ կերան հաց նեղութեան զչորաբեկն և ջուր տառապանաց արբին 'ի գետնատարած խշտիս ընդ երկիր կցեալ՝ բաղում զղջմամբ և հեծութեամբ զԱւետարանն սուրբ միջնորդ կացուցեալ, զի մի՛ արասցեն ըստ կամս ինչ. յորս հայեցաւ Աստուած և լուսաւորեցոյց նոցա զարժանն։ Նոյնպէս և այլք ամենեքեան։

«Արդ՝ ես անարժանս հաւանեալ եմ 'ի խորհուրդս ուղղոց և 'ի ժողովս բարեսիրաց գալ հասանել, և զերկս աշխատութեան նոցա կատարել տարեւոր աղօթիւք և ճգամբք, և նոյնն Աստուած հզօր և կենդանի է առնել զհաճոյս իւր. և յաւելում յանդգնել 'ի ստիպողացն անբզդամութիւն՝ և երաշխաւորեմ, զի թէ Աստուած զիարդ և է ոչ այցելէ՝ զիս ընդ շարագործսն և ընդ մծղնեայսն որոշեցէք 'ի նախատինս յաւիտենից. միայն թէ ժողովն ըստ տեսութեանս իմոյ եղեցի։ Այլ վասն լեզուաց մի՛ ինչ ընդ միտ ածեալ զարհուրիք, զի լեզու ոչ եթէ նորոգ

փականը՝ պատվիրելով միայն իրական տեսքը, որպես արորը վար անելիս կամ դեղագործը դեղատանը [աշխատելիս]։ Արդ՝ աղաչում եմ չլռել կամ անհոգ լինել, այլ արդարությանը հետևել, որովհետև ինչպես մարդկանց կարծիքն ու լուրերն են, [այդպես էլ] ձեր նմանները տկարացած ու փակված են թվում սխալմունքի համաձայն։ Բայց եթե պատահի և դուք էլ հորդորեք հայրապետության համար կանչել, թող մեղքերի խոստովանություն չլինի, ո՞վ կկարողանա լիրբ երեսով առաջ գալ և անօրենության վկա լինել, զանց եմ անում ասելու Աստծու ընտրյալի մասին։ Դրա համար էլ Սուրբ Հոգին հրամայել է անհայտը իր հոգու մեջ թողնել։ Եվ ապա դուք չպետք է անհանգստացնեք ու խստությամբ քացի տաք գավազանի սուր ծայրին, որովհետև հավատի մասին այդպես խորհելը ավելի հեռու կտանի ամեն մի շնորհից։ Եվ իշխան Բագարատը չօրհնվեց, որ այդպիսիներիդ համար պետքական ոչինչ չխորհեց, որ մենք՝ բոլորս, տեղյակ ենք կորստյան արժանի դատապարտությանը։ Եթե հրամայում եք, որ ժողով լինի, թող չլինի պաշարող չարերի ու վրիժառու հարձակվողների ժողով, որոնք, ինչպես այն ժամանակ, Տիրոջ համար հավաքվեցին Աննայի ու Կայիափայի հետ, իսկ այժմ՝ նրան օծելու համար, այլ [լինի] այն, որ ի սկզբանե ստացավ Տերը որպես իր ժառանգության բաժին, ինչպես որ մարգարեն դասավորում է՝ ասելով. «Քահանաներ ու արդարակորով ծերեր, հավաքվեցե՛ք Սիոն լեռան վրա, քարոզեցեք պաս ու պաղատանք, եկեղեցին մաքրեցե՛ք լաց ու կոծով, որպեսզի Աստված այցելի ձեզ»[37], ինչպես որ ձեզ համար արեցին Նիկիական սուրբ հայրերը՝ տրեխավոր ոտքերով գնալով սրբության հավաքատեղը և ամբողջ տարի արձանանալով, պաս պահելով ու աղոթք անելով՝ կերան նեղության չար հացը, խմեցին տառապանքի ջուրը։ Հողի վրա պառկելով՝ նրանք գետնին կպան՝ բաղում զղջմամբ ու հեծությամբ սուրբ ավետարանը միջնորդ դարձնելով, որպեսզի իրենց կամքով որևէ բան չանեն։ Դրանց նայելով՝ Աստված լուսավորեց նրանց ըստ արժանվույն, այդպես և՝ մյուս բոլորը։

Արդ՝ ես՝ անարժանս, համաձայնվել եմ գալ հասնել արդարների խորհրդին ու բարեսերների ժողովին և նրանց համար ջանք ու աշխատանք կատարել տարեկան աղոթքներով ու ճգնելով, և նույն Աստված հզոր ու կենդանի է կատարելու համար իր կամքը։ Ես համարձակվում եմ ավելացնել ստիպողների անզգամությունը և երաշխավորում եմ, թե Աստված ինչպես է, որ չի այցելում, ինձ համար չարագործների ու աղանդավորների հետ հավիտենական նախատինք սահմանեցե՛ք, միայն թե ժողովը թող իմ ներկայությամբ լինի։ Բայց լեզուների վերաբերյալ ինչ-որ բան մտաբերելով՝ մի՛ զարհուրեք, որովհետև լեզուն

ինչ սրեալ է 'ի դառնութեան և լարեալ աղեղն թիւր պատրաստական 'ի ձգել զնետս հեռոյ և հակառակութեան, հարկանել սպանանել, որք ուղիղն են սրտիւք։ Եւ զևք չարք ընթանան՝ ծարաւելով զպատիւ սրբոյ խորհիլ մերժել հնարիմացութեամբ որդւոց մարդկան բարկացելոց։ Արդ՝ այնք լեզուք են, որով մարգարէք դատափետք եղեալ Թոպեցան 'ի սուր սուսերի սատակեալք. փարիսական յորդորն և Հրէիցն ճուշն է, որով Լ յԱստուածն բան համարձակեալ՝ կորեան յաւիտեանս յաւիտենից. քահանայիցն մոլեգնութիւնն է, որով աստուածամարտքն եղեն. Յուդայի կատաղումն է, որ խցեալ աչօք դիմեաց և չկորոյս զերեսուն արծաթին և մատեաւ 'ի տեղի իւր. այն իմացուածք են և խոհական հանճարքն, որք յԱստուած և 'ի Կայսր գիտացին պարտաւոր առնել զՈրդին Աստուծոյ, և օրինօք մատնեցին դատաւորին 'ի կորուստ անձանց իւրեանց։ Յիշեցէք զվկայսն Ստեփաննոսի և զՅակոբայ Տեառնեղբօրն և զՆարկեսոսին զերեսին, և մի՛ խաբիք. զի առնել գիտեն որդիք մարդկան կամ կամաւ կամ մոլորութեամբ բանսարկուին։ Վասն որոյ և գրեալ իսկ պահին չարութիւնքն անօրէն վկայիցն 'ի զգուշութիւն առ յապա եղելոցս. որք որպէս ածելի սուր սրեցին զնենգութիւն՝ սիրել զչարութիւն քան զբարութիւն և զխօսս կործանման։ Վասն որոյ պաղատանս մատուցանէ մարգարէն՝ ապրիլ 'ի մարդոց չարաց, որք սրեցին զլեզուս իւրեանց իբրև զօձ և թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա։ Յաւելում և զայս ևս՝ որ անձնամատն գարշելի՝ չէ վկայ և ոչ կարէ զալ յառաջ յատեան ուղղոց, այլ բացէ 'ի բաց հալածի։ Քանզի զպիղծ դէմսն երեսք կնոջ պոռնկի արարեալ և ելեալ 'ի թուոյ արանց, և խոստովանեալն առ քահանայն չէ վկայ՝ ըստ սինհոդոսական կարգին, նախ քան զկատարումն ժամանակի սուրբ կանոնաց, և խորտակեալ ապաշխարութեամբ և առնել քաւութեանն իւրոյ վկայս՝ զառաջնորդս եկեղեցւոյ։

«Արդ՝ եկեսցեն ապաշխարեսցեն նախ մեղաւորքն խորդով և մոխրով՝ կրօնաւորեալ սրտի մտօք, և ապա յետ ժամանակին հաւատարիմ բանք նոցա լինիցին։ Այլև եպիսկոպոսք ընտրեալք և արդարք՝ ոմանք 'ի հեռաստանէ եկեսցեն, յորոց վերայ ոչ լինիցին կարծիք ատելութեան. նոյնպէս և հարք սուրբք և աւագք թող քննեն իբրև կամին և հաւատարմանան զերդևէ*. և ապա յետ այնորիկ ամենայն իրօք, որք կարեն

* Այլ օր. «զեղուէ». Թերևս «զիարդ և է» պարտ իցէ ընթեռնուլ։

«Ի թե նոր է սրվել դառնության համար և թյուր պատրաստված լարած աղեղը՝ նետը հեռու ու հակառակ [ուղղությամբ] գցելու համար՝ խրփելու, սպանելու նրանց, ովքեր սրտով արդար են։ Եվ չար դևերը ընթանում են՝ փափագելով խորհել բարկացած մարդկանց որդիների հընարագիտությամբ մերժելու սրբի պատիվը։ Արդ՝ այն լեզուներն են, որոնցով մարգարեները դատափետվելով ծեծվեցին՝ մեռնելով սրի բերանով. փարիսեցիների հորդորն ու հրեաների ճիշն է, որով և հարձակվելով Բանն Աստծու[58] վրա՝ կորան հավիտյանս հավիտենից. քահանաների մոլեգնությունն է, որով նրանք աստվածամարտ եղան. Հուդայի կատաղությունն էր, որ փակ աչքով դիմեց և չկորցրեց երեսուն արծաթի համար ու պատարագվեց իր փոխարեն. այն իմաստուններն են ու խոհեմ հանճարները, որոնք իմացան Աստծու և կայսրի առաջ հանցավոր ցույց տալ Աստծու Որդուն և օրենքով մատնվեցին դատավորին իրենց անձանց կորստյան համար։ Հիշեցե՛ք երեք վկաներին՝ Ստեփաննոսին[59], Տիրոջ եղբայր Հակոբին[60] և Նարկեսոսին, և մի՛ խաբվեք, որովհետև մարդկանց որդիները գիտեն կատարել բանսարկուի կա՛մ կամքով, կա՛մ մոլորությամբ։ Դրա համար էլ գրած պահվում են անօրեն վկաների չարությունները՝ հետնորդներին զգուշացնելու համար, որոնք որպես ածելի սրեցին նենգությունը՝ սիրելու չարությունն ու կործանարար խոսքը, քան բարությունը։ Դրա համար մարգարեն պաղատանք է մատուցում՝ ազատվել չար մարդկանցից, ովքեր սրեցին իրենց լեզուները իբրև օձ, և իժի թույն կա նրանց շրթունքների տակ։ Ավելացնում եմ նաև հետևյալը. քանի որ պիղծ մարդը գարշելի է, նա վկա չէ և չի կարող ներկայանալ արդարների դատաստանին, այլ բացեիբաց հալածվում է։ Քանի որ նա պոռնիկ կնոջ պես պղծում է իր դիրքը՝ դուրս է գալիս մարդկանց հաշվից։ Եվ քահանային խոստովանողը վկա չէ՝ սինոդական ժողովի կանոնի համաձայն, նախքան ժամանակի սուրբ կանոնների կատարումը և եկեղեցու առաջնորդներին խորտակված ապաշխարությամբ իր քավության վկաներն անելը։

Արդ՝ նախ մեղավորները թող զան ու ապաշխարեն քրձով ու մոխրով՝ կրոնավորելով սրտի մտոք, և ժամանակ անց նրանց խոսքերը հավատարիմ կլինեն։ Նաև ընտիր ու արդար եպիսկոպոսներից ոմանք կգան հեռաստանից և նրանց վրա ատելի կարծիք չի լինի։ Այդպես էլ սուրբ հայրերն ու ավագները թող քննեն, երբ կամենան ու հավատարմանան, ինչպես որ է*։ Եվ ապա դրանից հետո ամեն ինչով, որոնք կարող են սուրբ սեղանն ու սուրբ աթոռը փսիաթով ծածկել, իրենց

* [Բնագրում՝ «զերդևէ». գրքի հրատարակիչը ծանոթագրում է]. Այլ օր. «զեղուէ». Թերևս «զիարդ և է» պետք է կարդալ [մենք այս վերջին ձևն էլ թարգմանել ենք]։

զսուրբ սեղանն և զսուրբ աթոռն փրիսայով պատել՝ յիւրեանց ոգիս պատեսցեն իբրև զսուգ առեալ վասն անկման փեսային, որ զՔրիստոս փոխանակէր 'ի մուտս սրբութեանց հարսին եկեղեցւոյ. և շատ այլ ինչ աւելի քան ըստ արդար իրաւանցն, զոր սարսափեցի գրել։ Ապա յայնժամ լինի հրամայեալս 'ի ձէնջ թէ զայլ ոք ընտրել կամենայք, որում չէ հնար լինել՝ բայց եթէ բուռն զօրութեամբ և կամ կամակոր մտօք ընդ Աստուծոյ կռուել։ Բայց արդ՝ դուք թիկունս տուք Աստուծոյ ըստ իմումս խորհրդակցութեան, զի առ հանդերձեալսն դատաստանք ձեր քաղցր եղիցին առաջի տիեզերական ատենին. և փառս և պատիւ ընկալջիք յԱստուծոյ ընդ երկայն աւուրս։»

Արդ՝ իբրև ընթերցաւ զայս յետկար նամակի՝ յոյժ զամօթի հարեալ, ստեաց չարաթոյն նենգողացն. զի ուր և գրեաց նա զայսպիսիս՝ ոչ ուստեք ըստ կամաց ընկալաւ պատասխանիս, այլ բազում յանդիմանակաց մեղադրութիւնս։ Մանաւանդ զի ոմանք ևս 'ի խրոխտապանծ մոլենախանձ զրաբանողացն աստուածասաստ իմն գոգցես բարկութեամբ հարեալ կորեան. զի ուրումն 'ի նոցանէ ապիրատ շրթունք որդնեռաց լքեալ՝ 'ի բաղմաց տեսութիւն գոլով և ինձ իսկ գլխովին, սատակեցաւ. իսկ ուրումն որովայնն հաշեալ և հարեալ ընդ հարկաւոր պիտոյսն գարշութեան խառն 'ի վայր վայթի։ Իսկ անձնամատնն ջերմամբ մեծաւ և տապախառն հրով վառեալ՝ և խաղավարտ 'ի վերայ եռացեալ մեռանէր։ Իսկ մնացեալքն ապա դիմեցին մեղայասացութեամբ առ ոտս հայրապետին տաղնապաւ՝ տարակուսեալք և դողացեալք յիրաւացի պատուհասէն, որք և թողութիւն գտին։ Այլև սպարապետն մեծ սարսափմամբ սրտի զարհուրեալ՝ երկնչելով յերագահաս դատաստանացն Աստուծոյ, բազմահառաչ պաղատանօք և արտասուօք անկեալ առ ոտս հայրապետին՝ հայցէր թողութիւն մեղանչական մոլորութեանն, զոր և ընկալաւ իսկ աննախանձ սրտի սիրով ըստ հաւատարիմ խնդրողին՝ արժանի թողութեան և օրհնութեան զնոսա առնէր հաւատոց կատարելութեամբ։

Եւ այսոքիկ մեծաւ երկիւղիւ առ 'ի յինէն գրով դրոշմեալ ձեզ եղև յիշատակ առ յապա. զի հայեցեալ յելս գնացից կորստականացն պատուհասից՝ մի՛ ոք զնոյն անցս չարշարանաց և զձաղանս և զձաղկանս խոխոտիցի կրել որպէս և նոքայն, որք ընդ Յուդայի անկեալք գնացին 'ի տեղիս իւրեանց։

Բայց Սմբատայ հաւաստապէս հաստատեալ թագաւորութիւնն՝ հընարէր ըստ Պողոսի ընդ ամենեսեան յարդարել զխաղաղութեան սիրոյն պայման։ Եւ նախ ըստ հայրենի կարգացն ուխտի ոչ զատէր զինքն 'ի

ոգիները թող պատեն սուգ անելով փեսայի անկման համար, որ Քրիստոսին փոխանակում էր եկեղեցու հարսի սուրբ մուտքով։ Եվ շատ այլ բան կա, քան արդար իրավունքով եղածը, որը ես սարսափեցի գրել։ Ապա այն ժամանակ լինում է ձեր կողմից հրամայվածը, եթե կամենաք մեկ ուրիշին ընտրել, որը հնարավոր չէ, որ լինի, այլ կլինի բուռն զորությամբ կամ կամակոր մտքով կռվել Աստծու հետ։ Բայց այժմ դուք ապավինեք Աստծուն՝ ըստ իմ խորհրդի, որպեսզի ձեր գալիք դատաստանը քաղցր լինի տիեզերական տյանի առջև։ Եվ դուք Աստծուց կընդունեք փառք ու պատիվ շատ օրերի ընթացքում»։

Արդ՝ երբ ընթերցվեց նամակի այս ձեռագիրը՝ սաստիկ ամաչելով, նա խաբեց չարագործ նենգավորներին, որովհետև ինքը ուր որ գրեց այսպիսի [նամակներ], ոչ մի տեղից իր ուզածի պես պատասխան չըստացավ, այլ [արժանացավ] բազում հանդիմանական մեղադրանքների։ Մանավանդ որ գոռոզ ու կատաղի նախանձոտ զրպարտողներից ոմանք ասես ինչ-որ աստվածասաստ բարկությամբ զարկվելով կորան։ Այնպես որ նրանցից մեկի ապիրատ ու որդնալից շրթունքները թուլացան, և շատերը ու նաև ես անձամբ տեսանք, որ [նա] մեռավ։ Իսկ մեկի որովայնը, հալվելով-մաշվելով և հարկավոր պիտույքը գարշության հետ խառնվելով, վայր է թափվում։ Իսկ պիղծ մարդը, մեծ ջերմությամբ ու տապախառն հրով վառվելով և ուռուցքից տանջվելով՝ մեռնում է։ Մնացածները, տագնապով մեզա անելով, գնացին հայրապետի ոտքը՝ տարակուսելով ու դողալով իրավացի պատժից, և թողություն գտան։ Նույնպես և մեծ սպարապետը, սրտի սարսափով զարհուրելով և երկնչելով Աստծու արագահաս դատաստանից, բազմահառաչ պաղատանքով ու արտասուքով ընկնելով հայրապետի ոտքերը, թողություն էր հայցում իր մեղանչական մոլորության համար։ Այն նա ընդունեց աննախանձ սրտի սիրով ու հավատարիմ խնդրողի ուզածով և հավատի կատարելությամբ նրանց արժանի թողություն ու օրհնություն էր անում։

Եվ սրանց մասին ես գրեցի ու կնքեցի մեծ երկյուղով, որպես հիշատակ ապագայի համար, որպեսզի նայելով կորստական պատուհասի վերջին, թող ոչ մեկը չձգտի կրել այն նույն չարչարանքները, խայտառակությունը, ծեծը, ինչպես նրանք, ովքեր միանալով Հուդայի հետ՝ գնացին իրենց տեղերը։

Բայց Սմբատը, ստուգապես հաստատելով իր թագավորությունը, ըստ Պողոսի՝ ջանում էր ամենքի հետ խաղաղություն կապել սիրո դաշինքով։ Նախ ըստ հայրենի կարգերի ու դաշինքի՝ իրեն չէր զատում

սիրընթաց մտերմութենէ կայսերն Հոռոմոց Լևոնի՝ ընծայիւք բազմօք և նուիրական պատարագօք զնա մեծարեալ ըստ հեզահամբոյր հանդարտութեան իւրոյ։ Վասն որոյ և Կայսր ոչ եթէ փոքր ինչ ջան թէ մեծամեծս նմա ընձեռէր պարգևս և պատիւս գեղեցիկ զինուց և զարդուց և ոսկէհուռ հանդերձ զգեստուց, և ըմպակս և բաժակս, և կամարս ականակապս 'ի համակ ոսկւոյ. այլ և մեծ քան զայն այն էր, զի որդի սիրելի Կայսր զՍմբատ իւր անուանէր՝ սիրալիր դաշամբք ուխտից։ Իսկ իրրև զայս ամենայն լսէր Թագաւոր Սմբատայ՝ ոստիկանն Ափշին, և զհաստատուն անշուշտ սիրոյ միակամութիւն նորա ընդ Կայսեր՝ 'ի խոր խոցեալ և խանդացեալ ընդ իրսն, եթէ գուցէ դաւ ինչ նմա 'ի նոցանէ լինիցի՝ առ եղծանել հատանել փութայր զկապ միաբանութեան սիրոյ նոցա։ Վասն որոյ զօր բազում գումարեալ խորհէր շուել գալ հասանել 'ի Հայս։ Զոր վաղվաղակի արքային Սմբատայ զգացեալ զչարիմաց խարդաւանս Ափշնի՝ վաղվաղակի հորդան տայր զօրաց իւրոց նախարարակոյտ բազմութեամբ և քաջամարտիկ արանց պատերազմողաց և աջողակ զինաշարժից իրրև արանց երեսուն հազարաց, և գնայր ընդ առաջ նորա մինչև 'ի գաւառն Ռոտոկայ մերձ յԱտրպատական։ Եւ մինչ չև մերձեալ հասեալ էր 'ի զօրս Թշնամեացն՝ պատգամս 'ի ձեռն դեսպանի առ Ափշին առաքէր. «Ընդէ՞ր՝ ասէ, զչարեալ դիմեալ դաս յոչինչ պէտս. զի թէ սէր ընդ Կայսեր եդի՝ և այն ևս վասն ձեր օգտի, զի թերևս որ պիտոյ է ամիրապետին մեծի և զքո ևս դիւրեաւ զպէտս 'ի Յունականաց անտի գտանել մարթացից, և 'ի նպաստ օժտութեան ձեզ ընծայել զերևելի հանդերձից և զարդուց և զսպասուց վայելս. այլ և վաճառականաց, որք ընդ դենիդ քո՝ բացեալ ճանապարհ, զի արասցեն մուտ յաշխարհս նոցա և 'ի նոցա լիութենէն փարթամացուսցեն զձեր գանձարանսդ»։

Իսկ իրրև այսպիսի հեշտալիր բանից ոճ լուաւ Ափշինն և ետես, զի ընտիր ընտիր եկեալ սպառազէնս հասեալ առ դուրս մերձ կային՝ այնուհետև 'ի պատգամաւորութիւն սիրոյ զչարին բանս փոփոխէր։ Եւ ապա երկաքանչիւրք նոքա յերիվարս ահիպարանոցս աշտանակեալք և հանդիպեալք միմեանց, և բազում պատիւս և պարգևս Թագաւորականս իրերաց ընծայեալ՝ նա դառնայր գնայր յԱտրպատական։ Իսկ արքայ Սմբատ ընդ կրունկն դարձեալ՝ հասանէր 'ի մայրաքաղաքն Դվին։ Եւ վասն զի ըստ առաջնոյ կիտին եղելոյ ոչ ետես զնոսա հնազանդեալս 'ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ, ապա դուռն ևս քաղաքին փակեցաւ ընդդէմ նորա. նա պաշարեալ ուժգնապէս զնոսա և բազում աղխատրոյզ շփոթմունս

հռոմեական Լևոն կայսրի հետ ունեցած սիրընթաց մտերմությունից՝ բազում ընծաներով ու նվիրական պարգևներով նրան մեծարելով իր հեզահամբույր հանդարտությամբ։ Դրա համար նաև կայսրը նրան ընծայում էր ոչ թե փոքր, այլ մեծամեծ բաներ՝ գեղեցիկ զենքերի, զարդերի, ոսկեհյուս զգեստների պարգևներ ու պատիվներ, ըմպանակներ, բաժակներ, ամբողջովին ոսկյա ականակապ գոտիներ։ Բայց դրանցից ավելի մեծն այն էր, որ կայսրը Սմբատին անվանում էր իր սիրելի որդին՝ ուխտի սիրալիր դաշինքով։ Իսկ երբ այս ամենի և կայսրի հետ նրա հաստատուն ու ճշմարիտ սիրո միակամության մասին լսում է Սմբատի Թագաւոր՝ ոստիկան Ափշինը, խորապես վիրավորվում ու նախանձում է այն բաների համար, թե գուցե նրանք իրեն դավեն և աշխատում էր եղծել-հատել նրանց սիրո միաբանության կապը։ Այդ նպատակով մեծ զորք գումարելով՝ խորհում էր գալ-հասնել Հայաստան։ Սմբատ արքան, իսկույն զգալով Ափշինի չարամիտ խարդավանտան։ Սմբատ արքան, իսկույն զգալով Ափշինի չարամիտ խարդավանքը, անմիջապես ոտքի է հանում նախարարներից հավաքված մեծ զորքը՝ բազկացած կտրիճ, լավ կռվող ու զինավարժ մարդկանցից, մոտավորապես երեսուն հազար, և ինքը նրան ընդառաջ էր գնում մինչև Ռոտոկքի գավառը, որ գտնվում է Ատրպատականին մոտիկ։ Եվ մինչև Թշնամիների զորքին հասնելն ու մոտենալը սուրհանդակի միջոցով Ափշինին լուր է առաքում. «Ինչո՞ւ,— ասում է,— չարացած դիմելով գալիս ես չնչին բաների համար. չլինի՞ թե ես բարեկամություն հաստատեցի կայսեր հետ, բայց այն նաև ձեր օգտի համար է, որպեսզի թերևս ինչ որ պետք է մեծ ամիրապետին, հեշտությամբ կարողանամ ձեռք բերել նաև հույներից և իրրև օգնություն ընծայել երևելի հագուստներ, զարդեր ու վայելուչ սպասքներ, այլև՝ [նպաստներ] վաճառականների, որոնք քո իսկ կրոնով ճանապարհ կբացեն դեպի նրանց աշխարհը և լիությամբ կհարստացնեն ձեր գանձարանները»։

Իսկ երբ Ափշինը խոսքի այսպիսի հաճելի ոճով լսեց ու տեսավ, որ ընտրյալ մարդիկ սպառազինված եկել հասել են դռների մոտ, այնուհետև նա իր չար խոսքերը փոխարինում է սիրո պատգամավորությամբ։ Եվ ապա նրանք երկուսն էլ հեծնում են բարձրավիզ երիվարներ, հանդիպելով ու թագավորական բազմաթիվ պարգևներ ու պատիվ ընծայելով միմյանց, նա [Ափշինը] վերադառնում գնում է Ատրպատական։ Իսկ Սմբատ արքան ետ է դառնում գնում է Դվին մայրաքաղաքը։ Եվ քանի որ դրած առաջին պայմանի համաձայն նրանց չտեսավ իրեն հնազանդված ու իր ծառայության տակ ընկած և արքունի հարկերի ու մաքսերի չափը նվազեցրած, ապա նորից քաղաքի դուռը փակվեց նրա առաջ։ [Այդ պատճառով] ուժգնորեն պաշարելով նրանց՝ նա այնտեղ

և աւարառութիւնս և տնկակոտորութիւնս և հրացանութիւնս զնոքօք զեղեալ՝ ստէպ ստէպ զերկեամ մի զայս առնէր. յորմէ ապա նեղեալ տագնապեալ տարակուսեալ և զմիմեամբք ելեալ։ Այնուհետև հանդիսադիրք մարտիցն և գլխաւոր ոստիկանք և հրամանատարք քաղաքին՝ եղբարք երկու, որոց անուանք Մահմէտ և Ումայի՝ արտաքս ելեալ գիշերի փախստեայք լինէին. զոր և զգացեալ և զհետ կրթեալ զօրացն և ձերբակալ արարեալ՝ ածեն արքային։ Եւ նորա տոռամբք կապանաց և վարոցօք զնոսա տանջեալ և առեալ 'ի նոցանէ բազում զանձս ոսկոյ և արծաթոյ՝ առ կայսր Լևոն երկաթի շղթայիւքն զնոսա առաքէ։ Անշուշտ նուաճեալ այնուհետև զքաղաքացիսն ընդ լծով ծառայութեան իւրոյ, և ինքն ձեռնթափ լեալ՝ 'ի գիւտս աշխարհաց զամենեսեան յանձանձէ ածէ համագունդ և ընդ իւրեաւ նուաճէ, զոմանս հեշտականաւ բանիւ և զոմանս արդեամբք յինքն յանկուցեալ։ Ըստ որում և մեծ կուրապաղատն Վրաց և համախոհք իւր՝գեղեցիկ կարգաց ուղղութեամբ հաւանեալք և հնազանդեալք լինէին։ Իսկ զոմանս ձեռներէց զօրութեամբ հարստահարեալ զընդվզեալսն և յոտին կացուցեալ։ Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր զշաւիղ տէրութեան իւրոյ յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ քերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եգերացւոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԳուգարացիս և զՇանարս մինչև ցԴուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամրոց դրան պահակի նոցա. և անտի 'ի հարաւակողմն կոյս զԿուր գետով մինչև 'ի քաղաքն Տփխիս. և զՈւտի գաւառ մինչև 'ի քաղաքն Հունարակերտ և մինչև 'ի Տուս և 'ի Շամքոր։ Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ, որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մա՛քսից կացուցեալ՝ զզէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր։

Զայսու ժամանակաւ ահագին իմն յեղակարծումն ժամու սաստիկ շարժմանց եղելոց 'ի գիշերի 'ի Դվին քաղաքի՝ բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն զբնակչօք քաղաքին զեղեալ, հիմն 'ի վեր տապալէր։ Վասն զի առհասարակ 'ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն և զտունս ռամկաց՝ իբրև զերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանէր. այլ և զաստուածաշէն եկեղեցիս կաթողիկոսարանին և զայլ ևս հաստահեղոյս վկայարանս՝ դղրդեալ քանդեալ աւերեալ 'ի վայր հոսէր. որ գրեթէ իբրև զփապարս վիմուտս դերբկաց սարսափելի տեսողացն երևէր։ Այլ և հեղ-

առաջ բերեց խառնակութիւն, իրարանցում, [զբաղվեց] ավարառութեամբ, ծառահատումով և հրթափումով։ Եվ մի երկու տարի ստեպ-ստեպ այս բանն էր անում։ Դրանից նեղվելով, տագնապելով ու տարակուսելով՝ նրանք ձգտում էին հաղթել մեկը մյուսին։ Այնուհետև պատերազմ հրահրողները, քաղաքի գլխավոր ոստիկաններն ու հրամանատարները՝ Մահմեդ և Ումայի անունով եղբայրները, գիշերով դուրս գալով [քաղաքից]՝ փախչում են։ Այդ մասին իմանալով ու հետապնդելով՝ զորքը նրանց ձերբակալում ու բերում է արքայի մոտ։ Եվ նրանց պարանով կապելով, գավազանով տանջելով և նրանցից վերցնելով ոսկու ու արծաթի շատ գանձեր՝ նա [արքան] նրանց երկաթյա շղթաներով ուղարկում է Լևոն կայսեր մոտ։ Այնուհետև քաղաքացիներին իսկապես նվաճելով, իրեն ենթարկելով ու ձեռք բերելով՝ բոլորին գցում է իր ազդեցության տակ։ Նա հոգ է տանում նրանց մասին և ոմանց հաճելի խոսքերով, ոմանց ունեցվածք տալով՝ գրավում է իր կողմը։ Ըստ որում Վրաց մեծ կուրապաղատն ու նրա համախոհները, հավանելով նրա գեղեցիկ կարգերին ու ուղղությանը, հնազանդվում էին նրան։ Ըմբոստացողներին էլ համարձակ զորությամբ ու բռնիորեն նեղելով՝ իրեն է հնազանդեցնում։ Եվ այսպես ձգտելով ընդլայնում էր իր տերության ճանապարհները հյուսիս-արևմուտքից մինչև Կարին քաղաքը, իսկ այնտեղից էլ Կղարջքով այն կողմ անցնելով ու հասնելով մինչև մեծ ծովի[61] ափը, եգերացիների սահմանները, Կովկասյան մեծ լեռան ստորոտները՝ գրավելով գուգարացիներին ու Շանարքը, [հասնելով] մինչև Ալանաց դուռը[62] և գրավելով նաև նրանց երկաթյա դռնով ամրոցը։ Իսկ այնտեղից էլ [հասնելով] մինչև հարավային կողմը, [այն է]՝ Կուր գետով մինչև Տփխիս քաղաքը, ինչպես նաև Ուտի գավառը մինչև Հունարակերտ քաղաքը և Տուս ու Շամքոր։ Եվ այդպես ընդարձակելով իր տերության սահմանները և դնելով արքունի հարկերի, տուրքերի ու մաքսերի լծի տակ՝ իր քաջամարտության զենքը տնկում է որպես հաղթության նշան։

Այդ ժամանակ՝ գիշերը, հանկարծ սաստիկ երկրաշարժ է լինում Դվին քաղաքում՝ դրա բնակիչներին խուճապի մատնելով, սարսափեցնելով և դղրդյուն, կործանում առաջ բերելով՝ [այն] հիմնիվեր տապալում։ Եվ ամբողջովին փուլ ածելով պարիսպների պատերը, երևելի մարդկանց ապարանքները, ռամիկների տները՝ դրանք մի ակնթարթում ավերակի է վերածում։ Դղրդալով քանդվում, ավերվում ու վայր են թափվում նաև կաթողիկոսարանի աստվածաշեն եկեղեցին և այլ հաստահեղույս վկայարաններ. դա տեսնողներին երևում էր իբրև քարքարոտ, խորդուբորդ ու սարսափելի ավերակ։ Մարդկանց մեծ բազմու-

ձամղձուկ յարկածածուկ հողաթաւալ հողահեղձոյց սատակումն դիակոյտ բազմութեանն, որ կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ՝ յարդարէր զնա 'ի բազում ողբ և յարտօսրաթոր կականմունս։ Թողում ասել զազգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կականումն և ողբումն և աշխարումն գուժից ճչոյ և կանչոյ և կառանչոյ, և աղիողորմ ձայնք երգեցիկ կուսանաց և սեազգեաց կանանց, և արանց վշտահար հեծութեամբ սգացելոց՝ մինչև յերկինս բարձրացեալ հասանէր։ Իսկ զբազմութիւնսն դիականցն ոչ բաւեալ տալ գերեզմանաց՝ զբազումս 'ի վիհս և 'ի խորափիտս և 'ի դարափլակս ընկեցեալ ծածկէին։ Եւ այսպէս ահ բարկութեանն ահափետ զամենեսեան առնէր՝ պաշարմամբ զգածեալ զմնացեալսն։

Զայսպիսի լուեալ զաստուածասաստ բարկութիւնն սրբոյ առն Աստուծոյ Մաշտոցի, որ բնակեալն էր 'ի Սևան կղզւոջ բազմահանդէս ճգնութեամբ՝ գրեալ թուղթ առ գանեալսն մնացական օրինակ զայս.

«Զհամաշխարհականդ խորտակումն, զոր բուռն զօրութեամբ մանրեալ ճմլեաց աստուածային հնձանահար 'ի բարկութեան մեղաց մերոց բազմացելոյ՝ գիտացի, հաւատացեալ և սիրուն տեա՛ր իմ և սիրելի եղբարք, զյանկարծակի հասեալդ 'ի վերայ զհնձանահարութիւն դառն արտասուաց և զօրհաս անտանելի տուգանաց մահու, որ դարձոյց յողբ զխնդութիւն ձեր։ Վասն զի հուր եկեր միանգամայն և փշրեաց զմայրս մարդկեղէն անտառաց. և ահա լայնութիւն ծովու և բարձրութիւնք լեռանց ոչ բաւեցին արգելուլ զարագաթև հրամանն։ Աւա՛ղ դառն լուսոյ աւուրն կործանման, որ մինչդեռ 'ի սեղանս վայելչութեան իւրեանց կերակուրք 'ի բերանս էին՝ բերանսեցան 'ի բարկ բախման անչափ աղէտիցն։ Վասն զի լքին ծնողք զծնունդս իւրեանց և տղայք աղէտիւք հրաժարեցան 'ի ծնողաց։ Գերեզմանք նոցա տունք նոցա եղեն, և 'ի յարկս իւրեանց իբրև 'ի դամբանի թաղեցան։ Աւա՛ղ 'ի վերայ չարչարեցելոցդ և հնձեցելոցդ առհասարակ հարցդ և եղբարցդ. զի թակարդափակեաց Տէր զբազմութիւն ազգաց ժողովրդեան իւրոյ աներևոյթ սուսերաւ՝ 'ի միում վայրկենի ժամու վանեալ և իբրև զջուր հեղեալ ցամաքեցոյց, կամ իբրև զծուխ սպառեաց և աչախիլ խաւարաւ զամենեսեան զմեզ ծածկեաց։ Երանի՛ աչաց, որք ոչ տեսին զնոր և զանլուր դատապարտութիւնն, զոր ընկալաք և հատուցաւ մեզ. զի որ երբեմն 'ի միասին սիրալիր խնդութեամբ խրախամտեալք բերկրէիք՝ ծնողք և եղբարքք և զարմիւք և զաւակք հնչեցուցեալ Տեառն զբարբառս օրհնութեան,

թյուններ, մնալով հարկերի տակ, շնչասպառ են լինում, հողի մեջ թավալվելով և հողի տակ խեղդվելով։ Եվ դա դիակույտ բազմության այն կոտորածն էր, որ ավելի կարծր, քարեղեն ու անկարեկից դարձնելով միտքը՝ նրան համակում էր մեծ ողբով ու արտասվաթոր լացուկոծով։ Չեմ ուզում ասել մարդկանց ազգակից, կարեկից, լծակից հարազատների մասին, որոնց կականը, ողբը, գուժից ճչալը, կանչելը, գոռալը, վայնասունը և երգող կույսերի, սեազգեաստ կանանց, վշտահար հեծությամբ սգացող տղամարդկանց ձայները բարձրանում ու մինչև երկինք էին հասնում։ Իսկ դիակներն այնքան շատ էին, որ գերեզմանոցները չէին բավարարում և շատերին գցում էին վիհերը, խորխորատները, փոսերը ու ծածկում։ Եվ այսպես սաստիկ վախը ահաբեկում էր բոլորին՝ ահով պաշարելով ողջ մնացածներին։

Այսպիսի աստվածասաստ բարկությունը լսելով՝ Աստծու սուրբ մարդ Մաշտոցը, որ բազմաշարշար ճգնությամբ բնակվել էր Սևան կղզում, մնացած գանահարվածներին գրում է հետևյալ թուղթը.

«Իմ հավատացյալ ու հաճելի տյարք, սիրելի եղբայրներ, ես իմացա ազգային այդ խորտակումը, որ աստվածային բարկությունը [մեզ] բուռն զորությամբ հնձանում տրորվող խաղողի նման մանրեց ու ճմլեց մեր շատացած մեղքերի պատճառով, և հանկարծակի վրա հասան դառն արտասուքի հնձանահարությունն ու մահվան գույժի անտանելի օրհասը, որ ձեր ուրախությունը վերածեց ողբի։ Քանի որ միանգամից հրդեհեց ու փշրեց մարդկային անտառների ծառերը։ Եվ ահա ծովի լայնությունն ու լեռների բարձրությունը չբավարարեցին արգելելու այդ արագաթև հրամանը։ Ավա՛ղ կործանման օրվա դաժան լույսին, երբ [մարդիկ] քանի դեռ իրենց վայելուչ սեղանների մոտ կերակուրները բերանում էին, պապանձվեցին այդ մեծ աղետի սաստիկ բախումից։ Քանի որ ծնողները լքեցին իրենց երեխաներին, իսկ երեխաները աղետի պատճառով հրաժարվեցին իրենց ծնողներից։ Գերեզմանները նրանց համար տուն եղան, և նրանք թաղվեցին իրենց տներում, իբրև դերեզմանոցում։ Ավա՛ղ չարչարվածներիդ ու կոտորվածներիդ, առհասարակ հայրերիդ ու եղբայրներիդ, որովհետև Տերը իր աներևույթ սրով թակարդափակեց ժողովուրդների ու ազգերի բազմությունը՝ մի վայրկյանում վանելով ու իբրև ջուր թափելով ցամաքեցրեց կամ իբրև ծուխ սպառեց և մեզ բոլորիս ծածկեց աչքահան խավարով։ Երանի՛ այն աչքերին, որոնք չտեսան այն նոր ու անլուր դատապարտությունը, որ վիճակվեց մեզ, և մենք ընդունեցինք։ Որովհետև եթե երբեմն սիրալիր խնդությամբ զվարճանում ու հրճվում էինք՝ ծնողների, եղբայրների, ժառանգների ու զավակների հետ հնչեցնելով Տիրոջ օրհնության

այժմ անտանելի տարակուսանօք յանկարծահաս խաւարազգած մթութեամբք տոչորեալ՝ և ստուեր անգամ ոչ թողաւ մխիթարութեան և ոչ յոյս ինչ ելից զձեզ փոխանորդութեան և լուծման ըստ կենացս, բայց միայն Աստուծոյ ևթ մարդասիրութիւնն՝ ըստ որում և դիտէք իսկ։ Զի ոչինչ կայ հոգ Աստուծոյ՝ քան թէ միայն զմարդկան ուղղութիւն և փրկութիւն. վասն զի մեք մոռանամք զԱստուած, և զմեզ ինքն։ Այսպէս ապա ընդոստուցեալ զարթուցանէ ըստ իւրում ողորմութեանն և մարդասիրութեանն. քանզի այսպէս հաւանիմ զտանջելն Աստուծոյ, զոր ասեն Գիրք, որով խրատէ զչարացեալ անզգամութիւնս մեր։

«Դարձեալ՝ մի՛ զարմանայք վասն անքննելի նորայն դատաստանաց, թէ զի՞րդ կորուսանիցէ զարդարն ընդ ամբարշտին։ Նախ և առաջին՝ զի ոչ ոք է արդար և ոչ մի, վասն զի ամենեքեան խոտորեցաք 'ի միասին և անպիտանացաք. ապա չէ ինչ կարի շար, եթէ մահն՝ որում պարտապան եմք, այն մեզ վրիժաբար հասանիցէ։ Յետ այնորիկ ապա որպէս զարեն և զանձրեն և զամենայն բարութիւնս 'ի միասին վայելեն արդարք և մեղաւորք, այսպէս և զբաժակ պատուհասին 'ի միասին ըմպեն. իսկ իւրաքանչիւրոց պատիւն և պատուհասն առ հանդերձեալ օրն պահի։ Արդ՝ վասն զի այսպէս մինչև ցմեզ հաստատեալ են իրաւունք Արարչին՝ անաչառ վարելով առ ամենեսեան, ընկալարուք զակամայսդ որպէս կամաւոր. որով յայտնի լիցի իմաստութեան և գիտութեան և հաւատոց ձերոց հանդէս։ Եւ զպարտական գոհաբանութիւնդ ձեր մատուսջիք նմա, որ մխիթարիչն է վհատութեան սրտից. որով և բնակեալ իսկ էք նորա ընտանութեամբ ըստ քրիստոսական հաւատոցն և ուղիղ վարուց և առաքինասէր և ուղղափառ կարգաւ յերիկղ Տեառն հաստատեալք։ Եւ նա տացէ ձեզ հոգի մխիթարութեան և յոյս բարեաց 'ի սիրտ սուրբ. և բնական սփոփանօք լցուսցէ զձեզ զմնացեալսդ ամենայն՝ զհօտ և զհովիւ, մոռացումն առնելով ծանր և մեծ վշտացդ։ Եւ ըստ շարշարանաց ելից նոցա 'ի հովտէս տրտմութեան՝ հաւասար շարշարելոց վկայիցն Քրիստոսի հաշտեսցի, հանգուցեալ զհոգիս նոցա 'ի յարկսն լուսոյ, եղծանելով զգիր պարտեաց նոցա զբանից և զգործոց և զմտածութեանց, և դասաւորելով 'ի խոստացեալ բարիսն, որ պահի սիրողաց իւրոց որ յաւիտենից։»

Զայս բան բարեզգեաց ընթերցեալ առաջի բազմաց և լուեալ յունկանէ մնացելոց ժողովրդոցն յահէ սաստից Տեառն՝ ոչ սակաւ մխիթարութիւն յանձինս իւրեանց դնէին, այլ և արժանի այնմիկ շար ամպրոպի զինքեանս վարկեալս արժանիս ընդ անօրէնս խառն 'ի նոսայն

ձայնը, այժմ տոչորվում ենք անտանելի տարակուսանքով և հանկարծահաս ու խավարազգեստ մթությամբ։ Անգամ չթողնվեց մխիթարության ստվեր, և ոչ էլ այդ վիճակից դուրս գալու կամ մահվան հույս, բացի Աստծու մարդասիրությունից, ինչպես որ հենց դուք գիտեք։ Որովհետև Աստված այլ հոգս չունի, քան մարդկանց ուղղություն ու փրկություն [տալը], դրա համար մենք մոռանում ենք Աստծուն և մեզ։ Ահա այսպես դրդելով արթնացնում է իր ողորմությամբ ու մարդասիրությամբ, քանի որ այսպես եմ հավանում Աստծու տանջելը, որի մասին ասում է [Սուրբ] Գիրքը, որով խրատում է մեզ՝ չարացած անզգամներիս։

Դարձյալ մի՛ զարմանաք նրա անքննելի դատաստանից, թե արդարին ինչո՞ւ է կորցնում անօրենի հետ։ Նախ և առաջ, որովհետև ոչ ոք և ոչ մեկը արդար չէ, և բոլորս էլ միասին մոլորվեցինք ու ոչ պիտանի դարձանք։ Ուրեմն չկա շատ ավելի շար բան, քան մահը, որին մեղապարտ ենք մենք, և այն վրիժաբար կհասնի մեզ։ Դրանից հետո բոլորը՝ և՛ արդարները, և՛ մեղավորները միասին ինչպես վայելում են արևը, անձրևն ու բոլոր բարիքները, այդպես էլ միասին խմում են պատուհասի բաժակը, իսկ յուրաքանչյուրի պատիվն ու պատուհասն էլ գալիք օրվա համար են պահվում։ Այսպիսով, քանի որ այսպես մինչև մեզ հաստատված է արարչի իրավունքը՝ այն անաչառորեն գործածելով բոլորի նկատմամբ, չկամեցածը որպես կամեցած ընդունեցեք, որով դատաստանը հայտնի կլինի իմաստությանը, գիտությանը և ձեր հավատքին։ Եվ ձեր պարտական գոհաբանությունը մատուցեք նրան, որ վհատ սրտի մխիթարիչն է, որով և բնակվել եք նրա մերձավորությամբ և ըստ քրիստոնեական հավատի, ուղիղ վարքով, առաքինասեր ու ուղղափառ կարգով հաստատվել աստվածավախությամբ։ Եվ՝ նա սուրբ սրտով ձեզ կտա մխիթարության հոգի ու բարեհուսություն և ձեզ՝ մնացած բոլորիդ կհագեցնի բնական սփոփանքով՝ հոտ ու հովիվով՝ մոռացնել տալով ձեր ծանր ու մեծ վշտերը։ Տրտմության հովտից դուրս գալու շարշարանքների համեմատ նրանց կհավասարեցնի Քրիստոսի շարշարված վկաներին՝ նրանց հոգիները տեղավորելով լույսի տներում, եղծանելով նրանց խոսքի, գործի ու մտածմունքի պարտագրերը, դասավորելով խոստացած բարիքների մեջ, որ հավիտյան պահվում են իր սիրելիների համար»։

Այս բարեզարդ պատգամը ընթերցելով բազմության առաջ, և մընացած ժողովուրդը լսելով՝ Տիրոջ ահից ու սաստից պակաս չէր մխիթարվում և իրեն արժան էր համարում այն շար ամպրոպին՝ խառնվելով նրանց անօրեն մեղքերին ու միմյանց ասելով. «Հիրավի քրիստոն-

մեղաց՝ առ միմեանս ասելով. «Յիրաւի թէ և քրիստոնեայք ևս 'ի ծուխ բարկութեան հեթանոսաց թմբեալ պատժապարտ գտան. վասն զի ոչ ելեալք 'ի Սեգովրայ խառնակեցաք ընդ Հագարացիսն և ուսաք զգործս նոցա, որ գտաւ իսկ 'ի գայթակղութիւն մեզ։»

Այլ արդ՝ այս սակս եղկելի տարակուսական աղետիցս քեզ բաւականացեալ, զի մի՛ առաւելն քան զայս պատերազմող լսելեաց անցցէ. այլ մեք զառաջակայսն տեսցուք։

Իսկ դաւաճանող Ափշինն այն ոստիկան, զորմէ կանխեալ ասացաք՝ իբրև ետես զպատշաճաբար յաջողուածս արքային Սմբատայ, որ և զբարձրաձեռն տիրելն հիւսիսականաց ազգացն, և ողոքել հրահանգել 'ի հնազանդութիւն իւր զգազանաբարոյ զգրոհսն, եդ 'ի մտի իւրում ոչ կալ նմա յայնմհետէ ընդ իւր 'ի միակամութիւն սիրոյ և հնազանդութեան սակի խոստմանն. այլ և ակնածեալ ևս թէ գուցէ ոչ լնուցու զսակ հարկացն, որ 'ի վերայ կայր։ Եւ վասն այնորիկ աճապարէ հատանել խզել զվնասուցն պատճառաց կապուածս, որ զՍմբատայ էին նմա կարծիք. և ապա վարանեալ 'ի գաղտնիս և առ ինքն զբազմութիւն զօրացն գումարեալ, իբր թէ յայլ իմն կողմունս նմա բան գնալոյ հասեալ կայ. և իբրև զշռինդն իմն յորդեալ ելեալ հարեալ զօրէն հեղեղաց՝ յողողել գերփել կործանել զեղեալ հիմունս լաւութեան, ոչ գիտելով զայն արքային Սմբատայ՝ մինչ գայր հասանէր ոստիկանն 'ի Նախջաւան։ Որ թէպէտ լուեալ զբօթն և հապճեպ ստիպով ջանայր առ ինքն զզօրս իւր գումարել. սակայն ոչ ժամանէր աճապարել ընդ առաջ նորա որպէս միւսանգամն, մինչ եկն եհաս 'ի Դվին քաղաք։ Իսկ արքային զթիկունս յամուր վայրս տուեալ և հրովարտակս ընդ ամենայն կողմանս սփռեալ՝ վաղվաղակի գային կուտէին տարմաբար համագունդ նախարարք Հայոց մեծաւ զօրու հանդերձ։ Այլ և 'ի հիւսիսականաց անտի ոչ դուն ինչ եկեալք 'ի կոչօնս արքայի՝ աղեղնաւորք կորովեաց և տիգաւորք նիզակաց, վառեալք 'ի զէնս և 'ի զարդս։ Եւ ապա դէտակն 'ի վեր ամբարձեալ՝ ժողովէին 'ի գիւղն Վժան, որ 'ի ստորոտս Արագած լերինն։ Իսկ մեծ կաթողիկոսն Գէորգ գնայր ընդառաջ ոստիկանին, զի թերևս ջանահնարն լինել նորա առ Ափշինն՝ զսիրտ քարեղէն նորա կակղել բաւեսցէ, և խնամարկել բանաւոր հօտի Տեառն։ Զոր բարեբարոյ տեսութեամբ զնա նախ ընկալեալ և ըստ արքանեկութեան նեռինն յինքն զմիտս նորա յանգուցեալ՝ յղէ զնոյն ինքն պատգամ առ արքայ Սմբատ դաւաճանութեամբ դաւոյ առ ինքն կոչեալ գալ զթագաւորն, ոչ գիտելով արդարամիտ և պարզ սրտիւ այրն Աստուծոյ կայսները, ևս թմբելով հեթանոսների սաստիկ ծխի մեջ, պատժապարտ գտնվեցին։ Քանի որ դուրս չգալով Սեգովրայից՝ խառնակվեցինք հագարացիների հետ և սովորեցինք նրանց գործը, որ մեզ համար եղավ որպես գայթակղություն»։

Ուստի թող քեզ բավականացնի այս եղկելի, տարակուսական աղետի դրած պայմանը, որպեսզի սրանից առավել պատերազմողներին չանցնի, որ մենք առաջիկայում կտեսնենք։

Իսկ դավաճան այն Ափշին ոստիկանը, որի մասին նախապես ասացինք, երբ տեսավ Սմբատ արքայի մեծ հաջողությունները՝ նրա ձեռք բարձրացնելը, հաղթելն ու տիրելը հյուսիսային ժողովուրդներին և իր գազանաբարո ժողովրդին համոզելն ու հնազանդեցնելը, իր մտքում դրեց դրանից հետո չմնալ նրա հետ կնքած սիրո, հնազանդության դաշինքի ու միաբանության մեջ։ Նա նաև կասկածում էր, թե գուցե չկատարի հարկերի պայմանը, որ դրված էր վրան։ Դրա համար էլ աճապարում էր հատել-խզել վնասների պատճառների կապերը, որ, նրա կարծիքով, Սմբատն էր։ Եվ ապա վարանելով գաղտնիքի մեջ՝ իր մոտ էր հավաքում մեծ զորք՝ իբր թե ինչ-որ կողմերում իբրև գործի գնալու և հասնելու կարիք կա։ Ինչպես շռինդ հորդելով, դուրս ելնելով ու կոտորելով՝ հեղեղի նման [սկսում է] ողողել, գերփել, կործանել լավության դրած հիմքերը։ Եվ Սմբատ արքան չգիտեր այդ մասին, երբ ոստիկանը գալիս հասնում է մինչև Նախջավան։ Սմբատը թեև լսում է բոթը ու աշխատում հապճեպ իր մոտ հավաքել զորքը, սակայն չէր հասցնում մյուս անգամվա պես շտապ դուրս գալ նրա առաջ, մինչև որ Ափշինը եկավ հասավ Դվին քաղաքը։ Իսկ արքան ապավինում էր ապահով վայրերին ու բոլոր կողմերը հրովարտակներ էր տարածում, և Հայոց նախարարները մեծ զորքով անմիջապես խմբով գալիս ու կուտակվում են։ Բայց արքայի կանչով հյուսիսային կողմից բոլորովին չեկան կորովի աղեղնավորներ, տեգավորներ, նիզակավորներ՝ սպառազինված զենքերով ու զարդերով։ Եվ ապա դեպքերին հետևելով՝ հավաքվում էին Վժան գյուղում, որ գտնվում է Արագած լեռան ստորոտում։ Իսկ Գեորգ մեծ կաթողիկոսը ընդառաջ է գնում ոստիկանին, որպեսզի թերևս կարողանա հնար գտնել Ափշինի դեմ, կարողանա փափկեցնել նրա քարեղեն սիրտը և խնամել Տիրոջ բանավոր հոտը։ Նրան նախ բարեսիրտ տեսակցությամբ ընդունելով և ըստ նեռի պաշտամունքի նրա միտքը իր կողմը դարձնելով՝ հենց նրան [կաթողիկոսին] պատգամավոր է ուղարկում Սմբատ արքայի մոտ՝ դավաճանությամբ ու դավադրությամբ թագավորին կանչելով իր մոտ։ Աստծու այր կաթողիկոսը արդարամիտ ու պարզ սրտով չհասկացավ, որ դրանով ջանում

թողիկոսն, թէ յորոգայթ իւր զարքայն ջանայ խոնարհեցուցանել և յափըշտակութեամբ առ ինքն ձգել։ Իսկ իբրև մեծիմաստ խոհականն շառնոյր յանձն զերթալն ըստ սաղրելոյ նախարարացն՝ դառնայր գնայր կաթողիկոսն առ ոստիկանն։ Եւ թէպէտ բազում անգամ ամենեցուն աղաչեալ զնա չկրկնել զերթալն առ չարաբարոյ հեթանոսն, սակայն չարգելաւ նա՝ իբր ոչ ստել զեղեալ ուխտն ընդ նմա։ Իսկ ոստիկանն իմացեալ զոչ դաւաճանելն Սմբատայ ըստ պատգամաւորութեան կաթողիկոսին՝ հրամայէ ունել զնել զնա ի շղթայս և ի ձեռնակապս երկաթիս, և ինքն խաղայ գնայ ի վերայ արքային Սմբատայ՝ մօտ առ նա կալեալ իբրև բանակեալ ի գիւղն Դողս։ Ապա յետ երից աւուրց գունդ կազմեալ գումարտակ եղեալ՝ ի կռիւ ընդ արքային կաքաւէր։ Անդ ապա ի քաջ արանց սուսերամերկաց և ի լայնալիճ աղեղնաւորաց նեստից՝ ահագին ահափետ օրհասք մահու հասուցանէին Իսմայէլեան գնդին, և այր զախոյեանն իւր հարուածեալ յերկիր կործանէր՝ տապաստ դաշտիցն արկեալ. և զմնացեալսն ցանեալ ցրուեալ և փախըստեայ զբանակաւն այլազգեաց արկեալ՝ հաղիւ պահնակել պաշտպանել կարէին միայն զտեղի կացոցի կարաւանին իւրեանց։

Այնուհետև ապա ոստիկանն շար ի ծովածուփ ալիք կուտակելոցն և փրփրացեալ լեռնացելոց՝ շիջեալ հատանէր. և փոխանակ գազանական սաստիցն յաղերս մատուցեալ՝ հայցէր տալ ցնա զսակն արքունի և դնել ուխտ երդման սակս ոչ զատանելոյ ի նորայն միաբանութենէ։ Իսկ արքայն տնօրինեալ զաշխարհի զխաղաղութիւն՝ անյապաղ զխնդիրսն կատարէր և երևելի պատուական օժտութիւնս ընծայից նմա մատուցանէր՝ ոչ սակաւս ինչ և առ ի նմանէ գտանէր ըստ թագաւորաց հրահանգաց պատիւ պերճութեան։ Եւ ապա յուզարկեալ գնայր ոստիկանն՝ ընդ իւր տանելով զմեծ կաթողիկոսն նովին շղթայիւք. և անդ ի մէջ թշնամեացն՝ մարմնոյ նեղութեամբ բառնայր զբեռն ծանրատաղտուկ տառապանաց. ոչ որոշեալ նմա սպասաւոր ձեռնասուն զոք, որ պատրաստէր նմա մահիճ, կամ ջուր ի ձեռս արկանել, կամ անձեռոցս մատուցանել, կամ սկուտեղ առաջի դնել, կամ ջուր ըմպելոյ առ ի ղծաբաւ բժշկել։ Եւ այսպէս ընդ սրբոց կապելոց շարշարեալ և արտասուօք միշտ թացեալ զանկողինս իւր՝ ի մշտնջենամռունչ սաղմոսս համակէր և անձանձրոյթ յաղօթս նահատակէր, միայն զի ոչ վրիպեսցի ի նաւահանգիստն կենաց հասանել։ Իսկ իբրև ամիսք երկու կատարէր ի բանտի անդ՝ ապա ոստիկանն Հագարացի գանձս ոսկւոյ և արծաթոյ պահանջէր ի մեծ կաթողիկոսէն՝ անշուշտ նամակ երդման կնքեալ, որ զի թէ տայցէ՝ արձակեսցի ի կապարանէն և առաքեսցի պատուով յա-

է իր արքային թակարդը գցել և հրապուրելով նրան իր մոտ տանել։ Իսկ երբ խորագետ ու խոհեմ մարդը [Սմբատը] չի համաձայնվում նախարարների սադրանքով գնալ նրա մոտ, կաթողիկոսը վերադառնում գնում է ոստիկանի մոտ։ Թեպետև շատերը շատ անգամ աղաչում էին նրան չգնալ չարաբարո հեթանոսի մոտ, սակայն նա ետ չկանգնեց՝ որպես թե չդրժելու նրա [ոստիկանի] հետ կնքած դաշինքը։ Իսկ ոստիկանը, իմանալով, որ կաթողիկոսի պատգամավորությամբ Սմբատը չի դավաճանել, [այսինքն՝ չի եկել], հրամայում է բռնել կաթողիկոսին, շղթայել ու երկաթյա ձեռնակապեր դնել, իսկ ինքը շարժվում գնում է Սմբատ արքայի վրա, և նրա բանակը մոտենալով տեղավորվում է Դողք գյուղի մոտ։ Երեք օրից հետո նա կազմում է գունդ ու գումարտակ և կռվի է ելնում արքայի դեմ։ Այնտեղ քաջ սուսերաձիգներն ու լայնալիճ աղեղնավորները շատ մեծ վախ ու կոտորած են հասցնում իսմայելյան գնդին, և այրը հարվածելով թշնամուն՝ նրան գետին է գցում ու փռում դաշտի վրա։ Իսկ մնացածներին փախցնելով ու ցրելով՝ գցում են օտարների բանակի շուրջը, և նրանք հազիվ էին կարողանում պահել ու պաշտպանել իրենց տեղերն ու կացարանները։

Այնուհետև շար ոստիկանը, ալեկոծված ծովի [նման] կուտակվելով, փրփրելով ու լեռնանալով, հանգչում ու սպառվում էր։ Եվ փոխանակ գազանաբար սաստելու, նա աղերսում ու խնդրում էր իրեն տալ արքունի տուրքը և երդման դաշինք կնքել՝ նրա միաբանությունից չբաժանվելու համար։ Իսկ արքան, տնօրինելով աշխարհի խաղաղությունը, անհապաղ կատարում է նրա խնդրանքը և նրան մատուցում երևելի ու պատվական ընծաներ ու պարգևներ՝ նրա կողմից արժանանալով թագավորներին վայել ոչ պակաս փառավոր պատվի։ Ոստիկանն այնուհետև ուղևորվում գնում է՝ իր հետ տանելով մեծ կաթողիկոսին նույն շղթաներով։ Եվ այնտեղ, թշնամիների մեջ կաթողիկոսը մարմնական նեղությամբ տանում էր ծանր ու անտանելի տառապանքի բեռը։ Նրա համար չեն կարգում որևէ ձեռնասուն սպասավոր, որ անկողին պատրաստեր, կա՛մ ձեռքերին ջուր լցներ, կա՛մ սրբիչ մատուցեր, կա՛մ սկուտեղ դներ նրա առաջ, կա՛մ խմելու ջուր տար՝ ծարավը հագեցնելու համար։ Եվ այդպես կապված սրբերի հետ շարշարվելով ու արտասուքով միշտ թրջելով անկողինը՝ նա համակված էր մշտահառաչ սաղմոսներով և տառապում էր անձանձրույթ աղոթքներով, միայն թե չմոլորվի ու այդպես հասնի կյանքի նավահանգիստը։ Իսկ երբ լրանում է բանտում նրա մնալու երկու ամիսը, հագարացի ոստիկանը մեծ կաթողիկոսից պահանջում է ոսկու ու արծաթի գանձեր, իհարկե, կնքված երդմնագրով, որովհետև եթե տա, կապանքներից կարձակվի ու պատ-

թոռ իւր։ Իսկ սորա զգացուցեալ մեզ զհոգւով չափ զհոգն մեր եպիսկոպոսի դրան իւրոյ և այլ ևս կղերց եկեղեցւոյն՝ ըստ օրինի գերելոց յածիլ շրջիլ ընդ գլխաւոր նախարարս և իշխանս աշխարհիս, և ժողովեալ միանգամայն զխնդիր պահանջման ոստիկանին՝ վաղվաղակի առաքեցաք ըստ հրամանի արքայի Սմբատայ առ մեծ իշխանն արևելից Համամ։ Վասն զի ոստիկանն ընդ այն ժամանակս հասեալ 'ի Փայտակարան քաղաք՝ ընդ իւր տանէր զմեծ կաթողիկոսն, յոր իբրև ժամանեալ՝ հապճեպով մերքն հասին առ նա։ Իսկ նա յինքն հայցեալ զհայրապետն առնոյր. և յառաքեալ զանձն առ յիւրմէն ևս յաւելեալ 'ի լրումն սակին՝ տայր տանիլ ոստիկանին։ Եւ հաւատոց պաշտպանութեամբ թեակոխեալ փափաքմամբ իշխանն 'ի տեսանել զհայրապետն մեծ, և մարմնաւոր պիտոյից բովանդակապէս բաւականացեալ 'ի հեռաւոր օտարութեան և յարբանեկութեան պայմանի սպասաւորեալ՝ առաքէ զնա 'ի Հայս։ Զոր իբրև տեսին հօտքն զհովիւն բանաւոր ոչխարաց՝ մեծապէս առլցան խնդութեամբ բազմաւ. և յամենայն եկեղեցիս զպաշտօն բարեկարգութեան բարձրացուցեալ՝ անդադար զտէրունական կանոն աղօթիցն կատարէին 'ի փառս Աստուծոյ։

Զայսու ժամանակաւ Աշոտ՝ իշխանն մեծ Վասպուրական կողմանց և քեռորդի արքային Սմբատայ, խոնարհեալ 'ի նենգապատիր բարբանջանս ոմանց և հրապուրեալ երկփեղկեաց 'ի բաց զդաշինս ուխտին, որ ընդ Սմբատայ արքայի՝ քեռւոյ իւրոյ. և չուեալ գնաց առ ոստիկանն Ափշին իբրև 'ի պատճառս պարգևաց նմա և յայտ ածել զհնազանդութիւն միամտութեան առ նա՝ ոչ նկատեալ նախ զչարն, որ 'ի գոյացութիւն իրին էր տեսանել։ Եւ երթեալ ապա բազում և երևելի ընծայս ոստիկանին տարեալ մատուցանէր. և այլ ևս զկարասիս բարձեալ տարեալ միում միում նախարարաց նորա գաղտախթէր՝ մեծագունի ակընկալեալ բարձի և պատուի՝ և վերընկալուլ զնա առնելոյ ինքնիշխան կամաց. որ ոչ թերևս աւելի քան որ 'ի ձեռս իւր էր՝ առեալ լինէր, բայց միայն պատուասէր զարդոյ զնա զգեստաւորեալ և յուղարկեալ՝ եկաց 'ի բաց, միայն զօրհասական վէրս յոգիս ընդունէր։

Իսկ արքայ Սմբատ միայն զլռութիւն պատուեալ՝ սպասէր առ 'ի նմանէն հաւանական միտս դարձի առ նա ստանալ և մերկանալ զամօթալի դէմս տգիտութեանն. այլ նորա անփոյթ զայս արարեալ՝ ոչ դառնայր 'ի բերս բարւոյն արկից։ Յետ սակաւ աւուրց ինչ և մեծ իշխանն Սիւնեաց ըստ սորին սակի զսոյն զայս գործեալ՝ երթայր և նա առ Ափշինն, յորմէ և նա թափուր իբրև զնա դարձեալ եկեալ։ Եւ ապա այնուհետև զղջացեալ զփեռեկտիլն 'ի միաբանութենէ արքայի՝ խաղա-

վով կառաքվի իր աթոռը։ Իսկ նա մեզ հասկացրեց իր դռան եպիսկոպոսի ու եկեղեցու այլ հոգևորականների հոգաշափ հոգսը՝ գերու նման գեգերել երկրի գլխավոր նախարարների ու իշխանների հետ և ապա հավաքվել մեկտեղ՝ բոլորով քննելու ոստիկանի պահանջը։ Եվ Սմբատ արքայի հրամանով անմիջապես ուղևորվեցինք արևելքի մեծ իշխան Համամի մոտ։ Քանի որ ոստիկանը այդ ժամանակ հասել էր Փայտակարան քաղաքը՝ իր հետ տանելով մեծ կաթողիկոսին, և այնտեղ ժամանելիս մերոնք շտապ հասան նրան։ Իսկ նա [Համամը] խնդրում է իրեն տալ հայրապետին՝ և առնում է։ Նա ուղարկված դանձի վրա ավելացնում է նաև իրենը ու տալիս է տանելու ոստիկանին։ Եվ հավատի պաշտպանությամբ ու փափագով տեսնելով մեծ հայրապետին, իշխանը մարմնավոր կարիքները ամբողջապես բավարարելով հեռավոր օտարության մեջ և պաշտամունքի կարգով սպասավորելով, նրան [կաթողիկոսին] ուղարկում է Հայաստան։ Հոտը երբ տեսավ բանավոր ոչխարների հովվին, մեծապես լցվեց մեծ խնդությամբ։ Եվ բոլոր եկեղեցիներում բարեկարգության պաշտամունքը փառաբանելով՝ անդադար տերունական աղոթքներ էին կատարում ի փառս Աստծու։

Այդ ժամանակներում Աշոտը՝ Վասպուրականի կողմերի մեծ իշխանը և Սմբատ արքայի քեռորդին, տեղի տալով ոմանց նենգամիտ բարբաջանքներին և հրապուրվելով դրանցով, պառակտեց միաբանությանն այն դաշինքը, որ ուներ իր քեռի Սմբատ արքայի հետ և չվեց գնաց Ափշին ոստիկանի մոտ՝ իբրև՝թե նրան պարգևներ տալու և հայտնելու իր հնազանդությունն ու հավատարմությունը նրա նկատմամբ՝ նախապես չնկատելով նրա չարությունը, որ տեսանելի էր եղած իսկությամբ։ Ապա նա գնում ու տանում է շատ նշանավոր ընծաներ և մատուցում ոստիկանին։ Նա նաև առնում-տանում է այլ կահ-կարասիներ ու մեկ առ մեկ կաշառում նրա նախարարներին՝ աչք ունենալով ավելի մեծ բարձ ու պատվի և իրեն մեծ իշխանի հաջորդն անելուն։ Եվ թերևս ինչ նրա ձեռքում էր, չի խլվում, այլ նրան հարուստ զարդերով զգեստավորելով՝ ուղարկում են, և նա հեռու մնաց, միայն թե հոգու վրա օրհասական վերքեր էր ընդունում։

Իսկ Սմբատ արքան, միայն լռությունը հարգելով, սպասում էր նրանից ստանալ դարձի համաձայնություն և մերկացնել տգիտության ամոթալի դեմքը։ Բայց այդ անտեսելով՝ նա չէր ուզում դառնալ դեպի բարի գործը։ Քիչ օրեր անց Սյունյաց մեծ իշխանը ևս գործում է սրա նման. նա ևս գնում է Ափշինի մոտ, որի մոտից նա ևս նրա նման վերադառնում է դատարկաձեռն։ Բայց այնուհետև զղջալով՝ արքայի հետ

պատելով աղերսէր՝ մի՛ ունիլ նմա 'ի բանի զյանցուածս իւր կամ մերժել յառաջին խնամոցն հայրաբուն սիրոյն։ Իսկ արքայ Սմբատ ոչ ինչ անջրպետ 'ի մէջ արկեալ նախկի այցելութեանն՝ զրկալիր սիրով առ ինքն յանձանձէր ածել՝ իբրև զորդի սիրելի մեծապատիւ պերճութեամբ զնա շքեղացուցեալ։

Յայնմ ժամանակի իմաստութեամբ և շնորհօք քաջութեամբ և ուժոյ պնդութեամբ երևելի էր Գագիկ Արծրունի։ Եւ զի էր նա աներ Աշոտոյ իշխանին մեծի, զորմէ բանս նախաճառեաց, յինքն ապա զիշխանն մեծ յանգուցանէր նաներական և նենգ խորհրդով սրտիւ, և 'ի պատճառս զբօսանաց սիրոյ զերեսին եղբարսն բասրեալ ածեալ 'ի միասին՝ զԱշոտ փեսայ իւր և զԳագիկ և զԳուրգէն, և 'ի միասին զնոսա կապեալ երկաթի կապանօք՝ դնէ՝ 'ի բանտի։ Եւ յինքն զտէրութիւն նորա գրաւեալ՝ իշխան առհասարակ կողմանցն այնոցիկ կարգի հարբստապէս ճոխութեամբ։ Իսկ արքայ Սմբատ թէպէտև ընդ ակամբ հայեցեալ՝ ոչ կամէր զայն այնպէս լինել. սակայն և ոչ ընդ պատուհասից կորզան զիշխանացեալն Գագիկ հանէր. մանաւանդ զի միամտութեամբ սրտի հնազանդեալ նուաճէր ընդ լծով ծառայութեան արքայի։

Յետ այսորիկ արքայ Սմբատ իբրև ետես զմիատարր խաղաղութիւն մշտնջենաւորեալ 'ի Հայս և միաբան ընդ նմա լինիլ նախարարաց յուխտ սիրոյ, եդ 'ի մտի իւրում երթալ հարթել հաստատել և նուաճել զաշխարհն ևս Տարօնոյ և զկողմանս նահանգին ևս Աղձնեաց. զի մի՛ տարամերժեսցի սեպհականութիւն ազգացն այնոցիկ 'ի բնիկ տէրութենէ։ Վասն զի մեծ իշխանն Իսմայէլեան՝ Ահմատ, որ տիրեալ ունէր և Միջագետս Ասորոց մինչև զՊաղեստին՝ ձերբակալ արարեալ զփեսայացեալն Արծրունեաց Ապլմախրայ, որ 'ի ծածուկ ունէր զհաւատս քրիստոնէութեան և փոխանակ բդեշխացն պայազատէր զաշխարհն Աղձնեաց՝ և 'ի բանտի զնա եդեալ՝ յինքն գրաւէր զսեպհականութիւն տանն և զընակիչս Սիմ լերինն։

Իսկ յետ ամաց ինչ ապա վախճանէր և մեծ իշխանն Տարօնոյ Դաւիթ Բագրատունի. և փոխանակ նորա կացուցեալ 'ի տեղի եղբօրորդի նորուն Գուրգէն։ Ապա և ընդ նմա ևս Ահմատայ մարտ եղեալ՝ մինչև սպանաւ 'ի պատերազմին։ Իսկ Ահմատն ոտն առ ոտն յառաջ մատուցեալ՝ միապետել ջանայր զկողմանսն զայնոսիկ. և վասն զի որդի Դաւթի իշխանի մեծի՝ փեսայացեալ՝ Շապհոյ եղբօր արքայի՝ և փոշիշն ամբաստանութեան նորա յաճախէր և շարութիւնն Ահմատայ մերկացեալ յայտ եկեալ էր, այնուհետև զումարտակ արարեալ արքայի զնախարարս Հայոց և համագունդ զամենայն զօրս իւր արս իբրև վաթսուն հազար, և գնայ չուէ երթայ հասանէ մինչ 'ի հանդէպ լերինն ըստ

ունեցած միաբանությունից պառակտվելու համար նա ողորմագին աղերսում է բանի տեղ չդնել իր հանցանքը կամ զրկել հայրական սիրո առաջին խնամքից։ Իսկ Սմբատ արքան, առաջին այցելության մեջ անջրպետ չդցելով, հոգ է տանում զրկալիր սիրով իր մոտ բերել՝ նրան մեծապատիվ պերճությամբ շքեղացնելով իբրև սիրելի որդու։

Այն ժամանակ իմաստությամբ, շնորհքով, քաջությամբ ու զորությամբ անվանի էր Գագիկ Արծրունին։ Եվ քանի որ նա մեծ իշխանի՝ Աշոտի աներն էր, որի մասին նախապես ասացինք, նանիր ու նենգ սանքի պատրվակով սիրով խաբում, տանում է երեք եղբայրներին՝ իր փեսա Աշոտին, Գագիկին, Գուրգենին, ու նրանց միասին կապելով երկաթե շղթաներով՝ գցում է բանտ։ Եվ գրավելով նրա տերությունը՝ առհասարակ այդ կողմերում բռնությամբ ինքն է իշխան կարգվում։ Իսկ Սմբատ արքան էլ նայում էր ծուռ աչքով և չէր կամենում, որ դա այդպես կատարվեր, սակայն չէր փորձում իշխանացած Գագիկին հանել այդ պատուհասից, մանավանդ որ նա սրտանց համաձայնվել էր ընկնել արքայի ծառայության լծի տակ։

Դրանից հետո Սմբատ արքան երբ տեսավ, որ Հայաստանում միատարր ու մշտական խաղաղություն է հաստատվել, և նախարարները հնազանդ են իրեն՝ սիրո դաշինքով, մտադրվեց գնալ, հարթել, հաստատել, նվաճել նաև Տարոնի աշխարհը ու Աղձնյաց նահանգի կողմերը, որպեսզի բուն տերությունից չառանձնացվի այդ ազգերի սեփականությունը։ Քանի որ իսմայելյան մեծ իշխան Ահմատը, որ տիրել էր Ասորիքի Միջագետքին մինչև Պաղեստին, ձերբակալելով Արծրունիներին փեսայացած Ապլմախրային, որ գաղտնի պաշտում էր քրիստոնեական հավատը և բդեշխների փոխարեն իշխում էր Աղձնյաց աշխարհի վրա, նրան բանտ գցելով՝ ինքն է գրավում նրա սեփականությունն ու Սիմ լեռան բնակիչներին։

Տարիներ անց վախճանվում է նաև Տարոնի մեծ իշխանը՝ Դավիթ Բագրատունին, և նրա փոխարեն, նրա տեղը նշանակվում է նրա եղբորորդի Գուրգենը։ Հետո նրա դեմ կռվում է Ահմատը, մինչև որ [նա] սպանվում է պատերազմում։ Իսկ Ահմատը կամաց-կամաց առաջ շարժվելով՝ ձգտում էր տիրապետել այդ կողմերի վրա։ Եվ քանի որ Դավիթ մեծ իշխանի որդին փեսայացել էր արքայի եղբայր Շապուհին, շատացել էր նրա մեղադրանքը, և Ահմատի չարությունը բացահայտվել ու հայտնի էր դարձել։ Դրա համար արքան, հավաքելով Հայոց նախարարների զորքը ու միացնելով իր զորքին, որը մոտավորապես վաթսուն հազար էր, շարժվում գնում-հասնում է Տարոնի արևելքում գտնվող

արևելից Տարօնոյ՝ բանակետղ անդ կալեալ տեսանել զորպէսն։ Իսկ բիրտ բռնաւորն Ահմատ նստէր յարևմտից Տարօնոյ՝ բանակետղ անդ կալեալ առ ափն Եփրատ գետոյ. և վասն զի բան միակամութեան էր առ Ահմատայ 'ի գաղտնիս իշխանացելոյն Վասպուրականի Գագկայ՝ նենգապատիր խաբէութեամբ քաղցրացոյց 'ի կամս արքայի չուել գնալ անտի 'ի հարաւակողմ կոյս հանդէպ քաղաքագեղջն Հողսայ, իբր թէ յայնմ մարզէ գոլ նոցա պատշաճ զգործ իրին վճարել խռովութեամբ կամ խաղաղութեամբ։ Իսկ արքայի ոչինչ կարծիք լրտեսի զնմանէ լեալ՝ գնայ ընդ նմա։ Իսկ նորա նախ վազվազեալ և զհրապոյրսն զայն զեկուցեալ Ահմատայ, և 'ի պայման պատշաճ ժամու կիտին եղելոյ հրաւիրէր գալ 'ի վերայ. և ինքն առաջնորդէր բազմութեան զօրացն ընդ լեառնակողմն՝ անջրդի ապառաժ մացառախիտ քարաժայռ անպողոտայ ափափայ գնալով զօրն ամենայն, զի յոլովք 'ի ծարաւս իւրեանց կթուցեալք սատակէին։ Եւ այլ ևս զօրքն ամենայն վայրագնաց ջլաձիգ խրզմամբ տաժանեալ վաստակեալ լքեալ թալկացեալ թանձրադանդաղ ձանձրութեամբ և հատկլեալ՝ հազիւ հասանէին 'ի ջուր ինչ գեղջ մի Թուղխ անուն. և անդր գրեթէ իբրև զգանեալս և յօդալոյծս առհասարակ անկեալ գնէին։ Իսկ Ահմատայ ըստ եղելոյ կիտին Գագկայ ստիպեալ զզօրս իւր մինչդեռ առաւօտն զգիշերն մերկանայր՝ հասանէին հրոսակք ասպատակին սփռեալ 'ի վերայ։ Անդ ապա 'ի հինէն հասելոյ ընդոստուցեալ իմն զօրացն լքելոց և հապճեպ վարեալ 'ի զրահս և 'ի զէնս և 'ի զարդս՝ և ձի կալեալ նախ ինքն իսկ արքայ յասպարիսի անցեալ առաքինանայր, ապա և այլք ոմանք զկնի ասպատակ տուեալ և ձի 'ի ներքս տարեալ՝ ընդ կրունկն զջոլիրս ռազմի թշնամեացն դարձուցեալ՝ հատկտուր առնէին։ Իսկ զայնպիսի արիաբար մրցմունս տեսեալ Գագիկն, որ բղխեալն էր առ 'ի յիւրմէն զհոտ մահու առ մղձկեալ սրտին՝ այլ իմն շար խորհրդոց արբանեկեալ և հէն հարեալ առ հասարակ բանակին՝ հրամայէր նախ զխորանն իւր յերկիր ընկենուլ և բեռնակրացն բառնալ գնալ քնդ կրունկն։ Զոր տեսեալ բազմութեանն և իրաւացի զայն կարծեալ՝ ամենեքեան նոյնպէս առնէին։ Վասն որոյ տեսեալ զայն արքայի և իմացեալ, եթէ յայնմհետէ ոչ յաջողի նոցա գործ պատերազմին՝ յետկոյս զինքեանս մղեալ 'ի փախուստ դառնային։ Անդ ապա անկանէր անփորձ և անկիրթ երիտասարդն՝ չքնաղագեղն Աշոտ՝ քեռորդի արքային, որ 'ի մեծ նախարարութենէ հայկականս գրոհի. ընդ նմին և այլ ևս տեարք պատերազմողք յաննշանից ոմանց յիսնից՝ աւելի կամ պակաս, և այլ զօրքն ցրուեցան գնացին յիւրաքանչիւր տեղիս։ Իսկ արքայն եկեալ դադարէր 'ի Բագրաւան գաւառ 'ի հանգուցանել զխոնջ աշխատութեան իւրոյ։ Բայց դրժադաւ իշխանն

լեռան դիմաց ու այնտեղ բանակ դնում՝ տեսնելու համար, թե վիճակն ինչպիսին է։ Իսկ բիրտ բռնակալ Ահմատը նստում է Տարոնի արևմտյան կողմում՝ բանակը տեղավորելով Եփրատ գետի ափին։ Եվ քանի որ Ահմատի ու Վասպուրականում գաղտնի իշխանացած Գագիկի միջև միաբանություն կար, [Գագիկը] նենգորեն ու խաբեությամբ համաձայնեցրեց արքային այնտեղից մեկնել, գնալ դեպի հարավ, Հողսա քաղաքացուղի դիմաց, իբր թե երկրի այդ կողմում հարմար գործ կատարելու խռովությամբ կամ խաղաղությամբ։ Իսկ արքան, բոլորովին չկասկածելով, որ նա լրտես է, գնում է նրա հետ։ Իսկ նա նախ աճապարանքով Ահմատին զեկուցում է այդ խաբեության մասին, և ապա [պայմանավորվում է] նշանակված հարմար պահին հարձակվելու նրա վրա։ Իսկ ինքը զորքի բազմությունը առաջնորդում էր դեպի լեռան կողմը։ Ամբողջ զորքը գնում էր անջրդի, ապառաժոտ, մացառախիտ ու քարքարոտ տեղերով մագլցելով, այնպես որ շատերը ծարախիտ ու քարքարոտ տեղերով մագլցելով, այնպես որ շատերը ծարավից տանջվելով մեռնում էին։ Իսկ մյուս զորքը, մոլոր, հոգնած, տանջված, հուսալքված, թուլացած, ծանրաշարժ, շնչասպառ թափառելով, հազիվ հասնում է ջրի՝ Թուղխ անունով մի գյուղում։ Եվ այնտեղ բոլորը որպես ծեծված ու հոդակոտոր արված՝ փռվում են գետնին։ Իսկ Ահմատը Գագիկի դրած պայմանի համաձայն՝ ստիպում է իր զորքին [սպասել] մինչև լուսաբաց, մինչև որ հասնում է հրոսակ զորքը և ասպատակում։ Հետո ավազակների հարձակումից զրկված՝ հուսալքված զորքը շտապ դիմելով զրահներին, զենքերին ու զարդերին, և ապա նախ ինքը՝ արքան, ձի հեծնելով ու մտնելով ասպարեզ, առաքինանում է։ Նրա հետևից մյուսները ևս ձի հեծնելով ու ասպատակելով՝ կռվող թշնամու զորքի բազմությունը ետ են դարձնում ու ջարդուխուրդ անում։ Իսկ Գագիկը, երբ տեսնում է այդպիսի խիզախ կռիվը, որ սկսվել էր իր պատճառով, մահվան հոտ է առնում ու սրտնեղվում։ Բայց շար մտադրությամբ ու առհասարակ բանակին ավազակաբար հարվածելով՝ նա հրամայում է նախ իր վրանը գետնին գցել և բեռնակիրներին՝ բարձել, ետ դառնալ ու գնալ։ Երբ այդ բանը տեսնում է բազմությունը, այն համարում է իրավացի, և բոլորը նույն ձևով են վարվում։ Դրա համար երբ արքան տեսնում է այդ բանն ու հասկանում, որ այլևս չի հաջողվի նրանց պատերազմի գործը, ետ են դառնում ու փախչում։ Այնտեղ ընկնում է անփորձ ու անվարժ երիտասարդը՝ արքայի քեռորդի, չքնաղագեղ Աշոտը, որը հայկական մեծ նախարարության ցեղից էր։ Նրա հետ [ընկնում են] նաև ոչ նշանավոր իշխաններ հիսուն հոգուց ավելի կամ պակաս, իսկ մյուս զինվորները ցրվեցին գնացին յուրաքանչյուրը իր տեղը։ Իսկ արքան գալիս ու դադար է առնում Բագրավան

Գագիկ ջանայր զիրս նենգութեանն 'ի խորոջ սրտին ընդ գրուանաւ թագուցանել, ոչ գիտելով թէ չէ ինչ գաղտնի, որ ոչ գայցէ 'ի յայտ։ Եւ իբրև եկն նա 'ի վան 'ի Տոսպ գաւառի՝ անդ ապա զուարճանայր զուարթանայր 'ի խրախ լինել ըստ խրախութեան սրտին, ըստ որում թէ սրտի բերկրեցելոյ երեսքն գուշակեն։ Իսկ 'ի վաղուեան անդ աւուրն պատմուճանեալ նորա արքունական զգեստիւ և հեծեալ 'ի ջորւոջ իւրում՝ ճախր առեալ ճեմէր յասպարիսի անդ։ Իսկ ապա Գագիկ եղբայր մեծի իշխանին Աշոտոյ երկու ևս համախոհ Ամատունի արամբք յանկարծակի 'ի վաղակաւորն յեցեալ և 'ի վերայ յարուցեալ իշխանապանծ խրոխտացելոյն՝ սրոյ ճարակ զնա տային։ Եւ այնպէս յերկիր անկեալ վախճանեալ՝ թաղեցաւ ընդ հարս իւր։ Իսկ կապեալն Աշոտ՝ ելեալ հաստատէր եղբարքն հանդերձ 'ի սեպհական իշխանութեան իւրում։

Բայց նախ քան զայս երկու իշխանքն մեծամեծք գլխաւորք և ալեւորք հերօք՝ Մուշեղ իշխանն Մոկաց և Գուրգէն իշխանն Անձևացեաց, ատեան հակառակութեան 'ի մէջ իւրեանց բարկութեամբ բորբոքեալ՝ սաստիկ դղրդմամբ մարտ ընդ միմեանս եղեալ կռուէին. յորում պատերազմի սպանաւ իսկ Մուշեղ իշխանն Մոկաց 'ի Գուրգենայ։ Իսկ յետ երկեամ մի ամաց Գուրգենայ հեծեալ յերիվար սրավար և յորս բաջաղեալ՝ եղև նմա անցանել ընդ փոքր ինչ հեղեղատ, ուր ապա երիվարն վազս առեալ փռնգալով և անգուշեալ՝ յետս կոյս զիշխանն ընդոստուցեալ ընկենոյր. և բարձեալ զնա մեռեալ՝ տարան թաղեցին ընդ հարս իւր։ Եւ պայազատէ զտէրութիւնն զայն մեծն Ատոմ որդի նորա ընդ նորա։

Իսկ վշտասէր շարասէր ոստիկանն Ափշին՝ լուեալ զայսպիսի գործեցեալ ոճիրս և զդաւադրժող փախուստն Սմբատայ, և զլքումն և զլուծումն զօրաց Հայոց, և զնենգումն իսկ մեծամեծ աւագանոյն և զայլոցն ևս շեշտակի կտուրն 'ի միմեանց լինել՝ 'ի ճահ առեալ զայն ժամ դիպող և պատշաճ գոլ իւրոյ կամացն կատարման. և 'ի ծննդականութիւն չարի կառավարեալ զմիտս իւր՝ դիմեալ մոմռեալ յարուցեալ զայր իբրև զհեղեղատ սաստիկ, զի շար ուղխիւքն դղրդեալ ողողեսցէ զտունս Թորգոմեան և թափեսցէ 'ի թագաւորն զթոյնս իւրոյ դառնութեան։ Եւ չուեալ ընդ Ուտի գաւառ՝ գայ 'ի կողմանս Գուգարաց և Վրաց, զի նախ զնոսա նուաճեսցէ կամ զշփոթ ամբոխի 'ի մէջ արկցէ. զի մի՛ յաջողեսցի ուրեք երբէք փախուստ 'ի նմանէ Սմբատայ։ Եւ վասն զի նախարարք կողմանցն այնոցիկ ոչ բերան ընդ նմա յուիստ ապստամբութեան՝ և ոչ կարաց հպիլ բռնութեամբ յանմատչելի ամրոց նոցա, դարձեալ էլ 'ի Հայս ընդ գաւառն Վանանդայ. և անդ խորհուրդ առեալ՝

գավառում՝ իրեն հանգիստ տալու համար։ Բայց խարդախ Գագիկ իշխանը ջանում էր իր նենգ գործերը ուրիշներից թաքուն պահել իր սրտի խորքում՝ չիմանալով, որ չկա գաղտնիք, որ ի հայտ չգա։ Իսկ երբ նա եկավ Տոսպ գավառի բնակավայրը, այնտեղ սկսում է զվարճանալ, զվարթանալ, սրտանց հրճվել, որքան որ կարելի էր դեմքից գուշակել սրտի բերկրանքը։ Իսկ հաջորդ առավոտյան նա հագնում է արքունական զգեստ, հեծնում իր ջորին և ճախրելով ճեմում է այնտեղի հրապարակում։ Այնտեղ Աշոտ մեծ իշխանի եղբայր Գագիկը և նրա համախոհ Ամատունին երկու այլ տղամարդկանց հետ կարճ սրերով հանկարծակի հարձակվում են իշխանապանծ գոռոզի վրա և նրան սրի ճարակ տալիս։ Եվ այդպես ընկնելով գետին՝ նա վախճանվեց ու թաղվեց իր հայրերի մոտ։ Իսկ շղթայակապ Աշոտը [բանտից] դուրս գալով՝ իր եղբայրների հետ հաստատապես տիրում է իր սեփական իշխանությանը։

Բայց դրանից առաջ երկու մեծամեծ ու գլխավոր ալեհեր իշխաններ՝ Մոկաց Մուշեղ իշխանը և Անձևացյաց Գուրգեն իշխանը, միմյանց նկատմամբ սաստիկ թշնամանք բորբոքելով՝ անողոք կռիվ էին մղում իրար դեմ։ Այդ պատերազմում Գուրգենը սպանեց Մոկաց Մուշեղ իշխանին։ Իսկ մի երկու տարի անց, երբ Գուրգենը հեծնում է սրընթաց երիվարն ու գնում որսի, որսի ժամանակ սկսում է մեծ-մեծ խոսել, և երբ նա պետք է անցներ մի փոքր հեղեղատի վրայով, երիվարը վրնջալով վազում է, քացի տալիս ու ետ ցատկելով իշխանին վայր է գցում։ Վերցնում են նրա դիակը ու տանում թաղում են իր հայրերի մոտ։ Եվ այդ տերության վրա նրա փոխարեն իշխում է նրա որդի մեծն Ատոմը։

Իսկ վշտասեր, շարասեր Ափշին ոստիկանը, լսելով կատարված այդպիսի ոճիրների, Սմբատի դավադիր փախուստի, ինչպես նաև Հայոց զորքը լուծարվելու ու հեռանալու, մեծամեծ ավագանու նենգության և այլոց շեշտակի երկպառակության մասին, իր կամքը կատարելու համար այդ պահը հարմար ժամանակ է համարում։ Եվ չարությամբ մտածելով ու առաջնորդվելով՝ նա վեր է կենում ու սաստիկ հեղեղի նման մռնչալով գալիս է, որպեսզի հորդահոս ջրի նման սարսափեցնելով ողողի Հայաստանն ու թագավորի գլխին թափի իր դառն թույնը։ Եվ մեկնելով Ուտի գավառ՝ գալիս է Գուգարաց ու Վրաց կողմերը, որպեսզի կա՛մ նախ նրանց նվաճի, կա՛մ խառնաշփոթություն գցի նրանց մեջ, որպեսզի Սմբատի փախուստը իրենից որևէ տեղ երբեք չհաջողվի։ Եվ քանի որ այն կողմերի նախարարները չհամաձայնվեցին նրա հետ ապստամբվել, և նա էլ չկարողացավ ուժ գործադրելով մոտենալ նրանց անմատչելի ամրոցին՝ դարձյալ գնաց Հայոց Վանանդ գավառը։

հետամուտ զհետ կրթէր Սմբատայ։ Իսկ իբրև նա յամուրս քարաժայռ ձորոյն խորոփեաց Տայոց անկանէր, և գիտաց ոստիկանն, եթէ ո՛չ դաւով գրժողութեան նմա սասանել ինչ կարէ և ո՛չ պատերազմաւ 'ի հրահանգս կրթութեան վանել՝ ապա երթեալ պաշարէ զամուրն Կարուց 'ի Վանանդ գաւառի. վասն զի անդ զօղեալ թագուցեալ զետեղեալ դադարեալ կային խարազնազգեաց կրօնաւորեալ տիկինն Հայոց՝ կինն Սմբատայ և նա նորին իսկ, որ էր դուստր արքային Եգերացւոց, և այլ ևս կանայք ազատագունդ արանց։ Եւ պահնակ ամրոցին էր Քանանիտ յազգէն Գնդունի՝ Հասան անուն, յոյժ հաւատարիմ և հրամանատար 'ի վերայ ամենայն տան արքայի։ Այլ և գանձք ևս՝ և կարասի բազում արքայի 'ի գանձարանս ամրոցին պահիւր. զոր իւր ևս ստուգեալ գիտաց Ափշինն յոմանց՝ իրազգաց նմա եղելոց. ուժգնապէս մոլութեամբ և պատնէշ պաշարմամբ պատէր զամրոցն։ Վասն որոյ ապա Հասանն խոհական իմացուածիւ՝ ուշ 'ի կուրծս արարեալ և գիտացեալ ոչ այլ ինչ իւիք փրկիլ նոցա յայնմանէ՝ (որ բացեալ երևէր դուռն կորստեան) և կազդուրեալ 'ի կամս երկնաւոր այցելութեանն, խնդրէ յետկար երդման յԱփշնէ, զի տացէ նմա զամրոցն և առ 'ի նմանէ գոցէ աներկիւղութիւն արեան և ամենայն շար ամպրոպաց։ Իսկ նա վաղվաղակի աներկբայաբար զխնդրեալն յետկար վստահութիւն տուեալ՝ բացաւ դուռն բերդին և մտանէր Ափշինն։

Իսկ մարդիկ ամրոցին թէպէտև խուճապեալք լինէին իբրև յահագին բեկանող գազանէ. սակայն նա ոչ ինչ որոշեաց զնոսա 'ի վտանգս տագնապի տարակուսանաց մահու կամ յարգել բանտի, այլ 'ի բաց զբազմութիւն ռամկին հանեալ՝ և ազատեալ 'ի բոլոր հինից միայն ըզտիկինն հանդերձ նուռվն իւրով և զհրամանատար տանն արքունի զՀասանն, և զայլ ևս խուն ինչ ազատ կանայս. և զգանձս և զկարասիս առեալ ընդ իւր տանէր 'ի Դվին քաղաք՝ ոչ թերևս մոտալուտ ինչ տագնապ տարակուսանաց զկնի տարելոցն ցուցեալ քան թէ յաւէտ իմն զմեծարանս պատուասիրութեան առ 'ի նմանէն ընկալեալ, որ յետ աւուրց ինչ թողոյր և զՀասանն գնալ առ թագաւորն իւր։ Իսկ արքայ Սմբատ դարձեալ եկեալ յամրոցն Կարուց և տեսեալ, թէ այն ինչ յափշտակեալ էր 'ի թշնամեացն՝ ոչ աղաւաղէր զինքն 'ի յուսոյ երկնաւոր փրկութեանն. այլ լիաբերան գոհութեամբ Աստուծոյ կամացն հաւատայր տալ զգիւտ կենաց նմա և զանգիւտ կորուստ՝ թշնամւոյն։ Եւ վասն զի ըստ ձմերային ժամանակին ոչ կարաց անդ որոշել կայանս՝ գնաց անտի յամուրս Երասխաձորոյ 'ի գեօղն Կաղզուան։ Իսկ անդ ա-

Այնտեղ խորհուրդ ստանալով՝ նա սկսեց հետապնդել Սմբատին։ Իսկ
ձորը նա ընկավ Տայքի ժայռոտ խոր ու փոս ձորերը, ոստիկանը հաս-
կացավ, որ նրան չի կարող սասանել ո՛չ դավով, ո՛չ նենգությամբ և
ոչ էլ կռվելով նրան հալածելով՝ դուրս վռնդել։ Եվ նա գնում պաշա-
րում է Կարուց ամրոցը, որը [գտնվում է] Վանանդ գավառում։ Այն-
տեղ էին թաքնվել, պահվել ու ճգնավորի կյանքով էին ապրում Հայոց
տիկինը՝ Սմբատի կինը, և նրա հարսը, որը եգերացիների արքայի
դուստրն էր և այլ՝ ազնվականների կանայք։ Ամրոցի պահակը Հասան
անունով քանանացին էր՝ Գնթունի ցեղից, շափազանց հավատարիմ մի
մարդ, որը արքայի ամբողջ տան հրամանատարն էր։ Արքայի գանձերն
ու ունեցած շատ այլ բաները պահվում էին ամրոցի գանձարանում,
որը Ափշինը ստույգ կերպով իմացավ իրեն տեղյակ պահողներից։ Եվ
նա ուժգին կատաղությամբ պատում ու պաշարում է ամրոցը։ Դրա
մասին Հասանը խոհեմ իմացությամբ լրջորեն մտածելով ու իմանալով,
որ իրենք ոչ մի կերպ չեն կարող փրկվել նրանից (որովհետև բացվել
էր կորստյան դուռը), և զորանալով երկնային նախախնամության կամ-
քով, երդմնագիր է պահանջում Ափշինից, որպեսզի նրան տա ամրոցը
ու նրանից ստանա արյան և ամեն տեսակի շար ամպրոպների ապա-
հովություն։ Երբ նա անմիջապես ու աներկբայորեն նրան է տալիս նրա
խնդրած վստահագիրը, բացվում է բերդի դուռը, և ներս է մտնում
Ափշինը։

Իսկ ամրոցի մարդիկ թեպետև խուճապահար են լինում նրանից,
ինչպես կործանիչ ահագին գազանից, սակայն նա նրանց համար չսահ-
մանեց վտանգավոր, տագնապալի ու մահվան տարակուսանք առա-
ջացնող որևէ բան կամ չփակեց բանտում, այլ ռամիկների բազմու-
թյունը դուրս հանելով, բոլոր ավազակների ձեռքից ազատեց միայն
տիկնոջը, նրա հարսին, արքունի տան հրամայող Հասանին և մի քանի
ազնվական կանանց։ Իր հետ վերցնելով նաև գանձեր ու ունեցվածք՝
տանում է Դվին քաղաք, ցուցաբերելով ոչ թե մոտալուտ տագնապ ու
տարակուսանք տարածների նկատմամբ, այլ ավելի շատ նրանցից մե-
ծարանք ու հյուրասիրություն ընդունելով։ Իսկ մի քանի օր անց նա
Հասանին թողնում է գնալ իր թագավորի մոտ։ Իսկ Սմբատ արքան
դարձյալ գալով Կարուց ամրոցը ու տեսնելով, թե ինչպես է այն հա-
փշտակված թշնամիների կողմից, իրեն չէր կորցրել երկնավոր փրր-
կության հույսից, այլ լիաբերան գոհությամբ հավատում էր Աստծու
կամքին, որ նա իրեն կտա ապրելու հնար, իսկ թշնամուն՝ անդառնալի
կորուստ։ Եվ քանի որ ձմեռ էր, և նա չկարողացավ որոշել բնակա-
տեղին, նա այնտեղից գնաց Երասխաձորի ապահով տեղերը, Կաղզվան

պա յետ երկոցունց կողմանց դեսպանք զկնի դեսպանաց տարուբերս առնէին Սմբատայ և Ափշնին. և ատեան հարցափորձի 'ի մէջ առեալ՝ 'ի միմեանս հարկանել թափել ջանային զմեղադրութիւն իրին գործելոյ։ Ապա խնդրէր ոստիկանն պատանդս յարքայէ զուստր նորա զաւագ՝ և զուստր Սահակայ եղբօր արքայի. իսկ զդուստր Շապհոյ՝ կրտսեր եղբօր արքայի իւր 'ի կնութիւն՝ իբր սաղապս իմն սնոտիս համարեալ զուխտ երդմանն Սմբատայ, և միայն զայս ևեթ խնդրել պատճառս վստահութեան և անվրդով խաղաղութեան։ Իսկ արքայ ոչ տեսեալ զհարթայարմար միաբանութիւն նախարարացն ընդ ինքեան՝ և ոչ այլ ինչ իրին ելի աղագս գտեալ, այլ ակամայ կամօք 'ի կամս նորա դառնայր՝ տալով զԱշոտ որդի իւր և զՍմբատ եղբօրորդի իւր 'ի պայման պատանդաց, այլ և զդուստր Շապհոյ կրտսեր եղբօր իւրոյ 'ի կնութիւն նմա։ Զոր իբրև առընկալաւ և զհարսանեացն պարս պարեցին և զկաքաւսն կաքաւեցին՝ ոչ կամեցաւ գնալ 'ի դառնաշունչ ձմերային ժամանակի։

Յայսմ տեղ վախճանէր մեծ հայրապետն Գէորգ 'ի գաւառն Վասպուրական. զոր տարեալ համախումբ քահանայիցն և իշխանաց աշխարհին՝ եդին զնա 'ի քնարանի Զորոյ Վանայ, որ 'ի Տոսբ մերձ յեկեղեցին, ուր եղեալ իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր և զսեղան տէրունական խորհրդոյն, զոր նախ քան զհաստատելն եկեղեցեաց սրբոց 'ի Հայս ընդ իւր շրջեցուցանէր։

Իսկ իբրև ձմերային սգաւորութիւնն 'ի գարնանային բարեխառնութիւնն օդոց յեղանակէր զփոփոխումն, ապա ոստիկանն բաղում հրամանագաց պատուեալ յուղարկեալ առ արքայ և զկինն արքայի՝ առ ինքն զՇապուհ զեղբայր արքայի կոչէր. և նախախնամեալ մեծարէ զնա, իբրև հարազատի շնորհելով բարեվայելուչ պարգևս և պատիւս։ Եւ նա յուղարկեալ զփեսայացեալն իւր Ափշին հանդերձ դստերբն իւրով և այլ ևս պատանդօքն և տիկնաւն և նուռվն արքայի, և ինքն դառնայ առ արքայ Սմբատ։

Իսկ վասնզի հրաժարեալ էր 'ի կենաց աստի մեծ հայրապետն Գէորգ՝ ապա թագաւորն և համազգիք իւր զհոգենիւթ և զաստուածաշնորհ այրն Աստուծոյ՝ զՄաշտոց ընտրեցին 'ի հայրապետութիւն։ Որ աստուածային ծաւալմամբ և հոգիախաղաց զօրութեամբ գրգեալ զհոգւոյն շարժմունս՝ իբրև պարարտ անդաստան բուսուցանէր զհոգեծաղիկ անուշահոտութիւնս. և արտամերժեալ 'ի բաց ընկեցեալ զկատակ* կերակրոց, մեկնէր հեռանայր ևս 'ի հասարակ կերակրոյ՝ 'ի հացէ և

* Յայլում օրինակի ընթեռնումք «կատաօկս.» և մին և միսն անյայտ թողուն զիմաստ բանին, քանզի «արտամերժեալ 'ի բաց ընկեցեալ զկատակս (կամ զկատաօկս) կերակրոց» նշանակէ և ոչինչ։

գյուղը։ Եվ այնտեղ երկուստեք դեսպան դեսպանի հետևից էին գնում ու գալիս Սմբատի և Ափշինի մոտ։ Միմյանց հարցաքննելով՝ նրանցից յուրաքանչյուրը աշխատում էր կատարված գործերի մեղադրանքը թափել մյուսի վրա։ Այնուհետև ոստիկանը արքայից իբրև պատանդներ է պահանջում նրա ավագ դստերը և արքայի եղբայր Սահակի դստերը, իսկ արքայի կրտսեր եղբայր Շապուհի դստերը իրեն կնության տալու՝ Սմբատի երդմնագիրը անհաստատ ու դատարկ պատրվակ և միայն այն վստահության ու անվրդով խաղաղության հիմք համարելու պատճառաբանությամբ։ Իսկ արքան, չտեսնելով նախարարների հարթ ու հարմար միաբանությունը իր հետ և դեպքի այլ ճար ու ելք չգտնելով, ստիպված ենթարկվում է նրա կամքին՝ որպես պատանդ նրան տալով իր որդի Աշոտին, իր եղբորորդի Սմբատին, ինչպես նաև նրան կնության տալով իր կրտսեր եղբայր Շապուհի դստերը։ Երբ նա ընդունեց նրան, նրանք հարսանյաց պար պարեցին ու կաքավեցին, և նա չկամեցավ [այնտեղից] գնալ ցրտաշունչ ձմռան ժամանակ։

Այնտեղ, Վասպուրական գավառում, վախճանվում է Գեորգ մեծ հայրապետը, որին երկրի քահանաները ու իշխանները տարան և թաղեցին Վանաց Զորի գերեզմանոցում, որը գտնվում է Տոսպում, եկեղեցուն մոտիկ։ Այնտեղ մեր սուրբ Լուսավորիչը դրել էր իր գավազանն ու տերունական խորհրդի սեղանը, որոնք նախքան սուրբ եկեղեցիների հիմնադրումը Հայաստանում, նա ման էր ածում իր հետ։

Իսկ երբ ձմեռային տրտմությունը գարնանային բարեխառն եղանակի էր փոխվում, ոստիկանը մեծ պատվով արքայի մոտ է ուղարկում և արքայի կնոջը ու իր մոտ կանչում արքայի եղբայր Շապուհին և հոգատարությամբ մեծարում է նրան՝ իբրև հարազատի նրան շնորհելով բարեվայելուչ պարգևներ ու պատիվ։ Եվ ուղարկելով իրեն փեսացած Ափշինին իր դստեր, արքայի տիկնոջ, հարսի և այլ պատանդների հետ՝ ինքը վերադառնում է Սմբատ արքայի մոտ։

Եվ որովհետև վախճանվել էր Գեորգ մեծ հայրապետը, ուստի և՝ թագավորն ու իր համազգիները հայրապետ ընտրեցին Աստծու մարդուն՝ ամբողջ էությամբ հոգևորական ու աստվածաշնորհ Մաշտոցին։ Աստվածային ծավալմամբ ու հոգեշարժ զորությամբ փայփայելով հոգևոր շարժումը՝ նա իբրև բարեբեր անդաստան էր բուսցնում անուշահոտ հոգևոր ծաղիկը։ Մերժելով ու դուրս գցելով կերակուրները*՝ նա

* [Ընագրում՝ «զկատակս կերակրոց». հրատարակիչը ծանոթագրում է] այլ օրինակում կարդում ենք «կատաօկս». և մեկը, և մյուսը անորոշ են թողնում խոսքի իմաստը, որովհետև «արտամերժեալ ի բաց ընկեցեալ զկատակս (կամ զկատաօկս) կերակրոց» ոչ մի բան չի նշանակում [այդ բառը մենք էլ չենք թարգմանել]։

յրմպելոյ ջրոյ, սակաւապիտութեամբ լոկ բանջարով զհարկաւոր պէտսն վճարեալ։ Ընդ որ հաճեալ հաւանեալ թագաւորն և զահամեծար իշխանքն և պատուական արք ազատք ընդ գեղեցկայարմար խորհրդական գնացս նորա՝ կացուցին զնա յաթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի. զորոյ և զգովութիւն բարեբոյս բեղնոյ ընձիւղման նորա, որ 'ի պարարտ անդաստանի հոգւոջն երևէր՝ ոչ է այժմ ճառել, այլ այլում տեղւոյ և ժամանակի թողլի է։ Բայց սուրբ այրն Աստուծոյ մինչդեռ սքանչելագործ գովելի վարդապետութեամբն իւրով շինէր և հաստատէր և յարդարէր 'ի կարգս բարեաց գնացից և գործոց զհօտս իւր հաւատացեալ՝ արտաքոյ բոլոր վշտակիր հեծութեան հանգեաւ 'ի Քրիստոս, ամիսս եօթն միայն կալեալ զաթոռ հայրապետութեանն։

Զկնի ապա հէքս ես և թշուառականս և պասքեալս ընդ հոգևոր արբուցման խրատու Յովհաննէս, որ զսոյն զայս գրեցի գիրս՝ ոչ ըստ արժանեաց ածայ յաթոռ սրբութեան, թերևս ոչ կարացեալ դիմակ զոլ հրամանի արքային և կամ այլոց ևս նախարարակոյտ բազմութեանն։ Զի թէպէտ և յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի 'ի մանկութենէ իմմէ՝ այլ և ազգակից հարազատութեան նորա ըստ մարմնոյ. սակայն կուրացեալ գերանով մեղաց իմոց՝ ոչ բաւական զանձն վարկայ դնել 'ի նշմարել զշիղ յական եղբօրն, կամ յառաջագէտ լինել յատենագրութիւնս նորս Իսրայէլի։ Բայց դարձեալ զհնազանդութիւն յանձին բարձրացուցեալ, որ է մայր ամենայն առաքինութեան, և զունկնդրութիւն բարի զոլ վարկեալ քան զզոհ ընտիր ևս զոչ հակառակիլն՝ ածայ յայս, միայն թողլով ինձ յոյս յառաջնորդական հանդիսի զԱստուծոյ ևեթ մարդասիրութիւն։

Զայսու ժամանակաւ 'ի քաջաքաղիւղն մեծ Երազդաւորս եկեղեցին, որ նախ յարքայէն Սմբատայ հիմնադրեալ եղև մերձ 'ի թագաւորական նորա ապարանս՝ բովանդակեալ շինութեամբ 'ի գլուխ ելեալ աստանօր. և ըստ օրինակի կարգաց աստուածայնոց զնորայն նաւակատիս պատուեալ բարձրացուցանէին 'ի պաշտօն ցնծութեան։ Եւ չքնաղ և երևելի զարդուք ոսկեճամուկ հանդերձանաց և 'ի շղաշատեռ առագաստից զնա պճնեալ պայծառացուցանէր. և կամար ևս 'ի համակ ոսկւոյ ականակապ յարդարեալ և 'ի քրիստոսական տրապիզին եղեալ ածեալ։

Բայց մեծ կուրապաղատն Վրաց՝ Ատրներսեհ, անվրդով և անշուշտ ուխտ խաղաղութեան և սիրոյ միաբանութեան ընդ արքայի Սմբատայ պահէր 'ի բոլոր մասունս առ 'ի բովանդակ մտաց և 'ի զօրութենէ իւրմէ մեծաւ պատկառանօք իբրև հօր հնազանդ լեալ, կամ թէ ևս առաւել քան զայս՝ իբրև զծառայ 'ի տեառնէ իւրմէ կամաւ կրեալ զսահման երկիւղի շափաւոր մոլութեամբ և զաչս իւր մշտակարկառ յարքայ հա-

հրաժարվում էր նաև հասարակ կերակուրներից՝ հացից ու ջրից, իրեն հարկավոր կարիքները հոգալով սակավապետությամբ և [սնվելով] միայն բույսերով։ Թագավորը, ավագանին և այլ պատվական ազնվականները, հավանություն տալով նրա գեղահարմար ու սրբազան կյանքի ընթացքին, նրան նստեցրին սուրբ Գրիգոր Լուսավորչի աթոռին։ Եվ նրա բարեբեր, բեղուն ու ծլարձակող գովքը, որ երևում էր արգավանդ անդաստանի հոգում, մենք այժմ չենք ասի, այլ կթողնենք մեկ այլ տեղի ու ժամանակի։ Բայց Աստծու սուրբ մարդը մինչդեռ իր սքանչելագործ գովելի վարդապետությամբ շինում, հաստատում ու բարեկարգում էր իր հավատացյալ հոտի բարի գործերն ու ընթացքը, առանց վշտակիր հեծության վախճանվեց՝ միայն յոթ ամիս տիրելով հայրապետական աթոռին։

Այնուհետև ես՝ խեղճս, թշվառականս, ողորմելիս՝ Հովհաննեսս, որ հոգևոր խրատով գրեցի սույն գիրքը, ոչ թե արժանիքներիս համար դրվեցի սուրբ աթոռին, այլ թերևս չկարողանալով հակառակվել արքայական կամ նախարարակույտ բազմության հրամանին։ Թեպետև իմ մանկությունից սկսած աշակերտել եմ այդ սուրբ մարդուն՝ Մաշտոցին, բայց նաև մեր միջև մարմնական ազգակցություն ու հարազատություն կա։ Սակայն իմ մեղքերի գերանով կուրացած՝ հարկ չհամարեցի նշմարելու եղբոր աչքի շյուղը կամ տեղյակ լինել Իսրայելի նոր դիվանին։ Բայց կրկին իմ մեջ փառաբանելով հնազանդությունը, որն ամեն մի առաքինության մայրն է, և ունկնդրությունը բարիք համարելով, քան ընտիր զոհը կամ հակառակվելը, բերվեցի այստեղ՝ ինձ համար առաջնորդող հույս թողնելով միայն Աստծու մարդասիրությունը։

Այդ ժամանակներում Երազգավորք մեծ քաղաքագյուղի եկեղեցին, որ հիմնադրվել էր Սմբատ արքայի կողմից, նրա թագավորական ապարանքի մոտ, լրիվ վերաշինվում է և ավարտվում նույն տեղում։ Եվ աստվածային կարգով ցնծության պաշտամունքի համար մեծարում ու փառաբանում էին նրա նավակատիքը։ Եվ չքնաղ ու պատվական զարդերով, ոսկեհյուս հանդերձանքով ու շղարշե ծածկույթով նրան պճնելով՝ վայելչացնում էին, ինչպես նաև համակ ոսկուց պատրաստելով ակնակուռ գոտի՝ բերում ու դնում էին քրիստոնեական սեղանին։

Բայց Վրաց մեծ կուրապաղատ Ատրներսեհը անխոով ու հաստատուն կերպով պահում էր խաղաղության դաշինքն ու սիրո միաբանությունը Սմբատ արքայի հետ՝ բոլոր բաներում իր ամբողջ մտքով, զորությամբ ու մեծ պատկառանքով հնազանդվելով նրան, իբրև իր հորը, կամ թե սրանից առավել իբրև ծառա իր տիրոջից կամավոր կերպով կրելով երկյուղի սահմանը չափավոր մոլուցքով և իր աչքերը

բեալ համակեալ մեծաւ զգուշութեամբ, և նմա զանձն ևս հաւատացեալ։ Ընդ որ յաւէտ իմն հաճեալ հաւանեալ արքայն Սմբատ՝ բազմազեղ նախախնամութեամբ յինքն զնա ածէր յանձանձէր. ապա թագ կապեալ նմա մեծապատիւ ճոխութեամբ և գեղեցկայարմար զարդու, նաև զինու զարդարեալ ըստ օրինի թագաւորաց՝ կացուցանէ զնա թագաւոր Վրաց աշխարհին և երկրորդ իւրոյ տէրութեանն զնա հաստատէ։ Ուստի ապա ընկալեալ զյառաջադիմութիւն արքայական պատուոյն ոչ ինչ թերևս վասն այնորիկ ամբարտաւանեալ քան թէ միշտ ընդ խոնարհս զիջանէր, հեշտ և համբոյր մտօք 'ի նոյն պայման զինքն յարաղրաբար բերեալ արքայի Սմբատայ՝ տայ ըստ առաջին հանդիսադիր կարգացն բարեաց։

Յետ այսորիկ ոստիկանն Ափշնի դարձեալ դաւանս յինքեան բերեալ յոմանց ուղղակարծ լեզուագարաց, և նենգապատիր խաբէութիւն 'ի սիրտ իւր նիւթեալ՝ սկսաւ շրջիլ զքաղաքօք ոմամբք իբրև նուաճել զնոսա։ Եւ ապա գնայր շուէր հասանէր 'ի Տփխիս քաղաք, և անտի ապա իբր հողմավար փոթորկեալ յանկարծակի դիմէր գայր զկողմամբք Շիրակ գաւառի՝ դարձուցեալ զմիտս իւր 'ի հին մոլութիւն և յուսացեալ 'ի կախարդս գաղտնիս, թերևս մարթասցէ դրժել դաւողական հնարիմացութեամբ զարքայն Սմբատ։ Իսկ թագաւորն ստիպով սուղ ինչ գունդ կազմեալ՝ սաստիկ տագնապաւ անկանէր 'ի կողմանս ամրոցացն Տայոց 'ի կալուածս կուրապաղատին Ատրներսեհի՝ սիրեցելոյն իւրոյ։ Իսկ ոստիկանն իբրև ետես, եթէ անհնար է արքայի դաւաճանիլ առ 'ի նըմանէ, և զի միանգամ և երկիցս և երիցս զփորձ առեալ էր՝ դարձեալ ապա յայնց բարուց թուեցուցանէր սակս բարեխորհրդութեան և սիրալիր զթոց զգալն իւր առ արքայ. և ապա շուեալ գնայր 'ի Դվին մայրաքաղաք, և անդ առ 'ի հաւատարմացուցանել ջանայր զաննենգ սիրոյ զդաշինս. և փոխանակ իւր թողեալ զԴեղատն զորդի իւր և զմեծ ներքինապետն, և ինքն հապճեպ տուեալ գնայ յԱտրպատական։ Անդ ապա ընդ յառաջ աճապարէր տիկինն մեծ՝ կինն Սահակայ եղբօր արքայի, զկնի իւր տարեալ ոսկի և արծաթ և կարասի բազում. և հանդիպեալ 'ի Շարուր դաշտի՝ առաջի ընծայէր տրիտուր նմա զպատարագսն տարեալս ընդ իւր. և ընդդճեալ առաջի՝ արտօսրաթոր կականմամբ խնդրէր զորդեակն իւր զՍմբատ, զոր պատանդ իսկ առեալ էր յառաջագոյն ոստիկանին յարքայէն Սմբատայ. և առաջի դնելով նմա զեղուկ աւաղումն այրութեան իւրոյ՝ յայտ ածէր զաղէկոտոր խնամսն։ Ընդ որ յաւէտ իմն ճմլեալ սիրտ ոստիկանին՝ ողորմեալ բարեխնամէր. վասն զի բազում անգամ մարդիկ որ շար են՝ երբեմն և բարի ըստ դիպուածոց

մեծ զգուշությամբ միշտ հառելով արքային, իրեն վստահելով նրան։ Դրան է՛լ ավելի հավանելով՝ Սմբատ արքան բազմաբեղուն նախախնամությամբ նրան բերում է իր մոտ ու հոգ տանում նրա մասին։ Ապա նրան թագադրում է մեծապատիվ ճոխությամբ և թագավորին վայել գեղահարմար զարդերով, ինչպես նաև զենքերով զարդարելով՝ և նրան թագավոր է կարգում Վրաց աշխարհի վրա ու դարձնում իր տերության երկրորդ մարդը։ Ուստի ընդունելով արքայական պատվի առաջադիմությունը՝ նա դրա համար թերևս ոչ թե ամբարտավանում էր, այլ միշտ խոնարհվելով՝ տեղի էր տալիս, դյուրին ու հանդարտ մտքով շարունակ իրեն պահելով Սմբատ արքայի հետ կնքած դաշինքի մեջ՝ [պատիվ] էր տալիս առաջին հանդիսադիր բարի կարգերի համաձայն։

Դրանից հետո ոստիկան Ափշինը, դարձյալ խաբվելով ճիշտ կարծված առանձին լեզվագարներից և նենգամիտ խաբեություն նյութելով իր սրտում, սկսեց շրջել քաղաքներում՝ իբր դրանք նվաճելու համար։ Եվ ապա շվում, գնում ու հասնում է Տփխիս քաղաքը, իսկ այնտեղից իբր հողմից քշվելով, փոթորկի նման հանկարծակի դիմում գալիս է Շիրակ գավառի կողմերը՝ իր միտքը շրջելով դեպի հին մոլորությունը և հույսը դնելով գաղտնի կախարդների վրա, որպեսզի թերևս կարողանա նենգ հնարագիտությամբ դավել Սմբատ արքային։ Շտապ մի փոքր գունդ կազմելով՝ թագավորը սաստիկ տագնապով ընկնում է Տայոց ամրոցի կողմերը, իր սիրեցյալ Ատրներսեհ կուրապաղատի կալվածքները։ Իսկ երբ ոստիկանը տեսավ, որ անհնար է արքային դավաճանել, որ փորձել էր մեկ, երկու, երեք անգամ, դարձյալ այն բարությունից [դրդված]՝ բարեսիրության ու զթության համար արքայի նկատմամբ ցուցաբերում էր [անկեղծ] վերաբերմունք։ Եվ ապա նա մեկնում գնում է Դվին մայրաքաղաքը և այնտեղ ջանում է հավաստիացնել իր աննենգ սիրո դաշինքը։ Իր փոխարեն այնտեղ թողնելով իր որդի Դեղատին ու մեծ ներքինապետին՝ նա շտապ գնում է Ատրպատական։ Այդ ժամանակ շտապում էր նրան ընդառաջ գալ մեծ տիկինը՝ արքայի եղբայր Սահակի կինը՝ իր հետևից տանելով շատ ոսկի, արծաթ, կահ-կարասի ու նրան հանդիպելով Շարուր դաշտում՝ որպես հատուցում նրան է ընծայում իր հետ տարած նվերները։ Եվ ծնկի գալով նրա առաջ՝ արտասվաթոր լացակոծով խնդրում էր իր որդյակ Սմբատին, որին նախապես ոստիկանը վերցրել էր Սմբատ արքայից որպես պատանդ։ Եվ նրան ներկայացնելով իր այրության ախն ու վախը՝ հայտնի էր դարձնում իր աղեկոտոր հոգսը։ Դրա վրա է՛լ ավելի է ճմլվում ոստիկանի սիրտը, ու [նա] խղճում և բարեհոգություն է [ցուցաբերում], որովհետև շատ անգամ մարդիկ, որ շար են լինում,

ինչ լինին։ Եւ առեալ ապա զպատարագս 'ի ձեռաց տիկնոջն՝ տայ նմա զորդին իւր։ Եւ նորա ընկալեալ զմեծապարգևութիւնն՝ դառնայ 'ի տուն իւր։ Իսկ արքայ Սմբատ 'ի դառնալն իւր 'ի Տայոց երթայ հանդիպի ներքինապետին մեծի մերձ յամուրն Անի յեզր Ախուրեան գետոյ 'ի պայման սիրոյ ընդ միմեանս բերեալք։ Ընդ որ յաւէտ հաճեալ ներքինապետն 'ի տեսանել զարքայ՝ խոստովանէր ոչ զոք թերևս համեմատ նմա տեսանել. և ապա համախորհ և համակամ և համագործ յայնմ օրէ և անդր ներքինապետն արքայի լինէր։ Եւ բազում պարգևս և պատիւս ընկալեալ 'ի նմանէ՝ գնայր ներքինապետն 'ի Փայտակարան քաղաք։ Իսկ որդի Ափշնի Դեղատն կաց մնաց 'ի Դվին քաղաքի՝ ոռճիկս պատրաստեալ նմա թագաւորին Սմբատայ սուղ ինչ պակաս քան զամ մի։

Բայց 'ի գնալ ներքինապետին յարքայէ՝ զճանապարհայն 'ի հրապոյրս ցոփութեան բերեալ 'ի բանից բանսարկութեանց ոմանց, որք 'ի շարն հակամիտեալք էին, չուէ զօրու ծանու հրոսակ Գէորգայ նահապետին Սևորդեաց, (որ սակս Սև կոչեցելոյ հաւուն իւրեանց ազգն յայն անուն Սևորդիք անուանէին), և ապա յեղակարծումն ժամու հասեալ 'ի վերայ տարմաբար՝ թէպէտ և յարի արանցն քաջապէս պատերազմ ընդդէմ ներքինւոյն զինեալ. սակայն սակս յանկարծահասն գալոյ ոչ կարացեալ զդէմ ունել, ձերբակալ զԳէորգ առնէին հանդերձ եղբարբն իւրով, որ Արուեսն անուանիւր, և առեալ գնաց 'ի Փայտակարան քաղաք։ Բազում ապա հարցուփորձ մօտալուտ դահիճքն դառնութեան նոցա մատուցանէին՝ ջանացեալ դարձուցանել զնոսա 'ի քրիստոսանուէր օրինացն յանօրէն օրէնս Մահմետին իւրեանց։ Որում ոչ քնաւ տուեալ տեղի բանիցն և ոչ հաւանեալ աղաւաղել կամ փոխանակել զերկնաւոր կենացն զփրկութիւն ընդ անդիւտ կորստեանն և ընդ սնոտիասէր կենացս՝ սրով կատարեցան և զանուն իւրեանց գրեցին 'ի դպրութիւն կենաց։

Իսկ յետ այսորիկ ներքինապետն խուճապեալ և հատուածեալ յԱփշնէ և ընդ իւր առեալ զԱշոտ որդի արքայի, որ էրն իսկ 'ի պատանդի և 'ի դիպահոջ առ ներքինւոյն, այլ և զկին եղբօր նորին Մուշեղայ, զոր գերեալ տարեալ էր 'ի բերդէն Կարուց՝ վաղվաղակի գայ հասանէ առ արքայ Սմբատ և ետ նմա զորդի իւր հանդերձ նուովն։ Ընդ որ յաւէտ իմն խրախ լեալ սակս այցելութեանն Աստուծոյ և փրկութեան գերելոցն՝ պատուասիրապէս յինքն ածէր յանձանձէր զներքինապետն մեծաւ շնորհակալութեամբ և առատաձեռն ձրիւք և պատարագօք ընծայեալ զնա՝ յուղարկէ 'ի կողմանս Ասորեստանի։— Զուերբեմն դիպվածով բարի են դառնում։ Հետո տիկնոջ ձեռքից առնելով նվերները՝ նրան տալիս է իր որդուն։ Իսկ նա ընդունելով մեծ պարգևը՝ վերադառնում է իր տունը։ Իսկ Սմբատ արքան Տայքից վերադառնալուց հետո գնում հանդիպում է մեծ ներքինապետին Անի ամրոցի մոտ, Ախուրյան գետի ափին, և նրանք միմյանց հետ սիրո դաշինք են կնքում։ Դրան է՛լ ավելի հավանելով և արքային տեսնելով՝ ներքինապետը խոստովանում էր, որ թերևս նրա նման ոչ ոքի չի տեսել։ Եվ այդ օրվանից ներքինապետը դառնում է արքայի համախոհը, կամակիցն ու գործակիցը։ Եվ շատ պարգևներ ու պատիվ ընդունելով նրանից՝ ներքինապետը գնում է Փայտակարան քաղաքը։ Իսկ Ափշինի որդի Դեղատը մընաց Դվին քաղաքում, և Սմբատ արքան նրա համար օրապարեն է պատրաստել տալիս մեկ տարուց ոչ պակաս։

Բայց երբ ներքինապետը գնում է արքայի մոտից, ճանապարհին հրապուրվում է դեպի չարը հակամիտած ու բանսարկու մարդկանց խոսքերով, մեկնում է Սևորդյաց Գեորգ նահապետի (իրենց պապի Սև կոչվելու պատճառով նրանց ազգը Սևորդիք էր անվանվում) մեծ զորքի հետ, և այնուհետև նրանք խմբով հարձակում են գործում. և թեպետև արի մարդիկ քաջաբար պատերազմ [են մղում] սպառազինված ներքինու դեմ, սակայն հանկարծակի հարձակման պատճառով չեն կարողանում առնել նրանց դեմը, բռնում են Գեորգին իր եղբոր՝ Արվեսի հետ և առնում գնում են Փայտակարան քաղաքը։ Այնուհետև մոտ գտնվող դահիճները, հարցաքննելով նրանց, մեծ նեղություն էին պատճառում նրանց ու աշխատում էին քրիստոսանվեր կրոնից նրանց դարձնել դեպի իրենց Մահմեդի անօրեն կրոնը։ Այդ խոսքերին բնավ տեղի չտալով և չհամաձայնվելով երկնավոր կյանքի փրկությունը աղավաղել կամ փոխանակել անդառնալի կորստյան ու սնոտիապաշտ կյանքի հետ՝ նրանք սրի քաշվեցին և իրենց անունները գրեցին կենաց գրքում։

Իսկ դրանից հետո ներքինապետը, վախենալով ու հեռանալով Ափշինից և իր հետ վերցնելով արքայի որդի Աշոտին, որը պատանդ էր և գտնվում էր ներքինու մոտ՝ բանտում, ինչպես նաև նրա եղբայր Մուշեղի կնոջը, որին գերել տարել էին Կարուց բերդից, իսկույն գալիս հասնում է Սմբատ արքայի մոտ և նրան է տալիս նրա որդուն հարսի հետ միասին։ Է՛լ ավելի ուրախանալով Աստծու նախախնամության ու գերիների փրկության համար՝ նա հոգ է տանում սիրով իր մոտ բերել ներքինապետին մեծ շնորհակալությամբ. և նրան մեծարելով առատ պարգևներով ու ընծաներով՝ ուղարկում է Ասորեստանի կողմերը։ Մեկ-

եալ գնացեալ ներքինւոյն 'ի սահմանս Եգիպտոսի՝ և ոնդ ըմբռնեալ սպանանի յամիրապետէն իւրմէ։

Զայս ամենայն լուեալ ոստիկանն Ափշին իբրև զանգայոագեղ գազան զայրագնութեամբ մռմռեալ ընդդէմ Սմբատայ՝ իբր թէ զնա գոլ խրատու և պատճառ գործեցեալ իրին շարի 'ի ներքինւոյ իւրոյ, և մեծագոյն իմն ամպրոպ և ուղխ շարի 'ի վերայ խրոխտայր հասուցանել արքայի. հրովարտակս ընդ բոլոր ոլորտս իշխանութեան իւրոյ սփռեալ, զի առ նա վաղվաղակի հասցեն արի արք քաջք երիվարօք, զինուք և զարդուք և լեգէօն հետեւակախումբ զօրօք։ Արդ՝ մինչդեռ եկեալ դիմեալ հասեալ ժողովեալ գումարեալ էին բազմութիւնք զօրացն, և հանդերձեալ էր ելանել շուտ գալ և մղձկեալ սրտին զդառնութեան թոյնսն յարքայն թափել՝ յանկարծակի անկեալ յախտ դժնդակ ցաւոց, ջեռաւ փոր նորա և տրորեալ գոգոց նորա 'ի վայր քամեալ մղէին յորովայնէ անտի կոտորումն աղեաց նորա. և նախ քան զքակտիլ հոգւոյ նորա 'ի մարմնոյն՝ բղխեաց 'ի նմանէ հոտ մահու։ Եւ այսպէս հեղձամղձուկ սատակեալ՝ էջ 'ի գժոխս անհնարին դառնութեամբ։ Ընդ նմին ևս և 'ի զօրաց անտի նորա 'ի նոյն ցաւս դառնիճ տաղտկութեան հարեալք բազումք սատակէին, և մնացեալքն ցանեալ ցրուէին յիւրաքանչիւր տեղիս։ Եւ այսպէս ապա աղօթահայց պաղատանք առ Աստուած թագաւորին Սմբատայ և բովանդակ ընդ մեզ ևս կղերց եկեղեցեաց Քրիստոսի՝ արտօսրաթոր խնդրուածք լսելի լինէր յականջս Տեառն զօրութեանց. և ոչ եկն 'ի վերայ մեր ոտն ամբարտաւանութեան նորա և ոչ մեղկաշօշոփ ձեռք նորա կարաց դողացուցանել զմեզ. և ոչ ուրախ եղև 'ի կեանս իւր խաւարասէր թշնամին, այլ կորեաւ յունայնութեան յուսոյ. և հաւատացեալ հօտ Քրիստոսի հանդերձ հօտապետօք առաջնորդեալք՝ զօրացան 'ի նոյն ինքն 'ի հանդիսադիրն Քրիստոս, որ կամի, զի ամենայն ոք կեցցէ և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցէ։

Իսկ Դեղատն՝ որդի Ափշնի, իբրև լուաւ զսատակումն հօր իւրոյ՝ ելեալ գիշերի գաղտաբար, գնաց փախստեայ յԱտրպատական յաշխարհ։ Զայսու ժամանակաւ մեծ իշխանն Արծրունեաց Աշոտ, որ 'ի բողբոջից բուսոյ Սենեքերիմայ արքայի՝ ելեալ զգնայր շրջէր զկողմամբք իւրոյ տէրութեանն փոքր ինչ գնդով. և հասեալ 'ի ձորակ մի, զոր Փորակ Լմբայ անուանեն՝ երեկօթս անդ առնէին յագարակի միոջ, յորում բնակէին Գաբաւոնացիք՝ ընդ յարկաւ շինուածի տանցն մտեալ զետեղեալ սակս ձմեռային ժամանակին։ Իսկ Հասանն Արծրունի՝ որդի Վասակայ ուրացելոյ զՔրիստոս և հօրաքեռ որդի նոյն իշխանին Աշոտոյ,

նելով, գնալով Եգիպտոսի սահմանները՝ ներքինապետը այնտեղ բռնըվում ու սպանվում է իր ամիրապետի կողմից։

Երբ այս ամենը լսում է ոստիկան Ափշինը, իբրև անվանդակ գազան կատաղությամբ մռնչում է Սմբատի վրա, որպես թե նրան համարելով խրատատու և իր ներքինու կողմից վատ գործեր կատարելու պատճառ, և նա հոխորտում էր արքայի վրա թափել մեծ ամպրոպ ու դաժան հեղեղ։ Նա իր տերության բոլոր կողմերը հրովարտակներ է ուղարկում, որպեսզի շտապ իր մոտ հասնեն արի ու քաջ մարդիկ՝ երիվարներով, զենքերով, զարդերով և հետևակ զորքերի գնդերով։ Արդ՝ մինչդեռ զորքերի բազմությունները եկել, դիմել, հասել ու հավաքվել էին [նրա մոտ], և երբ նա պատրաստվել էր վեր կենալ գալ և իր նեղված սրտի դառն թույնը թափել արքայի վրա, հանկարծակի ընկնում է սաստիկ ու ծանր հիվանդության մեջ. այրվում է նրա փորը, քայքայվում են նրա խորշերը և որովայնից դուրս էին մղվում նրա կտոր-կտոր եղած աղիքները։ Եվ նախքան մարմնից նրա հոգու բաժանվելը նրանից մահվան հոտ էր փչում։ Եվ այսպես հեղձամղձուկ կերպով մեռնելով՝ [նա] սաստիկ դառնությամբ իջավ դժոխք։ Նրա զորքից շատերը, նրա հետ նույն ցավերի ու դառն նեղության մեջ ընկնելով, մեռնում էին, իսկ մնացածները ցրվում, գնում էին իրենց տեղերը։ Եվ այսպես Սմբատ թագավորի և Քրիստոսի եկեղեցիների՝ մեզ հետ եղող բոլոր հոգևորականների Աստծուն [ուղղված] մաղթողական պաղատանքներն ու արտասվաթոր խնդրանքը լսելի էին լինում զորությունների Տիրոջ ականջներին։ Եվ մեզ վրա չհասավ նրա ամբարտավանության ոտքը, ոչ էլ նրա թույլ ձեռքը կարողացավ դողացնել մեզ, և ոչ էլ իր կյանքում ուրախացավ խավարասեր թշնամին, այլ կորավ հույսի ունայնության մեջ։ Եվ Քրիստոսի հավատացյալ հոտը, հոտապետների կողմից առաջնորդվելով, զորացավ հենց նրանով՝ հաղթող Քրիստոսով, որը կամենում է, որ ամեն մեկը ապրի և գա ճշմարիտ գիտության։

Իսկ Ափշինի որդի Դեղատը, երբ լսեց իր հոր մահը, գիշերով գաղտնի դուրս գալով՝ փախավ գնաց Ատրպատական աշխարհը։ Այդ ժամանակներում Արծրունյաց մեծ իշխան Աշոտը, որ սերում է Սենեքերիմ արքայի սերնդից, մի փոքր գնդով ելնում, գնում ու շրջում էր իր տերության կողմերում։ Եվ հասնելով մի ձորակի, որ Փորակ Լմբա են անվանում, գիշերում են այնտեղի մի ագարակում, որտեղ բնակվում էին գաբաոնացիները՝ ձմեռային ժամանակի պատճառով մտնելով ու տեղավորվելով շենքի ներքևի հարկի տակ։ Իսկ Վասակ Արծրունին՝ Քրիստոսին ուրացած Վասակի և նույն Աշոտ իշ-

բնակութիւն կայանի իւրոյ ունէր զամրոցն անուանեալ Սևան։ Իսկ իբրև լուաւ զիշխանէն յայնմիկ Փորակի գալ յիջեւանս՝ դաւաճանեալ 'ի շար դիւէ անտի և կամաւոր կուրութիւն յինքն կրեալ, զօր 'ի գաղտնիս իմն կազմէր, սրիկայս պատրաստէր, աղեղնաւորս շեշտաւորս սուսերաւորս վահանավառս կորովիս զէնս շարժեալ. և ինքն իսկ հուպ ընդ նոսին տրեխաւորեալ և յաղակարծս դիմեալ շուեալ գիշերի հասանէին 'ի վերայ իշխանին. և պարայածեալ պատեալ շրջափակեալ պաշարեալ պահէին զդրունսն տանցն, յորում օթագայեալն լինէր իշխանն Աշոտ իւրայօքն 'ի դիպահոջ իմն զնոսա բերեալ և 'ի ձեռս կարծեցեալ ըմբռնեալ։ Իսկ ապա Հասանն յեցեալ 'ի նիզակն զոր ունէր՝ և կիցս իբրև զայծեամն ընկեցեալ 'ի տանիսն, յորում իշխանն կայր՝ վազէր. և 'ի տրոփական դոփմանէ ոտիցն թնդեալ տանիքն և 'ի վայր փլուզեալ՝ հոսեալ անկանէր զկնի փլուզմանն Հասանն 'ի տուն անդ։ Իսկ ապա 'ի հազագաստիւռ ձայնէ խօսիցն Հասանայ՝ զնա ծանուցեալ և վաղվաղակի ըմբռնեալ ածէին զնա առ իշխանն։ Իսկ աղխատրոյզ շփոթմանն իրազգած եղեալ զօրացն Հասանայ՝ իբրև զծուխ 'ի մրրկէ հալածեալ և փախստեայ անհետ կորնչէին։ Եւ այսպէս զգուրն, զոր և փորեաց և պեղեաց Հասանն՝ 'ի նոյն ընկլուզաւ, զոր և գործեաց։ Իսկ իշխանն Աշոտ 'ի շղթայս կապարանի զնա արկեալ՝ և առեալ տարեալ յամրոցն Սևան, ի դուրս առ ինքն զամրոցն տալ հայցէր։ Իսկ մայրն Հասանայ և եղբայր նորուն, որ առ 'ի մօրէ և ոչ 'ի հօրէ՝ բռնազբօսեալ՝ ոչ կամեցան տալ զբերդն, ոչ կարացեալ վստահ լինիլ 'ի խոստացեալ բանս իշխանին վասն ողջանդամ զկապեալն Հասան թողլոյ։ Ապա զդացուցեալ արքայի Սմբատայ՝ հարկ առնէր ինձ երթալ յամրոկ գործոյն, թերևս կարողութիւն լիցի փակել զկորստական դուռն, զոր անձամբ անձին եբաց Հասան։ Իսկ իմ երթեալ շուեալ և համոզեալ զտիկինն վասն զամրոցն տալոյ և փրկելոյ զՀասան 'ի մահու երկիւղէ և ողջանդամ զնա լուծանել 'ի կապարանէն՝ ընկալայ ապա և յիշխանէն յետկար սաստիկ երդմանց՝ լուծանել թողուլ ողջանդամ և անվնաս զՀասան։ Իսկ ես իբրև առեալ ետու զամրոցն 'ի ձեռն իշխանին, ապա 'ի նաներական շար խորհրդոց աղատաց ոմանց հրապուրեալ՝ փորէ զաչսն Հասանայ, կուրացուցեալ զնա տգիտաբար 'ի կորուստ անձին իւրոյ. վասն զի որք երդմանց օրինաց և միջնորդաց առաջնորդաց հեստեալք և գիւրափոխք գտանին 'ի հակամիտութիւն հակառակացն բերեալ՝ այնպիսիքն մահու անձանց առիթք գտեալք, ոչ կարեն հաստատուն կեանս իւրեանց ստանալ։ Իսկ իմ զաւետարանական իշխանութիւնն 'ի գործ արկեալ և բանիւ սահմանականաւ կապեալ զիշխանն՝ տրտում թախանձանօք անցեալ գնացի։ Ապա յետ ամի միոյ անցելոյ՝ տգիտութիւն

խանի հորաքրոջ որդին, իրեն բնակության տեղ էր ընտրել Սևան կոչվող ամրոցը։ Իսկ երբ նա լսեց այն Փորակում իջևանած իշխանի մասին, խաբվելով այն շար գևից և կամավոր կուրությունը իր վրա կրելով, գաղտնի զորք է կազմում ու պատրաստում սուսերավոր ավազակներ, շեշտակի աղեղնավորներ, կորովի սուսերավորներ, վահանակիրներ, որոնք վարժ էին զենք օգտագործելու մեջ։ Եվ ինքը անմիջապես նրանց հետ տրեխավորվելով և հանկարծակի գիշերով գնալով՝ հարձակվում է իշխանի վրա։ Եվ պատվելով, շրջափակելով, պաշարելով՝ պահում են դրուները այն տների, որտեղ մնում էր Աշոտ իշխանը յուրայինների հետ միասին, որոնց կարծես բռնել, գցել էր բանտ։ Իսկ Հասանը, հենվելով իր նիզակի վրա, այծյամի նման վազում, իրեն միանգամից գցում է այն տանիքի վրա, որտեղ գտնվում էր իշխանը։ Նրա ոտքերի թնդյունից ու դոփյունից տանիքը դղրդում է, փլուզվում, թափվում, իսկ փլուզումից հետո էլ Հասանն է սահում ընկնում այդ տան մեջ։ Իսկ հետո Հասանի խոսքի հազագային ձայնից ճանաչելով նրան՝ իսկույն բռնում են նրան ու բերում իշխանի մոտ։ Երբ Հասանի զորքը տեղյակ է դառնում այդ խառնաշփոթությանը, մրրիկից հալածվող ծխի նման փախչում ու անհետ կորչում է։ Այսպիսով, Հասանն ընկավ այն փոսը, որը փորեց ու պատրաստեց ինքը։ Իսկ Աշոտ իշխանը, նրան շղթայակապ անելով, իր հետ առավ տարավ Սևան ամրոցը և դրսից պահանջում էր ամրոցը իրեն տալ։ Իսկ Հասանի մայրը ու նրա եղբայրը, որը նույն մորից էր և ոչ նույն հորից, ուժ գործադրելով՝ չէին ուզում բերդը նրան տալ՝ չկարողանալով վստահ լինել իշխանի խոստումներին, թե նա շղթայակապ Հասանին ողջ ու առողջ կթողնի իրենց։ Այնուհետև Սմբատ արքան հասկացրեց ու ստիպեց ինձ՝ գնալ ու գործն ավարտել, թերևս հնարավոր լիներ փակել կորստյան այն դուռը, որը անձամբ բացեց Հասանը։ Իսկ ես գնացի և համոզեցի տիկնոջը, որպեսզի նա տա ամրոցը, Հասանին փրկի մահվան երկյուղից, և [որպեսզի] ողջանդամ նրան արձակեր բանտից, հետո ես իշխանից երդմնագիր ստացա ողջանդամ ու անվնաս բաց թողնել Հասանին։ Իսկ երբ ես ամրոցը վերցնելով տվեցի իշխանի ձեռքը, ապա խաբվելով առանձին ազնվականների նանիր ու շար խորհուրդներից, նա փորում է Հասանի աչքերը։ Եվ տգիտաբար կուրացնելով նրան՝ նա իրեն մատնում է կորստյան։ Քանի որ ովքեր չեն հնազանդվում կրոնական երդմանը և դյուրափոփոխ են լինում ու հակվում սատանայի կողմը, այնպիսիները իրենց մահվան առիթ գտնելով՝ ճշմարիտ կյանք չեն կարող ստանալ։ Եվ գործի դնելով ավետարանական իշխանությունը և բանադրական խոսքով կաշկանդելով իշխանին՝ ես տրտում թախանձանքով անցա գնացի։

յանդգնութեան արկաւ իբրև զօթոց զբարեվայելուչ և զպատկառող և զչքնաղատեսակ զիտական Աշոտոյ։ Եւ այսպէս զվախճան կենաց ընկալեալ 'ի տիս երիտասարդութեան՝ սաստիկ սուգ տրտմութեան զմեօք զեղեալ յարդարէր։ Զկնի ապա եղբայր նորուն Գագիկ պայազատէ զիշխանութիւնն զայն մեծ. և զկրտսեր եղբայր նորուն զԳուրգէն կացուցանէ մարզպան Հայոց արքայն Սմբատ։

Բայց Թագաւորն Սմբատ իբրև լուաւ, եթէ Յուսուփ պայազատէ զպետութիւնն զայն փոխանակ Ափշնի եղբօր իւրոյ, եղ 'ի մտի իւրում ոչ ևս դարձեալ դաւանս կրել 'ի խափանեալ երկիւղէն, և կամ դաշինս սիրոյ դնել ընդ այնոսիկ, որոց իրաւունք բարձեալ է յերեսաց նոցա և բնաւ հեռացեալ բան արդար 'ի լեզուաց նոցա։ Ապա գրէ հրովարտակս և առաքէ դեսպանս և ընծայս զեղեցկայարմարս Իսմայէլեան ամիրապետի 'ի Բաբիլոն, և հայցէ 'ի բաց զինքն հատանել յազգէ յայնմանէ, որ իրաւունք Աստուծոյ տարամերժեալ տրոհեալ է 'ի նոցանէ, և 'ի բարուց անտի՝ որ 'ի շարն միշտ հակամէտ գտեալ։ Զոր իբրև ընթերցեալ զնամակն և լուեալ զպայման պատգամացն՝ վաղվաղակի խնդութեամբ, զոր խնդրեացն՝ կատարէր. և թեթևաբեռն զսակն արքունի արարեալ և յինքն իսկ հրաւիրեալ՝ առ ինքն զմիտս թագաւորին կացուցանէր։ Եւ ապա երևելի զգեստ արքունական, և թագ արքայական և կամար ականակապ 'ի համակ ոսկոյ, և սուսեր պատուական և երիվարս օգագնացս իմն կազմուածով զինուց և զարդուց առաքէ Սմբատայ։ Զոր իբրև առընկալաւ՝ յոյժ ուրախ լեալ զուարթացեալ զուարճացաւ։ Եւ այնուհետև 'ի կարգս այլոց ևս հնազանդելոց և նա ևս մտանէր 'ի կապուածս լծոյ ամիրապետին. և այսպէս անտարրապէս և անշուշտ 'ի կամս արքունականս զկամս իւր բերեալ նուաճէր։

Զայսու ժամանակաւ մեծ սպարապետն Հայոց Շապուհ՝ եղբայր արքային Սմբատայ, կիսակտուր կենօք վճարեալ զսնոտիասէր կեանս՝ վախճանեցաւ, յաւելեալ առ հարս իւր։ Եւ անդ ապա շուեալ եկեալ արքայ Սմբատ համազունդ իւրայօքն համազգեօք՝ և արարեալ կոծ մեծ 'ի վերայ նորա՝ եդին զնա ընդ հարս իւրում 'ի շիրիմս քնարանացն, որ 'ի քաղաքագեղն Բագարանու։ Եւ ապա կացուցանէր արքայ Սմբատ զանձնագեղ և զբարեվայելուչ երիտասարդն զԱշոտ՝ որդի Շապհոյ, սպարապետ Հայոց փոխանակ հօր իւրոյ։ Իսկ նա 'ի սկզբան սպարապետական պայազատութեանն խորհուրդ բարեաց զանձամբ արկեալ՝ շինէ ապա զպճնապայծառ եկեղեցին Բագարանու, որ 'ի վերայ Ախուրեան գետոյ. և զարդարէ բազում և երևելի սպասուք, և առնէ նաւակատիս աստուածային զոգցես պատշաճողութեամբ։ Զկնի ապա հիմնադրէ եկեղեցի 'ի քաղաքագեղն Կողբ բազմածախ փարթամութեամբ,

Ապա մեկ տարի անցնելուց հետո հանդուգն տգիտությունը, իբրև ծածկոց, պատեց Աշոտի բարեվայելուչ, պատկառելի ու չքնաղատես տեսողությունը։ Եվ այսպես երիտասարդ տարիքում ընդունելով կյանքի վախճանը՝ նա սաստիկ սուգ ու տրտմություն գցեց մեզ վրա։ Այնուհետև այն մեծ իշխանությունը ժառանգում է նրա եղբայր Գագիկը, և Սմբատ արքան նրա կրտսեր եղբայր Գուրգենին կարգում է Հայոց մարզպան։

Բայց Սմբատ թագավորը, երբ լսեց, որ այն պետությանը Ափշինի փոխարեն իշխում է նրա եղբայր Յուսուֆը, որոշեց այլևս երկյուղից շխաբվել կամ սիրո դաշինք կնքել նրանց հետ, որոնց իրավունքը վերացվել է նրանց պատճառով, և արդար խոսքը բոլորովին հեռացել է նրանց լեզվից։ Ապա հրովարտակներ է գրում և գեղահարմար ընծաներով սուրհանդակներ առաքում Բաբելոն, իսմայելյան ամիրապետի մոտ։ Եվ նրանից խնդրում է իրեն զատել այն ազգից, որ Աստծու իրավունքը բաժանել ու տրոհել է նրանցից, և այն վարվելակերպից, որ միշտ հակամիտել է դեպի շարը։ Նա երբ ընթերցում է նամակը և լսում հրամանի պայմանը, անմիջապես ուրախությամբ կատարում է նրա խնդրանքը։ Թեթևացնելով արքունի տուրքը և նրան էլ իր մոտ հրավիրելով՝ թագավորին դարձնում է իրեն համամիտ։ Եվ ապա Սմբատին առաքում է արքունական նշանավոր զգեստ, համակ ոսկուց [պատրաստված] ականակուռ գոտի, պատվական սուսեր, սրարշավ երիվարներ՝ զարդարված զենքերով ու զարդերով։ Դրանք երբ նա ընդունեց, խիստ ուրախացավ, զվարթացավ, զվարճացավ։ Այնուհետև նա ևս մտնում է մյուս հնազանդների շարքի մեջ և ընկնում ամիրապետի լծի տակ։ Եվ այդպես պարզապես ու ստուգապես իր կամքը մոտեցնելով արքունական կամքին՝ նվաճում է նրան։

Այդ ժամանակներում Հայոց մեծ սպարապետ Շապուհը՝ Սմբատ արքայի եղբայրը, անկատար թողնելով իր սնոտիասեր կյանքը, վախճանվեց՝ միանալով իր հայրերին։ Եվ ապա Սմբատ արքան յուրայինների ու համազգիների հետ միասին գալիս է այնտեղ ու մեծ կոծ անում նրա վրա, որին թաղեցին իր հայրերի մոտ, այն գերեզմանոցում, որ գտնվում է Բագարան քաղաքագյուղում։ Այնուհետև Սմբատ արքան Շապուհի որդուն՝ գեղեցկատես, բարեվայելուչ երիտասարդ Աշոտին, իր հոր փոխարեն նշանակում է Հայոց սպարապետ։ Իսկ նա, իր սպարապետական իշխանության սկզբում համակվելով բարի խորհրդով, շինում է Բագարանի պճնազարդ եկեղեցին, որ գտնվում է Ախուրյան գետի ափին։ Եկեղեցին զարդարում է բազում նշանավոր սպասքներով և ասես աստվածային վայելչությամբ կատարում է նավակատիք։ Հետո Կողբ քաղաքագյուղում բազմածախս փարթամությամբ հիմնադրում

և ստիպով ջանայր գտանել և զկատարումն նորա, թէ տէր կամեսցի։ Յետ սակաւ ժամանակի ապա վախճան կրէր 'ի կենացս այսոցիկ և միւս եղբայրն արքայի Դաւիթ, որ էր իշխան իշխանացս Հայոց՝ այր համեստ և հարթ հաւասարութեամբ 'ի բոլոր գործառնութիւն բարեաց. ընդ որ և յաւէտ իմն սգացեալ արքայի և տագնապաւ տարակուսանաց մխեալ 'ի խորս խաւարին սգոյ՝ 'ի մշտնջենաւոր տխրութիւնս զինքն արկեալ. ուստի և մխիթարական կարգօք հաստատեալ իմ զնա 'ի յոյս կենացն անմահից՝ վերականգնեցի 'ի գլորմանէն յիրս գործոց թագաւորական յարդարմանց, հոգս տանիլ պիտառութեան կենցաղականացս, որ հաւատացաւ նմա յԱստուծոյ խնամել զհօտ իւր։

Բայց ոստիկանին Յուսփայ յաւէտ իմն շար թուեալ հատուածիլն 'ի նմանէ թագաւորին Սմբատայ, և իմաստուն կորովութեամբ կշռեալ զգործ իւր՝ ջանահնար լինէր յինքն դարձեալ դարձուցանել և միահաղորդ զնա առնել՝ որպէս երբեմն էր ընդ եղբօր նորա Ափշնի։ Եւ վասն զի նախ յամիրապետէ անտի հայցեալ առ ինքն զՍմբատ դարձուցանել՝ և ոչ եղև ունկնդրութիւն նմա և ոչ եհաս երազայոյս կարծեացն. այնուհետև ապա իբր 'ի կարգս խռովութեան վարեալ և թիկունս դարձուցեալ՝ զօր բազում գումարէ և չու յուղի անկեալ՝ գայր հասանէր 'ի Փայտակարան քաղաք. և անտի ելեալ վաղվաղակի ընդ Ուտի գաւառ՝ գայ մինչև ցՏաշրատափ։ Զայս իբրև լսէր արքայ՝ զօրաց բազմաց 'ի միասին հորդան տուեալ՝ երթեալ ունէր զկիրճսն և զնեղուցսն պողոտայիցն կողմանցն Աշոցաց և Տաշրաց, ոչ տալ նմա թոյլ հետի աղաչաւ անցանել։ Իսկ ապա զայն տեսեալ Յուսփայ գաղտաբար իմն զարևմտեայ կողմամբ լերին պարառոցեալ՝ ընդ ցածուն վայրս լերինն յարձանց անկանէր յայսկոյս 'ի գաւառն Շիրակայ. և անդ երեկօթս արարեալ՝ վաղվաղեալ ճեպեալ հասանէր 'ի Դվին քաղաք։ Իսկ արքայ իբրև յապագայս իմն իմացեալ զչուելն Յուսփայ ընդ արևմտեայ կողմն լերինն, թէպէտև հետամտէին զկնի, սակայն ոչ ժամանեալ հասանել՝ գումարտակ շինէր 'ի քաղաքագիւղն Արուճ, 'ի ծործորս Արագած լերին։ Իսկ իբրև գիտաց ոստիկանն Յուսուփ զմերձ առ նա լինելն արքայի՝ առաքէ զմի 'ի պատուականաց իւրոց անտի 'ի քարտուղարաց՝ յԱսորի ազգէ և դենիւ քրիստոնեայ, յաւէտ իմն սիրալիր հեշտ և կամակ և համբոյր պատգամօք և բազում պատուասէր նախախնամութեամբ դաշինս ուխտից ազդեալ 'ի սիրտ արքայի. և զամենայն վախս և զբաղայս 'ի բաց 'ի խորհրդոց նորա տրոհեալ վտարեալ. այլ և զսակն արքունի 'ի կամս անձին նորա ըստ կարի և կամաց թողացուցեալ՝ միայն թէ ընդ նմա յուխտ խաղաղութեան հարթհաւասար դարձցի։ Ապա զայնպիսի բարի լուրս լուեալ բարեզգեաց բանի պատգամաց և ախորժեալ 'ի կամս

է եկեղեցի և ջանում շտապ ավարտել այն, եթե տերը կամենա։ Կարճ ժամանակ անց նա վախճանվում է, և [նշանակվում է] արքայի մյուս եղբայրը՝ Դավիթը, որը Հայոց իշխանաց իշխան էր՝ համեստ ու բոլոր բարի գործառնությունների մեջ հարթ ու հավասար [ընթացող] մի մարդ։ Դրա համար է՛լ ավելի սգաց արքան և տագնապով ու տարակուսանքով մխրճվեց սգի խավարի խորքերը՝ իրեն մատնելով մշտնջենական տխրության։ Ուստի և մխիթարական կարգով հաստատելով անմահ կյանքի հույսի մեջ՝ ես նրան կանգնեցրի գլորվելուց՝ բարեկարգելու թագավորական գործերը և հոգ տանելու երկրային կարիքների համար, որ վստահվեց նրան Աստծուց՝ խնամելու իր հոտը։

Բայց ոստիկան Յուսուֆին ավելի շար բան էր թվում Սմբատ թագավորի հեռանալը իրենից, և անսխալ իմաստությամբ չափելով իր գործը՝ նա ճար էր փնտրում նրան կրկին իր կողմը դարձնել, նրա հետ ընկերանալ, ինչպես որ մի ժամանակ՝ նրա եղբայր Ափշինի հետ։ Նա նախ ամիրապետին խնդրեց՝ Սմբատին իր կողմը դարձնելու համար, բայց նա չլսեց, և ինքը չհասավ իր երազած հույսին։ Այնուհետև խռովության կարգով շարժվելով ու արհամարհելով՝ նա մեծ զորք է հավաքում, ճանապարհ ընկնում ու գալիս հասնում է Փայտակարան քաղաքը, իսկ այնտեղից շտապ անցնելով Ուտի գավառով՝ գալիս է մինչև Տաշրատափ։ Այս բանը երբ լսում է արքան, բազում զորքով շարժվելով՝ գնում պահում է Աշոցքի ու Տաշիրքի կողմերի ճանապարհների կիրճերն ու նեղ տեղերը՝ նրան թույլ չտալով ոտքի ճանապարհով անցնելու։ Այդ բանը տեսնելով և գաղտնի շրջապատելով լեռան արևմտյան կողմը՝ Յուսուֆը բարձր լեռան ցածր տեղերով ընկնում է Շիրակ գավառի այս կողմը ու այնտեղ գիշերելով՝ շտապ հասնում է Դվին քաղաքը։ Իսկ արքան հետագայում երբ իմանում է դեպի լեռան արևմտյան կողմը Յուսուֆի գնալու մասին, և թեպետև նրանք հետամտում էին նրան, սակայն չկարողանալով հասնել՝ նա զորքը հավաքում է Արուճ քաղաքագյուղում, Արագած լեռան ծործորներում։ Իսկ ոստիկան Յուսուֆը երբ իմացավ արքայի մոտ լինելը իրեն, նա ուղարկում է առենադպիրներից մի պատվական մարդու՝ ազգությամբ ասորի, հավատով քրիստոնյա, և միշտ սիրալիր, հաճելի, դյուրին պատգամով ու շատ պատվասեր նախախնամությամբ կնքված դաշինքով ազդում է արքայի սրտի վրա։ Նա ամբողջ վախն ու դողը տրոհում ու վտարում է նրա մտքից, իսկ արքունի տուրքն էլ թողնում է նրա կամքով ու կարողությամբ, միայն թե նրա հետ կնքի խաղաղության հարթ ու հավասար դաշինք։ Ապա լսելով բարեկարգ պատգամի այդպիսի բարի լուրը, ախորժելով իր կամքով ու հրաժեշտի հրաման տալով՝ նա հաճելի խոս-

իւր՝ արարեալ հրաժեշտ բանից հեշտականաց փոխարէն պատասխանի մատուցանէ քարտուղարին 'ի բոլոր արգասիս սիրոյ ըստ նմին սակի. ապա յետկար երդմանց միմեանց կնքեալ տային։ Իսկ արքայ դարձեալ չուէ գնայ 'ի գլուխ զազաթան Երասխաձորոյ 'ի գիւղն Նախճրաձոր անդ ձմերել, վասն զի ոստիկանին կա՛մ եղև զհիւսիսային դառնաշունչ ժամանակ ձմերային ցրտոյն 'ի Դվին անցուցանել. և ապա յայնմ սառնասոյզ յեղանակի գեղեցիկ իմն և բազում առ միմեանս բերէին հարթ յարմարութիւն սիրոյ առատ ձեռաձրիւք* ըստ պիտառութեան ձմերայնոյն։ Իսկ անդ ապա թագաւորն Վրաց Ատրներսեհ պատուասէր պայմանի և սրընթաց ոտիւք արագեալ 'ի տես արքայի Սմբատայ առ 'ի միասին տօնախմբել զօր մեծի պասեքի Զատկին՝ յուզարկեցաւ յարքայէ բազմաբաշխ և երևելի ընծայիւք։ Իսկ արքայ Սմբատ չուէր գնայր յարքունական յապարանս իւր 'ի քաղաքագիւղն Երազգաւորս։ Եւ իբրև 'ի բաց եդաւ ձմերային ձիւնախաղխաղ սառնամանեաց ցրտութիւնն և գարնանային հարաւահողմն շնչեաց, զտեղին փոխարերեաց ապա ոստիկանն Յուսուփ. բազում երիվարս սրավարս, սոսս և ահիպարանոցս պատրաստեալ՝ բազմազան պճնայարմար զարդուք և զինուք ոսկեսանձ ոսկենկար պաճուճանօք, այլ և թա՛գ ևս յոսկւոյ Սոփերայ կազմեալ, և 'ի նմա յելուզեալ յեռեալ վարսակալ մարգարտատող տպազարդութիւնս, և այլ ևս ականս պատուականս և բազում և երևելի զգեստ արքունականս ոսկեճամուկս և շղաշատեռն հրաշանկարս միանգամայն՝ առաքէ 'ի պատիւ մեծարանաց արքային Սմբատայ։ Այլ և Աշոտոյ՝ երիցու որդւոյ արքայի, նորանշան իմն պատիւ յարդարեալ իբր օդապարիկ իմն երիվար գեղեցիկ զարդուք և զինուք և պերճապաճոյճ երանգս զգեստուց, և կամար ականակապ ընդ մէջ ածեալ՝ և կացուցանէ զնա իշխան իշխանացս Հայոց։ Բայց և ես ևս, որ զայս գրեցի՝ պատուեցայ պատուասիրաբար յոստիկանէն զգեստուք ըստ օրինի կարգիս. և ջորի պաճուճաբար ոսկեզօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ։ Իսկ արքայի խրախ լեալ 'ի բարեձիր պարգևս նորա՝ և ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս նմա ընծայէր բարեվայելուչ և չքնաղատես և երևելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց, և ըմբակս և նուագս և կամար 'ի համակ ոսկւոյ՝ գործ Հռոմայական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակւոյ, առաւել ևս տասնապատիկ յաւելուածով քան զմիանգամայն իսկ ընկալեալն

* Գուցէ «առատաձեռն ձրիւք»

քերի փոխարեն ատենադպիրին պատասխանում է սիրո ամբողջ արգասիքով և նույն պայմանով։ Հետո նրանք երդմնագիր են կնքում ու տալիս միմյանց։ Իսկ արքան դարձյալ մեկնում գնում է Երասխաձորի զազաթը, Նախճրաձոր գյուղը՝ այնտեղ ձմեռելու, որովհետև ոստիկանը ցանկացավ հյուսիսային ձմեռային ցուրտ ժամանակն անցկացնել Դվինում։ Եվ այդ սառատիկ սառը եղանակին նրանք գեղեցիկ կերպով միմյանց բերում էին ձմեռվա համար պիտանի ու հաճելի հարմարություններ և լավ ու առատ ընծաներ*։ Իսկ այն ժամանակ Վրաց Ատրներսեհ թագավորը սրընթաց ոտքերով շտապում էր պատվասիրությամբ տեսնելու Սմբատ արքային և նրա հետ միասին հանդիսավոր ձևով տոնելու զատկի մեծ պասի օրը։ Նա արքայի կողմից ուղարկվեց բազմաբաշխ ու երևելի ընծաներով։ Իսկ Սմբատ արքան շարժվում գնում է իր արքունական ապարանքը, Երազգավորք քաղաքագյուղը։ Իսկ երբ հետ քաշվեց ձմեռային ձյունաշատ սառնամանիքն ու ցրտությունը, և փչեց գարնանային հարավային քամին, ոստիկան Յուսուֆը փոխեց տեղը։ Նա պատրաստում է բազում սրընթաց, սեգ ու բարձրավիզ երիվարներ՝ զարդարված բազմազան գեղեցիկ զարդերով, զենքերով, ոսկե սանձով, ոսկենկար պաճուճանքներով, նաև Սոփերի ոսկուց[63] թագ է պատրաստում՝ տպազարդելով հյուսած մարգարտաշար վարսակալով, ինչպես նաև պատվական ակնեղեն ու արքունական բազում ոսկեհյուս ու շքեղարշյա նշանավոր զգեստներ և բոլորը մեկտեղ, ոլպես մեծարանքի նշան, առաքում է Սմբատ արքային։ Նաև արքայի ավագ որդուն՝ Աշոտին, արտակարգ պատվի է արժանացնում, այսպես, օրինակ, նրան [նվիրում է] սրընթաց երիվար՝ [զարդարված] գեղեցիկ զարդերով ու զենքերով, պերճապաճուճ զգեստներ, մեջքին կապում ոսկեկուռ գոտի և նրան կարգում է Հայոց իշխանաց իշխան։ Բայց ես ևս, որ այս գրեցի, առատաձեռնորեն պատվվեցի ոստիկանի կողմից. նա ինձ մատուցեց նաև ոսկեզօծ զարդերով զարդարված ջորի։ Իսկ արքան, ուրախանալով նրա առատաձիր պարգևների համար և ընդունելով մեծ շնորհակալությամբ, ինքը ևս նրան շատ ու բազմապիսի նվերներ է ընծայում, [այն է]՝ հանդերձանքի բարեվայելուչ, չքնաղատես ու երևելի զարդեր, կարմիր որդանով ներկված իրեր, համակ ոսկուց [պատրաստված] գավաթներ, թասեր, գոտի, որոնք հռոմեական վարպետների գործերն էին՝ [պատրաստված] գույնզգույն ապակուց,— և այդ բոլորը տասնապատիկ ավելի էին, քան բոլորը միասին նրանից ըն-

* [Բնագրում՝ «առատ ձեռաձրիւք». հրատարակիչը ծանոթագրում է]. Գուցե «առատաձեռն ձրիւք» [մենք այս վերջին ձևով էլ թարգմանել ենք]։

առ 'ի նմանէ։ Եւ ապա յուղարկեալ Յուսուփ յարքայէ՝ գնայ 'ի կողմանս Ատրպատականի։

Իսկ աշխարհիս Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ 'ի բոլոր բարութիւնս՝ բնակեցան իւրաքանչիւրոք 'ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ 'ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուբք գինւոյ 'ի կութս այգեստանեայց և լերինք ցնծութիւն զգեցան, զի բազմացան 'ի նմա արօտականք անդեայք արջառոց և հօտք ոչխարաց։ Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք և հանգուցեալք 'ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարդ հաստահեղոյս ձուլեալ կրով՝ 'ի մենաստանս և յաւանս և յագարակս։ Բայց առաւել ևս քան զյոլովս Հայկազանցն գրոհի իշխանն Գրիգոր և նորին եղբարք՝ Սահակ և Վասակ, որք հայրենական սեպհականութեամբ տիրէին գաւառացն, որք շրջապատեալ կան շուրջ զեղերբ ծովակին Գեղամայ։ Եւ այսպէս վիճակ ցանկալի՝ լի պտղատածող արգասեօք պարարտութեամբ՝ առհասարակ ամենեցուն տուաւ ձրի նորին շնորհօքն Աստուծոյ՝ և 'ի նորին յարմար կազմածոց տանէ Տեառն բղխէր աղբիւր բարեաց ըստ մարգարէին և ոռոգանէր զձորն վիճակաց։ 'Ի վերայ այսոցիկ բարեբաստութեանց թագաւորն Հոռոմոց Լևոն ոչ ինչ սակաւ նախախնամէր զարքայ Սմբատ իբրև զորդի սիրելի անքակութեամբ ընդ նմա բերելով յուխտ միաբանական սիրոյ, և բազում ընծայս և պարգևս և պատիւս ամ յամէ առաքէր։ Իսկ և Սմբատ 'ի շնորհակալութիւն բարերարութեանն արքայի Հոռոմոց առատաձիր պարգևօք հատուցանէր զդարձ փոխարինին տասնապատիկ յաւելուածով՝ իբրև վեհագունի քան զինքն և հօր հարազատի։

Եւ զայսու ժամանակաւ թագաւորն Եգերացւոց Կոստանդին յայլանդակ բարս գժնեայս դաւաճանեալ, և ոչ ամբարձեալ զաչս յուղղութիւն քան թէ 'ի խորհուրդս չարութեան՝ զօրս գումարէ, խաղայ չուէ գնայ զհիւսիսային կողմամբք, որ 'ի ծործորս լերինն Կովկասու. միանգամայն իսկ և աշխարհն Գուգարացւոց և որք մերձ 'ի Դրունս Ալանաց բնակեալք են, զի և ընդ իւրով ձեռամբ զնոսա նուաճէ։ Եւ վասն զի ազգն այնոքիկ հաւանեալք և հնազանդեալք և նուաճեալք էին ընդ ձեռամբ արքային Սմբատայ, գրէ ապա թագաւորն Վրաց Ատրներսեհ վաղընդփոյթ առ թագաւորն Եգերացւոց, վասն զի փեսայ էր նորա,

գունածը։ Եվ ապա Յուսուֆը, ճանապարհ ընկնելով արքայի մոտից, գնում է Ատրպատականի կողմերը։

Իսկ այդ օրերի ընթացքում Տերը այցելեց Հայոց աշխարհը, պատսպարեց ու հաջողություն բերեց բոլոր բարի գործերի մեջ, և յուրաքանչյուրը բնակվեց իր ժառանգությունում։ Եվ երկիրը սեփականելով՝ նրանք այգիներ տնկեցին, ձիթենիների բուրաստաններ ու պարտեզներ հիմնադրեցին. վարեցին արտերը և քաղեցին հարյուրապատիկ պտուղներ։ Հնձի ժամանակ լցվեցին ցորենի շտեմարանները. գինու փոսերը լցվեցին այգիների բերքով, և լեռները ցնծություն հագան, որովհետև նրանցում շատացան արածող տավարի նախիրներն ու ոչխարների հոտերը։ Եվ մեր գլխավոր նախարարները, ապահովվելով ու հանգստանալով ավազակների ասպատակություններից, մենաստաններում, ավաններում, ագարակներում շինում են քարե հաստահեղույս եկեղեցիներ՝ կրով ամրացնելով։ Բայց Հայոց ազգի առավել խուռն բազմությամբ [եկեղեցիներ են շինում] Գրիգոր իշխանը և նրա եղբայրներ Սահակն ու Վասակը, որոնք հայրական ժառանգությամբ տիրում էին այն գավառներին, որոնք ընկած են Գեղամա ծովակի շուրջը։ Եվ այսպես ցանկալի վիճակը [=բաժինը] պարարտ պտուղներով լի, առհասարակ ձրի տրվեց ամենքին նույն Աստծու շնորհներով։ Եվ Տիրոջ նույն հարմար շինած տնից բխում էր բարի աղբյուր՝ ըստ մարգարեի, և ոռոգում էր կալվածքների ձորը։ Այս բարեբախտությունների հետ հռոմեական Լևոն թագավորը պակաս խնամք չէր տանում Սմբատ արքայի համար՝ նրա, իբրև անբաժանելի ու սիրելի որդու, հետ կնքելով սիրո ու միաբանության դաշինք։ Եվ նա տարեցտարի նրան առաքում էր բազում ընծաներ, պարգևներ ու նվերներ։ Իսկ Սմբատը որպես շնորհակալություն հռոմեական բարերար արքային, իբրև իրենից ավելի վեհագույնի ու հարազատ հոր, փոխարենը վերադարձնում ու հատուցում էր տասնապատիկ ավելի շատ բաներով։

Այդ ժամանակներում եգերացիների Կոստանդին թագավորը, տարվելով այլանդակ ու գժնի բարքով և աչքերը ոչ թե դեպի ճշմարտությունը, այլ դեպի չար խորհուրդները բարձրացնելով, զորք է գումարում և շարժվում գնում է հյուսիսային կողմերը, Կովկասյան լեռների ծործորները, միաժամանակ նաև գուգարացիների աշխարհի ու այն [ցեղերի] վրա, որոնք բնակվել էին Ալանաց դռան մոտ, որպեսզի նրանց նվաճի ու գցի իր ձեռքի տակ։ Եվ քանի որ այդ ցեղերը հնազանդվել ու նվաճվել էին Սմբատ արքայի ձեռքով, Վրաց Ատրներսեհ թագավորը շուտափույթ [նամակ] է գրում եգերացիների թագավորին, որը նրա փեսան էր, որպեսզի նա իր սրտից ցրի, հեռացնի, կորցնի

ցրել 'ի բաց քակել կորուսանել 'ի սրտէ զընդունայն, զապիրատ և զսը-
նոտի խորհուրդն՝ և ոչ շամբուշ մտօք ընդ վեհսն քան զինքն հակա-
ռակիլ։ Իսկ իբրև լսելիք խցան նորա և բանից ունկնդրութիւն հեռացաւ
և ոչ բերաւ 'ի խորհուրդս իմաստութեան, ապա արքայ Սմբատ զօրու
բազմի դուռ իմն 'ի միասին տուեալ և ընդ իւր ևս առեալ զթագաւորն
Վրաց՝ գնացին 'ի միասին հրոսակ ընդ յառաջ Կոստանդնի։ Նա իբրև
տեսս եթէ ոչ կարէ ընդդէմ նոցա կալ՝ ընդ կրունկն յամրոց վայրս ինչ
դարձեալ որջանայ, հայցել 'ի նմանէ զհաշտութիւն։ Իսկ արքայ զաներ
նորա՝ Ատրներսեհ, և զոմանս ևս յիւրոց նախարարաց առաքէ խօսիլ
ընդ նմա 'ի խաղաղութիւն, որք իբրև հանդէպ միմեանց բերան և դէ-
զերեցան 'ի բանս ինչ՝ յանկարծակի ըստ հրամանի Ատրներսեհի նա-
խարարք արքայի ձերբակալ արարեալ զթագաւորն Եգերացւոց, ածեն
առաջի իբրև զուլ մի յայծեաց՝ զայն, որ իբրև զառիւծ 'ի մորոյ իւրմէ
ելեալ վարանէր վատնել վարատել զազգս։ Իսկ արքայի Սմբատայ բա-
զում ամրոցս յինքն գրաւեալ 'ի Վուրի աշխարհի, և կուսակալս կողմանցն այնոցիկ կացուցեալ՝ առեալ զԵգերացին Կոստանդին ընդ իւր
ածէ, 'ի դիպահոջ կացուցեալ յամուրն Անի երկաթի շղթայիւք. սակայն
ոչ քամահանօք ինչ, այլ կրկին պատուով առատացուցեալ նմա զամե-
նայն հանդերձանս և ոսճիկս պիտոյից ըստ անդստին բարեբարոյ մտաց
իւրոց։ Եւ այնպէս ապա ամիսս չորս միայն զնա պահէր յարգելանի։
Իսկ իբրև ետես զերկպառակութիւն Եգերացւոցն, որք շեշտակի ճեղ-
քեալք, հանդերձեալ են զայլ ոմն բռնաւորագոյն քան զԿոստանդին կա-
ցուցանել իւրեանց թագաւոր՝ ստուգագէտ իմացմամբ, ոչ ինչ զանգի-
տէր փութանակի զնա արձակել և հաստատել 'ի կարգս առաջնոյ տէ-
րութեան իւրոյ։ Մի՝ վասն զի փեսայացեալ էր նա թագաւորին Վրաց,
իբրև 'ի շնորհակալուս զայն նմա առնէր. և երկրորդ՝ զի թերևս իբր
զձեռնասուն իւր յայնմհետէ նա գտցի 'ի սակի հնազանդութեան յա-
զագս առ նա անցուցանելոյ զբազում երախտեացն տեսակս։ Եւ ապա
զգեստաւորէ զնա թագաւորական զգեստու և դնէ խոյր ոսկի ընդելու-
զեալ մարգարտով 'ի գլուխ նորա, և ականակուռ ոսկի կամար ածէ ընդ
մէջ նորա. և այլ իմն վայելուչ կազմուածս ըստ ուղևորութեան պիտոյից նմա յարդարէր. և զօր 'ի ձեռս գումարեալ՝ առաքէ զնա յաշխարհ
տէրութեան իւրոյ։ Եւ իբրև շոգաւ հաստատեցաւ և միապետեաց զիւր
սեպհական տէրութիւնն, 'ի բազում հնազանդութիւն և մտերմական ծա-
ռայութիւն համախոհութեան զինքն արքային Սմբատայ բերէր սակս
հայրաբուն նախախնամութեան նորա առ նա՝ հեշտ և բաղձալի զայն
իւր վարկեալ։ Բայց թագաւորն Վրաց յաւէտ իմն զչարեալ վասն արձակմանն Կոստանդնի՝ իբր 'ի պատճառս հակառակութեան զայն գոր-

ղատարկ, սին, ապիրատ ու սնոտի խորհուրդը ու մոլեգին մտքով չհակառակվի ոչ վեհազուններին և ոչ էլ իրեն։ Իսկ երբ նրա ականջները փակվեցին, և նա հեռացավ խոսքերն ունկնդրելուց ու չբերվեց իմաստուն խորհրդի, ապա Սմբատ արքան մեծ զորքով հախուռն հարձակվելով ու իր հետ վերցնելով նաև Վրաց թագավորին, նրանք զորքով միասին ընդառաջ գնացին Կոստանդնին։ Իսկ նա երբ տեսավ, որ չի կարող նրանց դեմ կանգնել, ետ դառնալով թաքնվում է ապահով վայրերում՝ նրանից խնդրելով հաշտություն։ Իսկ արքան իր աներ Ատրներսեհին և իր նախարարներից մի քանիսին ուղարկում է՝ նրա հետ խոսելու խաղաղության մասին։ Երբ նրանք միմյանց դեմ դուրս եկան ու զբաղվեցին ինչ-որ բանով, Ատրներսեհի հրամանով արքայի նախարարները հանկարծակի բռնեցին եգերացիների թագավորին և բերեցին նրա առաջ իբրև այծի ուլ, որը [մինչ այդ] առյուծի նման բնից դուրս գալով՝ ձգտում էր ցրել, կոտորել ազգերին։ Իսկ Սմբատ արքան, Վուրի աշխարհում գրավելով բազում ամրոցներ և այդ կողմերում կուսակալներ կարգելով ու վերցնելով Կոստանդին Եգերացուն, բերում է իր հետ և երկաթյա շղթաներով բանտ գցում Անի ամրոցում։ Սակայն ոչ թե քամահրելով, այլ կրկին մեծարելով ավելացնում է նրան անհրաժեշտ հանդերձանքն ու ապրուստի միջոցները՝ ըստ իր բարեսիրտ կամքի։ Եվ նրան այդպես միայնակ չորս ամիս պահում է փակի տակ։ Իսկ երբ նա տեսավ եգերացիների երկպառակությունը, որոնք շեշտակիորեն անջատվելով՝ պատրաստվել էին Կոստանդնից ավելի զորեղ մեկ ուրիշին կարգել իրենց թագավոր, և երբ նա ստույգ կերպով իմացավ այդ մասին, չէր վախենում նրան շտապ արձակել ու նշանակել իր տերության թագավոր։ Նախ նրա համար, որ նա փեսա էր դարձել Վրաց թագավորին՝ դրանով նրան շողոքորթելով, և երկրորդ՝ որպեսզի թերևս որպես իր սանը, նա այնուհետև գտնվեր հնազանդության մեջ և իրեն երախտահատույց լիներ։ Եվ ապա նրան հագցնում է թագավորական զգեստներ, նրա գլխին դնում մարգարիտներով ընդելուզված ոսկյա խույր, մեջքին կապում ականակուռ ոսկյա գոտի, նրա ուղևորության կարիքների համար պատրաստում է գեղեցիկ այլ իրեր ու նրան զորք տալով՝ ուղարկում է իր աշխարհը։ Եվ երբ նա գնաց հաստատվեց ու որպես միապետ իշխեց իր սեփական տերության վրա, Սմբատ արքայի նկատմամբ դրսևորեց հնազանդություն, մտերմություն ու համախոհություն՝ նրա կողմից իր հանդեպ ցուցաբերած հայրական հոգատարության համար, նրան համարելով իրեն հաճելի ու բաղձալի անձնավորություն։ Բայց Վրաց թագավորը է՛լ ավելի չարանալով Կոստանդնին արձակելու պատճառով, որպես թե նա այդ արել էր ի հեճուկս իրեն,

ծեալ, և յայնմհետէ և անդր աննախանձ պարգևատուին իւրում Սմբատայ 'ի գրգռութիւն մարտկաց զինէր, թէպէտև ոչ յայտնի։ Իսկ Սմբատայ զարմացեալ ընդ թերի խորհուրդս նորա՝ ոչ 'ի բանի ունէր զնորայն կառավարութիւն կամաց որ 'ի շարն, այլ միշտ զինքն յաղթանակէր 'ի սէր նորա. վասն զի ոչ բերիւր յիմաստս նորա խռովասէր միտք։

Իսկ ոստիկանն Յուսուփ զայսու ժամանակաւ յապստամբութիւն զինքն զինեալ ընդդէմ ամիրապետին մեծի՝ ոչ սակաւ ինչ գործէր նախճիրս ընդդէմ նորա՝ 'ի բաց լքեալ ընկեցեալ և 'ի կոխումն գռեհաց տուեալ զհրաման արքունի. որում իրազգաց իսկ ամիրապետին գտեալ՝ վաղվաղակի հրովարտակս և դեսպանս յղէ ընդ բոլոր ծագս երկրի իւրոյ տէրութեանն, վրէժխնդրութիւն յարուցանել Յուսփայ՝ անիրաւ ապստամբին։ Ըստ սմին այսմ սակի ապա և առ արքայ Սմբատ յղէ զոմն պատուական քարտուղար իւր անշուշտ հրովարտակաւ, զի և նա ևս միջամուխ լիցի զօրու բազմաւ երթալ 'ի վրէժխնդրութիւն Յուսփայ, և խոստացեալ ևս թողուլ նմա զամի միոյ զսակն արքունի։ Իսկ թագաւորն թէպէտև յաւէտ դժկամակ այսմիկ գտաւ վասն դաշանց սիրոյն, որ ընդ Յուսփայ եղեալ էր. սակայն ոչ կարացեալ լքանել 'ի բաց զարքունական հրամանն՝ ակամայ առ ականէ քարտուղարի զօր զումարէ, գունդ կազմէ, 'ի զէնս և 'ի զարդս պատրաստէ զամենեսեան՝ առաւել զինքն քան զյոքունս ցուցեալ 'ի վրէժխնդրութիւն ապստամբին. և արս իբրև հազար մի որպէս թէ թուեցուցանէր կարապետ առաջի իւր առաքեալ ընդ կողմն Վասպուրականի ընդ այն շուելոյ։ Եւ իբրև գնայր 'ի նմանէ քարտուղարն, ապա արքայ հրովարտակ 'ի ծածուկ առաքէ ոստիկանին Յուսփայ, իբր թէ 'ի թիկունս օգնականութեան նմա զայն զօր զումարեալ և ոչ 'ի պատճառս թշնամութեան ինչ ընդ նմա բերեալ։ Իսկ ոստիկանն թէպէտև յընթեռնուլն զհրովարտակն անսայր բանիցն, սակայն 'ի սադրելոյ սպրդող շար լեզուաց հակամէտ 'ի շարն բերիւր։ Եւ դարձեալ իբրև յամուր որջս 'ի շար խորհուրդս իւր բունեալ հին վիշապն՝ խնդրէր ժամ դիպող թափել զթոյնս յարքայն և 'ի նուաճեալս նորա, տապալել քանդել հրդեհել ճարակ սրոյ զամենեսեան տալ։ Բայց ոչ կամեցեալ յայտնել առժամայն զչարութիւնն՝ զրէ պատասխանի նամակին, որ 'ի վերայ ունէր զաւետիս կենաց և 'ի ներքոյ զդառնութիւն մահու։ Յետ այսորիկ ապա հաւանական իմն միտս Յուսփայ իւր ստացեալ և 'ի հարթայարմար հնազանդութիւն ամիրապետին բերեալ՝ զպետութիւն կալուածոյ նորա դարձեալ առ նա նուաճել տային։ Եւ այնուհետև ապա յերկոցունց կողմանց՝ յամիրապետէ անտի և Յուսփայ ոստիկանէն, բան պատգամաց առ արքայ սաստկանայր, կրկին ուժգնադրանից հետո նա իր բարեսիրտ պարգևատուի՝ Սմբատի դեմ գրգռում էր մարտիկներին ու զինում, թեպետ ոչ բացահայտորեն։ Իսկ Սմբատը, զարմանալով նրա թերահավատ կարծիքի վրա, բանի տեղ չէր դնում նրա՝ դեպի շարը միտվող վարմունքը, այլ իրեն միշտ հաղթահարում էր ի սեր նրա, որովհետև երբեք չէր կարծում, թե նա խռովասեր է։

Իսկ այդ ժամանակներում Յուսուֆ ոստիկանը ապստամբություն է բարձրացնում մեծ ամիրապետի դեմ՝ քիչ վնաս չպատճառելով նրան, ոտնատակ տալով ու մի կողմ գցելով արքունի հրամանը։ Դրան իրազեկ լինելով՝ ամիրապետը անմիջապես իր տերության բոլոր ծայրերը հրովարտակներ ու սուրհանդակներ է ուղարկում՝ վրեժխնդրության կոչելով անիրավ ապստամբ Յուսուֆի դեմ։ Այդ ձևով ու նույն պայմանով Սմբատ արքայի մոտ է ուղարկում իր պատվական ատենադպիրին, որպեսզի նա ևս մեծ զորքով ոտքի կանգնի ու գնա Յուսուֆի դեմ վրեժխնդրության՝ խոստանալով մեկ տարի նրանից չվերցնել արքունի տուրքը։ Իսկ թագավորը թեև ավելի դժկամ գտնվեց այն դաշինքի պատճառով, որ կնքել էր Յուսուֆի հետ, սակայն չկարողացավ անտեսել արքունական հրամանը։ Նա ակամա ատենադպիրի ներկայությամբ զորք է հավաքում, գունդ կազմում, բոլորին պատրաստում զենքերով ու զարդերով՝ մյուսներից առավել վրեժխնդրություն ցուցաբերելով ապստամբի նկատմամբ։ Նա մոտավորապես մեկ հազար մարդ էր ցույց տալիս՝ իրենից առաջ սուրհանդակ ուղարկելով Վասպուրականի ուղղությամբ, նրա գնացած կողմը։ Իսկ երբ ատենադպիրը գնում է նրա մոտից, արքան թաքուն հրովարտակ է հղում Յուսուֆ ոստիկանին, իբր թե այդ զորքը նա հավաքել է նրան օգնելու համար և ոչ թե նրա նկատմամբ թշնամանքի պատճառով։ Իսկ ոստիկանը թեպետ հրովարտակը ընթերցելիս հավատում է նրա խոսքերին, սակայն շար լեզուների սադրանքից հակվում է դեպի շարը։ Եվ դարձյալ բնավորվելով շար խորհրդի մեջ, իբրև ամուր որջում, հին վիշապը փնտրում էր հարմար պահ՝ արքայի և նրա ենթակաների վրա թափելու իր թույնը, բոլորին տապալելու, քանդելու, հրդեհելու ու սրի ճարակ դարձնելու։ Բայց չկարողանալով նույն ժամանակ հայտնի դարձնել իր չարությունը՝ նա գրում է պատասխան նամակ, որը արտաքուստ կյանքի ավետիս ուներ, ներքուստ՝ մահվան դառնություն։ Դրանից հետո ստանալով Յուսուֆի հավանությունը և ամիրապետին էլ բերելով միաբանության ու հնազանդության՝ դարձյալ նրա պետությունն ու կալվածքները նրան էին նվաճել տալիս։ Այնուհետև այն երկու կողմերից՝ այն ամիրապետից ու ոստիկան Յուսուֆից, պատգամագիր է ուղարկվում արքային՝ կրկին խստորեն պա-

պէս հայցեալ տալ զսակն արքունի. այլ և զանուր լծոյ ծառայութեանն ծանրաբեռն գրեալ։

Իսկ Սմբատ վասնզի բռնազբօսութեամբ զդէմ չկարէր ունել և զոճիրս վնասուցն առ 'ի նոցանէն առ ձեռն պատրաստ տեսանէր, ելս 'ի մտի դնէ՝ զի թէ զմիոյ ամի զսակն լնուլ բաւականասցի, և զամպրոպ չարութեանն առժամայն արտաքս տրոհեալ՝ զապագայսն ապա այցելութիւնն Աստուծոյ հոգասցի ըստ նախախնամող զօրութեանն իւրոյ։ Եւ ապա ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց՝ և տալ 'ի զրադատ տուգանս սակին, 'ի միտս իւր զայս միայն զետեղեալ բերեալ, զի թէ միովն յարքունուստ խաղաղութիւն գտցի, չորիւքն դիւրաւ զապրուստ անձանց մարթի վճարել։ Իսկ թէ 'ի բաց տարեալ տրոհի խաղաղութիւն, և ոչ 'ի հինգն ևս միանգամայն զտեղի առեալ պիտառոցի ինչ կցորդութիւն կենաց մարդկան։ Եւ զայս ապա արարեալ զվճար՝ առնոյր այնմ ամի սակ։

Իսկ այսոքիկ ապա յաչս նախարարացն արքայի յաւէտ իմն ծանր համարեալ թուէր՝ զանգիտացեալ տգիտաբար զառ 'ի յապայսն որ գալոցն էր ձաղանս և ձաղկանս։ Ապա ոմն 'ի պատուական նախարարաց անտի՝ Հասան անուն,— որ իշխան և հրամանատար էր բոլոր տէրութեանն արքայի և չէր ոք բնաւ որ զձեռն նորա իշխէր ելանել, այլ և ինքն իսկ թագաւորն միշտ բանի բերանոյ նորա անսայր լսել,— սա ապա զԱկիտոփայն կրելով կիրս չարի և զձախող և զանազգակ իրաց բուռն հարեալ՝ զսպանութեան խորհուրդ խորհէր արքայի. և չար անջրպետ 'ի մէջ արկեալ՝ քակէր յարքայէ զոմանս և յայլոց ևս նախարարացն Վանանդացեաց և Հաւնունեաց՝ զհամազգիս իւր զգլխաւորս իբրև արս հնգետասան։ Եւ յիւր կորստեան կեղծաւորութիւնն բերեալ բանս ծածուկս ընդ թագաւորին Վրաց՝ հաստատէին սպանանել զՍմբատ, և փոխանակ նորա զնա կացուցանել հրամանատար Հայաստանեայցս, միայն թէ ընդ նոսա 'ի գործ չարի մասանցն բերցի։ Իսկ նորա 'ի նոցանէ վաղվաղակի հրապուրեալ՝ այնուհետև համադունդ միջամուխ լինէին 'ի բանս սպանութեան արքայի։ Եւ ապա զոմն Հաւնունի՝ զաներ Հասանայ, որ միաբանեալ էր 'ի չար խորհուրդս նոցա՝ քաջալերեալ յուղարկէին 'ի սպանումն արքայի և զայլ ևս համախորհուրդս ընդ նմա միաբանեալս, որք երթեալ չուեալ 'ի պատճառս ծառայութեան արքայի՝ և իբրև ընդ գրուանաւ զխաւարային խորհուրդս ծածկեալ՝ խնդրէին ժամ դիպող։ Իսկ թագաւորն Վրաց և երկրորդն Ակիտոփէ՝ Հասանն, և այլ ևս միաբանեալքն ընդ նոսա իբրև հասին

հանջելով արքունի տուրքը, ինչպես նաև հիշեցնելով ստրկական ծանրաբեռն լծի ու օղակի մասին։

Իսկ Սմբատը քանի որ ուժով չէր կարող նրա դեմն առնել և տեսնում էր, որ նրանց կողմից ոճիրներ ու վնասներ կլինեն, մտածում էր, որ եթե մեկ տարի կարողանա տուրքը բավարարել և չար ամպրոպը ժամանակավորապես հեռացնել, ապա հետագայում Աստծու նախախնամությունը հոգ կտանի իր խնամակալ զորությամբ։ Եվ ապա իր տերության բոլոր երկրները հրաման է արձակում՝ առանձնացնելու բոլոր ձիերի երամակների, տավարի նախիրների և ոչխարների հոտերի հինգերորդ մասը և տալ անիրավ տուրքի դիմաց՝ իր մտքում զետեղելով միայն այն, թե մի մասով արքունիքից խաղաղություն կգտնի, իսկ չորրորդ մասով հեշտությամբ կկարողանա հոգալ մարդկանց ապրուստը։ Իսկ եթե հեռանա ու տրոհվի խաղաղությունը, ապա հինգ մասը միասին վերցրած պետք չի լինի մարդկանց կյանքի միաբանության համար։ Եվ այս այսպես վճարելով՝ նա ստանում է այն տարվա տուրքը։

Իսկ սրանք արքայի նախարարների աչքում է՛լ ավելի ծանր էին թվում՝ տգիտաբար վախենալով հետագայում եկող ծեծի ու խայտառակության համար։ Ապա այն պատվական նախարարներից Հասան անունով մեկը, որ արքայի ամբողջ տերության իշխանն ու հրամանատարն էր, և չկար մեկը, որ համարձակվեր ձեռք բարձրացնել նրա դեմ, ինչպես նաև ինքը՝ թագավորը, միշտ լսում էր նրա խոսքին, նույն ինքը Ակիտոփելը, ազդվելով չարից ու ձեռք գցելով ձախորդ ու անզգամ բաներից, խորհում էր արքային սպանելու մասին։ Եվ նրանց միջև գցելով չար անջրպետ՝ նա արքայից, Վանանդացիներից, Հավնունիներից ու այլ նախարարներից հեռացնում էր իր գլխավոր համազգիներին, թվով մոտավորապես տասնհինգ մարդու։ Եվ իր կորուստը թաքուն պատրաստելով՝ Վրաց թագավորի հետ նրանք որոշում են սպանել Սմբատին, և դրա փոխարեն նրան [Հասանին] կարգել Հայաստանի կուսակալ, միայն թե նա նրանց հետ չար գործերի մասնակցի։ Իսկ նա իսկույն հրապուրվում է դրանցով, և այնուհետև նրանք միասին ձեռնամուխ են լինում արքայի սպանության գործին։ Եվ ապա ոմն Հավնունու՝ Հասանի աներոջը, որ համաձայնել էր նրանց չար մտադրությանը, քաջալերելով ուղարկում են սպանելու արքային, նրա համախոհներին ու կողմնակիցներին։ Նրանք գնում են արքային ծառայելու պատրվակով և նրանցից թաքցնելով իրենց մութ մտադրությունները, փնտրում էին հարմար պահ։ Իսկ Վրաց թագավորը և Ակիտոփել երկրորդը, [այսինքն]՝ Հասանը, և նրանց մյուս համախոհները, երբ պայ-

յայն օր պայմանի, զոր վասն խողխողմանն արքայի եդեալ էին ընդ Հաւնունւոյն զոր առաքեցին, և կարծէին կարել կարկատել ինչ զզրաւ սպանման՝ առ մղձկեալ սրտիցն ոչ ժուժեալք, շտապով տագնապաւ, և-լանէին զօրու բազմաւ 'ի կողմանս գաւառին Շիրակայ։ Եւ իսկ և իսկ ապա Հասանն տայր զամրոցն Անւոյ 'ի ձեռն Ատրներսեհի և ինքեանք արձանացեալք դադարէին յարքունական յապարանսն Երազգաւորից. վասն զի արքայ Սմբատ էր ի սահմանս Տաշրայ։ Ազդ ապա յոմանց արքայի լինէր վասն գործեցեալ դաւաճանութեանն մի ըստ միոջէ՝ և վասն Ատրներսեհի և Հասանայ և նորին համախորհացն, որք առձեռնպատրաստ եկեալ հասեալ որջացեալք էին յԵրազգաւորս։ Իսկ իբրև իրքն ստուգապէս յայտ եկին, վազվազակի ստիպով հինի ճեպով հասանէ 'ի Շիրակ գաւառ։ Ապա Ատրներսեհ և Հասանն տեսեալ, եթէ խորհուրդ սպանմանն ոչ ել 'ի գլուխ՝ ահ երկիւղի զնոսա պատեալ պաշարեալ էր. ստէպ ստէպ ապա յաւարի առեալ զորս 'ի ձեռն ըմբռնեցաւ, այլ և զկարասի բազում որ եդեալ պահէր յամրոցին Անի՝ փախստեայ յամուրսն Տայոց չուեալ անդ անկանէին։ Իսկ իբրև գուժ աղմկի աղաղակին ընդ ոլորտս տէրութեանն արքայի սփռէր, ամենայն պատերազմող մարտիկ զօրք անցեալ 'ի հանդիսի՝ զմի սիրտ առհասարակ յինքեանս բերէին և զմի զինուորութիւն զինուորէին, և զմի զրահ ճշմարտութեան ագանէին, և միագոտեալ քաջագոտի պնդէին զմէջս, և զմահս իւրեանց իբրև զանշուշտ կեանս 'ի վերայ վրէժխնդրութեան թագաւորին համարէին։ Եւ այսպէս ապա համագունդ հասեալ ժողովեալ առ թագաւորն՝ չուէ գնայ 'ի դիմի հարկանել ոսոխին շարի և այլոցն ևս ապստամբ դառնացողաց։ Որ իբրև հասանէին յաշխարհս տէրութեան Ատրներսեհի, ամենայն այր առանձին գրեթէ ըստ Դաւթայ զինքն զինեալ 'ի նահատակութիւն՝ ոչ 'ի պարսաքարել զմինն միայն զբլուրն մսեղէն, այլ զբ՝զում արամբք պատերազմողօք արեան ճապաղիս հեղուին։ Որոց ոչ տուեալ թոյլ արքայի, թէ «Անձն, որ մեղիցէ՝ նոյն և կորիցէ,» 'ի բաց տարեալ տրոհէր զսուրն յարանց անմեղաց, միայն զզրաւարարսն 'ի ձեռն տալ հայցէր։ Ապա Ատրներսեհ իւրովի իսկ զհրապոյրս շարիմացութեանն խոստովանեալ՝ զթողութիւն յարքայէ հայցէր։ Իսկ հեզահամբոյրն ցածուն մտօք ընկալեալ՝ զհաշտութիւն նմա ընձեռէր և զերէց որդի նորա 'ի պայման պատանդի առեալ ընդ իւր ածէ. և զդրժող զնախարարսն զիւր առհասարակ 'ի նմանէ 'ի ձեռն առեալ և զամենեցուն զաշն խաւարեցուցեալ կուրութեամբ՝ առաքէ ապա և զոմանս առ արքայն Հոռոմոց և զոմանս առ թագաւորն Եգերացւոց։ Եւ այսպէս ամանավորվել էին արքային սպանել Հավնունու հետ միասին, որին էլ առաքեցին, հույս ունեին կցմցել անտեղի սպանության [պատճառները], բայց սրտնեղությանը չդիմանալով՝ նրանք շատ մեծ զորքով շտապ դուրս են գալիս Շիրակ գավառի կողմերը։ Հասանը տեղնուտեղը Անի ամրոցը տալիս է Ատրներսեհին, իսկ իրենք կանգնում ու դադար են առնում Երազգավորքի արքունական ապարանքում, որովհետև Սմբատ արքան գտնվում էր Տաշիրի սահմաններում։ Այնուհետև ոմանք արքային մեկ առ մեկ հայտնում են գործած դավաճանության և Ատրներսեհի, Հասանի ու նրանց համախոհների մասին, որոնք պատրաստ եկել-հասել ու բույն էին դրել Երազգավորքում։ Իսկ երբ դեպքերը ստուգապես հայտնի դարձան, նա ավազակի շտապողականությամբ անմիջապես հասնում է Շիրակ գավառը։ Այնուհետև Ատրներսեհն ու Հասանը երբ տեսան, որ սպանության մտադրությունը գլուխ չի գալիս, նրանց պատում ու պաշարում է ահն ու երկյուղը։ Նրանք հաճախակի թալանում էին նրանց, ովքեր ընկնում էին իրենց ձեռքը, [թալանում էին] նաև Անի ամրոցում պահվող շատ ունեցվածք և փախչում, գնում ու ընկնում էին Տայքի ապահով տեղերը։ Իսկ երբ աղմուկ-աղաղակի գուժը տարածվում էր արքայի տերության բոլոր կողմերում, պատերազմող ու կռվող ամբողջ զորքը, հանդիսավոր ձևով անցնելով, առհասարակ բոլորը դառնում են միաբան, սպառազինվում են նույն ձևով, հագնում ճշմարտության նույն զրահը և մի գոտիով արիաբար ամրացնում իրենց մեջքերը։ Նրանք իրենց մահը իբրև ճշմարիտ կյանք էին համարում թագավորի վրեժխնդրության համար։ Եվ այդպես երբ բոլորը մեկտեղ գնում հավաքվում են թագավորի մոտ, վերջինս չվում գնում է՝ դիմադրելու շար ոստիկանին և մյուս ապստամբներին։ Նրանք երբ հասնում են Ատրներսեհի տերության երկրներին, ամեն ոք առանձին-առանձին Դավթի նման իրեն զինելով նահատակության համար, պարսատիկով խփում էին ոչ միայն վիթխարի հսկայի[64], այլ նաև բազմաթիվ կռվող մարդկանց և շատ արյուն էին թափում։ Բայց արքան նրանց չներեց՝ ասելով, թե «Այն անձը, որ մեղք գործի, նա էլ կկորչի»։ Նա սուրը հեռացնում ու բաժանում էր անմեղ մարդկանցից և պահանջում էր իր ձեռքը տալ վնասակարներին։ Ուստի և Ատրներսեհը, անձամբ խոստովանվում է շարամիտ դավադրությունը և արքայից մեղքերի թողություն հայցում։ Իսկ հեզահամբույր այդ մարդը, այն ընդունելով պարկեշտ մտքով, նրան հաշտության ձեռք է մեկնում ու նրա որդուն որպես պատանդ վերցնելով՝ բերում է իր հետ։ Եվ իրեն դավող իր նախարարներին առհասարակ նրանից խլելով՝ նա բոլորի աչքերը կուրացնում է, իսկ ոմանց էլ ուղարկում է հռոմեական արքայի,

տուածական իմն զոգցես տեսչութեամբ հաստատէ կրկին զթագաւորութիւն իւր։

Զայսու ժամանակաւ գլխաւոր և գահերէց իշխանն Գագիկ Արծրունի աղերսահայց յարքայէ Սմբատայ լեալ՝ առ ինքն զքաղաքն Նախջաւան խոկայր դարձուցանել, իբր թէ 'ի հաւու և 'ի հօրէ նոցունց իսկ տան և ազգի պատշաճեալ՝ և նուաճեալ ունէր զնա. և զրկութիւն իւր զորոշումն քաղաքին առ 'ի յիւրմէ վարկանէր։ Իսկ արքայ վասն զի յառաջագոյն տուեալ էր ձիրս պարգևաց Սմբատայ իշխանին Սիսականի, որ արտաքս բերէր միշտ զինքն յընդունայնակարծ հպարտութենէ և մտերմական ծառայութեամբ կատարէր զբոլոր սպասահարկութիւն նորա՝ ոչ կամեցաւ զձեռագիրն իւր 'ի ձեռաց իշխանին յափշտակել և ոչ զընծայեալսն նմա մեծարանս յանարգանս արհամարհանաց դարձուցանել։ Ընդ որ յաւէտ իմն իշխանին Գագկայ զժգմեալ՝ դրժողութեամբ շարահաւակ առ արքայ լինէր. և ապա բազում նուէրս ընծայից և պատարագաց պատրաստեալ՝ չուէր գնայր առ ոստիկանն Յուսուփ 'ի Պարսս։ Եւ առաջի մատուցեալ զխորհրդականն իւր ընծայս՝ զզրկանաց ամբաստանութեան իւրոյ բան բարձրաբարբառ զօրացուցանէր զարքայէ։ Իսկ նորա ախորժաբար ընկալեալ՝ տայր նմա թագ արքայական և պատիւս և պարգևս արքունականս, 'ի քակտումն միաբանութեան նոցա զայն հնարեալ գործել, զի դիւրագաւ լիցին այնուհետև երկաքանչիւրքն առ 'ի նմանէ գրժելոյ։ Սակայն 'ի ծածուկ իմն ըստ սողնոց սպրդեալ իբր 'ի ծերպս վիմաց՝ ոչ բերէր առժամայն 'ի զգայութիւն զգործեցեալ իրակութիւնն. բայց իբրև եկն թագակերպեալ իշխանն Գագիկ յաշխարհ իւրոյ տէրութեանն՝ ոչ սակաւ շփոթ տրտմութեան առհասարակ զամենեքումբք զեղոյր. վասնզի իրազդացք լինէին խաւարասէր խորհրդոց ոստիկանին, որ զկորստական դուռն բանալ հանդերձեալ էր, զոր ոչ այլ ումեք քան թէ Աստուծոյ զոյր կարողութիւն փակել զնա։ Սակայն արքայ ծննդագործեալ 'ի միտս իւր՝ բարեաւն յաղթել չարին, ոչ կասեցուցանէր հատուցանել նմա զսակ սովորական ծառայութեանն՝ մինչև սպառապուռ մերկացաւ չարութիւն նորա։ Իսկ արդ իբրև բացաւ պատրուակն՝ զեկուցաւ մեզ մոմոումն և սպառնութիւնն վայրագն գազանի Հագարացւոյն, ըստ բարոյականի կամեցողի արքային Սմբատայ և այլոց ևս նախարարացն սադրելոյ, զէմ եդեալ ևս տարադէմ գնացի 'ի Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացող ընծայիւք և պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց երևելի ոսկեճամուկ զգեստուք և 'ի նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս և ջորիս 'ի զարդս և 'ի զէնս յարդարեալ, այլ և գանձս ոսկւոյ և արծաթոյ։ Ոչ միայն զայսոսիկ՝ այլ 'ի

ոմանց՝ եգերացիների թագավորի մոտ։ Եվ այսպես ասես աստվածային նախախնամությամբ նա կրկին հաստատում է իր թագավորությունը։

Այդ ժամանակ գլխավոր ու գահերեց իշխան Գագիկ Արծրունին, աղերսանքով դիմելով Սմբատ արքային, խորհում էր իրեն վերադարձնել Նախջավան քաղաքը, որպես թե իրենց պապից ու հորից սկսած այն իրենց տոհմին ու ցեղին է պատկանել, իսկ նա նվաճել է այն։ Եվ քաղաքից զրկվելու պատճառը նա իրեն էր համարում։ Իսկ արքան քանի որ Սիսականի իշխան Սմբատին նախապես տվել էր պարգևներ, որպեսզի իրեն դուրս բերեր սնապարծ գոռոզությունից և մտերմական սպասավորությամբ կատարեր նրա բոլոր ծառայությունները, չկամեցավ իշխանի ձեռքից խլել իր գրությունը և նրա ընծաներն ու մեծարանքը անարգանք ու արհամարհանք դարձնել։ Դրանից է՛լ ավելի դժգոհելով՝ Գագիկ իշխանը խարդախությամբ շարախոսում էր արքայի մոտ։ Եվ ապա շատ նվերներ, ընծաներ ու պարգևներ պատրաստելով՝ նա շարժվում գնում է Պարսկաստան, Յուսուֆ ոստիկանի մոտ։ Եվ նրան մատուցելով իր խորհրդավոր ընծաները՝ նա իր անիրավ ամբաստանության խոսքն էր բարձրաձայն զորացնում արքայի մասին։ Իսկ նա [ոստիկանը] սիրով ընդունելով՝ նրան տալիս էր արքունական թագ, պատիվ ու պարգևներ՝ աշխատելով քակտել նրանց միաբանությունը, որպեսզի դրանից հետո ինքը հեշտությամբ խաբի նրանցից յուրաքանչյուրին։ Սակայն սողունների նման թաքուն սողոսկելով ժայռերի մեջ՝ նա ժամանակավորապես զգացնել չէր տալիս կատարված իրողությունը։ Բայց երբ իր տերության երկիրը եկավ թագավոր ձևացած Գագիկ իշխանը, նա առհասարակ քիչ տրտմություն ու խառնակություն չպատճառեց։ Այնտեղ տեղյակ են դառնում ոստիկանի խավարասեր մտադրությանը, որը պատրաստվել էր բացելու կորստյան դուռը, որ Աստծուց բացի ոչ ոք չէր կարող փակել։ Սակայն մտածելով բարությամբ հաղթել չարին՝ արքան չէր կասեցնում նրան հատուցելու սովորական սպասավորության տուրքը, մինչև որ իսպառ բացվեցավ նրա չարությունը։ Իսկ այժմ, երբ հայտնի դարձավ կեղծիքը, հայտվեց նրա չարությունը։ Իսկ այժմ, երբ հայտնի դարձավ կեղծիքը, մեզ զեկուցվեց հագարացի վայրագ գազանի մռնչյունն ու սպառնալիքը, բարոյական Սմբատ արքայի ցանկությամբ և այլ նախարարների դրդմամբ ես դիմեցի, գնացի պարսկական Ատրպատական, ոստիկանի մոտ, դառն ընծաներով ու շատ պարգևներով, արքունի թանգարաններից [վերցրած] ոսկեհյուս երևելի զգեստներով, ջուլհակագործ կանանց նկարակերտ բարձերով, ինչպես նաև պատրաստելով զարդարված ու սպառազինված բազում ձիեր, ջորիներ և ոսկու ու արծաթի գանձեր։ Ոչ միայն սրանք, այլ նաև մեր սրբատեղերից ինձ հետ վերցրի բավա-

տանէ սրբարանաց մերոց ըստ ձեռին բաւականի ընդ իս առեալ տանէի նմա 'ի նպաստ օժտութեան, զի թերևս նախ քան զբղխումն թունից նորա և զխառատումն քարանց եկեղեցւոյ սրբոյ և զկորստական գերշութիւն ժողովրդոց Քրիստոսի՝ մարթացից հետի աղագս ինչ խաղաղութեան առ 'ի նմանէ գտանել, զի մի՛ սպառսպուռ մայր Սիոն ըստ նմանութեան մօր անզաւակեսցի յորդւոց իւրոց։ Եւ թէպէտև 'ի սկզբան բարով իմն ընկալեալ և արքունական պատուով և պաշտմամբ լաւագունիւ առ 'ի նմանէ մեծարեցայ, և յանձն ևս առեալ ամենայն իրօք զհաշտութիւն աշխարհի շնորհել և արքայի զխաղաղութեան կեանս. սակայն կարծեմ 'ի սաղրելոյ նմա 'ի մերոց աստի պատճառս առեալ զընդունայնակարծ հպարտութիւն ապիրատութեան՝ ոչ թերևս ըստ յառաջակայ բանիցն զխորհուրդն հարթութեամբ հաւասարէր։ Եւ այնուհետև մահացու խարդախութեամբ վտարանդեալ՝ ըմբռնէր զիս և 'ի դիպահոջ բերեալ 'ի խաւարչտին տեղւոջ և շրջապատեալ բազում պահնակօք, և դատափետ աղաղակն զիս պաշարեալ՝ յապուշ իմն զիս կացուցանէր։

Արդ՝ մինչդեռ այսպէս շարժեցեալ գայր 'ի վերայ իմ ընդունայնակարծ հպարտութիւն ոստիկանին, յանկարծակի զօրէն իմն օդապարիկ թռչնոյ գայր հասանէր առ նա մարդպանն Հայոց Գուրգէն՝ եղբայր թագաւորեցելոյն Գագկայ, անփորձ և անկիրթ մտօք համոզել զոստիկանն վասն յաշխարհս մեր գալոյ և ելանելոյ։ Եւ ապա կորովութեամբ կշռեալ զերկրպագութիւն իւր նմա, և 'ի նմանէն ընկալեալ զպարտսն պատուին պայմանի՝ դառնայ անդրէն, հրաւիրակ յոստիկանէն առաքեալ եղբօրն իւրում գալ առ նա։ Իսկ յետ ամսոց ինչ ապա գայ հասանէ թագաւորն Գագիկ՝ ըստ խոստման բանիցն և զգործ կատարեալ և ըստ վարժից իմն և հրահանգաց կրթութեան զպարտս մտերմական սակին վճարեալ, և 'ի լիապատար թանգարանաց իմն նմա ընծայբերեալ. ամենայն պատգամք բանի խորհրդոց նոցա առ իրեարս այս ևեթ գտանէր հորդել յարդարել զչու ճանապարհին 'ի Հայս և առհասարակ զիրերաց զվրէժ խնդրել յարքայէն Սմբատայ։ Ոչ իմացեալ, եթէ հուր հրդեհեալ յոր կողմ և կարէ նիւթ լուցկեաց գտանել՝ անաշառապէս հարակի յայրել և յապականել։ Եւ ապա կրկին թագիւ առ 'ի նմանէ պսակեալ և այլ ևս պատուասիրութեամբ մեծարեալ՝ դառնայ, հանդերձեալ զինքն 'ի կարապետութիւն գալստեան ոստիկանին 'ի Հայս։

Բայց ես ակնակառոյց իմն 'ի գալուստ թագաւորին Գագկայ լինէի, զի թերևս 'ի սաղրելոյ նորա լուծումն ինձ 'ի կապարանէն լինիցի՝ որպէս և քրիստոնէական պարտն պահանջէ. այլ ակնկալութեան ոչ հանդիպեալ՝ այլ ևս շարաշար ըստ մեղաց իմոց կապեցայ։

կանին նվերներ ու տարա, որպեսզի թերևս նախքան նրա թույնը թափելը, սուրբ եկեղեցիների քարերը քանդելը և Քրիստոսի ժողովրդին կորստյան ու գերության [քշելը], կարողանայի նրա հետ խաղաղության ճար գտնել, որպեսզի Սիոնի մայրը[65] անզավակ մոր նման իսպառ չզրկվեր իր որդիներից։ Եվ թեպետև սկզբում նա լավ ընդունեց, ես էլ արքունական պատվով ու լավագույն պաշտամունքով մեծարվեցի նրա կողմից, և նա հանձն առավ ամեն ինչով աշխարհին հաշտություն շնորհել, իսկ արքային՝ խաղաղ կյանք, սակայն կարծեմ մերոնց սադրանքը պատճառ դարձնելով, ըստ առկա խոսքերի՝ իր սնափառ ու ապիրատ զոռոզության մտադրությունը հարթ ու հեշտ չէր կատարում։ Այնուհետև մահացու խարդախությամբ դուրս քշելով՝ բռնում է ինձ, բանտարկում խավար տեղում, շրջապատում բազում պահակներով, պաշարում նեղող աղաղակով ու ինձ ապուշ դարձնում։

Արդ՝ մինչդեռ այսպես ինձ վրա էր հասնում ոստիկանի սնափառ զոռոզությունը, հանկարծակի մի սրաթռիչ թռչունի նման գալիս, նրա մոտ է հասնում Հայոց Գուրգեն մարզպանը՝ թագավոր դարձած Գագիկի եղբայրը՝ անվարժ ու անփորձ մտքով համոզելու ոստիկանին՝ մեր աշխարհը գալու և գնալու վերաբերյալ։ Եվ ապա ճշգրտորեն չափելով իր երկրպագությունը նրա նկատմամբ և նրանից ստանալով պայմանավորված պարտքն ու պատիվը՝ նա վերադառնում է այնտեղից, ոստիկանի կողմից հրավիրակ ուղարկելով իր եղբոր մոտ՝ նրան ներկայանալու համար։ Մի քանի ամիս անց գալիս հասնում է Գագիկ թագավորը՝ խոստման համաձայն գործը կատարած և ըստ թափած ջանքերի վճարելով ընտանեկան տուրքն ու թանգարաններից նրան ընծայաբերելով նվերներ։ Նրանց բոլորի նպատակը նույնն էր՝ ճանապարհ բացել ու հարթել դեպի Հայաստան և առհասարակ իրենց վրեժը լուծել Սմբատ արքայից։ Նրանք չիմացան, թե հրդեհված հուրը որ կողմում կարող է բռնկվող նյութ գտնել՝ անաչառորեն այրելու ու ապականելու համար։ Եվ ապա նրա կողմից կրկին պսակվելով թագով ու բարձր պատվի արժանանալով՝ նա վերադառնում է, իրեն նախապատրաստելով ոստիկանի Հայաստան գալու առաջնորդության համար։

Բայց ես անհամբեր սպասում էի Գագիկ թագավորի գալստյանը, որպեսզի թերևս նրա դրդմամբ ինձ կապանքից ազատեն, ինչպես պահանջում է քրիստոնեական պարտքը։ Բայց իմ սպասելիքը չիրականացավ, այլ է՛լ ավելի շարաշար կերպով շղթայվեցի իմ մեղքերի պատճառով։

Իսկ իբրև գարնանային հարաւահողմ զձմերայնոյն ժամանակ ցըրտութեանն 'ի բաց մերկանայր, ապա ոստիկանն գումարտակ զօրու բազմի կազմեալ՝ չուեալ խաղայ գայ հասանէ յաշխարհ մեր, անհաշտ խռովութեամբ սրտին մոմռեալ՝ զկնի իւր և զիս կապանօք տանելով։ Եւ ապա դիմեալ հասեալ 'ի Նախջաւան քաղաք, և անդ աւուրս ինչ զետեղեալ՝ մինչև կարապետքն հրաւիրեալք՝ Գագիկ և Գուրգէն, գային հասանէին և գունդք գունդք լինէին։ Ապա զօրէն իմն հրոսակաց դիմէ ելանէ նախ զկողմամբք Սիւնեաց աշխարհին։ Իսկ գահերէց գլխաւոր իշխանն Սիւնեաց համազուն եղբարքքն իւրով և համագունդ զօրօք աճապարեալ ունէին զանցս մտիցն և զկիրճս ճանապարհացն արիական քաջութեամբ ըստ հոյակապ անուանակիր հռչակութեանն՝ զէն 'ի վեր առեալ, առ նա զէն* վառեալ և զբազումս թաւալգլոր խաղացուցանէին։ Բայց վասն զի այցելութիւնն Աստուծոյ անտես արար զնոսա՝ ոչ զօրեցին զօրաւոր կատաղութեանցն թշնամեաց հերքել զնոսա, այլ փախըստեայ յամուրս քարանձաւաց և 'ի ծործորս լերանց բարձանց անկանէին։ Իսկ անօրէնն ընդ կրունկն 'ի նոցանէ դարձեալ, զորս միանգամ գտանէր յաշխարհէն փախստէից տեռազերծեալ և մնացեալ յետկոյս՝ զոմանս ճարակ սրոյ տային, և զայլս ոմանս 'ի գերութիւն վտարանդեալ։ Եւ այս լինէր յաւուրս տօնի մեծի պասեքի Զատկաց յերեքհարիւրերորդի յիսներորդի ութերորդի շրջագայութեան Թորգոմեանս համարոյ։

Իսկ ոստիկանն իբրև աւուրս երկոտասան անդ երեկօթս արարեալ՝ անցեալ գնայր զարեւելից հիւսիսով 'ի մայրաքաղաքն Դվին։ Եւ անդ ապա զետղ առեալ յեղր գետոյն Երասխայ՝ վաղվաղակի գայր հասանէր առ նա տէրն Սիւնեաց՝ Սուփան, անձնատուր լինելով 'ի սպասաւորութիւն ոստիկանին։ Ընդ որ յաւէտ իմն սխրացեալ՝ ևս քան զևս զօրանայր 'ի գրգռութիւն շարութեան ընդ արքայի։ Եւ ապա 'ի խաբէութիւն մտաց զինքն զինեալ՝ առաքէ առ արքայ Սմբատ, զի թէ բոլորապէս զսակ ամին հատուցէ նմա, զխաղաղութեան պայման անշուշտ նմա պարգևեալ՝ անցեալ գնանցէ։ Իսկ նա թէպէտև գիտէր ոչ ուրախ լինել 'ի բանս պատգամաց խաւարասէր թշնամւոյն. սակայն 'ի մեղադրութենէ աստուածայնոց և մարդկայնոցս արտաքս զինքն որցեալ՝ տայր վաղվաղակի զխնդիրն իբրև կշիռս վաթսուն հազար դահեկանաց։ Զոր իբրև առընկալաւ, իսկ և իսկ զհետ երթեալ ճէպէր Սմբատայ՝ մինչև յաշխարհ Վրաց տարեալ մղեալ հանեալ զնա, մինչև անկանէր մերձ յանմատչելի յամուրսն Կղարջայ։ Իսկ զիս արգելեալ 'ի քաղաքին Դվ-

* Թերևս պարտ իցէ ընթեռնուլ «առնազէն, այսինքն՝ քաջապէս վառեալ»

Իսկ երբ գարնանային հարավային քամին հեռացնում էր ձմեռային ցրտությունը, մեծ բանակ կազմելով՝ ոստիկանը նեղված սրտի անհաշտ խռովությամբ շարժվում, գալիս է մեր աշխարհը՝ իր հետևից ինձ էլ տանելով շղթայակապ։ Այնուհետև ուղևորվելով ու հասնելով Նախջավան քաղաքը՝ նրանք մի քանի օր մնում են այնտեղ, մինչև որ հրավիրված առաջնորդներ Գագիկն ու Գուրգենը գալիս հասնում են ու այլևայլ խմբեր կազմում։ Ապա նա հրոսակների նման շարժվում գալիս է նախ Սյունյաց աշխարհի կողմերը։ Իսկ Սյունյաց գահերեց գլխավոր իշխանը իր ազգակից եղբայրների հետ մեկտեղ զորքով շտապում է և իր հոյակապ անվանն ու հռչակին [համապատասխան] արիությամբ ու քաջությամբ տիրում է մուտքերի անցքերին ու ճանապարհների կիրճերին։ Զենք վերցնելով ու քաջաբար* զինվելով՝ նրանք շտաբերին վիրավորում ու թավալգլոր էին անում։ Բայց քանի որ Աստծու խնամակալությունը անտեսեց նրանց, նրանք չկարողացան զորեղ ու կատաղի թշնամուն հաղթել, այլ փախան, ընկան քարանձավներն ու բարձր լեռների ծործորները։ Իսկ այն անօրենը, նրանց մոտից ետ դառնալով և երկրից փախածներին ու թալանի համար ետ մնացողներին գտնելով, ոմանց սրի ճարակ է տալիս, իսկ ոմանց էլ գերության քշում։ Եվ սա կատարվում էր զատկի մեծ պասի օրերի ընթացքում, Հայոց թվականության երեք հարյուր հիսունութերորդ [909] տարում։

Իսկ ոստիկանը տասներկու օր այնտեղ մնալուց հետո հյուսիսարևելքով անցնում-գնում է Դվին մայրաքաղաքը։ Եվ այնուհետև կանգ է առնում Երասխ գետի ափին, անմիջապես գալիս, նրա մոտ է հասնում Սյունյաց տեր Սուփանը՝ կամավոր հպատակվելով ոստիկանին։ Դրա համար շատ է զարմանում և ավելի է հզորանում նրա թշնամանքն ու չարությունը արքայի նկատմամբ։ Եվ ապա զինվելով նենգությամբ՝ նա սուրհանդակ է ուղարկում Սմբատ արքայի մոտ՝ ասելով, որ եթե նա իրեն վճարի ամբողջ տարվա տուրքը, ինքը անտարակույս նրան կպարգևի խաղաղության դաշինք ու կանցնի կգնա։ Իսկ նա թեպետև գիտեր խռովասեր թշնամու խոսքերի վրա չուրախանալ, սակայն աստվածային ու մարդկային մեղադրությունից իրեն դուրս հանելով՝ խլուկն տալիս է նրա խնդրածը, մոտավորապես վաթսուն հազար դահեկանի չափով։ [Ոստիկանը] երբ այն ընդունեց, իսկույն հետապնդում էր Սմբատին՝ նրան տանելով, մղելով ու հանելով մինչև Վրաց աշխարհը, մինչև որ նա ընկնում է Կղարջքի անմատչելի ամրոցները։

* [Բնագրում՝ «առ նա զէն վառեալ», հրատարակիչը ծանոթագրում է]. Թերևս պետք է ընթերցել «առնազէն, այսինքն՝ քաջապէս վառեալ» [մենք այս վերջին ձևով էլ թարգմանել ենք]։

վին 'ի մետաղս բանտից և երկաթի կապարանաց՝ կրեցի այնուհետև 'ի դահճաց անտի մահահոտ իմն լուտանօք գանս և բանտս և գելարանս և արգելարանս 'ի խաւարչտին տեղւոջ և յանձուկ վայրս. այլ և 'ի վիրապս և 'ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ և դառն կտտանօք։ Եւ պահապանացն սաստիկ աղաղակն և ճուչն դատափետ միշտ ոչ հեռացեալ հասանէր 'ի լսելեաց իմոց յերեկոյէ մինչև ցառաւօտն, և սակս այնորիկ բարձեալ էր յինէն նինջ արտեանաց և հանգիստ իրանաց։ Բայց ոստիկանն Յուսուփ 'ի բոլոր յեղանակս ամարայնոյն իբրև զանգայոագեղ առիւծ մռմռեալ և յորս զինքն Սմբատայ պատրաստեալ՝ այնպէս 'ի բազում աւուրս դեգերէր։ Սակայն ոչ կարացեալ ստանալ ինչ նմա յայնմ նուագի սակս 'ի լերինս բարձունս ամրանալոյն և 'ի խորափիտ ձորս և յամուրս քարանձաւաց, ապա չուէ գայ դարձեալ 'ի Դվին քաղաք։ Անդ ապա ընդ առաջ եկեալ հասեալ լինի նմա չքնաղագեղ և առատամիտ և առատաձեռն 'ի պարգևս բազմաց սպարապետն Հայոց Աշոտ՝ եղբօրորդի արքային Սմբատայ. ինքնակամ դիմագրաւ երթեալ հասեալ՝ անձնատուր լեալ և 'ի հնազանդութիւն Հագարացւոյն մտեալ։ Թերևս զմտաւ ածեալ նորա զփարթամաշնորհն Յուսուփ, զի գոնէ թէ և նա ևս ըստ նորուն սակի գտցէ շնորհս առաջի երկրորդն Փարաւոնի և նոյնաբար դարձուցանել բաւեսցէ 'ի բարիս զբարս ոստիկանին չարի ընդ ազինս գրոհի տան իւրոյ. և կամ թէ ըստ անրջիցն տեսութեան թերևս ստացցի ձեռն բաւական շտեմարանել զխորհրդական ցորեանն ընդդէմ սաստկացեալ սովոյն առ 'ի յապրուստ կենցաղական կարգաց նորս Իսրայէլի 'ի սովամահ կորստենէ անտի, որ հանդերձեալն էր լինել։ Բայց իբրև ետես զՀագարացին զայն Փարաւոն, որ ոչ գիտէր զՅովսէփ, և 'ի միտս առնոյր զհնարիմացութեան նորա զխորհուրդ առ 'ի շարշարել զազգս մեր, և զոր խնդրէր նա՝ այնմ ոչ եհաս, զանգիտեալ այնուհետև 'ի մահացող խորամանկութենէ բրոնագատին՝ միանգամայն իսկ և 'ի մահուան երկիւղէ, և ոչ ինչ ելի աղագս հատուածի գտանել մարթացեալ,— այնուհետև ակամայ կամօք հարկեցաւ ամենայն իրօք բերիլ 'ի կամս ոստիկանին արդեամբք և խորհրդովք և բանիւ մերձաւորութեամբ զկնի ընթացաբար բերեալ հետեւեալ 'ի կատարելութիւն կամաց նորա. սակայն և այնպէս՝ ոչ կարէր լիակատար յինքն յանգուցանել զվստահութիւն սրտի սաղապ և սնոտի խաբեբայն*։ Իսկ ոստիկանն առկայացեալ որջանայր 'ի Դվին՝ զդառնաշունչ եղանակս ձմերայնոյն 'ի նմա անցուցանել։

Իսկ ապա այնուհետև հարկեցայ ես խնդրել ելս հրաման թողութեան յոստիկանէն՝ որպէս ոմն երբեմն 'ի սանդարամետէն Պրոտիրբա-

* Գուցէ «խաբեբային»։

Իսկ ինձ նա բանտարկեց Դվին քաղաքում, մետաղյա բանտում, երկաթյա կապանքներով։ Այնուհետև այն խավարշտին տեղում ու անձուկ վայրերում այն դահիճների կողմից ես կրեցի մահահոտ լուտանքներով ծեծ, բանտ, գելարան, ինչպես նաև սաստիկ ու դառն կրտտանքներով գցվեցի խոր փոսերն ու վիհերը։ Եվ պահապանների սաստիկ ու նեղող աղաղակն ու ճիչը միշտ, երեկոյից մինչև առավոտ, հասնում էին իմ ականջներին։ Այդ պատճառով վերացել էր իմ աչքերի քունը և մարմնի հանգիստը։ Բայց Յուսուֆ ոստիկանը ամառային բոլոր եղանակներին մռնչալով իբրև անվանդակ առյուծ ու որսի պատրաստվելով Սմբատի դեմ՝ շատ օրեր այդպես սպասում էր։ Սակայն այդ ժամանակ նրան չկարողացավ որևէ վնաս տալ՝ բարձր լեռներում, խոր ձորերում, քարանձավներում ամրացված լինելու պատճառով, և նա դարձյալ շարժվում գալիս է Դվին քաղաքը։ Այնտեղ բազում պարգևներով նրան ընդառաջ է գալիս Հայոց սպարապետը՝ չքնաղագեղ, խելացի, առատաձեռն Աշոտը, Սմբատ արքայի եղբորորդին, որը իր կամքով հանդգնաբար գնում հասնում է նրա մոտ և հնազանդվում հագարացուն։ Թերևս նա [Աշոտը] մտածում էր փարթամաշնորհ Յուսուֆի մասին, որպեսզի գուցե նա ևս նույն պայմանով շնորհ գտնի Փարավոն երկրորդի առաջ ու նույն ձևով կարողանա ոստիկանի և իր ցեղի չարքարքը դարձնել դեպի բարին. կամ թե անրջական տեսությամբ թերևս ի վիճակի լինի շտեմարանել խորհրդավոր ցորենը ընդդեմ սաստկացած սովի՝ նոր Իսրայելի սովամահ կորստից ու անցավոր կյանքից փրկելու համար, որ պատրաստ էր լինելու։ Բայց երբ տեսավ հագարացի այն Փարավոնին, որը չէր ճանաչում Հովսեփին, նա հասկանում է նրա հնարագետ մտադրությունը՝ մեր ազգին չարչարելու համար։ Եվ նա ինչ որ ուզում էր, դրան չհասավ։ Այնուհետև վախենալով բրոնակալի մահացու խորամանկությունից, միաժամանակ և մահվան երկյուղից, և չկարողանալով գտնել հեռանալու ելք ու հնար, նա հարկադրված եղավ ամեն ինչով հնազանդվել ոստիկանի կամքին, [այն է]՝ և՛ գործով, և՛ մտքով, և՛ խոսքով նրա հետևից ընթանալ ու կատարել նրա ցանկությունը։ Սակայն դրանով էլ չէր կարողանում ամբողջությամբ իր կողմը գրավել նենգ ու սնոտի խաբեբայի* վստահությունը։ Իսկ դադար առնելով ոստիկանը բույն է դնում Դվինում՝ ձմեռվա ցուրտ եղանակը այնտեղ անցկացնելու համար։

Այնուհետև ես ստիպված ոստիկանից խնդրեցի թողության հրաման, ինչպես որ երբեմն մեկը ելք էր փնտրում Պրոտիրիադայի սան-

* [Բնագրում՝ «խաբերայն». հրատարակիչը ծանոթագրում է]. Գուցե «խաբեբային» [գտնում ենք, որ ճիշտը այդ ձևն է, և մենք այդպես էլ թարգմանել ենք]։

գայ, և այս ոչ թերևս 'ի զանգիտելոյ յառժամանակեայ մահուանէն որ ըստ Աստուծոյ, այլ զի սակս ոսկւոյ տնօրինէր և 'ի բազմաց օգնականութենէ բազումս հատուցեալ էի զզրադատ գանձուց պարտապանութիւն, և այլ ոչ ևս ունէի բնաւ բաւական 'ի հատուցանել ինչ, և ոչ ոք էր՝ որ օգնէր ինձ. սակս այնորիկ յայս ածայ։ Եւ վերին օգնականութիւնն արտաքս զիս առ 'ի նմանէն կորզեաց, որոյ ձեռք իւր լի էր արեամբ. և սակս ահի ծանրասրտին Փարաւոնի փախեայ ըստ Մովսիսի 'ի Մադիամ և յերկրորդն Հեզաբէրելայ ըստ Եղիայի 'ի Սարեփթայ Սիդոնեան։ Եւ վասնզի շարացն գերշաց շար հէնք սաստկապէս դեռևս մածեալ ունէր զաշխարհս մեր. սակս այնորիկ և ես ըստ տէրունեանն հրամանի հալածեալ շրջեցայ 'ի քաղաքէ 'ի քաղաք 'ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արևելից հիւսիսոյ Կովկասու. զի և նոքա 'ի ժողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին։ Եւ 'ի նոցանէն ոչ ինչ սակաւ ծախս ոռճկաց ըստ իւրաքանչիւրումն սակի կարդէր մեզ պարտապանաբար վճարելով զպէտս ամենեցունց։ Եւ անտի ելեալ գնացաք 'ի կողմանս Գուգարացւոց և անդ բնակեցաք՝ ակն ունելով փրկութեան մերոյ 'ի Տեառնէ։

Բայց իբրև եկն ոստիկանն 'ի Դվին, ապա և արքայ Սմբատ դարձեալ 'ի փախստէութենէ իւրմէ՝ գայ 'ի սեպհական կալուածս տէրութեան իւրոյ յԵրազգաւորս։ Իսկ իբրև դրունք գարնայնոյն բացան և աւուրքն ջերմոտ զտեղի փոխաբերեցին՝ ապա ոստիկանն գունդս զօրաց բազմաց պատրաստեալ իբր հրոսակս արքային Սմբատայ, տայ 'ի ձեռս թագաւորին Գագկայ և յայլ ևս իւրոց նախարարացն և գաղտակծութեամբ առաքէ գաւուղս 'ի վերայ նորա։ Իսկ Սմբատայ զգացուցեալ ոմանց զզրժող դաւաճանութիւնն, ապա և նա ևս տագնապելով ստիպեալ գումարէ զօր բազում և տայ 'ի ձեռս Աշոտոյ և Մուշեղայ որդւոց իւրոց և հրամայէ զգուշանալ 'ի ճանապարհացն։ Իսկ նոցա չուեալ եկեալ հասեալ 'ի Նիգ գաւառ՝ տեսին, զի ճամբար այլազգեացն բունեալ դադարեալ էր 'ի հովիտս հարթայատակ վայրի միոջ առ ստորոտով լերինն, ընդ որոց և թագաւորն ևս Գագիկ։ Արդ՝ իբրև այն այնպէս իմն նոցա 'ի դիմի հարկանէին՝ ակամայ կամօք ապա 'ի մարտ պատրաստեցան, ոչ գիտելով զնենգութիւն զօրաց իւրեանց՝ բնակչաց Ուտի գաւառի, որք են Սևորդիք։ Անդ ապա Աշոտ և Մուշեղ նախ ինքեանք իսկ անցեալ յասպարիսի՝ շահատակեալ առաքինանային, և բազմահանդէս քաջութեամբ հատեալ զոգոմ պարու նոցա զմիմեամբք արկանէին։ Իսկ իբրև խոր խոցեցաւ պատերազմն և ասպատակն խառն ընդ միմեանս հարան, յանկարծակի ապա զօրքն Ուտէացի ընդ կրունկն դարձեալ ըստ նենգարամեանից[66], և դա ոչ թե ներկա մահվանից վախենալու պատճառով, որ Աստծու կամքով է, այլ որպեսզի ոսկու համար հոգ տաներ։ Եվ ես չէի կարող շատերի օգնությամբ շատերին վճարել անիրավ գանձերի պարտքը ու այլևս ի վիճակի չէի ինչ-որ բան հատուցելու, և չկար մեկը, որ օգներ ինձ։ Այդ պատճառով ես այստեղ բերվեցի։ Եվ վերին օգնությունը ինձ դուրս կորզեց, ազատեց նրա ձեռքից, որի ձեռքերը լի էին արյամբ։ Եվ Փարավոնի խստասիրտ ահի պատճառով ես փախա, ըստ Մովսեսի՝ դեպի Մադիամ, կամ ինչպես Եղիան, երկրորդ Հեզաբելից[67] փախա Սիդոնյան Սարեփթ։ Քանի որ շար ավազակները մեր աշխարհը դեռևս պահում էին շար գերիշների ձեռքում, այդ պատճառով և ես աստվածային հրամանով հալածվելով թափառեցի քաղաքից քաղաք՝ Աղվանից արևելյան կողմերում գնալով մեծ իշխան Սահակի ու նրանց թագավոր Ատրներսեհի մոտ, որ գտնվում են Կովկասի հյուսիս-արևելքում։ Այդ ժողովուրդները մեզնից են, և նրանց ոչխարների հոտերը մերն էին։ Եվ նրանցից յուրաքանչյուրին համապատասխան ապրուստի քիչ ծախսեր չէր կարգում՝ որպես պարտապան մեզ վճարելով ամեն մեկի պետքերը։ Եվ մենք այնտեղից գնացինք Գուգարքի կողմերը ու այնտեղ բնակվեցինք՝ Տիրոջից ակնկալելով մեր փրկությունը։

Բայց երբ ոստիկանը եկավ Դվին, իր փախուստից վերադառնալով՝ Սմբատ արքան գալիս է Երազգավորք, իր տերության սեփական կալվածքները։ Իսկ երբ բացվեցին գարնան դռները, և օրերը տաքացան, ոստիկանը մեծ զորք է պատրաստում ու իբրև հրոսակ [առաքում] Սմբատ արքայի վրա։ Նա զորքը տալիս է Գագիկ թագավորի ու նրա մյուս նախարարների ձեռքը ու այդ դավաճաններին նենգորեն ուղարկում է նրա [Սմբատի] վրա։ Իսկ ոմանք երբ Սմբատին զգուշացնում են այդ նենգ դավաճանության մասին, նա ևս ստիպված մեծ զորք է գումարում, տալիս է իր որդիներ Աշոտի ու Մուշեղի ձեռքը և պատվիրում է ճանապարհին զգույշ լինել։ Երբ նրանք գալիս հասնում են Նիգ գավառը, տեսնում են, որ օտարների բանակը տեղավորվել ու դադար է առել լեռան ստորոտի հովիտներում, մի հարթ տեղում. նրանց հետ էր նաև Գագիկ թագավորը։ Այդպես երբ նրանք դուրս են գալիս իրար դեմ, ստիպված մարտի են պատրաստվում՝ չիմանալով Ուտի գավառից եկած իրենց զորքի նենգության մասին։ [Իսկ Ուտի գավառի] բնակիչները Սևորդիք էին։ Այնտեղ Աշոտն ու Մուշեղը նախ իրենք են կռվի ասպարեզ մտնում ու զրոհելով առաքինանում, ինչպես նաև մեծ քաջագործությամբ կտրելով ոգոմաճակատային գիծը՝ հարձակվում են միմյանց վրա։ Իսկ երբ կռիվը շատ խորացավ, և նրանք խառնիխուռն միմյանց վրա հարձակվեցին, ըստ նենգ մտադրության

գապատիր խորհրդոյն՝ անդառնալի գնային 'ի կամս անձանց։ Իսկ վասընդի յայնմ կողմանէ զօրուն էր Աշոտ՝ յակամայ հարկեցաւ ընդ նոսին դառնալ յետս կոյս, զի ասպատակ այլազգեացն զօրացեալ սաստկանային։ Իսկ Մուշեղ 'ի մէջ թշնամեացն անկեալ՝ բազում անհնարին քաջութիւնս ցուցանէր մինչ 'ի զարմացումն զամենեսեան ածեալ. սակայն մենամարտութեամբն ոչ կարացեալ դիմակաց լինել բազմութեանն՝ ձերբակալ զնա արարեալ տանէին առ ոստիկանն։ Իսկ նորա զուարթացեալ զուարճացեալ ընդ ըմբռնումն թագաւորազուն մանկանն Մուշեղայ՝ խրախութիւնս բազումս յարգարէր զօրաց իւրոց։ Եւ յայնմհետէ ապա նիւթ հրաբորբոք դառնութեան մտաց գտեալ զայնպիսի յաղթութիւն՝ հրակիզութիւնս բազումս սփռեալ տարածանէ ընդ ոլորտս երկրի մերոյ։ Եւ 'ի միջօրէի իբրև 'ի գիշերի մութ և մէգ և մառախուղ և խաւար աղջամղջին պատեալ պաշարէր զԱսքանազեանս ազն. և 'ի լծակս կշռոց եղեալ զերկունս տագնապ տարակուսանաց՝ հակամիտեալ կուտեալ գտանէին 'ի վերայ մեր ծանրատաղտուկ անուր Հագարու առաւել քան զքարինս ձորոյն Նաքովրայ. վասնզի նեռք հինից և տէգք Տեառն տեղացին 'ի մեզ։ Քանզի արմատ դառնութեան, զոր երբեմն խլեաց Տէր 'ի տանէս Թորգոմայ՝ կրկին շառաւիղեալ տնկեցաւ յիմանալի յայգեստանս մեր՝ 'ի փշահեղձ մացառս վերընծիւղեալ յեղծումն և յապականութիւն։

Եւ այնուհետև ահա սիրտ իմ տանջեալ տագնապի տարակուսանօք և հաշեալ մաշի փոր իմ 'ի լալոյ, զի յանօրէնութեանց մերոյ այցելութիւն Տեառն անտես արար զմեզ. և 'ի սևաթոյր տխրութենէ գործոց մերոց խեթիւ հայեցաւ 'ի մեզ արեգակն ճշմարիտ. և մատնեցաք 'ի ձեռս ծանրասրտի երկրորդն Փարաւոնի և դառն գործավարաց նորա, որք առաւել ևս քան զանուր կաւափաղաղ ազիւսագործութեանն վէ՛ր 'ի վերայ ելեալ՝ կործանեցին զմեզ անհնարին հարուածովք 'ի վերայ հարուածոց։ Վասնզի իբրև զմրրիկ հողմոյ շնչեալ 'ի մեզ մահաբեր Իսմայէլեան օդն դառնաշունչ և ըստ նմանութեան փոշոյ պտուտաբար ցնդեալ՝ 'ի բաց զմեզ տարագրեաց 'ի մեր բնակութենէ. և ըստ սաստկութեան ուղխից յորձանաց հեղեղեալ ողողեալ՝ արբոյց զհոգի յիմարութեան առհասարակ՝ իբրև զոչխար 'ի սպանդ զմեզ վարատեալ։ Եւ արդ սակս այսորիկ որ յիմումս շտեմարանի մտացս է տեսութիւն շարժութեան՝ շլացեալ և ունայնացեալ, ոչ բաւէ բանիւ լնուլ զնպաստ խորհրդոյն ըստ զգալի աղէտից հասելոյ կալելոյ զմեզ։ Սակայն զհամարձակախօսն Եսայիաս յօժանդակութիւն ինձ բերեալ, զի իմաստասիրել և ողբալ ուսուցէ զխղխայթս մերձաւոր հարուածոցս բարկուտիացիների զորքը հանկարծակի ետ է դառնում, և նրանցից յուրաքանչյուրը գնում է իր ցանկացած ուղղությամբ։ Եվ քանի որ Աշոտը զորքի այն կողմում էր, հարկադրված հարձակվեց նրանց վրա՝ նրանց վերադարձնելու համար, որովհետև այլազգիների հարձակումը հզորանում ու սաստկանում էր։ Իսկ Մուշեղը, ընկնելով թշնամիների մեջ, անհամար քաջագործություններ է ցուցաբերում՝ բոլորին պատճառելով զարմանք, սակայն միայնակ մարտ մղելով՝ նա չկարողացավ դիմակայել բազմությանը։ Նրան բռնում և տանում են ոստիկանի մոտ։ Իսկ ոստիկանը թագավորազն մանուկին՝ Մուշեղին, բռնելու համար զվարճանում ու հրճվում է և իր զորքի հետ խրախճանք է կազմակերպում։ Այնուհետև դառն մտքի հրաբորբոք նյութը, տանելով այդպիսի հաղթանակ, մեր երկրի բոլոր ծայրերում սփռում ու տարածում էր հրդկիզություն։ Եվ օրվա կեսին գիշերվա նման մութը, մեգը, մառախուղն ու աղջամուղջի խավարը պատեցին պաշարեցին ասքանազյան ազգին[68]։ Եվ կշեռքի նժարին դնելով տագնապի ու տարակուսանքի երկունքը՝ Հագարի ծանրատաղտուկ լուծը թեքվում ու կուտակվում էր մեզ վրա ավելի շատ, քան Նաքովր ձորի քարերը, քանի որ ավազակների նետերը և Տիրոջ տեգերը տեղացին մեզ վրա։ Քանզի դառնության արմատը, որը երբեմն Տերը խլեց Հայոց տնից, կրկին ճյուղավորվելով, տնկվեց մեր իմանալի այգիներում՝ վերընծյուղելով փշախեղդ մացառներում եղծելու ու ապականելու համար։

Այնուհետև իմ սիրտը տանջվում էր տագնապի տարակուսանքով, և լացելուց հալվում-մաշվում էր այն, որովհետև մեր անօրենության պատճառով Տիրոջ խնամակալությունը անտեսեց մեզ, և մեր գործերի սևաթույր տխրությունից ճշմարիտ արեգակը[69] խեղ նայեց մեզ։ Եվ մենք ընկանք խստասիրտ Փարավոն երկրորդի ու նրա վերակացուների ձեռքը, որոնք, լծից ավելի ծանր մեզ վրա դնելով կավագործության ու աղյուսագործության վերքերը և անհամար հարված հարվածի հետևից հասցնելով՝ կործանեցին մեզ։ Քանի որ մրրիկի նման մեզ վրա փչելով իսմայելյան մահաբեր, դառնաշունչ քամին և պտուտակաձև փոշու նման ցրելով, մեզ մեր բնակավայրերից դուրս քշեց։ Սաստիկ հորդացած հորձանքի նման հեղեղելով ու ողողելով՝ առհասարակ հարբեցրեց մեր մոլորված հոգին և իբրև ոչխար մեզ քշեց սպանդանոց։ Այսպիսով, քանի որ իմ մտքի շտեմարանում է գտնվում շարժման փոփոխությունը, այն կուրանալով ու փչանալով խոսքով չի կարող կատարել խորհրդի նպաստը՝ մեզ վրա հասնող ու մեզ պատող աղետների պատճառով։ Սակայն համարձակախոս Եսայիասը ինձ օժանդակություն բերեց, որպեսզի սովորեցնի իմաստասիրել ու ողբալ Տիրոջ ողորմության, խրա-

թեան և խրատու ողորմութեան Տեառն. «Զարթիր՝ ասէ, զարթիր և արի կաց. և դիտեա ինձ ասա՝ Երուսաղէմ, զոր արբերն զբաժակն կործանման, զբաժակն սրտմտութեան, զոր արբերն և թափեցեր. և ոչ ոք է յորդւոցն քոց, որ զքեզն մխիթարէ.» և ըստ միւսումն ակնկալեալ, թէ «Ո՞ ընդ իս տրտմեսցի, և ոչ ոք գտաւ մխիթարիչ ինձ.» և ըստ այլումն, թէ «Ո՞վ եղիցի տրտմակից ինձ. մի՛ թէ բեկո՞ւմն քո կամ սաստանութիւն սովու և սրոյ։» Զի արդարև իսկ ըստ նախագուշակ տեսողին՝ ոչ կարեն մխիթարել զմեզ որդիքն մեր՝ տարակուսեալք և գերեալք և հալածեալք և սպանեալք և ննջեալք 'ի կիցս ամենայն ճանապարհաց։ Եւ յիրաւի 'ի մեզ բղխեաց այսպիսի մահաշշուկ հոտ դառնութեան, զի որովք պատուեցաքն և վայելեցաք յօրհնութիւն քաղցրութեան կամացն Աստուծոյ, ոչ ծանեաք զնա արժանապէս՝ յորմէ զբարին կթեցաք. և ոչ գոհացաք զտուողէն մխիթարութեան, որով և պարտն պահանջէր։ Եւ սակս այսորիկ ապա նոքիմբք և խրատեցաք, և ապա եօթնպատիկ հատուցան մեղք մեր 'ի ծոցս մեր։ Սուգ առնու և ընդ մեզ մարգարէութիւնն ասելով. «Հրէաստան կործանեցաւ և խոնարհեցաւ փառքն Սիոնի։» Վասնզի թողան իսկ 'ի խնամակալութենէ Բարձրելոյն աստուածաշէն եկեղեցիքն Քրիստոսի իբրև զտաղաւար յայգւոջ և իբրև զհովանի մրգապահաց 'ի մէջ սեղխենեաց. և փայտատօք և մրճօք կործանեցին զդրունս նորա և հրկէզ արարին զսրբութիւն նորա, և պղծեցին զխորան անուան նորա. և ժառանգութիւն Տեառն կոխեցաւ 'ի գարշապարաց պղծոց և 'ի խոզական երկրապիշ անցաւորաց ճանապարհի. և անբիծ արեանց կղերց եկեղեցւոյ տարապարտ հեղաւ իբրև զջուր շուրջ զԵրուսաղէմաւ։ Եւ 'ի տանէ առաւել քան յօտարաց բուսաւ արմատ դառնութեան. զի կարծեցեալ սինք ոմանք ապստամբեցան 'ի Տեառնէ, և զինեալք զլեզուս իւրեանց նանրութեամբ և անօրէնութեամբ՝ խօսեցան խոտորնակս թիւրս առաջի իշխանաց մերոց. և խաբեբայք և պատրիչք փոխաբերեցան ընդ արանց արդարոց և ստուգաբանից. և յաչս զօրավարաց մերոց և գլխաւոր իշխանաց անարգեցան ստոյգ հովիւք հօտի Տեառն։ Եւ ստացան հովիւս բազումս 'ի գայթակղութիւն իւրեանց. և սակս այսորիկ ստացաք նախատինս յարանց ստոց և անզգամաց. և եղաք 'ի կատականս ծաղու ազգաց, որք շուրջ էին զմեօք. և հօտք հանդերձ հովուօք յափշտակեցաք 'ի խստաց ապստամբողաց 'ի գերութիւն մատնեալք և վաճառակուր լեալք։ Իսկ այլք ոմանք սուրբ ձեռօք և ամբիծ սրտիւք զրազում դանից և գելարանաց և կապանաց և խոշտի ու մերձավոր հարվածների բարկության վերքերը. «Զարթնի՛ր, ասում է, զարթնի՛ր ու քնից վեր կաց և տե՛ս ինձ այստեղ, Երուսաղեմում, դու, որ խմեցիր կործանման բաժակը, սրտմտության բաժակը, որը խմեցիր ու թափեցիր, և քո որդիներից ոչ ոք չկա, որ մխիթարի քեզ»[70]։ Մյուսն ակնարկում է, թե «Ո՞վ ինձ հետ կտրտմի, և ոչ ոք ինձ մխիթարիչ չգտնվեց»[71], և ըստ մեկ այլ կարծիքի, թե «Ո՞վ կլինի ինձ տրտմակից. մի՛թե քո ջարդը կամ սովի ու սրի սասանությունը»[72]։ Որովհետև արդարև ըստ նախագուշակ մարգարեի՝ մեր որդիները, որոնք տառապել են, գերվել, հալածվել, սպանվել ու մեռել բոլոր ճանապարհների խաչմերուկներում, չեն կարող մխիթարել մեզ։ Եվ իրավացիորեն մեզ վրա բխեց այսպիսի մահաշշուկ դառն հոտը, որովհետև ինչով մեծարվեցինք ու վայելեցինք Աստծու կամքի քաղցր օրհնությունը, նրան ըստ արժանվույն չճանաչեցինք, որից բարիք քաղեցինք, բայց չգոհացանք մխիթարություն տվողից, որով և նա պարտքն էր պահանջում։ Եվ դրա համար նրանցով խրատվեցինք, և ապա մեր մեղքերը յոթնապատիկ թափվեցին մեր ծոցը։ Մեզ հետ սգում է նաև մարգարեությունը՝ ասելով. «Հրեաստանը կործանվեց, և ընկավ Սիոնի փառքը»[73]։ Քանի որ բարձրյալի խնամակալությունից դուրս թողնվեցին Քրիստոսի աստվածեղեն եկեղեցիները, իբրև այգում եղած տնակը կամ իբրև սեխաստանում գտնվող պահակի ծածկը։ Կացնով ու մուրճով կործանեցին նրա դռները, հրկիզեցին նրա սուրբ խորանը և պղծեցին նրա անվան տաճարը։ Տիրոջ ժառանգությունը տրորվեց ճանապարհի խոզական երկրապիշ անցորդների պիղծ գարշապարների տակ։ Եկեղեցու կղերականների անբիծ արյունը ջրի նման անարգարացիորեն հոսեց Երուսաղեմի շուրջը։ Եվ օտարներից առավել տան բնակիչների կողմից բուսավ դառնության արմատը, որովհետև սյուներ համարվածները ապստամբվեցին Տիրոջ դեմ և, իրենց լեզուները զինելով նանրությամբ ու անիրավությամբ, մեր իշխանների առաջ խոսեցին թյուր ու խոտոր բաներ։ Խաբեբա ու ստախոս մարդիկ փոխարինեցին արդար ու ճշտախոս մարդկանց։ Տիրոջ հոտի արդար հովիվները անարգվեցին մեր զորավարների ու գլխավոր իշխանների առջև։ Իրենց գայթակղության պատճառով շատ հովիվներ ունեցան։ Եվ այդ պատճառով նախատինք ստացանք ստախոս ու անզգամ մարդկանց կողմից։ Ծաղրի առարկա դարձանք այն ազգերի կողմից, որոնք մեր շուրջն էին, և հոտերով հովիվների հետ միասին հափշտակվեցինք դաժան ապստամբների կողմից՝ գերության քշվելով ու վաճառքի հանվելով։ Իսկ շատերը նուրբ ձեռքերով ու մաքուր սրտով ենթարկվեցին մեծ ծեծի, գելարանների, կապանք-

տանգանաց և բանտից և անհնարին նեղութեանց զփորձ առին, և բարձան յերեսաց անիրաւութեանց այնոցիկ, որք բարձրացուցին իսկ զանարգանս մոլորութեան յանձինս իւրեանց. և դիակունք ծառայից Աստուծոյ գէշ թոչնոց երկնից արկան, և մարմինք սրբոց Բարձրելոյն 'ի կերակուրս գազանաց տուան։ Եւ ոչ ոք գտաւ որ յինքեան բերէր զնախանձ Տեառն ամենակալի և 'ի բաց տարեալ տրոհէր 'ի տանէ Տեառն զմշակսն անօրէնութեան. և կամեցողք այսպիսեացս ապա յիրաւի զանարգութիւն մոլորութեան յանձինս իւրեանց կրեցին։

Եւ արդ՝ ես այսուհետև դարձեալ դարձուցից անդրէն զբանս իմ յողբս և Ցախծեալ սրտիւ ոչ դանդաղեցայց 'ի խորհուրդ առնուլ 'ի մերոցս վտանգաւոր կրից զթուցեալ գերանդին ընդ օդս՝ 'ի Զաքարիայ առածութեանցն, զսուրն երկսայրի՝ զորբեալն արեամբ որդւոց երկրիս մերոյ՝ զբազմախողխողն զառաքեալն 'ի վրէժխնդրութիւն գողոց և գողակցաց, ստոց և ստերգմանց, ըստ որում և տեսեալ իսկ եղև մեզ յերեսաց հարաւոյ բորբոքեալ չարիք և յոգնածախող տանջանարանք յորդիս ժողովրդոց մերոց. որք և հարան իսկ և խղխայթեցան սովով և սրով և խարդաւանական գրժողութեամբ մինչ 'ի մարմին և յոսկերս և յուղեղս թափանցանց բերեալ։ Մի՛ անտեսեսցի ինձ աստանօր և միւս մարգարէութիւնն, որ իբրև զինձ պատահեալ ասէ յուղղոջ այնոցիկ, որք շարութեամբ են զգածեալք՝ իբրև յայնժամ ուրեմն երբեմն զկռամոլ Ասորեստանեայսն։ Յառաջ կացցէ ինձ աստ և Մովսէս՝ այրն Աստուծոյ, որ զհատուցումն գործոց վրիժուց մերոց հրապարակագոյժ առնէ յաւուր վրիժուց խնդութեան մերոյ՝ փայլակնաբար իմն սրեալ սուսերին 'ի վերայ հասանիլ և յագուրդ ոչ առնուլ առ 'ի յուտել զմարմինս վիրաւորաց գերելոց գլխոց իշխանաց մերոց։ Զի որք երբեմն 'ի բարձրագոյն աստիճանս նստէին և 'ի խորանս պետականս վերամբարձ ճոխանային, արդ աւադիկ խարդաւանեալք դիւրադաւ եղեն և պարտաւորք մահուն տուգանաց 'ի չար ոստիկանէն։ Վասնզի զոմանս և 'ի մետաղս բանտից բերեալ՝ տակաւին դատէր սրով և սովով և գանիւ. իսկ զոմանս, զոր և պատուաւորս առ 'ի յինքենէ թուեցուցանէր տեսողացն՝ զնոսա 'ի ծածուկ խարդաւանէր մահու պարտաւորութեամբ։ Ըստ որում նախ դատեալ դրժեացն 'ի գաղտնի զիշխանն Գրիգոր, զՀայկազունսն զարմի և զքեռորդին արքային Սմբատայ, որ ըստ նախապատմեալ իմոյ բանին անձնտու լեալ էր 'ի ծառայութիւն նմա, զոր դեղրմպութեամբ մահու ողողեալ զորովայն նորա՝ այնպէս տագնապաւ տարակուսից վախճանէր. տարեալ թաղեալ զնա 'ի ձեռակերտ իւր 'ի սրբանրանին Սուրբ Շիմոնեայ։ Սոյնպէս և զքաջարի մանուկն Մուշեղ՝

ների, խոշտանգումների, բանտարկութեան ու անհամար նեղությունների և վերացան այն անիրավների երեսից, ովքեր իրենց մեջ բարձրացրին մոլորյալ անարգանքը։ Աստծու ծառաների դիակները նետվեցին երկնքի թռչուններին որպես լեշ, իսկ բարձրյալի սրբերի մարմինները որպես կերակուր տրվեցին գազաններին։ Եվ չգտնվեց մեկը, որ իր մեջ կրեր ամենակալ Տիրոջ նախանձը և հեռու տանելով Տիրոջ տաճարից՝ բաժաներ անօրեն մշակներին։ Եվ այսպիսի բան կամեցողները հիրավի կրեցին մոլորության անարգանքը։

Եվ արդ՝ այսուհետև ես դարձյալ իմ խոսքը այնտեղից կվերադարձնեմ դեպի ողբը և տխուր սրտով չեմ դանդաղի մտաբերել ըստ Զաքարիայի ասածի, մերոնց վտանգավոր կրքերից, օդի մեջ թռած գերանդին՝ երկսայրի սուրը, որ սրբվել էր մեր երկրի որդիների արյամբ։ [Կմտաբերեմ] բազմախողխող առաքյալին որպես վրեժխնդրություն գողերին, գողակիցներին, ստախոսներին, երդմնազանցներին։ Ուստի և մենք տեսանք հարավից բորբոքված չարիքը և մեր ժողովրդի որդիներին ամեն կերպ վնասող տանջարանները, իսկ որդիները խփվեցին ու թարախոտվեցին սովով, սրով, խարդավանքով, որ թափանցեց ու հասավ մինչև մարմինը, ոսկորները և ուղեղը։ Ես այստեղ չեմ անտեսի և մյուս այն մարգարեությունը, որ, իբրև ինձ, ասում է, պատահում է նրանց ճանապարհին, ովքեր չարությամբ են համակված, ինչպես այն ժամանակ երբեմնի կռամոլ ասորեստանցիները։ Այնտեղ իմ առաջ կանգնում է Մովսեսը՝ Աստծու մարդը, որ հրապարակավ հայտնում է մեր գործերի վրեժի հատուցումը մեր վրեժխնդրության օրը՝ փայլակի նման սուսերով վրա հասնելով և մեր իշխանների գլուխները ու գերի վիրավորների մարմինները ուտելուց չհագենալով։ Որովհետև նրանք, ովքեր երբեմն ավելի բարձր աթոռների էին նստում և իշխական բնակարաններում երկրից վեր բարձրանալով հպարտանում էին, ահա այժմ խաբեբաները բռնվեցին ու մահապարտության տույժի ենթարկվեցին ոստիկանի կողմից։ Քանի որ ոմանց բանտ բերելով՝ տակավին պատժում էր սրով, սովով ու ծեծով, իսկ ոմանց էլ, որոնք տեսնողներին իրենից ավելի պատվավոր էին թվում, ծածուկ դատապարտում էր մահվան։ Ըստ որում նախ թաքուն վճիռ կայացնելով՝ նա խաբեությամբ սպանեց Սմբատ արքայի քեռորդի Գրիգոր իշխանին՝ իր տոհմի հետ միասին, որը, ինչպես նախապես ասացի, կամավոր հանձնվել էր նրա ծառայությանը։ Մահացու թույն լցնելով նրա որովայնը՝ այնպես տագնապով ու տարակուսանքով մեռցրեց։ Եվ տարավ թաղեց իր ձեռակերտում, սուրբ Շիմոնի սրբարանում։ Սրա նման էլ

որդի արքային Սմբատայ, որ ըստ նենգ գործելոյ 'ի բնակչաց Ուտի գաւառի ձերբակալ եղև, և զնա ևս 'ի նոյն տանջանս հարեալ և զդեղ մահու արբուցեալ՝ վճարէ 'ի կենացն. զորոյ բարձեալ զմարմինն սպարապետին Աշոտի՝ առաքէր հանգուցանել 'ի քնարանի նախնական հանգըստարանացն 'ի Բագարան։ Սոյնպէս և զզուարթածաղիկ տիօք զերիտասարդն Սմբատ՝ զեղբօրորդի Սմբատայ, որ ինքնակամ դիմագրաւ դիմեալ 'ի ծառայութիւն Հագարացւոյն, և զնա ևս նովին դրժողութեամբ գաւոյ կորուստանէր 'ի կենաց աստի. զոր տարեալ թաղեցին 'ի Դարբոնս ընդ հարս իւր։ Եւ վասն այսորիկ իսկ 'ի բերան առեալ իմ զսուգ սիրելեացն՝ և ձայն 'ի շրթանց գուժեալ լալոյ և պաղատանաց, կոծիմ կոծ ողորմ. վասնզի ըստ մեղաց մերոց վախճանեցան աւուրք մեր ամօթով և կորեան յունայնութեան յուսոյ։ Իսկ ապա և զայլս ևս ոմանս ազատագունդ որեարս ըստ սմին սակի սպառէին, զորս ոչ է ինձ այժմ ասել մի՛ ըստ միոջէ։ Եւ գրեթէ 'ի պատուաւորաց անտի 'ի մեծամեծացն յանձնտու նմա եղելոցն և ընդ ձեռամբ անկելոցն ոչ ոք ապրեցաւ 'ի չարախտավատ և 'ի խարդաւանական մահուն տուգանաց, բայց միայն խոհեմամիտ թագաւորն Գագիկ և չքնաղագեղ սպարապետն Աշոտ, որ ուշ 'ի կուրծս արարեալ և իմաստայեղց մտաց խորհրդեամբ տեսեալ միանգամայն իսկ զելս գնացից տերանց և եղբարց առաջի իւրեանց, և յայնպիսի անհնարին մահուց զանգիտեալ՝ ամենայնիւ յամենայն բերեալ, հարան 'ի կամս ոստիկանին 'ի կատարելութիւն բանի և խորհրդոց իւրեանց ճեպեալ զանձինս։ Այլ և պատանի մանուկն Վասակ ևս՝ որդի Աշոտոյ գահերէց իշխանին Սիւնեաց, որ անձնտուր իւրովի լեալ ոստիկանին՝ և ապա 'ի դիպահոջ զնա արարեալ։ Իսկ յաւուր միում իբրև գիշերն նսեմանայր՝ յանկարծակի զվաղակաւորն պողովատիկ 'ի գործ առեալ՝ զպահապանսն դիաթաւալ կացուցանէր. և ապա հարուստ մի անցեալ գնացեալ և կախեալ ընդ պատուար պարասպի քաղաքին՝ փախչէր։ Իսկ իբրև ձայն պահնակացն զօրացեալ լինէր՝ և հրոսակս զկնի պատրաստէին. մինչ յայս մինչ յայն՝ նա 'ի փողոցս այգեստանայն անկեալ, երթայր գնայր 'ի հայրենի ամրոցս աշխարհին իւրեանց։ Ապա այնուհետև չարութիւնն զգաղտնի պատրուակն մերկացեալ՝ զոմանս 'ի պատուական ազատաց բազմախողխող երկաթոյն տային կերակուր. իսկ այլք ոմանք փախստեայ 'ի ծործորս և 'ի ծերպս վիմաց տարեալ մղէին։ Եւ ապա սարսեալ ամենայն աշխարհն սորեցին յայրս, թաքեան յանտառս, ելին 'ի քարանձաւս։ Իսկ ապա կանայք ևս պատուականք տիրուհիք ըմբռնեալք 'ի գերչաց անտի առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան մարմնոյ նեղութեանց՝ ոչ ինչ յիշեալ զաւուն

քաջարի մանուկ Մուշեղին՝ Սմբատ արքայի որդուն, որ Ուտի գաւառի բնակիչների նենգության պատճառով բռնվեց. նրան էլ նույն տանջանքների մեջ գցեցին ու թույն խմեցնելով սպանեցին։ Վերցնելով նրա մարմինը՝ Աշոտ սպարապետը առաքում է թաղելու Բագարանում գտնըվող պապենական գերեզմանոցում։ Նույն խարդավանքով նա այս կյանքից զրկում է նաև կայտառ երիտասարդ Սմբատին՝ Սմբատ [արքայի] եղբորորդուն, որը հոժարակամ գնացել էր ծառայելու հագարացուն։ Նրան տարան ու թաղեցին Դարոնքում, իր հայրերի մոտ։ Եվ այս պատճառով ողբալով իմ սիրելիների սուգը և շրթունքներով գուժելով լացի ու պաղատանքի ձայնը՝ ողորմագին լաց ու կոծ եմ անում, քանի որ մեր մեղքերի պատճառով ամոթով վերջացան մեր օրերը ու կորան հույսի ունայնության մեջ։ Այնուհետև նույն ձևով կոտորում են նաև ազնվականներից շատերին, որոնց մասին այժմ ես չեմ ասի մեկ առ մեկ։ Եվ այն պատվականներից ու մեծամեծներից, որոնք անձնատուր էին եղել նրան ու ընկել նրա ձեռքը, գրեթե ոչ ոք չփրկվեց այն անտանելի ու չարաչար մահից, բացի միայն խոհեմ Գագիկ թագավորից և չքնաղագեղ Աշոտ սպարապետից, որոնք իրենց մտքում լավ մտածելով, իրենց առջև խելամտությամբ միանգամից տեսնելով տերերի ու եղբայրների շարժման ելքը և այդպիսի դաժան մահվանից վախենալով, ամեն ինչ հաշվի առնելով, վերջնական խոսքով ու խորհրդով շտապեցնելով իրենց՝ ենթարկվեցին ոստիկանի կամքին։ Նաև պատանի մանուկ Վասակը՝ Սյունյաց գահերեց իշխան Աշոտի որդին, իր կամքով անձնատուր եղավ ոստիկանին, որը նրան բանտարկեց։ Իսկ մի օր, երբ վրա էր հասնում գիշերը, [Վասակը] հանկարծակի, գործածելով պողպատյա կարճ սուրը, պահակին գետին է փռում և ապա բավական հեռանալով ու գնալով՝ անցնում է քաղաքի պարսպի պատից ու փախչում։ Իսկ երբ ուժեղանում է պահակների ձայնը, նրանք զորք են պատրաստում նրա հետևից ուղարկելու համար։ Այդ ը՛ծացքում նա դուրս է գալիս այգիների ճանապարհը և գնում-հասնում է իրենց աշխարհը, իր հայրական ամրոցները։ Այնուհետև չարության գաղտնի պատրվակը հայտնի դարձնելով՝ պատվական ազնվականներից ոմանց բազմախողխող սրին էին կերակուր տալիս, իսկ ոմանց էլ փախցնում ու քշում էին ձորերն ու ժայռերի ծերպերը։ Հետևաբար ամբողջ ժողովուրդը սարսափելով՝ ոմանք մտան քարայրերը, ոմանք թաքնվեցին անտառներում, ոմանք բարձրացան քարաժայռերը։ Իսկ հետո պատվական կանայք ու տիրուհիները, բռնվելով այն գերիչների կողմից, ավելի ծանր բեռ ու նեղություն կրեցին՝ չհիշելով մայրական ազատու-

փափկութեան մայրենի ազատութեան։ Այլ ոմանք 'ի դիպահոջ բերեալք 'ի խաւարչտին տեղիս՝ գրեթէ քրձազգեացք և խոշորազգեստք և կաշկանդեալք չքաւորութեամբ և կարօտեալք աւուրն պարենի. և ոչ թերեւս ազատ փափկացեալ լինէր քան զգեղջուկ վշտացեալ։ Եւ այլք ոմանք մարք յղիք 'ի տուգանս անհնարինս մահարբերեալք՝ գերեզմանք լինէին մանկանց իւրեանց։ Իսկ այլք շարախտավատ դառնութեամբ մահու սպառեալ զկեանս իւրեանց՝ ոչ ինչ ընդհատ երևէին յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհս։ Եւ այսպէս ոչ գտաւ լուծեալ կապարան դատերաց երկրի մերում, և ոչ թօթափեալ փոշի գլխոյ անդստին իսկ 'ի վշտամբեր տիկնաց, որ իբրև զաճիւն հնոցի մածեալ ունէր։ Այլև եղկելի տուգանօք և հեծութեամբ բաղմաւ տանջեալ. և սուգ զգեցան տապատք զարդուց նոցա. և խանդարեցան սպասք երախանաց նոցա. և սարդի ոստայնք ձգեցան 'ի սենեակս առագաստից նոցա. և ծխոտեցան իսկ միանգամայն սրահակք և սրսկապանք նոցա։ Եւ այսպէս ապա զօրացեալ մահու և կլեալ զբաղումս։ Արտօսր հոսեալ՝ կալաւ զամենայն երեսս երկրի։— Այլ այսոքիկ քեզ բաւականացեալ՝ ես 'ի կարդ պատմութեանն դարձայց, ոչ թողլով կիսակատար զբանիցն ոճ։

Յայսմ վայրի Հայկազուն եղբարքն հարազատք Գրիգորոյ զրաւամահ եղելոյ յոստիկանէ անտի՝ Սահակ և Վասակ զփոյթ պնդութեան յանձինս բարձրացուցեալ 'ի ժամանակս հալածանաց և զուն գործեալ։ զի գոնէ հնարս մարթասցեն գտանել և 'ի դերևս 'ի նեղչացն ելանել և ամրանալ 'ի սեպհական ամրոցի տէրութեանց իւրեանց, և ոչ գնալ չուել յաշխարհս օտարաց մինչև անցցէ, ասեն, բարկութիւն Տեառն։ Եւ ապա նաւակառոյց լեալք սրավար թիակօք իբր 'ի տապանի ինչ՝ երթեալ զոդեալ ամրանային 'ի Սևան կղզւոջ հանդերձ քրիստոսակրօն և ճշնաւոր մարբն իւրեանց և կանամբք և որդւովք և ազատագունդ բանակով. վասնզի զրահեղեղ յորձանուտ պղտորութեան Իսմայէլեան հինիցն ևս քան զևս սաստկացեալ բախէր զաւազահիմն տուն բնակութեանս մերոյ։ Իսկ ապա ազդ լեալ այն կանանցախօս դառնահամբոյր Հագարացւոյն և զօրս գումարեալ՝ առաքէ 'ի վերայ նոցա։ Եւ իբրև հասին յեղր ծովակին՝ սուր թշնամւոյն պատնէշ պաշարմամբ շուրջ զնոքօք պատեալ։ Եւ ապա 'ի մտի եղեալ 'ի միասին սիրելի եղբարցն, թէ զուցէ լքուցումն ինչ նոցա 'ի թշնամեացն լիցի և 'ի ջրապատ անդրնդոցն ոչ գտանիցի տեղի փախստեան և մատնեսցին 'ի ձեռս հեթանոսական բռնադատացն և նոցա տղմուտ չարութեանն. և այնուհետև զձեռս նաւաստեացն զօրուցուցեալ, և նաւեալ չուեալ գնացեալ մարբն հանդերձ և առհասարակ ընտանեօք և աղխիւ ևս՝ որչափ ձեռն բաւականին կարէր կրել, անկանէին հապճեպիւ յամուր գաւառն Մթափորոյ։

թյան փափկության անունը։ Իսկ ոմանք բանտ դրվեցին խավարշտին տեղերում։ Նրանք ապրում էին քուրջ ու կոպիտ շոր հագած, կաշկանդված չքավորությանը և օրվա հացի կարոտ, բայց թերևս ազնվականները ավելի փափկացած չէին, քան գեղջուկները վշտացած։ Եվ առանձին հղի մայրերը, դատապարտվելով դաժան մահվան, իրենց մանուկների համար գերեզման էին դառնում։ Իսկ ուրիշները, իրենց կյանքն ավարտելով մահվան շարախտավոր դառնությամբ, չէին տարբերվում նրանցից, ովքեր աշխարհ չմտան։ Եվ այդպես չքանդվեցին մեր երկրի դուստրերի կապանքները, և ոչ էլ թոթափվեց վշտալի տիկնանց գլխի փոշին, որը կպել էր իբրև հնոցի մոխիր։ Նրանք տանջվեցին նաև ողբալի տույժով ու մեծ հեծությամբ, և սուգ հագան նրանց զարդատուփերը, խանդարվեց նրանց սեղանների սպասքը, սարդի ոստայններ ձգվեցին նրանց հարսնարաններում, և ամբողջովին ծխոտվեցին նրանց սենյակներն ու ննջարանները։ Հետո զորացավ մահը և կուլ տվեց շատերին։ Արտասուքը հոսելով պատեց ամբողջ երկրի երեսը։— Բայց այսքանով քեզ, [ընթերցող], բավարարելով՝ ես կվերադառնամ իմ պատմության շարադրանքին՝ կիսատ չթողնելով այն։

Այդ ժամանակ ոստիկանի կողմից անտեղի սպանված Գրիգորի հայկազուն հարազատ եղբայրները՝ Սահակն ու Վասակը, հալածանքների ժամանակ ուժեղ իրարանցում բարձրացրին, ձգտելով, որ գոնե կարողանան հնար գտնել իրենց նեղողների ձեռքից ազատվելու ու ամրանալու իրենց տերության սեփական ամրոցներում և չհեռանալու, զբնալու օտար աշխարհներ, մինչև, [ինչպես] ասում են, անցնի Տիրոջ բարկությունը։ Եվ ապա նավեր պատրաստելով ու սրընթաց թիակներով իբր տապանի մեջ վարելով՝ նրանք գնացին, թաքնվեցին ու ամրացան Սևան կղզում իրենց քրիստոնյա ու ճգնավոր մոր, կանանց, որդիների ու ազնվական բանակի հետ միասին, քանի որ իսմայելյան ավազակների՝ գետի նման հոսող ու պղտոր հորձանքը է՛լ ավելի սաստկացած բախում էր մեր բնակության ավազահիմն տունը։ Բայց երբ այդ բանը հայտնվեց կնավարի խոսող դաժան հագարացուն, նա զորք է հավաքում և ուղարկում նրանց վրա։ Եվ երբ հասան ծովակի ափին, թշնամու սուրը պատի նման շրջափակեց նրանց։ Այնուհետև սիրելի եղբայրները միասին որոշեցին, թե գուցե իրենց հուսալքվելը թշնամիներից լինի, և ջրապատ անդունդներում փախչելու տեղ չգտնվի ու իրենք մատնվեն հեթանոս բռնակալների ու նրանց տղմոտ չարության ձեռքը։ Դրա համար նավաստիների ձեռքերը հզորացնելով՝ իրենց մոր և առհասարակ ընտանիքների ու գերդաստանների հետ գնացին, հեռացան այնքան, որքան ի վիճակի էին և հապճեպ ընկան Միափորի

Իսկ Իսմայէլեան զօրապետին մտեալ 'ի կղզի ամրոցին՝ զմնացեալ կապուտ աւարին ոչ սակաւ ինչ քան թէ բազումս ժողովեալ՝ 'ի դիպահոչ թողոյր. և ինքն ասպատակ սփռեալ՝ դիմէր կրթէր անցանել զհետ նոցա։ Որոնց ընդ կրունկն դարձեալ առ 'ի դիմի հարեալ թշնամեացն, և բազում վիրաւորս 'ի նոցանէ խածատեալ և ճարակ սրոյ տուեալ՝ 'ի փախուստ զնոսա դարձուցանիէն, և ինքեանք չուեալ երթեալ գնացեալ զօղեալ դադարէին յանձաւախիտ ամրոցս մայրեացն Գարդմանայ և Արցախայ՝ ակնկալեալ այցելութեան Տեառն։ Անդ հանդեաւ 'ի Քրիստոս պարկեշտասուն և սրբափայլ կրօնիւք մեծն 'ի ճգնաւորս մայր նոցունց և քոյր արքային Սմբատայ՝ որ յետ ամաց ինչ դառնալոյ և տիրելոյ նոցա 'ի վերայ սեպհական և հայրենի իշխանութեան՝ տարեալ հանգուցանէին զմարմին նորա 'ի քնարանի իւրում մերձ 'ի ձեռակերտ եկեղեցի իւր 'ի Շողագայի։

Իսկ անօրէն ոստիկանն տեսեալ, եթէ կուսակալք և կողմնապահք իւր ձեռնթափք լինին յաղթութեամբք մեծաւ յամենայն կողմունս երկրիս մերոյ՝ և ոչ ոք է որ 'ի դիմի նոցա հարկանի, այնուհետև ասպատակ շար հինից ընդ ամենայն կողմանս սփռէր 'ի Սիսական ազգս և 'ի յայնկոյս Տաշրայ և Կանգարաց և յեզր ծովակին Գեղամայ։ Եւ ապա զթագաւորն Գագիկ հանդերձ իւրովքն ևս նախարարօք և բազում զօրօք առաքէ յամուրն Վաղարշակերտի պատնիշիւ պատել պաշարել և առնուլ զնա. որք և երթեալ գնացեալ իսկ և 'ի բազում աւուրս մարտ ընդ ամրոցին եղեալ՝ ոչինչ կարէին ստանել նմա։ Եւ թէպէտև մարդիկ ամրոցին բազում վիրաւորս 'ի թշնամեաց տապաստ արկանէին. սակայն նոքա ըստ հրամանի ջերանելոյն ոչինչ իշխեցեալ անցանել՝ նստեալ պահէին զամրոցն 'ի բազում աւուրս։ Իսկ այն զօր, որ 'ի կողմանս առաքեցան յապստամբող յոստիկանէն՝ իբրև զհուր կայծակնահարեալ ընդ ոլորտս երկրիս մերոյ 'ի վեր բարձրացուցին զբոցն տոչորիչ առ 'ի ցնդել և 'ի հնձել և 'ի մաշել զԱրամեան ազգիս բնակիչս, և միանգամայն իսկ ազատն և անազատն, զօրաւորն և պատերազմողն, յիսնապետն և դատաւորն, խորհրդականն և քննիչն, իմաստունն և հանճարեղն, ծերն և տղայն, մեծն և փոքրն մատնեցան 'ի ձեռս բռնագատ գերչացն. ըստ մարգարէութեանն, թէ «Խարեբայք տիրեսցեն ձեզ։» Եւ այսպէս նախանձ Տեառն զօրութեանց եցոյց մեզ յաւուրս վրէժխնդրութեան մերոյ զինչ լինելոց էր յապա ժամանակի։

Եւ ապա ամենայն ոք ողբակից ինքեան առեալ աստանօր զԵրեմիաս և հայցեալ ծով զգլուխս իւրեանց և աղբերս արտասուաց զաչս, դի մի՛ լքանիցին ողբալ գուժել կոծել զանցս անհնարին աղէտիցն. վասպահով գավառը։ Իսկ իսմայելյան զորապետը, մտնելով կղզու ամրոցը և մնացած կողոպուտից ոչ թե քիչ, այլ շատ բան հավաքելով, փակում, թողնում է, և ինքը ասպատակելով ընկնում է նրանց հետևվից։ Իսկ նրանք ետ դառնալով ու դիմահար դուրս գալով թշնամու դեմ՝ նրանցից շատերին վիրավորում են ու սրի ճարակ տալիս, մնացածներին փախուստի մատնում, իսկ իրենք հեռանում, գնում ու թաքնվում են Գարդմանի ու Արցախի անտառների անձավաշատ ամրոցներում՝ ակնկալելով Տիրոջ խնամակալությանը։ Եվ այնտեղ վախճանվեց պարկեշտասուն ու սրբափայլ կրոնով դաստիարակվածն ու ճգնավորներից մեծը՝ նրանց մայրն ու Սմբատ արքայի քույրը, որի մարմինը տարիներ անց, երբ նրանք վերադառնում ու տիրում են իրենց սեփական ու հայրական իշխանությանը, տանում թաղում են իր գերեզմանոցում, Շողագայում կառուցած իր եկեղեցուն մոտիկ։

Իսկ անօրեն ոստիկանը տեսնելով, որ իր կուսակալներն ու կողմնակալները ձեռք են քաշում մեր երկրի բոլոր կողմերից մեր մեծ հաղթության պատճառով, և չկա մեկը, որ նրանց դեմ դուրս գա, նա շարավազակների հետ միասին ասպատակում է բոլոր կողմերում, Սիսականի ժողովուրդներին, Տաշիրի ու Կանգարի այն կողմերում և Գեղամա ծովակի ափին։ Ինչպես նաև Գագիկ թագավորին իր նախարարների հետ միասին մեծ զորքով առաքում է Վաղարշակերտի ամրոցը՝ շրջապատելու, պաշարելու ու գրավելու այն։ Նրանք գնացին և շատ օրեր կռվեցին ամրոցի դեմ, բայց ոչ մի վնաս չկարողացան տալ նրան։ Եվ թեպետև շատ մարդիկ են վիրավորվում ամրոցում ու գետին տապալվում թշնամիների կողմից, սակայն նրանք այն մոլեգնածի հրամանով չեն համարձակվում որևէ բան անել, այլ նստում, պահում են ամրոցը բազում օրեր։ Իսկ այն զորքը, որ ապստամբ ոստիկանի կողմից առաքվեց այդ կողմերը, որպես կայծակի հուր փայլատակելով մեր երկրի բոլոր կողմերում, բարձրացրեց տոչորող բոցը՝ ցրելու, հնձելու և ավերելու հայոց բնակիչներին։ Եվ բոլորին մեկտեղ՝ ազատին ու անազատին, զորեղին ու կովողին, հիսնապետին ու դատավորին, խորհրդականին ու քննիչին, իմաստունին ու հանճարեղին, ծերին ու երեխային, մեծին ու փոքրին մատնեցին բռնակալ գերիշների ձեռքը՝ ըստ այն մարգարեության, թե «Խարեբաները կտիրեն ձեզ»[74]։ Եվ այսպես զորությանց Տիրոջ նախանձը մեր վրեժխնդրության օրերին մեզ ցույց տվեց այն, ինչ լինելու էր հետագայում։

Եվ ամեն ոք այստեղ իրեն ողբակից դարձնելով Երեմիային՝ արտասուքի աղբյուրներն աչքերում իրենց գլխավորներին խնդրում էին, որպեսզի չլքեն ողբալու, գուժելու, սգալու անհամար աղետների դեպ-

սընդի հէնք Իսմայէլեան ասպատակացն իբրև զհրդեհս յանտառս և 'ի շամբս վառեալ, այսպէս սփռեալ տարածեցին զճարակս բոցոյ 'ի մէջ ժողովրդոց մերոց. և գտաւ ամենայն գլուխ 'ի ցաւս և ամենայն սիրտ 'ի տրտմութիւն։ Զայս ապա տեսեալ և զմտաւ միանգամայն ածեալ թագաւորն Գագիկ հանդերձ եղբարբն իւրով Գուրգենաւ, իբր թէ 'ի ձեռանէ նոցա և 'ի կարապետելոյ այս ամպրոպ չարութեան և ոճիրք գառնութեան զեղեալ շուրջ զեկեղեցեաւ Քրիստոսի և զԱստուծոյ հաւատացեալ ժողովուրդք. այլ և զիւրեանց ևս անձանց խարդաւանական մահու կարծիս 'ի մտի եղեալ և զանգիտեալ երկիւղէ բռնադատին. այնուհետև աստուածային իմն գոգցես երկիւղիւ կշտամբեալ և յանդիմանեալ զանձինս իւրեանց, և զղջացեալ 'ի սիրտս իւրեանց՝ ապաշխարեցին ապաշխարողական կարգօք, և 'ի մտի եղեալ հատուածիլ գնալ յաշխարհ տէրութեան իւրեանց։ Սակայն առժամայն ոչ յաջողեցաւ նոցայն խորհուրդ։

Ապա այնուհետև զնոյն բարեաց իմացուածս յայտ ածեալ արքային Սմբատայ, և միաբանեալ ընդ նմա ծածկաբար՝ խնդրէին ժամ դիպող զիմաստս խորհրդեանն կատարել, և զգործեցեալ շարութեանն գեղեցիկ բարեպաշտութեամբ հանդիսիս 'ի բաց մերկանալ յանձանց։ Բայց արքայ Սմբատ չուեալ երթեալ զօղէր յամրոց վայրս Երասխաձորոյ՝ ակնկալեալ ցածուցանել թերևս զբորբոքեալ տոչորումն չարին, որ մածեալ ունէր զԱսքանազեանս ազն։ Վասնզի 'ի բանի արարեալ զմեծ և զխոհեմ և զհանճարեղ իշխանն Հայոց Գրիգոր՝ խնդրէր զխաղաղութիւն յամիրապետէն առհասարակ հօտին Քրիստոսի, և շիջուցանել զհարեալ հուրն յանօրէն ոստիկանէն։ Իսկ իշխանն մեծ թէպէտև դուն 'ի վերայ գործեաց ոգւով չափ, բայց զի արքունական դուռն ընդ այն ժամանակս շփոթեալ էր յապստամբացն Եգիպտացւոց ըստ հնարիմաց իշխանին խնդրոյ՝ ոչ կարացին ժամանել յօգնականութիւն արքային Սմբատայ։

Բայց և արքայն Հոռոմոց Բարսեղ իբրև լուաւ զայս ոճիրս չարի զմեօք մածեալ՝ բազում զօրու հորդան տուեալ գալ յօգնականութիւն Սմբատայ՝ յանկարծակի ժամանեալ նմա ելք հասարակաց կենաց մարդկան և վախճանեալ, թագաւորէ ընդ նորա եղբայր նորուն Աղէքսանդր։ Եւ ապա շփոթ աղմկի զնովաւ շուրջ պատեալ յապստամբողաց արանց՝ և նա ևս ոչ կարաց ժամանել յօգնականութիւն։

Այլ և համազունք ևս արքային մերոյ՝ իշխանք և կուսակալք և պետք ոմանք սպառեալք իսկ էին 'ի խարդաւանական մահու յոստիկանէ անտի՝ ըստ նախապատում իմում բանի։ Եւ ոմանք 'ի հարկէ,

քերը։ Քանի որ իսմայելյան ավազակները, ինչպես հրդեհը անտառներում ու շամբերում, այդպես սփռելով բոցի նյութը՝ տարածեցին մեր ժողովրդի մեջ։ Եվ ամեն մեկն ընկավ ցավի, իսկ ամեն սիրտ՝ տրտմության մեջ։ Գագիկ թագավորն ու նրա եղբայր Գուրգենը երբ այս բանը տեսան, այդ ամբողջի մասին մտածեցին, թե իրենց մեղքով ու առաջնորդելու պատճառով այս չար ամպրոպն ու դժնդակ ոճիրները լցվեցին Աստծու հավատացյալ ժողովրդի ու Քրիստոսի եկեղեցիների շուրջը։ Նրանք նաև կասկածում էին, որ իրենց կարող են խարդավանքով սպանել և վախենալով բռնակալի երկյուղից՝ ասես աստվածային երկյուղից իրենց կշտամբելով ու հանդիմանելով՝ զղջացին իրենց սրտում, ապաշխարական կարգով ապաշխարեցին և մտադրվեցին քաշվել գնալ իրենց աշխարհը։ Սակայն ժամանակավորապես չհաջողվեց նրանց այդ մտադրությունը։

Այնուհետև այդ նույն բարի միտքը հայտնելով Սմբատ արքային ու գաղտնի միաբանվելով նրա հետ՝ նրանք փնտրում էին հարմար պահ իրենց մտադրությունը կատարելու և գործած չարությունը գեղեցիկ բարեպաշտությամբ իրենց վրայից հեռացնելու համար։ Բայց Սմբատ արքան հեռանում, գնում ու թաքնվում է Երասխաձորի ապահով վայրերում՝ թերևս ակնկալելով հանդարտեցնել այն չարի բորբոքված տոչորումը, որ փաթաթվել էր հայոց ազգի վրին։ Քանի որ նա համոզել էր Հայոց մեծ, խոհեմ ու հանճարեղ իշխան Գրիգորին՝ ամիրապետից խաղաղություն խնդրելու Քրիստոսի ամբողջ հոտի համար և հանդգնելու անօրեն ոստիկանի կողմից վառած կրակը։ Իսկ մեծ իշխանը չնայած մահն աչքն առած ձգտում էր [օգնել], բայց որովհետև հնարագետ իշխանի խնդրանքի համաձայն արքունական դուռը այն ժամանակ եգիպտացի ապստամբների իրարանցման մեջ էր, Սմբատ արքային չկարողացան օգնության հասնել։

Բայց Հռոմեական Բարսեղ արքան, երբ լսեց չար [ոստիկանի]՝ մեր գլխին բերած այս ոճիրները, մեծ զորքով ճանապարհ ընկավ և եկավ Սմբատին օգնելու։ Հանկարծակի մարդկային կես կյանքում նրան հասավ վախճանը, և նա մահացավ։ Նրա փոխարեն թագավորում է նրա եղբայր Ալեքսանդրը։ Բայց հետո ապստամբ մարդիկ նրա շուրջը աղմուկ-աղաղակ բարձրացրին, և այդ պատճառով նա ևս չկարողացավ հասնել օգնության։

Տեր արքայի ցեղակիցները ևս՝ իշխանները, կուսակալները և առանձին պետեր, սպանվել էին այն ոստիկանի խարդավանական մահով, ինչպես որ նախապես ևս պատմեցի։ Իսկ ոմանք հարկադրաբար, ուրիշները առանց հարկադրանքի, [այն է]՝ մերձավորներն ու հեռա-

և այլք ոմանք առանց հարկի պատճառանաց՝ մերձաւորք և հեռաւորք յաւէտ հեռի եղեն 'ի նմանէ արդեամբք և խորհրդեամբք, և ծանեան զօտարս քան զնա։ Եւ զորս նայն սիրէր բարեկամութեամբ՝ քեցեալ 'ի բաց բերան 'ի նմանէ, խառնեալք ընդ թշնամին։ Իսկ ոմանք ընդվզեալք՝ ևս և 'ի վերայ յարուցեալք յարձակէին ընդդէմ նորա նախատանօք առ 'ի մահ ըստ սադրելոյ Հագարացւոյն, որպէս երբեմն առ մերոյն Տրդատայ։

Զայսոսիկ և ևս առաւել քան զսոյն զմտաւ ածեալ արքայի, եթէ չուգաւ իւրաքանչիւրոք զհետ հաճոյից իւրոց չարաց, ապա բառնայր յոյս փրկութեան նորա առ 'ի մարդկանէ՝ և միայն երկնաւոր այցելութեանն սպասեալ։ Այնուհետև երթեալ յամրոցս քարանձաւին 'ի Կապուտայ, որ 'ի ձորն Երասխայ՝ անդ դարեալ դադարէր. վասն զի անառիկ իսկ էր նա 'ի մարդկանէ։ Եւ վասնզի ձեռն Իսմայէլի սպառսպուռ առաւել քան զկարն 'ի վերայ ծանրանայր, զկնի ամի միոյ ապա թշնամւոյն պատնէշ պաշարման պատեցաւ շուրջանակի զամրոցաւն. և այնուհետև ըստ հրամանի ջերանելոյ ոստիկանին ռամիկն գրգռէր զաղմուկն 'ի պատերազմ և 'ի սպանութիւնս բազմաց՝ իբր 'ի բեկանող դազանաց ահագին իմն թնդմամբ ձայնի։ Իսկ մարդիկ ամրոցին անձնընտիր լեալք և կորովութեամբ կշռեալ զձգտումն մեքենայից, և զնետաձիգս 'ի լայնալիճ աղեղանց և զքարինս 'ի պարսատկաց, յաւէտ իմն և անհարին խողխողումն 'ի վերայ մարտիկ զօրացն հասուցանէին։ Եւ վասնզի ընդ ձեռամբ Հագարացւոյն բազումք էին զինուորեալք 'ի հաւատացելոց Քրիստոսի, զնոսա միշտ զինեալ՝ տայր ընդդէմ պատերազմի ամրոցին, յիւրսն խնայելով։ Իսկ զայն ոճիրս տեսեալ արքային Սմբատայ և զկորուստ քրիստոնէից, որ իբրև մօտալուտ իմն դահճաց լինէին խողխողեալք, այնուհետև զմահ մարմնոյն նպատակ ինքեան առաջի դնէր, և անձամբ անձին վճիռ հատեալ և փրկութեան այլոց հոգացող գտեալ՝ զիւր փրկութիւնն անտես արար։ Եւ ըստ Յովսէփու մարգարէաբարբառ բանին առ Տէր՝ պարտ վարկաւ, զի ինքն միայն մեռցի, և մի՛ ամենայն ժողովուրդն կորիցէ. և ըստ Եղիազարու՝ լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս խղճիւ։

Եւ ապա յետկար երդման ուխտի յոստիկանէն խնդրեալ՝ դէմ եդեալ էջս առ նա առնէ. և այնպէս փրկէ առհասարակ զքրիստոսադրոշմ ժողովուրդն 'ի տարապարտ մահուն վտանգէ զընդ իւրով ձեռամբ կացեալսն յամրոցին, այլ և որք ընդ ձեռամբ Հագարացւոյն էին զինուորեալ քրիստոնեայք։ Իսկ ոստիկանն դաւաճանող ըստ խորամանկն սատանայի՝ որպէս երբեմն ընդ Եւայի, նոյնպէս և աստ ընդ խորհրդական

վորները ավելի հեռու եղան նրանից գործով ու խորհրդով և օտարներին ավելի լավ ճանաչեցին, քան նրան։ Եվ ում նա սիրում էր բարեկամաբար, նրանից զատվեցին բացերանության պատճառով և խառնվեցին թշնամիներին։ Իսկ ոմանք էլ, ընդվզելով հագարացու սադրանքով, հարձակվում էին նրա վրա նախատինքներով ու մահվան ըստ պառնալիքներով, ինչպես որ երբեմն մեր Տրդատի նկատմամբ [էին վարվում]։

Արքան սրանց և սրանցից առավելների մասին մտածում էր, թե եթե ամեն մեկը գնաց իր չար հաճույքների հետևից, ապա վերանում է նրա փրկության հույսը մարդկանցից, և մնում է միայն սպասել երկնային խնամակալությանը։ Այնուհետև նա գնում է Կապուտի քարանձավի ամրոցը, որ գտնվում էր Երասխի ձորում, և իջևանելով այնտեղ է մնում, որովհետև այն անառիկ ամրոց էր։ Եվ քանի որ Իսմայելի բռնությունը ավելի էր ծանրանում նրանց վրա, մեկ տարի անց թշնամին պատի նման պաշարեց ու շրջապատեց ամրոցը։ Իսկ հետո մոլեգնած ոստիկանի հրամանով ռամիկը առաջ էր բերում պատերազմի ու շատերին կոտորելու աղմուկ, ջախջախվող մեծ գազանների ձայնի նման։ Իսկ մարդիկ, ամրոցին պաշտպան կանգնելով և ամենայն քաջությամբ չափելով շարագործի ձգտումը, նետաձիգները լայնալիճ աղեղներից՝ նետեր և պարսատիկներից քարեր էին թափում կռվողների վրա՝ նրանց հասցնելով անհամար վերքեր։ Եվ քանի որ հագարացու ձեռքի տակ կային Քրիստոսի հավատացյալներից բազմաթիվ զինվորներ, նա նրանց միշտ զինելով՝ ուղարկում էր ամրոցի դեմ պատերազմելու՝ խնայելով յուրայիններին։ Տեսնելով այդ բոլոր ոճրագործությունները ու քրիստոնյաների կորուստը, որ կարծես իրենց մոտ կանգնած դահիճների կողմից էին խողխողվում, Սմբատ արքան այնուհետև նպատակ դարձնելով իր մահը, անձամբ վճիռ կտրելով և ուրիշների համար փրկության հոգացողներ գտնելով՝ անտեսեց իր փրկությունը։ Եվ Տիրոջ նկատմամբ Հովսեփի[75] մարգարեաբարբառ խոսքի համաձայն նա արժանի համարեց, որ միայն ինքը մեռնի, և ոչ թե ամբողջ ժողովուրդը կորչի, և ըստ Եղիազարի[76] լավ համարելով քաջությամբ մեռնելը, քան արատավոր կյանքով ապրելը։

Եվ ապա ոստիկանից երդմնագիր խնդրելով՝ շարժվում է դեպի նա, խոնարհվում նրա առաջ և այդպիսով տարապարտ մահվան վտանգից առհասարակ փրկում է քրիստոնյա ժողովրդին՝ ամրոցում եղած իր ենթականերին և հագարացու ձեռքի տակ եղած այն քրիստոնյաներին, որոնց նա զինել էր։ Իսկ դավաճան ոստիկանը խորամանկ սատանայի նման, որպես երբեմն Եվայի հետ, նույնպես և այստեղ խոհեմ մար-

առնն կաճառէր բարեհամբոյր բանիւ. և նախ ոսկէհուռ մետաքսէիւք և լակոնացի զարդուք և շղաշատեռ վառիւք զնա զարդարեալ և զխարդաւանս ջաղխաթս նմա հնարէր մատուցանել առ 'ի հաւատարիմ զուիտ երդմանցն իւրոց նմա ցուցանել։ Այլ և ըստ ազահութեան իւրոց մտացն 'ի ցանկութիւն ընչից հարեալ վարանէր 'ի միտս իւր, թէ գուցէ գտանիցի ինչ արքայի 'ի պահեստի՝ և այսպիսի բարեպաշտութեամբ յայտ եկեալ՝ առցէ։ Եւ իբրև զծառ բարեպտուղ զծածուկ շար հնարս իւր յօրինեալ՝ հաճոյ կարծէր նմա թուեցուցանել, խորամանկելով ըստ որդւոյն կորստեան։ Այլ հանճարեղն ունկնդիրն ոչ հաւատայր զանձն նմա, զի ուշիմ մտաց ընտրութեամբն գիտէր զքծնումն քաղցրագոյն և զկատարումն դառնագոյն։ Եւ այսպէս զվրիժագործ բարս խարդախս առ փոքր ինչ դադարեալ՝ գնայր 'ի գաւառն Շիրակ. և այնուհետև ապա ըստ դարանակալ օձին Դանայ 'ի դերև ելանէր խոկացեալ դաւաճանութիւնն։

Իսկ զայսպիսի աղէտս տարակուսից 'ի մտի եդեալ իմաստնոյն Գագկայ, և թէ ամօթ պաշարեաց զընդունայն վաստակն, և լուծաւ սիրտ թագաւորին, և լքան սիրտք իշխանացն, յանկարծակի 'ի ձի աշտանակեալ՝ փախստեայ անկանէր յաշխարհն իւր։ Զի թէպէտև զթագաւորել Հայոց ոստիկանն նմա հաւատայր, սակայն նա խորհրդական իմաստիւ գիտէր զպատրուակ մահացան դրժող դառնութեան մտաց նորա. զի որ կամաւոր կուրութիւն յինքն կրէ՝ ոչ երբէք եկեսցէ յառողջութիւն։ Իսկ յետ շուելոյն Գագկայ՝ ապա ոստիկանին եկեալ 'ի Դվին քաղաք և զրահետ վարեալ տարապարտ 'ի վերայ արքային Սմբատայ, յայնմհետէ խոկայր նմա զդաւաճանութիւն անհնարին մահու. և ընդ կեանս զմահ խառնեալ՝ 'ի բանտ արգելոյր, եդեալ զոտս նորա 'ի պաշարումն երկաթի շղթայից. և դժոխրմբերելի իմն զտուն բանտի նմա պատրաստեալ 'ի միգի, ըստ բանին Յոբայ՝ տարածանէին զանկողինս նորա, և զտիւ՝ զիշեր նմա եդեալ, լոյս մերժեցաւ յերեսաց նորա 'ի նսեմութենէ կայանին։ Եւ այս առարկութիւն շարշարանաց և կապանաց և խոշտանգանաց գրեթէ զամ մի բովանդակ ձգեալ ընդերկարէր։ Եւ զկնի այսորիկ ապա ոստիկանն իբրև զկատաղ յեռանդեան 'ի շար միտս իւր բորբոքեալ՝ գնայր շուէր յամրոցն, որ կոչի Երընջակ՝ 'ի խլել բրել և կորուսանել և յատակել. վասնզի անդ զոդեալ ամրացեալ կային տիկնայքն բարեպաշտօնք՝ մայր մեծ իշխանին Սիւնեաց Սմբատայ և կին նորուն՝ քոյր Գագկայ, և կին Սահակայ եղբօր Սմբատայ, և այլ ևս պատուականք յազատաց արք և կանայք։ Ապա առեալ ընդ իւր տանէր և զարքայն Սմբատ պարանդեալ 'ի շղթայս. և անդ ապա զամ-

դու հետ խոսակցում է բարեհամբույր ձևով. նախ նրան զարդարելով ոսկեհյուս մետաքսով, լակոնական զարդերով ու բարակ շղարշով։ Նա հնար էր փնտրում նրան մատուցելու ջախջախիչ խարդավանք՝ նրան ցույց տալու համար հավատարիմ երդման դաշինքը։ Նաև իր ագահության պատճառով ցանկանալով տիրել նրա ունեցվածքին՝ իր մտքում վարանում էր, թե գուցե ինչ-որ բան գտնվի արքայի պահեստում ու այդպիսի բարեպաշտությամբ հայտնի դառնա, ու ինքը վերցնի։ Եվ իրեն ներկայացնելով բարեպտուղ ծառի նման ու ծածուկ շար միջոցներ հորինելով՝ աշխատում էր իրեն [նրա աչքում] հաճելի ներկայացնել՝ խորամանկելով որդու կորստյան մասին։ Բայց հանճարեղ ունկընդիրը իր անձը նրան չէր վստահում, որովհետև ուշիմ մտքի դատողությամբ գիտեր նրա քաղցր քծնանքը և ավելի դառն կատարածը։ Եվ այդպիսով նրա վրիժագործ խարդախ բարքը փոքր-ինչ դադարեցնելուց հետո նա գնում է Շիրակ գավառը։ Այնուհետև դարանակալած Դանա՞ օձի նման ի դերև է ելնում նրա մտածած դավադրությունը։

Իսկ իմաստուն Գագիկը, երբ այսպիսի աղետներ միտքը բերեց, ամոթը պատեց ընդունայն վաստակի համար, թուլացավ թագավորի սիրտը, իշխանները սրտակոտոր եղան, և [թագավորը] հանկարծակի ձի նստելով՝ փախչում, ընկնում է իր աշխարհը։ Թեև Հայաստանի թագավորությունը ոստիկանը նրան էր վստահում, սակայն նա խորաթափանց մտքով գիտեր նրա դառն, խաբեբա ու մահացած մտքի պատրվակը։ Որովհետև եթե կամավոր կերպով ինքը կուրանում է, երբեք չի կարող առողջանալ։ Իսկ Գագիկի հեռանալուց հետո ոստիկանը գալիս է Դվին քաղաք և անտեղի ընկնելով Սմբատ արքայի հետևից՝ դավաճանորեն մտածում էր նրան շարաշար սպանելու մասին։ Եվ նրա կյանքին մահ խառնելով՝ նրան փակում է բանտում՝ ոտքերը դնելով երկաթյա շղթաների մեջ, բանտի անտանելի խուց պատրաստելով մեգի մեջ. ըստ Հոբի խոսքի՝ գցում էին նրա անկողինը՝ ցերեկը գիշեր դարձնելով, [և այդպիսով] լույսը մերժվեց նրա դեմքից բնակարանի մթության պատճառով։ Եվ նրա շարշարանքների, կապանքների, խոշտանգումների այս պատահարը գրեթե ձգվեց ու երկարեց մի ամբողջ տարի։ Դրանից հետո ոստիկանը, եռացող կաթսայի նման իր մտքում բորբոքվելով, հեռանում, գնում է այն ամրոցը, որ կոչվում է Երընջակ՝ խլելու, փորելու, կորցնելու, գետնին հավասարեցնելու համար, քանի որ այնտեղ էին թաքնվել, ամրացել բարեպաշտ տիկնայք՝ Սյունյաց մեծ իշխան Սմբատի մայրը, կինը՝ Գագիկի քույրը, Սմբատի եղբայր Սահակի կինը և ազնվական ու պատվական այլ աղամարդիկ ու կանայք։ Ապա վերցնելով իր հետ է տանում նաև Սմբատ արքային՝

բոցաւն ահագին իմն մարտս պատերազմաց շուրջանակի պատէր՝ անդուլ և անդադար զգրգռումն աղմկին 'ի վերայ յաճախեալ։ Եւ ապա արքայի Սմբատայ զմահ անհնարին ըղձացեալ ոստիկանին՝ տակաւին սկսանէր 'ի կտտանս դատապարտութեան զնա դատել և 'ի բարկութիւնս վրիժուց հատուցման վառեալ, և կրճտեալ 'ի վերայ զատամունս՝ մատնէր զնա անօրէն դահճաց. յորմէ և տանջանս շարչարս գտեալ՝ թափէին 'ի նա զթոյնս դառնութեան իւրեանց։ Եւ 'ի վերայ յաճախէին սպառազէնքն 'ի գան հարկանել և 'ի կոճեղս պնդել և գելոցօք վարակել և խորտակել։ Այլ և սաստիկ սովով և ծարաւով ծնկեալ և անաւագեալ՝ ոչ միայն զի դահիճքն արգելուին զհարկաւոր պէտս ճաշակոցն, քան թէ առաւել յիւրոց իսկ կամաց անսուաղացեալ՝ Աստուծոյ ընծայէր զպիտելի զճաշակսն, որպէս ուրեմն երբեմն Դաւիթ՝ 'ի ծարաւս իւր զջուրն, որ 'ի ջրհորոյն Բեթղահէմի, և այսպէս ոչ զոյր նմա 'ի նոցանէ և ոչ սակաւ ինչ մասն խնայութեան. և եթէ էր երբէք ուրեք մեկուսի լինել և կամ ժամուց ինչ 'ի վերայ անցանել 'ի մենամարտիկն լինելոյ ընդդէմ դահճացն՝ զայն 'ի մշտնջենամռունչ յաղօթս և յաղերսալի գոհութիւնս և յօրհնութիւնս Քրիստոսի ծախէր։ Եւ ըստ անշարժ հաւատոցն որ 'ի Քրիստոս՝ ապա և աստուածային գոհութեան խորհրդոյն արժանի գտանէր հաղորդիլ 'ի վերակացուէ ումեմնէ օրինացն Տեառն ըստ տեսչութեան Տեառն անդ հանդիպելոյ։ Իսկ իբրև 'ի վախճան անդ զնա տարեալ մղէին՝ տեսիլն տուեալ շարշարանաց նորա 'ի հայեցողսն առաւել ողորմելի և սարսափելի էր քան զգործսն գլխովին. որ և յիշատակաւս իսկ ես կշտամբեալ ցնդիմ յարտասուս։ Վասնզի յոգնաբիծ և մարդախանձ գազանացն զնենգաւոր շունչ թունից օձին առեալ, որ ընդ նմին իսկ զմահ բղխէր արտաքոյ մարդկային ընտանի բնութեանս բերան։ Եւ ապա զսէր դիւին 'ի վշտասէր շարասէր դեղ կորստեան փոխարկելով, և զիւր իսկ զանձեռոցիկն 'ի նմանէ 'ի զատ յափշտակելով՝ հարստապէս նովին իսկ լնուին զբերան նորա. և զփողսն վարոցօք 'ի ներքս տարեալ մղեալ՝ և գրեթէ մինչև 'ի ներքս յառագաստ սրտին զեղեալ լցեալ այնպէս իմն հնարէին արգելուլ զտուրեաւ շնչոյ կենդանութեան որ 'ի նմա։ Եւ ապա գելոց կապանաց արկեալ 'ի կզակսն և 'ի պարանոց նորա՝ պնդէին անհնարին առատկօք իբրև 'ի հիւսանց մամուլս. և բազում կարասիս յարաբարդեալ 'ի վերայ գլխոյ նորա, և աւելի քան զտասն այր ըստ նմանութեան վիմաց յոլովաբար 'ի վերայ անկեալ՝ այնպէս հեղձամղձուկ մեքենայիւք հնարէին զնա կորուսանել։ Իսկ իբրև յայնմ ևս մասին պարայածեալ և շունչ նորա ընդյերկարեաց՝ այնուհետև դարձեալ յանդամս ծածուկս և յարութիւնս նորա տանջանս և շարշարանս անպատումս և անողորմս հասուցանէին մինչև 'ի շունչն

շղթայակապ [վիճակում], իսկ հետո շրջապատում է ամբոցը՝ տալով ահագին մեծ կռիվ, անընդհատ ու անդադար նրանց վրա ավելացնելով աղմուկն ու խռովությունը։ Եվ ապա ոստիկանը, ցանկանալով Սմբատ արքայի շարաշար մահը, տակավին սկսում է կտտանքներով նրան տանջել։ Բորբոքված վրեժը հատուցելու բարկությամբ և նրա վրա կրճտացնելով ատամները՝ նրան տալիս է անօրեն դահիճների ձեռքը, որոնք որոնելով տանջանքներ ու շարշարանքներ՝ իրենց դառն թույնը թափում էին նրա վրա։ Ավելանում էին սպառազինված զինվորները՝ ծեծելու, կոճղի վրա ամրացնելու, գելարանով սեղմելու ու ջարդելու համար։ Ինչպես նաև սաստիկ սովով ու ծարավով նա ուժասպառ է լինում ու տկարանում։ Եվ ոչ միայն դահիճներն էին արգելում ուտելիքների անհրաժեշտ պետքերից, այլ առավել ևս նա իր կամքով չուտելով՝ Աստծուն էր ընծայում պիտանի ուտելիքները, ինչպես որ երբեմն Դավիթը իր ծարավ ժամանակ՝ ջուրը, որը Բեթղեհեմի ջրհորից էր։ Այդպիսով, նրանք նրան բոլորովին չէին գթում։ Եվ եթե նա պետք է մեկուսանար կամ ինչ-որ ժամանակ անցնելուց հետո մենամարտեր դահիճների հետ, այն նա անցկացնում էր Քրիստոսի համար մշտամռունչ աղոթքներով, աղերսալի գոհությամբ ու օրհնությամբ։ Եվ Քրիստոսի նկատմամբ հաստատուն հավատով և աստվածային գոհության խորհրդով նա արժանանում էր ինչ-որ վերակացուի միջոցով հաղորդվելու օրինաց Տիրոջ հետ՝ այնտեղ հանդիպելով Տիրոջ նախախնամությամբ։ Իսկ երբ նրան տանելով մղում էին դեպի մահ, նրան տրված շարշարանքների տեսիլքը նայողներին ավելի ողորմելի ու սարսափելի էր թվում, քան բուն գործերը, որը և հիշելով ես կորչում եմ արտասուքների մեջ։ Քանի որ բազմաբիծ ու մարդակեր գազանները թունավոր օձերից առան թույնը, որի հետ մահ էր բխում մարդկային ընտանի բնությունից դուրս։ Եվ ապա հաճելի սերը փոխարկելով կորստյան վշտասեր ու շարասեր դեղով և իր իսկ անձեռոցիկը նրանից խլելով՝ բռնի կերպով այն լցնում էին նրա բերանը։ Նրա կոկորդն էլ գավազան էին մտցնում և ներս քշելով հասցնում գրեթե մինչև սրտի թաղանթը ու ձգտում արգելել նրա կենդանի շնչառությունը։ Եվ ապա շղթաներով սեղմելով նրա ծնոտն ու պարանոցը՝ սաստիկ պնդացնում էին պարանով, ինչպես ծալքերը մամլիչի տակ։ Շատ իրեր կիտելով իրար վրա՝ դնում էին նրա գլխին, և ավելի քան տասը մարդ կուտակված քարերի նման բազմիցս ընկնում էին նրա վրա ու այդպես խեղդող հնարքներով ձգտում էին սպանել նրան։ Իսկ երբ նրան պատեցին այդ կողմով ևս, և նրա շունչը երկարեց, դրանից հետո դարձյալ անասելի ու անողորմ տանջանքներ ու շարշարանքներ էին հասցնում նրա սեռական անդամ-

վերջին։ Իսկ յետ այսպիսի անհնարին և դառն կտտանացն և խոշտանգանաց և քրտնահար աշխատութեանց՝ հատանէին սրով զգլուխ նորա՝ վճարեալ 'ի կենաց աստի, որ թագաւորեաց ամս իբ։

Իսկ լին ապականութեամբ և անսուրբ պղծութեամբ ոստիկանն ոչ հրամայէ զնա թաղել և զմարմին նորա յերկրի տալ. այլ 'ի վերայ փայտի տարածեալ բևեռակապ պրկէին 'ի Դվին քաղաքի։ Զի որ թաղեալն էր ընդ Քրիստոսի մկրտութեամբ 'ի մահ, պարտ էր նմա՝ զի ընդ նմին և խաչակցեսցի իսկ. և մի՛ մերժեսցի վկայօրէն համարձակութիւնն առ 'ի նմանէն, յորում և կայ մեծաց վարձուց հատուցումն։ Իսկ 'ի տեղւոջ անդ, յորում զերանելի և զերջանիկ թագաւորն բևեռակապ 'ի փայտին բարձու պրկեալ էին՝ ոմանք 'ի հաւատացելոց և յանհաւատից ևս ասէին տեսանել լոյս ճառագայթաւէտ վառեալ իբրև ըզճրագ ճաճանչաւոր նշողիւք հարուստ 'ի վեր քան զգլուխ թագաւորին կշռադատեալ հաւասար նմին. և որք ասէին զայս՝ ստուգութեամբ իմն հաւաստի զբանն առնէին։ Բայց մեք զայսոսիկ 'ի տեսողս անդր թողացուցեալ, և զորս աչօք իսկ տեսեալ է մեր՝ ոչ դանդաղեսցուք պատմել. վասնզի հող երկրին, յորում 'ի պատուական մարմնոյն աւիշք կորանի կաթեալ իջեալ էր, բազում բժշկութիւնս հիւանդաց և վտանգելոց և աթտաժետաց կատարէր։ Եւ սակս այսորիկ նշանաց ոմանք 'ի հեթանոսաց անտի 'ի հաւատս քրիստոսականս զանձինս վերածէին, և աւազանին լուսով վերստին ծնանէին 'ի Հոգին Սուրբ Աստուծոյ։

Բայց ոստիկանն անօրէն արձանացեալ և մարտ զամրոցաւն զերընջակաւ եղեալ՝ ոչ հեռանայր անտի մինչև գաղտաբար յինքն գրաւեալ յափշտակէր զամրոցն։ Դուռն կորստեան կենաց բնակելոցն 'ի նմա բանայր և զբազումս 'ի նոցանէ բազմախողխող երկաթոյն տայր կերակուր. և զայլս ոմանս ըստ շարատանջ իմաստիցն իւրեանց Սողոմականաց 'ի գերութիւն վարէին։ Իսկ զհոչակաւորսն և զերանելիսն 'ի կանայս զբարեպաշտօնսն և զգերիմաստ մայրն Սմբատայ իշխանին Սիւնեաց, և զբարեպաշտուհի կին նորուն հանդերձ ստնդեաց իւրովն որդեկաւ, և զկին եղբօր նորուն Սահակայ՝ Սիւնեաց տեառն, գերեալ յամրոցէ անտի՝ վտարանդեալ պահէ 'ի Դվին քաղաքի բազում նեղութեամբ և տառապանօք, որպէսզի ոչ ոք 'ի նոցանէն երևեալ լինէր՝ թէ ո՛ր տիկինն իցէ և ո՛ր նաժիշտն։ Եւ որ նախ քան զայս գրգեալք և զգուեալք էին 'ի գահաւորակս իւրեանց՝ այժմ մատամբք իւրեանց վաստակէին և զպէտս ոգէպահին այնուիկ վճարէին. վասնզի առան գանձք նոցա և աւար հարան զարդք և կազմածք տանց նոցա։ Եւ այսպէս կոծ և աղաղակ և կականումն և ճիչ բազում յարքունական ապարանս նոցա

ներին մինչև նրա վերջին շունչը։ Եվ այդպիսի դաժան ու սաստիկ կըտտանքներից, խոշտանգումներից ու քրտնահար չարչարանքներից հետո սրով կտրում են նրա գլուխը՝ զրկելով այս կյանքից. նա թագավորեց իբ [22] տարի։

Իսկ ապականությամբ ու անսուրբ պղծությամբ լեցուն ոստիկանը չի հրամայում նրա մարմինը հողին հանձնել, այլ տարածելով փայտի վրա՝ գամերով ամրացնում էին Դվին քաղաքում։ Որովհետև ով թաղված էր Քրիստոսի հետ մարտիրոսական մահով, նա պարտավոր էր նրա հետ էլ խաչակից լինել։ Եվ նահատակի նման նրա [ունեցած] համարձակությունը թող նրանից չհեռանա, որի մեջ կա մեծ վարձի հատուցում։ Իսկ այն տեղում, որտեղ երանելի ու երջանիկ թագավորին բարձր փայտի վրա ամրացրել էին գամերով, հավատացյալներից ու անհավատներից ոմանք ասում էին, որ տեսել են ճառագայթավետ լույսը, որ հարուստ նշույլներով վառվել էր իբրև ճաճանչավոր ճրագ թագավորի գլխի վերև, նրան հավասար։ Իսկ ովքեր ասում էին այդ բանը, ճշգրտորեն ինչ-որ հավաստի բան էին կատարում։ Բայց մենք այդ տեսողներին այնտեղ թողնենք և ինչ որ տեսել ենք մեր աչքով, չենք հապաղի շտապ այդ մասին պատմել ձեզ։ Քանի որ երկրի այն հողը, որի վրա նրա պատվական մարմնից հոսել-կաթել էր հյութը, բուժում էր շատ հիվանդների, նեղվածների ու տկարների։ Այդ հրաշքների պատճառով էլ հեթանոսներից ոմանք դառնում էին դեպի քրիստոնեական հավատը՝ ավազանի լույսով վերստին ծնվելով Աստծու Սուրբ Հոգու միջոցով։

Բայց անօրեն ոստիկանը, մնալով ու երնջակ ամրոցի շուրջը կըռվելով, այնտեղից չէր հեռանում, մինչև որ գաղտնաբար չխլեր ու չհափշտակեր այն ամրոցը։ Այնտեղ բնակվողներից շատերի համար կյանքի կորստյան դուռ էր բացում և նրանցից շատերին կերակուր էր դարձնում բազմախողխող սրին, իսկ ուրիշներին էլ իրենց իմացած սողոմական[78] չար տանջանքներով գերության քշում։ Եվ կանանց մեջ հրոչակավորներին ու երանելիներին՝ Սյունյաց Սմբատ իշխանի բարեպաշտ ու խելացի մորը, Սմբատի բարեպաշտ կնոջը իր սանի ու որդյակի հետ և նրա եղբայր Սահակի՝ Սյունյաց տիրոջ կնոջը, գերի վերցնելով այն ամրոցից, որպես վտարանդի պահում են Դվին քաղաքում մեծ նեղության ու տառապանքի մեջ, որպեսզի չերևար, թե նրանցից ով էր տիկինը, ով՝ աղախինը։ Եվ ում մինչ այդ շոյել ու փայփայել էին իրենց գահավորակների վրա, այժմ նրանք իրենց մատներով էին վաստակում ու ապրուստի կարիքները գրանով հոգում, քանի որ խլեցին նրանց գանձերը և թալանեցին նրանց տների զարդերն ու

լսելի լինէր։ Իսկ իբրև գոյժ աղմկի աղէտին հասելոյ լսելի լինէր յականջս բարեացապարտ իշխանին Սմբատայ և եղբօր նորուն Սահակայ՝ միումն 'ի կողմանս Վասպուրականի և միւսումն 'ի կողմանս Գուգարաց, թէպէտև արիաբար զմի զինուորութիւն զինուորէին 'ի վերայ թշնամեացն դիմել և գրաւաթափ գերելոց ընտանեացն լինել. սակայն ոչ կարացեալ վաղվաղակի գումարտակս զօրաց կազմել և ոչ 'ի հեռաստանէ աճապարել յամրոկ գործոյն մինչև 'ի մետաղս բանտից արկեալ պնդակազմ զպահպանութիւնն պատրաստէին։ Անդ ապա տիկինն մեծ՝ մայրն Սմբատայ, և որդեակ նորուն իսկ իշխան վախճանեալք թաղեցան 'ի միասին առ գուրս մայրաքաղաքի եկեղեցւոյն Դվնայ։ Իսկ զկանայս երկոցունց նոցա՝ բարձեալ տարան 'ի Պարս Ատրպատականի 'ի դիպահուջ ամուրս իւրեանց կացուցեալ։ Իսկ բազմահանդէսն այն և աջողակն 'ի հրահանգս կրթութեան վարժից մարտի Աշոտ՝ որդի արքային Սմբատայ, բազում ընթացութիւնս և նահատակութիւնս քաջութեանց ուժեղակ մրցութեամբ ցուցանէր 'ի ժամանակի հալածանացն, և անցանէր զանցանէր զամենեքումբք արիաբար հանդիսիւ, որք կենօք և աւուրք զուգահաւասար նմա էին։ Սա նախ քան զկատարումն վկայօրէն վախճանի հօր իւրոյ՝ գրեթէ իբրև զարծուի սաւառնաթև սլացեալ ընդ օդս, այնպէս սրավարեալ խոյանայր զկնի գիշատեալ այլազգեացն, որք ասպատակ սփռեալ տարածեալ էին ընդ երեսս երկրի մերում. և նախ քան զամենայն ինչ 'ի փոքր մի վայրկեան ժամանակի յինքն առհասարակ գրաւեալ նուաճէր զբոլոր իսկ ամրոցս տէրութեան հօր իւրոյ, զոր առեալ կալեալ էր ոստիկանին։ Եւ զորս միանգամ պահնակս անդ 'ի Սառակինոսացն գտանէր՝ 'ի սուր սուսերի մաշէր. և պատուաւրօք և պահնակօք և բազում ոռճկօք զամուրսն ամրացուցեալ՝ և ինքն զհետ թշնամեաց կրթէր ուր և ասպատակք իսկ հինից Իսմայէլականացն գտանէին։ Եւ ամենայնիւ յամենայնի աներկիւղաբար սրտի գրեթէ զեղիական պատերազմն յարդարէր ընդդէմ հակառակամարտիցն հանդերձ հարազատ եղբարբն իւրով Աբասայ։ Եւ ապա կառավար կալեալ զմիտս իւր՝ առ Աստուած հայէր. և հասեալ 'ի վերայ Իսմայէլեան զօրուն, որ նստէր իսկ 'ի Բաղրաւանդ գաւառի՝ սրոյ ճարակ զամենեսեան զնոսին տայր. և զգլխաւոր երէցս նոցա ձերբակալ արարեալ՝ հրամայէր տիկ ձեռացուցանել և կախել զպարսպաց ամրոցացն առ 'ի տեսիլ և յահարկութիւն բազմաց։ Եւ ինքն ապա չուեալ գնացեալ 'ի Շիրակ գաւառ, և 'ի վերայ հասեալ զօրուն, որ 'ի նմա որջացեալ զեռեղեալ կային՝ և զայն ևս առհասարակ ընդ սուր հանեալ և զմնացեալսն վարատեալ վատնէր։ Եւ անտի դարձեալ իբր զօդապարիկ իմն երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց՝ և զայնս ևս ամրոցս իւրոյ տէ-

ունեցվածքը։ Եվ արքունական ապարանքում հաճախակի լսվում էին նրանց լացուկոծը, ողբը, աղմուկը, ճիչը։ Իսկ երբ այդ աղետի գույժը հասնում է բարյացապարտ Սմբատ իշխանի և նրա եղբայր Սահակի ականջին՝ մեկին Վասպուրականի կողմերում, իսկ մյուսին Գուգարքի, թեպետև նրանք արիաբար մի զինվորական կարգի մեջ էին մտնում՝ թշնամիների վրա հարձակվելու և տնեցիներին գրավով ազատելու համար, սակայն չեն կարողանում անմիջապես զորք կազմել ու հեռաստանից շտապել գործը գլուխ բերելու, մինչև որ ամուր բանտ գցելով՝ ապահովում էին նրանց պահպանությունը։ Հետո այնտեղ մեծ տիկինը՝ Սմբատի մայրը, և նրա իշխան որդյակը վախճանվեցին ու թաղվեցին միասին Դվին մայրաքաղաքի եկեղեցու դռան մոտ։ Իսկ նրանց երկուսի կանանց, վերցնելով տարան Ատրպատականի պարսկական մասը և փակեցին իրենց անառիկ բանտերում։ Իսկ շատ բան կատարածն ու հաջողակը, մարտական գործի մեջ վարժն ու փորձվածը՝ Սմբատ արքայի որդի Աշոտը, հալածանքների ժամանակ ուժեղ կռվելով՝ ցույց էր տալիս նահատակության [արժանի] բազմաթիվ քաջագործություններ և արիությամբ գերազանցում էր բոլոր նրանց, ովքեր կյանքով ու տարիքով իրեն հավասար էին։ Նախքան իր հոր նահատակությամբ վախճանվելը նա գրեթե օդում սլացող սավառնաթև արծվի նման սրընթաց արշավելով՝ խոյանում էր գիշատիչ այլազգիների հետևից, որոնք ասպատակել էին մեր երկիրը։ Եվ կարճ ժամանակվա ընթացքում նա կարողանում է առհասարակ գրավել ու նվաճել իր հոր տերության բոլոր այն ամրոցները, որոնք խլել էր ոստիկանը։ Իսկ այնտեղ եթե սարակինոսներից պահակներ էր գտնում, սրով սպանում էր։ Պատերով, պահակներով ու ապրուստի միջոցներով ամրացնելով ամրոցները՝ ինքն ընկնում էր թշնամիների հետևից, որտեղ էլ որ իսմայելյան ասպատակներն ու ավազակները գտնվեին։ Եվ իր հարազատ եղբայր Աբասի հետ ամենուրեք և ամեն ինչով աներկյուղաբար գրեթե եղիական պատերազմ[79] էր մղում հակառակորդների դեմ։ Եվ ապա իր միտքը ղեկավար դարձնելով՝ նայում էր առ Աստված։ Եվ հարձակվելով իսմայելյան զորքի վրա, որ նստում էր Բաղրավանդ գավառում, նրանց բոլորին սրո ճարակ էր տալիս։ Բռնելով նրանց գլխավոր երեցին՝ հրամայում է տիկ հանել և կախել ամրոցի պարսպից, որպեսզի տեսնեին բոլորը ու ահաբեկվեին։ Իսկ ինքը գնալով Շիրակ գավառը և հարձակվելով այն զորքի վրա, որ բուն էր դրել, տեղավորվել այնտեղ, նրանց ևս սրի է քաշում, իսկ մնացածներին հալածում է։ Այնտեղից վերադառնալով՝ օդասլացի նման նա չվում գնում է Գուգարքի կողմերը, և

բութեանն առհասարակ յինքն գրաւէր նուաճէր։ Եւ ապա անտի յեղակարծումն իբրև զորոգայթ իմն 'ի վերայ հասանէր զօրուն Հագարացւոց, որ 'ի մայրաքաղաքին Վրաց կային 'ի Տփխիս. և անդ զոմանս սրոյ ճարակ տայր և զայլս 'ի պատուականաց ձերբակալս արարեալ՝ երկաթի կապանօք 'ի մետաղս բանտից պահէր. զի ընդ այնոսիկ քրիստոնէից փոխանակեսցէ՝ գրաւաթափ առնելով, որք ըմբռնեալ իսկ էին 'ի ձեռն շար ոստիկանին։ Եւ ապա անտի առեալ զաւար և զկապուտ բազում՝ դառնայ 'ի գաւառն Տաշրաց. և լուեալ եթէ զօր Իսմայէլեան զօղեալ նստեալ դադարեալ կայ յամուրս խորաձորս Աղաստևոյ, և ապա այնուհետև անձնընտիր զզօրս իւր արարեալ իբրև արս երկերիւր՝ և երթեալ դոյթ իմն 'ի վերայ զօրու Հագարացւոյն տուեալ անհնարին մարտ քաջութեան՝ առհասարակ զնոսա սրոյ ճարակ տայր. և առեալ զկապուտ կողոպուտն դառնայր 'ի բանակն իւր։ Եւ իսկ և իսկ շուեալ երթեալ առ յաւէտ սիրելի իշխանն իւր Գուրգէն և անդ 'ի միասին զհասարակացն հոգս խորհրդաբար տեսեալ՝ ապա երթեալ գնայր զկողմամբք ամրոցացն Արշարունեաց։ Եւ յայնմհետէ ոչ ևս յաւելին ելանել ապականիչքն յաշխարհ տէրութեան նորա։

Զայն տեսեալ Թագաւորին Վրաց՝ այլ և զօրացն իւրոց, եթէ այց արար նմա Տէր և պատսպարեաց նմա և յաջողեաց 'ի բարութիւնս, ապա այնուհետև հարթ հաւասարութեամբ 'ի մի կամս և 'ի միտս զինքեանս բերեալ և Թագ նմա կապեալ՝ Թագաւորեցուցանէին զնա փոխանակ հօր իւրոյ, յինքնակալութեան իմն պայմանի պատուոյ զնա համարեալ, և Աստուծոյ ամենակալի զապագայսն յանձն արարեալ։ Յայնմ վայրի ապա և Թագաւորն Գագիկ հանդերձ վայելչագիտակ և բարեպաշտօն եղբարբն Գուրգենաւ ոչ սակաւ ինչ քան թէ բազում մարտս տագնապից 'ի վերայ պատրաստէր թշնամեացն, որ ջոլիրս առեալ էին ըստ հրամանին Յուսփայ 'ի կողմանս Ատրպատականի։ Եւ այսպէս առնաբար քաջութիւնս յանձին իւրեանց տպաւորեալ հանդերձ սպասելար և պայազատ գնդիւն՝ զբազումս 'ի Հագարացւոցն թաւալգլոր խաղացուցանէին։ Ոչ միանգամ՝ այլ և բազում անգամ ստէպ ստէպ զայս արարեալ՝ առ ստորոտով աշխարհին Կորդուաց և Ռոտակաց և Ատրպատականի. յորմէ խուճապեալ թշնամեացն իբր յահագին իմն ձայնէ բեկանող գազանաց՝ արգելեալ գտանէին 'ի սաստիկ ասպատակէ հինին։ Այլ և զԱխլատեանացն տերանց և ազգաց ոչ սակաւ ինչ աղմուկ շփոթից շուրջ պատէր յոստիկանէ անտի. որք և ամրացեալք իսկ 'ի խոխոմս խորոցն ձորոց և յամուրս քարանձաւաց՝ բազում արշաւասոյր հէնս 'ի վերայ թշնամեացն հասուցանէին, և գումարտակս սփռեալ՝ արեանց ճապաղիս հեղուին։ Զայս ամենայն ոյժ պնդութեան տեսեալ շար ոստիկանին ըստ ամենայն կուսակալութեանց, և ահագին իմն

գրավելով այն ու իր տերության ամրոցները՝ գցում է իր հպատակության տակ։ Այնտեղից հանկարծակի մեծ արագությամբ հասնում է հագարացիների զորքի վրա, որ գտնվում էր Վրաստանի մայրաքաղաք Տփխիսում։ Եվ այնտեղ ոմանց սրո ճարակ էր տալիս, իսկ պատվական մարդկանցից ոմանց բռնելով՝ շղթայակապ պահում էր բանտում, որպեսզի գրավաթափ անելով՝ նրանց փոխանակեր այն քրիստոնյաների հետ, որոնք բռնված էին շար ոստիկանի ձեռքով։ Եվ ապա վերցնելով շատ առ ու ավար՝ նա այնտեղից վերադառնում է դեպի Տաշիրքի գավառը։ Եվ լսելով, որ իսմայելյան զորքը թաքնվել, նստել ու դադար է առել Աղստևի ապահով ու խոր ձորերում, նա այնուհետև, իր զորքից ընտրելով մոտավորապես երկու հարյուր մարդու, գնում հարձակվում է հագարացու զորքի վրա, մեծ կռիվ տալիս, նրանց բոլորին սրի քաշում և առ ու ավարով վերադառնում է դեպի իր բանակը։ Եվ իսկույն չվում-գնում է իրեն միշտ սիրելի իշխան Գուրգենի մոտ, և այնտեղ միասին խելացիորեն հոգալով բոլորի կարիքները՝ նա անցնում-գնում է Արշարունյաց ամրոցների կողմերը։ Այնուհետև այն ապականողները այլևս չհարձակվեցին նրա տերության վրա։

Երբ այս բանը տեսան Վրաց թագավորն ու իր զորքը, թե Տերը այցելեց նրան, պաշտպանեց ու հաջողություն բերեց բարի գործերի մեջ, դրանից հետո վարվելով հարթ ու հավասար կերպով, մի կամքով ու մի մտքով և թագադրելով նրան թագավոր են կարգում իր հոր փոխարեն։ Նրան ինքնակալի աստիճան են տալիս ու նրա ապագան հանձնում ամենակալ Աստծուն։ Այնուհետև այն վայրերում Գագիկ թագավորը իր վայելչատես ու բարեպաշտ եղբոր՝ Գուրգենի հետ քիչ տագնապ ու նեղություն չէր պատճառել թշնամիներին, որոնք Յուսուֆի հրամանով Ատրպատականի կողմերում ավազակախմբեր էին կազմել։ Եվ այսպես առնական քաջություն ցուցաբերելով՝ զորավարական ու իշխանական գնդի հետ միասին հագարացիներից շատերին նրանք թավալգլոր էին անում։ Ոչ թե մեկ անգամ, այլ բազմիցս ու հաճախակի այս բանն էին անում Կորդուաց, Ռոտակաց[80] ու Ատրպատական աշխարհների ստորոտներում, որից խուճապի են մատնվում թշնամիները, ինչպես ջախջախվող մեծ գազանների ձայնից, և [գավառների բնակիչները] պաշտպանվում էին ավազակների սաստիկ ասպատակություններից։ Ոստիկանի կողմից քիչ աղմուկ ու աղաղակ չէր պաշարում նաև Սիսական տերերին ու ցեղերին, որոնք ամրանալով խոր ձորերում, հեղեղատներում ու քարանձավների ամրոցներում՝ ավազակային բազում արշավասույր հարձակումներ էին հասցնում թշնամիներին և զորք ուղարկելով՝ արյունահեղություն էին առաջացնում։ Բոլոր կուսակալու-

զայրագնաբար մոմոեալ մղձկեալ սրտիւ 'ի թեթևագոյնս անդր զթոյնսն թափէր։ Եւ այնուհետև ապա հետամուտ լեալ և զհետ մտեալ՝ իւրաքանչիւրոք 'ի կուսակալաց այլազգեաց ըստ իւրաքանչիւրոց կողմանց 'ի փախուստ 'ի նոցանէ դառնային՝ ռամիկն և անռամիկն, մինչև ոմանք 'ի մերոց անտի հատկեալ շնչով հազիւ թէ ճողոպրել կարէին 'ի սրոյն, որ լցեալն էր արեամբ։ Վասն զի կարիք մեղացն զօրանային յանդամս ամենեցուն առ 'ի պտղաբերս առնել զմեղ մահու։ Իսկ մեծամեծ աւազանոյն ձորոց և լերանց և անապատից և քարաժեռաց և ամրոցաց պարապէին. և այլ ևս խառնիճաղանճքն և բոկոտն և մերկանդամ և թափառական 'ի սով և 'ի ծարաւ և 'ի լքուցումն հարեալք և հաշեալք՝ ցանեցիր լերանց և դաշտաց բերէին. ոմանք 'ի ձմեռնային սառնասոյզ ձիւնախաղխաղ սառնամանեացն մրսեալք ծայրատէին և հեղձնուին. իսկ այլք յամառնային հիւղական յորդաբորբ ջերմութենէն տոչորմամբ կիզեալք այրէին և խորովէին։ Իսկ տկարացեալքն 'ի հապճեպ փախստենէն մատնեալք 'ի ձեռս դրժողացն՝ անխնայ անողորմ սրոյ նոցա տապաստ արկեալ՝ ոռոգանէին արեամբ զերեսս երկրի. իսկ ոմանք գրեթէ զանբան անասունս 'ի գերութիւն վարէին. և բազում ներգևեալ արս և կանայս և մատաղ մանկտի իբրև զգառինս 'ի մէջ գայլոց ածեալ 'ի սպանդ վարէին։ Իսկ զոր պարտն վարկանէին վաճառակուր լինել՝ զայն արտաքոյ տարեալ տրոհէին յայլոցն՝ զորդի 'ի հօրէ, զեղբայր յեղբօրէ, զկին յառնէ, և զմայր 'ի դստերէ և զհարսն 'ի սկեսրէ, և զստնդիակիցն 'ի մօրէն 'ի ստենէ 'ի բաց 'ի գրկացն յափշտակեալ։ Եւ անդ էր ապա տեսութիւն ողորմելի և ողբք անհանդուրժելիք և լարումն անտանելի և բախումն կրծից և կքումն արտեւանաց և դողումն անձին և սարսափումն սրտի և ճչումն կոծոյ և ցտումն գեղոյ և խրզումն հերաց։ Իսկ զոչ պիտանացուսն 'ի գործ վաճառաց և կամ Սոդոմայական արբանեկութեանց 'ի մետաղս և 'ի բանտս և 'ի շղթայս տարեալ մղէին՝ սաստիկ տանջանարանօք խոշտանգեալ, և ըստ Հոմերական օտար կանոնին 'ի փարթամէն և 'ի փանաքէն զնոյն կշիռ միապէս պահանջէին գանձս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ միանգամայն իսկ զմեծս և զփոքունս 'ի մի տանջանս մահու դատապարտեալ սպառէին սպանմամբ յաշխարհէ աստի. և զայլս ևս ոմանս ըստ Սողոմոնեան տզրկին առ սակաւ սակաւ զարիւնս նոցա ծծէին՝ աղճատեալ շարիմաց խորհրդով ագահութեան, յագուրդ ոչ ունելով։ Իսկ զայլս ոմանս մահացան դեղմպութեամբ խարդաւանեալ՝ որպէս թէ ողորմութիւն զայն 'ի նոցանէ լեալ այնոցիկ, յորս ներգործէին զչարս. և զայլս հնարիմաց խեղդանօք հեղձամղձուկ սատակէին. և զոմանց զսարսափելիս իմն ընդ

թյուններում այս ամբողջ քաջագործությունները տեսնելով՝ շար ոստիկանը, ինչպես նաև մեծ բարկությամբ ու սրտնեղությամբ մռնչալով, հեշտությամբ թափում էր իր թույնը։ Այնուհետև ընկնելով նրանց հետից ու հետամտելով՝ տարբեր կողմերի օտար կուսակալներից բոլորը նրանցից փախչում էին՝ ռամիկն ու ոչ ռամիկը, մինչև որ այնտեղ մեռոնցից ոմանք շնչակտուր լինելով՝ հազիվ կարողանում էին ճողոպրել սրից, որը շաղախված էր արյամբ։ Դրա համար մեղքերի կրքերը հզորանում էին բոլորի մարմիններում՝ մեզ մահ բերելու համար։ Իսկ ձորերի, լեռների, անապատների ու քարաժայռերի մեծամեծ ավազները անգործ էին, այլ նաև բոկոտն, մերկ, սոված, ծարավ, հուսալքված, հալ ու մաշ եղած՝ ցանուցիր թափառում էին լեռներում ու դաշտերում։ Շատ ցուրտ ու ձյունաշատ ձմռան սառնամանիքին մրսելով՝ ոմանք էլ ծայրատվում էին և խեղդվում, իսկ մյուսները ամառային շատ բարձր ջերմությունից տոչորվելով՝ այրվում ու խորովվում էին։ Տկարացածները, հապճեպ փախուստի պատճառով ընկնում էին խաբեբաների ձեռքը, որոնք սրով անխնա ու անողորմ կերպով նրանց կոտորում էին՝ արյամբ հեղեղելով գետինը։ Իսկ ոմանք էլ անբան անասունների նման քշվում էին գերության։ Բազմաթիվ թույլ տղամարդիկ, կանայք ու մատղաշ երեխաներ, իբրև գայլերի մեջ գցած գառներ, քշվում էին սպանդանոց։ Իսկ ում կարելի էր վաճառել, նրան դուրս տանելով՝ բաժանում էին մյուսներից՝ որդուն հորից, եղբորը եղբորից, կնոջը ամուսնուց, մորը աղջկանից, հարսին սկեսուրից, ծծկեր երեխային խլում էին մոր կրծքից ու գրկից։ Եվ ապա այնտեղ կարելի էր տեսնել ողորմելի տեսարան, ահավոր ողբ, անտանելի լաց, կրծքահարում, աչքերի կոպերի կքում, մարմնի դողոցք, սրտի սարսափ, ողբ ու ճիչ, գեղեցիկ դեմքի բզկտում։ Իսկ ովքեր պիտանի չէին վաճառքի կամ սոդոմական ծառայության[81] համար, նրանց շղթայակապ քշում էին աքսոր ու բանտ՝ խոշտանգելով սաստիկ տանջանքներով։ Հոմերական օտար կանոնի համաձայն և՛ հարուստներից, և՛ աղքատներից պահանջում էին ոսկու և արծաթի նույն չափի գանձեր։ Եվ մեծերին, և՛ փոքրերին մեկտեղ դատապարտում էին մահվան նույն տանջանքներով և նրանց սպանում ու վերացնում էին այս աշխարհից։ Եվ սողոմոնյան տզրուկի նման ոմանց արյունը քիչ-քիչ ծծում էին՝ ցնորվելով ագահության նենգամիտ խորհրդով ու երբեք չհագենալով։ Իսկ ոմանց էլ խարդավանքով մահացու թույն տվեցին ու սպանեցին, որպես թե դա նրանց կողմից ողորմություն էր այնպիսիներին, որոնցով գործում էին չարիքներ։ Ոմանց էլ նենգորեն պարանով խեղդամահ էին անում։ Իսկ ոմանց հետ էլ շատ սարսափելի ձևով էին վարվում.

կեանս խառնեալ, զի մինչդեռ ևս յոտանաւոր նոցա կալով՝ կենդանւոյն
'ի կրծիցն 'ի վայր դահիճքն սրով զորովայնն հերձուին, և մինչև ըզ-
շունչն աւանդեալ էր՝ 'ի դուրս զլերդն կորզէին, մասունս տալով զայն
իւրաքանչիւր ումեք իբր 'ի կատարումն ինչ լիութեան պիղծ պաշար-
մանն իւրեանց։ Իսկ այլք ոմանք, որք թեթև համարեալք և անտեսեալք
էին յաչս նոցա՝ համարձակութիւն սակս այնորիկ առեալ իբրև զլռիկ
էին և գնային, զորոց զհետ մտեալք վաղերբք և ասպարօք և նրանօք՝
իբրև զտունկս ոստաքանց արարեալ ծայրատէին, և անպիտանս առ-
նէին 'ի ձեռաց և յոտից և 'ի բոլոր անդամոց։ Իսկ այլ ոմանց պարանս
առատկաց յերկոսին կողմանս 'ի գլուխս և յոտս նոցա եղեալ՝ և բա-
զում ուժեղակ մարդկամբք այսր անդր ձգձգեալ՝ մինչև լուծանել մի-
ջոյն. և ապա երկայրի սրով բախեալ՝ միջով չափ ընդ երկուս բար-
ժանէին։ Իսկ զի դեռևս շնչոյն 'ի նոսա գոլով առ տապոյ վտանգին,
կամ յայլոց ևս ձեռաց ապրելոյ ըստ գլխոյ կուսէ մասնն կանգնէր՝
կայր փոքր մի 'ի վերայ հատածի միջոյն և խոխոտէր խօսել կա՛մ
զանցս ինչ ազէտին, կա՛մ ըստ հայցուածոյ ինչ նմա ոմանց. թէպէտև
վտանգն շութափութիւն լեզուին տուեալ՝ ոչ բաւէր զբանն ինքնակա-
տար յայտնել։ Իսկ զոմանս հրամայէր, զի կապեսցեն յանխնայ և հա-
տուածեսցեն մտրակօք արջառաջլաց 'ի կողս և յորովայնս թափան-
ցանց վիրաւորեալք. և մինչ շունչ նոցա կենդանի էր 'ի նոսա՝ արկա-
նէին յերկիր և քարշէին։ Իսկ կիսոց զունչս և զականջսն հատանէին,
և զմասունս մարմնոյ նոցա կոտորէին, և զմատունս նոցա ծայրաքաղ
առնէին. և զոմանս յետ անհնարին հարուածոց 'ի կոճեղս պնդէին՝ և
պրկեալ կային զծակօք յոտսն յերկոսեան, մինչ զի անհնարին լինէր
նոցա նստել կամ ընկողմնել և զխոնջ տապոյ աշխատութեանն սակաւ
ինչ բժշկել։ Էին 'ի նոցանէ և յոլովք 'ի բազմաց, որք վասն առ 'ի
Քրիստոս հաւատոցն բազում անգամ 'ի հարց և 'ի փորձ արկանէին,
պարգևս և պատիւս բազումս պերճութեան խոստանային, և պաճուճա-
զարդ պատմուճանս և երևելի զարդս նոցա պատրաստեալ յարդարէին
առ 'ի խոտղել ական տեսանելոյ. և պատուաւորաց ոմանց դանձս և
գերդաստանս առաջի մատուցանէին՝ միայն թէ զսնոտի պաշտամունս
նոցա պատուեալ պաշտեսցեն։ Այլ Քրիստոս, որ յանձինս նոցա զար-
թոյց զկամս կենարարս և զյոյս սքանչելի հանգստեան՝ նոյն ինքն հր-
բովն աստուածայնով զնոսա ջեռուցեալ 'ի սէրն սուրբ Աստուծոյ, և
միջամուխ հաւատով ընդդէմ նոցա վառեալ, զի ապականեսցեն 'ի բաց
զչարիմացութիւն չարին, և լուսացեն զկապուտակ ներկուածս նախան-
ձու հակառակորդին, և հատցեն զարմատս ագահութեան 'ի հոգևոր
պատերազմին։ Եւ այսպէս ապա զամենայն սատանայական զիւթու-

քանի դեռ նրանք ոտքի վրա էին, [այսինքն]՝ ողջ էին, դահիճները
կրծքից ներքև սրով կտրում էին նրանց որովայնը, և մինչև նրանց
շունչը փչելը դուրս էին քաշում լյարդը ու նրա մասերը բաժանում բո-
լորին՝ իրենց պիղծ ձգտումը ամբողջությամբ կատարելու համար։ Իսկ
ուրիշները, որոնք նրանց աչքում տկար էին համարվել ու անտեսվել,
այդ պատճառով համարձակություն առնելով՝ լուռ գնում էին և որոնց
հետևից ընկնելով թրերով, վահաններով ու դաշույններով ծառերի պես
ճղակոտոր անելով՝ ծայրատում էին նրանց, զրկում ձեռքերից, ոտքե-
րից և մարմնի բոլոր մասերից։ Իսկ ոմանց երկու կողմերից գլուխնե-
րին ու ոտքերին բարակ պարաններ էին զցում, և բազմաթիվ ուժեղ
մարդիկ ձգում էին այս ու այն կողմ, մինչև նրանց մեջքը թուլանալը,
և ապա երկայրի սրով խփելով՝ մեջտեղից երկու մասի էին բաժա-
նում։ Եվ քանի որ նրանցում դեռևս շունչ կար, վտանգից տապի մեջ
ընկնելու կամ ուրիշների ձեռքից ազատվելու պատճառով նա [ոստի-
կանը] կանգնում էր գլխի կողմում կամ մեջտեղի մի փոքր հատվա-
ծում և ջանում էր խոսել ազետի անցքերի մասին, կամ երբ ոմանք
նրան աղաչում էին, թեև վտանգից արագ-արագ լեզվին էր տալիս,
բայց չէր կարողանում խոսքը կատարելապես հայտնել։ [Ոստիկանը]
հրամայում է, որ ոմանց էլ կապեն և արջառաջլի խարազանով անխնա
խփեն նրանց կողերին, որովայնին՝ մխրճվելով ներս ու վիրավորելով։
Եվ քանի դեռ նրանք կենդանի էին, զցում էին գետին ու քարշ տալիս։
Իսկ մի մասի էլ քթերն ու ականջներն էին կտրում, ջարդում էին նրանց
մարմնի մասերը, կտրում նրանց մատների ծայրերը։ Անհամար հար-
վածներից հետո նրանց ամրացնում էին կոճղերի վրա ու երկու ոտ-
քերով ամուր կապում էին ծառերին[82], այնպես որ հնարավոր չէր լի-
նում նստել կամ պառկել և իրենց հոգնածությունն ու չարչարանքը
փոքր-ինչ թեթևացնել։ Եվ նրանցից շատերին Քրիստոսի հավատքի
համար բազմիցս հարցափորձ էին անում, փառավոր շատ պարգևներ
ու պատիվներ խոստանում և նրանց համար պատրաստում էին պա-
ճուճազարդ պատմուճաններ ու երևելի զարդեր՝ նրանց աչքերը շլաց-
նելու համար։ Իսկ պատվավորներից ոմանց էլ տալիս էին գանձեր ու
նրանց մոտ բերում իրենց գերդաստաններին՝ միայն թե նրանք պաշ-
տեն իրենց սնոտի պաշտամունքը։ Բայց Քրիստոսը, որ նրանց մեջ արթ-
նացրեց կենարար կամք ու մահվան սքանչելի հույս, նույն ինքը աստ-
վածային հրով նրանց ջերմացրեց սուրբ Աստծու սիրով և նրանց դեմ
զինեց համարձակ հավատով, որպեսզի նրանք վերացնեն չարի նեն-
գությունն ու լվան հակառակորդի նախանձով ներկված կապույտ գույ-
նը և հոգևոր պատերազմում կտրեն ագահության արմատը։ Եվ այդ-

թեանցն պաշտամունս առ ոչինչ համարեալ՝ ոչ շեղեցան 'ի շղուարարոյ շոգմոգութիւնս նոցա, և ոչ զարհուրեցան յահագին սպառնալեացն և 'ի տանջանարանաց, զոր պատրաստէին նոցա։ Եւ իբրև այսպէս առհասարակ սոքա զգաստացեալք լինէին 'ի պատասխանատուութեան աւետարանի փառացն Քրիստոսի, և զլուեալն յունկանէ իբրև 'ի վերայ բարձր տանեաց քարոզէին՝ «Թէ քրիստոնեայք եմք և անօրէն օրինացդ ձերոց ոչ կարեմք հնազանդել.» այնուհետև զանդատապարտսն իբրև զդատապարտս վարեալ և վճիռ մահու 'ի դատաւորաց անտի 'ի վերայ նոցա եդեալ՝ սրով զնոսա առհասարակ վատնէին. որք և ընկալան իսկ զբարիոն յաղթութեան՝ յԱստուած թագաւորեալք։

Իսկ յայլում վայրի դարձեալ այլք ոմանք ըմբռնեալք վարեցան ածան առաջի դատաւորաց։ Եւ իբրև հարցան 'ի նոցանէ, և բազում աղերսալի և հեշտալի բանս բարեաց պարգևաց առաջի դնէին՝ միայն եթէ պաշտօն մակուրան Կուրանին Մահմետի հաւանեալ դարձցին, նոքա ոչ պատասխանուց անգամ զդատաւորսն արժանի գրեցին. այլ միայն ընդ միտս իւրեանց ընդ Աստուծոյ խօսէին՝ սրտիւ հաւատացեալք յարդարութիւն և բերանով խոստովանեալք 'ի փրկութիւն։ Եւ այնուհետև հարուածս 'ի թիկունս 'ի թշնամեացն ընդունէին, և ապտակս 'ի ծնօտս, և գան սաստիկ 'ի պարանոցս, և հանեալ մղեալ վարեալ տանէին յասպարէս կատարմանն։ Եւ 'ի մի ջոլիր զսուրբսն գնդեալ՝ և իբրև զպարիսպ շուրջանակի զնոքօք վաղակաւոր դահիճքն բազմաձեալ, այնպէս սուր 'ի վերայ եդեալ կոտորէին։ Իսկ արք ոմանք 'ի թշնամեացն յայնցանէ որ շուրջն կային՝ տեսեալ 'ի սրբոց անտի մանուկ մի զուարթատեսիլ և գեղեցիկ երեսօք՝ Միքայէլ անուն, յաշխարհէն Գուգարայ, որոյ չև ևս էր փաղփաղեալ բողբոջեալ մրադիր բոյսք մօրուացն ընդ ծնօտսն՝ և իբրև մարդասիրել 'ի նա խոկացեալ և բուռն հարեալ զնմանէն, յինքեանս կորզեալ ձգէին, զի մի՛ ընդ այլսն և նա կորիցէ։ Իսկ նա արտօսրաթոր կականմամբ զաչսն յերկինս համբարձեալ և զօրացեալ վերին օգնականութեամբն՝ 'ի բաց զինքն 'ի նոցանէ շսպեալ ճողոպրէր. և հապճեպ տուեալ և դիմադրաւ դիմեալ առ ընկերս իւր՝ առաջի սրոյն զգլուխ իւր կամաւորաբար մատուցանէր։ Եւ այսպէս 'ի բանաւոր ողջակիզումն զինքն Քրիստոսի նուիրէր ընդ այլ ևս անարատ պատարագացն և զենմանց 'ի հոտ անուշից Հօրն երկնաւորի։

Էին ևս յայնժամ եղբարք երկուք 'ի նախնեացն Գնունիք, որոց անուանքն միումն Դաւիթ և միւսումն Գուրգէն ճանաչիւր. որք և ըմբռնեալք 'ի գերչացն՝ ածան առաջի բռնադատի ոստիկանին։ Եւ իբրև

պիսով արհամարհելով սատանայական պաշտամունքի կախարդանքը՝ [նրանք] չթեքվեցին դեպի նրանց խառնակիչ բանսարկությունները, չվախեցան ահագին սպառնալիքներից ու տանջանքներից, որ պատրաստել էին նրանց համար։ Եվ երբ նրանք առհասարակ այդպես զգաստացել էին Քրիստոսի փառավոր ավետարանի պատասխանատվությամբ և ինչպես բարձր տանիքից քարոզում էին ականջով լսածը. «Եթե քրիստոնյա ենք՝ ձեր անօրեն կրոնին չենք կարող հնազանդվել»[83]։ Այնուհետև անմեղներին մեղավոր էին համարում և նրանց վերաբերյալ դատավորների կողմից մահվան վճիռ էին կտրում ու նրանց բոլորին սրի քաշում։ Նրանք ընդունեցին հաղթության պսակը՝[84] թագադրվելով Աստծու կողմից։

Իսկ մեկ այլ վայրում որոշ մարդիկ դարձյալ բռնվեցին և քշվեցին ու բերվեցին դատավորների առաջ։ Եվ երբ նրանց հարցաքննեցին, առաջանքով ու հաճելի խոսքերով ընտիր պարգևներ էին դնում նրանց առաջ, միայն թե նրանք համաձայնվեին ու դառնային Մահմեդի զուրանի[85] պաշտամունքին, [բայց] նրանք դատավորներին անգամ պատասխանի չարժանացրին, այլ միայն իրենց մտքում Աստծու հետ էին խոսում՝ սրտով հավատալով արդարությանը և բերանով խոստովանելով փրկությունը։ Դրանից հետո նրանք թշնամիներից հարվածներ էին կրում իրենց մեջքերին, ապտակներ՝ ծնոտներին, սաստիկ ծեծ՝ պարանոցներին։ Հետո նրանց հանելով՝ քշում, տանում էին հրապարակ սպանելու։ Եվ սրբերին մի խմբի մեջ հավաքելով ու նրանց շուրջը պարսպի նման բոլորելով՝ թրավոր դահիճները սրի էին քաշում նրանց ու կոտորում։ Իսկ թշնամիներից ոմանք, որոնք կային նրանց շուրջը, սրբերի մեջ տեսնելով Միքայել անունով կայտառ ու գեղադեմ մի մանուկի, որը Գուգարաց աշխարհից էր, և որի ծնոտներին դեռ չէին փայլփլում նոր բողբոջած մորուքի աղվամազերը, և իբրև թե մարդասիրաբար նրա մասին մտածելով և ձեռք գցելով նրան՝ իրենց կողմն էին քաշում, որպեսզի մյուսների հետ նա էլ չկորչի։ Բայց նա [Միքայելը], արտասվաթոր ողբով աչքերը երկինք բարձրացնելով և զորանալով վերին օգնությամբ, նրանց ձեռքից պոկվում ու ճողոպրում է։ Իսկույն ու համարձակ գնալով իր ընկերների մոտ՝ նա կամավորաբար իր գլուխը դնում է սրի տակ։ Եվ այդպես գիտակցաբար նա իրեն նվիրում է Քրիստոսին՝ ողջակիզվելով մյուս այն սուրբ զոհերի հետ, որոնք երկնային Հոր անուշահոտությունից էին։

Այն ժամանակ Գնունիների նախարարներից կային երկու եղբայրներ, որոնցից մեկի անունը Դավիթ էր, մյուսինը՝ Գուրգեն։ Նրանք ևս բռնվեցին այն գերիչների կողմից և տարվեցին բռնակալ ոստիկանի

հարցնփորձ ընդ նոսա լեալ և գրեթէ զկէս տէրութեանն իւրոյ տալ նոցա խոստանայր, այլ և բազում զգեստս և զարդս ոսկեճամուկս, և ծիրանիս և երևելի լակոնացի և բեհեզս նոցա մատուցանէր, և կամարս և մանեակս ոսկեղէնս և նժոյգս սրավարս՝ ճոխապաճոյճս 'ի զէնս և 'ի զարդս. և ապա զձեռս իւր 'ի նոսա կարկառեալ և գիրկս զպարանոցօքն արկեալ և հուպ ընդ հուպ 'ի համբոյր մերձեցուցեալ զնոսա, այնպէս շոգմոգէր շողոմութեամբ բանիւ հնազանդել նորայն բանի և խնայել յարբունս մանկութեան իւրեանց և դառնալ յանօրէն օրէնս, զոր ինքն պաշտէր.— իսկ նոցա գեղեցիկ իմն մոլութեամբ 'ի զէն զինուորութեանն Քրիստոսի զինքեանս վառեալ՝ համարձակաձայն բարբառով զբարւոք դաւանութիւնն քարոզէին առաջի ամենեցուն, «Թէ քրիստոնեայք եմք, և ճշմարտութիւնն Աստուծոյ, որ յինքն զանմահութիւն ունի և 'ի լոյս անմատոյց է բնակեալ՝ ոչ կամիմք փոխանակել ընդ ձերում ստութեանդ, որ ոչինչ իսկ են և յոչինչ համարեալ։» Իսկ իբրև այսպէս զխորհուրդ նոցա 'ի սէր նահատակադրին Քրիստոսի արձանացեալ տեսանէր Թշնամին՝ հրամայէր այնուհետև սրով զնոսա սպանանել։ Իբրև ածան 'ի թէատրոնն իբրև զոչխար 'ի սպանումն՝ աղօթս մշտնջենամոունչս և պաղատանս աղերսալից անդր առ Աստուած մատուցանէին գրել զնոսա 'ի թիւ վկայից սրբոց, որք սիրեցին զօր երևելոյ գալստեան նորա։ Եւ հանդերձեալ դահճացն զերէց եղբայրն կատարել սրով, նա աղաչանս նոցա մատուցանէր՝ նախ զկրտսերն քան զինքն տալ կերակուր սրոյն. 'ի մտի եդեալ եթէ գուցէ 'ի վերջ քան զնա մնալով՝ ըստ մանուկ տիոցն զարհուրեսցի ինչ յիսմայէլեան սրոյն սպառնալեացն,— վասնզի մրազարդ մորուքն 'ի ծնօտսն դեռևս էր տիգեալ և ընծիւղեալ— և դարձեալ յեղբայրն կոյս ասէր. «Եղբայր սիրելի, նախ դու ընծայաբերեցիր Քրիստոսի յուսոյն մերոյ՝ մատուցանելով զքեզ ինքն բանաւոր ողջակէզ և զենումն նուիրական նմա, որ վասն մեր եղև մեռեալ և վերագրեաց զմեզ 'ի կեանս։» Իսկ նորա ոչինչ գրեալ զվիշտս և ոչ 'ի մտի եդեալ զանհնարին մահուն տուգանս՝ յօժարութեամբ դիմեալ 'ի սուրն, այսպէս հատաւ գլուխ նորա՝ պսակեալ 'ի Քրիստոսէ անթառամ պսակաւն։ Զկնի ապա և երէց եղբայրն յետ բարւոք պատերազմին և կատարման ընթացիցն և պահպանութեան հաւատոցն 'ի նոյն միտս զինքն վառեալ՝ յանողորմ սրոյ անտի սպանանի 'ի կենացս և կենդանանայ յանդերանութիւնս անվախճան ուրախութեանցն վերին արքայութեան։ Այսպէս ամենեքեան սոքա սուրբք, որ առ 'ի յինէն պատմեցան՝ յիրաւի տարևորական տօնախմբութեամբ պատուին միշտ յեկեղեցիս սրբոց, օր յիշատակի սոցա սահմանեալ

մոտ։ Եվ երբ [ոստիկանը] հարցուփորձ է անում, խոստանում էր նրանց տալ իր տերության գրեթե կեսը, ինչպես նաև մատուցում էր ոսկեհյուս շատ զգեստներ ու զարդեր, ծիրանիներ[86], լակոնական երևելի բեհեզ[87], ոսկեղեն գոտիներ, մանյակներ, սրընթաց նժույգներ՝ շքեղորեն զարդարված զենքերով ու զարդերով։ Եվ ապա իր ձեռքերը մեկնում էր նրանց և փաթաթվելով նրանց պարանոցին, մոտեցնում էր իրեն՝ համբուրելու համար։ Այնպես շողոքորթելով դատարկ բաներ էր խոսում՝ նրանց հնազանդեցնելու իրեն, որպեսզի նրանց խնայեր արքունքի հասած տարիքում, եթե նրանք դառնային դեպի իրենց անօրենն կրոնը, որը ինքն էր պաշտում։ Իսկ նրանք, բուռն ցանկությամբ զինվելով Քրիստոսի զինվորությամբ, բոլորի ներկայությամբ համարձակ ու հստակ ձայնով քարոզում էին բարվոք դավանությունը՝ ասելով. «Եթե քրիստոնյաներ ենք, և Աստծու ճշմարտությունը, որ իր մեջ անմահություն ունի ու անմատույց լույսի մեջ է բնակված, չենք ուզում փոխանակել ձեր ստության հետ, որը չկա և ոչնչություն է համարված»[88]։ Իսկ երբ Թշնամին տեսնում է, որ նրանց միտքը արձանացած է ամենահաղթ Քրիստոսի սիրուն, այնուհետև նա հրամայում է սրով սպանել նրանց։ Եվ երբ նրանք բերվեցին հրապարակ՝ իբրև ոչխար սպանվելու համար, նրանք այնտեղ առ Աստված մատուցում էին մշտամոունչ աղոթքներ ու աղերսալի պաղատանքներ՝ իրենց գրանցելու այն սուրբ վկաների թվում, ովքեր սիրեցին նրա գալստյան ու երևալու օրը։ Երբ դահիճները պատրաստվեցին նախ ավագ եղբորը սրով սպանել, նա աղաչում էր նրանց, որպեսզի իրենից առաջ կրտսեր եղբորը սրի ճարակ տան՝ մտածելով, թե գուցե նա իրենից հետո մնալով՝ փոքր տարիքի պատճառով սարսափի իսմայելյան սրի սպառնալիքներից, քանի որ նրա մորուքի աղվամազը նոր էր ծլարձակել։ Եվ դառնալով եղբոր կողմը՝ նա ասում է. «Սիրելի եղբայր, նախ դու քեզ ընծա բեր մեր Քրիստոսի հույսին՝ քեզ գիտակցաբար նվիրելով նրան ողջակիզվելու համար, ինչպես որ նա մեռավ մեզ համար և մեզ կյանք ընծայեց»։ Իսկ նա [կրտսեր եղբայրը] արհամարհելով տառապանքն ու չհիշելով շարաշար մահվան գույժը՝ հոժարությամբ դիմեց դեպի սուրը։ Եվ այդպես կտրվեց նրա գլուխը՝ Քրիստոսի կողմից պսակվելով անթառամ պսակով։ Դրանից հետո նաև ավագ եղբայրը այդ բարվոք կռվից, նրա վարմունքից և հավատքը պահպանելուց հետո նույն մտադրությամբ իրեն զինելով՝ այդ անողորմ սրով հեռանում է այս կյանքից և կենդանանում վերին արքայության անվախճան ուրախության ու երանության մեջ։ Այսպես այս բոլոր սրբերը, որոնց մասին ես պատմեցի, իրավամբ ամենամյա տոնախմբությամբ միշտ մեծարվում են սուրբ եկեղեցինե-

Մարերի ամսոյ՝ որ օր իէ։ Վասնզի շիջուցին զհարուածս տանջանաց և գրեցան յորդիս վերին Սիօնի. անխէթ հաւատով յաղթեցին խորամանկութեան նոցա և հատին կտրեցին զոստս մահաբեր պտղոց նոցա. զի չիք ինչ ահաւոր՝ ուր սէր Հօր է, և ոչ այն ինչ որ ցաւեցուցանէ՝ ուր փառքն Քրիստոսի են։ Եւ այսպէս ապա աստուածային իմաստութեամբն 'ի բաց մերժեալ յանձանց զամենայն ինչ, որ ապստամբ և վայրենի է, և սրբեալ զինքեանս 'ի մարդկանէ պղծոց և կորուսելոց՝ կենսացուցին իւրեանց զհարկաւոր մահ մարմնոյ, և կամաւորաբար ածան իբրև զոչխար 'ի զենումն. և փոքր նեղութեամբ վայրկենիս յահ և յերկիւղ Տեառն յղացեալ՝ երկնեցին և ծնան զհոգի փրկութեան։ Եւ սուրբ խնդրուածք նոցա իջուցին զհրեշտակս 'ի փրկութիւն իւրեանց, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն։ Լուան աւետիս 'ի հեռաստանէ, և զուարթագին սրտիւ զտանջանս և զմահ իբրև զանմարմինս կոխեցին։ Նմանեցան քաջ նահատակացն մահուն, և դիմեցին խաղաղութեամբ առ Աստուած ժամանելք։ Առին զյաղթութեան բրաբիոնն, և վերադասեցան յորդիս վերին Երուսաղէմի։ Որպէս սկրսան քաջութեամբ, նովին և կատարեցին զհանդէս նահատակութեանն՝ լի երկնաւոր սիրովն, և արտափայլեցին իբրև զարեգակն 'ի մէջ տիեզերաց, որոց և անուանք նոցա գրեալ են 'ի դպրութիւն կենաց։

Իսկ այլք ոմանք թշուառականք և կոխեալք 'ի սատանայէ՝ զարհուրեալք յառժամանակեայ մահուանէս, և դիւրացուցեալ 'ի սիրոս իւրեանց զ'ի նանիր և զսնոտի խոստմունս նոցա՝ շուրջ զինքեամբք պատեցին զերկունս մեղաց մահու և ուղխիւք անօրէնութեան հեղեղեցին զանձինս իւրեանց. և վրիպեալք 'ի ճշմարիտ լուսոյն՝ խաւարազգած նսեմութեամբ կուրացան, մոլորեալք յարքունական պողոտայէն և քեցեալք 'ի բաց յստակ ծորանէ քաղցրութեան խորհրդոցն աստուածայնոց՝ զմրուր դառնութեան բաւականաբար արբին, որ վերջին է չարութեան և առաջին կապաշտութեան։ Եւ ուրացեալք 'ի հաւատոյ՝ չար ևս քան զանհաւատսն դտան, ոչինչ օգտեալք և 'ի խոստմանց ինչ նոցա գոնէ միայն ըստ մասանց կենաց. այլ երերածուփք և տատանեալք և թշնամանեալք էին՝ և յամենայն կողմանց հարեալ և վատթարեալ։ Եւ ազատ մարդիկք այնպէս ուրացութեամբն ձաղեալք և հասեալք 'ի խոր աղքատութիւնս, մինչև 'ի դրունս տնանկաց շրջել և հաց մուրանալ՝ և միայն զկորստական մոլորութեանն և անարգութեանն անուն ժառանգեալք։ Եւ ոչ գտաւ խոստովանութիւն 'ի շրթունս նոցա. իջին 'ի դժոխս անհնարին դառնութեամբ՝ առիթք գտեալք հրոյն գեհենի։ Եւ

բում, և նրանց սահմանած հիշատակի օրը մարերի ամսի իէ [27]-ն է։ Քանի որ նրանք հանգցրին տանջանքների հարվածները և համարվեցին վերին Սիոնի որդիներ, դրանով իսկ անխափան հավատով հաղթեցին նրանց խորամանկությանը և հատեցին-կտրեցին նրանց մահաբեր պտուղների ոստերը, որովհետև ահավոր ոչինչ չկա, ուր Հոր սերն է, և չկա ինչ-որ բան, որ ցավեցնի, ուր Քրիստոսի փառքն է։ Եվ ապա այս ձևով աստվածային իմաստությամբ իրենցից հեռացնելով այն ամենը, ինչ խռովարար է ու վայրենի, և իրենց մաքրելով պիղծ ու կորուսյալ մարդկանցից՝ նրանք կենդանացրին իրենց մարմնի անհրաժեշտ մահը և կամավոր կերպով բերվեցին զոհ մատուցվելու իբրև ոչխար։ Եվ ակնթարթորեն հղանալով Տիրոջ ահն ու երկյուղը՝ նրանք երկնեցին ու ծնեցին փրկության հոգին։ Եվ նրանց սուրբ խնդրանքը հրեշտակներին վայր իջեցրեց իրենց փրկության համար և նույն խոնարհությամբ հասան երկնավոր բարձրության։ Հեռաստանից լսեցին ավետիսը և հրեշտակների նման ուրախ սրտով ոտքի տակ առան տանջանքն ու մահը։ Նմանվեցին մահվան քաջ նահատակներին և խաղաղությամբ դիմեցին ժամանելու առ Աստված։ Հաղթանակի պսակ ստացան և դասվեցին վերին Երուսաղեմի որդիների շարքը։ Ինչպիսի քաջությամբ որ սկսեցին, նույն ձևով էլ ավարտեցին նահատակության հանդեսը՝ լի երկնային սիրով, և տիեզերքում փայլատակեցին իբրև արեգակ։ Եվ նրանց անուններն էլ գրված են կյանքի գրքում։

Իսկ առանձին թշվառականներ ու սատանայի կողմից ոտնակոխ արվածներ, զարհուրելով ներկա մահվանից, և իրենց սրտերը թեթևացնելով նրանց փուչ ու սնոտի խոստումներով՝ իրենց շրջապատեցին մահվան մեղքի երկունքով և անօրեն հորձանքի նման հեղեղեցին իրենց մարմինները։ Վրիպելով ճշմարիտ լույսից՝ նրանք կուրացան խավարով ու մթով, շեղվեցին արքունական ճանապարհից և զատվելով աստվածային քաղցր խորհրդի հստակ ծորանից՝ բավականաչափ խմեցին դառն մրուրը, որը չարության վերջինն է և կռապաշտության առաջինը։ Ուրանալով հավատը՝ նրանք անհավատներից ավելի չար գտնվեցին՝ բոլորովին չօգտվելով նրանց խոստումներից գոնե միայն կյանքի կողմով, այլ դարձել էին երերացող, տատանվող, թշնամացած և բոլոր կողմերից խոցված ու նվաստացած։ Ազնվական մարդիկ ուրանալու պատճառով խայտառակվեցին ու հասան խոր աղքատության և մինչև անգամ աղքատների դռներն էին շրջում ու հաց մուրում՝ ժառանգելով միայն կորստական մոլորության ու անարգության անուն։ Նրանք իրենց շրթունքներով չխոստովանվեցին. սաստիկ դառնությամբ իջան դժոխք՝ միջոց դառնալով գեհենի հրի համար։ Եվ սա ես գրեցի կշտամբելու

այս գրեալ եղև յինէն առ 'ի կշռամբութիւն յանդիմանութեան այնոցիկ, որք խորհին ցանկացողք գործոց նոցա լինել*)։

Բայց և ես տխրական տրտմութեան բանս ինչ ասա յառաջ բերեմ ասել. քանզի դրացիք մեր և ազգք որ շուրջ զմեօք են՝ Յունականք և Եղերացիք և Գուգարացիք և Ուտէացիք, հիւսիսական ազգք բնակեալք առ ոտամբն Կովկասու, 'ի մտի եղեալ եթէ գուցէ յինքեանս հետի աղագս գտանել մարթասցին՝ ոստիկանն չար թէ երբէք շէն գտցէ զքաղաքս և զաւանս և զգեղս, վասն այնորիկ 'ի խլել և 'ի բրել, կորուսանել և յատակել ջանացան առ ստորոտով իւրաքանչիւր աշխարհաց իւրեանց. և ապա խառն ընդ նոսին ևս աւազակք և սրիկայք ելին 'ի մարտս ընդ երկրի մերում. և բազում ինչ այն էր՝ որ 'ի նմանէ անցք ընդ աստուածաշէն եկեղեցիս անցանէին յեղծումն և 'ի խոպանումն և յապականումն վարակեալ։ Եւ զբազում զաշխարհս իբրև զանապատ՝ անկոխ անջրդի ցուցեալ տապալէին. և գրեթէ իբրև զերկիր, որ ոչ անց մարդ ընդ նա և ոչ բնակեցաւ 'ի նմա որդի մարդոյ՝ այնպէս զապատն անապատ առնէին։ Եւ վասն ընդ միմեանս բախելոյ բազում ճապաղիս արեան հեղեալ՝ դիակամբք լնուին զերեսս երկրի մերոյ, և առհասարակ յաւարի առեալ կապուտ բազում՝ խաղացուցանէին յինքեանս ըստ իւրաքանչիւր աշխարհաց կշիռ։ Եւ այսպէս անմարդացեալ և անզաւակացեալ, խոպանացեալ և անշքեղացեալ այնուհետև աւանք և շէնք մեր եղեն իբրև զանդաստան մացառախիտ. և ցամաքեցան բոզբոջք բուսոց արտավարաց և արօտից. և քաղաքք մեր կործանեցան առ 'ի չգոյէ բնակչաց, և երկրագործք մեր սպառեցան և սուգ զգեցան։ Եւ այսպէս ծածկեցին զմեզ անարգանք մեր, և 'ի մեզ բաւանդակեալ լցաւ մարգարէութիւնն Եսայեայ, եթէ «Երկիր ձեր աւերակ, քաղաքք ձեր հրձիգք, զաշխարհս ձեր առաջի ձեր օտարք կերիցեն՝ աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց։»

Իսկ իբրև այսպէս կրեցաք տագնապս տարակուսից 'ի հինից օտարաց, 'ի մերս ապա լինէաք 'ի թագաւորս և յիշխանս ակնկառոյց, այլ և 'ի պետս և 'ի նախարարս երկրի մերոյ։ Եւ յուսացեալ սպասէաք ոչ ևս ընդ փորձութեանն խառն վրիպիլ սոցա և անկանիլ. այլ ջան առաջի դնել և ելս նեղութեան հնարել, և վայելչաբար 'ի միասին կապակցիլ հասարակ եղբայրութեամբ և իբրև զմի այր միանալ, և ընդ Դաւթի պարսաքարել զնորս Գողիաթու մսեղէն բուրդն, կամ ընդ Գեդէոնի ըստ

* Տե՛ս յեօթներորդ յեղանակի Պատմ. Եղիշայի զոր ինչ ասէ սա զՎասակայ։ Վենետիկ, 1842. եր. 247—48։

ու հանդիմանելու համար նրանց, ովքեր մտածում են նրանց գործերին ցանկացող լինել*։

Բայց ես ուզում եմ տխուր ու տրտում խոսքս առաջ տանել ու ասել. քանի որ մեր շուրջը եղած դրացիներն ու ցեղերը՝ հույները, եգիպտացիները, գուգարացիները, ուտեցիները, Կովկասի ստորոտներում բնակվող հյուսիսային ցեղերը, մտածելով, թե գուցե նրանք կարողանան ճանապարհ գտնել դեպի իրենց կողմը, և չար ոստիկանը երբևէ շեն գտնի քաղաքները, ավաններն ու գյուղերը, այդ պատճառով նրանցից յուրաքանչյուրը ջանաց ավերել, փորել, կորցնել ու գետնին հավասարեցնել իր աշխարհի ստորին մասերը։ Եվ ապա նրանց հետ միասին մեր երկրի դեմ կռվի դուրս ելան և՛ ավազակները, և՛ գողերը։ Եվ շատն այն էր, որ նրանցից սկսած դեպքեր էին տեղի ունենում աստվածային եկեղեցիների հետ՝ դրանք ավերելու, անպետքացնելու ու ապականելու նպատակով։ Շատ երկրներ իբրև անապատ անկոխ ու անջրդի թողնելով՝ անմշակ էին դարձնում՝ գրեթե այն երկրի նման, որի վրայով մարդ չի անցել ու նրանում չի բնակվել մարդու որդին, և այդպես՝ շեն տեղերը անապատի էին վերածում։ Եվ միմյանց բախվելու պատճառով արյուն էին հեղում՝ դիակներով լցնելով մեր երկրի երեսը։ Եվ առհասարակ մեծ ավար առնելով՝ նրանք տանում էին իրենց հետ՝ յուրաքանչյուր երկրի չափով։ Եվ այդպես ամայանալով, խոպանանալով՝ մեր ավաններն ու շենները հետո դարձան մացառախիտ անդաստաններ։ Չորացան արտերի ու արոտների բույսերի բողբոջները։ Մեր քաղաքները կործանվեցին բնակիչներ չունենալու պատճառով, մեր երկրագործները սպառվեցին և սուգ հագան։ Եվ այսպես մեզ պատեց անարգանքը, և մեզանում ամբողջովին կատարվեց Եսայու մարգարեությունը, թե «Ձեր երկիրը ավերակ է, ձեր քաղաքները հրկիզված, ձեր առաջ օտարները կուտեն ձեր աշխարհը, որն ավերվել ու կործանվել է օտար ցեղերի կողմից»[89]։

Իսկ երբ օտար ավազակների կողմից կրեցինք այսպիսի տագնապ ու տարակուսանք, մեր աչքերը հառած սպասում էինք մեր երկրի թագավորներին, իշխաններին, պետերին ու նախարարներին։ Հուսալով սպասում էինք այլևս փորձության մեջ չընկնել, այլ ջանք թափել ու նեղությունից դուրս գալու ելք գտնել։ Եվ վայելչաբար միմյանց հետ կապվելով միաբան եղբայրությամբ ու միանալով որպես մեկ մարդ, Դավթի հետ պարսատիկով քար նետելով Գողիաթի նոր մսեղեն բուրգի վրա[90], կամ Գեդեոնի[91] հետ նկանակը գլորելու նման Տիրոջ սրով վա-

* Տե՛ս Եղիշեի Պատմության յոթներորդ եղանակում, ինչ որ նա ասում է Վասակի մասին, Վենետիկ, 1842, էջ 24—248։

հոլովելոյ նկանակին սրով Տեառն վանել զճամբարս թշնամեացն. կամ ըստ Յայէլի թերևս գոնէ յետ զկաթն արբուցանելոյ՝ ցցով վարսաւորել ընդ ծամելիսն Սիսարայ. կամ իբրև զՄակաբէ 'ի շուրջ պատեալ պատերազմէն փրկել, և այսպէս ազատել զկաթուղիկէ եկեղեցի և լուծանել զլուծ 'ի պարանոցէ հաւատացելոց, և շահել զորդիս սպանելոց։ Բայց ոչ զայս եղև տեսանել մեզ, այլ զնորին հակառակն կրեցաք. վասնզի նուաղունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեարս տրեխաւորեալ՝ 'ի գետնի գնացուցեն և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաթուր հարողս՝ խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ։ Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք, զորս 'ի բնէ նախարարութիւնքն էին՝ ջանային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասալարս։ Այլ և եղբայր ընդ եղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ 'ի նախանձ և 'ի չարակնութիւն և 'ի գրգռութիւն և 'ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերէին։ Եւ այսպէս համագունդ ընդ միմեանս հարեալք՝ հակառակութիւն և 'ի կռիւ պայքարէին. և միշտ սուր յազդեր ունելով՝ բազում ևս քան զթշնամիսն հեղուին 'ի միմեանց զարեան ճապաղիս. և առհասարակ զքաղաքս և զգեօղս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց. և գրեթէ այն իսկ օճիրք հակառակութեան գտան պատճառք հինիցն՝ եկելոց 'ի վերայ մեր, ըստ Սողոմոնի՝ թէ «Ատելութիւն գրգռէ զբարկութիւն։» Եւ առ մեզ լրցաւ միւս մարգարէութիւնն, եթէ «Անկցի այր ընդ այր, և այր ընդ ընկերի իւրում, ընդհարցի մանուկ ընդ ծերոյն, և անարգն ընդ պատուականին։» Այսպէս ապա ամենայն առաքինի քաջղութիւն և շինութիւն և խաղաղութիւն քայքայեցաւ, և եղծումն և ապականումն զտեղի փոխարերեաց։ Եւ սակս այսորիկ ապա մարգարէն ընդ մեզ ողբակցէ զառաջին բարեզարդութիւնն և զվերջին ընդդիմակազմութիւնս, եթէ «Առաջ նորա դրախտ փափկութեան, և վերջ նորա դաշտ ապականութեան։» Ըստ հարուածոցս դաժանութեանց և տարերքս ևս յեղափոխեցին 'ի մեզ զդառն առարկութիւն շարի. վասնզի բարեխառն օդք հիւսիսայինք 'ի դառնաշունչ հողմ հարաւային շրջեցան. և քաղցր և հեշտալի գարուն 'ի ձմերային սգաւորութիւնս յեղանակեցաւ։ Յայնժամ երկրագործք մեր բազմայորդորք էին 'ի վաստակս ձեռաց իւրեանց, իսկ այժմ լքեալք և ընդարմացեալք շտեալք. յայնժամ շտեմարանք զեղեալք, իսկ այժմ դատարկացեալք և ամաչեցեալք. անդ հօտք արօտականք ծաղկաւէտք

նելով թշնամիների բանակները, կամ ըստ Հայելի[92], որը թերևս կաթը խմելուց հետո Սիսարի ատամները սեպով գետնի մեջ խփեց, կամ իբրև Մակաբեն[93], որը պատերազմի շրջափակումից փրկվեց ու այդպես ազատեց կաթողիկե եկեղեցին և հավատացյալների պարանոցից փարատեց լուծը ու ստացավ սպանվածների որդիներին։ Բայց այդ բանը մենք չտեսանք, այլ կրեցինք դրա հակառակը, քանի որ անզորները ջանում էին մեծամեծներից ավելի համարձակ լինել, և ըստ Սողոմոնի՝ ծառաները գտնում էին, որ տերերին պետք է տրեխ հագցնել, որ քայլեն գետնի վրա, իսկ իրենք պետք է բարձրանան բարձրավիզ ու ոտնատակ տվող երիվարների վրա՝ գոռոզանալով ու հոխորտալով մեծ ըմբոստությամբ։ Իսկ մեր թագավորները, պետերն ու իշխանները, որոնք հենց սկզբից մեր նախարարություններն էին, ջանում էին ցրել, յուրաքանչյուրին հանել իր բնակավայրից և իրենց ուզածով ստեղծել իրենց պատկանող նոր պայազատներ ու զորավարներ [սպասալարներ]։ Նրանք նաև եղբորը եղբոր դեմ էին հանում, ազգականին ազգականի՝ միմյանց նկատմամբ առաջացնելով նախանձ, չարակնություն, գրգռություն և կատարյալ ատելություն։ Եվ այդպես խմբովին միմյանց դեմ դուրս գալով՝ հակառակվում էին ու կռվում և միշտ սուրը ազգրին կապած միմյանցից ավելի շատ արյուն էին թափում, քան թշնամիները։ Առհասարակ քաղաքները, գյուղերը, ավանները, ագարակները, ինչպես նաև իրենց տները քանդում էին իրենց ձեռքով։ Եվ այդ հակառակության հանցանքները գրեթե պատճառ դարձան այն ավազակների հումար, որոնք հարձակվեցին մեզ վրա՝ ըստ Սողոմոնի, թե «Ատելությունը գրգռում է բարկությունը»[94]։ Մեզ է վերաբերում նաև նրա մյուս մարգարեությունը, թե «Մարդը կկռվի մարդու դեմ, ընկերը ընկերոջ, մանուկը կընդհարվի ծերի, անարգը՝ պատվականի հետ»[95]։ Եվ այսպիսով քայքայվեցին առաքինի ողջամտությունը, շենությունը, խաղաղությունը, և դրանց փոխարինեցին ավերումն ու ապականումը։ Այդ պատճառով էլ մարգարեն մեզ հետ ողբակցում է առաջին բարեզարդության և վերջին ավերածության համար, թե «Նրա սկիզբը փափուկ դրախտ էր, իսկ նրա վերջը ապականության դաշտ»[96]։ Դաժան հարվածների համեմատ բնության հիմնական տարրերը ևս մեզանում վերափոխեցին դառն պատահարը շարի։ Քանի որ հյուսիսային բարեխառն հովը հարավային ցրտաշունչ հողմի փոխվեց, քաղցր ու հաճելի գարունը ձմեռային տրտմության վերածվեց։ Այն ժամանակ մեր երկրագործները ջանադիր էին իրենց ձեռքի աշխատանքի համար, իսկ այժմ հուսալքված են, ընդարմացած և խնդրող[97]։ Այն ժամանակ շտեմարանները լիքն էին, իսկ այժմ դատարկված են ու նսեմացած։ Այն ժամա-

խայտացեալ, աստ խամրեալ և յոյժ պակասեալ. յայնժամ դաշտք պարարտութեամբ լցեալ, իսկ այժմ տխրութեամբ. անդ և հովիտք բազմացուցեալ ցորեան, աստ կարկտիւ և շար ուղխիւք հեղեղեալ. յայնժամ անձրեք քաղցունք և շահեկանք, իսկ այժմ անպիտանք և ջաղբ և թորթորեալք յապականել զհունձս և զկալս, թէ և գտանի ուրեք պըտղեղութիւն. անդ լերինք զցնծութիւն զգեցեալ, իսկ արդ անզարդացեալ առ 'ի չգոյէ արօտականաց։ Տասն լուծք եղանց գործեցաք, և սափոր մի մեզ տուաւ. սերմանեցաք և ոչ հնձեցաք. տնկեցաք և ոչ կթեցաք։ Թզենի ոչ ետ զպտուղ իւր. որթ և ձիթենի ոչ ետուն զզօրութիւնս իւրեանց. թէ շտեմարանեցաք ինչ, և զայն ևս այլոց թողաք։ Եւ այսպէս անդրադարձեալ եղև մեզ տէրունեան բանն, զի մեք վաստակեցաք, և այլք 'ի վաստակս մեր մտին։ Եւ այսպէս ապա յամենայն յուսոյ բարւոյ զրկեալք՝ ծածկեցին զմեզ անարգանք մեր։

Եւ այսպէս 'ի յիշատակութենէ թշնամեաց և յանարգիւն անպտղութեանց՝ ապա և սովն ևս 'ի վերայ սաստկացեալ զօրանայր ուժգնապէս։ Վասն զի հուրն կայծակնացայտ որ տեղեացն 'ի մեզ, և սուրն անողորմ պատերազմացն որ միշտ 'ի մեզ բղխէր զհոտ մահու՝ մինչև յեօթն ամ ձգեալ ընդերկարեցաւ. և վասն այսորիկ մնացեալքս պանդրխտեցաք 'ի վրանս Կեդարու, և թափրացաք և ունայնացաք 'ի ստացուածոց և 'ի բոլոր պարենի ոռճկաց և 'ի չգոյէ կերակրոց։ Ապա այնուհետև սկիզբն առնոյր սովն կորստական և ապականէին առհասարակ Այրարատեան աշխարհիս ծնունդք 'ի քաղաքս և 'ի գիւղս և յագարակս՝ իբրև զդիակունս գունատեալս՝ և լքեալս դանդաչէին։ Եւ այլք 'ի փարթամաց առ սակաւ սակաւ զիւրեանց ստացուածս վատնեալք ընդ աւուրն պարենի՝ 'ի վերջին տնանկութիւն հասանէին և յաւէտ յաղքատութիւն և 'ի կարօտութիւն։ Եւ կէսք 'ի խոտարուտ կեանս 'ի հարկէ սովոյն բերեալք՝ զմոլեխինդն և կամ զայլս ոմանս վնասակար բանջարս ըստ դիպաց իմն ճարակեալ՝ յապականութիւն մահու հասանէին. զի վտանգ սովոյն հպարակ շարժէր 'ի կարօտութիւն զամենայն ինչ 'ի կերակուր նոցա բերել։ Իսկ ոմանք զսիրելի որդեակս իւրեանց ընդ սակաւիկ ինչ ոռճկաց թշնամեացն վաճառեալ 'ի տագնապէ վտանգին՝ ոչ յիշեցան նոցա աղէկոտոր խնամք ծնողականաց։ Եւ կանայք պատուականք 'ի հարկէ կարօտութեանն զքօղումն 'ի գլխոց մերկացեալ

նակ արածող կենդանիների հոտերը վխտում էին ծաղկավետ [վայրերում], իսկ այժմ քչացել են ու խիստ պակասել։ Այն ժամանակ դաշտերը լցված էին առատությամբ, իսկ այժմ տխրությամբ։ Այն ժամանակ հանդ ու հովիտ լիքը ցորեն էր, իսկ այժմ կարկտով ու շար հորձանքով հեղեղված։ Այն ժամանակ անձրևները քանկալի ու օգտակար էին, իսկ այժմ ոչ պիտանի, հորդառատ, խամեցնող, որոնք փչացնում են հունձն ու կալերը, եթե անգամ որևէ տեղ պտղաբերություն է լինում։ Այն ժամանակ լեռները ցնծություն էին հագել, իսկ այժմ անզարդ են դարձել՝ արածող կենդանիներ չլինելու պատճառով։ Տասը լուծ եզներ գործի դրեցինք, բայց մեզ տրվեց միայն մի սափոր [բերք], սերմանեցինք, բայց չհնձեցինք, տնկեցինք, բայց [պտուղ] չքաղեցինք։ Թզենին պտուղ չտվեց, խաղողի վազն ու ձիթենին չտվեցին իրենց զորությունը։ Եթե մենք ինչ-որ բան շտեմարանեցինք, այն ևս ուրիշներին թողեցինք։ Եվ այսպես մեզ վրա անդրադարձավ տերունական խոսքը, որովհետև մենք աշխատեցինք, բայց մեր վաստակը ուրիշներն օգտագործեցին։ Եվ այդպիսով զրկվելով ամեն տեսակի բարի հույսից՝ մեզ պատեց մեր անարգանքը։

Այսպիսով, թշնամիների հարձակումների և անարդյունք ու անբերրի աշխատանքի պատճառով ուժգին կերպով սովն էլ սաստկանում ու շատանում էր մեր երկրում։ Քանի որ կայծակնացայտ հուրը, որը տեղաց մեզ վրա, և անողորմ պատերազմների սուրը, որը միշտ մեզ վրա էր բխեցնում մահվան հոտը, երկարեց՝ ձգվելով յոթ տարի։ Այդ պատճառով ողջ մնացածներս գնացինք Կեդարի[98] վրանները և զրկվեցինք, դատարկվեցինք ունեցվածքից, պարենից, ուտելիքից, կերակուրներից։ Այնուհետև սկսվում է կորստական սովը, և առհասարակ ապականվում են Այրարատյան երկրի ծնունդները քաղաքներում, գյուղերում, ագարակներում, ուր [մարդիկ] երևում էին իբրև գունատված ու թուլացած դիակներ։ Եվ հարուստներից շատերը, իրենց ունեցվածքը կամաց-կամաց վատնելով օրվա պարենի համար, ընկնում են վերջին չքավորության, աղքատության ու կարիքների մեջ։ Իսկ նրանց մի մասը սովի պատճառով հարկադրված անցնում է խոտակեր կյանքի, և ուտելով պատահած թունավոր բույսեր կամ այլ վնասակար կանաչեղեն՝ նրանք հասնում էին մահվան դուռը, որովհետև սովի վտանգը առհասարակ կարիք էր առաջացնում որպես կերակուր օգտագործելու ամեն ինչ։ Իսկ ոմանք վտանգի տագնապի պատճառով իրենց սիրելի որդիներին վաճառում էին թշնամիներին մի քիչ ուտելիքի դիմաց՝ չհիշելով ծնողական իրենց գորովալից խնամքի մասին։ Պատվական կանայք չքավորությունից հարկադրված գլուխներից իջեցնում էին քողը, հանում

և զհանդերձս յանդամոց՝ առանց ամօթոյ 'ի հրապարակս ելեալ, առ
տագնապին մուրացիկ շրջէին։ Եւ ոմանք ծիրեալք և ծնգեալք և ցա-
մաքեալք 'ի տարակուսանս սովոյն իբրև զմեռեալ պատկերս դանդա-
շէին, և թօթափեալք այսր անդր սակս նքողմանն և ընդ միմեանս հա-
րեալք՝ կործանէին զիրեարս։ Եւ այլք իբրև զդիակունս բաղմակոյտս
'ի հրապարակս անկեալք և լքուցեալք՝ մինչ շունչ նոցա մերձ էր յելա-
նել, աղաչէին զանցաւորս ոմանս, զի կարկառեսցեն նոցա նշխար ինչ
կոտորոյ հացի, և այնպէս զրաւէին 'ի կենաց։ Իսկ եթէ 'ի մեծատանց
ոք տալով ինչ տային նոցա ողորմութիւն՝ յետոյ յանողորմ բարս խրս-
տութեան ընդ մուրացիկսն դառնային, զի խղճէին եթէ գուցէ լինիցին
և նոքա իբրև զնոսա։ Բարձեալ էր ապա յամենեցունց 'ի նոցանէ սեղան
ուղղել. զի ոմանք առ սաստիկ կարօտութեանն զցորեանն՝ իբրև չէր
աղացեալ կամ թրեալ՝ ուտէին. և այլք 'ի կրակարանաց զաղահումն
յափշտակեալ ուտէին։ Զարշարանաց էր կերակուրն՝ զոր թէ գտանէին
երբէք, և արտասուաց արժանի՝ տարաժանական և ողորմելի ճաշակքն։
Դողումն և սոսկումն և սարսափումն աստանօր զիս պատեալ պաշարէ
'ի բանէս, որ առաջի կայ ասել. զի մարդք հաւատարիմք ստուգեցին
մեզ զբանս ճշմարիտ, եթէ մարք ոմանք զսովամահ որդւոց իւրեանց
մարմինս 'ի կերակուր իւրեանց պատրաստէին. և այլք զընկերակիցս
իւրեանց գաղտակծութեամբ իմն իբրև զոչխար 'ի սպանդ վարեալ՝ կե-
րակուրս իւրեանց պատրաստէին։

Եւ այս անդր ևս քան զվրէժխնդրութիւն Երուսաղէմի արժանի ան-
հնարին ողբոց գործս ինչ տեսեալ լինի. վասնզի ձեռք կանանց ողոր-
մածաց եփեցին զմանկունս իւրեանց և եղև նոցա 'ի կերակուր։ Եւ որ
'ի գիրկս գրկեալք և գգուեալք էին՝ գիրկս արկեալ աղբեաց՝ թարթա-
փեալք թաւալէին և ուտէին իբրև զկերակուր։ Կցեցան լեզուք դիացիկ
մանկանց 'ի քիմս իւրեանց 'ի ծարաւս իւրեանց, զի ոչ գոյր նոցա դիե-
ցումն 'ի մարց։ Տղայք շորաբեկ հացիկ խնդրէին՝ և արտասուք ընդ ծնո-
�ս նոցա թորէին, և ոչ ոք էր որ տայր նոցա. և այնպէս ապա պակասեալ
թափեալ հանեալ զոգիսն 'ի ծոցս մարցն իւրեանց՝ ընկեցեալ ցրեալ
ցնդեալ կային առհասարակ ծնեալքն և ծնողքն 'ի մէջ քաղաքաց։ Այս-
պէս մատնեցան ահա որդիք ժողովրդեան մերոյ յապականութիւն 'ի
յանօրէնութեանց մերոց և ճոաքաղ եղեան 'ի վայրկեան ժամանակի։
Բայց առաւել քան զայսոսիկ խռովչացն վտանգ խոշտանգանաց զնո-
սա կորուսանէր. զի ըմբռնեալք 'ի ձեռաց նոցա 'ի հարուածս անհնարին

շորերը և առանց ամաչելու դուրս գալով հրապարակ՝ սրտագողով շրջ-
ում էին որպես մուրացիկներ։ Ոմանք սովի տառապանքից նիհարելով,
թուլանալով ու շորանալով, իբրև մեռնող պատկերներ, երերում էին,
հյուծվելու պատճառով ընկնում էին այս ու այն կողմ և կպչելով միմ-
յանց՝ իրար գցում էին գետին։ Իսկ մյուսները դիակների նման հրա-
պարակներում ուժասպառ ընկած ու կիտված էին իրար վրա և երբ
մոտ էին շունչները փչելուն, անցորդներին աղաչում էին, որպեսզի ի-
րենց մեկնեն հացի մի կտոր կամ փշուր, և նրանք էլ այդ ձևով էին
հեռանում կյանքից։ Իսկ եթե հարուստներից ոմանք նրանց ինչ-որ ո-
ղորմություն էին տալիս, հետո նրանք մուրացիկների պես ձեռք էին
բերում անողորմ ու խիստ բնավորություն, որովհետև տարակուսում
էին, թե գուցե իրենք էլ կլինեն նրանց նման։ Նրանց բոլորի համար
վերացել էր սեղան դնելը, այնպես որ ոմանք ցորենի սաստիկ կարի-
քից, այն դեռևս չաղացած կամ չթրջած՝ ուտում էին, իսկ ուրիշները
կերակուրը չեփած խլում, ուտում էին։ Նրանք չարշարանքով էին կե-
րակուր ճարում, որը եթե երբևէ գտնում էին, ապա այդ ողորմելի ու-
տելիքը արտասուքի էր արժանանում։ Այս խոսքերից ինձ պատում ու
պաշարում են դողը, սոսկումը, սարսափը, որ առաջիկայում պետք է
պատմեմ, քանի որ հավատարիմ մարդիկ ստուգեցին մեր խոսքերի
ճշմարտությունը, թե առանձին մայրեր իրենց սովամահ որդիների մար-
մինները իրենց համար կերակուր էին պատրաստում, ուրիշներն իրենց
ընկերներին իբրև ոչխար գաղտնի կերպով քշելով սպանդանոց՝ իրենց
համար կերակուր էին պատրաստում։

Եվ սա դիտվում է Երուսաղեմի վրեժխնդրությունից ավելի սաս-
տիկ ու ողբալի գործ, որովհետև ողորմած կանանց ձեռքերը եփեցին
իրենց երեխաներին ու կերակուր դարձրին։ Եվ ում մի ժամանակ գըր-
կած գուրգուրում ու փայփայում էին, այժմ գցելով աղբանոցները՝
նրանք թափառում ու թավալվում էին ու [աղբն] ուտում էին իբրև
կերակուր։ Ծծկեր երեխաների լեզուները ծարավից կպան իրենց քիմ-
քերին, որովհետև մայրերը չէին կարող նրանց ծիծ տալ։ Երեխաները
շոր հաց էին խնդրում, արտասուքը կաթում էր նրանց ծնոտներից վրա-
յից, և ոչ ոք չկար, որ [հաց] տար նրանց։ Եվ այդպես երեխաները
փչում էին իրենց շունչը իրենց մայրերի գրկում, և առհասարակ ծն-
վածներն ու ծնողները ցրվում, ցաք ու ցրիվ էին լինում քաղաքներում։
Եվ ահա այսպես մեր ժողովրդի որդիները մեր անօրենության պատ-
ճառով կոտորվեցին ու բնաջնջվեցին կարճ ժամանակվա ընթացքում։
Բայց սրանցից առավել նրանց կորստի էին մատնում խռովարարների
տանջանքներն ու չարչարանքները, որովհետև երբ նրանք բռնում էին

շարշարանաց տանջեալ լինէին, զի թէ գուցե գտցի ինչ առ նոսա կերակուր, եթէ գտանէր երբէք ուրեք՝ կրկնապատիկ ազգի ազգի տանջանս հնարիմացս 'ի վերայ նոցա ածէին։ Ոմանց գաւազանս ընդ ներքին համոն վարէին, և այլոց փայտս սրեալ յերաստանսն ցցէին. և կիսոց զաճիւն հնոցի հրախառն 'ի ծոցս և 'ի գլուխս վայթէին. ոմանց զներքին անդամսն և զծածուկ արութիւնսն կապեալ սամետիւք՝ և նոսվիմբ զբարձաւանդակաց կախէին մինչ 'ի խզել խլել իսկ 'ի բաց համոյն, յորմէ և սակաւք 'ի բազմաց թէ ապրէին. և զայս ո՛չ միայն 'ի թշնամիսն՝ այլ և 'ի մարդս մերձաւորս և յընկերակիցս և 'ի ծանօթս էր տեսանել։ Եւ այսպիսի խոր խռովութիւն պատէր զքաղաքսք, և գիշեր լի մահուամբ զգիւղիւք և զգերդաստանօք։ Եւ մարմինք մերկք ընկեցեալ կային 'ի փողոցս և 'ի հրապարակս և տեսիլ սարսափելի անարգութեան տային տեսողացն՝ որպէս զի ո՛չ ևս ոք կարէր տալ զնոսա գերեզմանաց։ Եւ այսպէս ապա շանց և շաղղակեր գազանաց և թռչնոց երկնից լինէին կերակուր. և յայնմանէ սովորութիւն կալեալ գիշամուխ գազանացն՝ յորդեցին զօրացան բազմազան աշխարհակեր գայլք, և այնուհետև փոխանակ զիականց զկենդանասէր մարդիկ իբրև զանբան անասունս ժանեօք մանրեալ ազացեալ ուտէին. և 'ի միասին հնձեալք լինէին 'ի ճիրանաց գազանաց անտի պատուականն և անարգն։ Քանզի թմրութիւն մեզաց և զանմեղսն ևս ընդ միգով իւրով ածեալ ծնգէր. վասն զի ելք են հասարակաց 'ի տարերց աստի աշխարհէ, և սահմանեալ աւուրն հատուցման պահի պատիւն և պատուհասն։ Այսպէս տարածեցաւ մահ 'ի սակաւ աւուրս և լիզաջինջ արար զԱսքանազեան ազն. և առ ամենայն մարդիկ քարոզեալ երևեցաւ շար ամպրոպացն արկածք, և ստուերք մահու մեզաց ծածկեցին զմեզ յոյժ. վասն զի ո՛չ կացաք յուխտի Տեառն՝ անփոյթ արար զմեզ։

Իսկ ես աստանօր պանդխտաբար ըստ հալածանաց ժամանակին նստեալ կայի 'ի մէջ Գուգարաց և Վրաց մերձ առ մեծիմաստն Ատրներսեհ՝ թագաւորն կացելոյ յայնմ նահանգի. որ թէպէտ բազում հիւրամեծարութեամբ և առատանձեռն ոռճկօք առ 'ի նմանէն պատուասիրեցայ, սակայն ընդ յերկարեալ իմ պանդխտութեան անդ՝ որպէս երբեմն Իսրայէլ 'ի վրանս Կեդարու, յաւէտ իմն տրտմեալ տառապէի՝ ակնկալեալ և սպասեալ փրկութեան Տեառն Աստուծոյ։ Ապա սակս սասանութեանց և վրդովմանց մերոց՝ լուեալ մեծի պատրիարգին Կոստանդնուպոլսի Նիկողայ, զրէ թուղթ առ իս օրինակ զայս.

նրանց, սաստիկ ծեծում, շարշարում ու տանջում էին, թե գուցե նրանց մոտ ինչ-որ ուտելիք գտնվի, իսկ եթե երբևէ ինչ-որ տեղ [ուտելիք] էր գտնվում, կրկին նրանց զանազան խարդախ տանջանքների էին ենթարկում։ Ոմանց ներքին անդամների մեջ գավազաններ էին խրում, ոմանց հետևները սրած փայտեր մացնում, մի մասի ծոցերն ու գլուխներին հնոցի հրախառն մոխիր էին լցնում, ոմանց ներքին անդամները ու առնանդամները սամոտիով կապելով՝ կախում էին բարձր տեղերից մինչև առնանդամի կտրվել-ընկնելը։ Եվ դրանից շատ քչերն էին փրկվում։ Եվ այդ բանը կարելի էր տեսնել ոչ միայն թշնամիների, այլ նաև մերձավորների, ընկերների ու ծանոթների նկատմամբ։ Եվ այսպիսի խոր խռովությունը պատում էր քաղաքները, իսկ գիշերները գյուղերն ու գերդաստանները լի էին մահով։ [Մեռածների] մերկ մարմիններն ընկած էին փողոցներում ու հրապարակներում և տեսնողների վրա այնպիսի սարսափելի ու ամոթալի ազդեցություն էին թողնում, որ ոչ ոք չէր կարող նրանց հանձնել հողին։ Այդ պատճառով [նրանք] կերակուր էին դառնում շներին, գիշակեր գազաններին ու երկնքի թռչուններին։ Այսպես շատացան, ուժեղացան, բազմացան աշխարհ լափող գայլերը և գիշակեր գազանները, որոնք այնուհետև սովորություն դարձնելով, դիակների փոխարեն կենդանի մարդկանց, իբրև անբան անասունների, ժանիքներով մանրելով ու աղալով, ուտում էին։ Եվ այն գազանների ճիրաններում միասին կոտորվում էին պատվականն ու անարգը։ Նաև անմեղներին իր մշուշով պատելով՝ մեղքի թմրությունը նրանց ծնկի բերեց, քանի որ դա ընդհանուրի համար այս աշխարհի տարերքից դուրս գալու ելք էր, և պահվում է սահմանված օրվա պատիվն ու պատուհասը։ Այսպես մի քանի օրում մահը տարածվեց ու բնաջնջեց Հայոց ազգին։ Եվ ամեն մարդու հայտնվելով՝ երևաց շար ամպրոպի փորձանքը, և մահվան մեղքի ստվերը խստորեն ծածկեց մեզ։ Որովհետև չմնացինք Տիրոջ ուխտի մեջ, նա հոգ չտարավ մեր մասին։

Իսկ ես այդտեղ պանդխտելով ժամանակի հալածանքների պատճառով, մնացել էի Գուգարքի ու Վրաստանի միջև, խոհեմ Ատրներսեհին ծոտիկ, որն այն նահանգի թագավորն էր։ Չնայած նա ինձ բազմիցս հյուրասիրեց ու առատ ուտելիքներով պատիվ տվեց, սակայն երկար ժամանակ այնտեղ պանդուխտ մնալով, ինչպես երբեմն Իսրայելը Կեդարի վրանում, շատ ավելի տրտմելով, տառապում էի՝ ակնկալելով ու սպասելով Տեր Աստծու փրկությանը։ Հետո մեր սասանման ու վրդովմունքի մասին լսելով՝ Կոստանդնուպոլսի Նիկողայոս մեծ պատրիարքը ինձ գրում է հետևյալ թուղթը.

«Վսեմականի աստուածասիրի և հոգևոր Տեառն և յաւէտ սիրելի եղբօր մերում՝ Յովհաննու կաթողիկոսի Հայոց Մեծաց, 'ի Նիկողայոսէ ողորմութեամբն Աստուծոյ յարքեպիսկոպոսէ Կոստանդնուպօլսի և 'ի ծառայէ ծառայից Աստուծոյ՝ Տերամբ խնդալ։

Կարծեմ ոչ ինչ զանխուլ է՝ տէր իմ, 'ի քոյոյ յաստուածասիրութենէդ յոյժ տրտմութիւն և անպակաս ցաւք սրտից մերոց յաղագս Հայոց և Վրաց և Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հօտից, որ եհաս 'ի վերայ դառն տագնապ շարշարանաց և նեղութեանց 'ի Սառակինոս Իսմայէլեան բռնակալացն։ Զի թէպէտև մարմնով մեկուսի եմք և աչօք ոչ տեսեալ զվտանգ հօտի ձերոյ. սակայն 'ի լսելն 'ի շարէն շարշարեալ զաշխարհդ ձեր՝ յոյժ կոծիմք անձամբք և յոգոց ելանեմք մեծաւ տրտմութեամբ։ Իսկ եթէ մեք հեռագոյնքս 'ի ձէնջ միայն 'ի լսելն այսպէս ընկալաք յանձիս մեր սուգ դառնութեան՝ ապա ո՞րչափ ևս առաւել դուք՝ հաղորդեալքդ 'ի շարշարանս ընդ հօտից ձերոց, և հայածեալքդ և գանեալքդ և հարուածեալքդ յանօրէն և 'ի պիղծ ապստամբացն և զի՛նչ պարտ է և պատշաճ է լինիլ, և կամ զի՛նչ այնչափ շարութեան իմանալ մխիթարութիւն, և ո՞րպէս ուղղութիւն զհետ եկեսցէ փարատել զառաջակայն՝ որ գալոցն է գայթակղութիւն։ Արդ եթէ պատշաճ թուեսցի սրբութեանդ ձերում, պարտ է նախ զաստուածային այցելութիւնն և զօգնականութիւնն յամենայն ժամ վերակարդալ, և ձեռս 'ի վեր ամբառնալ և բոլորով սրտիւ 'ի գութ ողորմութեան կոչել զամենակալն Աստուած քոյոյդ հօտիդ Հայոց և Վրաց և Աղուանից, և խորհիլ զհասարակացն օգուտ. և ապա մի՛ ևս այլ բնաւ անսալ կորստեան դոցա, և փոյթ յանձին ունել ամենայնիւ յամենայնի առհասարակ զամենեսեան խրատել յաստուածային գիտութեան, և քրիստոսաւանդ բանիւն կապել և արձակել՝ որպէս և ընկալաք պատուէր իշխանութեամբ իսկ յերկինս և յերկրի, և դաղարեցուցանել զոնէ 'ի հակառակութենէ շարութեանդ՝ որ ընդ միմեանս. և մի՛ տալ թոյլ մնալ 'ի վայրենի գազանութեանդ, որք բարկացեալք և դիմեալք են 'ի սպանումն միմեանց, և դառնալ 'ի մարդկային մտածութիւնս և 'ի քրիստոնէական հանդարտութիւնս, որով բերի իսկ 'ի փրկութիւն մնացելոցդ մասանց մարդկան Հայոց աշխարհիդ և Վրաց և Աղուանից։

«Զայս նուաստութիւն իմ յառաջագոյն փութացաւ գրով ճեպել տալ ձեզ սուղ ինչ պատճառ յորդորման սիրոյ։ Ըստ սմին սակի առաքեցաք թուղթ և առ կուրապաղատ առ աւագն Ափխազաց՝ խրատելով առ 'ի լսել խրատուդ ձերոյ և մոռանալ զընդ միմեանս հարումն, և նայել 'ի սէր 'ի միաբանութիւն և 'ի հաշտ խաղաղութիւն ընդ միմեանս և

«Վսեմական աստվածասեր, հոգևոր Տեր և միշտ մեր սիրելի եղբայր Հովհաննեսին՝ Մեծ Հայքի կաթողիկոսին, Աստծու ողորմությամբ Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս Նիկողայոսից և Աստծու ծառաների ծառայից, Տիրոջ օգնությամբ ողջույն։

Տեր 'իմ, կարծում եմ՝ քո աստվածասիրությանը անհայտ չէ մեր սրտի անպակաս ցավը և հույժ տրտմությունը՝ Հայոց, Վրաց ու Աղվանից քո միացյալ ու հավատացյալ հոտերի համար, որոնց հասան դառն տագնապ, շարշարանք ու նեղություններ սարակինոս[99] ու իսմայելյան բռնակալների կողմից։ Թեպետև ֆիզիկապես հեռու ենք և աչքով չենք տեսել ձեր հոտի նեղությունները, սակայն լսելով, թե այն շարագործի կողմից ինչպես է տառապել ձեր աշխարհը, մենք խիստ ողբում ենք ու հառաչում մեծ տրտմությամբ։ Իսկ եթե մենք՝ ձեզանից ավելի հեռու եղողներս, միայն լսելով այսպես ընդունեցինք ձեր դառն սուգը, ապա որչա՞փ առավել ևս դուք՝ անօրեն ու պիղծ այն ապըստամբների կողմից ձեր հոտի հետ շարշարանքների մասնակիցներդ, հալածվածներդ, գանահարվածներդ ու պատժվածներդ, ինչ պարտուպատշաճ է լինելու կամ իմանալու այնչափ շարության մխիթարությունը, և ճշմարտությունը ինչպե՞ս կարող է հետևից գալ փարատելու այն փորձանքը, որ լինելու է։ Այսպիսով, եթե հարմար թվա ձեր սրբությանը, ուրեմն նախ անհրաժեշտ է ամեն ժամ ի վերուստ օգնության կանչել աստվածային նախախնամությունը, ձեռքերը վերև բարձրացնել ու ամբողջ սրտով ամենակալ Աստծուն կանչել գթության ու ողորմության Հայոց, Վրաց ու Աղվանից [աշխարհների] քո հոտի համար և մտածել ընդհանուրի օգուտի մասին։ Եվ ապա բնավ չանսալ դրանց կորստյանը և ջանալ ամեն ինչով և ամեն ինչում առհասարակ բոլորին խրատել աստվածային գիտությամբ։ Եվ Քրիստոսի ավանդած խոսքով կապել ու արձակել, ինչպես իշխանությամբ իսկ ընդունեցիք պատվերը երկնքում ու երկրի վրա և դադարեցնել գոնե շար Ցշնամանքը, որ կա միմյանց նկատմամբ՝ թույլ չտալով մնալու վայրենի գազանների մեջ, որ բարկացած դիմում են միմյանց սպանելու։ Եվ պետք է դառնալ դեպի մարդկային մտածողությունն ու քրիստոնեական խաղաղությունը, որով փրկություն կբերվի Հայոց, Վրաց, Աղվանից աշխարհների մնացած մարդկանց։

Ես՝ նվաստս, նախապես շտապեցի գրի առնել ու փոքր-ինչ տալ ձեզ սիրո հորդորման պատճառը։ Այս կարգի թուղթ առաքեցինք Արխազիայի ավագ կուրապաղատին՝ խրատելով լսել ձեզ, մոռանալ միմյանց դեմ ընդհարումը, նայել սիրով, միաբանությամբ և լինել հաշտ

ընդհասարակ իշխանս Հայոց և Աղուանից, և միանալ միաբան և մարտընչել ընդդէմ ամբարիշտ թշնամւոյն որդւոցն Ապուսիճայ. զի մի՛ հասարակ ձեզ կորուստ եղիցի և որ ընդ ձեօք այլ ևս մերձաւորաց ազգաց սասանումն բերցի։ Եւ արդ՝ պարտ է ձերում սրբութեանդ բերան 'ի բերան և թղթով և պատգամօք և եպիսկոպոսօք և քահանայիւք և սրբովք արարմբք գուն գործել և 'ի բաց 'ի միջոյ բառնալ զչար հակառակութիւնս դոցա, և առանց բանի պղերգութեան հետևել յայդպիսի մատակարարութիւնս՝ և մաղթել դառնալ 'ի լաւագոյնսն և առ փրկական խորհուրդս և գործս։ Զի այդպէս միախոհք և միաբանք լինելով մի՛ ևս կարողասցի ինչ 'ի վերայ աշխարհիդ ձերոյ ապականիչ չար։ Եւ մինչ այդ այդպէս 'ի ձէնջ կազմիցի, ապա և ինքնակալ և աստուածապսակեալ թագաւորս մեր 'ի դէպ ժամանակի պիտոյից առաքեսցէ զօր բազում յօգնականութիւն ձեզ. զի և կուրապաղատդ ևս և աւագն Ափխազաց և իշխանք և մեծամեծք Հայոց միաբանեալք մերոյն զօրաց՝ մեծաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձերով մեծ քահանայագործութեամբդ պատերազմեալ ընդ թշնամիսն կարծեցեալ կորստեան արբանեկին սատանայի՝ վերագոյն գոցին։

«Յայնժամ ապա և մեղանչականութիւն հակառակութեան, որ ընդ միմեանս եղին ապիրատութեամբ՝ և դուք և մեք առհասարակ դոցա թողութիւն շնորհեսցուք։ Եւ զիւրաքանչիւրոցն իրաւունս յիւրաքանչիւրսն ընձեռեսջիք՝ որպէս և վայելէ իսկ ձերում սրբութեանդ. զի յառաջագոյնն իսկ 'ի կարգս քահանայավարութեանն իւրաքանչիւրոք տարեալ հաստատեսցի։ Յայսմհետէ խաղաղութիւնն Քրիստոսի հաստատեսցի 'ի ձեզ՝ և սրբափայլ աղօթք ձեր եղիցի ընդ նուաստութեանս մերում։»

Իսկ իմ ընթերցեալ զայս և ընկալեալ սիրովն Քրիստոսի՝ 'ի սոյն միտս և 'ի սոյն խորհուրդս համոզեալ հաստատեցի զթագաւորն Վրաց՝ մինչև խոստովան եղև զհետ երթալ խաղաղութեան և սիրոյ և միատարր միաբանութեան ընդ ամենեսին՝ ընդ իշխանս և ընդ տեարս աշխարհիս Հայոց և Վրաց, անշուշտ յետկար երդման ինչ այդմ մասին տուեալ։ Իսկ ապա լուեալ ևս զտաղապանս արտութեան ամպրոպաց, որ տեղացան իսկ 'ի վերայ ժողովրդեան Տեառն՝ առի սուգ սաստիկ, և ակն իմ իջոյց զարտասուս զհոսանս ջուրց։ Վասնզի տեսի բարձեալ զվայելչութիւն 'ի տանէ Տեառն և պղծեալ զսրբութիւն նորա 'ի հեթանոսաց, և զի քահանայք նորա հաշեն և հառաչեն և յոգւոց ելանեն։ Եւ յիշեալ զօր տառապանաց անջատման իմոյ, որ իբրև զցանց ձգեալ էր իմոց սրտիցս, զտկարացեալ զօրութիւն իմ սակաւ ինչ կազդուրեալ և գօտևորեալ՝ չուեցի գնացի յաշխարհն Տարօնոյ. և անդ 'ի մերձաւորաց իմոց և իշխանաց և ժողովրդոց գտեալ մխիթարութիւն տառապանաց վշտաց

ու խաղաղ միմյանց և Հայոց ու Աղվանից բոլոր իշխանների հետ, միաբանվել ու մարտնչել ամբարիշտ թշնամու՝ Ապուսիճի որդիների դեմ, որպեսզի դուք ընդհանրապես չկորչեք, և ձեր մերձավոր ազգերը չբասանվեն։ Այսպիսով, ձեր սրբությունը պետք է և՛ դեմ առ դեմ, և՛ թղթով, և՛ պատգամով, և՛ եպիսկոպոսներով, և՛ քահանաներով, և՛ սուրբ մարդկանցով ձգտի վերացնել դրանց թշնամանքը, առանց անհոգ խոսքի հետևել խնամակալություններին, մալչել դառնալու դեպի լավագույնները, փրկական խորհուրդներն ու գործերը։ Որովհետև այսպես միախոհ ու միաբան լինելու դեպքում ձեր աշխարհին այլևս ոչ մի չարագործ չի կարողանա [վնասել]։ Մինչ դուք այդ այդպես կկարգավորեք, ապա մեր ինքնակալ ու աստվածապսակ թագավորը հարկ եղած ժամանակ մեծ զորք կուղարկի ձեզ օգնելու համար։ Նաև աբխազների կուրապաղատն ու ավագը և Հայոց իշխաններն ու մեծամեծները, միաբանվելով մեր զորքի հետ, Աստծու մեծ օգնությամբ ու ձեր մեծ քահանայագործությամբ կռվելով թշնամու՝ սատանայի կարծեցյալ կորած սպասավորի դեմ, ավելի բարձր կգտնվեն։

Այն ժամանակ հակառակության մեղավորությունը, որ ապիրատությամբ դրեցին միմյանց դեմ, և՛ դուք, և՛ մենք առհասարակ դրանց թողություն կշնորհենք։ Եվ յուրաքանչյուրի իրավունքը յուրաքանչյուրին ընձեռեցեք, որպես և վայել է ձեր սրբությանը, որպեսզի սկզբից ամեն մեկի միջոցով տարվի ու հաստատվի քահանայավարության կարգում։ Այնուհետև Քրիստոսի խաղաղությունը կհաստատվի ձեզանում, և ձեր սրբափայլ աղոթքները թող լինեն մեզ՝ նվաստիս հետ»։

Իսկ ես ընթերցելով այս [թուղթը], ընդունելով Քրիստոսի սիրով և սույն մտքի ու սույն խորհրդի մեջ համոզելով՝ հաստատեցի Վրաց թագավորին, մինչև որ նա խոստովանվեց հետևել խաղաղությանը, սիրուն ու միատարր միաբանությանը բոլորի՝ Հայոց, Վրաց աշխարհների իշխանների ու տերերի հետ, իհարկե, այդ մասին տալով երդմնագիր։ Իսկ երբ ես լսեցի ամպրոպի [պատճառած] տրտում տառապանքը, որ տեղաց Տիրոջ ժողովրդի վրա, սաստիկ սուգ արեցի, և իմ աչքերից ջրի նման արցունք հոսեց։ Ես տեսա, որ հեթանոսները Տիրոջ անից վերացրել են վայելչությունը ու պղծել նրա սրբությունը, և նրա քահանաները հալումաշ են լինում, հառաչում ու հոգոց են հանում։ Եվ հիշելով իմ անջատման տառապանքի օրը, որ իբրև ցանց ձգվել էր իմ սրտին, իմ տկարությունը փոքր-ինչ կազդուրելով ու գոտևորելով՝ ես ելա-գնացի Տարոնի աշխարհը։ Եվ այնտեղ իմ մերձավորների, իշխանների ու ժողովրդի կողմից մխիթարություն գտա իմ վշտերի ու

իմոց՝ արծարծեցաւ յիս հոգի իմ։ Բայց հակառակորդն մեր, որ կոխեաց զսրբութիւն Տեառն՝ դեռևս արձանացեալ նստէր 'ի մայրաքաղաքն Դվին. և մոմռեալ անհնարին դառնութեամբ՝ շրջէր խնդրէր հայցէր, թէ զո՞ կլանիցէ. և ընդ բոլոր ծագս երկրի մերոյ ասպատակ զզօրս իւր սփռէր, ևս առաւել զմիտս իւր, որ էր 'ի ծննդականութեան շարին՝ 'ի թագաւորն Գագիկ քան յայլս ոմանս հնարէր թափել։ Որոյ և իրազգած իսկ լեալ նորա նենգապատիր արբանեկութեանն շարի՝ և տեսեալ զեկեալ հասեալ առ դուրս մերձեալ հէնսն, այնուհետև ապա զգաղթ ընտանեաց իւրայոցն և զկապուտն գանձարանաց, այլ և համագունդ իսկ զամենայն աշխարհակոյտ խառնիճաղանճս տէրութեան իւրոյ 'ի ծործորս ամուր լերանցն Մոկաց և Կորդուաց չուեալ զօղեալ բունեալ թագուցանէր։ Եւ ինքն եղբարբն իւրով և սպասալար գնդիւն վառեալովք՝ արձանացեալ դադարէր 'ի միջերկրեայս, անդ զգուշացեալ յանգայուագիղ գազանէն, 'ի պատրաստի միշտ ունելով զմիտս իւրեանց. ընդ որս էր մեծ իշխանն Սիւնեաց Սմբատ՝ սպասելով յաստուածուստ խաղաղութեանն։ Բայց սպարապետն հայոց Աշոտ դեռևս 'ի մէջ ուղխիցն շարութեան կայր առկայացեալ, և ոչ կարացեալ կարողել զհատուածիլն 'ի Յուսուփայ։ Վասնզի միշտ 'ի վերայ նորա զհայեցուածսն իւրեանց զգուշաբար պահէին 'ի ծածուկ։ Սակայն սպարապետն՝ գերիմաստ արտադրութեամբ ըստ կամս ոստիկանին ամենայն իրօք զկեանս իւր նուաճէր, միայն զփրկութիւն անձինն առ 'ի նմանէն տնօրինեալ հոգայր։ Բայց Աշոտ որդի Սմբատայ, զոր թագաւորեցուցին Վրաց արքայն և զօրք իւր 'ի վերայ Հայաստանեայցս, այսր անդր յամուրս աշխարհի տէրութեան իւրոյ տարուբերէր. բազում մրցմունս և արիական քաջութիւնս ընդդէմ բոլոր թշնամեացն մարտիւ կարգէր՝ ոչ միայն ընդ Սառակինոսացն, այլև ընդ Վրաց և ընդ Գուգարաց, որք ապիրատս զնըմանէ խորհէին։

Իսկ իմ ապա տեսեալ զծփական և զանդուլ հինից արշաւանս՝ մինչդեռ ևս էի 'ի Տարօն գաւառի, գրեցի թուղթ առ Կոստանդին կայսր Հռովմայեցւոց՝ օրինակ զայս.

«Գերաբուն և ինքնակալ կայսր Հռովմայեցւոց՝ օգոստոս Կոստանդիանոս յԱստուածուստ պսակեալ և պերճացեալ մեծ և բարեյաղթ թագաւորք տիեզերաց, աստուածասէրք և բարեպաշտք. 'ի հանդիսի կենացս հասարակաց լուսաւորութեանց վերակացուք և հանուրց եղելոցս ճշմարիտ խաղաղարարք. երկնացեղիկ ինն դասուցն համեմատք և շինութեան հոգևորի առիթք. այսքանեաց և այսպիսեաց ազգաց և ազանց ստուգապէս առաջնորդք՝ աստուածային արդարև արմաւենիք 'ի տան Տեառն տնկեալք։ Ողջոյն ձեզ և խաղաղութիւն և խնդութիւն բազում և

տառապանքների համար, և նորոգվեց իմ հոգին։ Բայց մեր հակառակորդը, որ ոտնակոխ արեց Տիրոջ սրբությունը, դեռևս արձանացած նստում էր Դվին մայրաքաղաքում, և մռնչալով սաստիկ նեղսրտությամբ, շրջում էր, փնտրում, որոնում, թե ո՞ւմ կուլ տա։ Մեր երկրի բոլոր ծայրերում [նա] սփռում էր իր ասպատակող զորքը և առավելապես իր մտքում, որ ի ծնե շար էր, ձգտում էր իր չարությունը ավելի շատ Գագիկ թագավորի, քան մեկ ուրիշի վրա թափել։ Եվ [Գագիկը] տեղեկանալով նրա նենգավոր ծառայությանը և տեսնելով, որ ավազակները եկել հասել են դռներին՝ [առնում է] իր վտարանդի հարազատներին ու գանձարանների ավարը, իր խառնիճաղանջ տերության բոլոր կողմերից հավաքված մարդկանց և հեռանում, գնում է Մոկաց ու Կորդուաց ապահով լեռների ծործորները և պատսպարվում ու թաքնվում այնտեղ։ Եվ ինքը իր եղբայրների ու ազնվական զինված գնդի հետ ամրանում ու դադար է առնում ցամաքի վրա՝ այնտեղ զգուշանալով անգառագեղ [անվանդակ] գազանից և այն միշտ պատրաստ պահելով իրենց մտքում։ Նրանց հետ էր նաև Սյունյաց Սմբատ մեծ իշխանը, որը Աստծու կողմից սպասում էր խաղաղության։ Բայց Հայոց սպարապետ Աշոտը դեռևս մնում էր շար հորձանքի մեջ և չէր կարողանում հնար գտնել զատվելու Յուսուֆից, որովհետև նրանք միշտ թաքուն ու ուշադիր հետևում էին նրան։ Սակայն սպարապետը խելացի վարդապետությամբ ամեն ինչով ենթարկվում էր ոստիկանի կամքին, միայն թե նա ապահովեր իր կյանքի փրկությունը։ Բայց Սմբատի որդի Աշոտը, որին Հայաստանի վրա թագավոր էին կարգել Վրաց թագավորն ու նրա զորքը, անընդհատ տեղափոխվում էր իր տերության այս կամ այն ամրոցը։ Նա բազմաթիվ կռիվներ է մղում ու քաջագործություններ ցուցաբերում բոլոր թշնամիների՝ ոչ միայն սարակինոսների, այլ նաև վրացիների ու գուգարացիների դեմ, որոնք անիրավացիորեն էին դատում նրա մասին։

Տեսնելով ավազակների ալեկոծված ու անդադար արշավանքները՝ ես քանի դեռ Տարոն գավառում էի, հռոմեական Կոստանդին կայսրին գրեցի հետևյալ թուղթը.

«Հռոմեացիների գերաբուն ու ինքնակալ կայսր, օգոստոս Կոստանդիանոս, Աստծու կողմից պսակված ու փառավորված, տիեզերքի մեծ ու բարեհաղթ թագավորներ, աստվածասերներ ու բարեպաշտներ, բոլորի լուսավոր կյանքի վերակացուներ, ընդհանուր արարածներիս ճշմարիտ խաղաղարարներ, երկնային ինը դասերի հետ համեմատվողներ, հոգևոր բարեկարգության բարեխոսներ, այսքան ու այսպիսի ազգերի ու ցեղերի ճշմարիտ առաջնորդներ, Տիրոջ տանը տնկած աստ-

սէր հաստատեսցի յայսմիկ Կաթուղիկէ Եկեղեցւոյ, որ թէպէտև 'ի Թշնամեաց աստի գերեալ և իբրև զանապատ անջրդի խոպանացեալ ըստ նմանութեան մօր անզաւակացաւ յորդւոց, սակայն կայ և մնայ 'ի սէր փառացն Աստուծոյ։ Ողջոյն ևս յինէն 'ի Յովհաննիսէ Հայոց Մեծաց Նուաստ կաթողիկոսէ. շնորհք խաղաղութիւն բազմասցի ըստ Աստուծոյ Հօր և Տեառն Յիսուսի Քրիստոսի։

«Այլ և որ ընդ իս իսկ եպիսկոպոսունք և բովանդակ ուխտք սրբոյ եկեղեցւոյ, որք և գանեալք իսկ և հարուածեալք և շարշարեալք և հալածեալք եղեալք 'ի մահառիթ և 'ի նենգաւոր շնչոյն Ամաղեկայ, որ բղխեացն զմարդախանձ չարին զչար մախանսն և ըստ վայրենի մոլորութեան իւրոյ տեղեաց 'ի մեզ զամպրոպ դառնութեան և զսրամտութիւն բարկութեան վրիժուց անհնարից. սակայն մեք կալցուք յանձինս մեր զշնորհս ուրախութեան և սիրոյ Տեառն, և ըստ որում աղաչէրն Պողոս՝ նախ քան զամենայն արասցուք աղօթս մշտնջենամոռունչս և պաղատանս աղերսալիս և խնդրուածս հաշտարարս և գոհութիւնս արժանընկալս յաղագս անյաղթ և ինքնակալ և աստուածապսակեալ թագաւորացդ՝ կեալ ձեզ յամայր ամս ըստ պտղոյ արդարութեան կենաց և ճշմարիտ խաղաղութեան երկնաւոր թագաւորին, և ըստ վայելուչ և գեղեցիկ տիեզերաբնակ բնակութեան պալատանդ կայսերականի։ Զի պատրաստաբար և հանդարտաբար եղիցի գնալ ձեզ 'ի խորհուրդս կենսակիրս և աստուածամերձս, և ամենայն աստուածպաշտութեամբ և նազելի սրբամտութեամբ և ստոյգ ուրախութեամբ և մեծաւ խնդութեամբ ծաղկաւէտեալ ձեզ զկէտ հանդիսի աստուածավայելուչ հանգստեան ձերոյ. ըստ որում և ընկալայք իսկ պարգև 'ի բարեսիրութենէ այտի ձերմէ ըստ արժանի քաջնափայլ պերճութեան և առաքինաղօր կրօնից ձերոց, որով հաւատացեալդ իսկ էք և սիրուն, և սրազինեալ ևս ընդ ուս 'ի հատուցումն վրիժուց ամբարշտաց։ Աստուծոյ սպասաւո՛ր և մեզ 'ի բարիս բարեացապա՛րտ և ինքնակալ քրիստոսապսակեալ կայսր Հռովմայեցւոց. զոր այժմս համարձակեալ հարկեցայ անցանել հրաշափառապէս պատմութեամբ ընդ արկածս նեղութեանս, որ հասին մեզ յաղագս մերոց տարակուսելոցս է, վասն որոյ և խօսիմք իսկ. խորհուրդ խօսողացս 'ի ձեզ հային յուսով խնդութեան, և այն ևս մեղմով և հեզիկ որպէս և ուսաք իսկ. «Եթէ մի՛ ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա». վասնզի աստուածամերձ լսելիք ձեր ոչ ձայնի կարօտանան առ 'ի զգալ՝ քան թէ երկնային իմաստութեանն 'ի ձեզ տպանելոյ 'ի շարժմանէ նորին ճանաչել զհայցեալն։

«Եւ արդ՝ շնորհ ունիմ այնմիկ, որ պատրաստեալ զօրացոյցն զոգոստական և զինքնակալ թագաւորդ յապաւինութիւն մեզ. վասն որոյ

վածային ճշմարիտ արմավենիներ, ձեզ ողջույն, խաղաղություն և մեծ խնդություն, և թո՛ղ սեր հաստատվի այս կաթողիկե եկեղեցու կողմից, որը թեև գերվեց թշնամիների կողմից և որպես խոպանացած անջրդի անապատ մոր նման զրկվեց որդիներից, սակայն կա և մնում է ի սեր Աստծու փառքի։ Նաև ողջույն իմ՝ Մեծ Հայքի նվաստ կաթողիկոս Հովհաննեսիս կողմից։ Թող շնորհն ու խաղաղությունը բազմանան Հայր Աստծու և Տեր Հիսուս Քրիստոսի կամքով։

Նաև ինձ հետ եղող եպիսկոպոսներն ու սուրբ եկեղեցու ամբողջ միաբանները, որոնք ծեծվել են, պատժվել, չարչարվել ու հալածվել Ամաղեկի[100] մահառիթ ու նենգ շնչից, [նա՝ Ամաղեկը] առաջ բերեց մարդակեր ու չար նախանձը և իր վայրենի կատաղությամբ մեզ վրա տեղաց դաժան ամպրոպ, վրեժի սաստիկ բարկությունն ու ցասումը։ Մենք, սակայն, մեր մեջ պահեցինք Տիրոջ ուրախության շնորհն ու սերը, և ինչպես որ աղաչում էր Պողոսը, ամենից առաջ կատարեցինք մշտամոռունչ աղոթք, աղերսալի պաղատանք, հաշտարար խնդրանք և հաճելի գոհություն անհաղթ, ինքնակալ ու Աստծու կողմից պսակված թագավորներիդ համար։ Դուք ապրեք երկար տարիներ կյանքի արդար պտղով և երկնային թագավորի ճշմարիտ խաղաղությամբ վայելուչ ու գեղեցիկ կայսերական պալատիդ բոլոր մարդկանց հետ միասին։ Դուք պատրաստ ու խաղաղ կերպով գնացեք դեպի ձեր կենսակիր ու աստվածամերձ խորհուրդը, և թող ամենայն աստվածապաշտությամբ, պանծալի անարատությամբ, ճշմարիտ ուրախությամբ ու մեծ խնդությամբ ծաղկի ձեր աստվածավայելուչ հանգստյան նպատակը։ Ըստ որում ձեր այդ բարեսիրությունից պարգև ընդունեցեք՝ ըստ ձեր արժանի ու փառավոր պերճության ու առաքինի կրոնի, որով հավատում եք նաև սիրուն և ուսերիդ վրա էլ կրում եք սուր զենք՝ ամբարիշտներից վրեժ հատուցելու համար։ Աստծու սպասավոր, մեզ համար բարիք կատարող և ինքնակալ աստվածապսակ հռոմեական կայսր, այժմ համարձակվելով ստիպված եղա հրաշալի կերպով պատմելով անցնել նեղությունների պատահարների վրայով, որոնք հասան մեզ մեր տարակուսանքի պատճառով, որի մասին էլ մենք խոսում ենք։ Խոսողներիս միտքը ձեզ է նայում ուրախության հույսով, և այն էլ կամաց ու հեզ, ինչպես որ սովորեցինք. «Թե դրսում թո՛ղ ոչ մեկը լսի նրա ձայնը»[101], քանի որ ձեր աստվածամերձ ականջները զգալու համար ձայնի կարիք չունեն, քան թե նույն շարժումից ձեզանում երկնային իմաստության տպավորվելուց ճանաչելու հայցվածին։

Եվ արդ՝ շնորհ ունիմ այն բանի համար, որ պատրաստելով զորացրեց օգոստոսական ու ինքնակալ թագավորներիդ որպես ապավի-

և զգացուցանեմ զհայթայթանս համբաւոյ նեղութեանս մերոյ 'ի ներող
լսելութիւնդ բարեպաշտացդ։ Վասնզի յամենայն զօրութենէ իւրմէ յու-
զեցաւ 'ի վերայ մեր մախանք գաղտնականք թշնամւոյն ճշմարտութեան.
և իբրև զսեղեխ շարավաշ տոփանօք յանդգնեալ յարձակեցաւ յանա-
րատ առագաստ հարսին եկեղեցւոց առ 'ի յապականել զժառանգութիւն
Տեառն և պղծել զտաճար սուրբ նորա, այլև յարագել 'ի կոխումն և 'ի
կործանումն և յընկճումն և 'ի կորուստ ժողովրդեան Տեառն, և ծասքե-
լով ուտել զնորս Իսրայէլ և աւերել զտեղի փառաց անուան նորա։ Եւ
քանզի յայտնի էր ամենայն ազգաց պահպանական պարիսպ ամրութեան
երկիւղի ձերոյ ընդդէմ թշնամեաց՝ և 'ի հովանի թևոց ինքնակալացդ
պատրաստարնակութեամբ կայաք որպէս 'ի վայելուչ քաղաքի, յայն-
ժամ ապա և առագաստ հարսին եկեղեցւոյ ոչ աղտեղացաւ 'ի բնա-
կողէն Կեդարու, որ ատեացն իսկ զողջոյն սրբութեան. և բռնութիւն
մարտակցին Բելիարայ զխաղաղարար փեսայն ոչ կարաց հեռացու-
ցանել։ Իսկ իբրև անփոյթ գտաք 'ի ջատագով լինել ձեր և զանխուլ եղև
թոյնք դարանակալ օձին Դանայ յիրաւադատ մեծութենէդ և ոչ խնդրե-
ցաւ պարտապանութիւն վրիժուց շարախօսին մերոյ. դարձեալ միսան-
գամ սկսաւ անիծեալն տարապարտ սողել զեռալ սպրդել՝ զանձն 'ի
ներքս արկանել 'ի հոգևոր ցանկապատ յայգեստանս Տեառն զօրու-
թեանց. և հուրն, որ երբեմն արհամարհեցաւն և շիջաւ՝ սկսաւ վերստին
արծարծել և բոցակէզ հրդեհս մեծամեծս գործել։ Եւ դրժողք խարդախ
գտան Քրիստոնէական հաւատոցս որ 'ի Քրիստոս, և յարուցեալ հա-
լածանս ընդդէմ եկեղեցւոյ սրբոյ՝ արարին իբրև զխուղս մրգապահաց,
և իբրև զանտառս փայտից փայտատով կոտորեցին զդրունս նորա և
այրեցին 'ի հուր զսրբութիւն Տեառն, և պղծեցին յերկրի զխորան ա-
նուան նորա, և զենին զենումն անօրէնութեան, և զոհեցին զոհս պղծ-
ութեան 'ի յարկս արդարոց, և արհամարհեցին զյուսացեալս 'ի Տէր
Աստուած. և 'ի կերակուր գաղանաց և 'ի գէշս թռչնոց երկնից արկին
զդիակունս մարմնոց սրբոց Բարձրելոյն, և տարապարտ արիւնք կղերց
եկեղեցւոյ իբրև զջուր հեղան շուրջ զԵրուսաղէմաւ։ Այլ և զքաջութիւնս
պատերազմող ձեռաց լքուցեալ սպանմամբ մեծաւ և արեամբ թօթա-
փեցին. և զնախարարութիւնս Թորգոմեանս ազգի, զքաղաքականս և
զգեղջուկս առհասարակ վարատեալ վտարեցին դառն տաժանմամբ։ Զո-
մանս մատնեալ 'ի բանտ և 'ի շղթայս և յանտանելի մեռաղս շարչա-
րանաց. իսկ զոմանս ծախեալ ծարաւի սրով. և զայլս շարաշուք դրժո-
ղութեամբ գերեալս վաճառակուր լինել. և մնացեալքն 'ի շար արբա-

նութիւն մեզ։ Այդ նպատակով էլ մեր նեղության լուրը հասցնում եմ
ձեր՝ բարեպաշտներիդ ներող լսողությանը։ Քանի որ իր ողջ զորու-
թյամբ մեզ հուզեց իրական թշնամու գաղտնի նախանձը։ Եվ իբրև ա-
նառակ խիստ գարշելի տոփանքով հանդգնելով հարձակվեց եկեղեցու
հարսի անարատ առագաստի վրա՝ Տիրոջ ժառանգությունը ապականե-
լու և նրա սուրբ տաճարը պղծելու, ինչպես նաև Տիրոջ ժողովրդին ոտ-
նատակ տալը արագացնելու, նրան կործանելու, ընկճելու, կորստի
մատնելու համար Իսրայելը նորորեն ծամելով ուտում է ու ավերում
նրա անվան փառքի տեղը։ Եվ քանի որ բոլոր ժողովուրդներին հայտնի
էր ձեր՝ երկյուղը պահպանող ամուր պարիսպը ընդդեմ թշնամիների,
և բնակվելով ապահով կերպով, մենք մնացինք ձեր՝ ինքնակալներիդ
թևերի հովանու տակ, ինչպես բարեկարգ քաղաքում։ Այն ժամանակ
եկեղեցու հարսի առագաստն էլ չապականվեց Կեդարի բնակչի կողմից,
որն ատեց սուրբ ողջույնը։ Եվ Բելիարի[102] մարտակցի բռնությունը չկա-
րողացավ հեռացնել խաղաղարար փեսային։ Իսկ երբ անփույթ գտնը-
վեցինք պաշտպանելու ձեզ, քո իրավադատ մեծությունից անհայտ մը-
նաց Դանա դարանակալ օձի թույնը, և վրիժառությունն չպահանջվեց
մեր շարախոսից։ Մյուս անգամ անիծյալը դարձյալ սկսեց սողալ, վրխ-
տալ, ներս խցկվել և զորությունների Տիրոջ հոգևոր այգեստանների
ցանկապատից իրեն ներս գցել։ Եվ այն հուրը, որ երբեմն արհամարհ-
վեց ու հանգավ, վերստին սկսեց վառվել և մեծամեծ ու բոցակեզ հրդ-
եհներ առաջացնել։ Գտնվեցին Քրիստոսին ու քրիստոնեական հավա-
տը դրժողներն ու խարեբաները, որոնք հալածանք հարուցելով սուրբ
եկեղեցու դեմ՝ այն դարձրին իբրև մրգապահների խուց և կացնով իբրև
անտառի փայտը ջարդեցին նրա դռները ու այրեցին Տիրոջ սրբությու-
նը, պղծեցին նրա անվամբ երկրում եղած տաճարը։ Նրանք անօրեն
զոհ մատուցեցին, արդարների հարկի տակ պիղծ զոհեր արեցին, ար-
համարհեցին Տեր Աստծու վրա հույս դնողներին. բարձրյալի սրբերի
մարմինների դիակները գցեցին որպես կերակուր՝ գազաններին, ու լե-
շեր՝ երկնային թռչուններին, և եկեղեցու կղերականների արյունը իբրև
ջուր անտեղի թափեցին Երուսաղեմի շուրջը։ Բացի դրանցից, կռվող
քաջ ձեռքերը, մեծ սպանությունների ու արյան պատճառով թուլանա-
լով, սասանվեցին։ Թորգոմյան ազգի նախարարներին, քաղաքացիներ-
ին, գեղջուկներին դառն տառապանքով առհասարակ քշեցին ու ցը-
րեցին։ Ոմանց շղթայակապ գցեցին բանտ կամ աքսոր՝ [ենթարկելով]
անտանելի չարչարանքների, իսկ ոմանց սպանեցին դաժան սրով, ո-
մանց էլ չարաչար խարդախությամբ գերի վերցնելով՝ վաճառում էին։
Իսկ մնացածները՝ մեծամեծներն ու փոքրերը չարերի դաժան ծառայու-

նեկութենէ շարացն մեծամեծք և փոքունք ցանեցիր ցնդմամբ սփռեալք
ընդ երեսս երկրի՝ ղօղեալք և թագուցեալք 'ի լերինս յայրս և 'ի փա-
պարս մերկութեամբ և սովով և սասանութեամբ դողմամբ ահի, և դառ-
նաշխատ քրտնմամբք յերկունս մահու վտանգեալք՝ և իբրև զիոռի ինչ
'ի հողմոյ տարաբերեալք դանդաչեն իբրև զկիսամեռ 'ի վտանգէ նեղու-
թեանց։ Եւ յայսմ ամենայնի ձեռն Ամաղեկայ ոչ վաստակեցաւ զբազ-
մախողխող երկաթն արեամբ արբուցանել, զի 'ի նենգաւոր շնչոյն իւ-
րոյ մահ բղխէ յամենեսին։ Զոմանս կորստական և մահացու դեղոց
արբուցմամբ 'ի ծածուկ խարդաւանէ. իսկ զոմանս հրկիզութեամբ առ-
կայթեալ մաշէ. և զայլս հեղձամղձուկ սատակմամբ վճարէ. և զոմանս
սրախողխող դառնութեամբ տապաստ արկեալ՝ մինչև 'ի սպանելոց ան-
տի լցեալ եղեն հիմունք երկրի մերում։ Զի՞նչ բան ապա աստ յառաջ
բերից յաղագս Սմբատայ Բագրատունւոյ և բոլորից արևելեայցս գըլ-
խաւորի, որ հոգևորապէս արժանացաւ անուանիլ 'ի ձէնջ որդի ձեզ ծա-
ռայն ձեր. զի առ բարեգործն այն և խնամակալն եկեղեցւոյ ևս շարա-
հատոյց քան առ ամենեսեանն գտաւ շար թշնամին։ Վասնզի ըստ մե-
ղաց մերոց մատնեցաւ խնամածուն այն հօտին Քրիստոսի 'ի մետաղս
անզգամին և անբարշտի. և վտանգեալ տագնապեաց շարաշար շար-
շարանօք զնա, որ 'ի ծերութիւն պարարտութեան հոգևոր խաղաղացու-
ցեալ էր զԱսքանազեան ազգս յամենայն վրդովմանց շարի 'ի սադ-
րելոյ ինքնակալ թագաւորացդ, և ժողովեալ զբանաւոր հօտս Քրիստոսի
'ի փառս և 'ի գովեստ Աստուծոյ։ Զի յարգելանս բանտից և 'ի խաւա-
րային տեղիս և 'ի վիհս անհնարինս և յանձուկ վայրս և յաղէտս շա-
րաշարս տագնապեալ տառապեցոյց զծերութիւն նորա։ Յետ որոյ ապա
և դառն կոչ կոճմամբ և փութամահ տանջանօք մատնեաց զնա 'ի սպա-
ռումն սրոյն ծարաւոյ։ Եւ առհասարակ մեք զրկեալք մնացաք 'ի խնա-
մոց հաւատարիմ ծառային ձերոյ։ Եւ ահա այժմ մարաք 'ի ներքուստ
և արհաւիրք 'ի վերուստ տագնապէ զմեզ. և խորհրդական որդիացեալն
ձեր չէ 'ի միջի որ խրատէրն և յարդարէրն 'ի մարտս զամենայն ձեռն
պատերազմողաց։ Սեղեկիայ 'ի գերութիւն վարեցաւ՝ և Զօրաբաբէլ ոչ
ուրեք է, որ նորոգէ զպետութիւն զդրդեալ աշխարհիս Հայոց։ Ազայէլ
հրաւիրեալ է 'ի կոտորել զիսրայէլ, և պատերազմ զմեզ շուրջ պատեալ
և պաշարեալ. Մակաբէ խարդաւանեալ 'ի դահճաց շարագունից՝ ոչ զօ-
րէ փրկել զմեզ 'ի վտանգէ նեղչացս։ Անտիոքոս բռնադատէ թողուլ
զՔրիստոնէական օրէնս կարգաց մերոց. և Մատաթիէաս չէ կենդանի, որ

թյան պատճառով ցանուցիր սփռվելով ու տարածվելով երկրի վրա,
ահ ու դողով, սասանմամբ և մերկ ու սոված պահվեցին ու թաքնվեցին
լեռներում, քարայրներում, ճեղքերում՝ խիստ ծանր աշխատանքի պատ-
ճառով նեղվելով մահվան երկունքի մեջ, և իբրև ծառերի խռիվ ճյուղեր
հողմից տարուբերվելով՝ երերում են կիսամեռ մարդկանց նման՝ ըն-
կած նեղության ու վտանգի մեջ։ Եվ այս ամեն ինչի մեջ Ամաղեկի
ձեռքը չհոգնեց բազմախողխող սուրը արյամբ հարբեցնելուց, որով-
հետև նրա չարագործ շնչից մահ է բխում բոլորի վրա։ [Հակառակորդը]
ոմանց կորստյան է մատնում ու սպանում թաքուն՝ մահացու թույն
խմեցնելով, իսկ ոմանց էլ այրում ու խորովում է, ոմանց խեղդամահ
է անում, ոմանց էլ դաժանությամբ սրախողխող անելով՝ տապալում
է գետնին, այնպես որ այդ սպանվածներով լցվում են մեր երկրի փո-
սերը։ Այստեղ ի՞նչ խոսք մեջ բերեմ բոլոր արևելքցիներիս գլխավորի՝
Սմբատ Բագրատունու մասին, որը ձեր ծառան, ձեր կողմից հոգևորա-
պես արժանացավ ձեր որդին անվանվելու, որովհետև շար թշնամին
ավելի ապերախտ գտնվեց եկեղեցու այդ բարեգործի ու խնամակալի,
քան մյուս բոլորի նկատմամբ։ Քանի որ Քրիստոսի հոտի այն խնա-
մատարը մեր մեղքերի պատճառով այդ անզգամի ու ամբարիշտի
կողմից քշվեց աքսոր։ Եվ նա նեղելով տանջեց նրան դաժան շարշա-
րանքներով, որն իր բարեբեր ծերության ժամանակ խաղաղեցրել էր
Ասքանազյան ազգերին՝ ձեր ինքնակալ թագավորների բոլոր շար խռո-
վություններից և Քրիստոսի բանական հոտերին հավաքել էր Աստծու
փառքի ու գովքի համար։ Եվ այդ ծեր մարդուն նա տանջեց ու շար-
չարեց բանտերում, զնդաններում, խոր վիհերում, անձուկ վայրերում
շարաշար նեղության մեջ։ Այդքանից հետո դաժանորեն ատամները
կրճատացնելով ու փութամահ տանջանքներով նրան մատնեց մահա-
փափագ սրին։ Եվ մենք առհասարակ զրկվեցինք ձեր հավատարիմ ծա-
ռայի խնամքից։ Եվ ահա այժմ կռիվները ներքուստ և արհավիրքները՝
'ի վերուստ տանջում են մեզ։ Եվ խորհրդավոր կերպով ձեզ որդի դար-
ձածը չկա, որ խրատեր ու կարգավորեր բոլոր պատերազմողներին։
Սեղեկիան[103] գերության տարվեց, և Զորաբաբելը[104] որևէ տեղ չէ, որ
նորոգի Հայոց աշխարհի սասանված պետությունը։ Ազայելը[105] հրավիր-
ված է կոտորելու Իսրայելին, և պատերազմը պատել ու պաշարել է
մեզ։ Մակաբեն[106], խաբվելով չարագույն դահիճներից, ի զորու չէ փեր-
կելու մեզ նեղողների վտանգից։ Անտիոքոսը [մեզ] ստիպում է թող-
նել մեր քրիստոնեական կրոնը, և Մատաթեասն էլ կենդանի չէ, որ

ընդդիմակուէ ընդդէմ շարամարտ բռնաւորին*)։ Եւ այսպէս եկեղեցի Քրիստոսի խոպանացեալ եղև և իբր այրութեամբ իմն անխնամ և անհոգացող մնացեալ և լռեալ 'ի տօնից տարեկանաց. և հօտք Քրիստոսի միանգամայն իսկ զրկեալք 'ի հայրենի օժանդակէն և 'ի սեպհական վերակացուէն։ Եւ եղկելիք և աշխարելիք մնացեալք աշխարհս արևելեան միշտ շարժմամբ հեծէ, և աշխարանս ողբերգականս արտասուաց բերէ զյաւէտախաղաց արկածս շարիս այսմիկ հասելոյ կալելոյ զմեզ և զգայութիւն դառն կտտանացս։ Զի՞նչ ապա զիմ նուաստագունի Յովհաննու նեղութիւնս բերից 'ի համար, զի ոչ իսկ համարիմ զանձն արժանի արդարոցն լինել շարշարակից. սակայն որ ըստ մեղաց իմոց սաստկացաւ 'ի վերայ իմ վտարանդումն և նեղութիւն և փրկութիւն 'ի փորձութեանցն՝ որ կամաւ զիս առաջի եդի՝ հարկ առնեն այսոքիկ ըստ Պողոսի պարծել զտկարութեանն, զի ժուժկալութեամբ ոմանք ընկալեալք զվտանգաւորսն՝ բազում տառապանօք տագնապեցայ 'ի ձեռաց որդւոցն Հագարու խաւարային բանտիւ և ընկեցիկ լինելով 'ի գուբ տրղմոյ, և կապեալ երկաթի շղթայիւք և գելանիւ և գանիւ և այլ ևս պէսպէս հնարիմացութեամբք, որ բաւական էր քաղել հանել զշունչ իմ յինէն։ Այլ թէպէտև այր մի տառապեալ եմ ես, սակայն յոյսն մեր Քրիստոս, որ զօրութեամբ ճանաչի և ոչ տեսլեամբ պատմի՝ ապրեցոյց զիս 'ի մարմնոյ աստի մահու և դարձոյց զգերութիւն իմ և որք ընդ իսն են՝ որպէս զուղիս 'ի հարաւոյ. և արտաքս կորզեալ ենան 'ի ժանեաց վիշապին, և ընդ Եղիայի փախստեայ եղէ 'ի Սարեփթայ Սիդոնեան 'ի մարգարէազարուն Յեզաբէլէ. և ընդ Պողոսի վանդակաւ կախեցայ ընդ պատուար պարսպին Դամասկեայ և փախեայ յազգապետէ Արետացւոյն։ Եւ կրեալ զայս ամենայն ըստ արժանի իմում՝ և ըստ տէրունեանն հրամանի հալածեալ 'ի քաղաքէ 'ի քաղաք, ահա հասեալ կամ առ դրունս հզօրագունիցդ և 'ի վեհագունից ինքնակալ թագաւորացդ, 'ի հեռաստանէ աստի խնդրել ողորմութիւն 'ի բարեպաշտիկ և 'ի ներողամիտ

* Բայց անհոգող դու այրութեամբդ, և եղկելիք մեք, որ զրկեցաք 'ի հայրենի վերակացութենէն... այլ և Ազայէլ հրաւիրեցաւ 'ի կոտորել զԻսրայէլ։ 'Ի գերութիւն վարեցաւ Սեղեկիայ, և Զորաբաբէլ ոչ ուրեք է, որ նորոգէ զպետութիւնն։ Անտիոքոս բռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիայ ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ շուրջ պատեաց և Մակաբէ ոչ փրկէ։ Այժմ մարտք 'ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ. արհաւիրք 'ի հեթանոսաց և մարտք 'ի հերձուածողաց, և խորհրդականն չէ 'ի միջի, որ խրատէր և յարմարէր 'ի պատերազմս» (Մովս. Խորեն. Պատ. գիրք. գ. գլ. կը։)

ընդդիմանա շարաշար կռվող բռնակալին*։ Եվ այսպես Քրիստոսի եկեղեցին անպիտանացավ՝ այրու նման մնալով անխնամ ու անմշակ և դադարելով տարեկան տոներից։ Եվ Քրիստոսի հոտերը միանգամից զրկվեցին հայրական ձեռքից ու սեփական վերակացուից։ Թշվառ ու ողբալի մնացած արևելյան աշխարհը միշտ հուզվում ու հառաչում է, և այս անօրենը մեզ պատճառում է ողբերգական արտասուքների վայ-նասուն, անհատնում փորձանքներ, դառն կտտանքների զգացում, որոնք հասնում ու պատում են մեզ։ Ինչպե՞ս համեմատեմ նվաստիս՝ Հովհաննեսիս, նեղությունը, որովհետև ես ինձ արժանի չեմ համարում արդարների հետ շարշարակից լինել։ Սակայն քանի որ իմ մեղքերի համեմատ խստացան իմ պանդխտությունը, նեղությունը, փորձանքներից փրկվելը, որ կամավոր ինձ վտանգի մեջ դրեցի, դրանք, ըստ Պողոսի, ստիպում են պարծենալ տկարության համար, որովհետև ոմանք համբերությամբ ընդունեցին վտանգավորներին, իսկ ես մեծ տառապանքով տանջվեցի Հագարի որդիների ձեռքից՝ խավար բանտով, տրղմոտ փոս գցվելով և կապվելով երկաթյա շղթաներով, գելարանով, ծեծվելով ու այլևայլ խարդախ միջոցներով, որոնք բավական էին իմ միջից քաշելու-հանելու իմ շունչը։ Բայց թեպետև ես մի տառապած մարդ եմ, սակայն մեր հույսը՝ Քրիստոսը, որին մտքով կարելի է ճանաչել և ոչ թե տեսնելով ու նրա մասին պատմելով, ինձ փրկել տվեց մարմնական այս մահից և գերությունից վերադարձրեց ինձ ու ինձ հետ եղողներին, որպես հարավից [եկող] հորձանքը։ Եվ նա ինձ դուրս քաշելով՝ հանեց վիշապի ժանիքներից։ Եվ մարգարեներին սպանող Հեզաբելից ես Եղիայի հետ փախա Սիդոնյան Սարեփթ։ Պողոսի հետ ցանցով կախվեցի Դամասկոսի պարսպի պատից և փախա Արետացի ազգապետից։ Եվ այս ամենը կրելով իմ արժանիքների համապատասխան և տերունական հրամանով հալածվելով քաղաքից քաղաք, ահա հասել եմ ձեր՝ հզորագույն ու վեհագույն ինքնակալ թագավորներիդ դռների առաջ. հեռաստանից [եկել եմ] այստեղ՝ ձեր բարեպաշտ ու

* Բայց դու ես, որ այրությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, և մենք ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից... այլ դու Ազայելն էլ հրավիրվեց Իսրայելին կոտորելու։ Սեղեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբաբելը, որ տերությունը նորոգի։ Անտիոքոսը բռնադատում է թողնել հայրենի կրոնը, բայց Մատաթիան չի դիմադրում. պատերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում։ Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք. արհավիրքը հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Գ, գլ. ԿԸ)։

խնամածութենէդ ձերմէ՝ ոչ միայն ինձ, այլ և բոլոր Ասքանազեանս գրոհի. շահել ձեզ զորդիս սպանելոց ծառայիցն ձերոց, որք առհասարակ արբաք զբաժակն բարկութեան 'ի հարաւային բռնութենէն. արբաք և քամեցաք զմրուր սրտմտութեան և զբաժակ խռովութեան 'ի թշուառացուցչացն մերոց։ Եւ աղաչեմ զսոյն, զի իմաստութեամբ և բարութեամբ շնչոյ ձերոյ համբարձջիք զձեռս ձեր 'ի վերայ ամբարտաւանութեան թշնամւոյն մինչև խպար և փրկեսջիք զվիճակ ժառանգութեան ձերոյ և լցուցանիջիք սփիւռ ծախիւք զտաճար մեծվայելչութեան Աստուծոյ բարձրելոյ, որ գերեալ և կապուտ կողոպուտ մնաց յապստամբաց աստի։ Եւ հալածեալ զգազանս շարաշարս և զգայլս յափշտակողս և զհեթանոսս ապստամբս և զբարբարոսս վայրենիս՝ նուաճեսջիք զկողմանս զայսոսիկ, զոր ստացայք 'ի սկզբանէ 'ի ձեռն քաղցր օրինաց ձերոց, որ լի է ողորմութեամբ։ Եւ թօթափեսջիք զմեզ 'ի հողոյ աստի. յոր և մածան մէջք մեր, և լուծէք զլուծ 'ի պարանոցէ մերմէ, որ 'ի ձեռն բռնակալիս այսմիկ ծանրացաւ մինչև 'ի մահ. և սրբեսջիք զայս աշխարհ և զքաղաք, որ 'ի հակառակութիւն և 'ի նախանձ արկաւ 'ի պղծոց և 'ի կորուսելոց և 'ի շարաշար իշխանաց ատելեաց Աստուծոյ. և ըստ մարգարէականին ժառանգեսջիք զերանութիւնսն, հատուցանելով դատերն Բաբիլացւոց թշուառականին՝ զորս և նա մեզն հատոյց։ Վասնզի և ըստ սմին իսկ պատճառի ընտրեաց իւր Աստուած զանձինս բարեյաղթ թագաւորացդ, զի որք սիրենն զԱստուած 'ի ձեռն բարեբարութեան կամաց ձերոց խաղաղութիւն տացի նոցա, և խաղաղաւէտ կենդանութեամբ զպարտական ծառայութիւն հատուսցեն ինքնակալացդ, և խաղաղութեամբ ժամանեսցեն առ Աստուած։ Եւ այսոքիկ վասն հասարակ բանաւոր հօտի հաւատացելոյ ինձ 'ի Տեառնէ մաղթանք աղերսանաց առաջի ձեր եղաւ. իսկ անձին առանձին այս ինչ է, զոր առ քրիստոսապսակեալ և բարեյաղթ թագաւորսդ ունիմ ասել. նեղութիւն և անձկութիւն և հալածանք և շարշարանք և սով և սուր և գերութիւն և հարաւային բռնութիւն տանջեալ տագնապեաց զծերութիւնս իմ։ Արդ՝ 'ի գետս Բաբիլացւոց նստեալ տոչորիմ բազում արտասուօք, յորժամ յիշեմ զգերութիւն Սիոնի. և 'ի խնամս ողորմած և ինքնակալ Կայսերդ ապաստանեալ հասեալ կամ առ ոտս ձեր հայցեմ. ոչ զոր ոչ լեալ նախ քան զայս բնակութիւն և կանայք աթոռակալացն սրբոց, որ յառաջ քան զիսն էին, այլ զոր 'ի սկզբան հաւատոյս 'ի հովանի թեռց 'ի նախնեաց ձերոց ունէին զբնակութիւնս և յապահովացեալք 'ի զօրութենէ տէրութեան սուրբ խաչիդ և 'ի նախախնամող ողորմութենէ անյաղթ թագաւորացդ՝ արածէին անվեհեր փութով զհաւատացեալ հօտն յիւրաքանչիւրումն ժամանակի անզբաղապէս սրտիւ և աներկեանն

ներողամիտ խնամածությունից ողորմություն խնդրելու ոչ միայն ինձ, այլ ամբողջ Ասքանազյան ազգի համար։ Դուք կարող եք օգուտ տալ ձեր սպանված ծառաների որդիներին՝ մեզ, որ առհասարակ խմեցինք բարկության բաժակը հարավային բռնությունից։ Խմեցինք ու քամեցինք սրտմտության մրուրը և մեզ թշվառացնողների խռովության բաժակը։ Ես աղաչում եմ, որ դուք ձեր հոգու իմաստությամբ ու բարությամբ ձեր ձեռքերը բարձրացնեք ամբարտավան թշնամու վրա, մինչև որ ամբողջությամբ փրկեք ձեր ժառանգության բաժինը և շատ ծախսեր կատարելով՝ լրացնեք մեծավայելուչ տաճարը, որ գերվեց ու կողոպտվեց այդ ապստամբների կողմից։ Եվ հալածելով շարաշար գազաններին, հափշտակող գայլերին, հեթանոս ապստամբներին ու վայրենի բարբարոսներին՝ դուք կտիրեք այս կողմերին, որ ի սկզբանե ստացել էիք ձեր քաղցր կրոնի շնորհիվ, որը լի է ողորմությամբ։ Եվ մեզ կհեռացնեք այս հողից, որին կպան մեր մեջքերը, մեր պարանոցից կարձակեք այն լուծը, որ բռնակալի ձեռքով ծանրացավ մեզ վրա մինչև մահ։ Կմաքրեք այս աշխարհն ու քաղաքը, ուր հակառակություն ու նախանձ ընկավ Աստծուն ատելի, կործանող, պիղծ մարդկանց ու դաժան իշխանների կողմից։ Ըստ մարգարեության կժառանգեք երանությունը՝ հատուցելով բաբելացիների թշվառ դատերը, ինչը նա մեզ հատուցեց։ Քանի որ այս պատճառով Աստված ընտրեց ձեզ՝ մեծահաղթ թագավորներիդ, որովհետև ովքեր սիրում են Աստծուն, ձեր բարերար կամքով նա նրանց խաղաղություն կտա. նրանք հանդարտ կյանքով ձեզ՝ ինքնակալներիդ, պատրաստական ծառայություն կհատուցեն և խաղաղությամբ կժամանեն առ Աստված։ Եվ այս աղերսանքի մաղթանքները Տիրոջ կողմից դրվեցին ձեր առաջ՝ ինձ հավատացող հասարակ բանավոր հոտի համար։ Իսկ ես այստեղ առանձին բան ունեմ ասելու ձեզ՝ քրիստոսապսակ ու մեծահաղթ թագավորներիդ. նեղությունը, տառապանքը, հալածանքը, շարշարանքը, սովը, սուրը, գերությունը և հարավային բռնությունը տանջեցին ու շարշարեցին ինձ՝ ծերունուս։ Արդ՝ բաբելացիների գետում նստած տոչորվում եմ շատ արտասուք թափելով, երբ հիշում եմ Սիոնի գերությունը։ Ապավինելով ձեր՝ ողորմած ու ինքնակալ կայսերդ խնամքին, ես հասել եմ ձեր ոտքը և աղաչում եմ։ Նախքան այս չեն եղել բնակավայրերն ու օթևանը այն աթոռակալների, որոնք եղել են ինձնից առաջ և հավատքի սկզբում ձեր նախնիների թևերի հովանու տակ են գտնվել, սուրբ խաչիդ տերության զորությամբ, անհաղթ թագավորներիդ նախախնամող ողորմությամբ ու անվեհեր փութով առաջնորդում էին հավատացյալ հոտին՝ յուրաքանչյուրը իր ժամանակ հանգիստ սրտով ու հաստատուն հավատով, որը

հաւատով. զոր և ես ինքն զնոյն հայցեմ՝ բարեխօս ունելով զկենսատու խաչդ փրկական։ Մի՛ զրկեր զիս և որ ընդ իսս են յերկրպագութենէ աստուածընկալ նշանիդ և հանդիպման աստուածակարդ թագաւորացդ։ Եւ անձուկ յոյժ ունիմ 'ի բազում ամաց գալ առ ձեզ, թէպէտև արգելայ մինչև ցայժմ։ Այլև զկայանս հանգստեան կենաց խաղաղականաց ընձեռել իմոցս ըստ օգոստական պերճ և պանծալի հզօր թագաւորութեանդ, զի թերևս յԻսմայէլականաց աստի արտաքս զերծեալ և 'ի հովանի թևոց ձերոց ամրացեալ և առկայացեալ՝ արածեսցուք որ 'ի մեզ հօտս է Աստուծոյ. և առհասարակ մշտնջենաւոր աղօթս մատուցցուք առ Աստուած վասն խաղաղութեան և յապահովութեան և բարեհաստատութեան ինքնակալ և տիեզերաքարոզ թագաւորացդ։ Եւ օգնականութեամբ ձերով մեծաւ և փառօք և շնորհօք պատրաստեսցուք զՀայաստանեայցս ժողովուրդ՝ կազմեալ նախ Տեառն և ապա ձեզ կամօքն Աստուծոյ։ Վասնզի այս ինչ յայտնի է առաջի փառաց աթոռոց ձեռոց. զի եթէ նուազ հովիւս հօտից բնակիցիմ ընդ հովանեաւ զօրափառ սուրբ նշանիդ և ընդ խնամակալութեամբ ինքնակալ թագաւորացդ, ո՞րչափ ևս առաւել հօտս Աստուծոյ և ժառանգութիւն Քրիստոսի զհետ շաւղաց իմոց հետևին, և հորդան տան ընդ խաշին արօտի այդմ տիեզերական ոչխարացդ բանականաց ելանել, և առհասարակ հետազօտել ընդ Հռովմայեցւոցդ իշխանութեամբ՝ որպէս Իտալիայ և ամենայն Ասիայ։ Իսկ որք ոչ գայցեն և արտաքս 'ի գաւթէ հօտի Տեառն ելանիցեն, այնպիսիքն կրեսցեն դատաստանս 'ի ձէնջ՝ ո որք և իցէ. և ես անպարտ և արտաքոյ մեղադրութեան մնացից։

«Եւ արդ՝ երկնաբերձ և լուսաշաւիղ ճառագայթաւէտ սուրբ նշանդ, որ արեգակնապէս ընդ երկնայնոցն 'ի մէջ տիեզերական և փառաւոր քաղաքիդ այդորիկ բնակեալ է, զբնակութիւն պալատան ձերոյ փրկեսցէ յամենայն կորստենէ ապականացու հնարիցն չարի. զի ոչ մրրիկ ինչ ծովանման վերասցի 'ի ձեռն ծփական ալեաց օտար հինից. և ոչ ուժգին հողմն ինչ անօրէն արձակեսցի և ածիցէ ձմեռն ապականութեան. և ոչ կոհակք լեռնանմանք և ոսոխք գովելեացդ կարասցեն երկիւղիւ շարժմանց լուծանել կամ դրժել զԱրքայդ քրիստոսաւանդ, որ 'ի ծագաց մինչև 'ի ծագս տիեզերաց բարձրացեալ և փառաւորեալ է անունդ ձեր. այլ մեծապէս խնդասջիք և ուրախ եղիջիք 'ի գեղեցիկ հանգստեան ձերում լրութեամբ խաղաղութեան և ցնծասջիք 'ի փրկութեան ձերում՝ մի՛ ևս սասանել յողորմութենէ Բարձրելոյն. և ժամանեսջիք յօրհնութիւն քաղցրութեան նորա, որ պսակեացն զձեզ հրաշալի փայլուն պսակաւ 'ի քարէ պատուականէ. և բարձրասցի արդարութիւն ձեր 'ի զօրու-

և ես ինքս եմ խնդրում՝ բարեխոս ունենալով կենսատու փրկիչ խաչդ։ Ինձ և ինձ հետ եղողներին մի՛ զրկիր աստվածընկալ նշանիդ երկրպագությունից և աստվածակարգ թագավորներիդ հետ հանդիպելուց։ Շատ տարիներից ի վեր մեծ փափագ ունեմ գալ ձեզ մոտ, բայց արգելված եմ մինչև այժմ։ Նաև ինձ խաղաղ ու հանգիստ կյանքի օթևան ընձեռեցիք՝ ձեր օգոստոսական պերճ ու պանծալի հզոր թագավորությանը համապատասխան, որպեսզի թերևս իսմայելականներից ազատվելով և ամրանալով ու տեղավորվելով ձեր թևերի հովանու տակ՝ առաջնորդենք մեզ մոտ եղած Աստծու հոտը։ Առհասարակ մշտնջենավոր աղոթքներ կմատուցենք Աստծուն՝ ինքնակալ ու ամբողջ աշխարհում քարոզվող թագավորներիդ խաղաղության, ապահովության և հաստատուն լինելու համար։ Եվ ձեր մեծ օգնությամբ, փառքով ու շնորհքով Հայաստանի ժողովրդին Աստծու կամքով կպատրաստենք նախ Տիրոջ և ապա ձեզ համար։ Քանի որ այս բանը հայտնի է ձեր փառավոր աթոռին, որովհետև եթե ես՝ հոտի տկար հովիվս, բնակվեմ զորավոր սուրբ նշանիդ հովանու տակ ինքնակալ թագավորներիդ խնամակալությամբ, որչա՞փ առավել ևս Աստծու հոտը և Քրիստոսի ժառանգությունը, [որ] գալիս են իմ հետևից, և քշում տանում են ձեր՝ կայսերական բանական ոչխարների այդ արոտի հոտի հետ՝ դուրս ելնելու և առհասարակ հռոմեացիների հետ համարձակությամբ հետազոտելու, ինչպես Իտալիան և ամբողջ Ասիան։ Իսկ ովքեր չգան և Տիրոջ հոտի գավթից դուրս չելնեն, այդպիսիք պետք է դատապարտվեն ձեր կողմից, ով ուզում է լինի, իսկ ես անմեղ ու մեղադրանքից դուրս կմնամ։

Եվ արդ՝ ձեր այդ երկնաբերձ, լուսաշավիղ, ճառագայթավետ սուրբ նշանը, որ երկնայինների հետ արեգակի նման բնակվել է ձեր կայսերական փառավոր քաղաքում, ձեր պալատի բնակչությունը կփրկի չարի ապականացու հնարների ամեն մի կորստից, որովհետև ծովանման մրրիկը չի վերանա օտար ավազակների ալեկոծված ալիքների միջոցով, և ոչ էլ կարձակվի անօրեն ուժգին հողմը, որ կբերի ապականող ձմեռը։ Ոչ էլ լեռնանման կոհակները և ձեր գոված ոսոխները կկարողանան շարժման երկյուղով թուլացնել կամ վնասել ձեզ՝ Քրիստոսի ավանդներին հետևող արքայիդ, որ ամբողջ աշխարհի մի ծայրից մինչև մյուս ծայրը բարձրացել ու փառավորվել է ձեր անունը, այլ մեծապես խնդացեք, ուրախ եղեք ձեր գեղեցիկ հանգստի մեջ խաղաղության լրությամբ, ցնծացեք ձեր փրկության մեջ, մի՛ սասանվեք բարձրյալի ողորմությունից և կհասնեք նրա քաղցր օրհնությանը, որ ձեզ պսակեց թանկագին քարերից պատրաստված հրաշալի փայլուն պսակով։ Թող ձեր արդարությունը բարձրանա Քրիստոսի զորության

թեանն Քրիստոսի. և մեք փառաւորապէս օրհնեսցուք զանուն քո՝ ինքնակալ և բարեյաղթ բարեացապարտ Թագաւոր, օգոստոս Կոստանդիանոս՝ կայսր Հռովմայեցւոց։»

Իսկ իբրև ընթերցեալ եղև այս թուղթ առաջի Կայսեր և 'ի միտ էառ տակաւին, որ զեռևս շուրջ զմեօք էին զեղեալ հարաւային շար արկածք և զդղրդումն և զկործանումն մեր և դարձեալ զելս կենաց բարեացապարտ և երջանիկ արքային Սմբատայ, զոր մարտիրոսական հանդիսի վիճակացն համարէին լինել վերընկալուչ՝ ապա վաղվաղակի առաքէ 'ի խնդիր ինձ և թագաւորելոյն Աշոտոյ արքայորդւոյն զոմն Թէոդորոս Վասլիկոս բազմահարկի պատուասիրութեամբ և ընտանեբար սիրոյ հարազատութեամբ՝ ընդ ուշի ևս կապեալ զսէր կատարման հօր իւրոյ Բասլի, որ ընդ հօր նորա Սմբատայ էր. և փութացուցեալ երթալ 'ի միասին տեսանել և տնօրինել զհասարակացն օգուտս։ Եւ վասնզի արքայորդի Աշոտ էր յամուրս տէրութեան իւրոյ դարեալ դադարեալ. իսկ ես 'ի Տարօն գաւառի զետեղէի՝ վասն այնորիկ նախ առ իս չուեաց եկն Վասլիկոսն։ Իսկ իմ ապա զհրաւիրումն երթալոյ նմա յանձն առեալ՝ առ արքայորդին Աշոտ յինէն յուղարկեցաւ։ Որոյ երթեալ և զկայսերական հրամանն առաջի ընծայեալ՝ յօժարական կամօք կազդուրեալ Աշոտոյ, չուէ գնայ վաղվաղակի զճանապարհայն։ Եւ բազում հիւրամեծասիրութիւնս և արքայական պատիւս յիջաւանս այնր պողոտայի գտեալ՝ երթայ ապա 'ի հանդիպումն մեծի Կայսերն։ Եւ անդ առ 'ի նմանէն մեծավայելուչ գահի պատիւ առեալ քան զամենայն գահերէցս՝ ընկալեալ զփառաց փարթամութիւն՝ ոչ իբրև զայլս ոմանս պատուաւորս, այլ իբրև զթագաւորազուն բողոջ՝ գրեթէ ընդ իւրով։ Իսկ Կայսր զնա հարթայարմար ցուցանէր և թագաւորական հրահանգաց հանդիսիւ ճոխացուցանէր։ Ապա միանգամայն իսկ և ուստր զնա մարտիրոսի և որդի սիրելի Կայսր իւր անուանէր. և զարդարէր զնա ծիրանազգեաց փառօք և երևելի ոսկեհուռն հանդերձիւք և ոսկեստուն վառիւք և կամար ականակապ ընդ մէջ ածէր ոչ միանգամ կամ երկիցս՝ այլ բազում անգամ նոքա զայս արարեալ, և երիվարս սրավարս և ահիպարանոցս գեղեցիկ զինուք և զարդուք առաջի կացուցանէին, և այլ ևս բազում ըմպակս և սպաս և բազում կազմուածս ոսկեղէն և արծաթեղէն նմա պատրաստէին։ Այլ և իւրոցն ևս նախարարաց զկնի տարելոցն ոչ սակաւ պատիւ պերճութեան տային, և բազում հոգս և առատանձեռն ոռճիկս նոցա յարդարեալ կազմէին՝ մինչև 'ի դարձ նորա այսրէն։

Իսկ իմ չուեալ գնացի 'ի գաւառն Դերջան. և ամսօրեայ աւուրս ինչ 'ի նմա զետեղեալ՝ թէպէտև ստէպ ստէպ հրաւիրակն կոչէր սիրա-

համար և մենք փառաւորապես կօրհնենք ձեր անունը, ինքնակալ, մեծահաղթ ու բարյացապարտ թագավոր՝ հռոմեացիների գերափառ Կոստանդիանոս կայսր»։

Իսկ երբ այս թուղթը կարդացին կայսրի առաջ, նա տակավին հասկացավ, որ մեզ դեռևս շրջապատել են հարավային շար փորձանքները, ասասանումը, կործանումը և դարձյալ բարյացապարտ ու երջանիկ Սմբատ արքայի ճյանքի վերջը, որին համարում էին լինելու վիճակների մարտիրոսական հանդեսի հաղորդը, ապա ինձ ու թագավոր կարգած Աշոտ արքայորդուն փնտրելու համար շտապ ուղարկում է ոմն Թեոդորոս Վասլիկոսին մեծ պատվասիրությամբ, մտերմությամբ, սիրով ու հարազատությամբ՝ հիշելով նաև իր վախճանված հոր՝ Բասլի սերը, որ կար նրա հոր՝ Սմբատի հետ։ Նրանք շտապեցին միասին գնալ, տեսնել ու տնօրինել ընդհանուրի օգուտը։ Քանի որ արքայորդի Աշոտը դադար էր առել իր տերության ամրոցներում, իսկ ես տեղավորվել էի Տարոն գավառում, դրա համար Վասլիկոսը նախ ինձ մոտ եկավ։ Իսկ ես նրա մոտ գնալու հրավերը հանձն առնելով՝ նրան ուղարկեցի Աշոտ արքայորդու մոտ։ Նա գնում, կայսերական հրամանը ներկայացնում է նրան ու հոժար կամքով զորացնելով Աշոտին՝ իսկույն շարժվում գընում է իր ճանապարհը։ Եվ այդ ճանապարհի իջևաններում մեծարվելով մեծ հյուրասիրությամբ ու արքայական պատվով՝ գնում է հանդիպելու մեծ կայսրի հետ։ Եվ այնտեղ նրա կողմից մեծավայելուչ գահով ավելի բարձր պատվի է արժանանում, քան բոլոր գահերեցները՝ ընդունելով փառքի մեծությունը, և դա ոչ թե մյուս պատվավոր անձանց նման, այլ իբրև թագավորազուն ծնունդ։ Կայսրը նրան գրեթե իրեն հավասար էր ցույց տալիս և մեծարում թագավորական հանդիսություններով։ Կայսրը նրան միաժամանակ անվանում էր նահատակի ուստր և իր սիրելի որդին. նրան զարդարում էր ծիրանազգեստ փառքով, երևելի ոսկեհյուս հանդերձներով, ոսկեծայր շղարշե շորով և մեջքին կապում էր ականակուռ գոտի։ Եվ նրանք դա անում էին ոչ թե մեկ կամ երկու, այլ շատ անգամ. նրա առաջ բերում էին սրընթաց ու բարձրավիզ երիվարներ՝ գեղեցիկ զենքերով ու զարդերով զարդարված։ Բացի դրանցից, նրա համար պատրաստում էին ոսկեղեն ու արծաթեղեն բազմաթիվ գավաթներ, սպասքներ և այլ զարդեր։ Պակաս պատիվ չէին տալիս նաև նրա՝ իրենց հետևից տարած նախարարներին, որոնց համար պատրաստում էին առատ ու բազմազան ուտելիքներ, պարեն, մինչև նրա վերադարձը այնտեղից։

Իսկ ես շարժվեցի գնացի Դերջան գավառ և մոտավորապես մեկ ամիս այնտեղ մնացի։ Թեպետ հրավիրակը հաճախակի ինձ սիրալիրու-

յիր կամօք երթալ 'ի պալատն առ Կայսր, սակայն ես ոչ կամեցայ. զմտաւ ածեալ թէ գուցէ գտցի ոք և ընդ ակամբ հայեսցի զանդ երթալն իմ 'ի Քաղկեդոնիտսն յարակցել ինձ համարեալ։ Եւ ապա այսպէս ոչ կամեցաւ գնալ 'ի գայթակղութիւն մտաց տկարաց։ Ապա ըստ ըղձակերտ իմոյս կամաց չոգայ յայրն սուրբ, յորում և նախ իսկ սուրբ կինն Մանի և ապա զկնի երիցս երանեալ Լուսաւորիչն մեր է 'ի նմա բնակեալ։ Ուր և տկար մարմնովն զանմարմնոցն բերեալ յինքեան ըզվարս՝ յաղթեցին բռնութեան կարեաց և անդր քան զհրամանն զհանդէս առաքինութեանն լցին սրբափայլ կրօնիւք կենսականօք. և անհամեմատ երանութեանցն արժանացեալք՝ փառաց պարծանօք պսակեցան 'ի Քրիստոսէ։ Տեսի և անդ փոքր ինչ փորուած այրի 'ի ծործորս քարանձաւի միոյ դժուարամուտ դրամբք և անհամբոյր առ 'ի բնակել սակըս քարաժեռ խոշորութեանն. յորում և տէրունական սեղան 'ի նմա կանգնեալ միշտ Քրիստոսի բնակելոցն 'ի նմա նուիրականաց պատարագաց։ Զկնի ապա ահիւ սրտի չոգայ կացի ընդ քարաժեռ վիմին. յորում և լուսաւորութեանս մերոյ Առիթն երկօրեայ 'ի նմա տակացեալ սպասէր կատարման սրբոյն Մանեայ. և անդ ամենազօր տէրութեանն Քրիստոսի երկրպագեալ՝ չոգայ 'ի բարեհամ աղբերիկն, յորմէ զովացեալ սուրբքն լինէին 'ի տապոյ քրտնահար երկոցն և հոգևոր մշակութեանցն. որ և երաստոյ վիմօք պարփակեալ շուրջանակի և դրամբք պատուեալ։ Եւ յորոյ տեղւոյ մատռուակեալն իսկ էր յարբուցումն իւր սուրբ և անբիծ ձեռն Գրիգորի՝ 'ի նմին տեղւոյ և ես թշուառականս ափոց կամօք իմովք արժանի գտայ ճաշակել ջուր յաղբերէ փրկութեան Նորոգողին զմեզ, զորոյ և զաթոռն իսկ ընկալայ՝ երանի՜ թէ և զօրինակն։ Առի հող օրհնութեան և 'ի փլուզեալ դարակէն, յորում պատուական գանձն հոգևոր 'ի հովուաց էր ծածկեալ. յորոյ վերայ շինեալ էր եկեղեցի նախ քան զայս իմով հրամանաւ 'ի մահարձանաց ինչ կրով ձուլածոյ։ Տեսի անդ 'ի ծործորս և յամուրս քարանձաւաց բնակեալ արս կուսակրօնս խարազանազգեացս գետնախշտիս բոկագնաց խոշորաճաշակս մշտամռունչ յաղօթս և յաղերսալի պաղատանս՝ աշակերտք արդար վաստակոց և ծնունդք առաքինութեան։ Եւ սոքա ոչ թերևս միախուռն 'ի միասին բնակեալք, այլ ցանկեցիր առ ստորոտով լերինն կալեալ կայանս. որք և բազմաշխատ քրտամբք երկոց իւրաքանչիւրոք զհարկաւոր պէտս մարմնոցն վճարէին։ Եւ իմ ապա այսպէս 'ի նոցանէն օրհնեալ՝ չոգայ 'ի գիւղն Թորդան՝ 'ի տեղի զբօսանաց պարտիզկանն սրբոյն Գրիգորի, յորում գանձք իմաստութեան և անմահու-

թյամբ հրավիրում էր գնալ պալատ, կայսրի մոտ, սակայն ես չէի կամենում [գնալ]՝ մտածելով, որ գուցե գտնվի մեկը և կասկածի իմ այնտեղ գնալուն ու ինձ քաղկեդոնական համարի։ Եվ այդպես ես չկամեցա գնալ տկար մտքի գայթակղությամբ։ Այնուհետև իմ ըղձակերտ կամքով գնացի այն սուրբ այրը, որտեղ նախ՝ սուրբ կին Մանին, իսկ նրանից հետո երիցս երանելի մեր Լուսավորիչն է բնակվել։ Ուր և իրենց տկար մարմնով վարելով անմահներին հատուկ կյանք՝ [նրանք] հաղթեցին մարդկային տկարություններին ու առաքինության պատվերից առավել այնտեղ լցրին կենսական սրբափայլ կրոնով, և արժանանալով անհամեմատելի երանությունների՝ նրանք Քրիստոսի կողմից պսակվեցին փառքով ու պարծանքով։ Այնտեղ ես տեսա նաև այրի մի փոքրիկ փորված մի քարանձավի խորշում՝ դժվարամուտ դռներով և խոշոր քարաժայռի պատճառով բնակվելու համար անհարմար։ Այնտեղ միշտ դրված էր տերունական սեղանը Քրիստոսի բնակիչների համար՝ նվիրական զոհ մատուցելու նպատակով։ Հետո սրտի դողով գնացի ու կանգնեցի քարաժայռ վեմի մոտ, որտեղ տեղավորվելով մեր լուսավորության առիթը [Գր. Լուսավորիչը]՝ երկու օր սպասում էր սուրբ Մանիի վախճանին։ Այնտեղ երկրպագելով ամենազոր Քրիստոսի տերությանը՝ գնացի քաղցրահամ աղբյուրիկի մոտ, որից սրբերը զովանում էին քրտնահար աշխատանքից ու հոգևոր ծառայությունից հետո։ [Աղբյուրիկը] շրջափակել էին կարծր քարերով ու դռներ դնելով։ Եվ այն տեղից, որտեղից Գրիգորի սուրբ ու անբիծ ձեռքը ջուր էր լցրել խմելու համար, նույն տեղից և ես՝ թշվառականս, իմ կամքով արժանի գտնվեցի բռով ջուր ճաշակել մեզ Նորոգողի փրկության աղբյուրից։ Ես ընդունեցի նրա [Գրիգորի] աթոռը, երանի՜ թե նրա նման։ Ես օրհնության հող վերցրի փուլ եկած բլրակից, որի մեջ հոգևոր հովիվների կողմից պահված էր պատվական գանձը։ Նախքան այս, իմ հրամանով նրա վրա եկեղեցի էր կառուցված՝ կրից ձուլված մահարձաններով։ Ես տեսա, որ այնտեղի ձորերում ու քարանձավներում բնակվել են կուսակրոն մարդիկ, որոնք մազե կոշտ զգեստներ էին հագնում, պառկում գետնին, քայլում բոկոտն, ապրում աղքատ՝ [կատարելով] մշտամռունչ աղոթքներ ու աղերսալի պաղատանքներ,— նրանք արդար աշխատանքի աշակերտներ և առաքինության ծնունդներ էին։ Եվ նրանք ոչ թե իրար խառնված միասին էին բնակվում, այլ ցրված էին լեռան ստորոտում և ունեին իրենց բնակատեղերը։ Նրանցից յուրաքանչյուրը բազմաշարշար աշխատանքով ու քրտինքով էր հոգում իրեն անհրաժեշտ կարիքները։ Եվ ապա ես նրանց կողմից այսպես օրհնվելով՝ գնացի Թորդան գյուղը, սուրբ Գրիգորի զբոսանքի պարտեզը, որտեղ պահ-

թեան ծածկեալ կան, այսինքն՝ կենդանի ոսկերք սրբոցն, որք անցին ընդ կարգս աշխարհիս ամենայն ճշմարտութեամբ և յանմատոյց լուսոյն փայլեցին իբրև զարեգակն, և հրով Հոգւոյն վառեալք ջահազարդեցան զամբարափայլ անշէջ լուսով 'ի փառս Աստուծոյ։ Եւ անդ երեկօթս արարեալ և երկրպագութիւն տէրունական հատուցեալ՝ հատի նըշխար 'ի ծառոյ անտի հացւոյ, զոր սրբոյ Լուսաւորիչն էր տնկեալ իւրովք ձեռօքն։ Եւ ապա ընդ կրունկն անդրէն 'ի լեռնակողմն 'ի մենաստանն դարձեալ և ամիսս իբրև ինն ընդ նոսին աղօթակցեալ՝ հրապուրեցայ 'ի շողոմարար շողմոգեալ բանից մերոց թագաւորացն, և դաւաճանեալ 'ի խոստմանց նոցա բարեաց որ ըստ Աստուծոյ՝ դարձայ յերկիրս Հայոց։ Ոչ ինձ ապա ըստ խոստմանն հատուցումն ինչ 'ի նոցանէն տեսեալ. այլ նանրացեալ խորհրդովք և խաւարազգած մտօք խոտորեցան զկնի ապիրատութեան և զդրդեալ սասանեցաւ ողորմելի աշխարհս մեր 'ի մերոց աստի։ Եւ ես կրկին կարօտէի տարաբնակ լինել 'ի բնակութենէ աստի, և առ նոյն սուրբ այրի բնակիլ, թէ մահ տեղի տայ կատարել. այլ այս երբ Տէր կամեսցի։

Բայց մինչդեռ քարքն դառնաշունչ 'ի Դվին քաղաքի որջացեալ կայր և համակէր միշտ 'ի շար խորհուրդս խածանել շար թունօք իւրովք զթագաւորն Գագիկ, կամ թէ համագունդ իսկ զամենայն նախարարսն ընդ նմա, և արկանել սպառսպուռ յեղծումն և յապականութիւն. այլ նա յուսացեալ 'ի Տէր ոչ սակաւ ինչ ձայն ամբոխի աղխատրոյդս շփոթից 'ի վերայ նորա ածեալ բրդեալ հեղոյր կուսակալաց և գործակալաց նորա և զօրաց և զօրապետաց ըստ այնմ մարզէ Հերայ և Զարեւանդայ, և Մարանդայ և Նախջաւանայ. և գրեթէ 'ի բազում աւուրս ասպատակաւորաց նորա և զօրաց և զօրապետաց ընդդէմ զինեալ մարտիւ քաջութեան՝ արեան ճապաղիս հեղոյր։ Իսկ ապա զայն ամենայն ուժ պնդութեան տեսեալ շար ոստիկանին, որ իբրև զանարգ ոք և զարհամարհեալ միշտ առ 'ի նմանէն առ ոտն հարեալ լինէր՝ խանդացեալ ընդ իրսն և զայրացեալ մրմռեալ յոյժ, անցեալ դիմեալ երթեալ դիզէր առ ինքն զանթիւ զօրաց։ կարաւանս. գնայր գայր հասանէր զկողմամբք Մարգաստանի և Տոսբ գաւառի՝ մեծամեծն փքայր ջնջել ջարդել ջաղխել հարկանել խորտակել բազկել և 'ի միջոյ 'ի բաց կորուսանել և 'ի սուր սուսերի մաշել միանգամայն իսկ զտոհմ և զդարմ և զզաւակ։ Իսկ իբրև զայն ամբոխ բազմութեան Տաճկաստան զօրացն տեսին տարմաբար եկեալ հասեալ 'ի վերայ, և զմտաւ ածեալ զիւրայոց ևս ոմանց թուլասրտից ձեռս լքեալս առ 'ի պատերազմել, և եթէ ոչ ուղիղ գան 'ի հարթ հաւասարութիւն. այնուհետև առաջի ածեալ զոչ կարողելն կա-

վել են իմաստության ու անմահության գանձերը, այսինքն՝ կենդանի ոսկորները այն սրբերի, որոնք այս աշխարհից անցան-գնացին ամենայն ճշմարտությամբ և անմատչելի լույսով փայլեցին իբրև արեգակ, և վառվելով [Սուրբ] Հոգու հրով՝ պայծառացան լուսափայլ անշեջ լույսով ի փառս Աստծու։ Եվ այնտեղ զիշերելով ու տերունական երկրպագություն կատարելով՝ ես մի կտոր կտրեցի հացի այն ծառից, որը սուրբ Լուսավորիչն էր տնկել իր ձեռքով։ Եվ ապա ետ դառնալով գնացի դեպի լեռնակողմում գտնվող մենաստանը և մոտավորապես ինը ամիս աղոթելով նրանց հետ՝ հրապուրվեցի մեր թագավորների կեղծավոր ու քսու խոսքերից ու խաբվեցի նրանց բարի խոստումներից, որոնք ըստ Աստծու են, և վերադարձա Հայաստան։ Բայց ես չըտեսա ոչ մի հատուցում նրանց խոստման համաձայն, այլ փուչ խորհրդով ու խավար մտքով նրանք շեղվեցին դեպի անիրավությունը, և դղրդալով սասանվեց մեր ողորմելի աշխարհը մերոնց պատճառով։ Եվ ես կարոտում էի կրկին այստեղից գնալ օտար աշխարհում բնակվելու, նույն սուրբ այրում ապրելու, եթե մահը տեղի տար, և եթե դա Տերը կամենար։

Բայց մինչդեռ դառնաշունչ, թունավոր օձը բուն էր դրել Դվին քաղաքում ու միշտ համակված էր շար մտադրությամբ ու շար թույնով խայթելու Գագիկ թագավորին, կամ թե բոլոր նախարարներին նրա հետ միասին ամբողջությամբ զցելու ավերածության ու ապականության մեջ, նա [Գագիկը], հույսը դնելով Տիրոջ վրա, քիչ իրարանցում ու խառնակություն չէր առաջ բերում, լցնում նրա, նրա կուսակալների, գործակալների, զորքի ու զորապետների վրա, որոնք Հեր, Զարեւանդ, Մարանդ և Նախջավան երկրամասերից էին։ Եվ նա բազմաթիվ օրեր խիզախ մարտեր էր մղում նրա ասպատակների, զորքի ու զորապետների դեմ՝ շատ արյուն թափելով։ Իսկ երբ այդ ամբողջ ուժը տեսավ շար ոստիկանը, որն, իբրև անարգ ու արհամարհված անձ, միշտ դատապարտվում էր նրա կողմից, նախանձելով այդ դեպքերին, հույժ զայրանալով ու մռնչալով, անցնում գնում է և իր շուրջն է հավաքում անթիվ զորքերի քարավաններ։ Հետո նա գնում, գալիս ու հասնում է Մարգաստանի[107] ու Տոսպ գավառի[108] կողմերը և մեծ-մեծ հոխորտում էր ջնջել, ջարդել, ջախջախել, կոտորել, խորտակել, թևերը կոտրել, մեջտեղից վերացնել ու ամբողջովին սրի քաշել նրա տոհմը, ցեղն ու զավակներին։ Իսկ երբ տեսան, որ տաճկական[109] զորքի ամբողջ բազմությունը եկել հասել է իրենց վրա, հիշելով յուրայիններից որոշ վախկոտների՝ պատերազմից հուսալքվելը, թե նրանք չեն կարող հավասարապես միաբանվել, այնուհետև որոշեցին չկարողանալը գլուխ բե-

տարել և կալ ընդդէմ նոցա պատերազմաւ՝ ապա չուեալ գնացեալ առ գաղթն՝ և ևս զնոսա զգուշաբար իմն ամրապահեստ առնէին. և ինքեանք առհասարակ զմի զինուորութիւն զինուորեալ և վառեալ 'ի զէնս և 'ի զարդս ելանէին 'ի ստորոտ ամուր լերանց և խորաձորս և յամուրս քարանձաւաց, և այսր անդր սրավառեալ սեթևեթեալ սլացեալ երթային գային ընդ հետամտելոյ թշնամեացն զկնի նոցա։ Իսկ 'ի տարուբեր երթևեկութեանց նոցա կոհակաց 'ի կոհակս առ 'ի յարշաւասոյր շլացութեանցն՝ որ ըստ Սողոմոնին «Իբրև զուլս այծեմանց վազս առեալ ընթանային 'ի վերայ լերանց Բեթելայ»՝ ոչ կարէին զկնի նոցա բերել զրոհք թշնամեացն, և ոչ զկամս անձանց զինչպիտութեան իւրեանց կատարել։ Եւ գրեթէ իբր յափշտակութեամբ իմն յիմարեալք խելացնոր կարծեօք իբրև ամիսս երկուս՝ ապա անցեալ թողեալ 'ի բաց գնացեալ երթային զհարաւային կողմամբքն Ռոստկայ գաւառին 'ի Հեր և 'ի Սաղամաս, և անտի 'ի քաղաք Ատրպատականի 'ի տեսչութենէն Աստուծոյ։ Բայց սպարապետին Աշոտոյ անդուլ և անդադար մշտնջենաւոր միամբտութիւն ծառայութեանն ոչ յիշեցան շար բռնադատին Յուսփայ և ոչ վստահացուցին զանսաղապ սիրտ նորա, զի միշտ 'ի խորհրդոց շարաց արբանեկէր։ Եւ իբրև հանդերձեցաւ նա ելանել զկողմամբք Վասպուրականի՝ ապա զմեծ և զբարեպաշտ տիկինն՝ զմայր սպարապետին. և զերկուս ևս զքոյր նորա ընդ կողմն Նախջաւանայ յուղարկէր 'ի Պարսս Ատրպատականի, 'ի դիպահուջ զնոսա կացուցեալ ըստ պայմանի պատանդաց։ Զկնի սուղ ինչ աւուրց ապա և զինքն իսկ զսպարապետն Աշոտ 'ի գուռն կոչէր ստիպով սաստիկ. որոյ և վաղվաղակի իսկ չուեալ գնացեալ առ ահի ընտանեկացն՝ պատուասիրաբար զնա ընդունէր և առատաձեռն ոռճիկս նմա կարգէր և պարգևս և պատիւս նմա յարդարէր։ Բայց թագաւորն Գագիկ և համազունք իւր և նախարարք իբրև տեսին զզրահեղեղ ուղխս շարին շորացեալ ցամաքեալ և անցեալ գնացեալ՝ առհասարակ փառաւոր առնէին զնախախնամօղն Աստուած. և ապա դառնային յիւրաքանչիւր զաւառս 'ի քաղաքս և 'ի գերդաստանս և 'ի գիւղս և 'ի տունս՝ ոչինչ վնասեալ 'ի հինէ շար ոսոխին, բայց 'ի սակաւուց ինչ՝ որք պարաւանդեալք 'ի թշնամւոյն ոչ կարացին ժամանել անկանել յամրացեալ գաղթն։ Նաև մեծիմաստ և բարեխորհուրդ և արդարակորով իշխանն Անձևացեաց՝ Ատոմ, ոչ սակաւ զօրութեամբ մատուցանէր թիկունս օգնականութեան թագաւորին Գագկայ. և ինքն ըստ իմաստալեղձ խորագիտութեանն՝ մանաւանդ թէ աստուածային իսկ ոյցելականութեամբ 'ի բաց տարեալ մղեալ վարատէր յաշխարհէ և 'ի

բել ու կովով կանգնել թշնամու դեմ։ Ապա նրանք մեկնում գնում են գաղթականների մոտ և նրանց զգուշաբար պահում էին ապահով ու անվտանգ կերպով։ Իրենք առհասարակ միասնաբար սպառազինվելով զենքերով ու զարդերով՝ դուրս էին գալիս ապահով լեռների ստորոտները, խոր ձորերն ու քարանձավները, և այստեղ-այնտեղ սպառազինվելով, զարդարվելով ու սրընթաց ընթանալով՝ գնում-գալիս էին իրենց հետապնդող թշնամիների հետևից։ Իսկ նրանք երթևեկում էին տեղից տեղ, բլուրից բլուր սրընթաց սլանալու պատճառով, որ ըստ Սողոմոնի «Իբրև այծյամների ուլեր վազելով գնում էին Բեթել լեռների վրա»[110], և թշնամիների գրոհները չէին կարող հասնել նրանց հետևից, ոչ էլ նրանք կարող էին իրենց կամքը ինքնազլուխ կերպով կատարել։ Եվ հափշտակվելով ինչ-որ խելացնոր կասկածանքով ու հիմարանալով՝ [մնացին] մոտավորապես երկու ամիս, ապա Աստծու նախախնամությամբ թողեցին, անցան գնացին Ռոստկաց գավառի հարավային կողմերը՝ Հեր և Սաղամաս, իսկ այնտեղից՝ Ատրպատականի քաղաքը[111]։ Բայց շար բռնակալ Յուսուֆը չհիշեց Աշոտ սպարապետի անդուլ, անդադար, մշտնջենական հավատարմությունն ու ծառայությունը, և ոչ էլ դրանք աներկմիտ դարձրին նրա սիրտը, որովհետև այն միշտ ծառայում էր շար խորհրդին։ Եվ երբ նա պատրաստվեց դուրս ելնելու Վասպուրականի կողմերը, ապա մեծ ու բարեպաշտ տիկնոջը՝ սպարապետի մորը և նրա երկու քույրերին ուղարկում է Նախջավանի կողմերը, Ատրպատականի պարսկական մասը՝ բանտարկելով նրանց իբրև պատանդ։ Մի քանի օր անց [ոստիկանը] շատ շտապ արքունիք է կանչում նաև Աշոտ սպարապետին։ Սա իսկույն մեկնում գնում է՝ մերձավորների վախենալու պատճառով։ [Յուսուֆը] նրան ընդունում է մեծ պատվով, նրա համար նշանակում է առատ օրապարեն, տալիս պատիվ ու պարգևներ։ Բայց Գագիկ թագավորը, նրա աղգակիցներն ու նախարարները, երբ տեսան, որ շորացել, ցամաքել, անցել ու գնացել է շարի՝ գետի նման անտեղի հոսող հեղեղը, առհասարակ փառավորում էին նախախնամող Աստծուն։ Այնուհետև յուրաքանչյուրը վերադառնում է իր գավառը, քաղաքները, կալվածքները, գյուղերն ու տները՝ չվնասվելով շար ոսոխի ավազակներից, բացի մի քանիսից, որոնք կապկպված լինելով թշնամուց՝ չկարողացան հասնել ընկնել ամրոցում տեղավորվածների մեջ։ Նաև խելացի, խոհեմ, արդարամիտ Անձևացյաց իշխան Ատոմը ոչ քիչ զորությամբ օգնություն էր ցույց տալիս Գագիկ թագավորին։ Նա ինքը իմաստալից խորագիտությամբ, մանավանդ աստվածային նախախնամությամբ դուրս տանելով՝ արտաքսում, դուրս էր մղում աշխարհից ու իր հոր տնից շար ավազակները

տանէ հօր իւրոյ զբոլոր ուղիս շարութեան շարալլուկ շար հինիցն առանց բանի պատերազմաց. և յամենայն 'ի հրաշալի շարութենէ հրաբորբոքն Յուսփայ ամբապահեստ լինէր 'ի հովանի թևոցն Աստուծոյ։ Այլև իշխանն Մոկաց՝ Գրիգոր, եղբարբ իւրով Գուրգենաւ բազումս յարդարէր ընծայէր զսակ հարկի ծառայութեան առաջի Գագկայ 'ի հալածանս անդ. և ինքն խորափիտ և գժուարաժայռ և ամուր աշխարհան իւրով փրծանէր ողջ ամբողջ 'ի գերչացն նեղչաց։

Արդ՝ իբրև զայս ամենայն լուեալ արքայորդին Աշոտ, մինչդեռ էր 'ի Հռովմայեցւոց տէրութեանն՝ ապա մեծաւ շնորհակալութեամբ և բարեխորհուրդ ծառայական խոստմամբք խնդրէ հրաժեշտ դառնալոյ անդրէն 'ի հայրենի տէրութիւնն 'ի Կայսերէ՝ յայտ արարեալ նմա թէ այց արար Տէր և յաջողեաց 'ի բարութիւն աշխարհին Հայոց։ Իսկ կայսր Կոստանդին ըստ ժամանակի լրութեան բարւոյն սիրալիր սրտիւ հաւանեալ խնդրոյն Աշոտոյ, ապա ևս յոգնապատիկ պատրաստէր նմա պարգևս և պատիւս և բազում կարասիս և երևելի զարդս և զէնս և ձիոյգս ոսկեղէնս և ոսկէսանձս, և բազում ևս գանձիւք զնա փարթամացուցեալ, և բազում զօրավարս և զօրս Հռովմայեցիս 'ի ձեռս նորա գումարեալ՝ յուղարկէ յիւրական աշխարհս։ Որոյ չուեալ երթեալ անցեալ զբազում օթևանօք, և եկեալ հասեալ յաշխարհ իւր՝ զբազումս նուաճեալ 'ի հնազանդութիւն ինքեան կացուցանէր. և 'ի բազմաց նորընծայ իմն հիւրամեծարութեան ակն կալեալ սպասէր։ Իսկ վասնզի մեծ դաստակերտն Կողբ դիմագրաւ ընդդէմ նորա գտանէին շարութեամբ՝ ոչ երբէք հաւանական միտս 'ի հնազանդութեան սակի ստացեալ, վասն այնորիկ իսկ 'ի գերութիւն Յունականացն զնոսա մատնէր։ Եւ ապա Աշոտոյ սպարապետին Հայոց 'ի սմին իսկ յայսմ ժամու եղև իսկ և իսկ հասանեալ յոստիկանէն Յուսփայ՝ եկեալ հասեալ մտեալ 'ի մայրաքաղաքն Դվին։ Եւ քանզի խորամանկ ոստիկանն խորհրդաբար 'ի մտի դնեալ՝ սուր հակառակութեան 'ի մէջ նոցա արկանել, այսպիսաբար նանրական մտօք թագ կապեալ սպարապետին Հայոց և սուսեր ընդ մէջ ածեալ՝ առաքէ յաշխարհ իւր. որ գրեթէ զիրկ ընդ խառն 'ի դիմի միմեանց հարան՝ ինքն և հոմանուն իւր արքայորդին։ Իսկ իբրև եկն և ետես զաշխարհս առհասարակ սպառեալ սատակմամբ և զայլս վաճառակուր լեալ և զմնացեալսն ցանկցիր անկեալ և սփռեալ յօտարազգս, և սիրելի դաստակերտն իւր վանեալ վարատեալ և գերեալ յարքայորդւոյն Աշոտոյ և 'ի Հռովմայական զօրացն, և զայլս ևս զգերդաստանս նորա և զգեօղս յաւարի առեալ. ապա այնուհետև երկաքանչիւրքն նոքա իբրև զօտարածին թշնամիս ընդ միմեանս 'ի գրգռութիւն մարտից մարտուցեալ՝ չանահնար լինէին զմիմեանսբք ելանել 'ի

շարալլուկ շարության բոլոր հորձանքները առանց պատերազմի։ Եվ նա հրաբորբոք Յուսուֆի բոլոր հրացայտ շարություններից ապահով կերպով պահվում էր Աստծու թևերի հովանու տակ։ Նաև Մոկաց իշխան Գրիգորը իր եղբայր Գուրգենի հետ միասին մեծ ծառայություն էր մատուցում Գագիկին, որը այնտեղ հալածանքի մեջ էր, իսկ ինքը իր խորափիտ, ժայռոտ ու ապահով աշխարհով ողջ ու առողջ ազատվում է գերողների ու նեղողների ձեռքից։

Երբ այս ամենի մասին լսում է արքայորդի Աշոտը, որը դեռևս գտնվում էր հռոմեական տերության մեջ, մեծ շնորհակալությամբ ու բարեխոհ ծառայական խոստումներով կայսրից հրաման է խնդրում, որպեսզի այնտեղից վերադառնա իր հայրենի տերությունը՝ հայտնելով նրան, թե Տերը այցելեց և հայ ժողովրդին բարի հաջողություն բերեց։ Իսկ Կոստանդին կայսրը այդ բարի ժամանակը լրանալիս սիրալիր սրտով համաձայնելով Աշոտի խնդրանքին՝ նրա համար պատրաստում է բազմապատիկ պարգևներ, պատիվ, շատ ունեցվածք, երևելի զարդեր, զենքեր, նժույգներ՝ [զարդարված] ոսկեղեն զարդերով ու ոսկե սանձերով, ինչպես նաև բազում այլ գանձերով նրան հարստացնելով ու նրա միջոցով հավաքելով հռոմեական բազմաթիվ զորավարներ ու զորք, ուղարկում է իր աշխարհը։ Անցնելով բազմաթիվ իջևաններով՝ նա գալիս-հասնում է իր աշխարհը և շատերին նվաճելով՝ դնում է իր ազդեցության տակ։ Շատերից նորընծա հյուրամեծարություն ակնկալելով՝ նա սպասում էր։ Եվ քանի որ նրանք տեսնում են, որ Կողբ մեծ դաստակերտը չարությամբ դիմագրավում է նրան, և երբեք էլ չկարողանալով նրանց հնազանդեցնել իրեն, այդ պատճառով նրանց հունական գերության էր մատնում։ Հենց այդ ժամանակ Հայոց Աշոտ սպարապետը իսկույն վերադառնում է ոստիկան Յուսուֆի մոտից և գալիս-հասնում ու մտնում է Դվին մայրաքաղաքը։ Եվ քանի որ խորամանկ ոստիկանը մտադրվել էր նրանց միջև թշնամանք դցել, դրա համար փուչ մտքով թագ դնելով Հայոց սպարապետի գլխին, սուրը կապելով մեջքին՝ նրան ուղարկում է իր աշխարհը։ Նրանք՝ ինքը և նրա հոմանուն արքայորդին, գրեթե գիրկընդխառն բախվեցին միմյանց։ Իսկ [սպարապետը] երբ եկավ և տեսավ, որ [մեր] աշխարհը առհասարակ դատարկվել է [բնակիչներից], մի մասը սպանվել է, մի մասը վաճառվել, իսկ մնացածները ցրվել, ընկել ու սփռվել են օտար ցեղերի մեջ, և իր սիրելի դաստակերտը գերվել է, [բնակչությունը] քշվել արքայորդի Աշոտի ու հռոմեական զորքի կողմից, իր կալվածքներն ու գյուղերը կողոպտվել են։ Ապա այնուհետև նրանցից յուրաքանչյուրը օտար թշնամու պես զրգռվելով միմյանց դեմ մարտնչելու համար՝ ճար էին

հակառակութիւնս և 'ի կռիւս։ Եւ վասնզի 'ի վերայ երկոցունց նոցա թագաւորական անունս կառուցեալ եղեալ էր 'ի նախանձ չարակնութեան յաշաղման ընդ միմեանս բերեալ, վասն այնորիկ առաւել ընդվզեալ զչարէին՝ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ զիւրն խնդրելով կացուցանել։ Յայսմ վայրի եկն ապա մեծ իշխանն Սիւնեաց Սմբատ 'ի Վասպուրական կողմանէ անտի առ արքայորդին Աշոտ. և բազում պատուասէր և սիրտ հարազատութեամբ ընկալաւ զնա՝ մեծապանծ պատուով շքեղացուցեալ։ Եկն և մեծ Հայկազունն Վասակ՝ եղբայր մանկազրաւ իշխանին Գրիգորոյ, և զնա ևս 'ի նոյն պատիւ պերճութեան վայելչական կարգօք մեծարէր։ Եւ ապա հոմանունքն երկոքեան, որք զթագաւորական անուն ժառանգեալք էին՝ առաւել ևս սաստկացուցանէին 'ի մէջ իւրեանց զաղմուկ խռովութեան։ Իսկ իմ ապա ըստ դիպաց ինչ 'ի ժամ գիպող ժամանեալ եկեալ հասեալ 'ի հեռաստանէ հալածանացն, և տաքուբերեալ և համոզեալ 'ի մէջ նոցա՝ զվայելուչ եղբայրական լծակցութիւն պատրաստել 'ի մէջ նոցա ջանահնար լինէի։ Ըստ որում ապա յունկնդրութիւն ինձ եկեալք երկաքանչիւրքն և հաւանական միտս ստացեալ՝ 'ի պայման միաբանական և խաղաղաւէտ սիրոյ հաստատեցի նոցա։ Իսկ ապա թագաւորն Աշոտ արքայորդին շուէր գնայր երթայր հասանէր 'ի կողմանս Գուգարաց մերձ յամրոցն մեծ, որ 'ի լեզու Վրաց Շամշուլդէ, այսինքն՝ Երեք նետն անուանի. վասնզի հօր նորա զազգսն զայնոսիկ շուրջ զամրոցաւն սեպհականացուցեալ էր իւր և զեղբարս երկուս՝ Վասակ և Աշոտ 'ի տոհմէ Գնթունեաց բերդապահս և վերակացուս նահանգին այնմիկ կացուցեալ։ Իսկ սա զնոյն հնազանդութեան կարգ առ 'ի նոցանէն առ իւր պահանջէր զալ 'ի մտերմութիւն ծառայութեան։ Եւ վասնզի նուազունս և սակաւս անդր գտանէր ոռճիկս զօրացն. վասն այնորիկ զզօրսն իւր 'ի մօտակայ գաւառն առաքէր երթալ հոգալ գտանել զապրուստ իւրեանց՝ մինչև անդրէն ընդ կրունկն ինքն դարձցի։ Եւ ինքն ապա վայելուչ եղբարքն Աբասայ և երկերիր յիսուն արամբք երթեալ առկայացեալ դարէր դադարէր մերձ յամրոցն՝ որ կոչէր Սակուրէթ։ Իսկ Վասակ և Աշոտ իբրև տեսին զայն, թէ կարաւան սպային սպառսպուռ առ 'ի նմանէ պակասեալ է և առ 'ի յումեքէ հուպ ընդհուպ չիք նմա օգնականութիւն. այնուհետև սոնքացեալք ստուարացեալք և կիցս ընկեցեալք՝ միանգամայն իսկ գումարտակ զզօրս իւրեանց առնէին ծածկաբար, ընդ ինքեան ունելով և զսիրելիսն իւրեանց յանրուկ գործոյն զսպայազօրսն Տփխեաց և զծործորոցն Կովկասու, և իբրև արանց աւելի քան զչորեքհազարաց սուսերամերկաց վահանաւորաց նիզակաւորաց վաղակաւորաց. և ապա յեղակարծումն ժամու 'ի վերայ հասեալ՝ ասպատակ սփռէին։ Իսկ զայնպիսի նոցա

փնտրում դուրս գալ իրար դեմ կռվի ու պատերազմի։ Եվ քանի որ նրանց երկուսի վրա էլ դրված էին թագավորական անուններ, նրանք միմյանց նկատմամբ լցվում են նախանձով ու չարակնությամբ և այդ պատճառով ավելի ընդվզելով՝ զայրանում էին, և նրանցից յուրաքանչյուրը պահանջում էր իրեն [թագավոր] կարգել։ Այդ ժամանակ Սյունյաց մեծ իշխան Սմբատը Վասպուրականի կողմից եկավ արքայորդի Աշոտի մոտ, [վերջինս] մեծ պատվով ու մոտիկ հարազատի նման ընդունեց նրան՝ շքեղացնելով մեծապանծ պատվով։ Եկավ նաև մեծն հայկազուն Վասակը՝ անժառանգ Գրիգոր իշխանի եղբայրը, որին նույնպես նա մեծարում է նույն շքեղ պատվով ու վայելուչ կարգով։ Եվ ապա երկու անվանակիցները, որոնք ժառանգել էին թագավորական անուն, է՛լ ավելի էին սաստկացնում թշնամանքը միմյանց միջև։ Իսկ ես հալածանքներից [ազատվելով]՝ հարմար պահին հեռաստանից եկա, հասա և բանակցելով նրանց հետ ու համոզելով նրանց, ջանում էի նրանց միջև վայելուչ եղբայրական լծակցություն ստեղծել։ Ըստ որում նրանք երկուսն էլ եկան ինձ ունկնդրելու, և ստանալով համաձայնություն՝ նրանց հաստատեցի միաբանական դաշինքով ու խաղաղավետ սիրով։ Հետո արքայորդի Աշոտ թագավորը չվում, գնում հասնում է Գուգարքի կողմերում [գտնվող] այն մեծ ամրոցը, որը վրացերեն Շամշուլդե[112], այսինքն՝ Երեք նետ է կոչվում։ Քանի որ նրա հայրը սեփականացրել էր այդ ժողովուրդներին ամրոցի ամբողջ շրջակայքով, երկու՝ Վասակ ու Աշոտ եղբայրներին, որոնք Գնթունիների տոհմից էին, այդ նահանգի բերդապահներ ու վերակացուներ է կարգում։ Իսկ սա նույն հնազանդության կարգով նրանցից պահանջում էր գալ իր մոտ հավատարիմ ծառայության։ Եվ որովհետև նա այնտեղ քիչ ու սակավ օրապարեն է գտնում իր զորքի համար, այդ պատճառով զորքը ուղարկում է մոտակա գավառը՝ գնալու ու հոգալու իրենց ապրուստը, մինչև ինքը այնտեղից ետ դառնա։ Եվ ինքը [Աշոտը] այնուհետև իր գեղեցիկ եղբոր՝ Աբասի հետ երկու հարյուր հիսուն մարդկանցով գնում, տեղավորվում ու դադար է առնում այն ամրոցի մոտ, որը Սակուրեթ[113] էր կոչվում։ Իսկ Վասակն ու Աշոտը երբ տեսան, որ ամբողջապես պակասել է հեծելազորի քարավանը, ու որևէ մեկի կողմից չկա անմիջական օգնություն, այնուհետև խտանալով, ստվարանալով, աքացի տալով՝ միաժամանակ թաքուն իրենց զորքն էին հավաքում՝ իրենց հետ վերցնելով նաև իրենց սիրելիներին, որոնց համալրում էին Տփխիսի ու Կովկասի ձորերի զորագնդերը, մոտավորապես չորս հազարից ավելի սուսերաձիգներ, վահանավորներ, նիզակավորներ, վաղակավորներ [սուր ունեցողներ]։ Եվ ապա անսպասելիորեն հարձակվում են ու աս-

տեսեալ սաստիկ հէնս և զոյժս բազմութեան զօրաց զիւրեամբք շուրջ պատեալ՝ ապա բազմապաղատ արտասուօք յօգնականութիւն զբարձր բազուկն Տեառն Աստուծոյ կարդային, որ կարողն է միով զհազարսն հալածել. և կնքեալ զինքեանս նշանաւ խաչին՝ ահագին իմն դղրդմամբ ճակատս մարտից ընդդէմ յարդարէին և արիաբար առնաբար առնազէն ասպազէն 'ի վերայ շահատակեալք՝ առ 'ի քթթել ական վաղվաղակի հերձեալ ընդ մէջ զջոլիրս ասպարափակ ռազմին բազմութեան ընդ կըրունկն դարձուցանէին. և երկերիւրօք միայն արամբքն զչորեք հազար սպառազէնս նոցա ջնջեալ ջարդեալ վանեալ վարատէին։ Զոմանս 'ի սուր սուսերի և 'ի սլաքս նետից և 'ի տէգս նիզակաց հաշեալ մաշեալ սատակէին. զոմանս իսկ ձերբակալ արարեալ զՍառակինոսսն սատակէին. և զոմանց զունչս և զականջսն կտրէին. իսկ 'ի քրիստոնեայս խնայեալ կապուտ կողոպուտ արարեալ զնոսա թողուին երթալ գնալ 'ի բաց, և զրեթէ ոչ ոք 'ի նոցանէ ճողոպրեալ գտանէր, բայց միայն Վասակն սակաւ արամբք փախստեայ անկեալ յամրոցն Շամշուլդէ։ Արդ՝ այս այսպէս իրագործեալ, քանզի որպէս նկանակն Գեդէոնի դարձեալ հոլովեալ 'ի բանակն այլազգեաց և լիզաջինջ զնոսա արարեալ՝ ինքն Աշոտ եղբարքն իւրով դառնայ գնայ խնդութեամբ և յաղթութեամբ բազմաւ և մեծաւ աւարաւ զկողմամբք Վրաց աշխարհին առ յաւէտ սիրեցեալն իւրեանց իշխանն Գուրգէն։

Բայց հեղահամբոյր իշխանն Սիւնեաց ընդ կրունկն յարքայորդւոյն դարձեալ յԱրագած լեռնէ անտի՝ չուէ հանդիպի եղբարց իւրոց երեցունց՝ Սահակայ Սիւնեաց տեառն և Բաբգէնի Վասակայ. վասնզի նոքա դեռ ընդ դեռ եկեալ անցեալ էին յաշխարհ տէրութեան իւրեանց 'ի փախստէնէ անտի հրոսակի նոցա Յուսփայ։ Եւ ապա վայելչաբար սիրով 'ի միասին միախորհուրդք զմիտս կառավարեալք՝ տիրէին 'ի վերայ սեպհական իշխանութեանն իւրեանց. գուն 'ի վերայ գործել շինել և նորոգել զհայրենի տէրութիւնն՝ զանկեալն և զկործանեալն 'ի թշնամեաց։ Այլ և կանայք ևս երկաքանչիւրոցն եղբարց գրաւեալքն 'ի գերութեան՝ զերծեալք 'ի ձեռաց գերչացն, յետ երկեամ մի զային հանդչէին 'ի գահս և 'ի սենեակս տերանց իւրեանց։ Բայց և Հայկազուն ևս եղբարքն Սահակ և Վասակ՝ բնաբար կուսակալք գաւառացն որ շուրջ զեղերք Ծովակին Գեղամայ, յայսմ 'ի սոյն աւուրս եկեալք 'ի հեռաստանէ հալածանացն՝ տիրէին պայազատեալք զաշխարհս տէրութեան իւրեանց։ Իսկ Թագաւորն Աշոտ՝ — վասն որոյ այժմ բանս ճառէր վասն նորա— լուեալ զմիւս Թագաւորէ հոմանուն իւր հօրեղբօրորդւոյ, եթէ ոչ եկաց մնաց 'ի սահմանեալ ուխտին որ 'ի մէջ նոցա, այլ ընդ իւրով ձեռամբ նուաճեալ կացոյց զաւանս և զագարակս որ շուրջ զՎաղարշապատակում։ Իսկ նոքանք, երբ տեսան, որ իրենց շրջապատել են ավազակներն ու զորքի բազմությունը, ապա բազմապաղատ արցունքներով օգնության էին կանչում Տեր Աստծու բարձր բազուկին, որը կարող էր միայնակ հազարներին հալածել։ Եվ իրենց խաչակնքելով՝ ահագին դղրդյունով ճակատամարտ էին տալիս և զենքով, ձիերով արիաբար, առնաբար հարձակվելով նրանց վրա՝ անմիջապես ճեղքում են նրանց ռազմաճակատի վահանափակ բազմության խմբերը ու նրանց ետ դարձնում։ Եվ միայն երկու հարյուր մարդով բնաջնջում, քշում ու հալածում են նրանց չորս հազարանոց սպառազինված զորքը։ Նրանցից ոմանց սպանում են սրի բերանով, նետերի սլաքներով, նիզակների տեգերով։ Սարակինոսներից ոմանց բռնում սպանում էին, ոմանց էլ քթերն ու ականջներն էին կտրում։ Իսկ քրիստոնյաներին խնայելով ու կողոպտելով՝ թողնում էին, որ գնան-հեռանան, բայց նրանցից գրեթե ոչ մեկը չէր կարողանում փախչել, բացի միայն Վասակից, որը մի քանի մարդկանցով փախչում ընկնում է Շամշուլդե ամրոցը։ Ահա սա այսպես իրագործելով, ինչպես Գեդեոնի նկանակը դարձյալ գլորվելով օտարների բանակի մեջ ու նրանց բնաջնջելով, ինքն Աշոտը իր եղբոր հետ ետ է դառնում ու ուրախությամբ, մեծ հաղթանակով, բազմաթիվ ավարով գնում է Վրաց աշխարհի կողմերը, իրենց միշտ սիրելի Գուրգեն իշխանի մոտ։

Բայց Սյունյաց բարեհամբույր իշխանը, արքայորդու մոտից, [այն է՝] Արագած սարից ետ դառնալով, գնում ու հանդիպում է իր ավագ եղբայրներին՝ Սյունյաց տեր Սահակին և Վասակի Բաբգենին, քանի որ նրանք հենց նոր եկել անցել էին իրենց տերության աշխարհը՝ փախչելով Յուսուֆի հրոսակներից։ Եվ ապա վայելչաբար ու սիրով միասին համախոհ կերպով մտածելով՝ տիրում են իրենց սեփական իշխանությանը։ Նրանք ջանք էին թափում շինել ու նորոգել հայրենի տերությունը՝ թշնամիների կողմից տապալված ու կործանվածը։ Եղբայրների կանայք, որ գտնվում էին գերության մեջ, ազատվելով գերիչների ձեռքից, մի երկու տարի անց գալիս նստում են իրենց տերերի գահերին ու բնակվում իրենց սենյակներում։ Հայազգի Սահակ ու Վասակ եղբայրները՝ Գեղամա ծովակի ափերին գտնվող գավառների բուն կուսակալները, այդ նույն օրերի ընթացքում [ազատվելով] հալածանքներից և գալով հեռաստաններից, տիրում են իրենց տերության նահանգներին։ Իսկ Աշոտ Թագավորը, որի մասին խոսվում է այժմ, լսելով, որ Թագավորում է իր անվանակից մյուս հորեղբորորդին, և որը հավատարիմ չի մնացել իրենց միջև հաստատված դաշինքին, այլ նվաճելով իր ձեռքի տակ է գցել Վաղարշապատ քաղաքի շուրջը եղած ա-

շապատ քաղաքաւ, սակս այսորիկ հետաքրքիր լեալ 'ի Թշնամութիւն ընդ միմեանս և ամբոխս մարտկաց և հոյլս հինից պատրաստեալ մինչդեռ Աշոտ անկասկածաբար կայր նստեալ զօղեալ 'ի գիւղն որ Վաղավերն անուանի— յեղակարծումն ժամու յառաւօտին պահու յանկարծօրէն 'ի վերայ ժամանեալ՝ ջոլիրս ջախջախս ջարդոցաց 'ի վերայ զօրու նորա ածէր. և միածի միահանդերձ զինքն և զհասարակ գունդն վարատեալ փախստականութեամբ՝ առհասարակ յաւարի առնոյր զամենայն կապուտ կողոպուտ նոցա և զձէնս և զզարդս և զձիս և զջորիս բազում յոյժ։ Եւ ինքն դարձեալ չուեալ 'ի Վաղարշապատ քաղաք առկայացեալ արձանանայր 'ի նմա։ Իսկ միւս ևս Աշոտ շոգաւ նստաւ 'ի Դվին քաղաքի։

Իսկ ես ապա ժամանեալ անդ 'ի մէջ նոցա՝ ոչ սակաւ ինչ բանս յանդիմանութեան և լուտացօղ ապառում խռովութիւն 'ի վերայ արքայորդւոյն ածէի արտօսրաթոր տոչորմամբ սակս այնպիսի մահահոտ գրժողութեանցն զոր արար։ Եւ թէպէտ բողոք բարձեալ ջանահնար լինէի բառնալ 'ի միջոյ նոցա զչար սերմանացանի որոմն, զի մի՛ գտցի 'ի նոսա խմորք ցաւոց— որ թէև առ ժամայն տեղի տուեալ բանին հաւանական սնուցանէին կամս 'ի հաշտութեան սակի—սակայն ոչ կացեալ մնացեալ 'ի բանսն բարեզգեացս, այլ վաղվաղակի 'ի չար մախանս դարձեալ հակամիտէին, և այնպէս տակաւին ընդ միմեանս դատէին կշտամբութեամբ չարի և բորբոքեալ նախանձու։ Եւ ապա երկաքանչիւրք նոքա հետամուտք լեալք միմեանց և զմիմեանսք պարայածեալք՝ առհասարակ դղրդեալ սասանեալ աւերեալ քանդեալ կործանեալ լինէր սեպհական տէրութիւն աշխարհին իւրեանց. և զմեծութիւն և զփառս իւրեանց ազգի օտարի տուեալ՝ 'ի փարթամութիւն այլոց և յաղքատութիւն ինքեանց տարածեցին զճանապարհս իւրեանց։ Եւ այսպէս զերկեամ մի ելուզակօրէն զկնի իրերաց դռոյթս տային։ Իսկ ես աւա՛ղ եղկելի անձին իմոյ կարդայի, զի բազում անգամ բնակեաց անձն իմ ընդ այնոսիկ ոյք ատէին զողջոյն, վասն զի ես էի խաղաղարար և յորժամ խօսէի՝ նոքա մարտնչէին ընդ իս։ Իսկ Թագաւորն արքայորդին գնացեալ առնու 'ի կնութիւն իւր զդուստր իշխանին մեծին Սահակայ, որ Սևադայն յորջորջէր. և անդ զպարսն պարեալ և կաքաւսն յօրինեալ՝ առաքէ նմա ոստիկանն Յուսուփ Թագ արքայական և զզարդս զգեստուց պատուականս և պայծառս և վայելուչս, և ձիս ոսկեսանձս պատուական զինուք և զարդուք, և հեծեալս յօգնականութիւն նմա գունդ Իսմայէլեան։ Իսկ նորա պսակեալ Թագին, որ առաքեցաւ յոստիկանէն՝ և բազում կարասիս և գանձս նա ոստիկանին առաքեալ՝ առեալ ապա ևս ընդ իւր զզօրս իշխանին Սահակայ աներոյ իւրոյ՝ գայ յուէ հասանէ

վաններն ու ագարակները, այդ պատճառով հետաքրքրվում է միմյանց միջև եղած թշնամությամբ և պատրաստելով մարտիկների ու ավազակների խմբեր, և մինչդեռ Աշոտը առանց կասկածելու փակվել, նստել էր Վաղավերն կոչվող գյուղում, վաղ առավոտյան անսպասելիորեն[114] հանկարծակի վրա հասնելով, մեծ կոտորած ու ջարդ է տալիս նրա զորքին։ Եվ նրան մի ձիով, մի հագուստով ու նրա ամբողջ զորքը քշելով փախուստի է մատնում, ամբողջովին ավար է վերցնում նրանց ամբողջ կողոպտածը, շափազանց շատ զենքեր, զարդեր, ձիեր ու ջորիներ։ Ինքը դարձյալ մեկնում է Վաղարշապատ քաղաքը և տեղավորվում ու հաստատվում է այնտեղ։ Իսկ մյուս Աշոտը գնաց ու նստեց Դվին քաղաքում։

Իսկ ես ժամանեցի այնտեղ, նրանց մոտ և արտասվաթոր տառապանքով քիչ հանդիմանական խոսքեր, կոպիտ լուտանքներ ու բարկություն շթափեցի արքայորդու վրա այն մահահոտ խարդախության համար, որ նա արեց։ Եվ թեպետև ըմբոստանալով ջանք էի թափում նրանց միջից վերացնել չար սերմնացանի որոմը, որպեսզի նրանցում այլևս չգտնվի ցավի խմոր (որ թեև ժամանակավորապես տեղի տալով համոզող խոսքերին՝ իրենց կամքը սնում էին հաշտության դաշինքի համար), սակայն շմնացին իրենց բարեզարդ խոսքերի մեջ, այլ շտապ դառնալով դեպի չար նախանձը՝ դարձյալ հակամիտում էին և տակավին միմյանց դատափետում էին չարի կշտամբանքով ու բորբոքված նախանձով։ Եվ ապա նրանց՝ իրար հետամտելու ու միմյանց շուրջը պտտվելու պատճառով առհասարակ դղրդում, երերում, ավերվում, քանդվում ու կործանվում էր իրենց աշխարհի սեփական տերությունը։ Եվ իրենց մեծությունն ու փառքը օտարներին տալով՝ նրանք ուրիշներին հարստացրին և իրենց աղքատության մատնեցին։ Եվ այսպես մի երկու տարի ավազակաբար նրանք իրար հետևից հարձակումներ էին գործում։ Իսկ ես ողբում էի իմ խղճուկ կյանքի համար, որովհետև շատ անգամ բնակվեցի նրանց հետ, ովքեր ատում էին խաղաղ կյանքը, քանի որ ես էի խաղաղարարը և երբ խոսում էի, նրանք կռվում էին իմ դեմ։ Իսկ արքայորդի Թագավորը գնում, կնություն է առնում Սևադա կոչվող մեծ իշխան Սահակի դստերը։ Եվ այնտեղ [երբ] պարեր էին պարում և կաքավում, ոստիկան Յուսուֆը նրան է առաքում արքայական Թագ և գեղեցիկ, փայլուն, պատվական զարդարուն զգեստներ, ոսկեսանձ ձիեր՝ [զարդարված] պատվական զենքերով ու զարդերով, ինչպես նաև իսմայելյան հեծելազունդը՝ նրան օգնելու համար։ Իսկ նա պսակվելով ոստիկանի առաքած Թագով՝ նրան է ուղարկում շատ իրեր ու գանձեր։ Այնուհետև իր հետ առնելով իր աներոջ՝ Սահակ իշ-

ի զուռն Դվին քաղաքի, վասնզի 'ի նմա իսկ առկայացեալ կայր միւս թագաւորն հոմանուն նորուն. և զումարտակ զօրս ապա սփռեալ տարածանէին 'ի մարտ։ Իսկ ես 'ի խաղաղութիւն միշտ խօսէի ընդ իւրաքանչիւրսն՝ որպէս միանգամայն և երկիցս և երիցս։

Բայց արքայորդին Աշոտ 'ի բազմութիւն զօրացն ապաստանեալ և 'ի քաջութիւն ինքեան նա յուսացեալ՝ ամբարտաւանս և բարձրայօնս փքայր. ընդ որս ոչ թերևս հաճեալ Տեառն, և իբրև մարտն ընդ միմեանս բաղխեալ ըստ զրգռութեան յուզմանն Գրիգորոյ աներոյ արքայորդւոյն և որդւոյ իշխանին Սևադայի՝ 'ի փախուստ առաջի նոցա դառնային զօրք Աշոտոյ արքայորդւոյն, և զբազումս 'ի զօրացն սրոյ ճարակ տային ըստ Իմաստնոյն բանի, թէ Տէր ամբարտաւանից հակառակ կայ. ապա գնացեալ չուեալ երթեալ արքայորդին առ մեծ իշխանն Վրաց Գուրգէն և զօրս բազումս 'ի նմանէ զումարտակեալ՝ դարձեալ գայր հասանէր 'ի Վաղարշապատ քաղաք։ Եւ յայնմ նուազի ապա ոչ տուաւ նոցա առ 'ի յինէն թոյլ մարտիւ ընդ միմեանս հարկանիլ, այլ բաղխեալ իմ զգործարանս իմաստից նոցա՝ խրատու բարւոյ զունկն մատուցանէին, յօգտութիւն սիրոյ ընդ միմեանս իմաստութեամբ բերեալք։ Զայսու ժամանակաւ ապա իշխանն Սիւնեաց Սահակ, որ սեպհականաբար պայազատէր զգաւառսն առ ծովեզերբն Գեղամայ՝ վախճանեալ փոխի 'ի կենացս, թողլով իւր ուստր մի մանկիկ տղայ փոխանորդ. և գնեն զնա 'ի քնարանի առ զուրս ձեռակերտ եկեղեցւոյն իւրոյ 'ի գիւղն Նորատունս։

Բայց թագաւորն Աշոտ արքայորդին չուեալ գնայ առ մեծ իշխանն Սահակ աներ իւր. և ապա զկնի իւր զնա համագունդ հանդերձեալ իւրովքն զօրօք երթայ գնայ յՈւտի գաւառ առ 'ի հնազանդել զբիրտ ապստամբութիւնն Մովսիսի, զոր իւր իսկ կացուցեալ էր զնա իշխան և հրամանատար ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառի։ Անդ ապա մեծ քորեպիսկոպոսն, որ պայազատէրն իսկ զմասն Գուգարաց մերձ 'ի Դրունս Ալանաց՝ գայր հասանէր զօրու բազմաւ 'ի թիկունս օգնականութեան թագաւորին։ Իսկ Մովսիսի տեսեալ զբազմութիւն զօրացն տարմարար հորդան տուեալ 'ի վերայ նորա՝ ապա և նա զումարտակ մեծ առնէ յանդուգն և անճոռնի զօրաց, գրեթէ իբրև զյորձանս ինչ ուղխից ընդ զառ 'ի վայր հեղեալ, որք և ընդվզեալ փութային հանել մերժել զթագաւորն իւրեանց։ Իսկ նա պատգամ առ Մովսէսն յղէր, զսառուցեալ հպարտութիւն բարւոյն ջեռուցանել՝ և գալ 'ի հնազանդութիւն և կեալ 'ի խաղաղութեան՝ և 'ի հանդարտութեան*)։ Բայց

* «Բնակեցեր՝ ասէ, 'ի մէջ ցրտութեան սառնամանեաց. այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարւոյդ, և հնազանդեալ ինձ՝ կեաց 'ի հանդարտութեան։ (Մով. Խորեն. Պատ. գիրք ա. գլ. ԺԱ։)

խանի զորքը, գալիս հասնում է Դվին քաղաքի դարպասների մոտ, քանի որ այնտեղ էր տեղավորվել նրա անվանակից մյուս թագավորը։ Եվ ապա զորք հանելով՝ նրանք կռվում են միմյանց դեմ։ Իսկ ես յուրաքանչյուրի հետ խոսում էի խաղաղության մասին մեկ, երկու, երեք անգամ։

Բայց Աշոտ արքայորդին, ապավինելով իր զորքերի բազմությանը և հույսը դնելով իր քաջության վրա, հոխորտում էր ամբարտավան ու գոռոզ կերպով։ Դա թերևս հաճելի չէր Տիրոջը, և երբ նրանք կռվով միմյանց բախվեցին՝ արքայորդու աներոջ՝ Սևադա իշխանի որդու՝ Գրիգորի դրդմամբ, նրանց առաջ փախուստի է դիմում Աշոտ արքայորդու զորքը, և զորքից շատերին էլ սրի են քաշում՝ ըստ այն իմաստուն խոսքի, թե Տերը ամբարտավաններին հակառակ է[115]։ Հետո արքայորդին մեկնում գնում է Վրաց մեծ իշխան Գուրգենի մոտ և նրանից ստանալով մեծ զորք՝ դարձյալ գալիս հասնում է Վաղարշապատ քաղաքը։ Եվ այս անգամ ես ոչ թե թույլ տվեցի, որ նրանք կռվով հարձակվեն միմյանց վրա, այլ շարժեցի նրանց միտքը, և նրանք ունկնդրում էին իմ բարի խրատները ու [դրանք] հասկանալով՝ միմյանց նկատմամբ սեր էին դրսևորում։ Այդ ժամանակներում Սյունյաց Սահակ իշխանը, որը սեփականաբար տիրում էր Գեղամա ծովակի ափերին ընկած գավառներին, վախճանվելով հեռանում է այս կյանքից՝ իրեն փոխանորդ թողնելով մի փոքրիկ տղայի։ Նրան թաղում են Նորատունք գյուղում իր կառուցած եկեղեցու մոտ գտնվող գերեզմանոցում։

Արքայորդի Աշոտ թագավորը գնում է իր աներոջ՝ Սահակ մեծ իշխանի մոտ։ Եվ ապա իր հետևից նրան զինելով՝ իր ամբողջ զորքով գնում է Ուտի գավառ՝ հնազանդեցնելու Մովսեսի բիրտ ապստամբությունը, որին հենց ինքն էր կարգել իշխան ու հրամանատար Ուտի գավառի այն վայրերի ցեղերի վրա։ Այնտեղ մեծ քորեպիսկոպոսը, որ տիրում էր Գուգարքի այն մասին, որը գտնվում է Ալանաց դռան[116] մոտ, մեծ զորքով գալիս հասնում է թագավորին օգնելու համար։ Տեսնելով, որ մեծ զորքը խմբովին հարձակվում է իր վրա՝ Մովսեսը ևս կազմում է հանդուգն ու անճոռնի մեծ զորք և գրեթե զառիվայրից հոսող հեղեղի նման իջնում է ցած։ Նրանք ընդվզելով շտապում էին հանել հեռացնել իրենց թագավորին։ Իսկ նա պատգամաբեր է ուղարկում Մովսեսի մոտ՝ տաքացնելու նրա հպարտ բնավորության սառնությունը՝ հնազանդվելու և ապրելու խաղաղ ու հանգիստ*։ Բայց նա

* «Դու ցուրտ սառնամանիքների մեջ բնակվեցիր, ասում է, սակայն տաքացրո՛ւ և մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրի՛ր» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Ա, գլ. ԺԱ)։

նա յաւէտ իմն խրոխտ խստութեամբ զպատասխանիս պատգամացն դարձուցանէր։ Ապա խոհեմ և ուշիմ թագաւորն հանդերձ իշխանաւն Սահակաւ կուռ վառեալ զզօրս իւրեանց յաղեղն և 'ի սուսեր և 'ի տէգ նիզակաց՝ արս ընտիրս հոյակապս, առաջինս և ահեկինս կազմէին. և շուեալ իբրև զհրոսակ իմն վաղվաղակի հասանէին յափն ձորոյն, յորում ամրացեալ կայր Մովսէս համագունդ իւրայօքն զօրօք. և անդ ապա ահագին իմն դղրդմամբ շահատակեալ ահս պակուցանօղս 'ի վերայ նոցա հեղուին։ Իսկ զայնպիսի ոյժ պնդութեան տեսեալ զօրացն Մովսիսի՝ յանկարծակի ցան և ցիր այսր անդր յարձակմամբ փախըստէիւ հեռանային ուրոյնանային՝ միայն թողլով զՄովսէսն։ Ապա և ինքն վաղվաղակի խուճապեալ ելեալ 'ի ձորակէն յարևմուտս կոյս հապճեպով փախստեայ գնայր անկանէր յաշխարհն Սիւնեաց առ իշխանն Սմբատ. զի թերևս 'ի սադրելոյ նորա հետի աղագս գտանել մարթասցի իւրայոցն տարակուսանաց։ Եւ մինչդեռ թագաւորն առկայացեալ յՈւտի գաւառի համոզել նուաճել զխստապարանոց աւազակուտ մարդիկ աշխարհին, յանկարծակի զիմեալ շուեալ գնացեալ Մովսէսն 'ի Սիսական կողմանցն՝ 'ի մտի դնէր երթալ առ մեծ քորեպիսկոպոսն Ծանարաց և բարւոյ խոստմամբ միաբան ընդ իւր զնա կացուցանել և գրաւաթափ իւրոյ տէրութեանն լինել։ Զայն անցս աղէտի ընդ հուպ զգացուցեալ թագաւորին՝ վաղվաղակի զհետ աճապարել կրթի. և ձի 'ի ներքս տարեալ 'ի սաստիկ վառեալսն և 'ի կազմեալսն Մովսիսի և մօտ առ նա հասեալ և զազուցեալ գլխանոցն երկաթի վաղերբ դիպեցուցեալ՝ շեշտ ընդ մէջ ճեղքէր զամուր գլխանոցն, և յերկիր զնա հարստեալ. և ընդ կրունկն դարձեալ առեալ ընդ իւր զՄովսէսն տանէր, և խարեալ զաչս նորա խաւարեցուցանէր կուրութեամբ. վասն զի որ կամաւ կուրութիւն յինքն կրէ՝ ոչ երբէք կարէ նա զալ յառողջութիւն։ Իսկ իբրև այս այսպէս 'ի կամս անձին եղև իրագործեալ, ապա շուէ գնայ առ թագաւորն 'ի գաւառն Շիրակ և սիրալիր սրտիւ առ ինքն կոչէ զեղբայր իւր զԱբասն զոր իշխան իշխանաց էր կացուցեալ, և զիշխանն Վրաց Գուրգէն զնորուն աներ՝ շնորհս գիտելով զոր առ 'ի նոցանէն էր նմա նիւթեալ դաւաճանութիւն շարակնութեան նախանձու։ Եւ հանդիպեալ միմեանց 'ի գիւղն Որմանի՝ մեծապատիւ զնոսա առնէ ըստ օրինի թագաւորաց բազմապարգև բարութեամբք։

Եւ վասնզի ոչ լինէր յաջողեալ նոցա յայնմ տեղի բանալ նոցա զդուռն կորստական ըստ երկնային այցելութեանն՝ յուղարկի՝ 'ի նոցանէն. և եկեալ առկայանայ առանց իմիք կասկածանաց 'ի քաղաքագիւղն Երազգաւորս։ Իսկ նոցա 'ի ձեռն պատրուակի սիրոյ զդաւելն թագաւորին խորհեալ և հնարս որոգայթից նիւթեալ՝ յանկարծակի 'ի

պատգամաբերին ավելի հանդուգն պատասխան է տալիս։ Ապա խոհեմ ու ուշիմ թագավորը Սահակ իշխանի հետ միասին կուռ սպառազինելով աղեղով, սուսերով, նիզակների տեգերով իր զորքին՝ ընտիր ու հոյակապ մարդկանց, որոնք և կազմում էին նրա առջևի մասը ու ձախ կողմը, հրոսակի նման չվելով՝ իսկույն հասնում են ձորափ, որտեղ ամրացել էր Մովսեսը իր զորքով։ Եվ այնտեղ մեծ իրարանցում առաջացնելով ու գրոհելով՝ ահ ու սարսափ էին գցում նրանց վրա։ Իսկ Մովսեսի զորքը, տեսնելով նրանց զորքի այդքան մեծ ուժը, հանկարծակի ցանուցիր այս ու այն կողմ արշավելով ու փախչելով, հեռանում էր ու մեկուսանում՝ միայնակ թողնելով Մովսեսին։ Ապա և ինքը շատ շուտ խուճապահար դուրս գալով ձորակից՝ հապճեպ փախչում է դեպի արևմուտք և գնում ընկնում է Սյունյաց աշխարհը, Սմբատ իշխանի մոտ, որպեսզի թերևս կարողանա նրա օգնությամբ ճանապարհ գտնել յուրային տարակուսողների համար։ Եվ մինչդեռ թագավորը, տեղավորվելով Ուտի գավառում, այդ աշխարհի համառ ու ավազակաբարո մարդկանց համոզում էր իրեն ենթարկվել, Մովսեսը հանկարծակի չվում գնում է Սիսականի կողմերից՝ մտադրվելով գնալ Ծանարքի մեծ քորեպիսկոպոսի մոտ, բարի խոստմամբ նրան իրեն միաբան դարձնել և իր տերությունը գրավով ազատել։ Այդ աղետալի անցքերը անմիջապես հասկանալով՝ թագավորը աճապարում էր իսկույն հետևել նրան։ Նա ձի նստելով ու քշելով Մովսեսի լավ սպառազինված ու պատրաստված [մարդկանց] մոտ, մոտենում ու սրով խփում է նրա երկաթյա գլխանոցին, ամուր գլխանոցը մեջտեղից շեշտակի ճեղքում է և այն մխրճում հողի մեջ։ Հետո ետ դառնալով ու իր հետ վերցնելով Մովսեսին՝ տանում է ու փորելով նրա աչքերը՝ կուրացնում է։ Եվ որովհետև ով կամովին կուրություն է կրում, նա երբեք չի կարող առողջանալ։ Իսկ երբ սա այսպես իր կամքով կատարվեց, ապա նա չվում գնում է Շիրակ գավառը, թագավորի մոտ և սիրալիր սրտով իր մոտ է կանչում իր եղբայր Աբասին, որին իշխանաց իշխան էր կարգել և նրա աներոջը՝ Վրաց Գուրգեն իշխանին՝ շիմանալով, որ նրանք են իր դեմ նյութել շարակն նախանձով դավաճանություն։ Եվ երբ [նրանք] միմյանց հանդիպում են Որմանի գյուղում[117], նա բազմապարգև բարությամբ թագավորներին վայել պատիվ է տալիս նրանց։

Եվ որովհետև նրանց չի հաջողվում այն տեղում բացել նրանց կորստյան դուռը՝ ըստ երկնային նախախնամության, [թագավորը] հեռանում է նրանց մոտից, գալիս ու առանց ինչ-որ կասկածանքի տեղավորվում է Երազգավորք քաղաքագյուղում։ Իսկ նրանք, մտածելով սիրո պատրվակով թագավորին դավելու մասին և որոգայթներ նյութե-

վերայ յարձակէին բազկել զնա անյայտարար։ Իսկ ապա փոքր ինչ յառաջ իրազեկ լեալ թագաւորն և ստիպով առեալ ընդ իւր զուստր Աբասայ եղբօր իւրոյ և զգաղթն Երազգաւորից և հազիւ 'ի խարդաւանական որսորդութեանցն ճողոպրեալ՝ չուէ գնայ յՈւտի գաւառ։

Իսկ նոցա եկեալ և ոչ գտեալ մարթեցուցանել զոր կամէինն՝ ամօթ զանձամբ արկեալ և յետկոյս մնացական գաղթն յաւարի առեալ՝ դառնային։ Եւ յայնմհետէ ապա սաստիկ թշնամութիւն 'ի մէջ նոցա զեղեալ լնոյր յայսպիսի խորհեցեալ մահահոտ չարութենէ։ Բայց Վասակ, որ սեպհականաբար պայազատէր զէրութիւն Գեղարքունւոյ՝ կարծիս իմն երկիւղի զարքայէ 'ի մտի եղեալ՝ խնդրէր առ 'ի նմանէ յետկար երգման, զի անկասկած լիցի 'ի մտանելն առ նա և յելանելն. զոր իմ իսկ ընկալեալ յարքայէ զնամակն՝ և տուեալ առ Վասակ։ Ապա չուէ գնայ առ թագաւորն. և յառաջնում նուագին իբրև զհակամիտ գործակից և զեղբայր սիրելի հաւատարմացուցեալ իւր ընդունէր զնա պատուով մեծաւ։ Իսկ զկնի ապա հրապուրեալ յոմանց, որք ասէինն թուղթս առ նա գտեալ զմիւս թագաւորին Աշոտոյ և Գուրգենայ աներոյ իւրոյ 'ի ձեռն սուրհանդակի միում լի ամենայն խորամանկ խորհրդովք. սակս այսորիկ կալեալ կապէ զնա երկաթի կապանօք և դնէ յամրոցի անդ, որ Կայեանն կոչի։ Իսկ ես թէպէտև սաստկագոյն բան յանդիմանութեան 'ի վերայ ածեալ թագաւորին՝ պաշարեցի զնա կշտամբութեամբ մեծաւ վասն ստելոյ ուխտին երդման և կապելոյ զՎասակն և ընդ իւրով ձեռամբ զտէրութիւն նորա նուաճելոյ. սակայն նա 'ի Վասակ զվնասն տարեալ մղեալ հանէր և փոքր ինչ աւուրս ժամ եղեալ՝ յանձն առնոյր արձակել 'ի կապարանէն և հաստատել զնա յաշխարհ տէրութեան իւրոյ։ Սակայն և ես սակս այնորիկ թոյլ առժամայն տուեալ՝ զի մի՛ թերևս ըստ մանկական բարուցն գաղանական ինչ ստասցի կամս, և զանկազմն դրժեալ գործեսցէ իր, որ այսպէս ապա այլում տեղւոյ զայսոսիկ թողի հոգալ՝ երկնաւոր այցելութեանն յանձն արարեալ։

Զայսու ժամանակաւ ոմն Հաղարացի, Փարկինի անուն իւր՝ ոստիկան 'ի Հայս յամիրապետէն անտի առաքեալ և ընդ իւր բերեալ թագ՝ դնէր 'ի գլուխ թագաւորին Գագկայ՝ երեքկին զնա պսակեալ 'ի վերայ Հայաստանեայցս, և այլևս բարեվայելուչ զարդուք զնա շքեղացուցեալ։ Ապա և թագաւորն ևս ոչ սակաւ ինչ պատիւս և պարգևս առատաձիրս նմա շնորհէ. այլ և ամիրապետին ևս բազումս առաքէ գանձս ոսկւոյ և արծաթոյ զկէսն 'ի սակն արքունի և զայլսն 'ի նպաստ օժտութեան։ Բայց ոստիկանն Յուսուփ յաւէտ իմն ընդ այսոսիկ զչարեալ՝ տնտղինս

լով, հանկարծակի հարձակվում են նրա վրա՝ գաղտնի ջարդելու համար։ Բայց մի փոքր առաջ իրազեկ լինելով այդ մասին՝ թագավորը շտապ իր հետ վերցնում է իր եղբայր Աբասի տղային, Երազգավորքի գաղթականներին և հազիվ ճողոպրելով խարդավանական որսորդության խայծից, շարժվում գնում է Ուտի գավառը։

Իսկ նրանք գալով ու չկարողանալով գտնել այն, ինչ կամենում էին, ամաչելով ու ետ մնացած գաղթականներին վերցնելով, վերադառնում են։ Այնուհետև սաստիկ թշնամություն է լինում նրանց միջև՝ այսպիսի մտածված մահահոտ չարության պատճառով։ Բայց Վասակը, որ սեփականաբար իշխում էր Գեղարքունի տերությանը, արքայի մասին կասկած ունենալով, նրանից խնդրում է երդմնագիր, որպեսզի ապահով կերպով մտնի նրա մոտ ու դուրս գա։ Եվ ես արքայից ընդունեցի նամակը ու տվեցի Վասակին։ Հետո շարժվում-գնում է թագավորի մոտ, որը սկզբում նրան ընդունում է մեծ պատվով՝ իբրև հոժարակամ գործակցի ու հավատարիմ սիրելի եղբոր։ Իսկ հետո հրապուրվում է ոմանց կողմից, որոնք ասում էին, թե մյուս Աշոտ թագավորի ու իր աներ Գուրգենի թուղթը նրա մոտ են գտել մի սուրհանդակի միջոցով, որը լցված էր ամեն տեսակի խորամանկ մտքերով։ Այդ պատճառով նրան բռնելով՝ կապում է երկաթյա շղթաներով ու փակում այն ամրոցում, որը կոչվում է Կայյան։ Իսկ ես թեպետ սաստիկ հանդիմանական խոսքեր թափեցի թագավորի գլխին, նրան խիստ կշտամբեցի՝ երդումը դրժելու, Վասակին շղթայելու ու նրա տերությունը իր ձեռքի տակ գցելու համար, սակայն նա մեղքը գցում էր Վասակի վրա և մի քանի օր ժամանակ պահանջելով՝ հանձն էր առնում նրան արձակել կապանքներից ու հաստատել իր տերությունում։ Դրա համար ես էլ ժամանակավորապես թույլ տվեցի, որ թերևս մանկական բնավորության պատճառով նա չկատարի իր գաղտնական կամքը ու անշնորհք բան չանի։ Եվ դա ես այդպես թողեցի ուրիշ տեղում հոգալու համար՝ այն հանձնելով երկնավոր նախախնամությանը։

Այդ ժամանակներում Փարկինի անունով մի հաղարացի ամիրապետի կողմից ուղարկում է Հայաստան որպես ոստիկան, որը իր հետ բերելով թագը՝ դնում է Գագիկ թագավորի գլխին՝ երրորդ անգամ նրան պսակելով [թագավոր] Հայաստանի վրա, ինչպես նաև նրան զարդարելով բարեվայելուչ զարդերով։ Թագավորը ևս ոչ սակավ պատիվ ու առատ պարգևներ է շնորհում նրան։ Բացի դրանից նա ամիրապետին ևս առաքում է ոսկու և արծաթի շատ գանձեր՝ կես մասը որպես արքունի տուրք, իսկ մնացածը որպես օգնության նպաստ։ Բայց ոստիկան Յուսուֆը դրանց համար ավելի չարանալով, սարսա-

կրճատէր զատամունսն 'ի վերայ Թագաւորին Գագկայ, սպառնացեալ լի ապականութեամբք և մօտալուտ բանիւք։ Բայց հոյակապ իշխանն մեծ Սահակ, որ որդիացուցեալն էր փեսայութեամբ զթագաւորն Աշոտ, հրապուրեալ 'ի բանս թովչաց ոմանց չարախորհաց՝ ընկալոյզ զիմաստութիւն իւր մեծ, և ապա սկսաւ չարիս իմն 'ի վերայ Թագաւորին Նիւթել, իբր յօտար թշնամւոյ։ Եւ իբրև սառնամանիք ցրտութեան ձմերայնոյն 'ի բաց եղաւ, ապա երկաքանչիւրք նոքա զօրաժողով լինէին 'ի մարտ ընդ միմեանս պատերազմել. և այնուհետև հասեալք 'ի մի վայր 'ի գեօղն Ախայեանս՝ ճակատս ռազմի մարտկաց ընդդէմ միմեանց պատրաստէին։ Ապա մեծամեծք աւագանւոյն յանդիմանեալ զերկաքանչիւրսն՝ իբրև զհպարտս և անձնասէրս զնոսա լինել և սկիզբն զինքեանս ամենայն լաւութեան և քաջութեան ցուցանել. և այսպէս համոզեալ՝ 'ի մէջ նոցա դաշինս հաստատեն խաղաղութեան։ Եւ ապա բազում ուխտ երդմանց դրով կնքեալ տան իրերաց քրիստոսադիր կիտիւն և միջնորդութեամբ սրբոյ նշանի խաչին։ Եւ ապա Թագաւորն ընդ կրունկն դարձեալ վաղվաղէ չուէ գնայ ընդ դուռն Դվին քաղաքին. և անդ բազում արեան ճապաղիս 'ի նոցանէն հեղեալ և առհասարակ յաւարի առեալ զնոսա՝ հնազանդեցուցանէր զամբարտաւան և զբիրտ ապստամբութիւն նոցա ընդ լծով ծառայութեան իւրոյ։ Աստ ուրեմն ապա մեծ իշխանն Սիսական տոհմին՝ Սմբատ, երիս ևս եղբարքն հանդերձ ցասմնական իմն սրտիւ դժգմեալ ընդ Հագարացւոյն, որ յայնժամ զգաւառն Գողթան բռնակալեալ պայազատէր՝ խնդրէին առ 'ի նմանէն յինքեանս դարձուցանել զսեպհական իւրեանց ամրոցն Երնջակ և զառ ստորոտով նորա զգաւառն, զոր Յուսփայ ոստիկանին առեալ տուեալ էր 'ի ձեռս Գողթան բռնակալին. այլ նա իբրև յարքունուստ զայն նմա շնորհեալ համարէր և ոչ առնոյր յանձն տալ։ Իսկ ապա երկաքանչիւրքն կողմանք զօր գումարեալ գունդ կազմեալ՝ իբր հրոսանուէր իմնդ դրդմամբ մարտ ընդ միմեանս հարկանէին։ Եւ իբրև ջոլիր ռազմին կազմեցաւ և ասպատակն զմիմեամբք սփռեցաւ և գունդն Հագարացւոյն ազմկեալ յետկոյս հարան մերձ 'ի պարսել, անդ ապա զօրն Գաբաւոնացի իշխանին Սմբատայ, որ 'ի թիկանց կուսէ կային Վասակայ եղբօր նորուն 'ի ձախակողմ թևոյն յանկարծօրէն խորհրդեամբ չարի համազունդ ընդ Վասակայ ձի 'ի ներքս տարեալ և առհասարակ 'ի վերայ յարուցեալ դիաթաւալ զքաջն և զկորովին Վասակ արկանէին. և ինքեանք թիկունս առ 'ի գնալ դարձուցեալ՝ չուէին 'ի Նախջաւան քաղաք։ Իսկ զդիակ զեղեցիկ երիտասարդին բարձեալ եղբարցն 'ի տեղւոջէ ճակատուն՝ տարեալ եդին ընդ հարս իւրեանց, արարեալ կոծ մեծ 'ի վերայ նորա։

փելի կերպով ատամներն էր կրճտացնում Գագիկ թագավորի վրա՝ նրան սպառնալով լիակատար ավերածությամբ և վերահաս [վտանգի] խոսքերով։ Բայց զորավոր իշխան մեծն Սահակը, որ փեսայությամբ որդիացրել էր Աշոտ թագավորին, խաբվելով չարախոհ մարդկանց թովիչ խոսքերից, խեղդեց իր մեծ իմաստությունը և սկսեց չարիքներ նյութել թագավորի՝ իբր օտար թշնամու դեմ։ Եվ երբ ձմեռային ցուրտ սառնամանիքը վերջացավ, նրանք զորք են հավաքում միմյանց դեմ կռվելու համար։ Այնուհետև հասնելով մի տեղ՝ Ախայանք գյուղի մոտ՝ նրանք միմյանց դեմ ճակատամարտի էին պատրաստվում։ Ապա ավագանու մեծամեծները, հանդիմանելով նրանցից յուրաքանչյուրին, իբրև ամբարտավանների ու եսասերների, և ամեն մի լավության ու քաջության սկիզբ իրենց համարելով ու այդպիսով համոզելով՝ նրանց միջև խաղաղության դաշինք են հաստատում։ Եվ ապա բազում երդմնագրեր կնքելով՝ տալիս են իրար քրիստոսադիր կարգով ու սուրբ խաչի նշանի միջնորդությամբ։ Հետո թագավորը ետ է դառնում ու շտապ չվում գնում է Դվին քաղաքի դարպասների մոտ։ Այնտեղ նրանցից շատ արյուն թափելով և նրանց առհասարակ կողոպտելով՝ նա լռեցնում է նրանց ամբարտավան ու բիրտ ապստամբությունը և նրանց գցում իր ծառայության տակ։ Այստեղ Սիսական տոհմի մեծ իշխանը՝ Սմբատը, և նրա երեք եղբայրները, ցասումնալից սրտով դժգոհելով հագարացուց, որն այն ժամանակ բռնի կերպով իշխում էր Գողթան գավառի վրա, նրանից խնդրում են իրենց վերադարձնել սեփական Երնջակ ամրոցը՝ նրա ստորոտում գտնվող գավառի հետ միասին, որը Յուսուֆ ոստիկանը վերցրել տվել էր Գողթան բռնակալի ձեռքը, բայց նա այն իբրև արքունիքի կողմից իրեն շնորհված էր համարում և հանձն չէր առնում տալ։ Իսկ հետո յուրաքանչյուր կողմ, զորք հավաքելով, գունդ կազմելով, ավազակների նման գրգռված հարձակվում են ու կռվում միմյանց դեմ։ Իսկ երբ ռազմաճակատը կազմվեց, և հեծելազորները հարձակվեցին միմյանց վրա, հագարացիների զորքը ազմկելով ետ մղվեց, և նրանք մոտ էին պարտվելուն, ապա այդ ժամանակ այդտեղ Գաբաւոնացի Սմբատ իշխանի զորքը, որ գտնվում էր նրա եղբայր Վասակի թիկունքում, ձախ թևից հանկարծակի շար մտադրությամբ ձի հեծած հարձակվում և քաջ ու կորովի Վասակին գետին է փռում։ Իրենք ետ են դառնում վերադառնալու համար և գնում են Նախջավան քաղաքը։ Իսկ գեղեցիկ երիտասարդի դիակը վերցնելով ճակատամարտի տեղից՝ եղբայրները տարան ու թաղեցին իրենց հայրերի մոտ՝ մեծ լացուկոծ անելով նրա վրա։

Բայց թագաւորն Աշոտ իբրև զկամակատարս զԴվին քաղաք իւր պատրաստեաց, ապա թիկունս առ 'ի գնալ 'ի նոցանէ դարձուցեալ՝ շուէ յաշխարհն Վրաց և անդ ընդ իւր զթագաւորն Վրաց Ատրներսեհ առեալ՝ երկաքանչիւրք նոքա 'ի մարտ ընդ իշխանին Գուրգենայ մտեալ՝ խնդրէին զիւրաքանչիւր վրէժս. զորս նենգապատիր շարակնաբար գործեցին նմա ահս ապիրատս և աշխարհաւեր կործանումն։ Եւ թէպէտ միւս ևս թագաւորն Աշոտ և եղբայր արքայորդւոյն Աբասայ գրոհ իմն 'ի Գուրգէն տուեալ հաւաքէին. սակայն ոչ կարացեալ ըստ օրինի մարտից զդէմ նոցա ունել՝ 'ի հովիտս խորափիտս և յանտառախիտ խորաձորս ամրացեալ լինէին։ Բայց անձկութիւն վայրացն ոչ թերևս սպառսպուռ զասպատակ հինին 'ի նոցանէն կարողանայր արգելուլ. այլ միշտ զբազմութիւն վահանակիր զօրուն իբր ասպարափակս իմն ընդդէմ նոցա տուեալ և 'ի յաղեղն և 'ի սուսեր վառեալ՝ բազում վիրաւորս տապաստ 'ի նոցանէ արկանէին, մինչև խօսէին նոցա 'ի հնազանդութիւն և 'ի խաղաղութիւն. և զորս 'ի ձեռանէ նոցա բերաւ աւերումն և սասանումն աշխարհին՝ կրկին տուժիւք զնա նորոգեալ։ Եւ մինչդեռ այնպէս զասահման խաղաղութեան մերձ էին ընդ միմեանս հաստատել՝ իսկ և իսկ ժամանեալ զուժկան յՈւտի գաւառէ առ թագաւորն Աշոտ հասանէր, ասելով նմա զելս իշխանին Սահակայ աներոյ իւրոյ յՈւտի գաւառ և զուժգնապէս յաւարի առնուլն առհասարակ և զյափշտակութիւնն 'ի նոցանէ ամրոցացն որ 'ի Զորոյփոր՝ տանել զզաղթ յաշխարհին յամրոցս իւրոյ տէրութեանն և զիւր արձանանալ և կալ նստել զլեռնակողմամբ գաւառին։ Զայս լուեալ ամենահարուստ և բազմահանճար թագաւորն Վրաց Ատրներսեհ՝ լքեալ թողու 'ի բաց որ առ ձեռն կայր պատրաստ զգործն Գուրգենայ քեռորդւոյ իւրոյ՝ իբր պարապոյ գոլ զայն հոգ և այլում տեղւոյ թողլի է, և վաղվաղակի պատրաստաբար իմն յուղարկէ առ 'ի յիւրմէ զԱշոտ թագաւոր Հայոց յանբոկ գործոյն իշխանին Սահակայ։ Բայց նորա զզօրս իւր յետ զթիկամբք իւր թողեալ և ընտրեալ արս իբրև երեք հարիւր միայն սաստիւ հապճեպով գան հասանեն 'ի Զորոյփոր։ Եւ տեսանեն նախ զԿայանն կոչեցեալ բերդ յափշտակեալ իշխանին Սահակայ, և որ 'ի նմա կայրն 'ի դիպահուռ Վասակ տէր Սիւնեաց հանեալ արձակեալ զնա 'ի տուն հօր իւրոյ, և զայլ ևս ազատ կանայսն որ 'ի նմա ըստ սակի գերելոց, սա անց վարատեալ՝ և պահնակս զիւր յամրոցն կացուցեալ։ Ապա և զմիւս ամրոցն, որ էր մերձ 'ի նա՝ և զայն ևս գրաւեալ տագնապաւ տարակուսից և սրոյ ճարակ զբերդապահնակսն տուեալ՝ և խաղացուցեալ զզաղթ բնակչաց երկրին առհասարակ աղխու

Բայց Աշոտ թագավորը Դվին քաղաքը պատրաստեց իբրև իր կամակատարը, ապա գնալու համար նրանց մոտից ետ դառնալով՝ նա մեկնում է Վրաց աշխարհը ու այնտեղ իր հետ վերցնելով Վրաց թագավոր Ատներսեհին, նրանք երկուսով Գուրգեն իշխանի դեմ կռիվ են սկսում և իրենց վրեժն են լուծում նրանցից, ովքեր նենգորեն ու չարակնորեն նրան անիրավ ահ ու աշխարհավեր կործանում պատճառեցին։ Թեպետև մյուս թագավոր Աշոտը և արքայորդի Աբասի եղբայրը հավաքվում ու գրոհում են Գուրգենի վրա, սակայն չկարողանալով պատերազմի կանոններով նրանց դիմադրել, ամրանում են խոր հովիտներում և լեռների մեջ ընկած անտառախիտ խոր ձորերում։ Բայց այդ վայրերի անձուկ տեղերը չէին կարողանում իսպառ արգելել ավազակների ասպատակությունները նրանց վրա, այլ միշտ վահանակիր զորքի բազմությունը, իբրև ինչ-որ ասպարափակ մի բան, զինված աղեղներով ու սրերով կռվում էին նրանց դեմ և նրանցից շատերին վիրավորելով՝ գետին էին փռում, մինչև որ նրանք խոսում են հնազանդությամբ ու խաղաղությամբ։ Եվ մեր աշխարհին նրանց ձեռքով ինչ ավերածություն ու սասանում որ բերվեց, կրկին որպես տույժ նրանք են նորոգում։ Եվ մինչդեռ այսպես նրանք մոտ էին միմյանց միջև խաղաղություն հաստատելուն, իսկույն Ուտի գավառից Աշոտ թագավորի մոտ զուժկան է հասնում՝ հայտնելով նրան իր աներ Սահակ իշխանի շարժվելը դեպի Ուտի գավառ, նրանց կողմից առհասարակ ուժգնորեն այն ամրոցների կողոպտումն ու հափշտակությունը, որոնք գտնվում են Զորոփորում, իր երկրի գաղթականներին իր տերության ամրոցները տանելը, իր հաստատվելը, մնալն ու նստելը գավառի լեռնային կողմում։ Այս բանը լսելով՝ շատ հարուստ ու բազմահանճար Վրաց Ատներսեհ թագավորը մի կողմ է դնում իր քեռորդու՝ Գուրգենի պատրաստ գործը, որ իր ձեռքի տակ կար։ Եվ թողնելով այդ մասին հոգալու մեկ այլ տեղում ու հարմար ժամանակ, հոժարությամբ իր մոտից անմիջապես ուղարկում է Հայոց Աշոտ թագավորին՝ Սահակ իշխանի գործը գլուխ բերելու համար։ Բայց նա իր զորքը թողնում է ետևում, իր թիկունքում և միայն մոտավորապես երեք հարյուր ընտիր մարդկանցով շատ շտապ գալիս հասնում է Զորոփոր։ Եվ նախ տեսնում են, որ Կայան կոչված բերդը հափշտակել է Սահակ իշխանը, և որ այնտեղի բանտում է գտնվում Սյունյաց տեր Վասակը, որին հանում ու արձակում է իր հոր տունը, ինչպես նաև ազնվական կանանց, որոնք նրա հետ էին որպես գերիներ։ Իր ամրոցի վրա պահակներ կարգելով՝ սա [զորքով] անցավ գնաց։ Նաև մյուս ամրոցը, որ գտնվում էր նրան մոտիկ, շտապ այն ևս գրավում է, բերդապահներին սրի բե-

իրեանց յամուրս տէրութեան իւրոյ, և զարտորայս նոցա, որ մերձ էր 'ի հունձս՝ տարաժամ զայն հնձեալ գերանդիւք և հրաբորբոք հրկիզեալ. զի մի՛ կուիցին կալ զետեղեալ 'ի նմա ոտք թագաւորին բնակութեամբ։ Արդ՝ իբրև զայնպիսին տեսանէր տաղտկալի տառապանս և զաղմուկ շփոթի զեղեալ հեղեալ զաշխարհաւ տէրութեան իւրոյ՝ այնուհետև ոչ զանգիտեալ 'ի բազմութենէ զօրաց իշխանին և ոչ զնուազունս իւր գունդ 'ի մտի եդեալ, չուէ գնայ 'ի հանդիպումն նոցա։ Վասնզի բանակեալ զետեղեալ կային 'ի ծործորս լեռնակի միոյ ըստ արևմտեայ կուսէ ձորոյն Տաւրշոյ, վարանեալ յափշտակել և ձգել յորոգայթս իւրեանց զթագաւորն։ Եւ անդ ապա գտեալ բլրակ մի, որ ունէր զինքեամբ քարաժեռ շրջապատ, ՛ի նմա ելեալ բանակէր զօրն ողջոյն և զգիշերն ամենայն։ Եւ պատգամ ապա զմի ոք եպիսկոպոսացն առ իշխանն Սահակ առաքէր ասելով. «Ո՞րպիսի ինչ չար, կամ զի՞նչպիսի ինչ վնաս առ 'ի յինէն քեզ բերաւ արդեամբք, զի փոխանակ այնր՝ արժանի 'ի քէն գտայ այսպիսւոյ իմն ծանր աղէտի, զոր տեսի գործեցեալ, և ոչ յետկար երդմանն քո ածէր զքեզ 'ի զղջումն. կամ ընդէ՞ր այժմ զրախնդիր լինիլ հեղուլ զարիւն իմ առանց բանի պարտապանութեան։ Բայց արդ՝ դարձ 'ի բարկութենէ այտի և դարձո 'ի բարիսն զ'ի նանիր թագուցեալ որոգայթ ապականութեանդ. և միայն զերկու ամրոցս զոր յափշտակեալ է քո՝ այսրէն տուր ինձ և զգաղթ աշխարհիս դարձո. և յայնհետէ եղիցի միաբանութիւն 'ի մէջ մեր՝ որպէս հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ։»

Իսկ իշխանն զայսպիսիս լուեալ բան պատգամի և ոչ պատասխանւոյ թերևս արժանի համարեալ. այլ ևս քան զևս մմռեալ՝ առ եպիսկոպոսն ասէր. «Դու նիստ աստ յիմում խորանի և ես առ նա սրով իմով չուեալ գնացից՝ վաղվաղակի զպատասխանին պատգամաց նմա հատուցից»։ Եւ զայս ասացեալ՝ զումարտակ զբոլոր զօրսն իւր առնէր աւելի քան զութ հազար արանց. և յառաջ կոյս մղեալ և հանդէպ բլրակին հորդան տուեալ, յորոյ վերայ կայր թագաւորն՝ հրամայէր հետևակամարտ գնդին վահանափակ լինել, որ տեսութիւն իմն բերէր յինքն որպէս զանպարտելի պարիսպ. և 'ի թիկանց կուսէ նոցա զհեծելազօր գունդն պատրաստէր՝ սպառազինեալս և վառեալս 'ի զէնս և 'ի զարդս. և առաջապահքն առաջի վահանափակ սպային սրավար երիվարօք խաղացեալ՝ յայսկոյս յայնկոյս երթային գային։ Իսկ յելանել արուսեկին փայլատակունք 'ի մերկապատեան վաղակաւորացն բազմութենէ հատանէին և 'ի սաղաւարտացն և 'ի թիկնապահ և 'ի լանջապահ պղնձի տախտակացն և 'ի պահպանակացն բարձիցն և բազկացն։ Իսկ զայնպիսին տեսեալ բազում զօրս կուռս վառեալս զիւրեաւ զեղեալ թագաւորան տալիս և երկրի բնակիչներին իրենց ունեցվածքով գաղթեցնում իր տերության ապահով տեղերը։ Եվ նրանց արտերը, որ մոտ էին հնձելուն, ժամանակից շուտ գերանդիներով հնձել է տալիս ու հրկիզում, որպեսզի թագավորը չկարողանա այնտեղ բնակվել, տեղավորվել ու կռվել։ Այսպիսով, երբ [թագավորը] տեսնում է այսպիսի տաղտկալի տառապանք ու իրարանցում՝ լցված ու սփռված իր տերության մեջ, այնուհետև չվախենալով իշխանի մեծ զորքից ու չհիշելով իր զորքի քիչ լինելը, նա գնում է հանդիպելու նրանց, որ բանակ էին դրել ու տեղավորվել Տավուշ ձորի արևմտյան կողմում գտնվող մի փոքր լեռան ծործորներում՝ իրենց թագավորին հափշտակելու և ծուղակը գցելու համար։ Այնտեղ գտնելով մի բլրակ, որ շրջապատված էր քարաժայռերով, ամբողջ զորքը բարձրանում է նրա վրա, բանակ դնում ու գիշերում։ Եվ եպիսկոպոսներից մեկին պատգամավոր է ուղարկում Սահակ իշխանի մոտ՝ ասելով. «Իրականում ի՞նչ չարություն կամ ինչպիսի՞ վնաս ինձնից հասավ քեզ, որ դրա փոխարեն ես քո կողմից արժանացա այսպիսի ծանր աղետի, որը տեսա կատարված, և ոչ էլ քո երդմնագիրը քեզ բերում է զղջման, կամ ինչո՞ւ այժմ դատարկ բաների հետևից ես ընկնում առանց որևէ հանցանքի թափելու իմ արյունը։ Այժմ ետ դարձիր քո այդ բարկությունից և դեպի բարին դարձրո՛ւ քո անտեղի թաքցրած ապականության որոգայթը։ Միայն քո հափշտակած երկու ամրոցը նորից տուր ինձ, վերադարձրո՛ւ իմ աշխարհի գաղթականներին, և դրանից հետո կլինի միասնական խաղաղություն մեր՝ ինչպես հարազատ հոր և սիրելի որդու միջև»։

Լսելով այսպիսի հրաման՝ իշխանը թերևս պատասխանի արժանի չի համարում, այլ է՛լ ավելի մոնչալով եպիսկոպոսի վրա՝ ասում է. «Դու նստի՛ր այստեղ, իմ վրանում, իսկ ես սրով կգնամ նրա մոտ և իսկույն նրա հրամանի պատասխանը կտամ»։ Այս ասելով՝ նա հավաքում է իր ամբողջ զորքը, ավելի քան ութ հազար մարդ և, առաջ մղվելով ու խուժելով դեպի բլրակը, որի վրա գտնվում էր թագավորը, հետևակ գնդին հրամայում է վահաններով փակել չորս կողմը, որը տեսքով նման էր անպարտելի պարսպի։ Իսկ նրանց թիկունքում նա կանգնեցնում էր հեծելազոր գունդը՝ սպառազինված զենքերով ու զարդերով։ Եվ առաջապահ զինվորները վահանափակ զորքի առաջ սրընթաց երիվարներով այս ու այն կողմ էին գնում-գալիս։ Իսկ երբ դուրս էր գալիս արուսյակը, մերկապատյան վաղակավորների բազմության սաղավարտները, նրանց թիկունքների, կրծքերի, բազուկների ու երանքների տախտակները փայլում էին կայծակի շողերի նման։ Իր շուրջը այսպես լավ սպառազինված տեսնելով նրա մեծ զորքին՝ թագավորը

ւորն՝ ապա և նա զհարիւրսն զիւր յետկոյս թողեալ, որ լքեալքն էին յերկայն ուղոյ ճանապարհաւն, միայն երկերիւրօքն իջանէր 'ի բլրակէն ընդդէմ նոցա։ Եւ անդ ապա տարածեալ զյետկար երդմանն իշխանին առաջի երեսաց Աստուծոյ՝ այսպէս և յինքեան ասէր. «Եթէ ես ինչ սխալեցի, կամ ստեցի այսմիկ երդման՝ հատո Տէր Աստուած զվնաս ստութեան իմոյ 'ի գլուխ իմ. և եթէ իշխանն ստունգանեաց սմա՝ 'ի նա հատուցեալ զվնաս իւր, փրկեա զիս 'ի տարապարտ մահուանէս, զոր նիւթեալ ածեն 'ի վերայ իմ»։ Եւ ապա զյետկար քարտին 'ի գրաստս խաչին սրբոյ կապեալ, զոր սովորն էր միշտ առաջի իւր շրջեցուցանել, յանկարծակի զմի զինուորութիւն երկերիւրք նոքա զինուորեալք և 'ի ձայն բարձր աղաղակեալք՝ ձի 'ի ներքս տանէին։ Եւ նախ ինքն իսկ յասպարիսին շահատակեալ և յական թօթափել իբրև հողմ ինչ զնոսա փոթորկեալ՝ և ոչ մի ոչ մնաց օք 'ի տեղիս ճակատուն. և ոչ բնաւ իսկ երկուք 'ի միասին 'ի նոցանէն գտանէին, այլ ցան և ցիր սփռեալ ընդ գլուխս կոհակացն և ընդ հովիտս և ընդ խորաձորս և ընդ անտառախիտ մայրիս, ոչ թերևս առ 'ի նոցանէն վրիպեալ օք 'ի փոքուէ մինչև ցմեծն, բայց միայն երկուք նոքա՝ իշխանն Սահակ և Գրիգոր որդի նորուն, զոր ձերբակալ արարեալ տանէին։ Եւ ապա զամբոցն առհասարակ զԳարդմանայ թագաւորն ինքն գրաւեալ և զրովանդակ աշխարհն յիւր անուն նուաճեալ հնազանդէր։ Իսկ ապա 'ի նանիր պակուցումն իմն երկիւղի մահու 'ի մտի եդեալ թագաւորին, զի թէ թողից, ասէ՝ զիշխանն և զորդի նորուն, զմահն իմ այս գուշակէ. և եթէ 'ի ղիպահոջ զայդպիսի երևելի արս կացուցից և զերծ յայլոց ձեռաց լինիցի դոցա, զորօրինակ Վասակայն, և այնպէս անշուշտ մահ իմ առ դուրս կայ։ Եւ այնպէս անխորհուրդ երկիւղիւ զդածեալ՝ կուրացուցանէ զաչս երկոցունց նոցա, ոչ առեալ 'ի միտ զայցելութիւնն Աստուծոյ, որ յայնմ նուագին զնա ապրեցոյց, թէ կարող ես է նոյն Աստուած ոչ տալ թոյլ զարձեալ դաւանս կրել 'ի խափանեալ երկիւղէն։ Եւ այսպէս գործեալ իր դառնութեան՝ անվստահ զսիրտ ամենեցուն կացոյց՝ 'ի բացէ 'ի նըմանէն տրոհեալ։ Բայց փոքր ինչ յառաջ քան զայս ոստիկանն Յուսուփ ապստամբութեամբ բազմաւ ընդվզեալ յիսմայէլեան ամիրապետէ և 'ի պարարտութենէ պորտոյն անդուշեալ՝ առաքէ ապա զոմն 'ի նախարարաց իւրոց ամիրապետն անհուն իմն զօրօք հրոսակ նմա, որ թէպէտև զմի նուագ և զերկուս ընդդէմ զինեալ՝ հարուածս 'ի վերայ արքունի զօրացն հասուցանէր. սակայն ոչ կարացեալ զդէմ ունել՝ ձերբակալ զնա առնէին, խաղացուցեալ տարեալ կապանօք վարեալ առ ամիրապետն։ Եւ այսպէս յայց ելեալ շնորհացն Աստուծոյ՝ փրկեաց զթագաւորն Գագիկ 'ի գազանական չարաբարոյ սպառնալեաց նորա։

հետևում է թողնում իր հարյուրավոր զինվորներին, որոնք հուսալքվել էին երկար ճանապարհի պատճառով, և միայն երկու հարյուրով է իջնում բլրակից նրանց դեմ։ Այնտեղ իշխանի երդմնագիրը փռելով Աստծու դիմաց, նա ինքն իրեն ասում էր այսպես. «Եթե ես ինչ-որ տեղ սխալվեցի կամ դրժեցի այս երդումը, Տեր Աստված, հատուցիր իմ ստուտ հանցանքը՝ իմ գլխով, իսկ եթե իշխանը դեմ գնաց դրան, նրան հատուցելով իր հանցանքի դիմաց՝ փրկիր ինձ այս անտեղի մահվանից, որ նյութելով գցում են ինձ վրա»։ Եվ ապա հրովարտակի ձեռագիրը գրաստի վրա սուրբ խաչին կապելով, որ սովոր էր միշտ իր առջևից ման ածել, նրանցից երկու հարյուրը հանկարծակի զինվելով ու բարձր ձայնով աղաղակելով՝ ձի են հեծնում։ Նախ ինքը գրոհում է հրապարակում ու ակնթարթորեն հողմի նման փոթորկում նրանց վրա, և ճակատամարտի տեղում ոչ ոք չի մնում։ Նրանք նույնիսկ երկուսով բնավ մեկտեղ չէին մնում, այլ ցանուցիր սփռվելով բլրակների գագաթներին, հովիտներում, խոր ձորերում, անտառներում, թերևս նրանցից ոչ մեկը՝ փոքրից մինչև մեծը, չի մոլորվում, բացի երկուսից՝ Սահակ իշխանից ու նրա որդի Գրիգորից, որոնց բռնում ու տանում են։ Եվ ապա թագավորը Գարդմանի ամբոցը ամբողջությամբ ինքն է գրավում ու ամբողջ երկիրը նվաճելով՝ իրեն է ենթարկում։ Իսկ հետո թագավորը մահվան երկյուղի նանիր ահը սրտում մտածում է. «Եթե իշխանին ու նրա որդուն բաց թողնեմ, ասում է, դա կգուշակի իմ մահը, իսկ եթե այդպիսի երևելի մարդկանց բանտում պահեմ, ապա նրանց կաղատեն ուրիշները, ինչպես, օրինակ, [վարվեց] Վասակը, և այդպիսով իմ մահը ստույգ դռան ետևում կլինի»։ Եվ այդպես անիմանալի երկյուղ կրելով՝ նա կուրացնում է նրանց երկուսի աչքերը՝ չըմբռնելով Աստծու նախախնամությունը, որն այն անգամ փրկեց նրան, եթե նույն Աստված ի վիճակի է թույլ չտալ դարձյալ խաբվելու խափանված երկյուղից։ Եվ այդպես դառն գործ կատարելով՝ բոլորի սիրտը կասկած գցեց ու նրանից հեռացրեց։ Բայց դրանից մի փոքր առաջ Յուսուֆ ոստիկանը մեծ ապստամբություն բարձրացնելով՝ ընդվզում է Իսմայելյան ամիրապետի դեմ։ Բայց բանի տեղ չդնելով այդ՝ ամիրապետը իր նախարարներից մեկին մեծ զորքով ուղարկում է նրա վրա, որը թեպետև մեկ-երկու անգամ զինվելով՝ արքունի զորքին մեծ հարված է հասցնում, սակայն չի կարողանում դրա դեմն առնել, նրան բռնում են և շղթայակապված քշում-տանում են ամիրապետի մոտ։ Եվ այսպես Աստծու շնորհը այցելելով Գագիկ թագավորին՝ նրան փրկեց նրա գազանական ու չարաբարո սպառնալիքներից։ Բայց երբ բրո-

Բայց իբրև կալան զՅուսուփ ըմբռնեալ լինէր յամիրապետէ անտի. ապա ոմն 'ի ծառայիցն յաւէտ իմն 'ի պատուաւորաց՝ Սբուկ անուն, որ իշխան և հրամանատար էր ամենայն տան նորա, բռնազբօսաբար տիրէր աշխարհի տէրութեան Յուսփայ։

Եւ յետ սակաւ աւուրց ապա և յամիրապետէն իսկ փոխանակ Յուսփայ ոստիկան հաստատեցաւ։ Եւ ապա նա ևս առաւել քան զՅուսուփ ըստ նմին սակի դնէր ուխտ միաբանական խաղաղութեան ընդ Աշոտի, և Շահանշահ զնա անուանէր։ Բայց ոստիկանն Սբուկ դեռևս ոչ մոռացեալ 'ի սրտէ զմախանս շար թունիցն, զոր 'ի թագաւորն Գագիկ հնարէին միշտ թափել՝ յետ ոչ բազում ինչ աւուրց հորդան իւրոյ զօրուն տուեալ, առաքէ զկողմամբք Ճուաշ գաւառի։ Որ թէպէտ բնակիչք գաւառին իրազգած յառաջագոյն շար հինին լինէին. սակայն ոչ կարացեալ սպառսպուռ գաղթիլ յամրոցսն, նոքա իբրև զկայծակն 'ի վերայ հասեալ և ասպատակս ընդ երեսս գաւառին սփռեալ՝ բազում աւարառութեամբ կապուտ կողոպուտ առնէին. այլ և զոչ կարացեալսն աճապարել անկանել յամրոցս վայրացն 'ի գերութիւն վարէին զներգևեալ արսն և զկանայս և զմատաղ մանկտի։ Իսկ ապա զայն տեսեալ թագաւորին Գագկայ և ըստ հանճարագիտութեան իւրում 'ի մտի եդեալ զոչ կարօղելն կալ ընդդէմ Սբուկայ մարտիւ պատերազմի՝ 'ի հնազանդութեան պայման ընդ նմա զբանս իւր փոխաբերէ։ Եւ ապա զոմն Գէորգ Հաւնունի 'ի կրօնաւորական կարգէ բազում ընծայիւք և պատարագօք առ ոստիկանն Սբուկ առաքէ, խնդրելով զհաշտութիւն առ 'ի նմանէ. որոյ առեալ և ընկալեալ՝ տայ յետկար երդման ոչ ևս յաւելուլ կալ 'ի նոյն ոխո՛ր միտս ընդ թագաւորին։

Եւ դադարեալ այսպէս ասպատակ հինին՝ հարթայարմար հանգչէին յաշխարհ տէրութեան թագաւորին Գագկայ 'ի կայս հանգստեան իւրեանց՝ յապահովացեալք յարտաքնոց յայնցանէ հրոսակաց։ Բայց յետ այսորիկ ստուգեալ մերկացեալ երևէր ապստամբութիւնն քանանիտ Գնթունւոյն Վասակայ, որում հաւատացեալ էր պահպանութիւն ամրոցին Շամշուլտէի. և ի դերև ելանէր նորայն խոկացեալ դաւաճանութիւն և թիկունս Աշոտոյ դարձուցանէր, որ Շահանշահն անուանէր. և անձնատուր ի Գուրգէն իշխան Վրաց լեալ՝ նմա զմեծ ամրոցն տալ խոստանայր, միայն թէ իւրում նահանգից տայցէ նմա այլ ևս ամրոցն Կրուստ քան զնա։ Իսկ նա զհայցեալն 'ի Վասակայ վաղվաղակի կատարեալ և յետկար երդման կնքեալ տայ տանել նմա. որոյ հաւատարիմ բան 'ի յերդմանն եղեալ և ելեալ յամրոցէն շուեալ գնայ առ իշխանն Գուրգէն։ Եւ վասնզի նախ քան զայս սպանաւ Աշոտ եղբայր Վասակայ 'ի սպայակոյտ զօրացն Վուրի աշխարհի. սակս այնորիկ 'ի ձեռն

նեցին Յուսուփին, նա բանտարկվում է այն ամիրապետի կողմից։ Հետո նրա պատվավոր ծառաներից մեկը՝ Սբուկը, որ նրա ամբողջ տան իշխանն ու հրամանատարն էր, բռնությամբ տիրում է Յուսուփի տերությանը։

Եվ մի քանի օր անց իր իսկ ամիրապետի կողմից Յուսուփի փոխարեն [նոր] ոստիկան է հաստատվում։ Նա էլ Յուսուփից առավել նույն կարգով խաղաղության ու միաբանության դաշինք է կնքում Աշոտի հետ՝ նրան անվանելով Շահանշահ։ Բայց ոստիկան Սբուկը, դեռևս իր սրտից չհանելով շար թույնի նախանձը, որ միշտ աշխատում էր թափել Գագիկ թագավորի վրա, ոչ այնքան շատ օրեր անց իր զորքը հանելով՝ առաքում է Ճվաշ գավառի կողմերը։ Գավառի բնակիչները թեպետ նախապես իրազեկ էին շար ավազակի մասին, սակայն բոլորը չկարողացան փախչել ամրոցները, [որովհետև] նրանք [թշնամիները] կայծակի նման հարձակվեցին, ասպատակեցին ամբողջ գավառը՝ մեծ ավար առնելով ու կողոպտելով։ Եվ ովքեր չկարողացան աճապարել ու ընկնել տարբեր վայրերի ամրոցները, նրանց՝ տկար տղամարդկանց, կանանց և մատղաշ երեխաներին, գերության են տանում։ Իսկ երբ այդ բանը տեսավ Գագիկ թագավորը և իր իմաստուն մտքով հասկացավ, որ անկարող է կռվով կանգնել Սբուկի դեմ, նրա հետ սկսեց խոսել հնազանդության պայմանով։ Եվ ապա հոգևոր դասից Գեորգ Հավնունի անունով մեկին բազում ընծաներով ու նվերներով առաքում է ոստիկան Սբուկի մոտ՝ նրանից խնդրելով հաշտություն։ [Նվերներն] առնելով ու ընդունելով՝ նա տալիս է երդմնագիր, որպեսզի այլևս թագավորի դեմ ոխակալություն չանի։

Եվ այդ ձևով ավազակների ասպատակությունները դադարելուց հետո Գագիկ թագավորի տերության մեջ բոլորը հանգիստ ապրում էին իրենց բնակատեղերում՝ ապահով լինելով արտաքին այդ հրոսակների [հարձակումներից]։ Բայց դրանից հետո բացահայտվում է քանանացի Վասակ Գնթունու ապստամբությունը, որին վստահված էր Շամշուլդե ամրոցի պահպանությունը։ Երբ գլուխ չի գալիս նրա մտածած դավաճանությունը, նա փախչում է Աշոտի մոտից, որը Շահանշահ էր անվանվում։ Եվ անձնատուր լինելով Վրաց Գուրգեն իշխանին՝ [Վասակ Գնթունին] խոստանում է նրան տալ մեծ ամրոցը, միայն թե նա իր նահանգից նրան տա Կրուստ ամրոցը։ Իսկ նա անմիջապես կատարելով Վասակի խնդրանքը և երդմնագիր կնքելով՝ տալիս է տանելու նրան։ Նա հավատարիմ լինելով երդմանը և դուրս գալով ամրոցից՝ շվում գնում է Գուրգեն իշխանի մոտ։ Եվ քանի որ նախքան այդ Վուրի աշխարհի հեծելազորի կողմից սպանվել էր Վասակի եղբայր Աշոտը,

ձեռասուն կրտսերացն իւրոց հաւատայ զամրոցն 'ի չուելն իւրում։ Իսկ 'ի հանդիպիլ սորա իշխանին Գուրգենայ՝ իսկ և իսկ առեալ զնա ընդ կրունկն անդէն դարձուցանէ, ածելով 'ի դուռն ամրոցին առ ինքն տալ հայցէր։ Իսկ պահնակք ամրոցին ոչ կամեցան տալ նախ քան զառնուլն առ ինքեանս զՎասակ։ Եւ իբրև մարտ ընդդէմ մարդկան ամրոցին իշխանն յարդարէր, վաղվաղակի ապա պահնակքն զգացուցին Շահանշահի. և նա աճապարեալ գայ յանբոկ գործոյն։ Եւ իբրև եկն 'ի տեղին՝ 'ի բաց քեցեալ եղև Գուրգէն 'ի դրանէ ամրոցին։ Բայց պահնակքն և ոչ առ նա ևս կամեցան տալ զամրոցն՝ մինչև առ ինքեանս առեալ իցեն զՎասակ. իսկ նա պատնէշ պաշարման շուրջ զամրոցաւն եղեալ 'ի ժամ դիպող առնուլ սպասէր։ Բայց Գուրգենի բազում երդմամբ ըզպահնակսն հաւանեցուցեալ վասն զՎասակ տալ ցնոսա՝ հրաւիրեցան ապա զօր առաքել, զի առ նոսա զամրոցն տայցեն։ Իսկ իշխանին առաքեալ իբրև արս երեք հարիւր քաջակորովս աղեղնաւորս և վահանաւորս և սուսերաւորս, որք իբրև հասին զվայրս մտից գաղտնի դրանն բացեալ նոցա՝ առհասարակ յամրոցն զեղան։ Իսկ մարդիկք ամրոցին՝ իմացեալ զմահառիթ նենգաւոր շունչ պատրանաց նոցա զոր հանդերձեալ էին կատարել, և 'ի բաց զներքնաբերդն լքեալ թողեալ, 'ի վերնաբերդ անդր համագունդ հորդան տային՝ սաստիկ մարտ ընդ զօրուն Գուրգենայ եղեալ, զի թերևս արտաքս զնոսա կարասցեն կորզել։ Իսկ Աշոտոյ ոչ գիտելով զգործ իրին՝ այսպէս նմա կարծեցեալ թուէր, իբր թէ ընդ միմեանս մարդիկ ամրոցին ընդհարեալք մարտնչին։ Եւ ապա ինքն իսկ արտաքուստ 'ի ներքս մարտ ընդ վերնաբերդն դնէր. իսկ նոցա բացագանչութեամբ ձայն վերուստ 'ի վայր զգացուցանէին արքայի զառարկուածսն իրին, իբր թէ վասն նորա առ 'ի նոցանէն այն բան պատերազմի ընդ սպային Գուրգենայ իրագործի։ Իսկ նա ձայն առ նոսա արձակէր, զի «Թէ վասն իմ, ասէ՝ նկրտիք յայդպիսի մրրցմունս, ասէ, ընդէ՞ր ոչ ինձ բացցի դուռնդ՝ զի ես մտից և դիւրեաւ վճարեցից զայդ հանդէս և բազմապարգև զձեզ արարից 'ի բոլոր բարութիւնս»։ Եւ ապա բացաւ նմա դուռն ամրոցին՝ և մտեալ իսկ և իսկ առհասարակ զզօրն Գուրգենայ ձերբակալ առնէ։ Եւ յետ փոքր ինչ աւուրց առհասարակ զամենեսեան զնոսա անպիտանս առնէ յաչաց և յընչոց և յականջաց։ Եւ այնուհետև ապա հիւսիսական ազգքն այնոքիկ ընդ ձեռամբ նորա նուաճեալ հնազանդէին 'ի ծառայութիւն, և ըստ աջողակ այցելութեանն Աստուծոյ երթալով երթայր և զօրանայր։

Յետ այսց եղելոց և գործեցելոց իրաց՝ դարձեալ անտի Շահանշահն կոչեցեալ գայ հասանէ յՈւտի գաւառ. և անդ ապա զնուաճեալսն ընդ ինքեամբ զաղխատրոյզն բանիւք համոզեալ, և եթէ ոք սիրէր զայ-

դրա համար երբ նա մեկնում է, ամրոցը վստահում է իր կրտսեր սաներին։ Իսկ երբ նա հանդիպում է Գուրգեն իշխանին, իսկույն վերցնելով նրան՝ այնտեղից ետ է դարձնում, բերում ամրոցի դռան մոտ և պահանջում այն իրեն տալ։ Իսկ ամրոցի պահակները չկամեցան տալ, մինչև որ իրենք չստանան Վասակին։ Երբ իշխանը կռիվ է սկսում ամրոցի մարդկանց դեմ, պահապանները անմիջապես հայտնում են Շահանշահին, և նա աճապարելով գալիս է գործը պլուխ բերելու։ Եվ երբ նա եկավ այդ տեղը, Գուրգենը հեռացվեց ամրոցի դռնից։ Բայց պահապանները ամրոցը նրան էլ չկամեցան տալ, մինչև որ իրենք չստանան Վասակին։ Իսկ նա շրջապատելով ու պաշարելով ամրոցը՝ սպասում էր հարմար պահի այն գրավելու համար։ Բայց Գուրգենը մեծ երդմամբ պահապաններին համոզում էր Վասակին նրանց տալ, ապա պահանջում են զորք ուղարկել, որպեսզի ամրոցը նրանց տան։ Իսկ իշխանն ուղարկում է մոտավորապես երեք հարյուր քաջակորով աղեղնավոր, վահանավոր ու սուսերավոր մարդկանց, որոնք երբ հասան, նրանց առաջ գաղտնի բացեցին մուտքի դռները, և նրանք բոլորը լցվեցին ամրոց։ Իսկ ամրոցի մարդիկ, ճանաչելով իրենց խարող մահառիթ ու նենգավոր շունչը, որ պատրաստել էին կատարել, և ներքին բերդը լքելով ու հեռանալով, հարձակվում են վերին բերդի վրա՝ սաստիկ կռիվ տալով Գուրգենի զորքի դեմ, որպեսզի թերևս կարողանան նրանց դուրս հանել։ Իսկ Աշոտը չիմանալով իրողությունը՝ կարծում էր, թե ամրոցի մարդիկ միմյանց հետ ընդհարվելով՝ կռվում են։ Եվ ապա ինքը դրսից կռվում էր վերին բերդի դեմ, իսկ նրանք վերևից ներքև բացականչելով՝ արքային հասկացնում էին հակասության պատճառները, որպես թե նրա համար է այդ պատերազմը իրենց կողմից իրագործվում Գուրգենի ազնվական զորքի դեմ։ Իսկ նա ձայն էր տալիս նրանց՝ ասելով. «Եթե ինձ համար եք ձգտում այդպիսի կռիվների, ապա ինչո՞ւ իմ առաջ չի բացվում այդ դուռը, որպեսզի ես մտնեմ ու հեշտությամբ կատարեմ այդ հանդեսը և առատորեն ձեզ տամ բոլոր բարիքները»։ Եվ ապա նրա առաջ բացվեց ամրոցի դուռը, և ներս մտնելով նա իսկույն ձերբակալում է Գուրգենի ամբողջ զորքին։ Եվ մի քանի օր անց նրանց բոլորին զրկում է աչքերից, քթերից ու ականջներից։ Այնուհետև հյուսիսային այդ ցեղերը, նվաճվելով նրա կողմից, հնազանդվում են ծառայելու նրան, և Աստծու հաջող նախախնամությամբ նա առաջ էր գնում ու հզորանում։

Այս դեպքերը կատարվելուց հետո դարձյալ այն Շահանշահ կոչեցյալը գալիս-հասնում է Ուտի գավառը։ Այնտեղ իր ձեռքի տակ նվաճվածներին նա համոզում էր խառնակ խոսքերով, և եթե մեկը սի-

տումն խորհրդոց ապիրատութեան՝ նշմարէր զայն. և որպէս սանձիւք ոմամբք բարեզգեաց բանիւք 'ի բաց ճնշեալ զխեցբեկագոյն բարս նոցա՝ ածէր ընդ ինքեամբ 'ի հաստատուն խորհուրդս։ Եւ ապա զօր 'ի նոցանէ գումարեալ՝ շուէր գնայր երթեալ հասանէր 'ի կողմ Կոտայս գաւառի. և իսկ և իսկ հրովարտակ յառաջընթաց անտի առաքէր առ միւս ևս կոչեցեալն Աշոտ, որ Թագաւորեալն էր՝ որդի հօրեղբօր նորուն. զի նախնականն իւրեանց բնականօքն շարժմամբ բարոյականին առ 'ի յօգտակար վայելսն ճեպիցին գալ հանդիպիլ միմեանց սիրոյ և խաղաղութեան արգասեօք, և տիրական կեանք նոցա հասարակաց մի՛ անխնամեսցին, և աշխարհ նոցա մի՛ եղիցի խոպանացեալ սպառսպուռ փշաբեր և մացառախիտ և լինել 'ի դադարս ելուզակաց։ Սապէս և առ իս ևս յետկար գրոյ տուեալ, զի մի՛ դանդաղիցիմ երբէք երթալ դիւրել պատրաստել 'ի մէջ նոցա զքաջավայելուչ խաղաղութեանն պայման. և մի՛ տայցեմ թոյլ զթագուցեալ հաղբսն և զվատթարութիւն խռովութեանն յինքեանս շաղաշարել։

Իսկ Թագաւորն Աշոտ ևս հաւանական միտս ստացեալ և սիրով սրտի զբանն ընկալեալ և վաղվաղակի չու յուղի անկեալ՝ երկաքանչիւրք մեք չոգաք 'ի հանդիպումն անուանեցելումն Շահանշահի։ Եւ անդ ապա իմով թելադրութեամբ և բանի խրատու, որ դիմեալ 'ի լսելիս լսողացն հանգչիւր՝ զպաշարումն մառախլապատ և միգապատ ափշութեան մտաց շարին յանձանց 'ի բաց մերկացեալ՝ ամենայն իրօք յարակցէին յինքեանս զկատարեալ խաղաղութեանն դաշինս առհաւատչեայ երդմամբ զնոյն հաստատել։ Եւ իսկ և իսկ երկաքանչիւրք նոքա՝ եկեալ հասեալ 'ի դուռն մայրաքաղաքին Դվնայ և անդ զմոլորութիւն պաշտօնէիցն հեթանոսաց յինքեանս գրաւեալ՝ ընդ ձեռամբ նուաճէին և բազում կայտիռս և խնճոյս ցնծութեան զմիմեամբք զեղեալ. և ընդ կրունկն դարձեալ Շահանն կոչեցեալ շահ՝ խաղայ գնայ անդէն 'ի սիրեցեալն իւր յՈւտի գաւառ։ Եւ մինչդեռ զճանապարհայն երթայր, ձայն գուժի աղմկի ընդառաջ եղև նմա 'ի նմին իսկ յայնմ մարզէ. զի Ամրամն այն անուանեալ՝ որ ըստ ուժեղականութեան Յլիկ 'ի բազմաց յորջորջէր, և զնա իսկ էր կացուցեալ Շահանն շահ հրամանատար 'ի վերայ գործոյ աշխարհին, իսկ նա չարիմացութեամբ 'ի մութ թաթաւեալ և այլապէս զինքն կերպարանեալ՝ 'ի բաց որոշէր 'ի հնազանդութենէ Շահանն կոչեցեալ շահի, և լքեալ խոտեալ անարգեալ զբնիկ տէրութիւն իւր՝ հաճէր հաւանէր մտանել ընդ լծով ծառայութեան անբնիկն Գուրգենայ, որ իշխան իշխանաց էր Գամրաց աշխարհին. նա և զայլս ևս զբոլոր նախարարութիւն այնմ նահանգի դոյթ ընդ ինքեան տուեալ

բրում էր ապիրատ մտքերը ուռճացնել, նա նկատում էր այն։ Ոմանց սանձելով բարի խոսքերով՝ նա զսպում էր նրանց աղճատված բնավորությունը և գցում իր ազդեցության տակ հաստատուն խորհուրդներով։ Եվ ապա նրանցից զորք գումարելով՝ գնում հասնում է Կոտայք գավառի կողմը։ Եվ այնտեղից իսկույն իրենցից առաջ հրովարտակ է ուղարկում մյուս նույնպես Աշոտ կոչեցյալին՝ նրա հորեղբոր որդուն, որը Թագավորում էր, որպեսզի իրենց նախկին բարեսեր բուն շարժմամբ շտապեն դեպի օգտակար վայելքները՝ գալու և միմյանց հանդիպելու սիրո ու խաղաղության գործով։ Եվ թող նրանց բոլորի տիրական կյանքը չանտեսվի, նրանց աշխարհը խոպանացած, բոլորովին փշաբեր ու մացառախիտ չլինի և ելուզակներից հանգիստ մնա։ Այսպիսի գրություն տվեց նաև ինձ, որպեսզի ես երբեք չուշանամ գնալ և նրանց միջև դյուրաբար քաջավայելուչ խաղաղության դաշինք հաստատել, ինչպես նաև թույլ չտամ, որ նրանք թաքուն որոդայթ ու վատթար թշնամություն պատրաստեն։

Աշոտ Թագավորը ևս համաձայնվում է, այդ խոսքերն ընդունում սրտի սիրով ու իսկույն ճանապարհ է ընկնում, և մենք երկուսով գնացինք հանդիպելու վերոհիշյալ Շահանշահին։ Եվ այնտեղ իմ թելադրանքով ու խրատական խոսքերով, որոնք լսողների ականջներին էին հասնում, ես նրանց միջից դուրս հանեցի չարի ապուշ մտքի մառախլապատ ու միգապատ պաշարումը։ Եվ նրանք ամեն ինչով միանում էին կատարյալ խաղաղության դաշինքին՝ հավատարիմ խոստմամբ ու երդմամբ այդ նույնը հաստատելով։ Եվ իսկապես նրանք՝ երկուսն էլ, գալիս հասնում են Դվին մայրաքաղաքի դուռը և այնտեղ պաշտամունքով մոլորված հեթանոսներին իրենց կողմը գրավելով՝ իրենց էին ենթարկում և միմյանց հետ անում էին մեծ խնջույք ու ցնծություն։ Եվ Շահան կոչված շահը ետ է դառնում ու այնտեղից շարժվում գնում է իր սիրած Ուտի գավառը։ Եվ մինչդեռ նա իր ճանապարհն էր գնում, այն երկրից նրան հասավ գուժի ձայն, որ այն Ամրամ կոչեցյալը, որը իր ուժեղության համար շատերի կողմից հորջորջվում էր Յլիկ [անունով], և Շահանշահն էլ հենց նրան էր հրամանատար կարգել երկրի գործերի վրա, իսկ նա չարամտորեն մթան մեջ թաթախվելով ու իրեն այլ կերպարանքով ներկայացնելով, դուրս է գալիս Շահան կոչված շահի հնազանդության տակից։ Եվ լքելով, արհամարհելով, անարգելով իր բնիկ տերությունը՝ նա ցանկանում ու համաձայնվում է մտնել ոչ բնիկ՝ Գամիրի աշխարհի իշխանաց իշխան Գուրգենի լծի տակ։ Եվ այդ նահանգի մյուս բոլոր նախարարների հետ միասին հարձակվելով՝ նա նույն

'ի նոյնն յարդարէր ապստամբութիւն։ Եւ ապա առձեռնպատրաստ զամբոցն Տաւրշոյ առեալ՝ 'ի նմա ամբապահեստ առնէր զընտանիս տան իւրոյ. զի ինքն և իւրքն պարապորդ գտեալ՝ ժամանեցեն ամբառնալ զինքեանս յանրակ գործոյն և զթագուցեալ հաղբսն դիւրեաւ վճարել։

Իսկ Աշոտ երթեալ չուեալ գնացեալ հասեալ յաշխարհն Ուտիացւոց և տեսեալ, զի առհասարակ յետսկոյս առ 'ի նմանէն մղեալ անցեալ զանցեալ և թիկունս դարձուցեալ էին, և ոչ ոք այնուհետև գտաւ նմա օգնական՝ բայց 'ի սակաւուց ոմանց աննշանից։ Այսպէս ահա բացածանօթացեալ նմա աղէտք իրին՝ ապա դէմ եդեալ տարադէմ գնայ չուէ առ թագաւորն Եղերացւոց, վստահս սրտի տուեալ աներկբայ յուսով առեալ զնախնի սիրոյն դաշինս, զի թերևս պտուղս ախորժելիս նմա առ 'ի նմանէն հնձեսցի։ Իսկ թագաւորն Եղերացւոց զհանդիպումն Աշոտոյ բազմաբաշխ ձեռաձրիւք և սիրալիր սրտիւք ընկալեալ՝ ամենայնիւ յամենայնի յարակցէր նմա 'ի բոլոր սրտէ և յանձնէ և 'ի զօրութենէ։ Եւ ապա զմեծն տուեալ նմա օգնականութիւն և զօր բազում գումարեալ՝ գրեթէ իբր օդապարիկ իմն երիվարօք և երկաթակուռ զրահիւք և զարհուրեցուցիչ սաղաւարտիւք և լանջապանակ երկաթագամ տախտակօք կրծից և վահանօք ամրօք և 'ի ղէնս և 'ի զարդս և 'ի տէգս նիզակաց վառեցելովք՝ տայ զայն ամենայն 'ի ձեռս նորա, զի նոքօք հանդերձ վրէժս 'ի թշնամեացն առցէ։ Իսկ նա վաղվաղակի սպայակոյտ գնդիւն տարմաբար իմն եկեալ հասեալ և իբրև զմի այր զբազումս ընդ ինքեան խրախուսեալ՝ կարծէր կարել կարկատել մօտ ընդ հուպ զելն իրին և զղէն զինուորութեան իւրեանց առ ձեռն 'ի թշնամիսն թափել։ Այլ Ամրամն այն՝ Ցլիկն յորջորջեալ, և ընդ նմա այլ ևս ապստամբ սրիկայքն զօր բազում յօգնականութիւն իւրեանց յամենայն ուստեք գումարտակ արարեալ՝ որջացեալ ամրացեալ կային 'ի մէջ անտառախիտ մայրեացն առ ափն Կուր գետոյ։ Իսկ Աշոտոյ իբրև ոչ յաջողեցաւ մարտ ընդդէմ թշնամեացն յարդարել գնել, ապա և ինքն հորդան իւրոյ զօրուն տուեալ՝ անխորհրդաբար անկանէր յանձուկ և 'ի նեղուց վայրս ամրոցի միոյ. զի ոչ ումեք լինէր հնար եւանել 'ի տեղւոջէ ծանի առնել սակս շուրջանակի մացառախիտ մօրացեալ թաւալոցացն, բայց 'ի միոյն յայն 'ի նեղ և յանձուկ վայրացն՝ որ մտինն։ Եւ այսպէս կամաւ իբրև 'ի բանտ ըմբռնեալ՝ ոչ բաւէին կարել արտաքուստ 'ի ներքս առնուլ ոռճիկս յուտել, կամ ջուր 'ի զովացումն, կամ խար երիվարաց. և 'ի խորհրդոցն անհաստատութենէ նեղեալք տառապեալ տագնապեալ տարակուսեալ լինէին առ հասարակ զօրքն ամենայն։ Եւ այսպէս զմիտս իւրեանց թուլացուցեալ՝ բանս գաղտնիս յունկն թշնամեացն արկանէին. զի զԱշոտ կալեալ կապեալ տայցեն նոցա, և իւրաքանչիւր նոքա ա-

ապստամբությանն էր պատրաստվում։ Եվ ապա անմիջապես գրավելով Տավուշ ամրոցը՝ նա ապահով կերպով այնտեղ է պահում իր տան անդամներին, որպեսզի ինքը և յուրայինները, պարապ մնալով, ժամանեն ու կարողանան գործը գլուխ բերել և թաքցրած որոգայթներն էլ հեշտությամբ վերացնել։

Իսկ Աշոտը, երբ գնում հասնում է ուտիացիների աշխարհը, տեսնում է, որ բոլորը իրենից երես են թեքել, անցել-գնացել ու փախել են, և դրանից հետո նրան ոչ մի օգնական չգտնվեց, բացի մի քանի աննշան մարդկանցից։ Երբ նրան անհայտ են մնում այդ դեպքերն ու աղետները, դիմում է օտարության և գնում է եղերացիների թագավորի մոտ՝ աներկբա հույսով իր հետ ունենալով սիրո նախկին դաշինքը, որպեսզի թերևս իրեն ախորժելի պտուղներ քաղի նրանից։ Իսկ եղերացիների թագավորը, հանդիպելով Աշոտին ու նրան ընդունելով բազմապատիկ պարգևներով, սիրալիր սրտով, ամեն ինչով ու ամեն բանում ամբողջ սրտով, մարմնով ու զորությամբ միանում էր նրան։ Եվ ապա նրան տալով մեծ օգնություն ու գումարելով մեծ զորք՝ գրեթե օդագնաց երիվարներով, երկաթակուռ զրահներով, զարհուրեցուցիչ սաղավարտներով, լանջապանակ երկաթագամ տախտակներով, ամուր վահաններով, զենքերով, զարդերով ու նիզակների տեգերով սպառազինվելով՝ այդ ամբողջը տալիս է նրա ձեռքը, որպեսզի նրանց միջոցով թշնամուց վրեժ առնի։ Հեծելազնդով խմբովին անմիջապես գալով ու հասնելով և շատերին մի մարդու նման խրախուսելով՝ նա մտածում էր կարել-կարկատել մոտակա դեպքերի ելքը ու անհապաղ իրենց զենքը թափել թշնամիների վրա։ Բայց այն Ամրամը, որ Ցլիկ էր հորջորջվում, և նրա հետ նաև մյուս ապստամբ սրիկաները, ամենուրեք իրենց օգնող շատ զորք հավաքելով, բուն էին դրել ու ամրացել ծառախիտ անտառում, Կուր գետի ափին։ Իսկ երբ Աշոտին չի հաջողվում թշնամու դեմ կռիվ տալ, ապա իր զորքը ճանապարհ հանելով՝ ինքն անմտաբար ընկնում է մի ամրոցի անձուկ ու նեղ տեղերը։ Եվ ոչ ոք չէր կարողանում դուրս ելնել շուրջը մացառախիտ ու տղմոտ լինելու պատճառով, բացի միայն նեղ ու անձուկ այն տեղից, որ նրանք մտան։ Եվ այդպես կամավոր կերպով իբրև բանտում փակվելով՝ նրանք չէին կարողանում դրսից ներս բերել մթերք՝ ուտելու համար, կամ ջուր՝ հովանալու համար, կամ էլ կեր՝ երիվարների համար։ Եվ ամբողջ զորքն առհասարակ նեղվում էր, տառապում, տարակուսում անհաստատ մտքի պատճառով։ Եվ այդպես թուլացնելով իրենց կամքը՝ իրենց գաղտնի խոսքերը թշնամու ականջն էին գցում, որպեսզի Աշոտին բռնեն, կապեն ու տան նրանց ձեռքը, և իրենցից յուրաքանչյուրը, անվնաս կերպով դուրս ել-

ռանց ամենայն վնասուց ելեալ չուեալ գնացին յիւրաքանչիւր տեղիս։ Այսմ իրազեկ Աշոտի լեալ և ահիւ բազմաւ ըմբռնեալ՝ առ ինքն լռելեայն զմերձաւորսն և զխորհրդածուսն իւր կապակցէր դաշանց երդմամբ. և իբրև օդապարիկ իմն սրավար երիվարս պատրաստեալ՝ յեղակարծումն ժամու զմէջ գիշերաւն հեծեալ հատեալ ընդ մէջ սպայակոյտ զօրուն անցեալ գնաց՝ դէմ եղեալ յամրոցն, որ կոչի Կաքաւաքար, և անտի ուր յաջողեսցի երթալ։ Զայն տեսեալ Թշնամեացն և զկիրճն մտիցն տեղւոյն այնմ պաշարմամբ կալեալ՝ առհասարակ զզօրսն կապուտ կողոպուտ առնէին, մինչ զի ոչ մի ոք 'ի նոցանէն կարէր ճողոպրել. բայց միայն մարդասիրեալ 'ի նոսա, որպէս և քրիստոնէից իսկ կարգք պահանջեն զի մի՛ ոք մեռցի 'ի նոցանէն և մի իսկ։ Եւ ապա յայնմ օրէ հետէ և անդր ոչ յաջողեցան հետեանք արշաւանաց Աշոտի որպէս յերեկն և յեռանդն։ Թուի ինձ եթէ զողջախոհութիւնն զայն՝ զոր նախն էր ստացեալ, յանմաքուր բղջախոհութիւն փոխարկեալ և զքաղցրութիւն պաշտամանն Աստուծոյ յանձնէ 'ի բաց վարատեալ, և ըստ օրինակի Փարիսեցւոյն զանբարտաւան կամս կամեցուցեալ իւր, վասն այնորիկ թերևս դատապարտեալ անկանէր՝ ոչ ժամանեալ 'ի կատարս փրկութեան իւրոյ։

Բայց թագաւորն Դագիկ՝ աստանօր իբր զվճիտ իմն միտս զդաստս ստացեալ ինքեան մաքուր խորհրդով, զանգոյս 'ի գոյ ածէր և զմերձակայն իւր կեանս յօգուտ բազմաց դաստիարակէր. վասն զի նկարէր միշտ 'ի սրտի իւրում 'ի շարութենէ անխզելի մնալ և առ նմանութիւն ստացողին մերձ գոլ, և ըստ առաքելական բանին. «Եթէ հնար ինչ լիցի՝ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն ունել»։ Այսպէս ապա սովորակի իմաստութեամբն հաճէր հաւանեցուցանէր զբագձաձեալ դրացիս իւր և զմերձաւորս՝ լաւակամ համամիտ համախոհութեամբ 'ի սէր իւր և 'ի հնազանդութիւն կապակցելով և բարգաւաճանս հարուստս առ թշնամիսն ցուցանէր սիրելի եղբարքն իւրով Գուրգենաւ, և այլ ևս համազգեօք և առ 'ի յիւրմէն համապատուելովքն։ Զոմանց ձեռաձիր ընծայիւք զմիտս հաճեալ հաւանեալ ըստ համբաւոյ խաղաղութեան. իսկ այլոց խժականաց և անզգաստից ատեցողացն զբարիս յեղափոխ պատերազմաւ և մարտիւ ամբոխից 'ի դիմի հարեալ՝ 'ի հարկէ յոտին կացուցանէր։ Այլ և զահ երկիւղի ամիրապետին ոչ զանխլանայր, այլ ըստ ակամայ հարկիցն սակի հաճէր հաւանեցուցանէր պարտավճար լեալ բռնադատին. և առ վշտի վտանգին ուսեալ զհնարաւորութիւն, զի զապրուստ անձին և զբազմաց օգուտ գտանել մարթասցէ։ Եւ ամս հարուստ մի զայս արարեալ՝ սուրբ հիմունք եկեղեցւոյ անվրդով մնացեալ կանգնելով մեկնի-գնա իր տեղը։ Դրան իրազեկ լինելով ու մեծ վախով բռնվելով՝ Աշոտը իր մերձավորներին ու խորհրդատուներին լռելյայն կապում է իր հետ դաշինքի երդմամբ։ Եվ երբ պատրաստում է օդապարիկ ու սրընթաց երիվարներ, գիշերվա կեսին անսպասելիորեն ձի հեծնելով, հեծյալ գնդի միջով կտրելով-անցնելով՝ նա գնաց դեպի այն ամրոցը, որ կոչվում է Կաքավաքար, իսկ այնտեղից գնալ, ուր հաջողվի։ Թշնամիները, այդ բանը տեսնելով և այդտեղի մուտքի կիրճը պաշարելով ու պահելով, առհասարակ կողոպտում էին զորքին, այնպես որ նրանցից ոչ ոք չէր կարող ճողոպրել, բացի միայն նրանցից, ում գթում էին, ինչպես քրիստոնյաների կարգերն են պահանջում, որ նրանցից ոչ ոք, ոչ մի մարդ չպետք է մեռնի։ Եվ այդ օրվանից հետո Աշոտի արշավանքները հաջողություն չունեցան, ինչպես երեկ և անցյալ օրը։ Ինձ թվում է, որ այն ողջախոհությունը, որ նա սկզբից էր ստացել, փոխարկելով անմաքուր բղջախոհությամբ, իրենից հեռացնելով Աստծու քաղցր պաշտամունքը և փարիսեցիների[118] նման դրսևորելով իր ամբարտավան կամքը՝ թերևս այդ պատճառով էլ դատապարտվեց՝ չհասնելով իր փրկության վերջին։

Բայց Դագիկ թագավորը, մաքուր խորհրդով այստեղ դրսևորելով հստակ ու զգաստ միտք, անգոն վերածում էր գոյի և իր մերձակայքում եղողներին դաստիարակում էր օգտակար բաների համար, քանի որ նա միշտ իր մտքում պատկերացնում էր չարությունից անվնասելի մնալ ու մոտիկ լինել ստացողի [արարիչի] նմանությանը՝ ըստ առաքյալի այն խոսքի, թե «Եթե հնարավոր լինի, [պետք է] բոլոր մարդկանց հետ խաղաղություն պահպանել»[119]։ Այսպես սովորական իմաստությամբ նա հաշտեցնում ու համաձայնեցնում էր իր բովանդակ հարևաններին ու մերձավորներին՝ լավակամ ու համամիտ համախոհությամբ, սիրով ու հնազանդությամբ նրանց կապելով իր հետ, իսկ թշնամիների նկատմամբ մեծահոգություն էր ցուցաբերում իր սիրելի եղբայր Գուրգենի և նաև իր կողմից պատվի արժանացած համազգիների հետ միասին։ Ոմանց իր ձեռքով ձրի նվերներ տալով՝ հաշտեցնում էր, համաձայնեցնում խաղաղության հռչակման համար, իսկ բարին ատող մյուս հեթանոսներին ու չխրատվողներին փոփոխական պատերազմներով ու ամբոխի կռվով հարվածելով՝ բռնի կերպով ոտքի է կանգնեցնում։ Բայց նաև ամիրապետի ահն ու երկյուղը անհայտ չէր մնում, և նա հարկադրված համաձայնեցնում էր՝ պարտահատույց լինելով բռնակալին։ Եվ վտանգի համաձայն ուսումնասիրում է հնարավորությունը, որպեսզի իր համար ապրուստ և շատերի համար էլ օգտակար բան կարողանա գտնել։ Եվ մի ամբողջ տարի այսպես անելով՝ եկեղեցու սուրբ հիմքերը կանգուն էին մնում։ Եվ աշխարհի ապահովության հա-

նէին. և շինութիւն և խաղաղութիւն և նորոգութիւն և յապահովութիւն աշխարհի բնաբար բերիւր. և լիութիւն և պտղաբերութիւն 'ի շնորհացն Աստուծոյ պարգևէր, և իբրև յանքոյթ իմն նաւահանգստի, այսպէս զետեղեալ բնակէին 'ի կայս հանգստեան իւրեանց, և ըստ իմաստնոյն բանի. «Գովեցաւ իմաստութիւն յելս ճանապարհաց, և առ դրունս հզօրաց յաճախեաց զբարբառ իւր»։

Իսկ ապա յայնմ վայրի ոչ սակաւ ինչ խուժան շփոթից 'ի վերայ հեղոյր Հագարացւոյն բռնակալի՝ որ ամիրապետն անուանէր. վասնզի հակառակորդ թշնամիք նորա յայտ եկեալք յԵգիպտական նահանգէն 'ի կողմանց Արաբացւոց և յայնմ մարզէ Թուրքաստանի մարտամբոխ հեծելազօրք և սրիկայք և սրավարք 'ի միասին հորդան տուեալք քինախնդիր լինէին՝ վրէժս ջանային առնուլ 'ի բռնադատէ անտի յաղագս նեղութեանն որ առ 'ի նմանէն նոցա բերիւր։ Եւ ապա շուրջ զթագաւորանիստ քաղաքաւն Բաբիլոնիւ և գրեթէ 'ի բոլոր աշխարհս տէրութեան նորա զեղեալք՝ բազում բախմունս պատերազմաց սաստկապէս յարդարէին. և հեղմամբ արեանց կոտորելոցն ոռոգանէին զառաստրեան զամենայն և զբազումս գերի առեալ տանէին. և զշէն զապատ գաւառաց և աւանաց անապատ առնէին։ Իսկ հրամանատարք և խորհրդածուք դրանն արքունի զայնպիսի հասեալ կալեալ աղէտս տեսեալ՝ զպատճառս վնասուն արկածից զմիմեանսքք արկանել ճեպէին. և ապա կոյս մի ընդ միւսոյ կուսին մուրացի ընդհարեալ, ապա և ռամիկ խռովչացն ևս 'ի հանդիսի անցեալ գրգռէին զաղմուկ. և ապա այնուհետև այր իւրաքանչիւր զսուր յազդեր կապեալ՝ բազում ճապաղիս արեան 'ի միմեանց հեղուին։ Եւ յիրաւի թմբրութիւն շարեաց անզգամութեան նոցա զողկոյզս դառնութեան լեզուոյ ճմլէր 'ի հնձանս Սոդոմայ։ Աստ ապա ոմն խորհրդածու դրանն արքունի՝ որում անունն Մոնոս յիւրեանց լեզուն ճանաչէր, 'ի մէջ անցեալ խորհուրդ ընդ ամիրապետին դնէր հնարիմաց փաստաբանութեամբ, զի զոստիկանն Պարսից, Հայոց և Վրաց և Աղուանից զՅուսուփ, զոր ինքնին իսկ էր կալեալ և ածեալ ամիրապետին, հայցէր արձակել 'ի պաշարմանէ բանտին և 'ի կապրանէն և 'ի նոյն առաջին գահ նահապետութեան հաստատել. վասնզի այր հանճարեղ է, ասէ՝ նա և այր պատերազմող և հոյակապ և ահարկու լսողացն զնա և տեսանողացն. և ասէ, թէև անցեալ է ընդ կորզան կրթանի խրատու ձերոյ առ 'ի շմեղանչել և 'ի չշեղել դարձեալ ապըստամբութիւն. և նովաւ դադարին յարձակմունք և հէնք թշնամեաց 'ի կուսակալութեան պետութեան իւրոյ։ Եւ այսպէս համոզեալ զամիրապետն և զհրաման ընկալեալ՝ այնուհետև հանեալ արձակէ և առաքէ

մար շենութիւնը, խաղաղութիւնն ու նորոգումն ընթանում էին բնականորեն։ Աստծու շնորհներից պարգևվում էին լիութիւն ու պտղաբերութիւն, և իբրև ապահով նավահանգստում տեղավորվելով՝ բնակվում էին իրենց բնակատեղերում՝ ըստ այն իմաստուն խոսքի, թե «Իմաստությունը մեծարվեց ճանապարհների վերջում, և հզորների դռների մոտ հաճախակի կրկնեց իր խոսքը»։

Իսկ հետո այն վայրում քիչ խառնակություն ու իրարանցում չէր թափվում հագարացի բռնակալի վրա, որ ամիրապետ էր անվանվում, քանի որ նրա հակառակորդներն ու թշնամիները, գալով եգիպտական նահանգից, Արաբիայի կողմերից և Թուրքաստանի այն մարզից հեծյալ զորքը, սուսերավոր ավազակները, սրընթաց զինվորները միասին հորդալով, քինախնդիր էին լինում և ձգտում էին վրեժ առնել բռնակալից այն նեղության համար, որ նա պատճառեց իրենց։ Եվ ապա լցվելով Բաբելոն թագավորանիստ քաղաքի շուրջը ու նրա տերության գրեթե բոլոր երկրներում՝ նրանք բազմաթիվ սաստիկ բախումներ ու պատերազմներ էին հորինում։ Սպանվածների թափած արյամբ ոռոգում էին շատ վայրեր, շատերին էլ գերի էին տանում և շեն ու ապատ գավառներն ու ավանները անապատ էին դարձնում։ Իսկ արքունի դռան հրամանատարներն ու խորհրդատուները, երբ հասնում ու տեսնում են այդպիսի աղետներ, շտապում էին նման պատահարների ու վնասների պատճառները իրար վրա գցել։ Եվ ապա մի կողմը մյուս կողմի հետ բռունցքով ընդհարվելով, այնուհետև մտնելով հրապարակ՝ նրանք գրգռում էին նաև ռամիկ խռովարարներին, ինչպես նաև յուրաքանչյուր մարդ, սուրը ազդրից կապելով, մեկը մյուսից շատ արյուն էին թափում։ Եվ հիրավի նրանց անզգամության շար թմբրությունը Սոդոմի հնձանում ճմլում էր լեզու դառն ողկույզները։ Այստեղ արքունի դռան մի խորհրդատու, որի անունը իրենց լեզվով Մոնոս էր, խոսելով ամիրապետի հետ, հնարագետ փաստեր էր մեջ բերում, որ Պարսից, Հայոց, Վրաց և Աղվանից ոստիկան Յուսուֆին, որին հենց ինքն էր բռնել-բերել ամիրապետի մոտ, խնդրում էր արձակել բանտից ու կապանքներից և հաստատել նույն առաջին նահապետության գահի վրա, քանի որ, ասում է, նա հանճարեղ մարդ է, կռվող, հոյակապ ու ահարկու լսողների ու տեսնողների համար։ Նաև ասում է, թեև նա անցել է ձեր խրատներից ու փորձից՝ չմեղանչելու ու դարձյալ չթեքվելու դեպի ապստամբությունը, բայց նրա միջոցով դադարում են թշնամիների ու ավազակների հարձակումները իր պետության կուսակալությունում։ Եվ այդպիսով համոզելով ամիրապետին ու հրաման ստանալով՝ հետո նրան դուրս է հանում և զորքով ուղարկում [նստելու] իր կուսակա-

զնա գումարտակաւ զօրու յառաջին գահ կուսակալութեան իւրոյ։ Եւ այսպէս ձեռնընդել Մոնոսն զՅուսուփն իւր առնէր՝ և համակամ համախոհ և կամարար իւր և օժանդակ 'ի Թշնամիսն իւր թափել զթոյնս վրիժուց շարութեանն։

Իսկ նա իբրև զուռուցիկ փքոյ շփոթեալ՝ և վարդիչ իմն օդով սրավարեալ՝ և յորդաշու լեալ ընդ Միջագետս Ասորւոց և ընդ այլ ևս բազում օթևանս անցեալ զանցեալ՝ գայ հասանէ վաղվաղակի յաշխարհն Կորդուաց։ Բայց թագաւորն Գագիկ վաղվաղ նախ ուրեմն իրազգած լեալ նորայն գալստեան՝ և առհասարակ աշխարհի տէրութեանն իւրոյ հորդան տուեալ 'ի փախուստ՝ ընդ ինքեան առեալ տանէր զգաղթ կայուանին և ամրացուցեալ զնոսա 'ի ծործորս լերանցն Կոգովտի և Ծաղկոտան՝ 'ի մտի գնէր զմխիթարութիւնն՝ որ առ 'ի նմանէ բերիւր։ «Զի թէպէտև սոսափեալք յեղափոխութեամբք շարժիցիմք՝ ասէ, սակայն ժողովուրդ Քրիստոսի ոչ անկցի թերևս 'ի ձեռս գերչացն և ոչ տացին 'ի կերակուր գազանաբարոյ Իսմայէլական երկաթոյն՝ և ոչ վարատեսցի կանոնումն Քրիստոնէական օրինաց յանկանոն կրօնիցն Հագարու։»

Եւ այսպէս գաղթ կարաւանին 'ի թիկանց կուսէ կացուցեալ թագաւորն և եղբայր նորուն՝ Գուրգէն, ազատագունդ բանակաւն և հեծելաւոր գնդիւն 'ի զէնս և 'ի զարդս և 'ի տէգս նիզակաց վառեալք՝ միշտ յառաջապահք լինէին՝ իբր անքթիթ իմն ակամբք և մեծաւ զգուշութեամբ։ Սոյնպէս և մեծ իշխանն Անձևացեաց Ատոմ հանճարիմաստ խոհականութեամբ, վաղընդփոյթ նախահոգակ խորհրդով զաշխարհ տէրութեան իւրոյ ամբառնայր 'ի գլուխ ամուր լերանց աշխարհին՝ ամրապահեստս առնելով 'ի խորաձորս և 'ի խոխոմ վիհս փոսոց և 'ի ծործորս բլրոց՝ առաջապահս և նա՛ գաղթին լինելով իւրայօքն զօրօք բազմի վառելովք։

Բայց ոստիկանն Յուսուփ՝ փոքր ինչ աւուրս զետղ առեալ 'ի սահմանս Կորդուաց և չուեալ անտի՝ գայ հասանէ բանակի յաշխարհն Անձևացեաց, ոչ թերևս գրգռեալ ինչ անդ զաղմուկ շարութեան, այլ իբրև օձի զթոյնս 'ի բաց եդեալ՝ դեսպանս առ իշխանն Ատոմ առաքէր՝ տալ նմա զսակ հարկացն արքունի. և ըստ սովորական հրահանգացն տուեալ տալ զօժտութիւնս նորա՝ որպէս զի ընկալեալ երթայցէ գնասցէ 'ի բաց՝ անվտանգ և անվնաս զաշխարհն թողլով։ Իսկ նա ենթադրելով իմաստութեամբ զմերձակայ զրպարտութեանն բռնութիւն առ 'ի յօգուտ բազմաց գնել՝ ոչ ևս խնայէր զանձս և կարասիս և վաղվաղակի հատուցանէր նմա ըստ ձեռին բաւականի զմնասս հարկին կրկին յա-

լության առաջին գահին։ Եվ այդ ձեռնասուն Մոնոսը Յուսուֆին գրավում է իր կողմը՝ նրան դարձնելով իրեն համակամ, իր համախոհը, կամակատարն ու օգնականը՝ իր շար վրեժի թույնը թշնամիների վրա թափելու համար։

Իսկ նա ինչպես փշած-ուռած բան, օդով սրընթաց[120] սուրալով, սլանալով ասորական Միջագետքով և բազմաթիվ այլ օթևաններ անցնելով-գնալով, շուտափույթ գալիս հասնում է Կորդուաց աշխարհը[121]։ Բայց Գագիկ թագավորը, ինչ-որ մեկի միջոցով ավելի շուտ տեղյակ լինելով նրա գալստյանը, առհասարակ իր տերության բնակիչներին ճանապարհ է գցում փախուստի համար և հետը վերցնելով մի խումբ փախստականների՝ տանում տեղավորում է նրանց Կոգովիտ ու Ծաղկոտն լեռների ծործորներում՝ հիշելով այն մխիթարությունը, որ բխում էր նրանից- «Որովհետև, ասում է, վախկոտներս թեպետև փոփոխություններով կը-շարժվենք, սակայն Քրիստոսի ժողովուրդը թերևս չի ընկնի գերիչների ձեռքը և գազանաբարո իսմայելական սրին կերակուր չի տրվի ու չի քայքայվի քրիստոնեական կրոնի օրենքը՝ հագարացիների անկանոն կրոնի ազդեցությամբ»։

Եվ այսպես գաղթականների կարավանը թիկունքում կանգնեցնելով՝ թագավորը և նրա եղբայր Գուրգենը ազնվական բանակով ու հեծելազոր գնդով՝ սպառազինված զենքերով, զարդերով ու նիզակների տեգերով, միշտ առջևի կողմն էին պահում՝ [հետևելով] մեծ զգուշությամբ ու անքթիթ աչքերով։ Նրանց նման նաև Անձևացյաց մեծ իշխան Ատոմը հանճարեղ խոհեմությամբ նախապես հոգացող խորհրդով իր տերության բնակիչներին շուտափույթ բարձրացնում է երկրի անառիկ լեռների գագաթները՝ նրանց ապահով կերպով պահելով խոր ձորերում, հեղեղատներում, վիհերում, բլուրների ծործորներում՝ յուրային գինված մեծ զորքի հետ պահապան լինելով գաղթականների համար։

Բայց ոստիկան Յուսուֆը, մի քանի օր մնալով Կորդուքի սահմաններում, մեկնում է այնտեղից և գալիս հասնում ու բանակ է գնում Անձևացյաց աշխարհում՝ թերևս այնտեղ ոչ թե շարություն ու խռովություն հարուցելով, այլ իբրև օձի թույնը հեռացնելով՝ Ատոմ իշխանի մոտ սուրհանդակներ է ուղարկում՝ նրան տալու արքունի տուրքը։ Եվ սովորական կարգով [Ատոմ իշխանը] թույլատրում է տալ նրա նվերները, որպեսզի վերցնի, գնա ու հեռանա՝ աշխարհը թողնելով անվնաս ու անվնաս։ Նա իմաստուն կերպով ենթադրելով մոտակա անիրավ բռնությունը՝ մտածում էր շատերի օգուտի մասին, չի խնայում գանձերն ու ունեցվածքը և իսկույն նրան վճարում է պահանջվող գումարը՝ այն կրկնակի ավելացնելով։ Բացի դրանից, նա նաև իր ձեռքով

ւելուածով։ Այլև ընծայս ձեռաձիրս առատապէս պարգևէր՝ և մնացելոցն հարկաց ըստ ծանունս խնդրողին պատանդս յազատատոհմէ տուեալ լինէր, զոր առեալ ընկալեալ՝ շուտ գնայ ընդ կողմն լերինն Ականեաց 'ի գաւառն Աղբակոյ։ Եւ տեսանէ անդ զաշխարհն ամենայն առհասարակ թափուր և ունայն 'ի բնակչաց մնացեալ. այլ և տեղեկացեալ ևս ստուգագէտ իմացուածիւ, թէ ոչ կարէ ժամանել հասանել շարիմացութեան խորհրդոյն՝ զոր յօդեալ եղեալ է 'ի մտի իւրում վասն Թագաւորին Գագկայ, և այնուհետև ապա իբրև Հնդիկ իմն զսևութիւն թխութեանն յանձնէն 'ի բաց մերկացեալ՝ յընտանի սպիտակութիւն սրտի զկամս իւր փոխարերէր, և դեսպանս առ Թագաւորն առաքէր մօտայուտ և դիւրագորով հաշտութեան. սակայն ըստ ընչաքաղցն լինելոյ և օգտածարաւ 'ի բանի անդ զբաղում ամաց զհարկս արքունականս՝ այլ և զոժտութիւնս ևս ընծայից առանձին հայցէր տալ նմա, յուշ ևս նմա արարեալ միանգամայն իսկ վերախտիս Թագակապութեանն և ձեռնէրեցն զնա առնել առ 'ի տիրելոյ նմա զբոլոր Հայաստանեայս։ Իսկ Թագաւորն ծանուցեալ զայսումն խորհրդոյն Յուսփայ, եթէ ոչ գոյ նմա կար հակամէտ լինիլ 'ի վատթարն և կամ ուղղել ինչ զնպատակ շարիմաց խորհրդեանն, սակայն քաջավայելուչ իմաստիւ անխզելի զմիտս իւր 'ի շարութենէն պահնակեալ պատրաստէր. և վարանականօք ոմամբք ը'տրելի առնէր զերկրորդն՝ տալ կրկին կամ երեքկին զսակ հարկին և զամենայն բեկարս արքունի և ոչ հարկանիլ ընդ միմեանս սրակոխ կոտորածիւ 'ի պատճառս քինախնդրութեան վրիժուց.» զի պտուղ պատերազմաց մահ է՝ ասէ, և մահու հրաւիրանք յատակս դժոխոց հայի։ Եւ այնուհետև անխնայ զիւրն ստացուածս առաջի արկանէր, և առհասարակ յամենեցունց 'ի մերձաւորաց և յաղատաց և յոռամկաց և յանռամկաց ժողովեալ արծաթ և ոսկի և կարասիս բազումս և ձիս և ջորիս՝ տայր տանել նմա առատ ձեռաձրիւք. զոր առեալ ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ՝ վաղվաղակի շուտ յուղի անկեալ գնայ զկողմամբք Հերայ և Զարևանդ գաւառի 'ի նահանգս Ռստկաց։ Եւ վասնզի ինքն 'ի մեծ քաղաքն զէմ եղեալ էր երթալ յիւա, որ 'ի Պարս անդ է՝ առաքէ զոմն Նսր անուն ոստիկան 'ի Հայս, որ Սբուկն 'ի բազմաց յորջորջէր. և ինքն կայ մնայ անդէն՝ մինչև ոստիկանս և պետս և գործակալս յարդարեալ կացուցանէ 'ի կողմանս Աղուանից և Ատրպատականի։

'Ի սմին իսկ յայսմ ամի ազգքն ապստամբքն այնոքիկ, զորմէ կանխեցաք յառաջագոյն և ասացաք, օր վրիժուց հատուցման գտեալ և

առատ պարգևներ էր տալիս, իսկ նրանց շատ պահանջած հարկերի մնացորդի փոխարեն ազնվական տոհմից պատանդներ էր տալիս, որոնց վերցնելով՝ [Յուսուֆը] մեկնում գնում է Ականիս լեռան[122] կողմերը, Աղբակ գավառը։ Եվ այնտեղ նա տեսնում է, որ ամբողջ երկիրը թափուր ու դատարկ է մնացել բնակիչներից։ Նա նաև ստույգ կերպով տեղեկանում է, որ չի կարող հասնել ու [կատարել] իր շար խորհուրդը, որ իր մտքում պատրաստել էր Գագիկ թագավորի համար։ Այնուհետև իբրև սևամորթ իր սևությունը իրենից հանելով՝ իր կամքը սրտի սովորական սպիտակությամբ էր փոխարինում և թագավորի մոտ սուրհանդակներ է ուղարկում մոտալուտ բարեգութ հաշտության համար։ Սակայն ընչաքաղց ու խիստ շահասեր լինելու պատճառով նա պահանջում էր տալ շատ տարիների արքունական հարկը, այլև խնդրում էր առանձին իրեն տալ նվերներ ու ընծաներ՝ միաժամանակ նրան հիշեցնելով նրան թագադրելու երախտիքը ու նրան ազատություն տալը՝ տիրելու համար ամբողջ Հայաստանին։ Իսկ թագավորը ծանոթանալով Յուսուֆի ուռճացած մտադրությանը և իմանալով, որ նա ուժ չունի հակամիտելու դեպի վատթարը կամ ուղղելու շարամիտ խորհրդի նպատակը, սակայն վայելչագեղ իմաստությամբ իր անխզելի միտքը այն շարությունից պահում ու պահպանում էր։ Եվ ինչ-որ տարակուսանքով նախընտրելի էր համարում երկրորդը՝ կրկնակի կամ եռակի անգամ տալ արքունական հարկը, արքունի բոլոր բեգարները և վրեժի քինախնդրության պատճառով սրախողխող կոտորածով միմյանց չբախվել, որովհետև «պատերազմների պտուղը մահն է, ասում է, իսկ մահվան հրավերը նայում է դժոխքի հատակին»։ Այնուհետև առանց խնայելու իր ունեցվածքը նրա առաջն էր դնում, և առհասարակ բոլորից՝ մերձավորներից, ազնվականներից, ռամիկներից, ոչ ռամիկներից, հավաքելով շատ արծաթ, ոսկի, գույք, ձիեր, ջորիներ, տալիս էր տանելու նրան իր ձեռքով տրված առատ նվերների հետ միասին։ Դրանք առնելով ու ընդունելով մեծ շնորհակալությամբ՝ նա իսկույն ճանապարհ է ընկնում ու գնում է Հեր ու Զարևանդ գավառների կողմերը, որոնք գտնվում են Ռստկաց նահանգում։ Եվ քանի որ ինքը դիմել էր գնալու մեծ քաղաքը՝ Ռա, որը գտնվում է Պարսկաստանում, Հայաստան ոստիկան է ուղարկում Նսրը անունով մեկին, որը շատերի կողմից Սբուկ էր անվանվում։ Ինքը մնում է այնտեղ, մինչև որ Աղվանքի ու Ատրպատականի կողմերում կարգում է ոստիկաններ, պետեր ու վերակացուներ։

Հենց այս նույն տարում այն ապստամբ ցեղերը, որոնց մասին նախապես ասացինք, գտնելով վրեժի հատուցման օրը և տիրելով

կալեալ զկիրճս ուղեգնացաց անապատին Հադարու, զոր 'ի նոցանէ տուն Աբրահամու ստաբանի, առհասարակ 'ի սուր սուսերի զնոսա մաշէին՝ որ աւելի ասեն լեալ քան զերեսուն հազար ոգիս զկոտորելոցն, և զկանայս ամիրապետին և զայլս ևս պատուաւորսն, որ սնավաստակ տքնութեամբ ուղևորէին զանվարձ պողոտայն՝ զնոսա գերի առեալ տանէին. և զբազում կապուտս կարասեաց և զգանձս ոսկւոյ և արծաթոյ յաւարի առեալ՝ գնային իւրաքանչիւր յաշխարհ իւրեանց։ Իսկ փոքր ինչ յառաջ քան զպատմելս զայսոսիկ՝ մի 'ի պատուաւոր ծառայիցն Յուսփայ՝ Սբուկն անուն, այն որ զկնի արկանելոյն 'ի բանտ զՅուսուփն զոստիկանութիւն քաղաքավարութեան նորա կալեալ ճոխացուցանէր՝ նա սատակեալ մեռանէր յԱրտաւել քաղաքի. ուր և ժամանակ իսկ լինէր՝ Յուսուփն առնոյր զընդարձակ թանգարանսն գանձուց և կարասեաց նորա 'ի լիութիւն ընչաքաղցութեանն իւրոյ։ Բայց Նսրն, որում Սբուկն փաղաքշաբար յորջորջէին և ոստիկան 'ի Հայս 'ի Յուսփայ առաքեցաւ, իբրև չուէ երթայ հասանէ 'ի Նախջաւան քաղաք՝ զետեղեալ 'ի նմա աւուրս ինչ սակս 'ի նմա կնոջ նորա գոլոյն, տեղի տայ հաշտութեանցն հեթանոսական սովորութեանց. ապա վաղվաղակի ընդառաջ լինի նմա Բարգէն կրտսեր եղբայր Սմբատայ Սիսական իշխանին՝ անհաստատ իմն երևմունս երազոց 'ի սրտի իւրում ստեղծանելով, զի թերևս 'ի զնել նորա ուխտ ընդ մահու՝ առցէ ընկալցի յինքն զհայրենի ժառանգութիւնն, զոր միապետէրն իսկ եղբայր նորուն Սահակ, և զզրկանս զայս իւր վարկանէր։ Իսկ Նսրն առժամայն բանայր նմա զդրունս գթոց խորամանկ խորհրդով՝ և հակիրճ և համառօտ բանիւ խոստանայր տալ նմա զվիճակ ժառանգութեան իւրոյ։ Վասնզի դէտակն կալեալ սպասէր և եղբօր նորուն Իսահակայ ըստ սմին սակի գալ առ նա, զի զերկաքանչիւրսն զնոսա դաւաճանեալս կապտեսցէ, և այնուհետև կոչեցաւ ևս և նա 'ի Նսրայ տէրն Սիւնեաց Սահակ՝ սիրալիր սրտի գթովք։ Իսկ նոքա յօժարեալ իբր 'ի կոչումն իմն արքունական՝ վաղվաղակի գայ հասանէ առ Նսրն բազում օժտութեան ընծայիւք. և իբրև թմրութեամբ իմն անզգայացեալ՝ զնէ դաշինս ընդ դժոխոց՝ ոչ նկարեալ 'ի սրտի իւրում զիմաստութիւն և ոչ 'ի մտի եղեալ զկատարեալ գիտութիւն և ոչ նայեցեալ 'ի վախճան խորհրդոյն։ Իսկ Նսրն խարդաւանեալ զխորամանկութիւն և երկաքանչիւրս զնոսա շրթամբք, այլ ոչ սրտի՝ իւր յարակցեալ, հրաւիրէ երթալ նոքօք 'ի մայրաքաղաքն Դվին.» զի յապահովացեալք, ասէ՝ 'ի նմա իւրաքանչիւր ումեք՝ զիւրաքանչիւրոցն զօգուտն հոգալ մարթասցուք։ «Այսպէս ապա դաւոյ դրժոխութեան չու

Հադարի անապատի կիրճին, որը նրանց կողմից սուտ կերպով որպես Աբրահամի տուն[123] է անվանվում, առհասարակ նրանց բոլորին սրի են քաշում։ Եվ ասում են, որ կոտորվածները երեսուն հազար հոգուց էլ ավելի էին, իսկ ամիրապետի կանանց և այլ պատվավոր մարդկանց, որոնք անավաստակ շարշարանքով ուղևորվում էին անպտուղ ճանապարհով, նրանց գերի էին տանում։ Եվ մեծ կողոպուտ, ոսկու և արծաթի գանձեր՝ ավար առնելով՝ նրանցից յուրաքանչյուրը գնում էր իր աշխարհը։ Իսկ իմ այս պատմածից մի փոքր առաջ Յուսուֆի պատվավոր ծառաներից մեկը, որի անունը Սբուկ էր, նա, որ Յուսուֆին բանտ գցելուց հետո ընդունելով նրա ոստիկանության պաշտոնը, ճոխացնում էր այն, մեռնում է Արտավել[124] քաղաքում, ուր և ժամանակ է լինում, որ Յուսուֆը իր ընչաքաղցությունը հագեցնելու համար կողոպտի նրա մեծատարած թանգարանների գանձերն ու ունեցվածքը։ Բայց Նսրը, որը փաղաքշաբար Սբուկ էր կոչվում, որպես ոստիկան Հայաստան է առաքվում Յուսուֆի կողմից։ Երբ նա գնում հասնում է Նախջավան քաղաքը, այնտեղ է մնում մի քանի օր՝ իր կնոջ այնտեղ լինելու պատճառով և տեղի է տալիս հեթանոսական սովորությունների հետ հաշտվելուն։ Այդ նույն ժամանակ նրան ընդառաջ է գնում Սիսական Սմբատ իշխանի կրտսեր եղբայր Բարգենը՝ իր մտքում ստեղծելով երազների անկայուն տեսիլք, ըստ որի ինքը եթե դաշինք կապի մահվան հետ, ապա կառնի, կընդունի իր հայրենի այն ժառանգությունը, որին տիրում էր իր եղբայր Սահակը, և այս զրկանքը նա իրենը կհամարի։ Իսկ Նսրը ժամանակավորապես խորամանկ մտադրությամբ նրա համար բացում էր գթության դռները և հակիրճ ու համառոտ խոսքերով խոստանում էր նրան տալ իր ժառանգության մասը։ Քանի որ նա ուշադրությամբ սպասում էր, որ նրա եղբայր Իսահակը նույն պայմանով գա իր մոտ, որպեսզի նրանց՝ երկու դավաճանողներին էլ կողոպտի։ Այնուհետև Նսրը սիրալիր սրտով ու գութով իր մոտ կանչեց նաև Սյունյաց տեր Սահակին։ Եվ համաձայնվելով ու այն համարելով որպես արքունական հրավեր՝ [Սահակը] մեծ ընծաներով ու նվերներով իսկույն գալիս հասնում է Նսրի մոտ։ Եվ ասես թմրությամբ անզգայացած՝ նա դաշինք է կապում դժոխքի հետ՝ իր սրտում չպատկերացնելով իմաստությունը, չհիշելով կատարյալ գիտությունը և ոչ էլ նայելով խորհրդի վախճանին։ Իսկ Նսրը նրանց երկուսին էլ խորամանկորեն խաբելով և՛ խոսքով, ոչ թե սրտով կապելով իր հետ՝ նրանց հրավիրում է իր հետ գնալ Դվին մայրաքաղաքը, «որպեսզի, ասում է, ամենքս էլ այնտեղ ապահով լինելով՝ կարողանանք հոգալ յուրաքանչյուրի օգուտի մասին»։ Այսպես նենգորեն խաբվելով և ճանապարհ

յուղի անկեալ գնային. իբրև մօտ եղեն 'ի քաղաքագիւղն Քարունջոյ՝ ընդառաջ լինէին նմա գլխաւոր գահերէցք և հոյակապ նահապետք ազգատոհմի քաղաքին Դվնայ։ Իսկ նա իբրև ետես զառձեռնապատրաստ եկեալ հասեալ աջողութիւնն իւր, 'ի բաց մերկանայր այնուհետև յանձնէ զգաղտնի պատրուակ շարին. ձեռն զնոքօք արկեալ՝ 'ի կապանս երկաթի շղթայից առհասարակ զնոսա պաշարեալ, իբրև արս աւելի քան զքառասուն գնէր 'ի բանտի. և այն օր երեկօթս յորում էր արարեալ դարէր դադարէր։ Եւ իբրև լոյսն զգիշերն մերկանայր, այնուհետև յուղտս և 'ի ջորիս զկապեալսն բարձեալ՝ մտանէ 'ի քաղաքն Դվին, ընդ իւր տարեալ զՍահակ Սիւնեաց տէր եղբարբն իւրով Բաբգենիւ։ Իսկ 'ի մտանել նորա 'ի քաղաք անդր և 'ի դիպահոջ զկապեալ հեթանոսն դնել, ապա զՍահակ և զԲաբգէն 'ի միասին ըմբռնեալ և վարեալ 'ի տոռունս և 'ի շղթայս երկաթի կապանաց՝ գնէր 'ի բանտի։ Եւ այսպէս յահաշունչ հարաւահողմ խաբէութիւն զանձինս նոցա մատնէր 'ի բանդս և 'ի կապանս և 'ի պատիժս մահու։

Զայսպիսի աղէտս պղտորութեան և զմրուր դառնութեան լուեալ իմ՝ զոր արբին հաւատացեալ տեառք մեր այլ և հեթանոսք ևս 'ի զրահեղեղ ամպրոպաց չարութեան Հագարացւոյն, ոչ սակաւ ինչ փղձկեալ եղէ ևս նեղասրտութեամբ, որ ըստ բնութեան մարդկութեանս են ճահաւորութիւնք։ Յետ որոյ և գոյժ ևս աղմկի 'ի հաւատարմաց ոմանց հնչէր յականջս իմ՝ վաղվաղել խոյս տալ և 'ի բաց գնալ 'ի պատնէշ պաշարմանէն, որ սպառնացեալն էր մեզ։ Իսկ որ ընդ իմն էին կղերք եկեղեցւոյ՝ առեալ զահ երկիւղի դեզերէին 'ի դուրս տան իմոյ, աղաչէին ինձ գնալ երթալ 'ի բաց և տեղի տալ բարկութեանն՝ յուշ արարեալ զտէրունական հրամանն, հալածիլ քաղաքէ 'ի քաղաք և մի՛ կալ հակառակ շարին։ Այս ես աստանօր ոչ եթէ յառժամանակեայ 'ի մահուանէ ինչ պակուցեալ խուսափեցի, այլ 'ի մտի եդեալ զանհնարին մոլեգնութիւն հեթանոսական մոլորութեանն, զի մի՛ թերևս թաքուցեալ հաղբք դիւրախրոխտք պատրանաց նորա անկցի զմանկամբք եկեղեցւոյ, կամ թէ խառնումն ինչ շփոթից ընդ անարգութիւնս հեթանոսացն մեզ բերցի՝ որ արտաքոյ է բոլոր կրթական քաջողջութեան. և այսպէս իբր յիմարեալք իմն 'ի մտաց՝ զարժանն հայցէաք 'ի շնորհացն Աստուծոյ՝ ածել մեզ 'ի ցուցակութիւն։ Եւ իբրև խաւար գիշերին 'ի բաց եղեալ և լոյս առաւօտին ծագեցաւ, յանկարծակի յական թօթափել դարձեալ խաւար գիշերային զմեօք արկաւ. ընդ որս և առհասարակ սքանչացեալ մեր՝ տեսաք զի խաւարեալ էր արեգակն յառաւօտին պահու։ Եւ ապա ըստ ընտրողութեան իրին խորհրդածեալ, եթէ ոչ է ժամանակ խաւարելոյ արեգականն՝ իմացաք հաւաստի նշան բացերևակի մեզ 'ի Տեառ-

ընկնելով՝ [նրանք] գնում էին։ Եվ երբ մոտեցան Քարունջ քաղաքագյուղին՝[125] նրան [Յուսուֆին] ընդառաջ են գալիս Դվին քաղաքի գլխավոր գահերեցներն ու ազգատոհմի հոչակավոր նահապետները։ Իսկ երբ նա տեսավ, որ իր հաջողությունը պատրաստ եկել հասել է, այնուհետև բացում է իր թաքցրած չար դիմակը. նրանց բռնելով ու առհասարակ շղթայելով երկաթյա կապանքներով՝ ավելի քան քառասուն մարդու բանտ է գցում։ Եվ նույն օրը, երբ նա իջևանել էր, նա այնտեղ գար ու դադար է առնում։ Երբ լուսանում է, նա շղթայակապվածներին բարձում է ուղտերի, ջորիների վրա և մտնում է Դվին քաղաքը՝ իր հետ տանելով նաև Սյունյաց տեր Սահակին՝ նրա եղբայր Բաբգենի հետ միասին։ Իսկ այն քաղաքը մտնելիս նա շղթայված հեթանոսներին բանտ է գցում, ապա Սահակին ու Բաբգենին միասին բռնելով ու երկաթյա կապանքներով շղթայելով՝ բանտարկում է։ Եվ այսպես մահաշունչ[126] հարավահողմ խաբեությունը նրանց մատնում է բանտի, կապանքների ու մահապատժի։

Երբ ես լսեցի այսպիսի պղտոր աղետների ու դառն մրուրի մասին, որ չար հագարացու փոթորկալի զետի նման հոսող ջրից խմեցին մեր հավատացյալ տերերը և հեթանոսները, նեղսրտությամբ ես պակաս չհուզվեցի, որ հատուկ է մարդկային բնավորությանը։ Դրանից հետո հավատարիմ մարդկանց գույժն էր հնչում իմ ականջներում՝ շտապել, խույս տալ և դուրս գնալ պատնեշած այն պաշարումից, որ սպառնում էր մեզ։ Իսկ եկեղեցու այն կղերականները, որ ինձ հետ էին, վախեցած դեզերում էին իմ տնից դուրս և ինձ աղաչում էին գնալ նրա մոտ ու իջեցնել նրա բարկությունը, հիշեցնելով տերունական հրամանը՝ հալածվել քաղաքից քաղաք, բայց չարին չհակառակվել[127]։ Բայց ես այստեղ ոչ թե ժամանակավոր մահվանից վախենալով խուսափեցի, այլ հիշեցի հեթանոսական մոլորության սաստիկ մոլեգնությունը, որպեսզի թերևս եկեղեցու մանուկները չընկնեն նրա խաբեության սատանայական թաքուն ծուղակը, կամ թե մեզ խառնի հեթանոսների անարգանքին, որ հեռու է ամեն մի փութաջան ողջամտությունից։ Եվ այսպես, որպես մտքով հիմարացածներ, Աստծու շնորհներից արժանն ենք խնդրում՝ մեզ ի ցույց դնելու համար։ Եվ երբ գիշերվա խավարը նահանջեց, և բացվեց առավոտյան լույսը, հանկարծակի դարձյալ մեզ ակնթարթորեն պատեց գիշերային խավարը։ Դրա վրա առհասարակ զարմանալով՝ մենք տեսանք, որ առավոտյան պահին արեգակը խավարել էր։ Եվ ապա ճիշտ դատողությամբ խորհրդածելով այդ դեպքի մասին, թե արեգակի խավարելու ժամանակը չէ, մենք ակնհայտորեն իմացանք, որ այդ հավաստի նշանը մեզ ցույց է տրվել Տեր

նէ Աստուծոյ ցուցեալ. և այնուհետև շտապ տագնապի եղբայրութեանն հասարակաց ստիպէր զիւրաքանչիւրսն 'ի բաց գնալ 'ի սպառնալեաց փորձութենէ անտի։ Զայսպիսի տարակոյս ապա ոչ թերևս հեղգացայ լուծանել և ոչ կապիլ 'ի գարշապարս մեղաց նոցա. այլ աճապարեցի գնալ 'ի բաց անտի բացորոշութեամբ նախ քան զհասանել վտանգին։ Զառաջին զտարացոյցսն ինձ հիմն եդեալ զԵղիսա մարգարէ և զՊետրոս գլուխն առաքելոց։ Այսպէս ապա ելեալ 'ի վանաց անտի այրից 'ի կացրդից սրբոյն Խսահակայ, որ 'ի ծորձորս լերինն Գեղայ 'ի ձորակի միոջ՝ դէպուղիղ գնացաք և ելաք 'ի վերին վանս, ուր կայանքն անասնոցն էին։ Եւ անտի չուեալ գնացաք 'ի միանձնացելոցն կուսակրօնից միայնարանս, որ 'ի Սևան կղզւոջ՝ ունայնացեալ 'ի բոլոր ստացուածոց, ասնոց և անասնոց, և միայն զփրկութիւն անձանց հոգացեալ՝ և 'ի նմա միանգամայն իսկ զհասարակաց եղբայրութեանն զլեզուս ընդ մեզ ևս շարժել 'ի յօրհնութիւնսն Աստուծոյ, աներկբայ յուսով կատարեցաք անդ աւուրս չորս։ Ապա ամենեցուն մեր միտք իբր 'ի մակոյկս ինչ վերելակեալ, և իւրաքանչիւրոք յիւր խորհուրդս սրտին նաւավարեալ վաղվաղակի իբր յշտեմարանէ իմեքէ զծածկեալսն յառաջ բերէաք բանիւ առ 'ի յայտնել զ'ի խորոջ կայսն։ Եւ էր այսպիսի՝ զի դարձեալ ընդ կրունկն երթիցուք 'ի կողմնաւոր վայրս ուրեք՝ մերձ 'ի հայրապետանոց եկեղեցին սուրբ, և զոր ակամայ կամօքն թողաք լքաք 'ի բաց զինչսն և զստացուածսն և զպաճար անասնոց՝ զայն կամաւորաբար տացուք յընծայումն Հաղարացւոյն Նսրայ. զի Թերևս 'ի կամացն Աստուծոյ հաճեալ հաւանեսցին միտք նորա, և մի՛ ևս սպառսպուռ անզաւակեսցի մայր Սիոն 'ի մանկանց առագաստի. և մեք 'ի սրբարանս մեր դադարեալ՝ օրհնեսցուք զանուն Աստուծոյ մերոյ։ Եւ այսպէս ընտանեգոյն տեսողացն և լսողացն զայն խորհուրդ համարեալ եղև։ Եւ դարձեալ չու յուղի անկեալ շոգաք մինչև 'ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ դանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք պերճապաճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով՝ և վանս կուսակրօն միանձնացելոց զնա հաստատեալ։ Իսկ 'ի հասանելն մերում անդ՝ իսկոյն իսկ հրովարտակ առ Նսրն առաքեցի, յուշ առնելով նմա զզարհուրեցուցանող իրագործութիւն որ առ 'ի յիւրմէն իսկ յայլ ոմանս ներգործեցաւ՝ բանտ և կապանք և շարշարանք անհնարին մահու, և եթէ վասն այսպիսւոյ իրիք բոհմանց պակուցեալ 'ի բաց գնացի. և արդ՝ եթէ արդէն իսկ տայցես ինձ յետկար երդման՝ աներկբայ մտօք զետեղեալ կացից մնացից 'ի դրունս եկեղեցւոյ տան իմոյ օրհնել զԱստուած 'ի սրբութեան նորա և ըստ ձեռին բաւականի միշտ անդանդաղ եղէց

Աստծու կողմից։ Այնուհետև այդ տագնապը կրոնական միաբանության ամեն մի անդամի ստիպում էր հեռու գնալ այդ սպառնալիքների փորձությունից։ Ես թերևս չծուլացա քանդել այսպիսի տարակուսանքը և ոչ էլ կապվել նրանց մեղքերի գարշապարին, այլ շտապեցի հեռանալ այնտեղից նախքան վտանգը հասնելը։ Դրա առաջին օրինակը ինձ համար հիմնադրել են Եղիա մարգարեն և առաքյալների գլխավորը՝ Պետրոսը։ Եվ այդպես դուրս գալով այն քարայրի վանքից՝ սուրբ Խսահակի կացարանից, որ գտնվում է Գեղա լեռան[128] ծորձորներում, մի ձորակում, ուղիղ գնացինք ու բարձրացանք վերին վանքը, ուր անասունները պահելու տեղերն էին։ Եվ այնտեղից շվելով՝ գնացինք կուսակրոն ճգնավորների մենաստանը, որը գտնվում է Սևան կղզում. նրանք զրրկվել էին ամբողջ ունեցվածքից, ասուններից ու անասուններից և միայն իրենց փրկության մասին էին հոգում։ Այնտեղ ամբողջ միաբանությունը մեզ հետ միասին ձայն բարձրացրեց Աստծու օրհնության համար, և մենք աներկբա հույսով այնտեղ քահանայագործեցինք չորս օր։ Ապա մեր բոլորի մտքերը ասես ինչ-որ մակույկի վրա են նստում, յուրաքանչյուր ոք իր սրտի խորհուրդներով է նավարկում, և մենք անմիջապես ինչ-որ շտեմարանից խոսքով դուրս էինք բերում գաղտնիքները՝ հայտնելու համար խորքում եղածները։ [Գործը] այսպիսին էր, որ դարձյալ ետ դառնանք դեպի ինչ-որ տեղ, սուրբ հայրապետանոց եկեղեցուն մոտիկ, որը և ստիպված լքեցինք՝ թողնելով ունեցվածքը, գույքը, անասունների հոտերը և դրանք կամավոր կերպով տվեցինք որպես ընծա հաղարացի Նսրին, որպեսզի թերևս Աստծու կամքով նա հաշտվի ու համաձայնվի, և այլևս մայր Սիոնը իսպառ չզրկվի առագաստի մանուկներից, իսկ մենք դադար առնելով մեր սրբավայրերում՝ օրհնենք մեր Աստծու անունը։ Եվ տեսնողների ու լսողների կողմից այդ խորհուրդը շատ ավելի հարազատ համարվեց։ Դարձյալ ճանապարհ ընկնելով՝ գնացինք մինչև իմ ձեռակերտ Բյուրական ամրոցիկը, որ ես գնել էի դանձով, ուր և տաշած քարերով կառուցել ու բարեկարգել էի հաստահեղույս այս եկեղեցին՝ գեղեցիկ զարդարանքով ու նորակերտ հորինվածքով և այն հաստատելով որպես կուսակրոն ճգնավորների վանք։ Իսկ երբ մենք հասանք այնտեղ, Նսրին իսկույն հրովարտակ առաքեցի՝ նրան հիշեցնելով զարհուրեցուցիչ այն անցքերի մասին, որ ուրիշների նկատմամբ կատարվեցին հենց նրա կողմից, [այն է]՝ բանտ, կապանք, մահվան դաժան շարշարանք։ Եթե այսպիսի ցասումից ու սպառնալիքներից վախենալով՝ հեռացա, ապա այժմ եթե ինձ տաս երդմնագիր, աներկբա մտքով տեղավորվելով, կմնամ իմ տան եկեղեցու դռանը՝ օրհնելու Աստծուն իր սրբության մեջ և հնա-

զընծայս բարօրութեան առաքել քեզ տրիտուր։ Իսկ յընթեռնուլ նորա զգրեալսն առ 'ի յինէն՝ վաղվաղակի յետկար երդման գրէ ըստ իւրեանց Կուրանին օրինաց, որ ինչ միանգամ վստահելի են բանք զենին նոցա. և այնպէս ազատ զմիտս իմ առնէ 'ի բոլոր երկիւղէ կարծեաց և 'ի մարտից արտաքնոց և յարհաւրաց ներքնոց, որ 'ի մարմնի են վտանգք և որք արտաքոյ մարմնոյ։ Եւ այնուհետև ապա կարծեցեալ եղև ինձ այնուիկ յետկարիւ առ 'ի յօգտակարսն վայելսն ճեպել և դարել դադարել 'ի գրունս մերոցն սրբարանաց 'ի կամս Աստուծոյ։ Իսկ ոմն հնացեալ աւուրքք շարութեան և դատաւոր անկանոն կրօնիցն Մահմետի կատարեալ ատելութեամբ միշտ ջանայր եղծանել զքրիստոնէութիւն և զօրացուցանել զհեթանոսական աղանդն։ Եւ այպէս զայլանդակ մտացն զփղձկումն և զդառնամաղձութիւն սրտին յունկն Նսրայն արկանէր. «Ոչ պարտ է՝ ասէ, քեզ և ոչ արժան ուխտ խաղաղութեան ընդ քրիստոնէից վատթարելոց դնել՝ մանաւանդ ընդ օրէնսդրին նոցա խոտորիչ աղանդոյն, որ միշտ վարդապետէ հաւատոյն մերոյ դաւանս հայհոյել, և շունս և գայլս Արաբացիս զաշակերտեալսն Մահմետի անուանէ։ Արդ՝ ընդէ՞ր այդպէս ուխտիւ խաղաղութեան քո ընդ նմա առաւել ևս տոչորես, և յորդագոյնս ևս տարածես զաղանդ նոցա. իսկ եթէ ընծայարեր գիտութեան նորա ցանկասցի անձն քո՝ տասնապատիկ տուժեսցի քեզ այն, միայն թէ լուիցես ինձ. այնուհետև առաքեա զօր բաղում, զի նախ զվանս ամրոցի այրին առցես քեզ, վասնզի 'ի նմա կան դանձք և կարասիք բազումք և զարդք զեղեցկայարմարք եկեղեցեաց շարաղանդ կաթողիկոսին։ Եւ ապա զնոյն ինքն զմարտամբոխ ժողովսն լեգէոն զօրուն իսկ և իսկ ընթացեալ փութացուցես 'ի խնդիր առաջնորդի մոլորութեանն քրիստոնէից, զի կալեալ կապեալ ածցեն քեզ և ընդ նմին զինչս և զստացուածս յաւարի առեալ բերցեն քեզ։ Եւ թէ երբէք խառնաղանջ ամբոխ ընդդիմասցի՝ բազմահեղ արեան կոտորուածս 'ի վերայ նոցա հատուցեն անխնայաբար»։ Զսոյն զայս և որք ըստ նմայն համամտութեանն էին խորհողք ասէին. և այսպէս իբր զգաղան շար 'ի խածատել զնա զարթուցեալ և յանարգել բարս հեթանոսութեան զնա յորդորեալ՝ վաղվաղակի առաքէ զօր բաղում հեծելովք և լեգէոն վառելովք 'ի վանս կուսակրօնիցն, որ յայրի անդ յարևելից հիւսիսոյ գեղաքաղաքին Գառնոյ։ Որ իբրև չոգան յեղակարծումն ժամու երթեալ մտեալ յայր անդր՝ ըմբռնեցին զմիանձունսն որ 'ի նմա և բազում զանից և չարչարանաց զնոսա մատնեալ՝ զստացուածս թաքուցեալս 'ի նոցանէ պահանջէին. մինչև ոմանք 'ի չարչարելոց անտի

բավորին չափ չեմ հապաղի փոխարենը բարօրության ընծաներ միշտ առաքել քեզ։ Իսկ երբ նա կարդում է իմ գրածը, անմիջապես երդմնագիր է գրում իրենց կրոնական [գրքի] Ղուրանի համաձայն, ըստ որի միանգամայն վստահելի են նրանց հավատի խոսքերը։ Եվ այդպես նա իմ միտքն ազատում է կասկածների բոլոր երկյուղներից, արտաքին կռիվներից ու ներքին արհավիրքներից, որոնք մարմնում և մարմնից դուրս եղած վտանգներ են։ Այնուհետև ես կարծում էի, թե այդ երդմնագրով [կարելի է] արագ հասնել օգտակար վայելքներին և Աստծու կամքով դար ու դադար առնել մեր սրբավայրերի գոնհրում։ Իսկ մեկը շար օրերի [դեպքերով] ապականված և Մահմեդի դատաստան կրող անկանոն կրոնի ատելությամբ լցված՝ միշտ ջանում է եղծանել քրիստոնեությունը ու զորացնել հեթանոսական աղանդը։ Եվ այդպես անհեթեթ մտքի նեղսրտության ու սրտի դառն մաղձի [լուրը] ընկնում է Նսրրի ականջը։ «Դու,— ասում է նա,— չպետք է խաղաղության դաշինք կնքես վատթարացած քրիստոնյաների հետ, մանավանդ նրանց խոտորիչ աղանդի օրենսդրի հետ, որը միշտ քարոզում է հայհոյել մեր հավատքի դավանանքը և Մահմեդի աշակերտներին անվանում է արաբացի շներ ու գայլեր։ Ուրեմն ինչո՞ւ ես այդպես փափագում նրա հետ խաղաղության դաշինք [կնքել] և ճոխաբար տարածել նրանց աղանդը։ Իսկ եթե ցանկանում ես քեզ նվիրաբերել նրա ստույգ գիտությանը, տասնապատիկ կտուժես, միայն թե ինձ լսես։ Այնուհետև մեծ զորք առաքի՛ր, որպեսզի նախ գրավես քարայրի ամրոցի վանքը, քանի որ նրանում կան շատ գանձեր, կահկարասիներ և հերետիկոս կաթողիկոսի եկեղեցիների գեղահարմար զարդեր։ Եվ ապա իսկույն գնալով՝ այդ նույն բազմամբոխ զորքի գնդերին կփութացնես որոնելու մոլորյալ քրիստոնյաների առաջնորդին, որպեսզի բռնեն, կապեն և նաև ավար առնեն ու նրա հետ բերեն քեզ գույք ու ունեցվածք։ Իսկ եթե խառնիճաղանջ ամբոխը երբևէ ընդդիմանա, անխնայաբար նրանց կհասցնես մեծ կոտորած ու արյունահեղություն»։ Ովքեր մտածում էին նրա նրման, նրանք ևս ասում էին այս նույն բանը։ Եվ այսպես իբր շար գազան խոցոտելու համար նրան արթնացնելով և հորդորելով անարգելու նրա հեթանոսական բարքը՝ շտապ ուղարկում է մեծ զորք՝ սպառազինված հեծելազոր ու հետևակ, կուսակրոնների վանքը, որ գտնվում է Գառնի գյուղաքաղաքի հյուսիսարևելյան կողմի քարայրում։ Եվ երբ նրանք գնացին, անսպասելիորեն մտան այն քարայրը, բռնեցին նրանում եղած մենակյացներին և նրանց ծեծելով ու բազմաթիվ չարչարանքների ենթարկելով՝ նրանցից պահանջում էին թաքցրած ունեցվածքը։ Մինչև որ այդ չարչարվողներից ոմանք թեպետև ոչ այդ ժամանակ,

թէպէտև ոչ առժամայն՝ սակայն յետոյ յոգնապատիկ տուժի անտի աւանդեցին զոգիս իւրեանց 'ի Քրիստոս և հասին երանելի լուսոյն, որ կայ պահի սիրողացն Աստուծոյ։ Եւ այնուհետև զբնաւ բարեզարդութիւնս եկեղեցւոյ Քրիստոսի և զաւետարանական և զմարգարէական և զառաքելական կտակարանս սուրբս, այլև զամենայն ստացուածս և զպաճար անասնոց բազումս՝ միանգամայն իսկ զյոգնապատիկ պարս մեղուոցաց բազմաց յաւարի առեալ, և զգեղեցիկ շինուածս չքնաղատեսս որ 'ի կուսաստանի անդ հրակիզեալ հրդեհեալ՝ չոգան գնացին 'ի բաց։ Եւ իբրև յանդիման եղեն Նսրայն և իրն գործեցեալ պատմեցաւ նմա առ 'ի նոցանէ, վասն այնորիկ իսկ յիմարութիւն ցոփութեան բարոյիցն յայլանդակ միտս զնա փոխաբերէր. ուստի վաղվաղակի իսկ զմրցարան մահու կամ կենաց նպատակ անձին եղեալ՝ և մարտամբոխ բազմութեան զօրաց հորդան տուեալ, զի գոնեա գաղտնիս իմն ծածկարար 'ի վերայ ամրոցկանն Բիւրականու հասեալ 'ի կապանս կալեալ տարցեն զիս և որ ընդ իս էին կղերիկոսք, և զայլ բնակիչս ամրոցկանն սրակոխ արարեալ կոտորեսցեն և գերեսցեն և աւար հարցեն։ Իսկ իմ զմառախլապատ միգապատ մոլորութիւն նոցա նախ վաղվաղ իսկ ծանուցեալ և ըստ առաջնոյ նուագին խորհրդածեալ՝ խոյս 'ի շարէն ետու առ 'ի լցումն տէրունական հրամանին։ Եւ երթեալ շուեալ ճողոպրեալ գնացաք յարքունական ապարանսն Բագարանու առ թագաւորեալն Աշոտ՝ որպէս զի մանկունք մօր Սիօնի մի՛ հեղեղալ ողողեսցին սպառսպուռ 'ի հարաւահողմ հեթանոսացն խաբէութենէ։ Բայց զրան մերոյ սուրբ եպիսկոպոսն Սահակ այլ երկու քահանայիւք ոմամբք և սարկաւագօք և կուսակրօն միանձնացելովք անդրէն 'ի նմին տեղ կացեալ մնացին՝ յաղագս ցաւակիր ներգման մարմնոյ եպիսկոպոսին և այլոց ևս ոմանց. կամ թէ շուտափութիւն ժամուն ոչ ետ թոյլ ժամանել զկնի մեր, կամ թէ ասելն իսկ զայս եթէ կոչումն ընծայութեանն։ Աստուծոյ և կանխագիտութիւն նորին յայն զնոսա մերձ բերէր 'ի մարտս հանդիսի յաղթութեան և պսակացն երանութեան, որ իմ բանս է՝ զոր և փոքր ինչ յետոյ բացորոշաբար ասասցուք։

Բայց զօրն Իսմայէլեան իբրև իմացեալ ծանեան, թէ գաղտնի նետից նոցա ձգումն ոչ եղև զանխուլ առաջի իմ և թագուցեալ խաղբք նոցա ոչ ծածկեցան և խոյս ևս տալն իմ յայտնի եղև նոցա, այնուհետև զետղ առեալ դադարէին թերևս, և զօր բազում զումարտակ արարեալ, զի պատրաստագոյնս զինքեանս կալ կազմեսցեն. և այնպէս վառեալք զթոյնս իժանման չարութեանն 'ի հաւատացեալս Քրիստոսի թափեսցեն։ Իսկ բնակիչք Բիւրականու՝ ծանուցեալք զանբժշկելի միտս հեթանոսացն և զզրահեղեղ ուղխիցն զսաստկութիւնն որ գալոցն սակայն հետո բազմապատիկ պատժի [ենթարկվելով]՝ հանուն Քրիստոսի ավանդեցին իրենց հոգին և հասան երանելի հույսին, որ կա ու պահվում է Աստծու սիրողների համար։ Այնուհետև կողոպտելով Քրիստոսի եկեղեցու բոլոր բարեզարդությունները, ավետարանները, մարգարեական ու առաքելական սուրբ կտակարանները, այլև ամբողջ ունեցվածքն ու բազմաթիվ անասունների նախիրներ, միաժամանակ կողոպտելով շատ մեղվապարսեր և այն կուսանոցում եղած գեղեցիկ ու չքնաղատես շենքերը հրկիզելով ու հրդեհելով՝ նրանք հեռացան, գնացին։ Եվ երբ նրանք ներկայացան Նսրին և իրենց կատարածը պատմեցին նրան, դրա համար նրա ցոփ ու հիմար բնավորությունը նրան բերում էր այլանդակ մտքի։ Ուստի անմիջապես իսկ իր նպատակը մահու կամ կենաց կռիվը համարելով՝ ոտքի է հանում զորքի մեծ բազմություն, որպեսզի գաղտնի ու ծածուկ հարձակվելով Բյուրական ամրոցիկի վրա՝ ինձ բռնեն, շղթայակապ անեն ու տանեն, իսկ ինձ հետ եղող կղերականներին և ամրոցիկի մյուս բնակիչներին սրախողխող անելով կոտորեն, գերեն ու կողոպտեն։ Բայց նախ ես, շատ շուտ ծանոթանալով նրանց մառախլապատ ու միգապատ մոլորությանը և առաջվա նման խորհրդածելով, նրանց չարից խուսափել ավեցի՝ կատարելու համար տերունական պատվերը։ Եվ փախանք, ճողոպրելով գնացինք Բագարանի արքունական ապարանքը, թագավորող Աշոտի մոտ, որպեսզի Սիոնի մոր մանուկները իսպառ չհեղեղվեն ու չողողվեն հեթանոսների հարավահողմ խաբեությամբ։ Բայց մեր դռան սուրբ եպիսկոպոս Սահակը երկու այլ քահանաների, սարկավագների, կուսակրոն մենակյացների հետ այնտեղ, նույն տեղում, մնացին եպիսկոպոսի և այլոց ցավակիր ու տկար մարմնի համար։ Կամ մեր արագաշարժության պատճառով նրանք չհասան մեր հետևից, կամ այն բանն էին ասում, թե Աստծու մկրտության պատվիրանը և նրա կանխագիտությունը մարտում նրանց մոտեցնում էին հաղթանակին ու երանության պսակին, որն իմ նյութն է, և որի մասին էլ մի փոքր հետո առանձին կպատմենք։

Բայց իսմայելյան զորքը երբ իմացավ, թե իրենց գաղտնի նետաձգությունը ինձնից անհայտ չմնաց, և նրանց թաքցրած թակարդները ծածուկ չմնացին, իմ խույս տալն էլ նրանց հայտնի եղավ, այնուհետև [նրանք] դադար են առնում և զորքը բազմաթիվ գնդերի են բաժանում, որպեսզի իրենք կազմ ու պատրաստ լինեն և այդպես զինվելով իրենց չարության իժաթույնը Քրիստոսի հավատացյալների վրա թափեն։ Իսկ Բյուրականի բնակիչները, իմանալով հեթանոսների անբուժելի մտադրությունը և անտեղի հոսող սաստիկ հեղեղի մասին, որ գալու էր,

է, և թէ ոչ գոյ ճար ճողոպրել փախստեամբ սակս բազում կանանց և մատաղ մանկտւոյ՝ այլ և ծերոց ևս անաւագից, որոց անկարելի էր և անյարմար և տեղի փախստեան ևս կորուսեալ. ապա ըստ գրեցելումն՝ խոյս տուեալ գնացին 'ի շտեմարանս իւրաքանչիւր նոքա և փակեցին զդրունս առաջի իւրեանց, և խուսափեալք փախուցեալք թաքուցան ընդ պատուարաւ պարսպի իւրեանց 'ի բքոյ ամբարշտութեանն՝ ապաստան եղեալք յօգնականութիւն ամենազօրին Աստուծոյ։

Էին ոմանք և յելելոցն յամրոց անդր զօրականք, որք իշխանաց աշխարհակալիս էին զինուորեալք .քանզի իբրև լուան զչարաշշուկ զչարիմաց զխորհուրդս Իսմայէլականացն՝ դիմեալք ուստեք ուստեք մտանէին յամրոց անդր՝ թիկունս տալ հաւատացելոցն մինչ 'ի կէտ մբրցման հանդիսի մահու։ Այսպէս առհասարակ նոցա ասացեալ այր ցընկեր իւր. «Մինչ ցայս վայր՝ ասէին, զօրավարաց մերոց հանդիսացաք հաճոյանալ 'ի կեանս կենցաղոգուտս. իսկ այժմ իբրև զբարւոք զինաւորս վշտակիցք լիցուք Քրիստոսի և հաւատացեալ ժողովրդեան նորա»։ Եւ այսպէս զմահ ընդ կեանս խառնեալք՝ զբարւոք պատերազմին զընթացսն ըղձային ընուլ։

Իսկ ապա զօրքն Իսմայէլեան՝ ըստ օրինի բքոյ իմն շփոթեալ փոթորկեալ եկին հասին 'ի դուռն ամրոցկանն անհնարին անօրէն դղրդմամբ և հեթանոսական անարգել մոլութեամբ։ Եւ ապա ասպարափակ լեալ շուրջանակի լեգէոն հետեակ զօրուն, և թիկնապահ նոցա լեալ հեծելազօր վառելոյ գնդին 'ի մէջ անցելոյ՝ այնուհետև շահատակէին գաղտնաբար 'ի վերայ յարձակեալք։ Զայսպիսի մահառիթ ոճիրս իբրև տեսանէին մարդիկք ամրոցին՝ 'ի բռնութենէ իմն հարկեալք լինէին այր առ այր և մարդ առ մարդ կուտակիլ ելանել զեղուլ 'ի գլուխս պարսպացն. և այն օր սակաւ ինչ ընդ կոյսս կոյսս հարեալք ընդ միմեանս՝ մինչև գիշերն մերձեցաւ և տիւն մէրժեցաւ։ Իսկ 'ի միւսում առաւօտուն պահու մինչդեռ էր աղջամուղջ, առհասարակ մարդիկ ամրոցին 'ի դուռն քաւարանին սրբոյ մերձ եկեալք՝ հայցէին 'ի սրբոյ եպիսկոպոսէն տալ նոցա զմեղսաքաւիչ մարմինն և զարիւն Տեառն։ Իսկ նա հրեշտակական շրթանցն շարժմամբ և նազելի բարբառով առաւել քան զմեր բանս վարդապետէր նոցա, յորոց աշակերտեալն էր զճշմարտութիւնն, և միանգամայն իսկ զվիճակաւոր կղերիկոսն հանդերձ զինուորաւն գնդիւ և այլ ևս աշխարհակոյտ մարդկաւն յարդարէր 'ի խորհրդածութեան պաշտօնն ամբառնալ զմիտս իւրեանց առանց ամենայն վնասուց, և խնդրել զհաստատութիւն հաւատոցն որ 'ի Քրիստոս»։ Զի մի՛ դրդուիցին սիրտք ձեր 'ի միամտութենէն որ 'ի Քրիստոս

և որ ճար չկար ճողոպրելու՝ բազմաթիվ կանանց ու մատաղաշ երեխաների, այլև այն ծերերի ու տկարների համար, որոնց փախուստի տեղը անհնար ու կործանարար էր։ Ապա ըստ գրածի՝ նրանք խույս տալով գնացին իրենց մառանները և նրանց առաջ փակեցին դռները։ Եվ նրանք խուսափեցին, փախան ամբարիշտ բքից. ու թաքնվեցին իրենց պարսպի պատերի տակ՝ ապավինելով ամենազոր Աստծու օգնությանը։

Այն ամրոց բարձրացած զինվորներից ոմանք ինքնակալ իշխանների զինվորներն էին։ Նրանք երբ լսեցին իսմայելյան չարաշշուկ ու չարամիտ խորհուրդը, այստեղից-այնտեղից մտան այն ամրոցը՝ ապավինելով հավատացյալներին մինչև կռվի ու մահվան վերջին։ կեսը։ Նրանցից ամեն մեկը առհասարակ իր ընկերոջը այսպես ասաց. «Մինչև այս պահը, ասում էին, կենցաղօգուտ կյանքով ձգտում էինք հաճոյանալ մեր զորավարներին, իսկ այժմ, իբրև բարի զինվորներ, վշտակից ենք լինում Քրիստոսին և նրա հավատացյալ ժողովրդին»։ Եվ այդպես մահը կյանքին խառնելով՝ նրանք ցանկանում էին ավարտել պատերազմի բարի ընթացքը։

Իսկ հետո իսմայելյան զորքը շփոթված, փոթորկված բքի նման եկավ հասավ ամրոցիկի դուռը անհամար ու անօրեն դղրդմամբ ու հեթանոսական անարգել մոլությամբ։ Եվ ապա վահաններով շրջափակելով լեգեոն հետեակ զորքը, և միջով անցնող հեծյալ զինված զունդը պաշտպան կանգնելով նրան՝ այնուհետև թաքուն գրոհում էին՝ հարձակվելով միմյանց վրա։ Ամրոցի մարդիկ երբ տեսնում էին այսպիսի մահառիթ ոճրագործությունները, ինչ-որ բռնությունից հարկադրված էին լինում տղամարդ տղամարդու, մարդ մարդու վրա կուտակվել, ելնել ու լցվել պարսպի գլխին։ Եվ այն օրը այս ու այն կողմերում նրանք մի փոքր միմյանց բախվեցին, մինչև որ գիշերը մոտեցավ, և ցերեկը նահանջեց։ Իսկ հաջորդ առավոտ, քանի դեռ աղջամուղջ էր, ամրոցի մարդիկ առհասարակ, մոտենալով սուրբ քավարանի դռանը, սուրբ եպիսկոպոսին խնդրում էին իրենց տալ Տիրոջ մեղսաքավիչ մարմինն ու արյունը։ Իսկ նա հրեշտակային շրթունքների շարժմամբ ու պաշտելի ձայնով առավել, քան մեր խոսքերը, քարոզում էր նրանց, որոնցից սովորել էր ճշմարտությունը, և միաժամանակ թեմական կղերականներին զինվորների գնդերի, ինչպես նաև տարբեր տեղերից հավաքված մարդկանց հետ պատրաստում էր եկեղեցու սուրբ խորհրդի պաշտամունքով ընդվզել առանց որևէ վնասի ու պահանջել Քրիստոսի նկատմամբ հավատի հաստատություն, «որպեսզի ձեր սրտերը չզրկվեն Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատարմությունից պատերազ-

յաղագս պատերազմիդ, որ նեղէ զմեզ. և մի՛ կացուցանիջիք՝ ասէ, զոտս ձեր յանցաւորիս կառուցմամբ իբրև յաւիտենականի, և ապա տէր իսկ յայց ելեալ ձեզ իւրով մարմնովն և արեամբ, զոր ընդունելոց էք զմեղացն զկարծս դատապարտեսցէ վասն մարմնոյ իւրոյ, որ է եկեղեցի՝ որ էք դուք. և տացէ ձեզ զգաստութիւն յաղթել աշխարհակալիս խաւարի այսու շարութեան, որ շուրջ զմեօք կան մածեալ։ Զի մի՛ ապականեսցեն զգեստն լուսոյ, որով Քրիստոսին զգեստաւորեցայք ի մերկութենէ նախահօրն. և մի՛ յափշտակեսցեն յանձանց ձերոց զքրիստոսագրոշմ զկնիքս աւազանին սրբոյ»։ Եւ այսպէս իբրև հրով զմիտս նոցա վառեալ՝ զամենեցուն լեզուս շարժէր յօրհնութիւնս ամենեցունցն Աստուծոյ, պնդակազմ զնա առնելով 'ի մշտնջենաւոր աղօթսն։ Եւ ապա մատուցեալ զսարսափելի զպատարագն զառ 'ի Քրիստոս, և զխորհուրդն փրկական մարդկան բաշխէր առհասարակ արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն շափու հասակի խորհրդական աւանդութեամբ ըստ սակի յետին թոշակի։ Իսկ բոմբիւն աղաղակի և մարտ ամբոխի Իսմայէլեան զօրուն ևս քան զևս սաստկանայր, և հնչմունք և կայթմունք և կաքաւք զինուց նոցա և վահանաց հնչեցուցանէին զերեսս երկրին ըստ գիւտոյ բնակչացն Նակովոսն գաւառի։ Ապա և մարդիկք ևս ամբոցին բազձաձեալ շրջապատ 'ի գլուխս պարսպացն և ակնակառոյց առ Աստուած լեալք, զի օգնեսցէ նոցա 'ի պատերազմի նեղչացն, և մի՛ զրդուեսցին, 'ի զիւախրոխտ մոլորութենէ հեթանոսացն։ Եւ այնպէս ապա մարտ 'ի վերուստ 'ի վայր եղեալ՝ բազում արեան ճապաղիս 'ի թշնամեացն հեղուին և զբազումս թաւալգլոր խաղացուցանէին։ Իսկ եպիսկոպոսն սուրբ հանդերձ այլ ևս կղերիկոսօք հանապազօր կանխէր յաղօթս և 'ի խնդրուածս. զի՛ արիւնբուռշտ և անգառագեղ գազանացն մի՛ եղիցի վարատեալ օձտել զգաստութիւն հօտի Տեառն, զոր և ընտրեաց իսկ իւր Տէր 'ի ժառանգութիւն և 'ի ժողովուրդ սեպհական, մարմին իւր և անդամ անուանելով։ Այլ և խրախոյս ևս քաջալերութեան ամենայն իրօք մարդկանն մատուցանէր, մի՛ կապիլ 'ի տոհունս մեղաց որ ըստ մարմնոյ և մի՛ մղիլ 'ի վախից յառժամանակեայ մահուանէս. այլ զհոգւոյն մաքրել զգաստութիւն և հայել յելս գնացից իւրեանց և շարշարակից Քրիստոսի լինել և նմանող հաւատոցն որ առ Աստուած։ Նաև սարկաւագն ևս Թէոդորոս, որ վերակացու շինուածոյ եկեղեցւոյն էր և մարդիշ մարդկանն՝ ոչ սակաւ ինչ թելադրութիւն նոցա ընծայէր ասելովն. «Հիւանդացեալքն, ասէ՝ ի մարդկանէ թէև 'ի մահ աշխատիցին, սակայն առողջութեանն յուսով թեթևանան։ Արդ՝ մի՛ աճապարեսցէ այս վտանգ հիւանդութեան որ զմեօքս է՝ տարապարտ մեռուցանել զձեզ մարմնով. այլ հոգւով զօրանալ և ճեպիլ

մի պատճառով, որը նեղում է մեզ։ Եվ ասում է, ձեր ոտքերը մի՛ դնեք հանցավորիս կանգնեցնելով իբրև հավիտենականի, և ապա Տերը իր մարմնով ու արյամբ այցի գալով ձեզ, որ ընդունելու եք մեղքերի կասկածանքով, կդատապարտի իր մարմնի համար, որ եկեղեցին է, որը դուք եք։ Եվ նա ձեզ կտա զգաստություն հաղթելու աշխարհը բռնած այս շար խավարին, որ պատել է մեր շուրջը։ Որպեսզի չապականեն լույսի զգեստը, որ նախահոր մերկությունից հետո Քրիստոսով զգեստավորվեցինք, և թող ձեզանից չհափշտակեն սուրբ ավազանի քրիստոսագրոշմ կնիքը»։ Եվ այսպես նրանց միտքը վառելով իբրև հրով՝ բոլորի լեզուները շարժում էր ամենքի Աստծուն օրհնելու համար՝ նրան դարձնելով հաստատուն մշտնջենական աղոթքների մեջ։ Եվ ապա մատուցելով սարսափելի զոհը Քրիստոսի համար՝ մարդկանց փրկող խորհուրդը նա առհասարակ բաշխում էր տղամարդկանց, կանանց, ծերերին, երեխաներին ու ամեն հասակի համեմատ խորհրդական ավանդությամբ և սուրբ հաղորդության պայմանով։ Իսկ իսմայելյան զորքի ձայնը, աղմուկը և ամբոխի կռիվն է՛լ ավելի էր սաստկանում։ Նրանց ցատկոտելը, ոստոստելը, զենքերի ու վահանների ձայները զըզրդացնում էին գետինը, ինչպես Նակովոս գավառի բնակիչներն են զտնում։ Հետո ամբոցի մարդիկ, շուրջբոլոր հավաքվելով պարիսպների գլուխներին, աչքերը հառում են առ Աստված, որպեսզի նա օգնի իրենց նեղող այդ պատերազմում, և իրենք չհրապուրվեն հեթանոսների դիվահնար մոլորությամբ։ Եվ այդպես մարտ մղելով վերից վար՝ նրանք շատ թշնամիների արյուն էին թափում և շատերին էլ թավալգլոր էին անում։ Իսկ սուրբ եպիսկոպոսը այլ հոգևորականների հետ միասին [վտանգը] միշտ կանխում էր աղոթքներով ու խնդրանքով, որպեսզի արյունռուշտ ու անվանգակ գազանները չցրեն ու չքայքայեն Տիրոջ զգաստ հոտը, որին և ընտրեց Տերը որպես ժառանգություն և սեփական ժողովուրդ՝ [դրան] անվանելով իր մարմինն ու մարմնի մասերը։ [Եպիսկոպոսը] ամեն ինչով խրախուսում ու քաջալերում էր մարդկանց, որպեսզի մարմնապես չկապվեն մեղքի պարանով և վախից չհեռանան անցավոր մահից, այլ մաքրեն հոգու զգաստությունը, նայեն իրենց ընթացքի վերջին, Քրիստոսին շարշարակից լինեն և նմանվող այն հավատին, որ [ունեն] առ Աստված։ Թեոդորոս սարկավագը ևս, որ եկեղեցու շենքի վերակացուն էր և մարդկանց կըրթողը, նրանց քիչ խրատ չի տալիս՝ ասելով. «Հիվանդ մարդիկ, ասում է, թեև տառապում են մահվան [պատճառով], սակայն թեթևանում են առողջության հույսով։ Ուրեմն, հիվանդության այս վտանգը, որ կա մեզանում, թող չարագացնի ձեզ մեռցնել մարմնով, այլ հոգով զո-

'ի մարան, որ ըստ օրինին Քրիստոսի է, զի ընկալջիք զբրաբիոնն յուսով կենացն յաւիտենից»։ Արդ՝ այսպիսի խրատու բարւոյ առհասարակ նոքա զանձինս տուեալ՝ այնուհետև ոչ միով իւիք հեշտութեան անձանց շնորհէին, որ ըստ մարմնոյն են ճահաւորութիւնք. այլ զբարւոք պատերազմն պատերազմէին 'ի վերայ հօտին Քրիստոսի և զաւակաց իւրոց հոգեհրաշ ճգնութեամբ՝ վառեալ զինու զօրութեամբ Հոգւոյն Տեառն իւրեանց։ Իսկ թշնամիքն, որ 'ի խաւարի և 'ի մութ վրիժուց հատուցման զմիտս թաթաւեալ էին, թէպէտև աւուրս եօթն մի ստէպ ստէպ զմարտ հինին 'ի վերայ հեղուին և ոչ կարէին սասանել ամրոցին, ապա ոմն 'ի լեգէոն զօրացն ամրոցին 'ի բաց եղեալ զկերպ կենաձին յուսոյն և զողորմութիւն և հաւատս ուրացեալ՝ վաղվաղակի տայ զամրոցն 'ի ձեռս ժպիրհ և անօրէն Հագարացեացն։ Իսկ նոցա յաւէտ իմն խրախ լեալ և խնճոյս մտաց իւրեանց մատուցեալ՝ վաղվաղակի զռոհ տային և սանդղօք ոմամբք վերելակեալ հեղուին յամրոցն։ Ապա զթագուցեալ հաղբսն յայտ ածեալ՝ գազանաբար ընդդէմ բախէին մարդկան զխորհուրդսն չարութեան, և անընտանի չարախտավոր մտօք սկըսանէին զամենեսեան անողորմ սրոյն տալ ճարակ. և հեղումն տարապարտ արեան նոցա բղխեալ յորդեալ ոռոգանէր զառստորևն ամենայն. և դիակունք անկելոց շեղջակուտեալք 'ի վերայ միմեանց անկեալ դընէին։ Իսկ եպիսկոպոսն սուրբ հանդերձ այլ ևս ժառանգաւորօք եկեղեցւոյն ամենագիշեր տքնութեամբ և բազմատարած արտասուօք և պաղատանօք աղօթս առ Աստուած մատուցանէին՝ ոչ 'ի բացէ առնել 'ի նոցանէ զայցելութիւն իւր։ Եւ այսպէս վայելչացեալ և գերազանցեալ է յամենայնի սրբոցն նմանութիւն։ Իսկ անօրէն դահճացն եկեալ գըտեալ զնոսա յաղօթս 'ի քաւարանումն սրբում՝ ահս պակուցանողս զնոքօք ջանային արկանել սուսերացն շողացմամբ և վահանացն թնդմամբ և ատամանցն կրճտելով և երեսաց ատրագոյն շառագունութեամբ. այլ նոքա ոչինչ զարհուրեցան և ոչ երկեան սիրտք նոցա յարհաւրանաց անտի մոլեգնելոցն, զի այցելութիւն Տեառն էր շուրջ զնոքօք և պահէր զնոսա։ Ապա արտաքոյ զնոսա միանգամայն 'ի քաւարանէն հանեալ՝ մերկացուցին 'ի նոցանէ զզգեստիկն, 'ի մահ զնոսա վարակեալ. և 'ի մառախլապատ ստուերաց խաւարի զաչս սրտից իւրեանց խցեալ՝ դիմեցին 'ի վերայ նոցա։ Եւ նախ զեպիսկոպոսն սուրբ վաղակաւորքն կարթակոտոր առնէին՝ իբրև տապարօք շեշտակի շերտեալ զծառ. և զկնի ապա հատեալ ևս սուսերաւ զգլուխ նորա։ Իսկ զքահանայս սուրբըս և զկուսակրօն միանձունսն և զսաղմոսերգուս՝ իբրև զոչխար 'ի սպանդ վարեալ 'ի զենումն նուիրական անուշահոտ պատարագաց Քրիստոսի փողոտէին, հատեալ ևս զիւրաքանչիւրոց նոցա զգլուխս։ Եւ այս-

բացնի մարտի[129] համար, որն ըստ կանոնի Քրիստոսինն է, որպեսզի հույսով ընդունեք հավիտենական կյանքի պսակը [բրաբիոնը]»[130]։ Այսպիսով, նրանք առհասարակ իրենց տալով այսպիսի բարի խրատի՝ այնուհետև ոչ մի բանով իրենց զվարճության չէին նվիրում, որ մարմնի վայելչություն է, այլ բարի պատերազմ էին մղում Քրիստոսի հոտի ու իրենց զավակների համար հոգեհրաշ ճգնությամբ՝ զինված իրենց Տիրոջ Հոգու զենքի զորությամբ։ Իսկ թշնամիները, որ իրենց միտքը թաթախել էին վրեժի հատուցման խավարով ու մթությամբ, թեպետև յոթ օր հաճախակի մարտ էին մղում ավազակների դեմ, բայց չէին կարողանում սասանել ամրոցը։ Հետո ամրոցի լեգեոն զորքից մեկը, մի կողմ դնելով կենսածին հույսի հանգամանքը և ուրանալով ողորմությունն ու հավատքը, ամրոցն իսկույն տալիս է ժանտ ու անօրեն հագարացիների ձեռքը։ Իսկ նրանք, է՛լ ավելի ուրախանալով և մտովին խրախճանալով, անմիջապես գրոհում են և առանձին սանդուղքներով բարձրանալով՝ լցվում են ամրոցը։ Ապա ի հայտ բերելով թաքցրած որոգայթը՝ [նրանք] չար մտադրությամբ գազանաբար բախվում են մարդկանց և վայրենի ու գժնդակ մտքով սկսում բոլորին անողորմաբար սրի ճարակ տալ։ Նրանց արյունը, իզուր տեղը բխելով, հորդացած ոռոգում էր ստորոտները։ Ընծաների դիակները շեղջի նման իրար վրա կիտվելով՝ ընկնում մնում էին։ Իսկ սուրբ եպիսկոպոսը և եկեղեցու այլ սպասավորները ամբողջ գիշերը տքնությամբ, շատ արտասուքով ու պաղատանքով աղոթք էին մատուցում առ Աստված, որպեսզի նա իրենց չզրկի իր նախախնամությունից։ Եվ այդպիսով ամեն ինչում փայլում ու գերազանցում էր սրբերի պատկերը։ Իսկ անօրենները, գալով ու նրանց գտնելով սուրբ եկեղեցում աղոթք անելիս, սրերը շողացնելով, վահանները թնդացնելով, ատամները կրճատցնելով և դեմքերի հրագույն շառագունությամբ ձգտում էին նրանց վրա ահ ու սարսափ գցել, բայց նրանք չզարհուրեցին, ու նրանց սրտերը չվախեցան այդ կատաղածների սարսափից, որովհետև Տիրոջ նախախնամությունը նրանց վրա էր և պահպանում էր նրանց։ Ապա նրանց բոլորին եկեղեցուց դուրս են հանում, մերկացնում են և սպանում մահով։ Եվ իրենց սրտի աչքերը փակելով մառախլապատ ստվերի խավարով՝ հարձակվեցին նրանց վրա։ Նախ սրերով ջարդուփշուր են անում սուրբ եպիսկոպոսին՝ ինչպես կացնով ծառն են շեշտակի կտորների բաժանում, իսկ վերջում էլ սուսերով կտրում են նրա գլուխը։ Իսկ սուրբ քահանաներին, կուսակրոն մենակյացներին ու սաղմոսերգուներին ոչխարի նման քշում են սպանդանոց և նրանց մորթում են որպես Քրիստոսի նվիրական ու անուշահոտ զոհերի՝ նույնպես կտրելով նրանցից յուրաքանչյուրի գլուխը։ Եվ այդպես նրանք բոլորը, իբրև

պէս առհասարակ սոքա իբրև զսպառազէնս զրահից՝ զհաւատս ճշմարտութեան զգեցեալ զփառացն և զլուսոյ պաճուճանս զգեստաւորիլ արժանի գտան և անթառամ պսակօքն պայծառանալ։ Բայց սարկաւագն Թէոդորոս ոչ էր ընդ նոսա 'ի ժամ կատարման նոցա, զի նախ քան զայն 'ի Թշնամեացն նետաձգութեանց վիրաւորեալ անկեալ դնէր։ Իսկ շար դահիճքն խնդրէին և զնորայն ևս հատանել զգլուխն. այլ նա ոչ ինչ կրէր զվիշտսն և ոչ ևս նեղասրտութեամբ փղձկէր ըստ մանկական տիոց՝ քան թէ ախորժ յօժարութեամբ զպարանոցն կարկառէր. և այսպէս հատեալ զգլուխ նորա՝ զմահ իւր եղ կնիք հաւատարիմ ճշմարտութեան հաւատոց իւրոց, և վերագրեցաւ յորդիս Աստուծոյ։ Իսկ զայլ ևս մարդիկ ամրոցին խոնարհ արարեալ 'ի տեղի շարշարանաց՝ և ածեալ իբրև զոչխարս 'ի սպանդ Իսմայէլեան երկաթոյն, որ ոչն ևս առնու յագուրդ՝ տային կերակուր. և հատեալ զգլուխս բնաւից նոցա, զի առեալ տարցեն ոստիկանին և պարծանս քաջութեան նոքօք ինքեանց ստասցին։ Որք այսպէս և նոքա առհասարակ 'ի ժամ կատարմանն ասէին. «Տէ՛ր Աստուած ամենակալ ամենագութ ամենախնամ, գոհանամք զքէն, որ ետուր համբերութիւն ժուժկալութեան 'ի պատերազմիս. զի մեք զքեզ ոչ մոռացաք և ոչ ստեցաք ուխտի քում և ոչ դարձաք յետս սրտիւք մերովք, և արժանի արարեր զմեզ հասանիլ 'ի մասն վիճակի սրբոցն 'ի լոյս։ Արդ՝ ընկալ զմիաբանութիւնս մեր 'ի խաղաղութիւն. և շահեա դու զորդիս սպանելոց քոց»։ Եւ այսպէս բարեբարութեան բարեաց 'ի բարեբարէն արժանի գտան։ Էին ոմանք և հեթանոսք 'ի բնակչաց տեղւոյն հողագործ մշակութեան պարապեալ՝ և հարկս մեզ հարկէին։ Եւ իբրև այս եղև՝ նոքա 'ի մի վայր ժողովեալ ձայնս առ Թշնամիսն արձակէին յիւրեանց լեզուն, «Թէ մեք ձեզ նմանեալ 'ի ժողովրդենէ Մահմետի առաքելոյ եմք». և այնպէս 'ի լսել դահճացն ամենեքիմբ 'ի բաց 'ի նոցանէն քերեցին զսուրս իւրեանց. զի ոչ և մի ոք 'ի նոցանէ ոչ վրիպէր։ Եւ սոյն այս հեթանոսք խանդաղատանօք աղաչէին զմի մի 'ի հաւատացելոցն երթալ խառնիլ 'ի նոսա և ապրիլ յանհնարին մահուն երկիւղէ։ Բայց նոքա բացէ 'ի բաց գնացեալ ասէին. «Մեր կեանքն Քրիստոս է և մեռանելն շահ»։ Եւ այսպէս համաշունչ սուրն ծարաւի ոչ կարաց երկմտեցուցանել և ոչ զմի ոք 'ի սիրոյն Քրիստոսի։ Եւ այսպէս 'ի միում աւուր 'ի միում ժամու առհասարակ ամենեքեան նոքա զենմունք կատարեալք ընծայեցան Քրիստոսի 'ի հոտ անուշից՝ սուրբ եպիսկոպոսն Սահակ, որ զանուն պտղոյ քաղցրութեան իւրոյ յաշխարհի թողեալ՝ արտախուրակեցաւ քրիստոսեան պսակաւն, և սուրբ քահանայքն որք ընդ նմին հանդիսացան՝ Մովսէս 'ի կուսանաց կարգէ, և միւս Մովսէս յամուսնացելոց, և եղբարք ամուսնացելոյն

զրահով սպառազինվածներ, զգեստավորվեցին ճշմարիտ հավատով՝ արժանի լինելով հագնելու փառքի ու լույսի պաճուճանքը և զարդարվելու անթառամ պսակով։ Բայց Թեոդորոս սարկավագը նրանց վախճանվելու ժամանակ նրանց հետ չէր, որովհետև դրանից առաջ նա Թշնամիների նետաձգությունից վիրավորվել ու գետին էր ընկել։ Իսկ շար դահիճները պահանջում էին կտրել նաև նրա գլուխը, բայց նա բոլորովին չէր վշտանում և ոչ էլ մանկական տարիքի համեմատ նեղսրտում էր, այլ սիրով ու հոժարությամբ պարզում էր պարանոցը։ Եվ այդպես հատեցին նրա գլուխը, և նա իր մահով իրենց ճշմարիտ հավատի հավատարիմ կնիքը դրեց ու վերագրվեց Աստծու որդիների [թվին]։ Իսկ ամրոցի մյուս մարդիկ, շարշարանքների փոխարեն նվաստացվելով ու ոչխարի նման սպանվելու բերվելով, տրվում էին իսմայելյան սրի բերանը, որը երբեք չէր հագենում։ Եվ երբ կտրում են նրանց բոլորի գլուխները, դրանք առնում տանում են ոստիկանին, որ նրանից իրենց քաջության համար փառք ու պատիվ ստանան։ Նրանք վախճանվելիս ասում էին այսպես. «Ամենակալ, ամենագութ, ամենախնամ Տեր Աստված, քեզանից գոհ ենք, որ մեզ կռվում դիմանալու համբերություն տվեցիր, որ մենք քեզ չմոռացանք, չդրժեցինք քեզ հետ դրած մեր ուխտը, մեր սրտերով ետ չդարձանք, և դու արժանի արիր մեզ հասնելու սրբերին վիճակված բաժնին՝ լույսին։ Արդ՝ խաղաղությամբ ընդունիր մեր միաբանությունը և շահիր քո սպանվածների որդիներին»։ Եվ այդպես նրանք բարեբարի կողմից բարեբարության արժանացան։ Եվ տեղի բնակիչներից կային հեթանոսներ, որոնք զբաղվում էին հողագործությամբ և մեզ հարկ էին տալիս։ Եվ երբ այս բանը եղավ, նրանք մի տեղում հավաքվելով՝ իրենց լեզվով ձայն էին տալիս Թշնամիներին, թե «Մենք էլ ձեզ նման Մահմեդ առաքյալի ժողովրդից ենք»։ Եվ երբ այդպես դահիճները լսեցին, ամբողջովին նրանցից հեռացրին իրենց սուրը, և նրանցից ոչ մեկն էլ չմեղանչեց։ Եվ այն նույն հեթանոսները հավատացյալներին մեկ առ մեկ պաղատանքով աղերսում էին գնալ խառնվել նրանց հետ և փրկվել մահվան սարսափելի երկյուղից։ Բայց նրանք հեռու գնալով՝ ասում էին. «Մեր կյանքը Քրիստոսն է, և մեռնելը՝ օգուտ»։ Այդպիսով մահվան ծարավի սուրը ոչ մեկին չկարողացավ երկմտել տալ Քրիստոսի սիրուց։ Եվ այդպես նույն օրում, նույն ժամին բոլորն առհասարակ զոհաբերվելով ընծայվեցին Քրիստոսի անուշ հոտին, [այն է]՝ Սահակ սուրբ եպիսկոպոսը, որն աշխարհում թողնելով իր ծննդյան քաղցր անունը՝ պսակվեց Քրիստոսի թագով, սուրբ քահանաները, որոնք նահատակվեցին նրա հետ միասին. կուսակրոններից՝ Մովսեսը, ամուսնացածներից մյուս Մովսեսը, ամուսնա-

Մովսեսի՝ քահանայք Դաւիթ 'ի կրօնաւորական կարգէ և Սարգիս յաշխարհական. իսկ Սահակ, որ 'ի տղայական հասակէ աչացու գոլով և կատարեալ գիտութեամբ և ամենայն առաքինական երկօք էր պայծառացեալ՝ և սա իբրև զոչխար 'ի զենումն ածեալ, անմատոյց և անմահական լուսովն լուսաւորեցաւ։ Սապէս և երանելի այրն Աստուծոյ Սողոմոն, որ 'ի Սագաստան աշխարհէ եկեալ բնակէր առ մեզ խստամբեր վարուք և առաքինահրաշ կարգօք քաղաքավարէր 'ի մարմնի իբրև զանմարմին և զնա 'ի նմին ժամու գլխատեալ՝ աստուածապայծառ և անճառելի լուսերանգ պսակաւն պսակեցաւ։ Յետ ամենեցուն սոցա և սարկաւագն Թէոդորոս, զորմէ կանխաւ ասացաք, որ 'ի Թիւ սրբոցն վերագրեցաւ համբերութեամբ բազմաւ. ընդ ամենեսին՝ սոքա ութ թուով։ Իսկ այլ բազմութիւն արանց, որ յայնմ աւուր սպանան 'ի զինուորական կարգէ և յաշխարհական, աւելի քան զերկու հարիւր ոգիս, որոնց անուանք նոցա գրեալ են 'ի դպրութեան կենաց։ Եւ գրեթէ ոչ ոք ապրեցաւ յարանց տեղւոյն այնորիկ, բայց 'ի սակաւուց ոմանց, որ նախքան զհնձումնն սրոյն ելեալ գնացեալ էին 'ի գործս վաստակոց ձեռաց իւրեանց։ Իսկ յեկեղեցւոյ մանկանց սարկաւագ մի՝ Գէորգ անուն, ապրեցաւ յանհնարին մահուն երկիւղէ, զի վայելչացեալ այրն ճանանչիւր 'ի ժառանգաւորս եկեղեցւոյն. և վասն այնորիկ ոչ արկին զնա 'ի բովս եռանդեան չարութեանն, զի թերևս առցեն ինչ 'ի նմանէ ըստ բարուց տզրկի առ 'ի ծծել զարիւն նորա։ Իսկ նա ոչ կացեալ հակառակ չարին՝ զոյիւ չափ զկեանս իւր 'ի նոսա թողեալ, ինքն չուէ գնայ առ մեզ. և սա իսկ զհետևանս բանի զրուցացս այսոցիկ մեզ բացատրէ մի ըստ միոջէ։ Այս ամենայն եղև յերեքհարիւերորդի երեսներորդի երկրորդի թուականութեանն Թորգոմեան և յԱհկի ամսոյ՝ որ օր տասն էր։

Իսկ շարալլուկ Իսմայէլեանն զօր զկապուտ կողոպուտ սպանելոցն և զառ և զաւար և զպաճարս անասնոց բազմաց 'ի մի վայր ժողովեալ ջոլիրս տուեալ, այլ և զտղայս սպանելոցն և զկանայս գերի առեալ, և զպատուական գլուխս կոտորելոցն 'ի գրաստս բարձեալ՝ խրախոյս տային խաւարային զնդնչմամբ և լկտի երգօք և պարուք. և այսպէս առհասարակ զամենայն ինչ զորս և ըմբռնէին՝ առեալ չուեալ գնային։ Անդ էր տեսանել զձայն աղաղակի և ողբ անհանգուրժելի և արտօսրաթոր կականումն և սաստիկ պաղատանք կանանց և տղայոց բազմաց, և սարսափելի սասանումն հարուածելոցն տոչորէր զսիրտս ամենայն լսողացն և 'ի դառն արտօսր զարթուցանէր։ Իսկ նոցա ըստ բազում ցաւոց սրտից իւրեանց ոչ այլ ինչ բերիւր 'ի մխիթարութիւն քան

ցած Մովսեսի եղբայրները՝ քահանաներ Դավիթը՝ կրոնավորների դասից, և Սարգիսը՝ աշխարհականներից։ Իսկ Սահակը, երեխա հասակից կույր լինելով ու փառավորվելով կատարյալ գիտությամբ ու ամեն տեսակի առաքինի գործերով, ևս իբրև ոչխար բերվելով զոհ մատուցվելու, փայլեց անմատչելի ու անմահական լույսով։ Նրա նման նաև Աստծու երանելի մարդ Սողոմոնը, որ եկել էր Սագաստան աշխարհից և, իբրև մարմնով անմարմին, բնակվում էր մեզ մոտ ճգնավորական կյանքով ու զարմանալի առաքինի կարգով։ Նրան ևս գլխատեցին նույն ժամին, և նա պսակվեց աստվածապայծառ անասելի ու լուսերանգ պսակով։ Բոլոր սրանցից հետո [նահատակվեց] նաև Թեոդորոս սարկավագը, որի մասին նախապես ասացինք՝ ով մեծ համբերության շնորհիվ սրբերի շարքը դասվեց. բոլորի հետ սրանք թվով ութն են։ Իսկ մարդկանց մյուս խմբերը՝ [բաղկացած] զինվորական դասից ու աշխարհականներից, որոնք սպանվեցին այն օրը, երկու հարյուր հոգուց ավելի էին, որոնց անունները գրված են կյանքի գրքում։ Եվ գրեթե ոչ ոք չփրկվեց այնտեղի մարդկանցից, բացի մի քանիսից, որոնք նախքան սրով հնձելը ելել գնացել էին իրենց ձեռքի գործերը կատարելու։ Իսկ եկեղեցու սպասավորներից Գեորգ անունով մի սարկավագ փրկվեց մահվան մեծ երկյուղից, որովհետև վայելուչ այդ մարդը համարվում էր եկեղեցու ժառանգավոր։ Այդ պատճառով նրան չզցեցին նախորդ շար օրվա հնոցի մեջ, որպեսզի թերևս նրանից վերցնեն ինչ-որ բան՝ տզրուկի նման ծծելու համար նրա արյունը։ Իսկ նա չհակառակվելով շարին և իր ունեցվածքը ամբողջությամբ թողնելով նրանց, շարժվում գալիս է մեզ մոտ ու այս զրույցների հետևանքները մեկ առ մեկ բացատրում մեզ։ Եվ այս ամենը կատարվեց Թորգոմյան թվականության երեք հարյուր երեսուներկուերորդ տարում [883 թ.], ահեկան ամսի տասին։

Իսկ շարալլուկ իսմայելյան զորքը սպանվածների կողոպտածն ու ավարը և բազում անասունների նախիրները հավաքելով ու խմբելով մի տեղում, ինչպես նաև սպանվածների երեխաներին ու կանանց գերի վերցնելով, սպանվածների պատվական գլուխները գրաստներին բարձելով՝ քաջալերվում էին մութ ձայնով և լկտի երգերով ու պարերով։ Եվ այդպես առհասարակ այն ամենը, ինչ ձեռք էին գցում, առնում գնում էին։ Այնտեղ կարելի էր տեսնել [ու լսել] աղաղակ, անտանելի ողբ, արտասվաթոր կական, բազում կանանց ու երեխաների սաստիկ պաղատանք, և ծեծվողների սարսափելի սասանումը տոչորում էր բոլոր լսողների սրտերը ու արթնացնում դառն արտասուքներ։ Իսկ նրանց, իրենց սրտի մեծ ցավի համաձայն՝ որևէ բան չէր բերվում որպես մխի-

թէ հարց և եղբարց, արանց և որդւոց նոցա տարապարտ արեանցն հեղումն, որք Քրիստոսի ընծայեցան նուէրք։ Եւ այսպիսի յուսով զօրացեալք և ձեռս 'ի վեր համբարձեալք խնդրեցին 'ի Տեառնէ ապրեցուցանել զնոսա յանօրէն գերչացն անարգել պղծութեանց, ասելով այսպէս. «Մի՛ եկեսցէ 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից՝ և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ։» Ունէին ևս ընդ գերելոցն զօրն Իսմայէլեան արս երկուս բեռնակիրս առաջի իւրեանց՝ մի 'ի զինուորական կարգէ, միւսն յաշխարհական. որոց անուանք երկաքանչիւրոց նոցա համանունաբար միմեանց Կիւրակոս ճանաչիւր։ Իբրև յանդիման եղեն ոստիկանին պղծոյ և առաջի մատուցին և զպատուական գլուխսն ընտրելոցն Աստուծոյ և զկապուտ աւարին, յաւէտ իմն զուարթացեալ զուարճանայր. իսկ և իսկ հրամայէ զգերեալսն առհասարակ լուծանել թողուլ 'ի բաց ուր և կամիցին երթալ. զի խնդրուածք սրբոց սպանելոցն յիշատակեցան առաջի Աստուծոյ և այցելութիւն Նորա փրկագործել ետ զնոսա 'ի գթութիւնս առաջի ամենայն գերչաց նոցա։ Իսկ սակաւք ինչ իբրև ոգիք տասն, որք թագուցան 'ի թշնամեացն անտի տղայք հասակաւ,— զոր սուղ ինչ յետոյ ստացայ ես զնոսա 'ի գինս արծաթոյ— ազատեալք այսպէս յանկանոն կրօնից նոցա։ Իսկ 'ի միւսում աւուր անդ զերկուս արսն համանուանս, զոր զկնի գերելոցն բեռնակիրս ինքեանց ածեալ էին՝ հրամայէ զնոսա առաջի դատապարտ դատաւորաց կացուցանել. զի կամ պաշտեսցեն զանօրէն օրէնս նոցա և կամ սրով վատնեսցին։ Իսկ իբրև ածան և հարցան 'ի դատաւորաց անտի՝ նոքա զուարթագին աչօք ճառագայթաւեսեալք, և 'ի վեր ելս 'ի սրտի դնելով ասէին»։ Ոչ օրէն է մեզ քրիստոնէիցս ուրանալ զՔրիստոսի աստուածպաշտութիւն և զառնալ յանաստուած աստուածածանութիւնն Մահմետի. և մեք վասն անուանն Քրիստոսի պատրաստ եմք 'ի մեռանել և ոչ կեալ խղճիւ»։ Իսկ իբրև ծանեան զանհրապոյր միտս նոցա՝ այնուհետև հանեալ զիւրաքանչիւրս զնոսա 'ի թէատրոն անդր՝ ճարակ անողորմ սրոյ տային։ Եւ այսպէս 'ի բովս հրաբորբոքս կամաւոր մահու փորձեալք և զտեալք և քննեալք՝ որպէս և քնի արծաթ, բարձրացան 'ի բարձունս բարձրութեան երկնից ընդ հրեշտակս դասակցելով՝ առեալք զպսակն լուսոյ և կենաց յանձինս իւրեանց։ Եղև կատարումն սրբոցս այսոցիկ յամսեանն Ահկի՝ որ օր եօթնեասն էր։

Բայց զզինուորսն զայնոսիկ, որք մատնեցին զամրոցն 'ի ձեռս հեթանոսաց՝ զնոսա ևս առեալ ընդ ինքեանս զկնի գերելոցն՝ տարան առ ոստիկանն. զի զզարձ փոխարինի երախտեացն զոր ցուցին՝ հատուցէ նոցա, այլ և զզահեկանացն ևս տարևորս բաշխեսցէ տացէ նոցա։ Եւ

թարութիւն, որքան հայրերի, եղբայրների, ամուսինների ու որդիների, այսինքն՝ նրանց արյան անտեղի հոսելը, որոնք ընծայաբերվեցին Քրիստոսին։ Եվ այդպիսի հույսով սրտապնդվելով ու ձեռքերը վերև բարձրացնելով՝ նրանք Տիրոջից խնդրում էին իրենց փրկել տալ անօրեն գերիչների անարգել պղծություններից՝ ասելով այսպես. «Ամբարտավանների ոտքերը թող մեզ վրա չգան, և մեղավորների ձեռքերը թող մեզ չդողացնեն»։ Իսմայելյան զորքերը գերիների հետ իրենց առջևից տանում էին նաև երկու բեռնակիր տղամարդու, որոնցից մեկը զինվորական դասից էր, մյուսը՝ աշխարհական։ Նրանց երկուսի անունն էլ նույնն էր՝ Կյուրակոս։ Երբ նրանք ներկայացան պիղծ ոստիկանին ու նրան մատուցեցին Աստծու ընտրյալների պատվական գլուխները և կողոպուտն ու ավարը, նա է՛լ ավելի ուրախանալով՝ զվարճանում էր։ [Ոստիկանը] տեղնուտեղը հրամայում է բոլոր գերիներին բաց թողնել, և նրանք թող գնան, ուր կկամենան, որովհետև սուրբ սպանվածների խնդրանքը հիշատակվեց Աստծու առաջ, և նրա նախախնամությունը գթությամբ փրկել տվեց նրանց իրենց բոլոր գերիչների առաջ։ Մոտավորապես տասը հոգու, որոնց թաքցրել էին թշնամիները երեխա հասակում, ես ստացա կարճ ժամանակ անց արծաթյա փբրկագնով՝ այսպես ազատելով նրանց անկանոն կրոնից։ Իսկ հաջորդ օրը այն երկու համանուն տղամարդկանց, որոնց գերիներից հետո որպես բեռնակիրներ իրենք էին բերել, [ոստիկանը] հրամայում է կանգնեցնել դատապարտող դատավորների առաջ, որպեսզի նրանք կա՛մ պաշտեն նրանց անօրեն կրոնը, կա՛մ սրով սպանվեն։ Իսկ երբ բերվեցին և հարցաքննվեցին դատավորների կողմից, նրանք զվարթ աչքերով ճառագայթավորվելով ու ձեռքները[131] սրտերին դնելով՝ ասում են. «Մեզ՝ քրիստոնյաներիս, վայել չէ ուրանալ Քրիստոսի աստվածապաշտությունը ու ճանաչել Մահմեդի անաստված կրոնը, և մենք Քրիստոսի անվան համար պատրաստ ենք մեռնել, քան թե ապրել արատավոր կերպով»։ Իսկ երբ իմացան նրանց անխաբ մտադրությունը, բոլորին հանելով հրապարակ՝ անողորմ սրի ճարակ են տալիս։ Եվ այդպես հրաբորբոք բովում կամավոր կերպով մահով փորձվելով, զտվելով ու քննվելով, ինչպես որ արծաթն է փորձվում, նրանք բարձրացան երկնքի բարձունքները՝ դասվելով հրեշտակների շարքը և ընդունելով կյանքի ու լույսի պսակը։ Այս սրբերի վախճանը եղավ ահեկան ամսի տասնյոթին։

Բայց ամրոցը հեթանոսների ձեռքը մատնող զինվորներին ևս վերցրին իրենց հետ ու գերիների հետևից տարան ոստիկանի մոտ, որպեսզի նրանց ցուցաբերած երախտիքի փոխարեն հատուցի նրանց, ինչպես նաև բաշխի տարեկան դահեկանները ու տա նրանց։ Եվ երբ նը-

իբրև յանդիման ոստիկանին եղեն և ակն ունէին փոխարինի վարձուցն հատուցման, նա իսկոյն իսկ հրամայէ սրով սատակել զնոսա։ Եւ այնպէս ըստ արժանի իւրեանց կոշկոճամահ լեալ՝ հատաւ յոյս կենաց նոցա. և առ նոսա լցաւ իմաստնոյն պետիկոսի բան հաւատարիմ, եթէ «Յոյսք առ կենդանեօքս՝ անյոյս մեռանին։»

Ասա ապա հրաման հասեալ առ Նսր 'ի Յուսփայ ոստիկանէն մեծէ շուել գնալ յԱտրպատական աշխարհ և զապստամբեալ Գաբաւոնացիսն կողմանցն այնոցիկ կա՛մ 'ի հնազանդութիւն նմա համոզել և կա՛մ մարտիւ պատերազմի սրակոխ առնել։ Իսկ նա զմի 'ի ծառայից իւրոց պատուաւորաց՝ Բշր անուն, ոստիկան 'ի Դվին քաղաքի հաստատէր, նմա յանձն արարեալ զՍիսական տեարսն՝ զՍահակ և զԲարգէն, զի լինիցին 'ի դիպահուռ 'ի բանտի և 'ի կապանս, մինչև 'ի դարձ իւր այսրէն, և ինքն շուեալ գնայ ըստ հրամանի ոստիկանին Յուսփայ։ Իսկ Բշրն այն, որ յետ ընդ կրունկն թողաւ՝ ժողով սպայակոյտ զօրու բազմի գումարտակ արարեալ, ելանէ զկողմամբք գեղամաշէն գաւառին Մազազայ՝ քինախնդիր լինելով Շահանն կոչեցելոյ շահ վասն ոչ հնազանդելոյ նմա նոցա։ Եւ վասնզի նա յանմարտնչելի ամրոցին 'ի Սևան կղզւոջ առկայանայր, և Բշրն, զոր խնդրէր՝ այնմ ոչ եհաս, այնուհետև խորհէր ձեռն զգաւառօքն արկանել և զսակաւամասնեայ մնացողսն մարդկանն գերել և աւար հարկանել և ճարակ սրոյ տալ։ Վասնզի աւերեալ և անմարդացեալ էր առհասարակ 'ի բնակչաց աշխարհն ամենայն յաւարառութենէ թշնամեացն. սակայն և այնպէս ոչ յաջողեցան նմա չարիմաց խարդաւանութեան խորհուրդքն։ Վասնզի ոմն 'ի պատուաւորաց անտի Շահանն կոչեցեալ շահայ՝ Գէորգ անուն, ելեալ շրջէր զգաւառօքն սակաւամասնեայ շինութիւն աշխարհին ամրացուցանել 'ի հինից թշնամեացն։ Իսկ Բշրն 'ի դիմի նմա հարեալ յեղակարծումն ժամու՝ իսկոյն առնոյր Գէորգն զահ երկիւղի, զի ոչ աւելի քան զքսան այր ընդ նմա էին, և Բշրայն իբր զհազար այր. սակայն 'ի Տէր յուսացեալ՝ 'ի կրթութիւն յաղթութեան ընդդէմ նոցա դեգերէր։ Եւ ապա քաջապինդ քաջողջութեամբ սրտի ընդդէմ նոցա արիաբար շահատակեալ՝ ձի 'ի ներքս տանէր և զբազումս 'ի նոցանէ թաւալգլոր խաղացուցանէր։ Եւ թէպէտև յիւրոցն ևս արանց սակաւք ոմանք սրավարեալք 'ի թշնամեացն անկանէին. սակայն մոլորահոգմ խաբէութիւն մտաց Իսմայէլականացն ընդ կրունկն 'ի փախուստն զնոսա առաջի նորա դարձուցանէր։ Իսկ նոցա անարգել մոլեգնութեամբ զմառախուղ ստուերաց խաւարի զանձամբ արկեալ՝ զոր միանգամ գտանէին զճանապարհայն սրոյ ճարակ տային՝ զզգօն և զանպարտ քահանայսն, և զերկրագործ մշակսն, և զխաշնարածսն, և զճանապարհորդսն, և զաղքատսն ևս։ Եւ

բանք ներկայացան ոստիկանին և փոխհատուցում էին ակնկալում, նա իսկույն ևթ հրամայում է սրով կոտորել նրանց։ Եվ այդպես նրանք իրենց արժանիքի փոխարեն տանջամահ եղան, և կտրվեց նրանց կյանքի հույսը։ Հենց նրանց է վերաբերում իմաստուն քերթողի վատահելի խոսքը. «[Ում] հույսը կենդանի մարդկանց վրա է, նրանք անհույս մեռնում են»։

Այստեղ Նսրին մեծ ոստիկան Յուսուֆից հրաման է հասնում՝ շարժվել գնալ Ատրպատական աշխարհը և այն կողմերի ապստամբած գաբավոնացիներին կա՛մ համոզել նրան հնազանդվելու, կա՛մ կռվելով սրակոտոր անել։ Իսկ նա իր պատվավոր ծառաներից մեկին, որի անունը Բշրը էր, Դվին քաղաքում հաստատում է ոստիկան՝ նրան հանձնելով Սիսական տերերին՝ Սահակին ու Բարկենին, որպեսզի նրանց շղթայակապ պահեն բանտում մինչև իր վերադարձը այդտեղ, և ինքը չվում-գնում է Յուսուֆ ոստիկանի հրամանով։ Իսկ այն Բշրը, որ հետեում թողնվեց, հեծյալ մեծ զորք է հավաքում և դուրս գալիս գեղամաշեն Մազազ գավառի կողմերը՝ վրեժխնդիր լինելու Շահան կոչվող շահից իրենց չհնազանդվելու համար։ Եվ քանի որ նա տեղավորվել էր Սևան կղզու անմատչելի ամրոցում, և Բշրը, որ փնտրում էր նրան, չհասավ, այնուհետև մտածում էր ձեռք գցել այդ գավառները և մնացած քիչ մարդկանց էլ գերել, կողոպտել ու սրի ճարակ տալ։ Չնայած ամբողջ աշխարհը թշնամիների ավարառությունից առհասարակ ավերվել ու անմարդաբնակ էր դարձել, սակայն այդպես էլ նրան չհաջողվեց [իրագործել] իր չարամիտ ու նենգ մտադրությունը, քանի որ այն Շահան կոչված շահի պատվավոր մարդկանցից Գեորգ անունով մեկը ելել ու շրջում էր այն գավառներում՝ թշնամի ավազակներից ամրացնելու երկրի սակավամասն բարեկարգությունը։ Իսկ Բշրը երբ անսպասելիորեն դուրս է գալիս նրա դեմ, Գեորգը իսկույն սարսափահար է լինում, որովհետև նրա հետ քսանից ավել մարդ չկար, իսկ Բշրինը մոտավորապես հազար մարդ էր։ Սակայն Տիրոջ վրա հույս դնելով՝ [Գեորգը] սպասում էր նրանց հաղթելու հույսով։ Եվ ապա քաջապնդված ու սրտապնդված՝ [նա] ձի է հեծնում և արիաբար գրոհելով նրանց դեմ՝ շատերին թավալգլոր անում։ Թեպետև իրենց մարդկանցից քչերը նույնպես սրահարվելով թշնամիների կողմից սպանվում էին, սակայն մոլոր ու խաբված իսմայելցիները նրանց առաջ փախուստի էին մատնվում։ Իսկ նրանք անարգել մոլեգնությամբ, իրենց պատելով խավար ստվերների մառախուղով, ում որ գտնում էին ճանապարհի վրա, սրի էին քաշում՝ հեզ ու անպարտելի քահանաներին, երկրագործներին, խաշնարածներին, ճանապարհորդներին և անգամ՝

այսպէս զանպարտսն պարտաւոր մահու արարեալ և հատեալ զգլուխս նոցա՝ ընդ իւր առեալ տանէր 'ի Դվին քաղաք փախստիւ պարծանաց՝ իբր թէ անձին քաջութեամբ և մարտիւ բազմաւ զայն գործեալ էր նորա յաղթութիւն. որք էին թուով աւելի քան զքսան տարապարտ հատեալ գլուխքն։ Եւ ապա աւուրս հարուստ մի դարեալ դադարեալ՝ զօրու բազմի դարձեալ հորդան տայ կրկին քան զառաջինն և ասպազէն առնազէն զնոսա վառեալ՝ չուէ գնայ յեզր ծովակին հանդէպ ամրոցին Սևան կղզւոյ, զի թերևս անզգուշաբար 'ի վերայ հասեալ Շահանն կոչեցեալ շահայ՝ որոգայթս մահու կամ կապանաց նմա մարթասցէ հասուցանել։ Իսկ նա իբրև ետես զայն ոյժ պնդութեան առ դուրս եկեալ հասեալ՝ վաղվաղակի պատրաստէ նաւս մետասան, և ամբառնայ 'ի նաւս անդր իբրև արս եօթանասուն ազատս և զծառայս իւր լայնալիճ աղեղամբք՝ արս քաջակորովս և հմուտս 'ի ձգտումն նետաձգութեանց, որ զրեթէ 'ի մազոյ ոչ վրիպէին։ Ապա և ինքն ևս ընդ նոսին 'ի նաւսն վերելակեալ գնային ծովամարտիկ առ թշնամիսն. և միջամուխք լեալք յաջողաձեռն նետաձգութիւնս՝ զոմանս միականիս 'ի թշնամեացն առնէին, և զայլս բազումս կարեվէր վիրաւորեալ սատակէին։ Եւ այնպէս հատեալ շարժեալ 'ի բաց զմարտ ռազմի բազմութեան թշնամեացն 'ի փախուստ առաջի նոցա դառնային։ Իսկ Բշրն այն **ամօթ զանձամբ արկեալ**՝ ջանայր վրէժս փոխանակ այնր պահանջել, և դէպ ուղիղ գնացեալ յամրոցն Գեղայոյ, զի թերևս անզգուշաբար 'ի վերայ հասեալ՝ առնանել ինչ նմա մարթասցէ. սակայն և անտի ևս ձեռս 'ի գլուխ ելանէր։ Վասնզի Գէորգն այն, զորմէ նախն պատմեցաք վասն մարտի քաջութեան նորա, ըստ դիպաց իմն յամրոցի անդ հանդիպեցաւ։ Եւ իբրև ետես զայն ամբոխ հասեալ մերձ 'ի դուռն ամրոցին՝ ապա վառեալս 'ի զէնս և 'ի զարդս և 'ի տէգ նիզակս, և այլ ևս արս սակաւս ընդ ինքեանս առեալ՝ արտաքս առ թշնամիսն յամրոցէն ելանէր։ Եւ ապա միամարտեալ ընդ սպայակոյտ զօրուն՝ նախ կարթակոտոր զերիվար Բշրայն առնէր նրանաւ սրոյն, մինչ զի հազիւ յայլ ձի աշտանակեալ փախչէր. և ապա այլոցն ևս մարտակցացն աջակցեալ Գէորգայ՝ տապաստ արկանէին զյոլովս 'ի թշնամեացն և 'ի փախուստ զնոսա դարձուցանէին. և առ նմա յարառոցեալ լինէր մակասաստութիւն միայն առ բազումս՝ ասել թէ «Դաւիթ արուորագոյն քան զԳէթացիսն։» Իսկ կարաւան թշնամեացն այսանակ ձաղանօք գնացեալ մտին 'ի Դվին քաղաք, և բազում սպառնալեօք ջանային վրէժս 'ի բնակչաց ամրոցին պահանջել։

աղքատներին։ Եվ այդպես անմեղներին մեղապարտ դարձնելով ու կտրելով նրանց գլուխները՝ նա առնում տանում էր իր հետ Դվին քաղաքը սնապարծ փախուստով՝ [ասելով], թե իբր այդ հաղթանակը ինքն է տարել քաջագործությամբ ու մեծ կռվով. նա իր հետ տարել էր ավելի քան քսան անտեղի կտրած գլուխներ։ Եվ շատ օրեր դար ու դադար առնելով ու դարձյալ հանելով առաջինից ավելի մեծ զորք և նրանց զինելով ասպազեն ու առնազեն զենքերով՝ նա շարժվում գնում է ծովակի ափը, Սևան կղզու ամրոցի դիմաց, որպեսզի թերևս հանկարծակի Շահան կոչեցյալ շահի վրա հարձակվելով՝ կարողանա գցել մահվան թակարդը կամ շղթայակապ անել։ Իսկ նա երբ տեսավ, որ այն մեծ ուժը եկել հասել է դռներին, շուտափույթ պատրաստում է տասնմեկ նավ, նրանց վրա բարձրացնում յոթանասուն ազնվական մարդու և լայնալիճ աղեղներով զինված իր ծառաներին, որոնք քաջակորով ու նետաձգության մեջ հմուտ մարդիկ էին և գրեթե մազից էլ չէին վրիպում։ Ապա ինքն էլ նրանց հետ նավ է բարձրանում, և նրանք գնում են թշնամիների դեմ ծովամարտ տալու։ Եվ հաջողությամբ նետեր արձակելով՝ նրանք թշնամիներից ոմանց միաչքանի են դարձնում, իսկ շատերին էլ խիստ խոցելով ու վիրավորելով սպանում են։ Եվ այդպես նրանք կտրում ու հեռացնում են թշնամիների բազմության ռազմաճակատը, և թշնամին նրանց առաջ փախուստի է դիմում։ Իսկ այն Բշրը ամաչելով ձգտում էր դրա փոխարեն վրեժ լուծել։ Եվ նա ուղիղ գնում է դեպի Գեղայոյ ամրոցը[133], որպեսզի թերևս հանկարծակի հարձակվելով՝ կարողանա նրան վնասել, սակայն այնտեղ էլ նա տալիս է իր գլխին, քանի որ այն Գեորգը, որի խիզախ կռվի մասին նախապես պատմեցինք, այդ պահին հանդիպեց նրան այն ամրոցում։ Եվ երբ նա տեսավ, որ ամբոխը հասել է ամրոցի դռների մոտ, զինվում է զենքերով, զարդերով, տիգավոր նիզակներով և իր հետ վերցնելով նաև մի քանի այլ մարդկանց՝ ամրոցից դուրս է գալիս թշնամիների դեմ։ Եվ ապա մենակ կռվելով ամբողջ զորքի դեմ՝ նա նախ սրով ջարդուփշուր է անում Բշրի երիվարը, այնպես որ [նա] հազիվ մի այլ ձի հեծնելով փախչում է։ Եվ ապա մյուս մարտակիցները ևս աջակցելով Գեորգին՝ թշնամիներից շատերին գետին էին փռում և մնացածներին փախուստի մատնում։ Եվ նրանք շատերի նկատմամբ վարվում են առավել սաստկությամբ՝ ասելով, թե «Դավիթն ավելի կորիճ է, քան գեթացիները»[133]։ Իսկ թշնամիները խմբովին այդպիսի անարգանքով գնացին մտան Դվին քաղաքը և մեծ սպառնալիքներով ջանում էին վրեժ լուծել ամրոցի բնակիչներից։

Իսկ ես, որ նախ շոգայն 'ի թագաւորազանց բողբոջն Աշոտոյ՝ առ նմին կացեալ մնացի մինչև ամարային յաշունն յեղանակեալ յեղափոխէր, բազմաբար բարեաց մտաց բարութիւն և լրութիւն սիրոյ առ 'ի նմանէն ընկալեալ առատաձեռնութեամբ 'ի բոլոր մասունս պիտառութեանց։ Եւ ապա առ 'ի նմանէն յղարկեալ շոգայ առ թագաւորն Հայոց Գագիկ, ըստ միշտն հրաւիրման 'ի կոչման նորա. վասն զի հայրապետանոց տունն հանդերձ գիւղօք և գերդաստանօք առ հասարակ ընդ ձեռամբ նուաճեալ էր Նսրայն, և մեք անբնակ իմն վայրակացեալ, և ոչ ոք ոչ էր այն՝ որ զուն 'ի վերայ գործէր ոգւով շափ սակս նորոգման մայրաքաղաք եկեղեցւոյն, և հոգևոր մշակութեամբ հանդիսանայր առ 'ի դարձուցանել զգերութիւն նոր Սիօնի. զի յոյժ պակասումն և լքումն լինէր ամենայն պատերազմող ձեռին։ Իսկ իմ եկեալ առ մեծ թագաւորն Գագիկ, և նա ընդունէր ածէր և յանձանձէր զմեզ ամենայն հոգևոր սիրոյ հարազատութեամբ և հաստատուն հաւատով և աներկբայ յուսով, և աներկևան սիրով պաշտպանեալ հանդերձ եղբարբն իւրով Գուրգենաւ՝ անկարօտ զհարկաւոր պէտս մարմնոյ լցուցանէր, և ապա զսովորական իմաստութիւնն քաղցրացուցեալ իւր աներկբայ մտօք յուսացուցանէր զմեզ, զի ոգւով շափ ջան 'ի մտի եղեալ հոգասցի վասն դարձի մերոյ 'ի բնակութիւնս մեր. մանաւանդ եթէ վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցեաց՝ որպէս և քրիստոնէից իսկ կարգք պահանջեն ամբողջ զհաւատոցն սրբոց պահել զօրութիւն. այլ այս երբ Տէր կամեսցի։

Բայց ստանօր ոստիկանն Նսր ելեալ 'ի Պարս Ատրպատականէ՝ գայ շուէ ընդ կողմն Սիւնեաց սպայակոյտ մարտիկ զօրու հանդերձ։ Եւ վասն զի իշխանն Սիւնեաց Սմբատ 'ի սեպհական իւրում գաւառի անդ դարեալ դադարէր 'ի Վայոց ձոր, 'ի ճահ իւր առնոյր ոստիկանն ըստ խոտորնակ մտացն կա՛մ ծածկաբար 'ի վերայ ընթանալ առ 'ի ըմբռնել զիշխանն և կա՛մ մարտամբոխ վառելովք վանել զնա առ 'ի գերել և յափշտակել։ Բայց իբրև ետես զնա յաւէտ զգուշացեալ բաղում հեծելազօր գնդիւ և ամրոցօք ևս վայրիցն բագձաձեալ՝ այնուհետև խաղաղութիւն ընդ նմա խօսէր. և բազում օժտութիւնս յիշխանէս Սմբատայ ընկալեալ, և յանձն ևս առեալ արձակել թողուլ զեղբայրս նորա 'ի կապարանէ բանտին՝ և ինքն շուէ գնայ 'ի քաղաքն Դվին։ Եւ իսկ և իսկ առեալ զտարապարտ սակն պարտուց դահեկանաց 'ի կրտսերոյ եղբօրէն անուամբ Բաբգենի՝ և արձակէ առաքէ զնա առ իշխանն Սմբատ. իսկ զՍահակ եղբայր նորուն դեռևս 'ի դիպահուոչ թողեալ, մինչև

Իսկ ես, որ նախ գնացի Աշոտ թագավորազուն ժառանգի մոտ, այնտեղ մնացի մինչև ամռան եղանակի աշնան փոխվելը՝ բոլոր կարիքների համար առատաձեռնությամբ նրանից ստանալով բազմաթիվ բարիքներ ու լիակատար սեր։ Եվ ապա նրա մոտից ճանապարհ ընկնելով՝ գնացի Հայոց Գագիկ թագավորի մոտ՝ նրա մշտական հրավերի ու կանչի համաձայն։ Քանի որ Նսրը հայրապետանոցը գյուղերի ու կալվածքների հետ միասին առհասարակ նվաճել էր, և մենք էլ որպես անտուն մարդիկ դրսում էինք մնացել, ոչ ոք չկար, որ մահն աչքն առած ջանք թափեր աթոռանիստ եկեղեցու նորոգման համար ու հոգևոր ծառայությամբ աշխատեր նոր Սիոնի գերիներին վերադարձնելու համար, որովհետև խիստ պակասել ու թուլացել էին բոլոր կովողները։ Իսկ երբ ես եկա Գագիկ մեծ թագավորի մոտ, նա ընդունում էր մեզ և հոգ տանում հոգևոր սիրո ամբողջ հարազատությամբ, հաստատուն հավատով ու աներկբայելի հույսով։ Իր եղբայր Գուրգենի հետ միասին անկեղծ սիրով պաշտպանելով մեզ, առատորեն կատարելով մարմնի անհրաժեշտ պետքերը և ապա քաղցրացնելով սովորական իմաստությունը՝ նա իր աներկբա մտքով հույս էր տալիս մեզ, որ հոգաչափ ջանք թափելով հոգ կտանի մեր բնակավայրերը վերադառնալու մասին, մանավանդ որ ամբողջ աշխարհի խաղաղության և սուրբ եկեղեցիների հաստատուն լինելու համար հենց քրիստոնյաների կարգերն են պահանջում ամբողջական պահել սուրբ հավատի զորությունը, բայց դա այն [ժամանակ], երբ Տերը կամենա։

Այդ ժամանակ դուրս գալով պարսկական Ատրպատականից՝ ոստիկան Նսրը հեծելազնդի մարտիկների հետ միասին շարժվում գալիս է Սյունյաց կողմը։ Եվ քանի որ Սյունյաց Սմբատ իշխանը դար ու դադար էր առել իր սեփական գավառում՝ Վայոց ձորում, ոստիկանը հարմար պահի էր սպասում խաբեությամբ կամ ծածուկ վրա հասնել՝ իշխանին բռնելու կամ զինված շատ մարտիկներով նրա հետևից ընկնելով նրան գերելու-հափշտակելու համար։ Բայց երբ [Սմբատը] նրան տեսավ մեծ հեծելազնդով ավելի զգուշացած ու ապահով վայրերում տեղավորված, սկսեց նրա հետ խոսել խաղաղությամբ։ Եվ շատ նվերներ ընդունելով Սմբատ իշխանից ու հանձն առնելով բանտի կապանքներից արձակել ու բաց թողնել նրա եղբայրներին՝ ինքը շարժվում գնում է Դվին քաղաքը։ Եվ Բաբգեն անունով կրտսեր եղբորից անմիջապես առնելով անօրինական տուրքն ու պարտքը՝ նրան արձակում և ուղարկում է Սմբատ իշխանի մոտ, իսկ նրա եղբայր Սահակին դեռևս թողնում է բանտում, մինչև որ նրանից ևս առնի դահեկանների

առցէ 'ի նմանէ ևս զդահեկանացն պարտապանութիւնն խոստման, և ապա արձակեսցէ և տացէ նմա 'ի ձեռս սեպհական տէրութիւնն իւր։

Բայց բնակիչք ամրոցին Քեղեայ իբրև լուան զգալուստ ոստիկանին և 'ի մտի եդին զյոյժ մոմառումն սպառնութեան առ 'ի նմանէն նոցա, զահի հարեալք և ահիւ ըմբռնեալք և կարծիս 'ի մտի եղեալ անհասատատ խորհրդով, թէ գուցէ մատնեսցի ամրոցն 'ի ձեռս ոստիկանին և այնպէս անհնարին տանջանաց և մահու մատնեսցին։ Եւ ապա այսպիսի անզգուշալի երկիւղի զանձինս տուեալ՝ ամենեին բնաւին իսկ ունայնացուցեալ լքին 'ի բաց զամրոցն 'ի բնակչաց անտի։ Եւ ապա զօրականք զինուորացն ևս ելեալ գնացին 'ի կամս անձանց զինչպիտութեան իւրեանց. իսկ ոստիկանին յետ երկեամ մի աւուրց իմացեալ զթափրանալ ամրոցին 'ի բնակչաց անտի՝ յինքն գրաւէ առնու և ընդ ձեռամբ նուաճէ առանց իրիք աշխատութեան, և շուրջանակի զգեօղս և զաւանս և զագարակս յիւր անուն պայազատէ։

Այսուհետև մի՛ բացածանօթասցի թերևս 'ի մէնջ յարակացեալ իմն հունձք շար մշակացս, որ մառախլապատ միգապատ պաշարմամբ զմեզ հնձէ։ Զի թէ ըստ սահմանելումն 'ի մեզ Ստեղծողին՝ 'ի վեր յերկինս զհայեցուածս մեր պատրաստեալ էաք և առ նմանութիւն կերպարանի Ստացողին ընթացեալ, ապաքէն կեցուցանող զօրութեամբ Տեառն փրկեալք լինէաք և ոչ ևս մատնեալք 'ի ձեռս թշնամեաց մերոց. այլ և տապաստ ևս ընդ ոտիւք արկեալ զհակառակորդսն և տկարութեամբ ազատեալ ընկեցեալ յերկիր և երանելի զմեզ 'ի վերայ երկրի 'ի բազմաց քարոզեալ։ Զի թէ ժողովրդեան իմոյ, ասէ՝ լուեալ էր ինձ, կամ Իսրայէլի զճանապարհս իմ գնացեալ էր՝ որպէս զոչինչ մի խոնարհ արարեալ էր իմ զթշնամիս նորա և 'ի վերայ նեղչաց նորա արկեալ էր զձեռն իմ։ Այլ վասնզի ըստ կարգի պաճարաց և անսանոց անմտից երկրապիշք եղեալք և այլապէս 'ի մեզ ինքեան ցուցաք զօրինակ պատկերին և նմանութեան Տեառն, վասն այսորիկ թշնամիք Տեառն ատեցին մեզ. և յանտառաբոյժ խոզից և յանցաւորաց ճանապարհի կոխեցաք իբրև զկաւ գոեհաց՝ և 'ի գլուխս մեր կուտեցան քարինք ձորոյն Նաքովրայ։

խոստացած պարտքը և ապա նրան ևս բաց թողնի ու տա իր սեփական իշխանությունը։

Բայց Քեղի ամրոցի բնակիչները, երբ լսեցին ոստիկանի գալուստյան մասին և հիշեցին իրենց նկատմամբ ցուցաբերած նրա սաստիկ սպառնալիքն ու մռնչյունը, վախեցան, սարսափահար եղան և անհիմն կերպով կասկածեցին, թե գուցե ամրոցը հանձնվի ոստիկանին, և իրենք էլ այդպես մատնվեն սաստիկ տանջանքների ու մահվան։ Եվ ապա այսպիսի անզգույշ երկյուղի մատնվելով՝ բնակիչները ամբողջությամբ լքեցին ու դատարկեցին այն ամրոցը։ Եվ ապա պահապան զորքը ևս ինքնագլուխ կերպով դուրս եկավ ու գնաց։ Իսկ ոստիկանը, մի երկու օր անց[134] իմանալով, որ ամրոցը դատարկվել է բնակիչներից, առանց որևէ շարշարանքի գրավում է այն, գցում իր ձեռքի տակ և իր անունով սեփականում նաև շրջակայքի գյուղերը, ավաններն ու ագարակները։

Այսուհետև մեզանից թող անհայտ չմնա մեր՝ շար մշակներիս դիմաց եղած հունձը, որ մառախլապատ ու միգապատ պաշարմամբ կոտորում է՝ մեզ։ Որովհետև եթե մեզ համար ստեղծողի սահմանելուն համապատասխան մեր հայացքները հառնեինք դեպի վեր՝ դեպի երկինք բարձրացնելու համար և եթե ընթանայինք արարչի պատկերի նման, ապա ուրեմն Տիրոջ կենդանացնող զորությամբ կփրկվեինք և այլևս չէինք ընկնի թշնամիների ձեռքը, այլ հակառակորդներին մեր ոտքերի տակ տալով, տկարացնելով, անարգելով ու գետին գցելով՝ մենք երկրի վրա շատերի կողմից կքարոզվեինք որպես երանելի [մարդիկ]։ Որովհետև, ասում է, եթե իմ ժողովուրդը լսեր ինձ, կամ թե ես գնայի Իսրայելի ճանապարհով, ինչպես որ նրա թշնամիներին ես չէի նվաստացրել, ես իմ ձեռքը կդնեի նրա նեղիչների վրա։ Բայց քանի որ անբան անասունների հոտերի նման մենք երկրապիշ եղանք և մեզանում Տիրոջ պատկերն ու նմանությունը այլ ձևով ցույց տվեցինք, այդ պատճառով Տիրոջ թշնամիները խաբեցին մեզ։ Եվ մենք վայրի խոզերի ու ճանապարհի անցորդների կողմից կոխոտվեցինք իբրև բանուկ ճանապարհի ցեխ, և մեր գլխներին կուտակվեցին Նաքովր ձորի քարերը։

ԲԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ

ՍԱԿՍ ՅԻՇԱՏԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԻՐՈՅ։

Թագաւորք աստուածասէրք և բարեպաշտօնք, իշխանք և պետք և հրամանատարք Հայոց, եղբարք մեր և առաքեալք եկեղեցւոյ և փառք Քրիստոսի՝ աղերս առաջի մատուցանեմ ձեզ զպիտառութիւն զայս բանի։ Զի իբրև ցուցող հայելի 'ի միտս անբասիրս սովաւ զձեզ հրաւիրեալ, և զյանդուգն և զանկարգ ճամարտակելն արտալած արարեալ՝ անպատուհաս ես մնացից յահեղ մրրկէ աստի և յահագին ալեացս փրկելոց և զիզացելոց և կուտակելոց և զիմեցելոց 'ի վերայ Ասքանազեանս գրոհի։ Սարսափեալ զոփացեալ զողացաւ սիրտ իմ, զի տիգօք աչաց խաղաց Տէր 'ի վերայ մեր սակս անօրէնութեանց մերոց. և վասնզի ցարդ ես յարակայեալ անդնդապատոյտ ալեացն յորդութիւնք խորութեանցն և ոչ հանդարտեաց, վասն այսորիկ ես բռնադատեցայ գալ յայս և առնել տալ տագնապեալ զՊատմութիւնս։ Նախ 'ի կրից աստի զիս փութացուցեալ, որ շուրջ պատեալ պաշարեաց զմեզ. և ապա 'ի հրամանէ թագաւորաց 'ի վերայ հասելոյ՝ որ զիմս ճմլեալ բաղխեաց զիմաստիցս գործարան և հաւանեցոյց ոչ ի՛նչ գոլ ինձ յայսմիկ դանդաղելի։ Սակայն ոչ գրաւորական անձայն տառիւք միայն որ 'ի վերքան զիս է ձգտումն իրի զմտաւ ինչ ածեալ. այլ բոլորաձայն հնչմամբ հագագասփիւռ ձայնիւ դարուց 'ի դարս զայս ձեզ աւանդեալ ուղղախոհ իմացուածիւ։ Զի մի՛ անհասութիւն ծերունեան զրուցաց այլոց ոմանց վէպս ինչ խարեալ խղճի մտաց կարօտ զձեզ կացուսցէ. այլ զի զաչս արձակեալ յարտադրութիւն բանիս մաքրական մտօք անբաղայապէս՝ 'ի մասնաւոր ասացելոց աստի տեսցի զկնի եկելոց իւրաքանչիւրոց անցնիւրն զրուցաց ստուգութիւն ըստ ընթերցանութեան հանդիսի բանիս. և այս ցայս վայր հերիքասցի։

Այլ ես այսուհետև մաղթանս առաջի ձեզ ընթերցողացդ մատուցից, մի՛ բերիլ ձեզ ևս վերստին յայս տեղի տանջանաց, յորս այժմ առ հասարակ թմբրեցաք 'ի ծուխ մեղաւորաց։ Այլ ախորժաբար լսող լինել աղերսալի իմոյս բանից և բաղձայնութեան խրատու՝ լինել ձեզ զաւակ լաւագունի պատարագելոյն Սեթայ և գրիչ յորդիս Աստուծոյ.

ԻՐ ԱՆՎԱՆՆ ԱՐԺԱՆԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Հայոց աստվածասեր ու բարեպաշտ թագավորներ, իշխաններ, պետեր, հրամանատարներ, մեր եղբայրներ, եկեղեցու առաքյալներ, Քրիստոսի փառքեր, աղերսանքով ձեզ եմ մատուցում այս պիտանի պատմությունը, որպեսզի իբրև ուղեցույց հայելի, սրանով անբասիր մտքով ձեզ հրավիրելով և ձեր հանդուգն ու անկարգ ճամարտակությունը արտահալածելով՝ ես անպատիժ մնամ այս ահեղ մրրիկից և Ասքանազյան ազգի վրա եկած, դիզված, կուտակված, փրփրած ահագին ալիքներից։ Սարսափելով ու տագնապելով զողաց իմ սիրտը, որովհետև Տերը աչքերի տեգերով խեթ նայեց մեզ վրա անօրենությունների պատճառով։ Եվ քանի որ ցարդ տևեց անդնդապատույտ ալիքների հորձանքը և չհանդարտվեց, այդ պատճառով ես ստիպված եղա գալ այստեղ և ստեղծել այս տագնապալի պատմությունը։ Նախ ինձ շտապեցնող նեղությունից, որ պաշարեց մեզ, և ապա՝ թագավորների վերահասու հրամանից, որ ճմլեց իմ գիտակցությունը և համաձայնեցրեց, որ ես չհապաղեմ այս [գործի] մեջ։ Սակայն ես այս գրավոր անձայն տառերով դեպքի նկարագրությունը ոչ միայն ինձնից վեր համարեցի, այլև կոկորդի ամբողջ ձայնով ու հնչմամբ ճշգրտորեն ձեզ ավանդեցի դարերից դար [եկող] այս պատմությունը։ Որպեսզի ոմանց հնագույն զրույցներն ու պատմությունները ձեզ չհասնելը խարանելով ձեր միտքը՝ ձեզ զուրկ չթողնի, այլ որպեսզի մաքուր մտքով ու անպարսավելի կերպով աչք ձգելով այս իմ աշխատությանը՝ այս մասնավոր զրույցների միջոցով ցույց տրվի հետո եկողներից յուրաքանչյուրի պատմության ճշգրտությունը մեկ առ մեկ իմ այս պատմության ընթերցանությամբ. և այս մինչև այստեղ թող բավականացնի ձեզ։

Բայց ես ձեզ, ընթերցողներիդ, մաղթանք կմատուցեմ, որպեսզի դուք վերստին չընկնեք այս տանջանքների մեջ, որ մենք այժմ առհասարակ թմբել ենք մեղավորների ծխով։ Այլ ախորժաբար լսող եղեք իմ այս աղերսալի խոսքին և միաբանության խրատին, [որպեսզի] դուք ավելի լավ զավակներ լինեք զոհված Սեթին և գրվեք Աստծու որդիների շարքում և ոչ թե եղբայրասպան անիծյալ Կայենի զարմի։[135]

այլ ոչ խառն ընդ անիծեալ եղբայրազրաւն Կայենի զարմից կապիլ 'ի կնատ և 'ի մեղմեխ և 'ի վայրաքարշ դստերս մարդկան։ Մի՛ 'ի շար ուղխից սանդարամետին զրահեղեղ սատակմամբ ողողեսջիք՝ որպէս յայնժամ երկնասահան և երկրահոսան ջրահեղձոյց մարդիկ Նոյեան դարուն. այլ աւետարանական ուղկանաւ արկելոյ 'ի ծովզուսպ և ամփոփ վարուք ժողովել կարթիւք յարքունական կայանս։ Մի՛ անկանոն կրօնիւք ամբարձջիք 'ի տանիս նանրութեան, և հրացայտ ցոլութեան ծծմբոյ դիւաշունչ հողմոյ զձեզ պտուտկեալ տոչորիցէ կորստեան կիզմամբն. այլ ելեալք 'ի Սոդոմայ՝ այլ և 'ի Սեգովրայ. յեւ իմանալի բարձրութիւնն սքանչելապէս լերանցն յաւիտենից թեւակոխեսջիք, ուր պայծառապէսն իսկ բորբոքի ջահ սրբութեան զգուշացելոցն յարթնութեան։ Մի՛ խոտորեսջիք յարքունական 'ի կուռ պողոտայէն յաջ կամ յահեակ՝ թողացուցեալ զկամս ձեր զկնի պատրանաց պատրողին. վասն զի յերկոցունց կողմանց դարանակալէ՛ աւազակաց բազմութիւն, և մահ է բաժին անկելոցն 'ի ձեռս նոցա։ Մի՛ մեղիցէ ձեզ կարծեցեալ արեգակն տուրնջենային և կամ լուսին գիշերոյ գիւամոլար խռովութեամբ, որ մերոյն բնութեանս կրիւք խաբեացն զմեզ և խաբէ. այլ զանց արարեալ զփաղաքշական խորհրդովք ախորժից յողդողդելոցն, զի ճշմարիտ արեգակն արդարութեան ծագեսցի 'ի սիրտս ձեր սիրովն աստուածայնով։ Մի՛ քրէիքուր վարուց չարութեամբ նաւաբեկեալք՝ ապաշաւեսջիք զուղիղ և զճշմարիտ զձեր վարս, և կոխածս զռեհաց եղիջիք իբրև զաղն անհամեալ. այլ ողջ ամբողջ և անխախուտ մնասցջիք 'ի պարսաւադիտէն զրժողէ՝ խնդութեամբ ժամանել 'ի նաւահանգիստ կենաց։ Մի՛ զպարծանս հարցն առաքինութեանց ձեզ բաւական վարկեալ և 'ի նոյն ապաստանեալ՝ պղերգութեամբ անձանց 'ի վիհս խորափիտս ընկղմեսջիք. զի թէ հօր հմտաբար տեղեկութեամբ ղեկավարեալ իցէ, զի՞նչ օգուտ յայնմանէ որդւոց բերցի՝ եթէ 'ի նաւաբեկութեան կորնչին. վասնզի ոչ ինչ շահ զհօրն հմտութիւնն կարծեմ լինել որդւոց նաւաբեկութեան։ Մի՛ օտարացեալք եղիջիք 'ի մօրէ, որ վերստին զձեզ ծնաւ նորոգատուր բանիւն կենդանականաւ 'ի յոյսն կենդանի։ Մի՛ խաբիցիք յարգանդէ վրիպեալք կամ թէ մերկացեալք յայնմանէ լուսաւոր և փրկական զգեստուն, որով վայելչապէս զգեստաւորեցայք յարգանդէ աւազանին։ Մի՛ խօսիցիք ստութիւն՝ զառեալն իբրև զչարեալ նանրապէս համարել, և ժխտող լինել Որդւոյն սիրելւոյ աստուածական պատգամացն լեռնացելոց. այլ եռանդնասէր սրտի ջերմութեամբ հեռանալ յայնմանէ, որ ինչ վնասակար և հակառակ է հոգւոյ, և 'ի բաց զտխրութիւն տարերցս սնոտւոց մերկանալ մաքուր մտօք։ Այսպէս թերևս և սրովբէական հետ միասին կապվեք մարդկանց թույլ, նենգ ու ստորաքարշ դստրերի հետ։ Եվ դժոխքի շար, անտեղի ջրհեղեղի միջոցով սպանվելով չողողվեք, ինչպես այն ժամանակ, Նոյյան դարում, երկնքի սահանքներից հոսող ու գետնից դուրս բխող ջրերից խեղդված մարդիկ, այլ ավետարանական ուղկանով զցվելով ծով՝ զուսպ ու պարկեշտ վարքի շնորհիվ կարթերով հավաքվեք արքունական բնակատեղերում։ [Որշունչ հողմի ծծմբի հուր ցայտեցնող ցոլացումը ձեզ պտտեցնելով՝ չայրի ու կիզելով չկորցնի, այլ դուրս գալով Սոդոմից, ինչպես նաև Սեգովրից[136] դուք սքանչելապես ձգտեք թռչել մշտական լեռների առավել իմանալի բարձրության վրա, ուր պայծառորեն բորբոքվում է զգուշացողների սուրբ ջահը՝ [մարդկանց] արթուն պահելու համար։ Արքունական հաստատուն ճանապարհից մի՛ շեղվեք աջ կամ ձախ՝ ձեր կամքով հետևելով խաբողի պատրանքներին, որովհետև երկու կողմերում էլ դարանակալում է ավազակների բազմությունը, և նրանց ձեռքն ընկնողների բաժինը մահն է։ Եվ ձեզ թող չվնասի ցերեկվա կարծեցյալ արեգակը կամ էլ գիշերվա լուսինը գիվամոլ խռովությամբ, որ մեր բնավորության պատճառով խաբեց մեզ և խաբում է, այլ փաղաքշական խորհրդով զանց արեք տատանվողների կամքը, որպեսզի արդարության ճշմարիտ արեգակը աստվածային սիրով ծագի ձեր սրտերում։ [Որպեսզի] հանցավոր ու վատթար վարքով նավաբեկվելով՝ չզղջաք ձեր ուղիղ ու ճշմարիտ վարքի համար և ճանապարհի վրա ոտնակոխ չլինեք իբրև անհամ աղ, այլ ողջ-առողջ ու անխախտ մնաք պարսավասեր դավողից՝ ուրախությամբ ժամանելու կյանքի նավահանգիստը։ [Որպեսզի] առաքինի հայրերի փառքը բավարար համարելով ու դրան ապավինելով՝ ձեր ծուլության պատճառով խոր փոսերի ու վիհերի մեջ չխրվեք, որովհետև եթե հոր հմուտ իմացությամբ [նավը] ղեկավարվի, դրանից որդիներին ի՞նչ օգուտ, եթե նավաբեկության ժամանակ բոլորը կորչեն, քանի որ, կարծում եմ, հոր հմտությունից նավաբեկված որդիներին օգուտ չի լինի։ Մի՛ օտարացեք մորից, որ վերստին ձեզ ծնեց նորատուր կենդանի խոսքով կենդանի հույսի համար։ Մի՛ խաբվեք արգանդից վրիպելով կամ թե մերկանալով այն լուսավոր ու փրկական զգեստից, որով վայելչապես զգեստավորվեցիք ավազանի արգանդից։ Սուտ մի՛ խոսեք՝ առածը անտեղի չառած[137] համարելով և մի՛ ժխտեք սիրելի Որդու լեռնացած աստվածային պատգամները, այլ փութաջան սրտի ջերմությամբ հեռացեք այն բաներից, ինչ հակառակ ու վնասակար է հոգուն, և մաքուր մտքով ձեզանից հեռու վանեք սնոտի տարրերի տխրությունը։ Այդպիսով՝ թերևս դուք էլ կթեակոխեք սերովբեական եոյակ դասի խոր խորհրդի մեջ ու վեցթև-

կանացն ևս յերրեակ դասու խորին խորհուրդս թեակոխեսջիք և դուք, և վեցթևեան երագաշարժ գործեօք իմն զօրհնաբանականսն ըստ պիտոյս բաժանեսջիք՝ ոմամբք խուճապելով զսպիլ, ոչ ևս արժանի ըստ որումն վարկեալ և ոչ զաչս 'ի յերկինս ամբառնալ. իսկ այլովք ոմամբք վերշարժիլ 'ի մշտնջենական փառատրութիւնս ըստ վտահելոցն պարգևութեանց 'ի պաշտօն աստուածայնոյ փառացն. ապա հանդիսապէս արժանի գտջիք յետ այսմ սուղ ժամադրութեանն կենացս մտանել և յամբ իմանալի Սինէական լերինն։ Ոչ 'ի փորձ հրոյ 'ի վայր բերեալ ըստ պայմանի խոուոյ յաւուրն ընտրութեան. այլ ամպաչու թևօք սլացեալք 'ի վերին Սիովն 'ի հայցել զտեսութիւն Տեառն։ Ոչ վիմով ծերպի զեղչել և զյետոյսն միայն տեսանել. այլ զբովանդակ նկարագիր փառացն Հօր դէմ յանդիման նկատել։ Եւ զայժմու փոքր 'ի շատէ խելամտութեամբս զանց արարեալ՝ ծանօթք եղիջիք պատրաստական վայելչութեանն և յայնժամ գիտասջիք զնա որպէս և նայն ծանեաւ զձեզ։

Արդ՝ այսքան բան ձեզ խրատու լինէն բաւականասցի։ Բայց անարժանս ես և հեղգապաշաւս Յովհաննէս՝ նուաստ Կաթողիկոս Հայոց, աղաչանս առաջի մատուցանեմ ընթերցողացդ ձեզ և լսողաց բանի Պատմութեանս՝ արժանի յիշատակի զիմս վարկանել անուն 'ի մաքրամատոյց նուիրական աղօթս ձեր. զի երկաքանչիւրոցս՝ ինձ և ձեզ, թերևս 'ի Տեառնէ տացի վարձս հատուցման յետնումն աւուր այցելութեան նորա. որ է օրհնեալ միշտ և փառաւորեալ յամենայն արարածոց յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ՎԵՐՋ

յան արագաշարժ գործիքով օրհնության երգերը կբաժանեք ըստ անհրաժեշտության, որով ոմանք տագնապելով կզսպվեն՝ ոչ որևէ մեկի նման արժանի համարվելով և ոչ էլ աչքերը երկինք բարձրացնելով, իսկ ոմանց հետ էլ աստվածային փառքի պաշտամունքին ապավինողների շրջագայությամբ[138] կշարժվեք դեպի վեր, դեպի մշտնջենական փառատրությունը, ապա դրանից հետո արժանի կլինեք հանդիսավորապես մտնելու կյանքի ու մահվան համար սահմանված կարճ ժամանակամիջոցի ու Սինեական լեռան[139] իմանալի ամպի մեջ։ Ոչ էլ ընտրության օրը [պետք է] վայր բերել հրով փորձելու համար, ինչպես շոր ճյուղերը, այլ ամպերի մեջ թռչելով [պետք է] սլանալ դեպի վերին Սիոն՝ հայցելու համար Տիրոջ տեսությունը։ Պետք չէ քարով ծերպը քողարկել և միայն հետևի մասը տեսնել, այլ փառքի Հոր ամբողջ պատկերը պետք է դեմ հանդիման լավ տեսնել։ Եվ առայժմ փոքրիշատե խելամտորեն [այն] զանց անելով՝ ծանոթացեք պատրաստական վայելչությանը և այն ժամանակ կճանաչեք նրան, ինչպես որ նա ճանաչեց ձեզ։

Արդ՝ այսքանը իմ կողմից թող բավական լինի ձեզ, որպես խրատ։ Բայց ես՝ անարժան, ծույլ ու խղճուկ Հովհաննեսս, Հայոց նրվաստ կաթողիկոսս, ձեզ՝ ընթերցողներիդ և իմ այս պատմությունը լսողներիդ, աղաչում եմ՝ ձեր աստվածահաճո նվիրական աղոթքներում իմ անունը հիշատակության արժանի համարել, որովհետև մեզ յուրաքանչյուրիս՝ ինձ ու ձեզ, թերևս Տերը վարձահատույց լինի իր այցելության վերջին օրը. Տերը միշտ օրհնյալ է ու փառավորված բոլոր արարածների կողմից հավիտյանս հավիտենից. ամեն։

ՎԵՐՋ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ անվանի պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին պետք է ծնված լինի 845—850 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։ Նա ծնվել է Այրարատ նահանգի Դրասխանակերտ գյուղում։ 898—929 թթ. եղել է հայոց կաթողիկոսը, ուստի հայտնի է նաև Հովհաննես կաթողիկոս անունով։

Ստույգ պարզ չէ Հովհ. Դրասխանակերտցու նաև մահվան թվականը. ենթադրվում է, որ նա մահացած պետք է լինի 929 թ.։ Նա ինքնակենսագրական բավականին տեղեկություններ է հաղորդել իր «Հայոց պատմության» մեջ։

Հովհ. Դրասխանակերտցին իր կրթությունն ստացել է Սևանա կղզու վանքում, իրեն նախորդող Մաշտոց կաթողիկոսի մոտ։ Այդ մասին գրում է ինքը. «Թեպետ իմ մանկությունից սկսած աշակերտել եմ այդ սուրբ մարդուն՝ Մաշտոցին, բայց նաև մեր միջև մարմնական ազգակցություն ու հարազատություն կա» (էջ 124)։

Դրասխանակերտցուց մեզ է հասել երկու աշխատություն՝ «Շարից հայրապետացն Հայոց յայտարարութիւն. երանելոյն Յովհաննիսի կաթողիկոսի Հայոց» (տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց» գրքում, Վաղարշապատ, 1893, էջ 272—277) և «Պատմութիւն Հայոց»։

Հովհաննես Դրասխանակերտցին առաջինում կաթողիկոսների շարքն սկսում է Բարդուղիմեոսից ու Թադեոսից և հասցնում է մինչև իր աթոռակալությունը՝ յուրաքանչյուրի վերաբերյալ հաղորդելով կենսագրական համառոտ տվյալներ։ Առավել կարևոր է նրա «Հայոց պատմությունը», որը գրել է կյանքի վերջին տարիներին՝ ներկայացնելով նախնական ժամանակներից մինչև 924 թ. ընկած ժամանակաշրջանը։ Այդ մասին վկայում է ինքը իր գրած առաջաբանում՝ ասելով. «Ես չեմ ուզում առաջաբանի վրա երկար ժամանակ վատնել, որովհետև ցավագին ծերությունը՝ մահը պատրաստ պահում է դռան հետևում, և տագնապն ու տառապանքը ստիպում են հապճեպորեն պատմել մեզ հասած անցքերի, աղետների ու անհամար խռովությունների պատմությունները» (էջ 6)։

Հովհ. Դրասխանակերտցու պատմությունը բաղկացած է առաջաբանից, բուն նյութից, որ բաժինների ու գլուխների չի բաժանված, և վերջաբանից։ Մինչև 9-րդ դարի կեսի պատմության նյութը նա քաղել է Աստվածաշնչից և իրեն նախորդող պատմիչների գործերից, իսկ 9-րդ դարի երկրորդ կեսի ու 10-րդ դարի առաջին քառորդի պատմությունը նկարագրել է իր տեսածով ու լսածով, հաղորդակից ու մասնակից լինելով իր ժամանակ կատարված դեպքերին։ Պատմության այդ մասում, որ ավելի կարևոր է ու արժեքավոր, Հովհ. Դրասխանակերտցին մանրամասնորեն պատկերում է հայ ժողովրդի ծանր կացությունը արաբական լծի տակ, մասնավորապես արաբ ոստիկաններ Յուսուֆի, Նսրրի, Ափշինի, Բշրրի հարձակումները Հայաստանի վրա, 850—852 թթ. արաբական լծի դեմ հայ ժողովրդի մղած հերոսական ազատագրական պայքարը, Սմբատ Առաջինի նահատակությունը, հայ ժողովրդի ծանր վիճակը, հայ ժողովրդի ազատագրման համար Աշոտ Երկաթի մղած պայքարը և այլն։ Դրասխանակերտցին ճշգրտորեն է հասկանում ու գնահատում արաբ բռնակալների զավթողական քաղաքականությունը։ Այսպես, օրինակ, նա նկատում է, որ ոստիկան Յուսուֆը Սմբատ Առաջինին ծնկի բերելու համար ի հեճուկս նրա Գագայրում է Գագիկ Արծրունուն, և ապա այդ նույն նպատակով թագադրում է նաև Աշոտ սպարապետին, որպեսզի հայ նախարարներին լարի իրար դեմ, և ինքը դրանից օգտվի։

885 թ. Աշոտ Առաջինը Հայաստանի թագավոր է ճանաչվում և՛ արաբական խալիֆաթի, և՛ բյուզանդական կայսրության կողմից։ Դրա հետևանքով բավականաչափ բարելավվում է հայ ժողովրդի վիճակը, բայց դա դուր չի գալիս ո՛չ խալիֆաթին, ո՛չ կայսրությանը։

Յուսուֆը մեծ զորքով հարձակվում է Հայաստանի վրա։ Նրան, ենթանում նաև Սմբատից նեղացած հայ իշխանները։

Հայ ժողովրդին կործանումից փրկելու համար Դրասխանակերտցին, որպես Հայոց կաթողիկոս, մեծ նվերներով գնում է Յուսուֆի մոտ։ Վերջինս ընդունում է ընծաները, բայց Դրասխանակերտցուն ձերբակալում է։ Դրասխանակերտցին մի կերպ փախչում է և երկար ժամանակ դեգերելով Աղվանքում, Վրաստանում ու Ատրպատականում՝ վերջապես գալիս է Հայաստան և նախ տեղավորվում է Տարոնում, ապա հաստատվում է Դվինում։

Հայ ժողովուրդը արաբական զավթիչների դեմ կենաց ու մահու

կոիվներ է մղում, և Նիգ գավառում տեղի ունեցած ճակատամարտում հայերը ծանր պարտություն են կրում։ Սմբատն ամրանում է Երասխաձորի Կապույտ բերդում ու համառ դիմադրություն է ցույց տալիս թշնամուն։ Հետագայում նա ընկնում է ծանր կացության մեջ և որոշում է անձամբ հանձնվել Յուսուֆին, որպեսզի հայ ժողովրդին կարողանա փրկել կործանումից։ Բայց Յուսուֆը ձերբակալում է Սմբատին, և ապա նրան գլխատում է ու մարմինը խաչում։

Հոր նահատակվելուց հետո Աշոտ Երկաթը վրիժառությամբ լցված՝ իր եղբայր Աբասի հետ միասին անընդհատ հարձակումներ է գործում արաբների վրա և մեծ հաջողությունների հասնում։ Նա արաբներից ազատագրում է Բագրևանդի, Շիրակի, Գուգարքի, Տաշիրի գավառները, Վրաստանի մայրաքաղաք Տփխիսը։ Բայց Հայաստանում ապստամբություն է բարձրանում Աշոտ Երկաթի դեմ։ Այդ պատճառով Աշոտը դաշնակիցներ է փնտրում դրսում՝ Վրաստանում կամ եգերացիների աշխարհում։

Այնուհետև Աշոտ Երկաթը տեղափոխվում է Սևան կղզի և այնտեղից շարունակում է պայքարը Յուսուֆ ոստիկանի Բշրը զորապետի դեմ ու Սևանի ճակատամարտում նրան պարտության է մատնում։ Հաղթանակ տանելով ներքին ու արտաքին թշնամիների դեմ՝ Աշոտ Երկաթը կարողանում է վերականգնել Բագրատունյաց թագավորության սահմանները։

Դրասխանակերտցին կողմնակից է միասնական պետականության։ Այդ պատճառով նա գովեստով է խոսում հայ պետական գործիչների, մասնավորապես Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու, սրա որդի Աշոտ Առաջինի, սրա որդի Սմբատ Առաջինի, սրա որդի Աշոտ Երկրորդի (Երկաթի) մասին։ Նա ընդարձակ տեղեկություններ է հաղորդում նաև Վասպուրականի իշխանության, Գագիկ Արծրունու, նրա եղբայր Գուրգենի մասին։

Դրասխանակերտցին դատապարտում է ավատատիրական երկպառակությունը, երկրում տիրող խռովությունները՝ ասելով, օրինակ. «Նրանք նաև եղբորը եղբոր դեմ էին հանում, ազգականին՝ ազգականի՝ միմյանց նկատմամբ առաջացնելով նախանձ, չարակամություն, գրգռություն և կատարյալ ատելություն։ Եվ այդպես խմբովին իրար դեմ դուրս գալով՝ նրանք հակառակվում էին ու կռվում և միշտ սուրը ազգերին կապած՝ միմյանցից ավելի շատ արյուն էին թափում, քան թշնամիները։ Առհասարակ քաղաքները, գյուղերը, ավանները, ագարակները, ինչպես նաև իրենց տները քանդում էին իրենց ձեռքով» (էջ 175)։

Հովհ. Դրասխանակերտցու պատմությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև մեր հարևան ժողովուրդների՝ վրացիների, աղվանների, ինչպես նաև Հայոց թագավորների և Վրաց Ատբերներսեհ կուրապաղատի փոխհարաբերությունների վերաբերյալ։

Պատմիչը իր աշխատության վերջաբանում հայերին դիմելով՝ ասում է. «Արքունական հաստատուն ճանապարհից մի՛ շեղվեք աջ կամ ձախ՝ ձեր կամքով հետևելով խաբողի պատրանքներին, որովհետև երկու կողմերում էլ դարանակալում է ավազակների բազմությունը, և նրանց ձեռքն ընկնողների բաժինը մահն է» (էջ 246)։

Հովհ. Դրասխանակերտցին ոչ միայն նկարագրում է դեպքերն ու դեմքերը, այլև դրանց և մանավանդ պետական գործիչների նկատմամբ դրսևորում է քննադատական վերաբերմունք. նա դատապարտում է անդամ Աշոտ Երկաթին՝ բարոյական սայթաքումների համար։

Պատմիչի երկը աչքի է ընկնում նաև լեզվառճական առանձնահատկություններով ու գեղարվեստական արժանիքներով։ Նա իր պատմությունը գրել է հինգերորդ դարի մեր մատենագիրների լեզվի հետևողությամբ, միայն թե նրա լեզվում, առանձին տեղերում, կան բառագործածման մեծ կուտակումներ, անհարկի կրկնություններ և այլն, որոնք նրա լեզուն երբեմն դարձնում են մանվածապատ ու խրթին։ Նրա երկի առանձին հատվածներ ունեն գեղարվեստական արժեք, առանձին գործիչներ տիպականացված են, օրինակ, Աշոտ Երկաթը, ինքը՝ Հովհաննես կաթողիկոսը, Յուսուֆը և ուրիշներ։ Այնուամենայնիվ, Դրասխանակերտցին չունի Մովսես Խորենացու և Եղիշեի հերոսական-էպիկական շունչը, այլ նա ավելի շատ քնարական ոճի հեղինակ է։

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» մեզ հասած ձեռագրերի քանակը հասնում է քսանի, որոնք գտնվում են աշխարհի տարբեր ձեռագրատներում։ Հնագույն ձեռագիրը ընդօրինակել է Հակոբ երեցը 1689 թ. Բաղեշի Ամրդոլու վանքում. դա Մաշտոցի անվան մատենադարանի թիվ 1896 ձեռագիրն է։

Դրասխանակերտցու պատմությունը առաջին անգամ լույս է տեսել Երուսաղեմում, 1843 թ.։ Երկրորդը մոսկովյան հրատարակությունն է, որը իրականացվել է Մ. Էմինի ջանքերով 1853 թ.։ Էմինյան սույն հրատարակության հիման վրա էլ 1912 թ. Թիֆլիսում կայացել է երրորդ հրատարակությունը, որից էլ կատարվել է սույն աշխարհաբար ամբողջական թարգմանությունը։

Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» օտար լեզվով ունի երեք ամբողջական թարգմանություն՝ ֆրանսերեն, վրացերեն, ռուսերեն։ Ֆրանսերեն թարգմանությունը, որ կատարել է հայագետ Սեն-Մարտենը, լույս է տեսել 1841 թվականին Փարիզում։ Վրա-

ցերեն թարգմանությունը իրականացրել է Ե. Ցագարեյշվիլին (Թբիլիսի, 1965), ռուսերեն թարգմանությունը՝ Մ. Դաբբինյան-Մելիքյանը (Երևան, 1986)։

Ծանոթագրությունները կազմելիս օգտվել ենք Աստվածաշնչից, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի աշխատությունից, ՀՍՀ-ի հատորներից, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» 1-ին և 2-րդ հատորներից, հայ ժողովրդի պատմությանը վերաբերող գրքերից, Սուրբ Գրքի և այլ բառարաններից։

1. Ըստ Աստվածաշնչի՝ Թորգոմը և Ասքանազը Հաբեթի որդի Գոմերի որդիներն էին (Ծննդ., Ժ), իսկ ըստ Մովսես Խորենացու՝ Թորգոմը Հաբեթի որդի Գոմերի թոռն էր և Հայկի հայրը (Խոր., 1-ին, Ե)։ Հետևելով ավանդությանը՝ Դրասխանակերտցին հայ ժողովրդին անվանում է Թորգոմյան, Ասքանազյան, Արամյան (ավանդության համաձայն՝ Հայոց Արամ նահապետից սերված) և Հայոց ազգ կամ տուն։

2. Բարդուղիմեոսը և Թադեոսը Քրիստոսի 12 առաքյալներից են, որոնք եղել են քրիստոնեության առաջին տարածողները Հայաստանում, այսինքն՝ հայկական քրիստոնեական եկեղեցու հիմնադիրներն են, և ըստ այդմ էլ՝ մեր եկեղեցին կոչվում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցի։ Ըստ ավանդության՝ նրանք սպանվել են հայոց Սանատրուկ թագավորի կողմից. Բարդուղիմեոսը՝ 66 թ., Աղբակում, իսկ Թադեոսը՝ 46 թ.։

3. Հեղինակը նկատի ունի Արշակունիների թագավորության անկումը 428 թ.։

4. Հագարը եգիպտացի աղախին էր Սառայի տանը (Ծննդ., ԺԶ)։ Եվ քանի որ Սառան ամուլ էր, Աբրահամը Հագարին կնության է առնում և նրանից որդի է ունենում։ Արաբները Հագարի պատվին իրենց համարում են Հագարի սերունդ, իսկ երկիրը՝ Հագար (Թուղթ առ Գաղ., Դ, 24—25)։

5. Դրասխանակերտցին նկատի ունի Նոյ նահապետին, որին իր ընտանիքի հետ Եհովան (Աստված) պահպանեց ջրհեղեղից, և Նոյը դարձավ մարդկային ցեղի երկրորդ նախահայրը (Ծննդ., Ե—Թ)։

6. Հաբեթը Նոյի ավագ որդին էր, որը ծնվել էր ջրհեղեղից հարյուր տարի առաջ (Ծննդ., Թ, Ժ)։ Նա ջրհեղեղից հետո ունենում է յոթ որդի՝ Գոմեր, Մագոգ, Մադա, Հավան, Թուբել, Մեսեք և Թիրաս (Ծննդ., Ժ, 2—5, Ա. Մնաց., Ա, 5)։

7. Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, գիրք 1-ին, Ը, Թ։

8. Ընդծին կոչվում էին հին՝ նահապետական ընտանիքներում ոչ թե տանուտերի սերնդից, այլ ստրուկից, աղախնից ծնվածները։

9. Բնագրում այդպես՝ **Արմայիս** է, իսկ Մ. Խորենացին օգտագործում է **Արամայիս** ձևով (գիրք 1-ին, ԺԲ)։

10. Նույն Նփրկերտը, Մարտիրոպոլիսը կամ Տիգրանակերտը, որ գտնվում է Աղձնիք նահանգի Նփրկերտ գավառում։ Ներկայումս այն ավերակ է։

11. Նույն իլիական կամ տրոյական պատերազմը, որը մղում էր Միկենեի թագավոր Ագամեմնոնը Տրոյա քաղաքի դեմ։ Այդ պատերազմի պատմությունը հավաքել ու գրի է առել Հոմերոսը մ. թ. ա. 6-րդ դարում, Աթենքում (տե՛ս նրա «Իլիական» և «Ոդիսական» պոեմները)։

12. Հմմտ. **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, գիրք 1-ին, ԻԱ (ԻԲ)։

13. Ըստ Մ. Խորենացու՝ Արծրունիների նախահայրը Ասորեստանի Սենեքերիմ (Սինախերիբ) թագավորի (մ. թ. ա. 705—680 թթ.) որդի Սանասարն է, որը իր Ադրամելեք եղբոր հետ սպանելով հորը՝ եկել հաստատվել էր Սիմ կոչվող լեռնեքում (Սասուն) (Խոր., գիրք 1-ին, ԻԳ (ԻԴ)։

14. Այս և հետագա ընդգծումները բնագրինն են։

15. Թովմաս առաքյալը կոչվում էր նաև Երկվորյակ (Մատթ., Ժ, 3, Յովհ., ԺԱ, 16, ԺԴ, 5—6, Ի, 19—29, Ղուկ., Զ, 13—15)։

16. Տե՛ս ծան. 1։

17. Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Տավրոս լեռնաշղթան ընկած է Փոքր Հայքի և Կիլիկիայի միջև։

18. Հեղինակը նկատի ունի այդ քաղաքներում տեղի ունեցած քրիստոնեական եկեղեցիների հոգևորականության բարձրագույն խավի՝ եպիսկոպոսների տիեզերական ժողովները։

19. Դրասխանակերտցին հավանաբար Օվկիանոս ծով անվանում է Միջերկրական ծովը։

20. 387 թ. Հայաստանը բաժանված էր երկու մասի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև. խոսքը այդ մասին է։

21. Պատմիչը ներկայացնում է գրերի գյուտի և Մեսրոպ Մաշտոցի կողմից իրականացվող դպրության սկիզբը (տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի)։

22. Հմմտ. ծան. 20։

23. Վայո կամ Վայոց ձորը Սյունիք նահանգի երրորդ գավառն էր, որը համապատասխանում է այժմյան Եղեգնաձորի ու Վայքի շրջաններին։

24. Տե՛ս ծան. 3։

25. Այս և հետագա կախման կետերի դեպքում առկա է բնագրի ընդհատում։

26. Այժմյան Էջմիածին քաղաքը, որը հիմնադրել է Վաղարշ Ա-ն (114—146 թթ.), և նրա անունով կոչվել է Վաղարշապատ։ Հետագայում այն դարձել է հռոմեական կայազորի կենտրոնը և անվանվել Նոր քաղաք։

27. Արծկե գյուղը գտնվում է Մեծ Հայքի Տուրուբերաց նահանգի Բզնունիք գավառում, Վանա լճի հյուսիսային ափին, հրվանդանի մոտ։ Հետագայում ավանը վերածվել է քաղաքի։

28. Այլաբերքը այժմյան Հրազդանի շրջանում գտնվող Ալափարս գյուղն է։

29. Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Հարքը Տուրուբերաց նահանգի իններորդ գավառն է։ Այն տարածությամբ համապատասխանում է այժմյան Բոլանըխ շրջանին։

30. Բագրևանդ գավառը հայտնի էր բազմաթիվ անուններով, ինչպես՝ Բագրևան, Բագրավան, Բագրավանդ, Բագրաբանդ և այլն։ Այն ընկած էր Արածանի գետի վերին ավազանում՝ Հայկական պար, Ծաղկանց ու Դիադինի լեռների միջև։

31. Եռաստ ավանը կամ գյուղաքաղաքը, որ հայտնի էր նաև Առեստավան, Եռաստավան, Առեստովան և այլ անուններով, գտնվում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Առբերանի գավառում, Վանա լճի հյուսիսարևելյան ափին, նոր ժամանակների Բերկրի գյուղաքաղաքի մոտ։

32. Խաղամախ դաշտը գտնվում էր Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, Մարդաստան գավառի սահմաններում։ Հյուբշմանի կարծիքով՝ Խաղամախ անունը Կաղամախիք անվան վրիպակային ձևն է։

33. Մեծ Հայքի Այրարատ նահանգի Գաբեղյանք գավառի նախարարական տոհմ, որի անունը սերում է Աբեղյան նախարարական տան անունից։

34. Տե՛ս ծան. 1:

35. Եգերիան Մեծ Հայքի Տայք աշխարհում ընկած գավառ էր: Ընդգրկում էր այժմյան Անարիածղալի գետի հովիտը, որը կազմում է Աջարական Ինքնավար Հանրապետության հիմնական մասը:

36. Հայոց նախարարական կամ իշխանական ուժերը կոչվել են «Տանուտիրական գունդ», «Ազատագունդ վաշտ» և այլն: Բայց պատմիչն այստեղ Տանուտիրական գունդ անվանումը օգտագործում է երկրամասի իմաստով:

37. Տե՛ս ծան. 10:

38. Կարին քաղաքն է, որը հայտնի է նաև Թեոդուպոլիս, Էրզրում, Արզրում անուններով:

39. Խոսքը վերաբերում է Հռոմի Լևոն 1-ին Պապի տոմարին, որի հիմնական բանաձևը հետևյալն էր. «Երկու բնություններ են, որոնք եկել միացել են մի անձնավորության մեջ», այսինքն՝ նրանք Քրիստոսին ընդունում էին որպես մարդ: 449 թ. Եփեսոսի ժողովում դատապարտվում է Լևոն Պապի այդ տոմարը: Քաղկեդոնի 451 թ. տիեզերական ժողովը իբրև դավանության հիմք ընդունում է Լևոն Պապի տոմարը և դատապարտում է Նեստորի մարդադավանությունը ու իբրև հավատքի ամփոփում ընդունում է «Մի Քրիստոս երկու բնությամբ» բանաձևը: Հետագայում շատ եկեղեցիների կողմից դատապարտվում է այդ բանաձևը ևս, և մասնավորապես Բասիլիսկոս կայսրը 476 թ. մի հրովարտակով մերժում է Լևոն Պապի տոմարն ու Քաղկեդոնի ժողովը: Հայոց եկեղեցին ևս, դատապարտելով այդ դավանությունը, ընդունում է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեկն է, այսինքն՝ մենք ունենք մեկ Քրիստոս, մեկ Որդի, մեկ Տեր:

40. Դարոյնքը ամրոցը, գյուղը, ավանը կամ բերդաքաղաքը գտնվել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառում, Մակվա գետի հովտում: Այն եղել է Կոգովիտ գավառի ամենանշանավոր բերդը, նրա կենտրոնը: Առաջին անգամ հիշատակում է Փավստոս Բուզանդը՝ կապված չորրորդ դարի դեպքերի հետ: 15—16-րդ դդ. հին Դարոյնքի տեղում առաջացած բերդաքաղաքը կոչվել է Բայազետ:

41. Խոսքը ամենայն Հայոց կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու (615—628 թթ.) մասին է, որի անունը պատմիչն օգտագործում է Կոմիտաս ձևով:

42. Դրասխանակերտցին գործածում է Մայրեգոմ, Մայրոգոմեցի ձևերը:

43. Հեղինակը **տաճիկ** է անվանում արաբներին, որոնց համար նա օգտագործում է նաև **հագարացի, իսմայելացի** և **սարակինոս** տերմինները: Հետագայում տաճիկ կոչվեցին թուրքերը:

44. Խոսքը 703 թ. Վարդանակերտում (այն գտնվել է Արաքս գետի ափին, այժմյան Արմավիրի շրջանում) հայերի և արաբների միջև տեղի ունեցած կռվի (բնագրում՝ «տուի»), ավելի ճիշտ՝ ճակատամարտի մասին է, որտեղ հայոց զորքը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ խայտառակ պարտության է մատնել արաբներին: Այդ պատճառով արաբները այդ ճակատամարտը միշտ անեծքով են հիշել:

45. Բնագրում՝ «դեսպակս», ճիշտը՝ «դեսպանս», այսինքն՝ պատգամավոր, պատվիրակ, սուրհանդակ, բանագնաց, ինչպես որ մենք ենք թարգմանել:

46. Ցփսին մագե հաստ ու կոպիտ հագուստ է:

47. Բնագրում՝ «Տրդատ ի դասնաւորից». խոսքը ամենայն Հայոց կաթողիկոս Տրդատ Բ Դասնավորեցու (764—767 թթ.) մասին է:

48. Բավոնյաց գյուղը գտնվում էր Տուրուբերան աշխարհի Դասնավորք գավառում:

49. Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Նիգ կամ Նիգատուն գավառը Այրարատ նահանգի 15-րդ գավառն էր և համապատասխանում էր այժմյան Ապարանի շրջանի տարածքին: Նիգ գավառը Գնթունի նախարարական տոհմի ժառանգական սեփականությունն էր, գավառի կենտրոնն էր Քասաղ ավանը (այժմ Ապարան գյուղը): Իսկ Նիգ գավառի Աղապատրուշ գյուղը, որ հայտնի է նաև Եղապատրուշ, Եղապատրոշ և նման այլ անուններով, այժմյան Ապարանի շրջանում գտնվող Մռավյան գյուղն է:

50. Բագավանը կամ Բագուանը, որ ըստ «Աշխարհացույց»-ի՝ արաբապարսկական աղբյուրներում գրվում էր Բագարվան կամ Բաջարվան ձևերով, համանուն գավառի կենտրոնն էր, Այրարատ նահանգի 6-րդ գավառը:

51. Հեղինակը նկատի ունի 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի սկզբի պատմիչ Ծապուհ Բագրատունուն, որի պատմությունն ընդգրկում է Բագրատունիների, մասնավորապես Աշոտ Ա-ի ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները: Այդ պատմությունից մեծապես օգտվել է Հովհ. Դրասխանակերտցին իր այս պատմությունը գրելիս: Դժբախտաբար, Բագրատունու պատմությունը մեզ չի հասել, և սխալմամբ նրան է վերագրվել ու նրա անունով հրատարակվել «Պատմութիւն Ծապուհ Բագրատունւոյ» (1921 թ.) անանուն մի երկ, որի հեղինակին հետագայում տրվել է Անանուն Զրուցագիր պատմական անունը (տե՛ս «Պատմութիւն անանուն զրուցագրի. կարծեցեալ Ծապուհ Բագրատունի», Երևան, 1971):

52. Ըստ «Աշխարհացույց»-ի՝ Աղբակը Վասպուրականի 17-րդ գավառն էր, որն ընկած էր Տիգրիսի ձախակողմյան վտակ Մեծ Զաբ (կամ Զաբ) գետի վերին հոսանքում: Մեծ Աղբակը Արծրունի տոհմի ժառանգական հայրենիքն էր:

53. Սաղմոս, ԿԳ (ԿԴ), 7:

54. Բնագրում՝ «հովեալ». ՆՀԲ-ն առաջարկում է՝ «հոծեալ» (տե՛ս **Հոծիմ** գլխաբառի տակ). մենք թարգմանել ենք այս վերջին ձևը:

55. Կորիսը Ղևոնացի էր, Մովսեսի հորեղբորորդին, որ ապստամբվեց Մովսեսի և Աճարոնի, հետևաբար՝ նաև Եռովպի դեմ (Թիւք, ԺԶ): Այդ պատճառով երկիրը, թացելով իր բերանը, կուլ տվեց Կորիսին իր երկու ընկերների՝ Դադանի և Աբիրոնի հետ միասին (Թիւք, ԻԶ):

56. Տե՛ս Բ օրէնք, ԻԹ, 29:

57. Յովէլ, Ա, 14, Բ, 15:

58. Բանն Աստված նույն Աստծու Որդին է, այսինքն՝ Հիսուս Քրիստոսը:

59. Ստեփանոսը Երուսաղեմի եկեղեցու կողմից ընտրված յոթ սարկավագներից մեկն էր՝ «Սուրբ Հոգով ու հավատքով լցված մի մարդ» (տե՛ս Գործ., Զ), որին հրեաները տանջեցին ու նահատակեցին, և նա եղավ Քրիստոսի համար առաջին նահատակը կամ վկան (Գործ., Է):

60. Իմա՛ Հակոբոս (հմմտ. Թուղթ առ Գաղ., Ա. 19. Գործ., ԺԵ, 13):

61. Ըստ Դրասխանակերտցու՝ մեծ ծովը Սև ծովն է:

62. Ալանաց դուռը հին և միջին դարերում ռազմական կարևոր նշանակություն ունեցող կիրճ էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայում: Այնտեղով հաճախակի դեպի հարավ ներխուժող ալանների պատճառով այդ կիրճը կոչվել է Ալանաց դուռ, իսկ այժմ կոչվում է Դարիալի կիրճ:

63. Սոփերը նահանգ կամ երկիր էր, որ գտնվում էր Արաբական թերակղզում և հայտնի էր իր ոսկու հանքերով:

64. Բնագրում՝ «զբլուրն մսեղէն» (էջ 208) կամ «մսեղէն բուրգն» (էջ 258), որ նշանակում է «հսկա, վիթխարի»: Դրասխանակերտցին այստեղ նկատի ունի

Գեթացի Գողիաթին, որը միայնակ կռվում էր Իսրայելի զորքի դեմ: Բայց նրա դեմ դուրս է գալիս Դավիթը և սպանում է նրան (տե՛ս Ա. թագ., ԺԷ):

65. Աստվածաշնչում «Սիոնի դուստր» (տե՛ս Եսայի, Ա, Սաղմոս, Թ, 15, ՀԲ, 28, Երգ երգոց, Գ, 11, Զաք., Բ, 10, Թ, 9, 13), «որդիք Սիոնի» (Յովէլ, Բ, 23) բառակապակցությունները գործածված են Երուսաղեմ քաղաքի բնակիչների և մանավանդ՝ Մորիա լեռան ու տաճարի իմաստով: Դրանցից Դրասխանակերտցին օգտագործում է «Սիոնի մայր» բառակապակցությունը:

66. **Սանդարամետ** նշանակում է «անդունդ, վիհ, դժոխք» (Եզեկիէլ, ԼԱ, 16—17):

67. Բնագրում՝ «Հեզաբէլ» փոխանակ **Յեզաբէլ**-ի (տե՛ս Գ. թագ., ԺԸ, 19, ԻԱ, 5, Դ. թագ., Թ):

68. Տե՛ս ծան. 1:

69. **Ճշմարիտ արեգակ** անվան տակ հասկացվում է Տեր Աստվածը:

70. Տե՛ս Եսայի, ԾԱ, 17:

71. Տե՛ս Սաղմոս, ԿԸ (ԿԹ), 21:

72. Տե՛ս Եսայի, ԾԱ, 19:

73. Տե՛ս Եսայի, Գ, 8:

74. Եսայի, Գ, 4:

75. Յովհ., ԺԱ, 50:

76. Տե՛ս Ա. կորնթ., Թ, 15, Յովհ., ԺԱ, 50, ԺԸ, 14:

77. Ծննդ., ԽԹ, 17:

78. Ըստ Հին կտակարանի Պաղեստինի Սոդոմ քաղաքն այրվեց Գոմոր քաղաքի հետ միասին՝ բնակիչների անբարոյական վարքի պատճառով (տե՛ս Ծննդ., ԺԹ): Դրասխանակերտցին նկատի ունի բնակիչների այդ տանջանքներն ու պատիժը:

79. Տե՛ս ծան. 11:

80. Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ Կորդուքը Կորնայք նահանգի առաջին գավառն է: Միջին դարերում Կորդուքը Հեր (հետագայում՝ Խոյ) և Զարևանդ գավառների հետ միասին կոչվում էր Ռոտկաց աշխարհ: Կորդուքը լեռնային երկիր էր՝ ընկած Ջերմ և Փոքր Խաբուր գետերի միջև:

81. Հմմտ. ծան. 78:

82. Բնագրում՝ «և սրկեալ կային զծակօք». վերջին բառի համար, ինչպես տրված է նաև տարբերթերցվածներում, ընդունել ենք **զծառօք** ձևը ու այդպես էլ թարգմանել:

83. Տե՛ս Թուղթ առ Հռովմայեցիս, Ը, 7:

84. Բնագրում՝ «որք և ընկալան իսկ **զբարիոն յաղթութեանն**» (էջ 250). ընդգծված բառակապակցությունը նշանակում է «հաղթանակի սլսակ»՝ հյուսված դափնուց, արմավենուց, ձիթենուց, ծաղիկներից, որ տրվում էր հաղթողին: Դրասխանակերտցին օգտագործում է «բարոյական հաղթանակ» իմաստով, որ տրվում էր այն հավատացյալներին, որոնք նահատակվում էին քրիստոնեական հավատի կամ Տիրոջ համար:

85. **Ղուրան**-ը արաբերեն gur'ān— «ընթերցվածք» իմաստով բառն է, որը մահմեդականության սուրբ գիրքն է: Ղուրանը Մահմեդի քարոզների հավաքածուն է, որը պարունակում է կրոնադավանական, ծիսական և կենցաղային պատվիրաններ, իրավական դրույթներ, խրատներ, առակներ, աղոթքներ, անեծքներ և այլն:

86. Ծիրանի կամ կարմիր գույնի ներկով ներկված կտոր և նրանից կտրված

երկար զգեստներ, որոնք սովորաբար հագնում էին թագավորները կամ նրանք, որոնց առանձին արտոնություն էր շնորհվում:

87. Լակոնիայում կամ Սպարտայում (Հունաստան) պատրաստվող ընտիր բեհեզ:

88. Հմմտ. Թուղթ առ Հռովմայեցիս, Ա, 25:

89. Տե՛ս Եսայի, Ա. 7:

90. Տե՛ս ծան. 64.

91. Գեդեոնը կամ Հերոբաաղը Մանասեի ցեղից էր, իսրայելցիների բաջ ու զգոն դատավորը, որը Աստծու քաջալերմամբ հաղթեց մադիացիներին և երկար տարիներ ապահովեց իսրայելցիների խաղաղությունը (տե՛ս Դատաւորք, Զ—Ը, Ա. թագ., ԺԲ, 11, Թուղթ առ Եբրայեցիս, ԺԱ, 32):

92. Հայելը Կինեցի Քաբերի կինն էր, որ սպանեց քանանացիների բանակի սպարապետ Սիսարին (տե՛ս Դատաւորք, Դ, 17—23, Ե, 24—31):

93. Մ. թ. ա. 11-րդ դարում Պաղեստինի մի մասում հրեաները Սավուղի գլխավորությամբ ստեղծել էին Իսրայել-Հուդայի թագավորությունը, որը մ. թ. ա. 928 թ. տրոհվել էր երկու թագավորության՝ Իսրայելի (Պաղեստինի հյուսիսում) և Հուդայի (Պաղեստինի հարավում): Մ. թ. ա. 167 թ. Հուդայում Սելևկյանների դեմ բռնկվում է ժողովրդական ապստամբություն՝ հրեա Մակաբեի գլխավորությամբ: Խոսքը այս Մակաբեի մասին է:

94. Առակք, Ժ, 12:

95. Տե՛ս Եսայի, Գ, 5:

96. Հմմտ. Յովէլ, Բ, 3:

97. Բնագրում՝ **շտեալք**, բայց կարծում ենք, որ պետք է լինի **ժտեալք՝ ժտել** («խնդրել, շատ աղաչել») բայից. մենք այդպես էլ թարգմանել ենք:

98. Խոսքը Իսմայելի որդի Կեդարի մասին է (Ծննդ., ԻԵ, 13), որը կեդարացիների կամ կեդրացիների հայրն էր: Կեդարացիները բնակվում էին Արաբական անապատում, ուղտի սև բրդից պատրաստված վրաններում (Երգ երգոց, Ա, 4):

99. **Սարակինոս** բառը սերում է Աբրահամի կնոջ՝ Սառայի անունից: Պատմիչը սարակինոսներ է անվանում Եվրոպայի և Աֆրիկայի արաբներին (տե՛ս նաև ծան. 43):

100. Խոսքը Եսավի թոռան և Եղիփազի որդու՝ Ամաղեկի մասին է (Ծննդ., ԼԶ, 10—12):

101. Հմմտ. Յեսու, Զ, 10:

102. **Բելիարը**, որ նշանակում է «կռվող, ժանտ, ապստամբ», ապստամբվել է Աստծու դեմ և ընդօրինակել սատանային կամ սադայելին (տե՛ս Բ. Կորնթ., Զ, 15):

103. Նաբուգոդոնոսորը, երբ գրավում է Երուսաղեմը, գերում ու Բաբելոն է տանում Հուդայի թագավոր Հեքոնիային և նրա փոխարեն թագավոր է կարգում իր հորեղբորը՝ Մաթանիային, որին անվանում է Սեդեկիա և նրանից երդում է առնում, որպեսզի նա հավատարիմ մնա Ասորեստանին: Բայց նա իր թագավորության տասնմեկերորդ տարում ապստամբվում է Նաբուգոդոնոսորի դեմ, որը գրավում է Երուսաղեմը և գերում Սեդեկիային (տե՛ս Երեմիա, ԼԷ, 1—3, ԼԹ, ԾԲ):

104. Զորաբաբելը սերում է Դավթի արքունական տնից, որը Սաղաթիելի որդին էր: Նա հիշատակվում է որպես իրենց հայրենիքը վերադարձող հրեաների առաջնորդ և Երուսաղեմի տաճարը հիմնադրող (տե՛ս Եզր, Գ, 8—9, Ե, 2, Անգէոս, Ա, 1, Բ, 1—9, 21—23, Զաքարիա, Դ, 9):

105. Ազայելը ասորիների Բենադադ թագավորի պաշտոնյան էր, որը հափշտակելով աթոռը՝ թագավորում է քառասուն տարի և հաջող պատերազմներ է մղում Հուդայի ու Իսրայելի դեմ (տե՛ս Գ. թագ., ԺԹ, 15, Դ. թագ., Ը, 28, Ժ, 32, ԺԲ, 17, ԺԳ, 3, Բ. մնացորդաց, ԻԲ, 5):

106. Տե՛ս ծան. 93:

107. Մարդաստանը (բնագրում՝ Մարգաստան) ըստ «Աշխարհացույց»-ի Վասպուրականի 14-րդ գավառն էր, որ գտնվում էր Մակու քաղաքից դեպի արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան լանջերին:

108. Տոսպը Վասպուրական նահանգի երկրորդ գավառն էր: Հայերը **Տոսպ** էին անվանում նաև Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Վանի) տարածքը: Այդ անունով էր կոչվում նաև Վանա լիճը՝ «Տոսպայ ծով»:

109. Հայ մատենագրության մեջ արաբները կոչվում էին տաճիկներ, երկիրը՝ Տաճկաստան, իսկ նրանց վերաբերող երևույթները՝ տաճկական (հմմտ. ծան. 43):

110. Հմմտ. Յովբ, ԼԹ, 25, Երգ երգոց, Բ, 8:

111. Ըստ «Աշխարհացույց»-ի Ատրպատականը հայտնի էր նաև Ատրպայական անունով, արաբերեն, պարսկերեն՝ Ադրեբադագան, Ազերբայջան, Ազրբեջան, մայրաքաղաքը Գանձակ շահաստանն էր, որ գտնվում էր Ուրմիա լճից հարավ-արևելք: Ատրպատականը այժմյան Իրանական Ադրբեջանն է:

112. Շամշուլդեն, որ գրվում էր նաև **Շամշուլդա, Սամշուլդ** և այլ ձևերով, Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառում, Խրամ գետի ձախ ափին գտնվող բերդ էր: Այն այժմ ընկած է Վրաստանի Հանրապետության Թեթրիծղարոյի շրջանի Սամշվիլդո հայաբնակ գյուղից հարավ:

113. Սակուրեթ կամ Ասկուրեթ բերդավանը գտնվում էր Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիր գավառում, Կուր գետի Ալգետ վտակի ափին: 9-րդ դարի վերջից հիշատակվում է որպես հայ Բագրատունյաց թագավորության կարևոր ռազմական: Հայոց Սմբատ Ա թագավորը Սակուրեթի հսկողությունը Շամշուլդեի հետ հանձնարարել էր Գնթունի իշխաններ Վասակին ու Աշոտին:

114. Բնագրում՝ «չեղակացծումն ժամու», փոխանակ **չեղակարծումն ժամու**, ինչպես որ մենք թարգմանել ենք:

115. Տե՛ս Առակք, Գ, 34:

116. Զնայած Ալանաց դուռը Գուգարաց աշխարհին այնքան էլ մոտ չէր, սակայն պատմիչը մոտ է համարում (տե՛ս նաև ծան. 62):

117. Որոմանին նույն Արմանի գյուղն էր, որ գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառում:

118. Հին Հրեաստանում Քրիստոսի ժամանակ գոյություն ունեցող կուսակցություն, որը ներկայացնում էր ունևոր խավերի շահերը և բարեպաշտության կանոնները կատարում էր մոլեռանդորեն ու երկերեսանորեն: Դրա հետևանքով էլ **փարիսեցի** փոխաբերաբար նշանակում է երկերեսանի, կեղծավոր:

119. Տե՛ս Թուղթ առ Հռովմայեցիս, ԺԲ, 18:

120. Բնագրում՝ «վարդիչ», ճիշտը՝ **վարգիչ**, ինչպես որ մենք թարգմանել ենք:

121. Տե՛ս ծան. 80:

122. Ականիս լեռը, որ հայտնի է նաև Աքաղայու կատար (այսինքն՝ «աքաղաղի կատար») և Ականիր անուններով, գտնվում է պատմական Հայաստանի հարավային մասում, Հայկական Տավրոս լեռնաշղթայի արևելյան ճյուղամասում, Վանա լճից հարավ-արևելք, Անձևացիք և Աղբակ գավառների սահմանում, այժմյան Մեծ Զաբ գետի ձախակողմյան վտակներից մեկի ձախ ափին: Ականիրը այժմ համապատասխանում է Մերքեզ լեռան:

123. Աբրահամի տուն կամ տոհմ (տե՛ս Գործ, ԺԳ, 26):

124. Արտավել քաղաքը, որ հայտնի է նաև Արտավիլ, Արդաբիլ, Արտավետ և այլ անուններով, գտնվում էր Ատրպատականում, պատմական Հայաստանի հարավարևելյան սահմանամերձ շրջանում, Մուղանից հարավ-արևմուտք, Արաքս գետի ստորին հոսանքի աջափնյա Կարասու վտակի ակունքներից մեկի վրա, Սեյլան կամ Սիյլան լեռան ստորոտում, հարթավայրում:

125. Քարունջը, ըստ երևույթին, Վարարակ և Քարահունջ գետերի խառնարանում գտնվող քաղաքագյուղն էր, այժմյան Գորիսի շրջանի Քարահունջ գյուղը (դրա անվան ստուգաբանությունը տե՛ս Ա. Մարգարյան, «Մի քանի տեղանունների ծագման մասին», ՊԲՀ, 1988, թիվ 4, էջ 129):

126. Բնագրում՝ «յահաշունչ», ճիշտը՝ **մահաշունչ**, ինչպես որ մենք թարգմանել ենք:

127. Հմմտ. Մատթ., ԻԳ, 34, 35:

128. Գեղ լեռը, որ հայտնի է նաև Գեղա լեռ, Գեղամաղան և այլ անուններով, գտնվում է Գեղամաղա լեռների կենտրոնական մասում, Աբովյանի շրջանի Սևաբերդ գյուղից արևելք: Այն այժմյան Աղմաղան գագաթն է:

129. Բնագրում՝ «ի մարան», այլ ընթերցվածներում՝ **ի մարտն.** մենք այս վերջին ձևով էլ թարգմանել ենք:

130. **Բրաբիոն** այստեղ նշանակում է կրոնի համար նահատակվողների տարած հաղթանակը (հմմտ. Ա. Պետրոս, Ե, 4, տե՛ս նաև ծան. 84):

131. Բնագրում՝ «ի վեր **ելս** ի սրտի դնելով» նախադասության ընդգծված բառը, մեր կարծիքով, պետք է լինի **ձեռս.** մենք այդպես էլ թարգմանել ենք:

132. Գեղայո ամրոցը կամ բերդը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Մազազ գավառում, Ազատ գետի հովտում: Այժմ Գեղայո ամրոցը տեղադրում են Հայաստանի Հանրապետության Արարատի շրջանի Խոսրովի արգելանոցի տարածքում գտնվող Իմիրզեկ հնավայրից արևելք, բարձր լեռան գագաթին: Առաջին անգամ այդ ամրոցը հիշատակում է Դրասխանակերտցին, որպես Բագրատունի թագավորական տոհմի տիրույթ:

133. Տե՛ս Ա թագ., ԺԷ, 23:

134. Բնագրում՝ «չետ երկեամ մի աւուրց»:

135. Տե՛ս Ծննդ., Դ, Ե:

136. Սեգովր քաղաքը մյուս չորս մերձակա քաղաքների հետ (Սոդոմ, Գոմոր, Սեբոյիմ, Ադմա) այրվելու էր երկնառաք հրով, բայց Ղովտի միջնորդությամբ պահպանվեց: Սկզբում այդ քաղաքը կոչվում էր Բաղա կամ Բաղակ, բայց հետո կոչվեց Սեգովր, որ նշանակում է «փոքր» (տե՛ս Ծննդ., ԺԴ, 2, ԺԹ, 20—23, 30):

137. Բնագրում՝ «զչարեալ» է, կարծում ենք՝ պետք է լինի **զչառեալ.** մենք այդպես էլ թարգմանել ենք:

138. Բնագրում դրա փոխարեն գործածվում է «պարագաւութեանց», ճիշտ ձևը պետք է լիներ **պարագաւութեանց:**

139. Սինա թերակղզին գտնվում է Կարմիր ծովի Սուեզի և Աքաբա ծոցերի միջև: Այդ թերակղզու Սինա կամ Սինեական լեռան վրա Աստծու օրենքը, այն է՝ տասը պատվիրանը, Մովսեսի միջոցով տրվեց Իսրայելին (տե՛ս Ելք, ԺԹ, 1-ից մինչև Թիւք, Ժ, 33):

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս, Աշոտ (Երկաթ) արքայի եղբայր 244, 245, 296, 297, 304—307, 310, 311, 370
Աբաս սպարապետ, Աշոտ իշխանաց իշխանի եղբայր 138, 139, 146—151
Աբգար, հայոց թագավոր 34—39
Աբղաճ, ոստիկան 96, 97
Աբղմելեք (Աբղմելիք) ամիրապետ 100—103
Աբել (Հաբել), եպիսկոպոս 72, 73
Աբիրոն 154, 155, 375
Աբրահամ հայրապետ, Աղբաթանք գյուղից 74—77
Աբրահամ, նահապետ 26, 27, 372, 377
Աբուսեթ (Ապուսեթ), ոստիկան 120, 121
Ագաթանգեղոս 40, 41
Ագամեմնոն, Միկենեի թագավոր 372
Ադամ, նախահայր 16, 17
Ադոն, խուլրադիր 38, 39
Ադրամելեք, Սենեքերիմ թագավորի որդի 373
Ազայել 278—281, 378
Ազրմիկ, Խոսրովի դուստր 80, 81
Աթանագինես (Աթանագինե) 44, 45, 48, 49
Աժդահակ Մարացի 24, 25, 28, 29
Ալբիանոս 54, 55
Ալեքսանդր (Աղեքսանդր) **(Մեծ) Մակեդոնացի** 26, 27
Ալեքսանդր (Աղեքսանդր), հռոմեացիների կայսր 234, 235
Ալեքսանդր (Աղեքսանդր), Նեքտանեբի որդի 16, 17, 32, 33
Ալի արմանի, ոստիկան 136, 137
Ակիտոփել Հասան, տե՛ս Հասան Ակիտոփել
Ահարոն 375
Ահմատ, իսմայելյան իշխան 176—179
Ադամեկ 274, 275
Ամաղեկ 278, 279, 377
Ամասիա, Նեքտանեբի եղբորորդի 32, 33
Ամասիա, Արմայիսի որդի 18, 19
Ամատունի 180, 181
Ամբակ 22, 23
Ամրամ-Ցլիկ, տե՛ս Ցլիկ Ամրամ
Անակ, Սուրենյան Պահլավներից 40, 41
Անան, սուրհանդակ 36, 37
Անանիա Անեցի 94, 95
Անանուն Զրուցագիր 375
Անաստաս, հռոմեացիների կայսր 64, 65
Անանստաս հայրապետ, Ակոռի գյուղից 92—97
Անեցի Անանիա, տե՛ս Անանիա Անեցի
Աննա 156, 157
Անտիգոնոս 32, 33
Անտիոքոս 278—281
Անտիոքոս (Սովտերն) 26, 27
Անտոնինոս, հռոմեացիների կայսր 32—35
Անուշ 24, 25
Անուշավան 22, 23
Աշոտ, Արծրունյաց Գրիգոր Դերենիկի որդի 144, 145
Աշոտ, Արծրունյաց մեծ իշխան 122, 123, 144, 145, 192—197
Աշոտ, Արծրունյաց տան մեծ իշխան 138, 139
Աշոտ, Բագարատ իշխանի որդի 122, 123
Աշոտ, Գնթունյաց տոհմից 296, 297
Աշոտ (երիտասարդ), Սմբատ արքայի քրոջ որդի 178, 179
Աշոտ Ճահանշահ, տե՛ս Աշոտ (Երկաթ), Սմբատ արքայի որդի
Աշոտ, Ճապուհի որդի 10, 11, 140, 141, 196, 197
Աշոտ, ոմն 76, 77
Աշոտ, Սմբատ արքայի եղբորորդի 218, 219
Աշոտ (Երկաթ), Սմբատ արքայի որդի 10, 11, 184, 185, 190, 191, 200, 201, 220—223, 244, 245, 272, 273, 286, 287, 294—299, 302, 303, 308—311 316—325, 340, 341, 354—359, 369—371
Աշոտ (Առաջին), Սմբատ սպարապետի որդի, իշխանաց իշխան, արքա 134—141, 144, 145, 370, 375
Աշոտ, Սյունյաց գահերեց իշխան 228, 229
Աշոտ սպարապետ 228, 229, 272, 273, 292—295, 300, 301, 306, 307, 310, 311, 320, 321
Աշոտ, Վասակ Գնթունու եղբայր 316, 317, 378
Աշոտ, Վասակ Սիսական իշխանի եղբայր 128, 129, 144, 145
Աշոտ, Վասպուրականի մեծ իշխան 174—177, 180, 181
Ապլմախրա 176, 177, 369
Ապուսեհ 270, 271
Առավեն 24, 25
Առնակ 22, 23
Ասպահապետի Պահլավ 36, 37
Ասպուրակես, Զավենի եղբայր 54—57
Ասքանազ 14—17, 372
Ավագ այր, տե՛ս Աբգար, հայոց թագավոր
Ատոմ, Անձևացյաց իշխան 292, 293, 328, 329
Ատոմ, Անձևացյաց Գուրգեն իշխանի որդի 180, 181
Ատոմ, նահատակ 126, 127
Ատրներսեհ, Աղվանքի թագավոր 220, 221
Ատրներսեհ, Խաչենի իշխան 130, 131
Ատրներսեհ, վրաց մեծ իշխան 146—149, 186—189, 200—205, 210, 211, 266, 267, 310, 311, 371
Արա Գեղեցիկ 20—33
Արամ 20, 21, 70—73, 372
Արամանյակ (Արմանյակ) 18, 19
Արբակ 22, 23
Արբուն 22, 23
Արեւտացի ազգապետ 280, 281
Արիոս Ալեքսանդրացի 42, 43
Արիստակես, Գրիգոր Լուսավորչի որդի 42—45
Արմայիս (Արամայիս) 18, 19, 372
Արմոգ 26, 27
Արշակ արքա, Տիրանի որդի 48—53
Արշակ, պարսից թագավոր 26, 27
Արշակ, Պապի որդի 54—57
Արշակ, Վաղարշակի որդի 30, 31
Արշական, պարսից արքա 30, 31
Արշավիր, պարսից Արտաշես թագավորի որդի 34—37
Արջամ, Տիգրանի եղբայր Արտաշեսի որդի 34, 35
Արվես, Սևորդյաց Գեորգ նահապետի որդի 190, 191
Արտաշես, հայոց արքա 38, 39
Արտաշես, պարսից արքա 34, 35
Արտաշես, Տիգրան Երկրորդի եղբայր 34, 35
Արտաշես, Արշակի որդի 30, 31
Արտաշիր, պարսից Կավատ արքայի որդի 78, 79
Արտաշիր, պարսից Ճապուհ արքայի որդի 56, 57
Արտաշիր, Վռամշապուհի որդի 58, 59
Արտաշիր Ստահրացի 40, 41
Արտավազդ, Տիգրանի որդի 34, 35
Արտավան, պարսից արքա 40, 41
Արուսյակ, Բագրատունի, պարսիկ Սեվադայի կինը 116, 117
Արքեղայոս (Արքեղավոս) կուսակալ 44, 45
Արքեղայոս, Հերովդեսի որդի 36, 37

Ափշին, ոստիկան 148, 149, 162, 163, 170, 171, 174, 175, 180—185, 188—193, 196—199, 369

Բաբ, Տիգրանի որդի 24, 25
Բաբգեն հայրապետ 64, 65
Բաբգեն, Սիսական Սմբատ իշխանի կրտսեր եղբայր 332, 333, 354, 355
Բաբգեն, Սիսական նահապետ 120, 121
Բաբգեն, Սյունյաց Սահակ իշխանի եղբայր 334, 335
Բաբգեն, Սյունյաց Սմբատ իշխանի եղբայր 298, 299, 358, 359
Բագարատ Բագրատունի, հայոց իշխանաց իշխան, հրամանատար 118—123
Բագարատ, իշխան 156, 157
Բագարատ, Շամբատի որդի 28, 29
Բազուկ 22, 23
Բայգամ 26, 27
Բառաբա, արաբ զորագլուխ 96, 97
Բառլահ 40, 41
Բասիլ, հոռոմեացիների կայսր 286, 287, 374
Բասիլիսկոս, հոռոմեացիների կայսր 374
Բարդուղիմեոս, առաքյալ 8, 9, 38, 39, 42, 43, 50, 51, 368, 372
Բարգափրա, Ռշտունյաց նահապետ 32, 33
Բարսեղ, հունաց կայսր 142, 143
Բարսեղ, հոռոմեացիների կայսր 234, 235
Բբոր, Խոսրովի դուստր 78, 79
Բել (Նեբրովթ) 16—19
Բելիար 276, 277, 377
Բենաղադ, թագավոր 378
Բշբր, ոստիկան 354—357, 369, 370
Բրգիշո, կաթողիկոս 60, 61
Բուզանդ Փավստոս 374
Բուղա, զորավար 120—125, 128—137

Գաբիանե 32, 33
Գաբուռ, տե՛ս Վասակ (Գաբուռ)
Գագիկ Արծրունի 10, 11, 177, 178, 212—215
Գագիկ, Արծրունյաց Աշոտ մեծ իշխանի եղբայր 180, 181, 196, 197
Գագիկ, Գուրգենի եղբայր 176, 177, 216, 217
Գագիկ թագավոր 220, 221, 228, 229, 232—235, 238, 239, 246, 247, 272, 273, 290—295, 306—309, 314—317, 324, 325, 328—331, 358, 359, 369, 370
Գագիկ, Սմբատ արքայի քրոջ որդի 10, 11
Գագիկ, Վասպուրականի իշխան, 178—181
Գամեր 14, 15
Գառնիկ, Գեղամի թոռը 20, 21
Գառնիկ, ճգնավոր 44, 45
Գեղեոն 258, 259, 298, 299, 377
Գեղամ 18—21
Գեորգ, Աշոտ Շահանշահի պատվավոր մարդկանցից մեկը 354—357
Գեորգ հայրապետ, Արագածոտն գավառից 114, 115
Գեորգ հայրապետ, Գառնիից 140—145, 150, 151, 170, 171, 184, 185
Գեորգ Հավնունի 316, 317
Գեորգ, սարկավագ 350, 351
Գեորգ, Սևորդյաց նահապետ 190, 191
Գեորգեոս, սուրբ վկա 52, 53
Գեորգի, նահատակ 126, 127
Գզակ 22, 23
Գյուտ հայրապետ 62, 63
Գնել Գնունի 32, 33
Գողիաթ (Գեթացի) 258, 259, 376
Գոմեր 372
Գոռակ 22, 23
Գրիգոր, Աղվանքի եպիսկոպոս 46, 47
Գրիգոր-Դերենիկ Արծրունի 138, 139, 142, 143, 145
Գրիգոր իշխան (անժառանգ) 296, 297
Գրիգոր իշխան (Հայկազն) 202, 203
Գրիգոր իշխան, Սմբատ արքայի քրոջ որդի 226, 227, 230, 231, 234, 235
Գրիգոր Լուսավորիչ 8, 9, 36, 37, 40—45, 48—51, 60, 61, 64, 65, 68, 69, 72—77, 86—91, 96, 97, 108, 109, 184—187, 288—291
Գրիգոր, Մամիկոնյան իշխան 92—97

Գրիգոր, Մոկաց իշխան 294, 295
Գրիգոր, Սահակ իշխանի որդի 314, 315
Գրիգոր, Սևադա իշխանի որդի 302, 303
Գրիգոր (Սուփհաբ), Սյունյաց Սահակ իշխանի որդի 118—121
Գրիգոր Սուփհան, Վասակ Գաբուռի որդի 138, 139
Գրիգոր սուրբ 62, 63, 72, 73
Գուրգեն, Աբասի քրոջ ամուսին 148, 149
Գուրգեն, Անձևացյաց իշխան 180, 181
Գուրգեն, Աշոտ մեծ իշխանի եղբայր 176, 177, 196, 197
Գուրգեն, Ատրներսեհի քրոջ որդի 310, 311
Գուրգեն, Գագիկ թագավորի եղբայր 214—217, 234, 235, 246, 247, 324, 325, 328, 329, 358, 359, 370
Գուրգեն, Գամիրքի իշխան 320, 321
Գուրգեն Գնունի 252, 253
Գուրգեն իշխան, Աշոտ սպարապետի աներ 306, 307
Գուրգեն իշխան, Դավիթ Բագրատունու եղբոր որդի 176, 177
Գուրգեն, հայոց մարզպան 197, 198
Գուրգեն, Մոկաց Գրիգոր իշխանի եղբայր 294, 295
Գուրգեն, վրաց իշխան 246, 247, 298, 299, 302—305, 310, 311, 316—319

Դաղան 154, 155, 375
Դանա, օձ 238, 239, 276, 277
Դանիել ծերունի 46, 47
Դանիել մարգարե 132, 133
Դավիթ, Ատրներսեհի որդի 148, 149
Դավիթ, Բագարատ իշխանի որդի 122, 123
Դավիթ Բագրատունի, Տարոնի մեծ իշխան 176, 177
Դավիթ Գնունի 252, 253
Դավիթ իշխանաց իշխան, Սմբատ արքայի եղբայր 198, 199
Դավիթ, Իսրայելի թագավոր 22, 23, 28, 29, 210, 211, 240, 241, 258, 259, 356, 357, 376, 377
Դավիթ հայրապետ, Մազազ գավառի Կակազո գյուղից 116—119
Դավիթ հայրապետ, Կոտայք գավառից 108, 109
Դավիթ, Մովսես քահանայի եղբայր 350, 351
Դավիթ (Սուրհան), պարսիկ տոհմից 94—97, 99
Դավիթ Սահառունի 82, 83
Դարբինյան-Մելիքյան Մ. 372
Դեղատ, Ափշինի որդի 188—193
Դերենիկ Գրիգոր, տե՛ս Գրիգոր Դերենիկ Արծրունի
Դիոկղետիանոս, կայսր 40, 41

Եգերացի Կոստանդին, տե՛ս Կոստանդին Եգերացի
Եզեկիել 376
Եզիտ, ոստիկան 110, 111
Եգր հայրապետ, Նիգ գավառից 78—83, 86, 87
Եհովա, աստված 372, 375
Եղիա հայրապետ, Աղիովիտի Արճեշ գյուղից 100—103
Եղիա մարգարե 220, 221, 280, 281, 336, 337
Եղիազար 30, 31, 236, 237
Եղիշա 14, 15
Եղիշե, պատմագիր 258, 259, 371
Եղիփազ 377
Ենանոս Բագրատունի 34, 35
Եսայի, Աղվանքի իշխան 130, 131
Եսայի հայրապետ, Նիգ գավառի Աղապատրուշ գյուղից 110, 111
Եսայիաս մարգարե 222, 223, 258, 259, 376, 377
Եսավ 377
Եվա, նախամայր 236, 237
Երակլան 88, 89
Երեմիա մարգարե 14, 15, 232, 233, 377
Երվանդ, Տիգրան Մեծի հայր 24, 25
Եփթաղե, բուշանների արքա 76, 77

Զավան 22, 23
Զավեն, Շահակի եղբայր 54, 55

Զարեհ 24, 25
Զարմայր 22, 23
Զաքարիա 226, 227, 377
Զաքարիա հայրապետ, Կոտայք գավառի Ջագ գյուղից 130, 131, 136, 137, 140, 141
Զաքարիա, Երուսաղեմի հայրապետ 76, 77
Զենոն, հռոմեացիների արքա 64, 65
Զորաբաբել 278—281, 377

Էմին Մկրտիչ 371

Ընձակ 22, 23

Թադեոս, առաքյալ 8, 9, 36—39, 42, 43, 50, 51, 368, 377
Թարսիս 14, 15
Թեոդոս, զորավար 52, 53
Թեոդոս, ինքնակալ 52—55, 58, 59
Թեոդորոս իշխան 84, 85
Թեոդորոս Ռշտունի 78, 79, 86—91
Թեոդորոս, սարկավագ 344, 345, 348—351
Թեոդորոս Վասիլիկոս 286, 287
Թիրաս 14, 15, 372
Թորել 14, 15, 372
Թովմաս (երկվորյակ), առաքյալ 36, 37, 373
Թորգոմ 14—17, 372

Իշխանիկ, տե՛ս Վասակ, Սյունյաց մեծ իշխան
Իսահակ, Սիսական Բաբգենի եղբայր 332, 333
Իսահակ, սուրբ 336, 337
Իսմայել 236, 237, 376
Իսրայել հայրապետ 96, 97, 266, 267

Լևոն Առաջին Պապ 374
Լևոն (Լևոնի տոմար) 74, 75, 80, 81, 82, 83, 102, 103
Լևոն, հռոմեացիների թագավոր 202, 203
Լևոն, հռոմեացիների կայսր 162—165
Լուսավորիչ, տե՛ս Գրիգոր Լուսավորիչ

Խոռեմ, զորավար 76, 77
Խոռեմ, պարսից արքա 78, 79
Խոսրով, Արշակունի արքա 54—59
Խոսրով, հայոց արքա 40, 41
Խոսրով (Առաջին), պարսից Կավատ արքայի որդի 66—69, 78, 79
Խոսրով (Երկրորդ), պարսից Որմիզդ արքայի որդի 70—73, 76—79
Խոսրով, Սասանյան ցեղից 80, 81
Խոսրով, Տրդատի որդի 46, 47
Խորենացի Մովսես 6, 7, 54, 55, 140, 141, 280, 281, 302, 303, 371—373
Խուզիմա, ոստիկան 114, 115

Կամսարական 98, 99
Կայեն 362, 363
Կայիափա 156, 157
Կայպակ 22, 23
Կավատ, պարսից արքա 66—69, 78, 79
Կար 22, 23
Կարդոս 22, 23
Կարենի Պահլավ 36, 37
Կեղար 262, 263, 266, 267, 276, 277, 377
Կեսար 32, 33
Կիտիիմ 14, 15
Կղեոպատրե 34, 35
Կյուրակոս, զինվորական բեռնակիր 352, 353
Կյուրակոս, աշխարհական բեռնակիր 352, 353
Կյուրով (Կյուրիոն), սուրբ կաթողիկեի վաներեց 68, 69, 74, 75
Կուրոս 24, 25
Կումիտաս (Կումիտաս) Աղցեցի հայրապետ 76—79, 374
Կոն, տե՛ս Ստեփանոս (Կոն)
Կոստանդին Եգերացի, եգերացիների թագավոր 202, 205
Կոստանդինոս կայսր (Մեծ) 42, 43, 46—79
Կոստանդոս, Կոստանդիանոս Մեծի որդի 46—49
Կոստանդին (Կոստանդ), Կոստանդին կայսրի որդի 88, 89, 92, 93
Կոստանդին կայսր, Հերակլի որդի 84—87
Կոստանդին (Կոստանդիանոս), հռոմեացիների կայսր 12, 13, 46, 47, 272, 273, 286, 287, 294, 295
Կորխ 154, 155, 375
Կորյուն, պատմագիր 373
Կոռնակ 24, 25
Կտրին, իշխան 128—131
Կրեսոս, թագավոր 30, 31
Կուտաս, Խոսրով Առաջինի որդի 78, 79

Հաբեթ (Յաբեթ), նահապետ 8, 9, 12—17, 372
Հագար, աղախին 84, 85, 280, 281, 372
Հազկերտ (Յազկերտ), Խոսրովի թոռը 80, 81
Հազկերտ, պարսից արքա 56—61
Հակոբ (Յակոբ), երեց 371
Հակոբ, սուրբ վկա 158, 159
Համազասպ Մամիկոնյան 90—93
Համամ, Արևելքի մեծ իշխան 174, 175
Հայել (Յայել) 260, 261, 377
Հայկ, նահապետ 16—19, 22, 23, 26—29, 372
Հայկակ 22, 23
Հայկակ (մյուս) 24, 25
Հասան Ակիտոփել 208—211
Հասան Արծրունի 192—195
Հասան Գնթունի 182, 183, 194, 195
Հավան (Յավան) 14, 15, 372
Հավնունի, Հասան-Ակիտոփելի աները 208—211
Հարմա 20, 21
Հեզաբել (Յեզաբել) 280, 281, 376
Հեսու (Յեսու) 22, 23, 377
Հերակլ, կայսր 76—85
Հերակլ քաջ 24, 25
Հերոբաաղ, տե՛ս Գեղեոն
Հերովդես, արքա 32—37
Հեքոնիա 377
Հիզդբուզիդ (Յիզդբուզիդ), տե՛ս Մաժոխ
Հիսե (Յիսե), ոստիկան 140, 141
Հիսուս (Յիսուս) Քրիստոս 8, 9, 36—41, 44—47, 52, 53, 58, 59, 62, 63, 66—69, 74, 75, 86, 87, 92, 93, 98, 99, 102—107, 112, 113, 118, 119, 124—127, 130—133, 136—139, 146, 147, 152—155, 160, 161, 168, 169, 192, 193, 214, 215, 224, 225, 234—237, 240—243, 250—257, 268—271, 274—281, 284, 285, 288, 289, 328, 329, 340—349, 352, 353, 362, 363, 374, 375, 378
Հմայակ Մամիկոնյան 62, 63
Հյուրշման, հայագետ 377
Հյուրկանոս, քահանայապետ 32—35
Հոբ (Հովբ) 238, 239, 378
Հոլ, ոստիկան 116—119
Հոհան (Յոհան) հայրապետ, Կոգ գավառից 74—77
Հոհան (Յոհան) Մանդակունի 62—65
Հոհան (Յոհան) փիլիսոփա (Հոհան Մայրագոմեցի) 80—83
Հովաբ (Յովաբ) հայրապետ, Ուտանից 110—113
Հովել 336, 375
Հովհաննես (Յովհաննես) Ավետարանիչ 48—51
Հովհաննես (Յովհաննես) Դրասխանակերտցի, կաթողիկոս 274, 275, 280, 281, 366—376, 379
Հովհաննես (Յովհաննես) հայրապետ, Կոտայք գավառի Ոխա գյուղից 118, 119, 128, 129
Հովհաննես (Յովհաննես) հայրապետ-Իմաստասեր 102—107
Հովհաննես (Յովհաննես) հայրապետ, Գաբեղյաններից 66, 67
Հովհաննես (Յովհաննես) Մկրտիչ 40, 41, 44, 45, 50, 51
Հովսեփ (Յովսեփ) 218, 219
Հովսեփ (Յովսեփ) հայրապետ, Արագածոտն գավառից 114—117
Հովսեփ (Յովսեփ) մարգարե 236, 237
Հովսեփ (Յովսեփ), Վայոց ձորի քահանա 60, 63
Հորո (Յորո) 22, 23
Հռիփսիմե, սուրբ տիկին 76, 77
Հրաչե 22—25

Հրատն 22, 23
Հուդա (Յուդա), մատնիչ 118, 119, 158—161
Հուլիանոս (Յուլիանոս) 46, 47
Հուսակ (Յուսակ) 22, 23
Հուսիկ (Յուսիկ), Վրթանեսի որդի 46, 47
Հուստիանոս (Յուստիանոս), կայսր 64, 65

Ղևոնդ հայրապետ, Փոքր Եռաստ գյուղից 66, 67
Ղովտ 379
Ղուկաս Ավետարանիչ 50, 51

Մագոգ 14, 15, 372
Մադա 14, 15, 372
Մադաթիա (Մատաթիա) 280, 281
Մաքիամ 220, 221
Մաթանիա, տե՛ս Սեդեկիա
Մաժեժ Գնունի 80, 81
Մախոժ (Հիզդբուզիտ) 66, 67, 98, 99
Մակաբե 260, 261, 278—281, 377
Մակեդոն 52, 53
Մակեդոնացի, տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի
Մահմեդ 84, 85, 96, 97, 122, 123, 132, 133, 136, 137, 140, 191, 252, 253, 338, 339, 348, 349, 352, 353, 376
Մահմեդ, ոստիկան 96, 97
Մահմեդ, քաղաքի հրամանատար 164, 165
Մամիկոնյան եպիսկոպոս 76, 77
Մայրագոմեցի Հոհան, տե՛ս Հոհան փիլիսոփա
Մանասե 377
Մանդակունի, տե՛ս Հոհան Մանդակունի
Մանի, սուրբ կին 288, 289
Մաշտոց, հայրապետ 150, 151, 166, 167, 184, 185, 368
Մավի ամիրապետ, 92, 93
Մատաթեաս 278, 279
Մատթեոս Ավետարանիչ 50, 51
Մար Աբաս Կատինա 16, 17
Մարգարյան Ալ. 379
Մարիխաբ, Աղձնիքի բդեշխ 36, 37

Մարկոս Ավետարանիչ 50, 51
Մարտինե, Կոստանդին կայսեր խորթ մայրը 86—89
Մեհրուժան Արծրունի 52—55
Մեսեք 372
Մեսրոպ (Մեսրոպ Մաշտոց) 56, 57, 60, 61, 371, 373
Միհրդատ (մանուկ), Միհրդատի որդի 32, 33
Միհրդատ, Տիգրան Երկրորդի քրոջ որդի 32, 33
Միքայել (մանուկ) 252, 253
Մխիթար Այրիվանեցի 72, 73
Մշկան, մարզպան 62, 63
Մոնոս 326—329
Մոսոք 14, 15
Մովսես, Ռստի գավառի իշխան 302—305
Մովսես Խորենացի, տե՛ս Խորենացի Մովսես
Մովսես Կաղանկատվացի 10, 11
Մովսես մարզարե 16, 17, 52, 53, 220, 221, 226, 227, 375, 379
Մովսես հայրապետ, Եղվարդ գյուղից 68, 69, 72—75
Մովսես քահանա 348, 349
Մովսես քահանա (մչուս) 348, 349
Մորիկ, հոռոմեացիների կայսր 70—77
Մրվան, ոստիկան 96, 97
Մուշե հայրապետ, Կոտայք գավառի Այլաբերք գյուղից 66, 67
Մուշեղ, Մոկաց իշխան 180, 181
Մուշեղ, Սմբատ արքայի եղբայր 190, 191
Մուշեղ, Սմբատ արքայի որդի 220—223, 228, 229
Մուրացան 28, 29

Յուսուֆ, ոստիկան 196—203, 206, 207, 212, 213, 218, 219, 246, 247, 272, 273, 292—295, 298—301, 306—309, 314—317, 326—335, 354, 355, 369—371

Նաբուգոդոնոսոր 22, 23, 377
Նարկեսոս, սուրբ վկա 118, 119, 158, 159
Ներրովթ, տե՛ս Բել
Նեստոր 374
Ներսեհ, Առավենի որդի 24, 25
Ներսեհ, վրաց իշխան 96, 97
Ներսեհ (Մեծ) հայրապետ, Աթանագինեի որդի 48—57
Ներսես, Աղվանքի եպիսկոպոսապետ 102, 103
Ներսես հայրապետ, Բագրևանդ գավառից 66, 67
Ներսես հայրապետ 62, 63, 88—95
Ներսես, Տայքի եպիսկոպոս 86, 87
Նեբտանիբ 16, 17, 32, 33
Նիկողայոս (Նիկողոս), Կոստանդնուպոլսի պատրիարք 266—269
Նոյ, նահապետ 8, 9, 12—15, 372
Նորայր 22, 23
Նսբր-Սբուկ, ոստիկան 330—333, 336—341, 354, 355, 358, 359, 369

Շահակ, պատրիարք 54, 55
Շահանշահ (Շահաննշահ, Շահան շահ), տե՛ս Աշոտ (Երկաթ), Սմբատ արքայի որդի
Շամբաթ, հրեա 22, 23
Շամիրամ 20—23, 32, 33
Շամշագրամ, Ապահունիքի նահապետ 36, 37
Շապուհ, պարսից արքա 52—57
Շապուհ Բագրատունի, պատմիչ 10, 11, 114, 115, 134, 135, 144, 145, 375
Շապուհ, Սմբատ արքայի եղբայր 148, 149, 176, 177
Շապուհ, Սմբատ արքայի կրտսեր եղբայր 184, 185, 196, 197
Շապուհ, սպարապետ 10, 11
Շավասպ Արծրունի 60—63
Շեխ, Հիսե ոստիկանի հայրը 140, 141
Շերո բրմապետ, Վնդոյի որդի 62, 63
Շիմոն (Շիմոնե), սուրբ 226, 227
Շմավոն (Շամովնե) 30, 31
Շմուել Ասորի 60, 61
Շուշան, սուրբ կույս 118, 119

Ոգբա, զորապետ 98, 99
Ոմար, ամիրապետ 102, 103
Ոսկի, Թադեոս առաքյալի աշակերտների գլխավորը 38, 39
Ոստանիկ 24, 25
Որմիզդ, Խոսրովի որդի 70, 71
Որմիզդ, Խոսրովի թոռը 80, 81

Պաճույճ 24, 25
Պապ, Արշակի որդի 52—55
Պապ, Հուսիկի որդի 48, 49
Պարետ 22, 23
Պարթև 26, 27
Պարույր, հայոց թագավոր 22, 23
Պերճ 22, 23
Պերոզ, պարսից արքա 62—65
Պետրոս, առաքյալ 336, 337, 379
Պիղատոս 32, 33
Պողոս, առաքյալ 84, 85, 152, 153, 160, 161, 274, 275, 280, 281
Պոմպեոս Հռոմայեցի 32, 33
Պրոտիրիադա (Պրոտիրիադես) 218, 219

Ջաբր, ամիրապետ 120, 121

Ռոստոմ, Ատրպատականի իշխան 82, 83

Սաթենիկ, Արտաշես արքայի կին 38, 39
Սահակ, Աղվանքի իշխան 220, 221
Սահակ, Գրիգոր իշխանի եղբայր 202, 203, 230, 231
Սահակ իշխան, Սյունյաց տեր 116—119, 302, 303, 332—335
Սահակ, կաթողիկոսարանի դռան եպիսկոպոս 340, 341, 348—351
Սահակ հայրապետ, Հարք գավառից 66, 67
Սահակ հայրապետ, Զորափոր գյուղից 96—101
Սահակ, Սևադայի մեծ իշխան 300—305, 308—315
Սահակ, Սմբատ արքայի եղբայր 184, 185, 188, 189, 238, 239
Սահակ, Սիսական Սմբատ իշխանի եղբայր 332, 333, 354, 355

Սահակ, Սյունյաց Սմբատ մեծ իշխանի եղբայր 242—245, 358, 359
Սահակ, սուրբ 118, 119
Սահակ սուրբ, Ներսես Մեծի որդի (Սահակ Պարթև կաթողիկոս) 56—61, 78, 79
Սաղաթիել 377
Սահառունի Դավիթ, տե՛ս Դավիթ Սահառունի
Սամուել Անեցի 72, 73, 368
Սամվել հայրապետ, Արծկե գյուղից 64, 65
Սանասար, Սենեքերիմ թագավորի որդի 373
Սանատրուկ, Արշակունի թագավոր 38, 39, 44, 45, 372
Սանդուխտ, Սանատրուկ թագավորի դուստր 38, 39
Սառա, Աբրահամի կին 26, 27, 372
Սավուղ 377
Սարգիս, աշխարհական 350, 351
Սարգիս, Հոհան Մայրագոմեցու աշակերտ 82, 83
Սբուկ 316, 317, 332, 333
Սեբեոս 10, 11
Սեղեկիա 278—281, 377
Սեթ 362, 363
Սելեկիոս, Բաբելոնի թագավոր 26, 27
Սեմ, նահապետ 12, 13, 16, 17
Սեն Մարտեն, հայագետ 371
Սենեքերիմ, Արծրունյաց նահապետ 22, 23
Սենեքերիմ (Սինախերիբ) արքա 192, 193, 373
Սերգե, նահատակ 86, 87
Սևադա, պարսկական տոհմից 116, 117
Սևուկ, Սևորդյաց նախնի 130, 131
Սիսակ 20, 21
Սիսար 260, 261, 377
Սիոն հայրապետ, Բավոնյաց գյուղից 108—111
Սկայորդի 22, 23
Սղիման ամիրապետ 102, 103
Սմբատ արքա, Աշոտ արքայի որդի 10, 11, 146—151, 160—163, 170—177, 180—221, 226—229, 232—241, 272, 273, 286, 287, 369, 370, 378
Սմբատ Բագրատունի, Սմբատի որդի 96, 97
Սմբատ, Գաբավոնացի իշխան 308, 309
Սմբատ, Սիսական իշխան 212, 213, 308, 309, 332, 333
Սմբատ, Սյունյաց մեծ իշխան 238, 239, 242—245, 272, 273, 296, 297, 304, 305, 358, 359
Սմբատ, Սահակ իշխանի որդի 188, 189
Սմբատ, Սմբատ արքայի եղբորորդի 184, 185, 188, 189, 228—229
Սմբատ սպարապետ 116—119, 122, 123, 130—135
Սմբատ, Վարազտիրոցի հայր 78, 79, 82, 83, 88, 89
Սմբատ, Վարազտիրոցի որդի 88, 89
Սմբատ քաջ Բագրատունի 72—79, 82, 83, 88, 89, 278, 279
Սողոմոն իմաստուն 260, 261, 292, 293
Սողոմոն հայրապետ, Գառնիից 112—115
Սողոմոն, հայրերի հայր 112, 113
Սողոն 30, 31
Ստեփանոս (Կոն) 130—133
Ստեփանոս հայրապետ, Դվին քաղաքից 110, 111
Ստեփանոս, սուրբ վկա 158, 159, 375
Սուլեյման, ոստիկան 108, 109
Սուր 22, 23
Սուրեն, մարզպան 66, 67
Սուրենի Պահլավ, (Սուրենյան Պահլավ) 36, 37
Սուրհան, տե՛ս Դավիթ, պարսիկ տոհմից
Սուրմակ 58—61
Սուփան, տե՛ս Գրիգոր (Սուփան)
Սուփան Գրիգոր, Վասակ Գաբուռի որդի, տե՛ս Գրիգոր Սուփան
Սուփան, Սյունյաց տեր 216, 217
Սուրիանոս, սրբերի գլխավոր 40, 41

Վահագն, Տիգրան Մեծի որդի 24, 25
Վահան, Գողթնի տեր 102, 103
Վահան Մամիկոնյան, Հմայակի որդի 62—67
Վահե 26, 27
Վահրամ, իշխան 70, 71
Վաղարշ, պարսից արքա 64, 65
Վաղարշակ, Պապի որդի 16, 17
Վաղարշակ Պարթև 8, 9
Վաղենտին, զորավար 88, 89
Վաղենտիանոս, կայսր 50, 51
Վաղես, Վաղենտիանոս կայսեր եղբայր 52, 53
Վան, Բայգամի որդի 26, 27
Վաշտակ 22, 23
Վասակ Արծրունի 192, 193
Վասակ, Գաբավոնացի Սմբատ իշխանի եղբայր 308, 309
Վասակ, Գեղարքունիքի իշխան 306, 307
Վասակ, Գնթունի իշխան 296—299, 316—319, 378
Վասակ (Գաբուռ) Սուփանի որդի 120, 121, 136—139
Վասակ, Գրիգոր իշխանի եղբայր 202, 203, 230, 231, 296, 297
Վասակ (Իշխանիկ), Սյունյաց մեծ իշխան 138, 139, 144, 145
Վասակ, Սիսական իշխան 128, 129, 308, 309
Վասակ Սյունի 258, 259
Վասակ, Սյունյաց գահերեց իշխան Աշոտի որդին 228, 229
Վասակ, ուրացող 192, 193
Վասակի Բաբգեն, Սյունյաց Սմբատ իշխանի եղբայր 298, 299, 310, 311
Վասիլիկոս 286, 287
Վարազդատ Արշակունի 54, 55
Վարազտիրոց մարզպան, քաջ Սմբատի որդի 78, 79, 82, 83, 88, 89
Վարբակես Մեղացի 22, 23
Վարդ, Վահանի եղբայր 66, 67
Վարդան Մամիկոնյան 66, 67
Վարդան, սուրբ 62, 63, 74, 75
Վարդան, սուրբ Սահակի թոռ 58, 59, 62, 63
Վլիթ, ամիրապետ 102, 103
Վլիթ, ոստիկան 104, 105
Վնդո, նախարար 62, 63
Վշնասն Վահրամ, մարզպան 66, 67
Վռամ, պարսից արքա 56, 57
Վռամ Երկրորդ, պարսից արքա 58—61
Վռամշապուհ, Խոսրովի եղբայր 56—59
Վստամ 22, 23
Վրթանես, սուրբ Արիստակեսի եղբայր 44—47

Տիբեր 24, 25
Տիգրան Երկրորդ, Արտաշեսի որդի 30—35
Տիգրան Մեծ (Երվանդյան) 24, 25, 140, 141
Տիրան, Խոսրովի որդի 48, 49
Տիրան, Տիգրան Մեծի որդի 24, 25
Տրդատ, արքա 42—47, 109, 110, 236, 237
Տրդատ, Արշակի եղբայր 50, 51
Տրդատ (Բ) Դասնավորեցի, հայրապետ 108, 109, 374
Տրդատ Երկրորդ 110, 111
Տրդատ հայրապետ, Ոթմտա գյուղից 108, 109
Տուրի իշխան, Բագրատունի 38, 39

Բիփաթ (Բիփատ) 14—17

Յագարեյշվիլի Ե., թարգմանիչ 371
Յլիկ Ամրամ 320—323

Ոլխտանես, պատմիչ 10, 11, 68, 69
Ոմայի, քաղաքի հրամանատար 164, 165

Փառնակ 22, 23
Փառնավազ 24, 25
Փառներսեհ, Աշտիշատից 48, 49
Փարավոն 218—223
Փարկինի, հագարացի 306, 307
Փավոս 24, 25
Փիլիպպե, Ալեքսանդր Մեծի հայրը 26, 27
Փոկաս, կայսր 76, 77

Քաբեր (Կինեցի) 377
Քամ, նահապետ 12, 13
Քամսար 36, 37
Քետուրա 26, 27
Քիտ (Քիտիիմ) 14, 15
Քսերքսես 12, 13
Քսյուսաթրոս 12, 13
Քրիստափոր հայրապետ, Աբրահամյան տնից 78, 79
Քրիստափոր հայրապետ, Բագրևան գավառի Տիրառիճ գյուղից 66, 67
Քրիստոս, Քրիստոս Հիսուս, տե՛ս Հիսուս Քրիստոս

Օգոստոս, կայսր 34, 35

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա 268, 269
Աբովյան, շրջան 379
Ադամա, քաղաք 379
Ազատ, գետ 76, 77, 379
Աթենք 372
Ալանք, Ալանաց դուռ 164, 165, 202, 203, 302, 303, 375, 378
Ալեքսանդրիա 50, 51, 54, 55
Ախայանք, գյուղ 308, 309
Ախուրյան, գետ 196, 197
Ականիս (Աբաղայու կատար, Ականիք), լեռ 330, 331, 378, 379
Ակոռի, գյուղ 92—95
Անմատան, քաղաք 76, 77
Աղապատրուշ (Եղապատրուշ, Եղապատրոշ) գյուղ 110, 111, 375
Աղբաթանք, գյուղ 74, 75
Աղբակ, գավառ 126, 127, 330, 331, 372, 375, 378
Աղիովիտ 100, 101
Աղմաղան, լեռնագագաթ 379
Աղձնիք, նահանգ, Աղձնյաց աշխարհ 20, 21, 28, 29, 36, 37, 108, 109, 176, 177, 372
Աղստև (Աղաստև) 246, 247
Աղվանք, Աղվանից աշխարհ 46, 47, 56, 57, 102, 103, 130, 131, 220, 221, 268, 269, 330, 331, 369
Աղցից, գյուղ 76, 77
Անարիսծղպի, գետ 374
Ամասիա, քաղաք 32, 33
Ամարաս, գյուղ 46, 47
Այլաբերք (Ավափարս) գյուղ 66, 67, 373
Այրարատ, Այրարատ գավառ, նահանգ, աշխարհ, Այրարատյան աշխարհ 20, 21, 84, 85, 262, 263, 368, 373, 374, 375, 378, 379
Անի, ամրոց 190, 191, 204, 205, 210, 211
Անձևացյաց աշխարհ, գավառ 328, 329, 378
Անուշ, բերդ 52, 53, 56, 57
Անտիոք 50, 51, 54, 55
Աշոցք 198, 199
Աշտարակք, գյուղ 66, 67
Աշտիշատ, գյուղ 48, 49, 60, 61
Ապահունիք 36, 37
Ապարան, գյուղ, շրջան 375
Առաջին Հայք 20, 21, 70, 71
Առբերան, գավառ 372
Առեսան, ավան 70, 71
Ասիա 284, 285
Ասորեստան 22, 23, 70, 71, 76, 77, 84, 85, 90, 91, 190, 191, 373, 377
Ասորիքի Մրջապետք 176, 177, 328, 329
Ավետյաց երկիր 22, 23
Ատրպատական (Ադրեբադագան, Ազերբայջան, Ազրբեջան), տե՛ս Ատրպատական
Ատրպատական, Ատրպատական քաղաք, աշխարհ 82, 83, 148, 149, 162, 163, 188, 189, 192, 193, 202, 203, 212, 213, 244—247, 292, 293, 330, 331, 354, 355, 358, 359, 369, 378, 379
Արաբական անապատ 377
Արաբական թերակղզի 375
Արաբիա 84, 85, 326, 327
Արագած, լեռ 18, 19, 70, 71, 170, 171, 198, 199, 298, 299
Արագածոտն 18, 19

Արտգածոտն գաւառ 114, 115
Արտածանի, գետ 373
Արտոնք, գյուղ 108, 109
Արտասբենոն, քաղաք 38, 39
Արարատ, շրջան 379
Արաքս, գետ 374, 379
Արեն 110, 111
Արծկե, գյուղ 66, 67, 373
Արճեշ, գյուղ 100, 101
Արմավիր 18—21, 374
Արմենի 20, 21, 70, 71
Արշարունյաց ամրոցներ 246, 247
Արտազ, գավառ 40, 41
Արտաշատ, դաստակերտ 114—117
Արտաշատ, քաղաք 42, 43
Արտավել (Արտավիլ, Արդաբիլ, Արտավետ), քաղաք 332, 333, 379
Արում, դաստակերտ 94, 95
Արում, քաղաքագյուղ 198, 199
Արցախ 232, 233
Աքաքիա, ծոց 379
Աֆրիկա 377

Բաբելոն 18, 19, 26, 27, 100, 101, 196, 197, 326, 327, 377
Բագարան, ավան, գյուղ 74, 75, 146, 147, 196, 197, 228, 229, 340, 341
Բագարանի եկեղեցի 196, 197
Բագավան (Բագուան, Բագարվան, Բաջարվան), գավառ 60, 61
Բագավան, գյուղ 112, 113
Բագրևանդ (Բագրևան, Բագրավան, Բագրավանդ, Բագրաբանդ), գավառ 66, 67, 112, 113, 178, 179, 244, 245, 370, 373
Բադա (Բաղակ), տե՛ս Սեգովր
Բադեշ 371
Բաղաց ամրոց 128, 129
Բալազետ, բերդաքաղաք 374
Բասեն (Բասեան) 70, 71, 76, 77
Բավոնյաց, գյուղ 108, 109, 374
Բեթել լեռներ 292, 293
Բեշապուհ, գավառ 66, 67
Բերդկաց, գյուղ 96, 97
Բեթղեհեմ 36, 37, 240, 241
Բերկրի, գյուղաքաղաք 373
Բզնունիք, գավառ 373
Բլուր, գյուղ 60, 61
Բյուզանդիա (Բյուզանդիոն) 52, 53, 373
Բյութանիա 42, 43
Բյուրական 340, 341
Բուրական ամրոցիկ 336, 337, 340, 341
Բջնի, ամրոց 82, 83
Բուլանըխ, տե՛ս Հարք
Բուլղարիա 30, 31

Գաբեղյանք, գավառ 373
Գամիր (ք), Գամիրի աշխարհ 14, 15, 320, 321
Գայանեի վկայարան 82, 83
Գանձակ 378
Գառնի 20, 21
Գառնի, գյուղաքաղաք 112, 113, 338, 339
Գարդման, բերդ, ամրոց 130, 131, 314, 315
Գարդման, գավառ 82, 83, 130, 131, 232, 233
Գարդմանի աշխարհ 128, 129
Գեղա (Գեղ, Գեղմաղան), լեռ 336, 337, 379
Գեղամ, լեռ 20, 21
Գեղամա ծովակ 96, 97, 202, 203, 232, 233, 298, 299, 302, 303
Գեղամաղա լեռներ 379
Գեղամի դաստակերտ 20, 21
Գեղամյո ամրոց 356, 357, 379
Գեղարքունի, Գեղարքունի գավառ 20, 21, 128, 129, 306, 307
Գողթն, Գողթան գավառ 102, 103, 110, 111, 308, 309
Գոմոր 376, 379
Գորիս 379
Գրիգոր սուրբ, եկեղեցի 78—81, 114, 115
Գրիգոր սուրբ, վանք 112, 113
Գուգարք, Գուգարաց երկիր, Գուգարաց աշխարհ 28, 29, 142, 143, 146, 147, 220, 221, 244, 245, 252, 253, 266, 267, 296, 297, 302, 303, 370, 378
Դամասկոս 96—101
Դամասկոսի պարիսպ 280, 281
Դասնավորք, գավառ 374
Դարիալի կիրճ, տե՛ս Ալանաց դուռ
Դարա 70, 71
Դարոն 88, 89
Դարոյնք 76, 77, 228, 229, 374
Դերջան, գավառ 286, 287
Դիադին, լեռ 373
Դողք, գյուղ 172, 173
Դվին, քաղաք 62, 63, 66, 67, 70—77, 84, 85, 88, 89, 94, 95, 100, 101, 108—111, 114—119, 122—125, 128, 129, 136, 137, 162—165, 170, 171, 182, 183, 188—191, 198—201, 216—221, 238, 239, 242—245, 272, 273, 290, 291, 294, 295, 300—303, 308—311, 320, 321, 332—335, 354—359, 369
Դրասխանակերտ, գյուղ 368

Եգերիա, գավառ 374
Եգիպտական նահանգ 326, 327
Եգիպտոս 92, 93, 192, 193
Եղեսիա 24, 25, 38, 39
Եկեղյաց գավառ 44, 45
Եղեգնաձոր 373
Եղիվարդ, դաստակերտ 94, 95
Եղվարդ, գյուղ 68, 69
Եռաստ (Առեստավան, Առեստովան, Եռաստավան) 373
Եվրոպա 377
Երազգավորք, կալվածք 146, 147
Երազգավորք, քաղաքագյուղ 130, 131, 186, 187, 200, 201, 210, 211, 220, 221, 304—307
Երասխ, գետ 18—21, 216, 217
Երասխաձոր, Երասխի ձոր 182, 183, 200, 201, 234—237, 370
Երևան 94, 95, 372
Երկրորդ Հայք 20, 21, 70, 71
Երնջակ, ամրոց 238, 239, 242, 243, 308, 309
Երուսաղեմ 32—35, 54, 55, 76, 77, 80, 81, 224, 225, 256, 257, 264, 265, 276, 277, 371, 375, 376, 377
Երրորդ Հայք 20, 21, 70, 71
Եփեսոս 48—51, 54, 55, 374
Եփրատ, գետ 38, 39, 178, 179

Զարևանդ, գավառ 142, 143, 290, 291, 330, 331, 376
Զրեակ, գյուղ 114, 115

Էջմիածին, տե՛ս Վաղարշապատ

Ընձաքիսար, լեռ 70, 71

Թալին, գյուղաքաղաք 110, 111
Թեթրիձղարո 378
Թեոդոսուպոլիս, տե՛ս Կարին
Թիլ, ավան 44, 45, 54, 55
Թորդան, գյուղ 44—49, 288, 289
Թրակիա 14, 15, 30, 31
Թուլիս, կղզի 54, 55
Թուխ, գյուղ 178, 179
Թուրքաստան 72, 73, 326, 327

Իմիրզեկ, ճնավայր 379
Իռա 70, 71
Իսրայել 22, 23, 186, 187, 218, 219, 276—281, 360, 361, 375, 377, 378, 379
Իտալիա 284, 285
Իրանական Ադրբեջան 378

Լակոնիա (Սպարտա) 377
Լյուբիկիա 14, 15

Խազնաթ-Գեղի 32, 33
Խաղ, գյուղ 54, 55
Խաղամախի դաշտ 66, 67, 373
Խաչեն, ամրոց 130, 131
Խառան 98, 99
Խոսրովի արգելանոց 379
Խորազոյն Հայք 70, 71
Խրամ, գետ 378

Ծաղկանց, լեռ 373
Ծաղկոտն, լեռ 328, 329
Ծանարք 164, 165, 304, 305
Ծոփք, Ծոփաց աշխարհ, Ծոփաց գավառ 20, 21, 44—47

Կակազո, գյուղ 116, 117
Կաղամախիք 373
Կաղզվան, գյուղ 182, 183
Կայլան (Կայան), ամրոց 306, 307, 310, 311
Կանգար (Կանգարք) 232, 233
Կապադովկիա 70, 71
Կապուտ 236, 237
Կապույտ, բերդ 370
Կարասու, Արաքս գետի վտակ 379
Կարին (Էրզրում, Արզրում, Թեոդոսուպոլիս, Թեոդուպոլիս), քաղաք 70, 71, 76, 77, 164, 165, 374
Կարմիր ծով 379
Կարնո աշխարհ 70, 71
Կարնո ամրոց 182, 183
Կարուց բերդ 148, 149, 190, 191
Կավակերտ, դաստակերտ 114—117
Կաքավաքար, ամրոց 324, 325
Կեսարիա (Միժակ) 28, 29, 32, 33, 48, 49, 54, 55, 70, 71
Կիլիկիա 373
Կղարջք 164, 165
Կղարջքի ամրոցներ 216, 217
Կոգ, գավառ 74—77
Կոգովիտ, լեռ 328, 329, 374
Կող, լեռ 30, 31
Կողբ, գյուղաքաղաք 80, 81, 196, 197
Կողբ, դաստակերտ 294, 295
Կոստանդնուպոլիս 48—51, 54, 55, 84, 85, 90, 91, 266, 267
Կովկաս 142, 143, 220, 221, 258, 259, 296, 297
Կովկասյան լեռներ 28—31, 164, 165, 202, 203, 375
Կոտայք, գավառ, նահանգ 66, 67, 94, 95, 108, 109, 118, 119, 128—131, 320, 321
Կորդվաց աշխարհ 246, 247, 328, 329
Կորդվաց լեռներ 272, 273
Կորդուք, գավառ 376
Կորճայք, նահանգ 376
Կրուստ, ամրոց 316, 317
Կուր, գետ 164, 165, 322, 323, 378

Հագար 10, 11, 222, 223, 372
Հագարի անապատ 332, 333
Հայաստան, Հայոց աշխարհ, Հայոց երկիր, Հայք 8—11, 14—23, 32—35, 38—41, 46, 47, 50—53, 56—67, 70—77, 79—81, 84, 85, 88—93, 96—101, 110, 111, 114—117, 120, 121, 136, 137, 150, 151, 162, 163, 174—177, 180, 181, 184, 185, 202, 203, 214, 215, 222, 223, 238, 239, 268—273, 278, 279, 284, 285, 290, 291, 306, 307, 330—333, 369, 372, 373, 378, 379
Հայկական պար 373
Հայկական Տավրոս, լեռնաշղթա 378
Հարք, գավառ 66, 67, 373
Հացեկաց, գյուղ 56, 57
Հացյաց վանք 48, 49
Հացիվ 70, 71
Հելլադա (Եղլադա) 30, 31
Հեր (Խոյ) 142—145, 290—293, 330, 331, 376
Հղուկ (Յղուկ), գյուղ 66, 67
Հնդկաստան (Հնդկաց աշխարհ) 86, 87
Հողոցմանց, գյուղ 60, 61
Հոռոս, քաղաքագյուղ 178, 179
Հռիփսիմյան վկայարան 76, 77
Հռոմ 46, 47, 50, 51, 54, 55, 374
Հռոմեական Մարգ 114—117
Հրեաստան 22, 23, 32—37, 224, 225, 378
Հուդա, թագավորություն 377, 378
Հունարակերտ, քաղաք 164, 165
Հունաստան (Հույնք) 82, 83, 88, 89
Հուրաստան, գետ 116, 117

Ձագ, գյուղ, 94, 95, 130, 131
Ձիրավ 52, 53
Ձորափոր, գյուղ 96, 97
Ձորոփոր 310, 311

Ճվաշ, գավառ 316, 317

Մազազ, գավառ 116, 117, 354, 355, 379
Մակու 378
Մակուրան 86, 87
Մակվա, գետ 374
Մաղազ, գավառ 96, 97
Մայրո վանք 82, 83
Մայրագոմ 82, 83
Մանե (Մանյա) քարայր 42—45
Մասիս, լեռ 18, 19
Մասյացոտն 18, 19, 70, 71, 78, 79, 92, 93
Մարանդ 290, 291
Մարգաստան (Մարդաստան) 290, 291, 373, 378
Մարս 14, 15
Մարտիրոսացպոլիս, մայրաքաղաք, (Մարտիրոպոլիս, Նփրկերտ, Հուստիանուպոլիս, Տիգրանակերտ) 70, 71, 372
Մարտիրոպոլիս, տե՛ս Մարտիրոսացպոլիս
Մարտիրոսաց քաղաք 20, 21, 50, 51
Մելիտենե, Մելտինա, քաղաք 20, 21, 50, 51, 70, 71
Մեծամոր 116, 117
Մեծ Աղբակ 375
Մեծ Զաբ (Զաբ), Տիգրիսի վտակ 375, 379
Մեծ Հայք 20, 21, 70, 71, 268, 269, 274, 275, 373, 374, 378, 379
Մեծ Հայքի Մաս 70, 71
Մեծ Հայքի Մեծ Մաս 70, 71
Մերբեզ, լեռ 379
Միափոր, գավառ 230, 231
Միժակ, տե՛ս Կեսարիա (Միժակ)
Միկենե 372
Միջագետք 34—37, 70, 71
Միջերկրայք 32, 33
Միջերկրական ծով 373
Մծբին 30, 31, 70, 71
Մոկք 180, 181, 294, 295
Մոկաց լեռներ 272, 273
Մորան 86, 87
Մորիա, լեռ, տաճար 376
Մռավչան, գյուղ, տե՛ս Աղապատրուշ
Մրեն, քաղաքագյուղ 84, 85
Մուղան 379
Նախճրաձոր 200, 201
Նախջավան, քաղաք 100, 101, 110, 111, 170, 171, 212, 213, 216, 217, 290—293, 308, 309, 332, 333
Նակովոս, գավառ 344, 345
Նաքովր, ձոր 222, 223, 360, 361
Ներքսագույն Հայք 70, 71
Նիգ, գավառ 78, 79, 110, 111, 220, 221, 370, 375
Նիգատուն 375
Նիկիա 42, 43
Նինվե 22—25
Նոր քաղաք, տե՛ս Վաղարշապատ
Նորատունք, գյուղ 302, 303
Նպատ, լեռ 52, 53
Նփրկերտ, տե՛ս Մարտիրոսացպոլիս
Նփրկերտ, գավառ 372

Շամ 102, 103
Շամշուլդե (Շամշուլդա, Սամշուլդե) ամրոց 296—299, 316, 317, 378
Շամքոր 164, 165
Շարուր, դաշտ 188, 189
Շիրակ, գավառ 114, 115, 148, 149, 188, 189, 198, 199, 210, 211, 238, 239, 244, 245, 304, 305, 370, 378
Շիրակավան 146, 147
Շողագա 232, 233

Ոթմսո, գյուղ 62, 63, 96, 97
Ոստան 70, 71, 110, 111
Ովա (Ովայք), գյուղ 118, 119
Որոմանի (Արմանի), գյուղ 304, 305, 378
Որմզդական մեհյան 62, 63
Որսիրանք, գյուղ 126, 127

Չորրորդ Հայք 20, 21, 70, 71

Պաղեստին 32, 33, 176, 177, 377
Պարս, տե՛ս Պարսկաստան
Պարսկաստան 58, 59, 62—67, 70, 71, 78, 79, 86, 87, 212, 313, 330, 331, 373
Պոնտոս 20, 21, 28—33, 70, 71

Ջրաբաշխ, սար 40, 41

Ջերմ, գետ 376

Ռա, քաղաք 330, 331
Ռին, գետ 32, 33
Ռշտունիք 78, 79, 86—91
Ռստակաց (Ռոստակաց) գավառ, նահանգ, աշխարհ 246, 247, 292, 293, 330, 331, 376
Ռոտոկ(ք), գավառ 96, 97, 162, 163
Ռուծափ, քաղաք 102, 103

Սագաստան (Սակաստուն) 72, 73, 86, 87, 350, 351
Սակուրեթ (Ասկուրեթ), ամրոց 296, 297, 378
Սաղամաս 292, 293
Սամշվիլդո, գյուղ 378
Սասուն 373
Սարդանապատ 22, 23
Սեբաստիա 50, 51
Սեբոյիմ 379
Սեգովրա (Սեգովր) 170, 171, 364, 365, 379
Սեյլան (Սիյլան), լեռ 379
Սեաբերդ, գյուղ 379
Սևան, ամրոց 194, 195
Սևան, կղզի 96, 97, 168, 169, 230, 231, 336, 337, 354—357, 368, 370
Սևաստիա, մայրաքաղաք 70, 71
Սև ծով 375
Սիդոնյան Սարեպթ 220, 221, 280, 281
Սիմ, լեռ 44, 45, 108, 109, 176, 177 373
Սին, անապատ 86, 87
Սինա, թերակղզի 379
Սինա (Սինեական) լեռ 84, 85, 366, 367, 379
Սինգ 86, 87
Սիոն 214, 215, 224, 225, 282, 283, 336, 337, 340, 341, 358, 359, 376
Սիոն, լեռ 156, 157
Սիսական 232, 233, 246, 247, 304, 305
Սյունիք, Սյունյաց աշխարհ 216, 217, 304, 305, 358, 359, 373
Սիոն (Սիովն) վերին 38, 39, 256, 257, 366, 367

Սնծեղվան, գյուղ 66, 67
Սողոմ 326, 327, 364, 365, 376, 379
Սոփեր 200, 201, 375
Սուեզ, ծոց 379
Սուկավ, լեռ 40, 41

Վաղարշակերտ 232, 233, 368
Վաղարշապատ (Էջմիածին, Նոր քաղաք), քաղաք 60, 61, 64, 65, 78, 79, 298, 303, 373
Վաղավերն, գյուղ 300, 301
Վայո (Վայոց) ձոր 60, 61, 358, 359, 373
Վայք 373
Վան, քաղաք 32, 33
Վանա լիճ 373, 378
Վանաց Ձոր 184, 185
Վանանդ 98, 99, 146, 147
Վանանդ, գավառ 180—183
Վասպուրական, Վասպուրականի գավառ, նահանգ (Կոտուր) 122—125, 178, 179, 184, 185, 206, 207, 244, 245, 292, 293, 296, 297, 370, 373, 375, 378
Վատնյան դաշտ 46, 47
Վարարակ, գետ 379
Վարդանակերտ 98, 99, 374
Վենետիկ 258, 259
Վժան, գյուղ 170, 171
Վրաց աշխարհ, Վիրք, Վրաստան 24, 25, 56, 57, 88, 89, 188, 189, 216, 217, 246, 247, 266—271, 298, 299, 310, 311, 369, 370, 378
Վրկան (Վրկանք) 72, 73
Վուրի աշխարհ 204, 205, 316, 317

Տանկաստան 378
Տայք 70, 71, 86, 87, 90, 91, 182, 183, 190, 191, 210, 211
Տայոց ամրոց 188, 189
Տայոց գավառ 94, 95
Տաշիր 210, 211, 232, 233, 370, 378
Տաշիրք 198, 199, 246, 247
Տաշրատապ 198, 199
Տավուշ, ամրոց 322, 323
Տավուշ, ձոր 312, 313

Տավրոս, լեռ 44, 45, 120, 121, 373
Տարան 86, 87
Տարոն, գավառ, աշխարհ 44, 45, 56, 57, 60, 61, 76, 77, 120—125, 176—179, 270—273, 286, 287, 369
Տիգրիս, գետ 375
Տիգրանակերտ, տե՛ս Մարտիրոսացպոլիս
Տիզբոն 76—79
Տիրառիճ, գյուղ 66, 67
Տոսպ, գավառ 180, 181, 184, 185, 290, 291, 378
Տոսպա ծով, տե՛ս Վանա լիճ
Տորոս, լեռ 122, 123
Տրապիզոն, մայրաքաղաք 70, 71
Տրոյա, քաղաք 372
Տուշպա (Վան) 378
Տուս 164, 165
Տուս, գյուղ 130, 131
Տուրուբերան, նահանգ 373, 374
Տփղիս (Թբիլիսի), քաղաք 164, 165, 188, 189, 246, 247, 296, 297, 370, 372

Ուղեաց, գյուղ 78, 79
Ուտի գավառ 130, 131, 142, 143, 164, 165, 180, 181, 198, 199, 220, 221, 228, 229, 302—307, 310, 311, 318—321
Ուրարտու 378
Ուրմիա, լիճ 378

Փայտակարան, քաղաք 44, 45, 174, 175, 190, 191, 198, 199
Փառաժնակերտ, գյուղ 78, 79
Փորակ Լմբա (Ձորակ) 192—195
Փոքր Եռաստ 66, 67
Փոքր Խաբուր 376
Փոքր Հայք 373
Փոքր Սյունիք 46, 47

Քաղին 110, 111
Քաղկեդոն (Քաղկեդոնի ժողով) 64, 65, 68, 69, 90, 91, 374
Քասաղ ավան 375
Քասաղ, գետ 90, 91
Քարահունջ, գետ 379
Քարավազ, քարանձավ 20, 21
Քարունջ (Քարահունջ), քաղաքագյուղ 334, 335
Քարսպառ, իջևան 146, 147
Քեղի, ամրոց 360, 361
Քունարաստան, գյուղ 66, 67

Օշական, գյուղ 60, 61
Օվկիանոս (Ովկիանոս) 54, 55, 373

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յառաջաբան պատմութեան 6
Պատմության առաջաբանը 7
Բաց ինքնուրոյն սակս յիշատակի անուան իւրոյ 362
Իր անվանն արժանի մասնավոր խոսք 363
Ծանոթագրություններ 368
Անձնանունների ցանկ 380
Տեղանունների ցանկ 319

Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցի

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչության խմբագիր՝ Դ. Վ. Պետրոսյան
Նկարիչ՝ Հ. Ա. Մամյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարյան
Լինոտիպիստ՝ Թ. Շ. Վարդանյան

Հանձնված է շարվածքի 01. 08. 1995 թ.: Ստորագրված է տպագրության 07 02. 1996 թ.: Չափը 60×84 1/16: Թուղթ՝ տպագրական № 1: Տառատեսակ՝ գրքի սովորական: Տպագրություն՝ բարձր: 23,25 պայմանական տպագրական մամուլ: 21,88 հրատ. մամուլ: Տպաքանակ՝ 1500: Պատվեր 106: Գինը՝ պայմանագրային:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Ալեք Մանուկյան փ. № 1
Издательство Ереванского университета, Ереван, ул. Алек Манукяна, № 1.

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52